Երվանդ Շահազիզ

ԱՇՏԱՐԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ



Երվանդ Շահազիզ

ԱՇՏԱՐԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Բնագրի պատրաստումը, առաջաբանը, հավելվածներն ու լրացումները պրոֆ. Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

2424

ՀՍՍՀ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆ-Տ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т востоковед. АН Арм. ССР

ԳՄԴ 63.3 (2Հ)
Շ 163

Խմբագիր՝
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Շահազիզ Եր. Հ.

Շ 163 Աշտարակի պատմությունը /Բնագրի պատրաստումը, առաջաբանը, ծանոթագր. ու լրաց. Պ. Հ. Հակոբյանի.— Խմբ. Վ. Ա. Միքայելյան.— Եր.: Հայաստան, 1987.— 251 էջ:

Աշխատության մեջ գրավոր սկզբնաղբյուրների, վիմագիր հիշատակարանների և հուշերի օգնությամբ վերստեղծվում է Աշտարակի պատմական կյանքը՝ հին ժամանակներից մինչև XX դարի սկզբները. ժողովրդի աշխատանքային առօրյան, տնտեսական ու կրթական վիճակը, վիմագրերն ու հուշարձանները, հնավանդ ծեսերն ու սովորությունները, սոցիալական բախումները, աշտարակցիների մասնակցությունը համազգային հոգևոր կյանքին ու ազատագրական պայքարին: Գրված լինելով ավելի քան կես դար առաջ՝ սույն գիրքը լույս է տեսնում առաջին անգամ:

Հասցեագրված է ընթերցող լայն շրջաններին:

Շ $\frac{0505040000}{701\ (01)\text{-}87}$ 60—87

ԳՄԴ 63. 3 (2Հ)

© «Հայաստան» հրատարակչություն, բնագրի պատրաստման, առաջաբանի, ծանոթագրությունների և նկարազարդումների համար, 1987

ԱՇՏԱՐԱԿԻ ՊԱՏՄԱԲԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

1

Մոռացությունից լույս աշխարհ հանված սույն աշխատությունը, որի ձեռագիրն ավելի քան կես դար մնում էր թանգարանի գզրոցներում փակված և խունանում էր, իր տեսակի մեջ անզուգական է: Այն հավերժացնում է վաղնջական հայ գյուղի պատմական կյանքի էական կողմերը՝ դիտված հին ու նոր Հայաստանի մշակութային ավանդներով հարուստ ու հնագույն բնակավայրերից մեկի՝ Աշտարակի ու աշտարակցիների հանրային ու տնտեսական կյանքի կարևորագույն դրվագների, կուտակված կենսափորձի և թողած ավանդների խորքի վրա. գրված է սկզբնաղբյուրների ընձեռած տառաձների և հեղինակի անձնական տպավորությունների համադրմամբ: Այսպիսի հետազոտություններ մենք գրեթե չունենք:

Չենք կասկածում, որ «Աշտարակի պատմությունը» անդանի գիրք, ուղեցույց ու խորհրդատու է դառնալու բոլոր նրանց համար, ում թանկ են ո՛չ միայն բնօրրանն ու նախնիները, այլև, առհասարակ, հայ գյուղի ու գյուղացիության պատմական կյանքն ու հոգեբանությունը, տնտեսական վիճակն ու կառավարման ձևերը, աշխատանքային առօրյան ու առնչությունները, կենցաղն ու սովորությունները, հնավանդ ծեսերը, վերջապես՝ այս հնամենի գյուղի ներդրումն ու մասնակցությունը համազգային հոգևոր կյանքին ու ազատագրական պայքարին, որովհետև այդ բոլում է թրծվում ազգային խառնվածքն ու հոգեբանությունը:

Թեպետ հեղինակը անհայտ ու անծանոթ մեկը չէ, այլ հայագիտական մտքի ականավոր ներկայացուցիչը և սովետահայ բանասիրության հիմնաքարերը դնողներից ու մեծ երախտավորներից, բայց այսօր արդեն շատերին նրա անունը քիչ բան է ասում: Երվանդ Շահազիզի գրականագիտական-պատմական հետազոտությունները չեն վերահրատարակվում, նրա վաստակի արժեքավորման փորձեր գրեթե չեն արվում: Շրջադարձն սկսվել է վերջին տարիներս:

Բայց մինչև բուն գրքի ստեղծման պատմության ու բովանդակության հետ ծանոթանալը՝ տեսնենք, թե ո՞վ է Երվանդ Շահազիզը, կյանքի ու գիտական գործունեության ի՞նչ ճանապարհ է անցել, ի՞նչ հետազոտություններով հարստացրել հայ բանասիրությունն ու հայագիտությունն ընդհանրապես և իր գիտական ժառանգությամբ ի՞նչ մասնակցություն կարող է բերել հայագիտության արդի առաջընթացին և ժամանակակից մարդու հոգևոր աշխարհի հարստացմանը:

Գիտնականների ճակատագիրը բնավ էլ նախանձելի չէ, որովհետև ամեն արդյունք ձեռք է բերվում ինքնամոռաց նվիրումով և տքնաջան աշխատասիրությամբ: Ու հետո էլ, եթե գրողների ու արվեստագետների կյանքի ու ստեղծագործության մեծ տարեթվերը նշվում ու հիշվում են գրեթե միշտ ու հատուկ շուքով՝

բարձր հովանավորությամբ, ապա կոչումով ու զբաղումով բանասերներին՝ հայրենի գիտության այդ անխոնջ մշակներին, հայ ժողովրդի պատմական կյանքի դրվագները, անգիր դպրության փշրանքները, հնավանդ ծեսերն ու սովորությունները մոռացությունից փրկողներին և հետնորդներին ավանդողներին, ազգի ստեղծած հոգևոր անգնահատելի ու անմահ արժեքները հավաքելու, մեկնաբանելու և պահպանելու համար չարաչար տառապած անօրինակ նվիրյալներին ընդհանրապես հիշում են բացառիկ դեպքերում: Կարծես հայագետ բանասերն ու պատմաբանը ստեղծագործող անհատներ չլինեն:

Այս պարագաներում, ցավոք, շատերի նման, աղոտացել է նաև հայոց նախահեղափոխական տարիների և նորագույն ժամանակների բանասիրական-բնագրագիտական միտքը կամրջող անխոնջ հայրենասեր գիտնականի՝ Երվանդ Շահազիզի (Շահազիզյանց-Կամսարականի) ազնիվ կերպարը, ասում ենք՝ աղոտացել, որովհետև ընթերցող լայն շրջաններին հասցեագրված ժամանակակից որոշ տեղեկատու հրատարակությունների ու գրքերի մեջ նրա անձն ու վաստակը կամ հանիրավի մոռացության են մատնում, կամ էլ ներկայացնում սխալ ու թռուցիկ: Միայն երկու օրինակ. 1981 թվականի համար նախատեսված հատվածական օրացույցի մեջ, հունվարի 12-ի թերթիկի վրա, դրոշմել են՝ **«125 տարի առաջ ծնվեց Երվանդ Շահազիզը (1856-1951), հայ ազգագրագետ»,** առանց խորհելու, որ այդպիսով թույլ են տալիս երկու կոպիտ սխալ: Նախ՝ Եր. Շահազիզը ծնվել է հին տոմարով 1856 թվականի հունվարի ճիշտ 1-ին, որը վերածելով նորի՝ կստացվի հունվարի 13, և հետո՝ իր նախասիրություններով ու թողած գիտական ժառանգության ընդհանուր բնույթով Շահազիզը ամենից առաջ աղբյուրագետ-պատմաբան և բնագրագետ-բանասեր է, հայոց նոր գրականության ձևավորման շրջափուլի, Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Ս. Շահազիզի կյանքի ու ստեղծագործության բազմակողմանի հետազոտող ու հմուտ գիտակ, հետո միայն հեղինակ հայագիտական, հայրենագիտական տպագիր ու անտիպ աշխատությունների, որոնց մեջ, ինչ խոսք, ազգագրական դիտարկումներ ու դրվագներ ևս կան, ինչպես լայն հետաքրքրությունների տեր ուրիշ հայագետ-բանասերների՝ Մ. Աբեղյանի, Հ. Տաշյանի, Գ. Տեր-Մկրտչյանի, Հր. Աճառյանի, Ս. Մալխասյանի գործերում, բայց նրանք, այնուհանդերձ, ազգագրագետներ չեն: Մեկ այլ գրքում էլ Եր. Շահազիզին մկրտել են «լեզվաբան», որն արդեն բոլորովին հեռու է ճշմարտությունից: Լեզվաբանական որոնումներով ու քննարկումներով նա բնավ չի տարվել[1]:

Այն Շահազիզը, որին տեսնելու և լսելու բախտ ենք ունեցել կյանքի մայրամուտին (1945-ից), որի գրքերը հանգամանորեն ուսումնասիրել ենք դեռ մեր ուսա-

[1] Տե՛ս **М. Сарьян,** Из моей жизни, Ереван, 1980, с. 271 (կազմողների ծանոթագրությունը): Ոմանք էլ (ինչպես հանգուցյալ գրականագետ Նշան Մուրադյանը) այն պատրանքն ունեին, թե ընդհանրապես բանասիրությունը և, մասնավորապես, աբովյանագիտությունն սկսվում է իրենցից, նրկա դեպքում՝ «Աբովյանի պոետիկա» շատ սովորական գրքից, և այդպես էլ ազդարարում էին մամուլում («Գրքերի աշխարհ», 1980, № 1), դրանով իսկ խաչ քաշելով ամենից առաջ Եր. Շահազիզի՝ տվյալ բնագավառում թողած վիթխարի վաստակի վրա, երբ առանց նրա կուտակած աբովյանական մասունքների ու հրատարակած գրքերի, աներևակայելի է աբովյանագիտությունն ընդհանրապես: Ցավոք, այդպիսի ինքնաթմբկահարման փորձերը դատապարտելու փոխարեն մեր գրական մամուլը խրախուսում և արդարացնում էր դրանք (տե՛ս «Գրական թերթ», 1980, հոկտեմբերի 10):

նողական տարիներին, իսկ ապրած ուրախ ու տխուր օրերի մասին ականջալուր դարձել նրա կրտսեր գրչակիցներից ու իմ ավագ ընկերներից,— իբրև բնության ստեղծագործություն ու հողեղեն արարած՝ արտաքնապես աչքի ընկնող ոչինչ չուներ. նիհար էր ու փոքրահասակ, դեմքով խիկարյան գեղջուկ ու հողի մշակ: Բայց երբ խոսում ու պատմում էր անցյալ դարի անցքերից կամ հիշում ու վերակրկնում Հովսեփ Արղության և Լազարյան մեծահարուստների, Մանվել Կյումուշխանեցու և Միքայել Սալլանթյանցի, Հարություն Ալամդարյանի ու Խաչատուր Աբովյանի, Ստեփանոս Նազարյանցի ու Մկրտիչ Էմինի, հայր ու որդի Պատկանյանների, գրական ու հանրային կյանքի ուրիշ մեծերի մասին հնօրյա զրույցները, իր տեսածն ու լսածը, մի տեսակ ճառագում էր, դառնում գրավիչ ու պատկառազդու, վիպական ու հավերժական, զարմացնում իր մտքի թարմությամբ, իր ծովածավալ գիտելիքներով, եռանդով, հիշողությամբ....

Եվ այդպես՝ առանց արտաքին փայլի, առանց ինքնացուցադրման, բայց խորին երկյուղածությամբ, բացառիկ ազնվությամբ ու անմնացորդ նվիրումով՝ Երվանդ Շահազիզը շուրջ յոթանասուն տարի ծառայեց հայրենի գիտությանը, մշակույթին ու դպրոցին, որպես սերունդների հոգում բարու և գեղեցիկի սերմեր ցանող ուսուցիչ ու դաստիարակ, որպես բանասեր-բնագրագետ ու աղբյուրագետ-պատմաբան, հետազոտելով ու իմաստավորելով նոր շրջանի հայ քերթության իրական մեծերի ու առաջին հիմնաքարերը դնողների կյանքի ուղին ու գրական-հասարակական շրջապատը, նրանց տաղանդի ծաղկման օրերի համահայկական մշակույթն ու ներքին կյանքը՝ ազգային ու համամարդկային առումներով ու հնչեղությամբ:

Երվանդ Շահազիզը մոռացությունից ու ոչնչացումից փրկել և լույս աշխարհ է հանել ոչ միայն հայ դասական գրականության ներկայացուցիչների գրական ժառանգության, այլև Հարավային Ռուսիայի հայ գաղթավայրերի (մասնավորապես Նոր Նախիջևանի) պատմության անծանոթ և մեծարժեք շատ էջեր, հայ մշակույթի ու կյանքի միջազգային առնչություններին վերաբերող առաջնակարգ վավերագրեր: Շահազիզի հրատարակած երկասիրություններն ու հետազոտություններն այսօր դարձել են XIX դարի հայոց հանրային ու հոգևոր կյանքի կարևորագույն սկզբնաղբյուրներ և անփոխարինելի տեղեկատուներ, և այդ շրջափուլի պատմության ու գրականության բարեխիղճ ուսումնասիրողը չի կարող շրջանցել դրանք: Վերջապես՝ արդարությունը պարտադրում է խոստովանել, որ առանց Երվանդ Շահազիզի անձնական նախաձեռնության ու տևական հետապնդումների, առանց նրա նյութական զոհողությունների՝ Հայաստանի գրականության և արվեստի այժմյան թանգարանը ո՛չ միայն չէր ունենա իր մշակութային արժեքներից շատերը, այլև առարկայական հաստատուն հիմքեր չէին ստեղծվի Նալբանդյանի, Պատկանյանի, Սմբատ Շահազիզի գրական-ստեղծագործական կյանքի համակողմանի հետազոտության համար:

2

Երվանդ Շահազիզը հայոց մտավոր անդաստանը հերկող մշակներից ամենաերկարակյացն էր թերևս: Նա ապրեց ավելի քան 95 տարի, որոնց յոթ տասնամյակը կլանել են մանկավարժական սրտամաշ, բայց շնորհակալ աշխատանքն ու գիտական բեղմնավոր որոնումները՝ բանասիրական թարթափումների անվերջանալի ճանապարհներին ու պաշտոնական հոգսերի բեռան տակ:

Եր. Շահազիզի նախնիները պատմական Այրարատ բնաշխարհի Արագածոտն

գավառի հին ու հռչակավոր Աշտարակ գյուղից էին, վերջին դարերում Շիրակից այդտեղ հաստատված և շատ վաղուց երբեմնի փառքը կորցրած ու աղքատացած Կամսարականների շառավիղներից: Ճակատագրի կամքով՝ թեպետև նա աչքերը բացեց ո՛չ հայրենական խրճիթում, այլ Ալեքսանդրապոլում (ուր հայրը՝ Հովակիմը, պաշտոնավարում էր տեղի հոգևոր թեմի իրավարանում, որպես քարտուղար), բայց հոգով ու արյունով իրեն զտարյուն աշտարակցի էր համարում: Ահա՛ նրա խոստովանությունը. «Աշտարակը, իբրև մեր հայրենական գյուղը, մենք շատ էինք սիրում... Մենք սիրում էինք Աշտարակը, նրա օդն ու ջուրը, հացն ու կերակրեղենը, կյանքն ու սովորույթները, այգեկութն ու դրա հետ կապված ուրախությունները, տատոնցս տունն իր կրկնակի «յազմայով», այսինքն՝ իրար վրա շինված երկու պատշգամբներով, վերին սենյակը՝ իր պարսից ձևի լուսամուտներով, մեր իգին (այգին), ածերը, Միջնահանդը...»[2]:

Մանկություն, որը պարուրված լիներ ռոմանտիկ շղարշով, հիշվեր, վերհիշվեր և լսողի նախանձը շարժեր, Ծահազիզը չի՛ ունեցել, հիվանդություններից աչք չի՛ բացել...

Հազիվ մեկուկես տարեկան՝ 1857 թ. կեսերին, հայրը պաշտոնով փոխադրվում է Երևան, ուր և յոթ ամիս անց վախճանվում է՝ թողնելով ընտանիքը ծով կարիքի մեջ[3]: Երեխայի խնամքն ու դաստիարակության հոգսն ամբողջությամբ ընկնում են մոր՝ Հերիքնազի (որին կոչում էին Թելլու խանում) և մայրական տատի՝ Վարդ խաթունի վրա: Սրանք Երևանում ունեին փոքրիկ տուն և այգի, ուր և անցնում են պատանի Երվանդի կյանքի հետագա տասը տարիները՝ արտաքին աշխարհից համարյա կտրված: Մայրն ու տատն էլ նրան գրաճանաչ են դարձնում, առաջին մարդասիրական ու բարոյական հրահանգները տալիս, իրենց հետ տանում ուխտագնացությունների և զանազան տոնախմբությունների, ներարկում նրա մեջ սեր դեպի ազգային սրբությունները և հայրենի աշխարհը:

1868 թ. Եր. Ծահազիզն սկսում է հաճախել Երևանի գավառական դպրոցը, որի ուսուցիչներն էին մի վրացախոս հայ՝ Ծագում վարժապետը և Կարապետ վարդապետը, որն ավանդում էր մայրենի լեզու և կրոն: Բայց երկու տարի էլ չանցած՝ հորեղբոր (հայտնի բանաստեղծ Սմբատ Ծահազիզի) ջանքերով 1870 թ. նա դառնում է Մոսկվայի Լազարյան ճեմարանի գիշերօթիկ սան: Դպրոցական դասընթացը պատանին ավարտում է 1879-ին, իսկ բարձրագույնը կամ լիկեոնը (ինչպես կոչում էին այն ժամանակ)՝ 1882-ին, ուսուցիչներ ունենալով նախ՝ Մսեր Մսերյանցին և ախալցխացի Հակոբ Սուրենյանցին, իսկ հետո՝ հայագետ Մկրտիչ Էմինին, ռուս նշանավոր գիտնական Ալեքսեյ Վեսելովսկուն, արևելագետ Ֆյոդոր Կորշին և ուրիշների: Ինչ լավ բան կար Ծահազիզի մեջ, իբրև մարդու, մտածողի ու գիտնականի, ճեմարանական միջավայրի արդյունքն էր, ձևավորված գլխավորապես իր հորեղբոր և ապա՝ հիշյալ ուսուցիչների ու գիտնականների ազդեցության տակ:

2 **Եր. Ծահազիզ,** Հիշողություններ և դիմաստվերներ, Եր., 1980, էջ 135 («Գրական ժառանգություն» մատենաշար, գիրք 14):

3 Եր. Ծահազիզի մանկության և ուսումնառության տարիների մասին այս ու մյուս տեղեկությունները քաղել ենք նրա մանկավարժական 35-ամյա գործունեության առթիվ Նոր Նախիջևանի թեմական դպրոցի ուսուցչության հրատարակած գրքույկից («Երվանդ Ծահազիզ», Նոր Նախիջևան, 1917, էջ 23), որի կազմողների համար սկզբնաղբյուր են ծառայել անձամբ իր հաղորդած տվյալները, և անտիպ «Ինքնակենսագրությունից» (1925 թ.):

Հոգևոր դաստիարակության առումով՝ Լազարյան ճեմարանից բացի, ուրույն դպրոց է դառնում նաև հորեղբոր հարկը, ուր Երվանդը լինում էր գրեթե ամեն օր և հնարավորություն ստանում շփվելու Մոսկվայի հայ գաղթօջախի նշանավոր դեմքերի ու մշակութային գործիչների հետ: Տևական ու անջնջելի են մնում Ստեփանոս Նազարյանցից ստացած տպավորությունները: Երիտասարդը հաղորդակից է դառնում այն մեծ ողբերգությանը, որ ապրում էր հայ լուսավորիչների վաթսունականների սերունդը, և գիտամանկավարժական գործունեության ասպարեզ մտնելուց առաջ ջանում է լավ հասկանալ նրանց անհաջողության գաղտնիքը:

Ահա՛ նրա այդ տպավորություններից մի դրվագ. «Սովորաբար խոսում էր Նազարյանցը, հորեղբայրս պատասխան էր տալիս նրա հարցմունքներին և իր կարծիքն էր հայտնում: Ես նստած, իհարկե, չէի խառնվում նրանց խոսակցությանը, այլ լուռ լսում էի նրանց ասույթը: Մի անգամ էլ, նրա (Նազարյանցի—Պ. Հ.) ուրախ օրն էր այդ... հանկարծ բարձրացավ տեղից... մի ոտանավոր ասաց, որի խոսքերը մինչև օրս էլ միտս են: Հետո, ձեռքը դրեց իմ ուսին և խոսքն ուղղելով հորեղբորս՝ ավելացրեց.

— Սա էլ մեր ճամփով պիտի գնա և մեր վիճակին տիրանա, սակայն ես խորին հույս եմ տածում, որ մեր տառապանքն էլ, շուտ թե ուշ, վերջ կունենա...»[4]:

Երվանդ Ծահազիզի իղձն էր Լազարյան ճեմարանն ավարտելուց հետո աշխատել մայր հայրենիքի դպրոցներում՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում կամ Անդրկովկասի հայաքաղաքներից որևէ մեկում, բայց ուսուցչի թափուր տեղ չգտնելով, ստիպված, ընդունում է իր գործունեության երկրորդ տարին թևակոխած՝ Նոր Նախիջևանի թեմական դպրոցի եռանդուն տեսուչ, հայտնի մանկավարժ Առաքել Բահաթրյանի հրավերը և հետո, ամբողջ քառասուն տարի, ապրում ու գործում այնտեղ, Հարավային Ռուսիայի այս հայաքաղաքի պատմությունից ու մշակութային կյանքից, նրանից սերված ու նրա հետ կապված գրողների ու հրապարակային գործիչների կենսագրությունից քաղելով իր աշխատություններից շատերի նյութն ու ատաղձները: Այդ գրքերն էլ, շուտով, Եր. Ծահազիզին բերում են համազգային ճանաչում ու փառք:

Սկզբներում, ամբողջ 22 տարի, Եր. Ծահազիզը շարքային ուսուցիչ էր և ավանդում էր լատիներեն ու գրաբար, հայոց լեզու և հայ գրականության պատմություն, հետո, երեք տարի, ընտրվում է տեսչի օգնական՝ զուգահեռաբար շարունակելով հայոց լեզվի դասերը, իսկ 1906—1907 ուսումնական տարվանից կարգվում է հաստատության տեսուչ և հաջողությամբ շարունակում պարտականությունների կատարումը մինչև 1916 թ.: Երկար տարիներ, զուգահեռաբար, բայց առանց որևէ վարձատրության, իբրև հայրենասիրական պարտք ու հոգու պարտադրանք, Երվանդ Ծահազիզը հայոց լեզու է ավանդել նաև Նոր Նախիջևանի Հոփսիմյան օրիորդաց դպրոցում, իր եռանդուն մասնակցությունը բերել տեղում գործող զանազան ընկերությունների (բարեգործական, թատերասիրաց, կանանց խնամատար ընկերության) աշխատանքներին, ընտրվել քաղաքային դումայի, ուսումնարանական հանձնաժողովի, Նալբանդյանի երկերի հրատարակության համար կազմված խմբագրական մարմնի անդամ, ազնվորեն կատարելով իր վրա դրված պարտականությունները և շահելով հանրության վստահությունը:

Հոկտեմբերի հաղթանակից հետո Եր. Ծահազիզի առջև ծառանում են նոր հար-

4 **Եր. Ծահազիզ,** Հիշողություններ և դիմաստվերներ, էջ 14—15:

ցեր. նա եռանդով նվիրվում է Հարավային Ռուսիայի և Նոր Նախիջևանի հայոց ստեղծած մշակութային արժեքների հավաքման ու պահպանության գործին, հիմնում ու ղեկավարում Նոր Նախիջևանի ու Ռոստովի հայկական շրջանային թանգարանը, իսկ 1922 թ. Սովետական Հայաստանի նշանավոր պետական գործիչ և գիտնական Աշոտ Հովհաննիսյանի հրավերով փոխադրվում է Երևան, կարգվում ՀՍԽՀ լուսժողկոմատի պետական կենտրոնական թանգարանի գրական-պատմական բաժնի վարիչ (մինչև 1930 թ.) և Հնությունների պահպանության կոմիտեի անդամ, ձեռք-ձեռքի տված աշխատելով Ալեքսանդր Թամանյանի, Մարտիրոս Սարյանի, Թորոս Թորամանյանի, Երվանդ Լալայանի և այլոց հետ: Իր հետ նա Հայաստան է բերում նախիջևանյան թանգարանային հավաքածուները և Պատկանյանի ու Նալբանդյանի գրադարանները, ծավալում գիտահետազոտական և հավաքչական լայն գործունեություն՝ ընդմիշտ կապված մնալով այս հաստատության հետ վերջինիս գրական բաժնի վերակառուցման բոլոր շրջաններում, իսկ ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի և հետո՝ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնադրման օրերին դառնում Գրականության ու լեզվի, ապա՝ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտների գիտական աշխատակիցը: Հայագիտական մեծ վաստակի համար 1944-ին Եր. Շահազիզին շնորհվում է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան, իսկ 1946-ին՝ ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում: Ու այսպես, մինչև իր մահը՝ 1951 թ. օգոստոսի 12-ը, Շահազիզը տքնեց, ուսումնասիրեց և հրապարակ հանեց նորանոր գրական-պատմական ու բնագրագիտական աշխատություններ, միշտ էլ մոռացած իր անձն ու կարիքները և ողջ էությամբ ձուլված իր գրքերի հետ՝ նրանց միջոցով դրսևորելով իր եսը և սերունդների հետ նրանց էջերից խոսելով:

3

Գիտահետազոտական աշխատանքի ոլորտները Եր. Շահազիզը մուտք է գործել ճեմարանում ուսանելու վերջին տարիներին, մասնավորապես 1879—82 թթ., որպես լիկեոնի աշակերտ՝ պատրաստելով ու կարդալով մի շարք ռեֆերատներ, որոնք, իր իսկ վկայությամբ, նվիրված են եղել՝ Թովմա Մեծոփեցու և նրա ժամանակներում ապրած նշանավոր վարդապետների կենսագրությանն ու մատենագրական ժառանգությանը, հայոց ուսումնական գործին, Ղազար Փարպեցուն, հայոց կրոնական բանաստեղծությանն ու շարականներին և այլն:

Բայց դրանց մեջ ինքնուրույնությունը քիչ էր, զգացվում էր մասնավորապես Մկրտիչ Էմինի ազդեցությունը, որի ղեկավարությամբ և պատրաստվում էին այդ շարադրությունները: Դրանցից մեկ-երկուսի վերամշակված տարբերակները՝ «Նախարար և նախարարություն», «Մի երես հայոց հնագույն պատմությունից» (Ուրարտուի շրջան), «Վեցերորդ և յոթերորդ դարերի հայ մտավոր կյանքը», «Համառոտ տեղեկություններ հայոց շարականների մասին» և այլն, Եր. Շահազիզը հրատարակեց մամուլում: Առաջինները՝ «Գրականական և պատմական հանդեսի» Դ և Ե գրքերում (1890, 1894), իսկ վերջինը՝ ավելի քան կես դար անց, «Էջմիածին» ամսագրի էջերում (1948):

Իսկական առումով հետազոտական գործունեություն Շահազիզը ծավալում է Նոր Նախիջևանում, ուր, ինչպես ասացինք, հաստատվել էր անցյալ դարի 80-ական թթ. սկզբներին (1882 թ.):

Հարավային Ռուսիայի այս ծաղկուն հայաքաղաքն իր ներքին ինքնավարու-

թյամբ և հանրային ու մշակութային ավանդներով, իր աշխատավորական ու արհեստավորական խավերով ու առօրյայով բացառիկ տեղ էր գրավում հայ իրականության մեջ, դառնալով յուրատեսակ միջնորդ օղակ համառուսական և ազգային հետախնդրությունների միջև, ավելի ու ավելի նրանց կապելով Ռուսաստանի մշակութային, տնտեսական ու քաղաքական կյանքի հետ: Այս միջավայրում են հասակ առել և իրենց գրական-ստեղծագործական, հանրային ու հրապարակախոսական գործունեության առաջին քայլերն արել մի շարք ականավոր հայորդիներ՝ սկզբներում Մ. Նալբանդյանն ու Ռ. Պատկանյանը, վերջերում՝ Ալեքսանդր Մյասնիկյանն ու Սարգիս Սրապիոնյան-Լուկաշինը, Մարտիրոս Սարյանն ու Ալեքսեյ Ջիվիլեգովը, որոնք խոր հետք են թողել հայության հոգևոր զարգացման վրա ու կամ նպաստել սովետական բազմազգ մշակույթի զարգացմանը: Հատկապես Մ. Նալբանդյանի բանաստեղծական կերպարն ու վառվռուն անհատականությունը, գրական-հրապարակախոսական երկերն ու ելույթները, ներքին ու միջազգային առնչությունները նշանավորում էին մի ամբողջ դարաշրջանի կյանք ու պատմություն՝ իր վերելքներով ու անկումներով, իր հերոսականությամբ ու ողբերգական լուծումներով: Եվ Շահազիզը, գերվելով Նալբանդյանի անձով ու գործով՝ 1890-ական թթ. կեսերից լույս աշխարհ հանեց նրա գրական ժառանգության անհայտ էջերը, հյուսեց նրա առաջին գիտական կենսագրությունը, որը, չնայած համեմատաբար փոքր ծավալին (161 էջ), պարունակում է առատ փաստեր և ունի բացառիկ արժեք[5]:

«Միքայել Նալբանդյան» աշխատությունը համբերատար որոնումների և բանասիրական մեծարժեք ձեռքբերումների առաջին լուրջ քայլն է հայ գրականագիտության պատմության մեջ տվյալ մարզում: Աշխատասիրողը նախապես հանդիպել ու խոսեցրել է Մ. Նալբանդյանի կենդանի մնացած հարազատներին ու մտերիմներին կամ էլ դրանց ժառանգներին, մասնավորապես քրոջը՝ Գայանե Խաչատրյանին, բարեկամներին ու ընկերներին՝ Գրիգոր Սալտիկյանին, Փիլիպոս Վարդանյանին և այլոց, թերթ առ թերթ հավաքել ու ծանոթացել Նալբանդյանի ձեռագիր և անտիպ երկերին ու նամակներին, անգամ նրա գաղափարական հակառակորդների՝ Հ. Խալիպյանի, Գ. Այվազովսկու և մյուսների փոխանակած գրություններին: Համաքաղաքացիների, հարազատների ու աշակերտների հուշերի հիման վրա Շահազիզը վերստեղծում է Նալբանդյանի կյանքի ուղին վաղ մանկությունից մինչև Լազարյան ճեմարանում ուսուցչություն անելու շրջանը, ընկալելի դարձնում նրա հոգևոր զարգացման պատկերն ու ներքին բովանդակությունը, իսկ իր հայտնագործած ու հավաքած վավերագրերի օգնությամբ ու առատ մեջբերումներով հրապարակ հանում թույլատրելի ճշմարտությունը Նալբանդյանի հրապարակային գործունեության, ծրագրերի, նպատակների ու շփումների, «Հյուսիսափայլի» հիմնադրման ու հրատարակման մեջ նրա ունեցած իրական դերի՝ մասնակցության ու ազդեցության վերաբերյալ, ցավոք, գրաքննական արգելքների պատճառով, շատ բան իմանալով հանդերձ նրա արտասահմանյան կապերի ու բանտարկության պատճառների մասին, ի վիճակի չլինելով բոլոր իմացածը լույս աշխարհ բերելու:

«Աշխարհահայացքի լայնություն, առաջարկությունների նպատակահարմարություն, հրապարակի վրա եղած կամ դրված խնդիրների բազմակողմանի քննություն,

---

5 Տե՛ս **Եր. Շահազիզ**, Միքայել Ղազարյան Նալբանդյանց, կենսագրություն, արտատպված «Գրականական և պատմական հանդեսից», Մոսկվա, 1897, 3+161 էջ և 1 նկար (դիմանկար):

ժամանակակից հանգամանքներին մոտ ծանոթություն, անենախնձված խնդիրների մասին պարզաբանություն, բազմակողմանի գիտություն, դժվար հասկանալի վերացական մտքերի դյուրըմբռնելի կերպով բացատրելու և ժողովրդականացնելու ընդունակություն, սուր գրիչ, անդիմադրելի փաստաբանություն և ազնիվ, անկաշառք համարձակություն»,— այսպիսին է Մ. Նալբանդյանն ըստ Եր. Շահազիզի բնութագրման[6]:

Այսօր, երբ նալբանդյանագիտական հրատարակություններից կարելի է գրադարան կազմել, Շահազիզի սույն աշխատությունը ո՛չ միայն չի հնացել, այլև իր անխախտ տեղն ունի ու արժանի է համակողմանի ուսումնասիրության: Նրա էջերում բարեխիղճ հետազոտողը դեռ կարող է գտնել Նալբանդյանի նամակներից ու նկատողություններից հատվածներ, նրա մասին հուշագրական պատառիկներ, որոնք վրիպել են մեծ գրողի ու մտածողի կենսագիրների և երկերի հին ու նոր հրատարակիչների ուշադրությունից: Օրինակ՝ պարզվում է, որ կյանքի վերջին տարիներին Նալբանդյանին մեծապես զբաղեցրել է Աքրահամ Խոստովանողի «Վկայք Արևելից» վարքագրական նյութերի ժողովածուն, և իր հետաքրքրասիրություններին հագուրդ տալու համար, նամակով լրացուցիչ տվյալներ է որոնել Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի գրչագրերում:

Եր. Շահազիզի նալբանդյանագիտական հետազոտությունները դարասկզբին ավելի ծավալվեցին: Գիտնականը, օգտվելով գրաքննության թուլլտվությունից, զանազան հոդվածների ու հրապարակումների միջոցով նախ՝ նորովի մեկնաբանեց իր գրքում և, ընդհանրապես, համապատասխան գրականության մեջ թույլ լուսաբանված՝ Նալբանդյանի կյանքի ու գործունեության առանձին շրջանները, ըստ այդմ գիտական շրջանառության մեջ դնելով մի շարք նորահայտ նամակներ ու վավերագրեր և, զուգահեռաբար, ընթերցողների հարցասիրությունն ու իր քննադատներին բավարարելու համար տալով հրապարակային բացատրություններ ու նոր լրացումներ՝ «Միքայել Նալբանդյանցը Պետերբուրգում», «Միքայել Նալբանդյանցը Հընդկաստանում», «Միք. Նալբանդյանի նորագյուտ հնագույն նամակների առթիվ» (երեքն էլ «Լումա» հանդեսի էջերում)[7], «Մի էջ Մ. Նալբանդյանցի կենսագրությունից», «Մեր քննադատների կարծիքները Մ. Նալբանդյանցի կենսագրության մասին» (երկուսն էլ «Տարազում»)[8] և ապա, որ առավել ծանրակշիռ է, ավարտեց ու հրատարակության հանձնեց «Խորեն արքեպ. Գալֆայանը և Նալբանդյանի Աղցմիքը» աշխատությունը, որն իր հետազոտական և բնագրային մասերով Շահազիզի երկրորդ խոշոր ներդրումն է նալբանդյանագիտության մեջ[9]:

Քննության առնելով Գալֆայանի կենսագրության և գրական ու եկեղեցական գործունեության հարցերը և նժարելով նրա գրական վաստակի ու հեղինակության իրական արժեքը, Շահազիզը հաստատում ու համոզում է, որ այդ ամենը շատ են համեստ, փքուռույց ու չափազանցված. գեղարվեստական առումով՝ տկար, իսկ

[6] **Եր. Շահազիզ,** Միքայել Ղազարյան Նալբանդյանց, էջ 127:

[7] Տե՛ս «Լումա», 1902, № 4, 1904, № 2—5 և 1905, №1—2:

[8] Տե՛ս «Տարազ», 1900, № 3—5, 7, 9—11 և 16—19, 21, 23, 25, 27—28, 30, 32:

[9] Լույս է տեսել նախ «Լումայի» 1903 թ. համարներում (2—6), իսկ ապա՝ արտատպվել առանձին գրքով (հրապարակ է հանվել 1906-ին միայն): «Աղցմիք» բանաստեղծական շարքի «Տեղի տան տխրութիւնք...» հատվածը, շատ ավելի վաղ, Եր. Շահազիզի նախաբանով, հրատարակվել է՝ «Տարազ», 1900, № 10, մարտի 19, էջ 139—140:

գաղափարապես՝ ետադիմական. որ Գալֆայանի ստեղծածը ոչ թե ազգային, այլ կեղծ գրականություն է: Այնուհետև՝ Նալբանդյանի և Գալֆայանի գրական-գաղափարական հակամարտության շարժառիթների բացահայտմանը անցնելով՝ Շահազիզը համակողմանի վերլուծման է ենթարկում Նալբանդյանի «Արկածք նախահոր» պոեմը և «Աղցմիք» բանաստեղծությունների շարքը, կատարում բնագրագիտական մանրազնին քննություն, մեկնաբանում առանձին ուշագրավ կետեր, որոնք անառարկելի են դարձնում, որ այդ երկերը գրված են Գալֆայանի «Վարդենիք» ժողովածուի հրատարակման առիթով և բնույթով «անդրադարձություն» կամ գրական պարոդիաներ են: Այս տեսակետն են որդեգրել ժամանակակից նալբանդյանագետները: Վերջապես, ավելի քան ծավալվելով՝ Շահազիզը հանգամանորեն անդրադառնում է նաև հայ գրականության միջազգային առնչությունների հարցին՝ կապված նույն Գալֆայանի և ֆրանսիական մեծ քերթողներ Լամարտինի ու Հյուգոյի անձնական փոխհարաբերության հետ և մոռացությունից փրկելով՝ ֆրանսերեն բնագրով ու հայ թարգմանությամբ վերստին հրատարակում է Հյուգոյի անչափ ուշագրավ տողերը հայերի մասին: «Այն ազգերը,— ասել է ազատախոհ գրողը,— որոնք յուրյանց աչքերն ուղղած են դեպի անցյալը, պիտի կորչեն. այն ազգերը, որոնք նայում են ապագային, պետք է ապրին: Հայաստանի... ոտքը քաղաքակրթության ճանապարհի վերա է դրած: Ինձ հայտնի է ձեր աշխարհայեցողության վսեմությունը: Ձեր բախտի վսեմությունը ես չափում եմ ձեր մտքի մեծությամբ: Դուք հին ցեղերի արյունը և նոր ցեղերի միտքն ունիք...»[10]

Նալբանդյանն այն համապարփակ մեծություններից էր, որոնց կյանքն ու գործը հայրենի և օտար բազմազան շփումներ ու արձագանքներ ունեին և կարոտ էին լայն քննության: 1900-ական թթ. առաջին տասնամյակին, երբ ռուս պատմաբան Մ. Լեմկեի հրապարակումների շնորհիվ հետազոտողների առջև բացվեց 1850—60-ական թթ. ռուսական իրականության մեջ խմորվող ազատագրական շարժումների և ստեղծված հեղափոխական իրադրությունների իրական պատկերը, երբ պարզվեցին դրանց բուն մասնակիցների անունները, Նոր Նախիջևանում պաշտոնավարող Երվանդ Շահազիզը վերոհիշյալ պատմաբանի՝ «Былое» ամսագրի 1906 թ. №1-ում (էջ 230—231) հրատարակած մի հնօրյա նամակի ծածկագիր տողերից («Ն-ը ոսկի հոգի ունի, նվիրված է անշահախնդրորեն, նվիրված է միամտորեն, արբության հասնելու չափ», «Կարծեմ խոսքը մեր այստեղի արևելյան բարեկամի մասին է...» և այլն)[11] կռահելով, որ խոսքը Նալբանդյանին է վերաբերում (նամակի հեղինակները էին Ն. Օգարյովը և Ա. Գերցենը, իսկ հասցեատերը՝ Ն. Ա. Սերնո-Սոլովևիչը, ուղարկված էր Լոնդոնից 1862 թ. հունիսի 24-ին), որ այդ վավերագիրը առաջին իրեղեն ապացույցն էր Նալբանդյանի և հիշյալ ռուս մեծ մտածողների և գործիչների անձնական ու գաղափարական կապերը հաստատող՝ իր գիրքը, նաև կռահումները (հատուկ նամակով) հաղորդում է Մ. Լեմկեին, որը և, հետագայում, օգտվելով այդ խորհրդից և ավելի ծավալվելով ու նոր էջեր հայտնագործելով՝ Նալ-

[10] **Երվանդ Շահազիզ,** Խորեն արքեպ. Գալֆայանը և Նալբանդյանի Աղցմիքը, Թիֆլիս, 1903, էջ 73—74: Վ. Հյուգոյի այս նույն նամակի բնագիրը, ավելի վաղ, հրատարակվել է՝ «Արձագանք», 1893, № 6:

[11] Ամբողջական նամակը տե՛ս А. И. Герцен, Собрание сочинений в тридцати томах, т. XXVII, кн. I, с. 243 и кн. II, с. 707—708.

բանդյանին պատշաճ տեղ է հատկացնում իր աշխատությունների մեջ, առանձին մանրամասներ ճշտելու համար դիմելով նաև հայտնի հայագետ Նիկողայոս Ադոնցի օգնությանը[12]:

4

Արդեն իր նալբանդյանագիտական հետազոտությունների սկզբներին ու ընթացքում Եր. Շահազիզը նկատում է, որ առանց Նոր Նախիջևանի հանրային ու մշակութային կյանքի համակողմանի ուսումնասիրության, առանց նախիջևանցոց ընտանեկան առօրյայի ու մտածողության ներքին ծալքերի մեջ թափանցելու, Նալբանդյանի անձն ու պայքարը շատ կողմերով անհասկանալի պիտի մնա: Հետևաբար, ի շահ նալբանդյանագիտության, նույն 1890-ական թթ. կեսերից և, հատկապես, 1900-ական թթ. սկզբներին, նա գրում ու հրատարակում է Նոր Նախիջևանի հայ գաղութի պատմությանը, ընտանեկան ու հանրային կյանքին ու կեցությանը, կենցաղին ու բանահյուսությանը, մշակութային արժեքներին և ուսումնական գործին նվիրված աշխատությունների մի շարք, որոնք անվարան կարելի է նոր նախիջևանցիների կյանքի ու մտածողության հայելի կոչել: Այդ աշխատությունները ևս նախապես տպագրվելով պարբերական մամուլի էջերում՝ հետագայում լույս են տեսել առանձին գրքերով և ջերմ ընդունելություն գտել: Հիշենք միայն խորագրերը, որոնք խիստ առարկայական են ու խոսուն. «Նոր Նախիջևանի ուսումնարանական գործի անցյալը» (Նոր Նախիջևան, 1894. դեպքերը հասցված են մինչև 1881 թ., կրճատ տարբերակը լույս է տեսել «Արարատի» 1895 թ. № 1—5-ում), «Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքը» (Տփղիս, 1901, արտատպված «Լումայից»), «Նոր Նախիջևանը և նոր նախիջևանցիք» (Տփղիս, 1903, արտատպված է «Ազգագրական հանդեսի» 7—8 և 9 գրքերից, գրված է 1900 թ.), «Պատմական պատկերներ» (Տփղիս, 1903, արտատպված է «Լումայից»): Վերջինս, ինչպես նկատված է, նախորդի շարունակությունն է և մասնավորապես լուսաբանում է հիշյալ գաղթօջախի հիմնադրման պատմությունն ու մշակութային արժեքներին վերաբերող հետևյալ հարցերը. «Նոր Նախիջևանի հայկական մագիստրատը», «Նոր նախիջևանցոց կայսերաշնորհ հրովարտակը և նոցա դատաստանագիրքը», «Նոր Նախիջևանի ձեռագրերը», «Նոր Նախիջևանի հայոց հոգևոր դատարանը», «Հովսեփ արքեպ. Արղության և Նոր Նախիջևանի հիմնարկությունը»:

Այս հատորների գիտական քննությունն ու արժեքավորումը, ինչպես նաև նրանց էջերում եղած նալբանդյանական նյութերի ու անդրադարձումների խղճամիտ վերլուծությունն ու իմաստավորումն ըստ ամենայնի դեռ չեն կատարված, ուշադիր ընթերցողը նրանց մեջ դեռ շատ կուսական շերտեր կարող է հայտնագործել: Եր. Շահազիզին մի ժամանակ կշտամբում էին, որ մանրամասնորեն չի վերապատմել Նալբանդյանի «Մինին խոսք, մյուսին հարսն» կորած վեպի բովանդակությունը, մինչդեռ, եթե հարկավոր չափով ծանոթ լինեին «Նոր Նախիջևանը և նոր նախիջե-

[12] Այս մասին տե՛ս «Տեղեկագիր ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի», № 5, 1931, էջ 5, նաև՝ **Կ. Գրիգորյան**, Ո՞վ է վերծանել Նալբանդյանի ծածկագիր անունը, «Коммунист» (օրաթերթ), Երևան, 2 մարտի 1966:

Պահպանվել է նաև Մ. Լեմկեի՝ Եր. Շահազիզին ուղղված պատասխան նամակի բնագիրը (1906 թ.), տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Եր. Շահազիզի դիվան, III բաժին, № 117:

վանցիք» գրքին, պիտի գտնեին վեպի հերոսների ու տեղագրության մասին խիստ ուշագրավ այս հատվածը.

«Ս. Կարապետի ուխտավոր կտրիճներից է Մ. Նալբանդյանցի «Մինին խոսք, մյուսին հարսն» վեպի գլխավոր հերոսը, որ նշանված լինելով և յուր «մուրատին» (մուրազին) հասնելու համար Ս. Կարապետին ուխտ արած ու գնացած լինելով՝ մինչև որ վերադառնում է ուխտից, յուր նշանածին արդեն ուրիշին հարս եղած է գտնում: Նույն վեպի մեջ հանգուցյալ հրապարակախոսը նկարագրել է, ի միջի այլոց, և նախիջևանցվոց Ս. Խաչի «Սալըխ Սու»-ին ուխտ գնալու և սուրբ աղբյուրի մոտ գտնված ծառերի վրա հնոտիներ փաթաթելու, իբրև յուրյանց ցավերն այնտեղ թողնելու նշան-սովորությունը»[13]:

Վերջին տարիներս, երբ գտնվեց ու երկիցս հրատարակվեց վեպը, կարող ենք հաստատ ասել, որ Շահազիզը ոչ թե անտեղյակ է եղել բուն վեպին և ենթադրաբար է խոսել նրա մասին, ինչպես կարծում էին **ոմանք**, այլ հասու է եղել բանին. Նրա պատմածները դրվագ առ դրվագ համընկնում են Նալբանդյանի վիպասանությանը:

Եր. Շահազիզի աշխատությունների նախիջևանյան շարքը կարևոր սկզբնաղբյուր է նաև Հարություն Ալամդարյանի և Ռափայել Պատկանյանի կյանքի ու գործունեության և առանձին գրվածքների ստեղծագործական պատմության ու ազգագրական միջավայրի ուսումնասիրության համար, որոնց վերաբերյալ նույնպես գիտնականը հայթայթել է մեծարժեք նյութեր: Շահազիզը մասնավորապես առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել Ալամդարյանի ողբերգական վախճանի մասին վստահելի հուշագրական նյութեր և նկարագրել բանաստեղծից մնացած հիշատակները՝ ցայժմ չարժեքավորված և չհրատարակված նրա յուղաներկ դիմանկարը, անձնական որոշ իրեր, ձեռագրեր և այլն:

Նալբանդյանի կյանքի ու ժամանակի, նրա ու Նոր Նախիջևանի ծնունդ մյուս նշանավոր գրողի՝ Ռափայել Պատկանյանի, սրա հոր՝ Գաբրիելի բարդ ու հակասական հարաբերությունների լուսաբանման ընթացքում Եր. Շահազիզը զգաց, որ XIX դարի հայոց մտավոր զարգացման պատկերը շատ թերի կլիներ, եթե հատուկ մենագրական աշխատություններ չնվիրվեին այս վերջիններին էլ: Դրա համար նրա ձեռքին կային բավականաչափ նյութեր, հետազոտվելիք հեղինակների ձեռագիր ու անտիպ երկերից շատ էջեր:

Լայնորեն ընդգրկելով այդ սկզբնաղբյուրները՝ Եր. Շահազիզը նախ հրատարակեց «Իմ հիշողությունները Ռ. Պատկանյանի մասին» ծավալուն հոդվածը, որը սովորական հուշագրությունից վերաճում է գրական-բանասիրական ուշագրավ հետազոտության[14], իսկ հետո՝ «Տեր Գաբրիել Պատկանյանց» աշխատությունը (առանձին գրքով՝ 1910 թ., Տփղիսում):

Պատկանյան—Նալբանդյան փոխհարաբերությունների խնդիրը երկուսի մեջ էլ շատ էջեր է զբաղեցնում, և Շահազիզն այն լուծում է ո՛չ թե նեղսիրտ ազգայնականության դիրքերից, այլ ճշմարտության շահերից ելնելով՝ արդարացի կողմ հռչակելով Մ. Նալբանդյանին:

Եր. Շահազիզի 1890—1900-ական թթ. գիտական հետախուզումների պատկերն ամբողջացրած կլինենք, եթե համառոտակի անդրադառնանք նաև «Մկրտիչ Հով-

[13] «Ազգագրական հանդես», գիրք IX, 1902, էջ 34:

[14] Տպագրվել է «Տարազ» շաբաթաթերթի 1901 թ. համարներում, փետրվարից հուլիս ընկած ժամանակամիջոցում (տե՛ս №№ 6—14, 19—21 և 23—28):

սեփյան Էմին» կենսագրական-գրական տեսությանը, որն աշխատասիրողը ձոնել է Սմբատ Շահազիզի գրական-մանկավարժական գործունեության 35-ամյա հոբելյանին: Այն գրված է 1899 թ. սկզբներին և նախապես տպագրվելով «Լումա» հանդեսի էջերում, 1900 թ. արտատպվել է առանձին հատորով:

Արդեն տարիների ընթացքում մշակած ու որդեգրած հետազոտական աշխատանքի իր փորձից ելնելով և չպարփակվելով առաջադրած խնդրի նեղ շրջանակների մեջ, գիտնականն ավելի ու ավելի ծավալվելով՝ նոր հայագիտության երախտավորներից մեկի դիմաստվերը գծելուն զուգահեռ շարադրում է ռուս արևելագիտության և հայագիտության արևելահայ դպրոցի պատմությունը, գնահատում այդ մարզում ինչպես Էմինի, այնպես էլ Ս. Նազարյանցի, Կ. Եզյանցի և Ք. Պատկանյանի ու մյուսների ծառայությունները ու թողած գիտական ժառանգությունը, անկանխակալ ձևով ցույց տալիս նրանց ուժեղ ու թույլ կողմերը, նյութի պարտադրանքով՝ հանգամանորեն կանգ առնելով ռուսական գիտական մամուլում XIX դարում երևան եկած և հայերին վերաբերող քիչ թե շատ կարևոր հոդվածների վրա: Այս գրքում խոսվում է նաև Էմինի՝ Լազարյան ճեմարանում և Վլադիմիրի դպրոցների վերատեսչությունում ծավալած գիտամանկավարժական գործունեության մասին, զուգակցելով դրանց իր աշակերտական հուշերը և շարադրանքի ընթացքում ուշադրություն հրավիրելով Էմինի վաստակին անդրադարձած հայ բանասերների ու նրա երբեմնի աշակերտների (օրինակ՝ Ռ. Պատկանյանի) թույլ տված առանձին անճշտությունների ու չափազանցությունների վրա:

«Մկրտիչ Հովսեփյան Էմին» աշխատության մեջ կաս առատորեն մեջ են բերված Էմինի ու նրա բարեկամների նամակագրությունից ուշագրավ հատվածներ, որոնք հնարավորություն են տալիս ոչ միայն ավելի լավ հասկանալու XIX դարի հայ մտավոր կյանքի իրական վիճակը, այլև հայտնագործելու հայ-ռուս գրական ու մշակութային աղերսակցությունների, մասնավորապես Պուշկինի երկերի հայ թարգմանության մոռացված էջեր:

Հայտնի է, օրինակ, որ Մ. Էմինը աշակերտության տարիներին՝ 1830-ական թթ. սկզբներին, թարգմանել է Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» և «Կովկասի գերին» պոեմները, որոնք մնացել են անտիպ, իսկ ձեռագրերը կորել են: Մեր օրերում, գրականության և արվեստի թանգարանում, գտնվեց առաջին պոեմի մի հին, անանուն ու անտիպ գրաբար թարգմանություն և կարծիք հայտնվեց, թե դա հենց Էմինի կատարածն է: Բանասերներն ուրախությամբ ընդունեցին այս լուրը, ոգևորվեցինք մենք ևս: Բայց հիմա, լրջորեն վերընթերցելով թարգմանության բնագիրը, նրա մեջ նշմարում ենք դրիմահայ բարբառի (արտասանության) հետքեր, մինչդեռ Էմինը ծնունդով Նոր Ջուղայից էր և մանկուց այնտեղի բարբառը յուրացրած անձ: Սույն աշխատության մեջ Շահազիզի արած հպանցիկ նկատողություններից հասու լինելով, որ Պուշկինի երկերի առաջին թարգմանիչներից է եղել նաև Էմինի ճեմարանական դասընկեր Սարգիս Խորասանճյանը, որի թղթերում 1890-ական թթ. ինքը հայտնաբերել է Պուշկինի «Բորիս Գոդունով» դրամայի մի քանի տեսիլների թարգմանության ձեռագիրը, որ կատարված է հենց դրիմահայ բարբառով[15], կարծում ենք, որ այդ տվյալների լույսի տակ պետք է վերանայել «Բախչիսարայի շատրվանը» պոեմի մեզ հասած ձեռագիր թարգմանության հեղինակի հարցը և հայ-ռուս գրական առնչությունների պատմության մեջ վերարծարծել Սարգիս Խորասանճյանի վաստակի խնդիրը:

15 **Երվանդ Շահազիզ**, Մկրտիչ Հովսեփյան Էմին, կենսագրական-գրական տեսություն, Թիֆլիս, 1900, էջ 24 և 72:

1890-ական թթ. հենց սկզբներից Երվանդ Շահազիզին մշտապես հանգիստ չէր տալիս գրական-պատմական ամսագիր հիմնելու և նրա շուրջը հայ առաջադեմ գրողներին համախմբելու, նրանց տնտեսապես ապահովելու հոգսը: Այդ ուղղությամբ նա լուրջ քայլեր է անում 1895—96 թթ., ստանում է գրաքննական մարմինների թույլտվությունը, անձնական նամակների միջոցով ջանում ապահովել Պռոշյանի, Ծատուրյանի և մյուսների աշխատակցությունը, խմբագրական աշխատանքներում իրեն գործակցելու համար բանակցություններ վարում հայտնի գրականագետ Մինաս Բերբերյանի հետ[16]: Հանդեսը կոչվելու էր «Գործ» և լույս էր տեսնելու 1897 թ., տարեկան երկու համար: Բայց հետո չնախատեսված նոր արգելքներ են երևան գալիս, և **գործը** մնում է կես ճանապարհին: Շահազիզն, իհարկե, չի վհատվում և երբ մի քանամյակ հետո ներկայանում է առիթը, ճաշակում է նաև այդ «գայթակղությունը», 1918—19 թթ. Մ. Նալբանդյանի ընկերոջ՝ Հովհաննես Բերբերյանի որդու, բանասեր Ռուբեն Բերբերյանի հետ միասին խմբագրելով Նոր Նախիջևանի և Ռոստովի հայ գաղութի պաշտոնաթերթ «Հայ համայնք» շաբաթաթերթը:

5

Երվանդ Շահազիզի գիտական-բանասիրական գործունեության երկրորդ, մեծ շրջանն սկսվում է 1923 թ., երբ հաստատվելով Երևանում և աշխատանքի անցնելով կուլտուր-պատմական թանգարանում, շարունակում էր աշխարհավեր պատերազմի պատճառով առժամանակ ընդհատված հետազոտությունների շարքը Նալբանդյանի ու Պատկանյանի մասին, ինքնաբերաբար թևակոխելով դասական գրականության ուրիշ մեծերի՝ Աբովյանի, Սունդուկյանի ու Սմբատ Շահազիզի կյանքի և ստեղծագործության հարցերի շրջանակը, իր շոշափելի ներդրումներն անում: Նրա գործունեության այդ տարիները ևս նույնքան բեղմնավոր, լուրջ ու օգտաշատ են, ինչպես և նախորդները:

Նոր Նախիջևանի հայ համայնքի մշակութային արժեքները փոխադրելով Սովետական Հայաստան՝ Շահազիզը հնարավորություն էր ստացել առաջին հերթին թարգմանել և հրատարակել Պետրոպավլովյան ամրոցում, բանտարկության օրերին, Մ. Նալբանդյանի գրած նամակները, որոնք ռուս 60-ականների գործունեության նորագույն հետազոտողների աշխատությունների լույսի տակ խոր իմաստ էին ստանում, և որոնցից 15-ի բնագրերը վերոհիշյալ նյութերի մեջ էին:

Շահազիզը, այսպիսով, սովետական շրջանում նախ՝ շարունակում էր նալբանդյանական հետախուզումներն ու ուսումնասիրությունները, իրար ետևից լույս ընծայելով՝ «Միքայել Նալբանդյանի բանտից գրած նամակները. դիտողություններ» («Նորք» հանդես, 1923, գ. 3, 1924, գ. 4 և 1925, գ. 5—6), «Միքայել Նալբանդյանի ծննդյան հարյուրամյակի առթիվ, 1829—1929, ճշտումներ, ուղղումներ և լրացում-

16 Եր. Շահազիզն իր հրատարակելիք ամսագրի մասին հայտարարություններ է տպագրել հայ հեղինակավոր պարբերականներում, տե՛ս մասնավորապես «Արարատ», 1896, № 10, էջ 489 («Առաջիկա 1897 թ. կհրատարակվի Նոր Նախիջևանում «Գործ» գրական և պատմական վեցամսյա հանդեսը...» և այլն):

նեռ Մ. Նալբանդյանի կենսագրության մեջ» («Տեղեկագիր ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի», № 5, 1931, էջ 5—39)[17], «Մ. Նալբանդյանի բանտից գրած երկու անտիպ նամակը» (ուղղված Ղազարոս եղբորը, «Նոր ուղի», 1931, գ. 3, էջ 138—145), «Նամականիք կոմս Էմմանուելի» («Խորհրդային գրականություն», 1935, № 2) հոդված-հրապարակումները և, վերջապես, «Դիվան Միքայել Նալբանդյանի» ժողովածուն՝ իր բնույթով հայ բանասիրական գրականության մեջ նախօրինակը չունեցող մի հատոր (Մելքոնյան հիմնադրամի հրատ., Երևան, 1932, տպաքանակ՝ 1000 օրինակ):

«Դիվանը» մի որոշ առումով հանրագումարի էր ենթարկում Նալբանդյանի կյանքի ու ստեղծագործության հետազոտության ասպարեզում Ծահազիզի ձեռք բերած փորձն ու մտածումների արդյունքները, խնամքով դասավորված բաժիններով վերստին գրական հասարակայնությանը մատուցում Նալբանդյանի մինչ այդ հայտնի բոլոր նամակներն ու պաշտոնական գրությունները՝ ճոխացված բազմաթիվ ծանոթագրություններով ու ներածական ակնարկներով, նրա անձի ու գործունեության մասին ուշագրավ վավերագրեր և հուշագրական տվյալներ, հնօրյա մամուլից քաղված լրատվություններ ու բնութագրականներ, Նալբանդյանի տարբեր ժամանակների լուսանկարներ:

Այս ամենը հաստատուն հիմք եղան և օրակարգի հարց դարձրին հայ մեծ գրողի ու մտածողի երկերի գիտական լիակատար հրատարակությունը, որի պատրաստողներն օգտագործելով Ծահազիզի հավաստի ու փաստալից նկատողություններն ու ծանոթագրությունները՝ հաճախ զլանում էին վկայակոչելու սկզբնաղբյուրը:

Նալբանդյանական մի երկու հրապարակում Եր. Ծահազիզը տալիս է դրանից հետո էլ («Միքայել Նալբանդյանի նամակներից», «Միքայել Նալբանդյանի նորագյուտ նամակը»)[18], բայց դրանք հին նախասիրումներին հագուրդ տալու թռուցիկ պահեր էին միայն և տարիներ առաջ կորցրած ու վերագտած էջեր:

Դարձյալ կուլտուր-պատմական թանգարանում աշխատելու առաջին տարիներին, գրական բաժնի նյութերը կարգավորելիս՝ Եր. Ծահազիզի ուշադրությունն են գրավում Գաբրիել Սունդուկյանցի ստեղծագործական ձեռագրերը, նրա գրած ու ստացած նամակների հարուստ ու անտիպ հավաքածուն, մանկության տարիների չափածո փորձերը: Այդ ամենը նոր լույս էին սփռում հռչակավոր դրամատուրգի կենսագրության և առանձին երկերի ստեղծագործական պատմության այլևայլ կողմերի վրա, որոնք այն օրերին շատ քիչ էին ուսումնասիրված: Դրանց հիման վրա է գրված «Գաբրիել Սունդուկյան, կենսագրական նյութեր» աշխատությունը[19], որ սովետահայ սունդուկյանագիտության երախայրիքներից է:

Սունդուկյանը, սակայն, կարճատև հրապուրանք եղավ անխոնջ բանասերի հետաքրքրությունների շղթայում: Նրա նոր ու բորբոքուն սիրո և մտածումների

17 Նախապես զեկուցվել է Գիտության և արվեստի ինստիտուտի պատմա-հասարակագիտական բաժնում, 1929 թ. հոկտեմբերի 28-ի նիստում: Այս աշխատության մեջ, ի թիվս այլ նորույթների, Ծահազիզն առաջին անգամ խոսում է Նալբանդյանի գրադարանի մասին՝ մեջ բերելով գրքերի լուսանցքներում եղած ուշագրավ նշումները:

18 Տե՛ս «Պրոլետար» օրաթերթ, Թիֆլիս, 1937, № 148 և «Տեղեկագիր ՀՍԽՀ պատմության և գրականության ինստիտուտի», 1938, գիրք I, էջ 235—237:

19 Տպագրվել է՝ «Տեղեկագիր ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի», 1927, № 2 և առանձին գրքույկով, ընդամենը 50 օրինակ տպաքանակով:

առարկան դարձան Խաչատուր Աբովյանի անսովոր անհատականությունն ու կյանքի ստեղծվածային հանգամանքները, որոնց ուսումնասիրությանն էլ այնուհետև նվիրվեց գիտնականը՝ եռանդով ու ինքնամոռացումով:

Երվանդ Ծահազիզի աբովյանագիտական ուսումնասիրությունները ծավալվեցին աստիճանաբար: Սկզբներում, պաշտոնի բերումով, նա ջանում էր հավաքել և թանգարանի գրական բաժնում կենտրոնացնել Աբովյանի այն բոլոր ինքնագրերը, որոնց խնայել էր ժամանակը, այդ նպատակով խնդրելով լուծողկոմ Ա. Մռավյանի աջակցությունը, կամ անձամբ դիմելով ու հորդորելով բոլոր նրանց, ում մոտ, ըստ հասած տեղեկությունների, աբովյանական նշխարներ կային: Գրողի ամբողջական արխիվը, որ պահվում էր ժառանգների մոտ, անկարելի եղավ ձեռք բերել (այն Հայաստանի գրական թանգարանին հանձնվեց միայն 1938 թ.): Ուստի և Ծահազիզը, մինչև այդ տարին, թերթ առ թերթ հավաքել է ցրված բեկորները՝ «Պարապ վախտի. խաղալիք» ժողովածուի սևագիր ձեռագիրը (պակասավոր), գերմանացի հայագետ Հ. Պետերմանին, Ստ. Նազարյանցին, Մ. Մսերյանցին, Պատկանյան եղբայրներին ուղղված հատուկենտ նամակների ինքնագրերը, Կարապետ Կոստանյանի ու Մ. Բարխուդարյանի ժառանգների մոտ և Աղամալյանների ընտանեկան դիվանում պահվող բանաստեղծությունների ձեռագրերը, ակադեմիկոս Քրիստիան Ֆրենին գրած գերմաներեն նամակների պատճենները, Երևանի գավառական դպրոցում Աբովյանի՝ որպես տեսուչ աշխատելու տարիների պաշտոնական գրությունների մի մասի արտագրությունները՝ օժտելով այդ ամենը արժեքավոր ծանոթագրություններով, իսկ օտարալեզու բնագրերը անձամբ կամ ուրիշների օգնությամբ թարգմանելով հայերեն:

Ծահազիզի աբովյանագիտական որոնումների ամփոփումը եղավ «Խաչատուր Աբովյանը (Երևանի գավառական դպրոցի տեսչության 1843—48 թթ. թղթերի և ակադեմիկոս Ֆրենին գրած նամակների հիմունքով)» փոքրածավալ հետազոտությունը, որը նախ, իբրև զեկուցում, կարդացվել է Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի պատմա-հասարակագիտական բաժնի 1928 թ. հունվարի 28-ի և փետրվարի 25-ի նիստերում, իսկ հետո լույս տեսել նույն հաստատության «Տեղեկագրում»[20]:

Մինչև այդ եղած աբովյանագիտական հետազոտությունների շարքում, Մ. Տեր-Ազարյանցի և Ն. Տեր-Կարապետյանի կենսագրական ակնարկներից հետո, սա երրորդ լուրջ ներդրումն է աբովյանագիտության մեջ՝ լինելով փաստալից, անաչառ ու լուրջ, բերելով բազում նորություններ: Առաջին անգամ, ըստ հեղինակային ինքնագրերի, Ծահազիզը հանրությանն էր ներկայացնում Աբովյանի «Երևակայութիւն ի վերայ ճանապարհորդութեան ի լեառն Արարատ» բանաստեղծության մի հատվածը, նրա գրի առած հայերեն, քրդերեն ու թուրքերեն ժողովրդական-աշուղական երգերից մի փունջ (լատիներեն տառադարձությամբ), որոնք հայագետ Պետեր-

20 Տե՛ս «Տեղեկագիր ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի», 1928, № 3, էջ 119—167: Ի դեպ, դեռ 1925-ին սփյուռքի հայ մամուլում («Հայ կյանք», Բեյրութ. 1925, դեկտեմբերի 3, № 54, էջ 3), «Գեղարվեստի լուրեր Հայաստանեն» խորագրով մի հաղորդման մեջ ասված է, որ «Հայաստանի պետական թանգարանի վարչի օգնական Երվանդ Ծահազիզ տպագրության կը հանձնե իր մեկ ուսումնասիրությունը՝ նվիրված Խաչատուր Աբովյանին»: Նշանակում է՝ 1928-ին հանրությանը մատուցված սույն հետազոտությունը նշանակալից չափով պատրաստ էր տակավին 1925-ին, սկսված լինելով է՛լ ավելի վաղ:

ման ժառանգների ազնիվ ընդառաջման շնորհիվ տարիներ առաջ ուղարկված լինելով Հայաստան՝ մնացել էին անտիպ ու չուսումնասիրված:

Լրջորեն խորհելով աբովյանագիտական գալիք հետազոտությունների համար կայուն հիմքեր ստեղծելու մասին, չնայած առաջացած տարիքին (իսկ Ծահազիզն այն ժամանակ 70-ից անց էր), նա համբերությամբ թերթում է հայ և անդրկովկասյան (ռուսական) ծովածավալ մամուլի իրեն մատչելի հավաքածուները, կազմում մատենագիտական ցանկեր և հաշվառման ենթարկում նրանցից էջերում տեղ գտած Աբովյանի երկերը և զանազան անդրադարձումներ, անհրաժեշտության դեպքում թարգմանում, ծանոթագրում և այդ ձևով աստիճանաբար պատրաստում «Դիվան Խաչատուր Աբովյանի» մեծարժեք հատորը՝ աշխատելով վերջինիս վրա ավելի քան մեկուկես տասնամյակ:

Ծահազիզն անձամբ կամ ուրիշների միջոցով երկարատև որոնումներ է կատարել նաև Էջմիածնի մատենադարանում, վերջինիս ընձեռած նյութերով հարըստացրել «Դիվանը», իսկ հաճախ էլ, այս կամ այն աղբյուրից լուր ստանալով նոր հայտնաբերումների մասին, իր գրավոր հարցումներն է ուղղել և տեղեկություն խնդրել: Մեր ձեռքին է նմանօրինակ մի գրություն, որ նա հղել է Էջմիածնի մատենադարանի վարիչ Սեներերիմ Տեր-Հակոբյանին.

«Արգո եղբայր Սեներերիմ

Իմացա, որ արխիվումդ գտնվել են հանգուցյալ Խաչատուր Աբովյանի նամակները՝ գրված Աբիխին (չորս հատ): Խնդրում եմ, եթե իմ այդ լսածը ճիշտ է, նեղություն հանձն առնես՝ ուղարկել այդ նամակները Կուլտուր-պատմական թանգարանիս գրական սեկտորի վարիչ ընկեր Խորեն Սարգսյանին: Ես կօգտվեմ դրանցից իմ «Աբովյանի արխիվը» աշխատանքիս համար և կվերադարձնեմ անկորուստ Ձեզ: Ընդունիր հարգանացս հավաստիքը:

Ե. Ծահազիզ

1932 թ., հունիսի 23, Երևան»[21]:

Ծահազիզի հույսերը արդարացան մասամբ միայն, որովհետև գտնվածները ճիշտ որ 4 նամակ էին, բայց մեկը գրված էր 1829-ին, իսկ երեքը՝ 1844-ին և ուղղված էին Էջմիածնի բարձրաստիճան հոգևորականներից մեկին: Ծահազիզը կարծում էր, որ այդ անձը Ղուկաս արքեպիսկոպոս Արագածունին է (նոր հետազոտությունները ցույց տվին, որ նամակների իրական հասցեատերը կաթողիկոսական տեղապահ Բարսեղ արքեպիսկոպոսն է, որի օրագրերի մեջ էլ պահպանվել են տրված պատասխանների մասին նշումներ)[22]:

«Խաչատուր Աբովյանի Դիվանը» լույս տեսավ 1940 թ.: Գիտնականն այն ձոնել է Հայաստանում սովետական կարգերի հաստատման 20-ամյակին: Աբովյանի ժառանգներից ստացած ձեռագիր նյութերի և տարիների ընթացքում Հ. Ենիկոլոպյանի գործակցությամբ Վրացական ՍՍՀ պետական պատմական դիվանի հավա-

21 Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 239, վավ. 273 (բացիկ):

22 Տե՛ս մեր «Աբովյանը և Բակունցը» հոդվածը, լույս տեսած՝ «Բանբեր Երևանի համալսարանի», 1980, № 2, էջ 57:

քածուներից քաղված վավերագրերի հիման վրա Ծահազիզը ձեռնամուխ եղավ «Դիվանի» երկրորդ գիրքը կազմելու աշխատանքներին, որը լույս տեսավ 1948 թ.: Ժողովածվում ընդգրկված գերմաներեն նյութերն ու նամակները գոթատառ բնագրերից խնամքով վերծանել ու հայերեն էր թարգմանել գրողի թոռը՝ Կոստանդին Աբովյանը: Միայն Ծահազիզի հեղինակությունն ու հմայքը կարողացան կոտրել այդ մարդու համառությունը և գործի լծել, այլապես աբովյանական գոթատառ էջերը այսօր էլ, իրենց մեծագույն մասով, մեզ համար անվերծանելի պիտի մնային:

Ընդհանուր գաղափար տալու համար, թե Երվանդ Ծահազիզը հայ բանասիրության և, ընդհանրապես, աբովյանագիտության համար ի՛նչ գանձեր է հավաքել և ամփոփել «Դիվանների» երկու գրքերում, ասենք միայն, որ դրանցում ամբողջական ու հատվածական ձևով տեղ են գտել Աբովյանի գեղարվեստական երկերից ավելի քան 20-ը, նամակներից ու խնդրագրերից՝ 63-ը, շարադրած պաշտոնական զեկույցներից ու հաշվետվություններից՝ 110-ը, նրան հասցեագրված հայերեն, ռուսերեն և գերմաներեն նամակներից՝ 126-ը, նրա գործունեության ու կյանքի տարբեր շրջաններին վերաբերող 154 վավերագիր, 17 նկար, ինքնագրերից 10-ի նմանահանությունը, բազմաթիվ ուրիշ նյութեր: Այս ամենը դասդասելով որոշակի թեմատիկ բաժիններում, Մ. Նալբանդյանի «Դիվանի» օրինակով՝ այստեղ ևս գիտնականը յուրաքանչյուրին կցել է ծավալուն առաջաբաններ ու բացատրականներ, հարյուրների հասնող սեղմ կամ հանգամանալից ծանոթագրություններ:

Այս նյութերի հիման վրա է Ծահազիզը կազմել 1945 թ. լույս տեսած «Խաչատուր Աբովյանի կենսագրությունը», որն ամենայն խղճմտանքով կարելի է կոչել հայ բանասիրության նախորդ շրջանի ձեռքբերումների հանրագումարը մեծ գրողի ու մանկավարժի կյանքի ու գործունեության ուսումնասիրության բնագավառում՝ գրված առանց գեղեցկացումների, սթափ մտքով, կենդանի լեզվով ու ոգևորությամբ:

Ծահազիզի ինչպես նախորդ բոլոր աշխատությունների ու հրատարակած բնագրերի մեջ, այնպես էլ Աբովյանին նվիրված գրքերում ու «Դիվանների» հատորներում, հարկավ, կան սրբագրելի տեղեր, չարդարացված ենթադրություններ և ոչ բավարար հիմնավորված կետեր, նկատվում են տպագրական վրիպակներ ու վերծանության սխալներ, բայց դա հայ նախորդ բանասիրության ու բնագրագիտության ընդհանուր թերությունն է, իսկ սխալներից ու անճիշտ վերծանումներից ո՛չ ոք ապահովագրված չէ: Հայ հոգևոր կյանքի ողբերգականությունն ու կոտրակումը Ծահազիզին հնարավորություն չեն տվել անձամբ օգտվելու այն բոլոր ձեռագրական հավաքածուներից ու դիվանական վավերագրերից, որոնք անհոցելի կդարձնեին նրա երկասիրությունները:

Եր. Ծահազիզի 1930-ական թթ. սկսած և 1940-ական թթ.սկզբներին ավարտած բնագրագիտական-հետազոտական աշխատությունների մեջ ուրույն տեղ է գրավում Ռափայել Պատկանյանի նամականին, որը հրատարակվելու էր 1941-ին, որպես II գիրք ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի գրականության և լեզվի ինստիտուտի ձեռնարկած «Գրական ժառանգություն» մատենաշարի: Այդ գործն էլ իր բնագրային ու մեկնաբանական մասերով ամփոփում էր Պատկանյանի կյանքի ու գրական ժառանգության սպարեզում գիտնականի երկարամյա որոնումները: Արժեքավոր էին մասնավորապես ծանոթագրությունները, որպիսիք կարող էր կազմել միայն XIX դարի հայ մտավոր կյանքին և Նոր Նախիջևանի անցուդարձերին քաջատեղյակ անձը, Պատկանյանի շատ թղթակիցների անձնական բարեկամն ու գրուցակիցը, իսկ

Երվանդ Շահազիզը հենց այդ մարդն ու գիտնականն էր: Հայրենական պատերազմն առժամանակ հետաձգեց գրքի տպագրությունը, իսկ հետագայում, երբ Հ. Մուրադյանի և Ս. Ինճիկյանի նախաձեռնությամբ սկսվեց Պատկանյանի երկերի ակադեմիական բազմահատոր հրատարակությունը, մարեց նաև «Դիվանը» երբևէ տպագրված տեսնելու հույսը: Գոնե այժմ կարելի է մտածել այդ հատորի մեկնաբանություններից ու ծանոթագրություններից գեթ կարևորները ի մի հավաքելու և որևէ ձևով լույս ընծայելու մասին:

6

Վաղուց հասունացած և պարտադրող, բայց շարունակ հետաձգվող հարց էր դարձել Եր. Շահազիզի համար, իր սիրելի հորեղբոր՝ Սմբատ Շահազիզի կենսագրության և բանաստեղծական ժառանգության տպագրության պատրաստումն ու հրատարակումը, որով նա հատուցած կլիներ իր հոգու պարտքը պաշտելի դաստիարակին, բայց, ինչպես հայտնի է, այդ հարցերով զբաղվելու հնարավորություն նա ստացավ կյանքի վերջին տասնամյակին միայն, երբ վերջակետ դրեց նալբանդյանագիտական և աբովյանագիտական հետախուզումներին: Քառասուն տարի Եր. Շահազիզին հանգիստ չէին տալիս Սմբատ Շահազիզի անձն ու կերպարը, մանավանդ որ վերջինիս արյունակից հարազատներից Երվանդը միակն էր, որի առջև բանաստեղծը բաց էր արել իր սիրտը, պատմել շարունակական հոգսերի ու կրած տառապանքների մասին, անձնական զրույցների և բազում նամակների միջոցով հաղորդակից դարձրել հայության անցյալ ու ներկա կյանքի և գալիքի մասին իր խոհերին: Այս առումով՝ նրանք ավելի գաղափարակիցներ էին, քան ծննդյամբ հարազատներ: Իսկ եթե հիշենք, որ նրանց անձնական շփումները սկսվել էին տակավին 1872-ից և շարունակվել 35 տարի, պարզ է, որ Եր. Շահազիզի նման իրազեկ ու հավատարիմ կենսագիր Սմբատ Շահազիզը հազիվ թե երբևէ ունենար:

Աշխատության առաջին տարբերակը կամ, լավ է ասել՝ Սմբատ Շահազիզի գիտական կենսագրության ընդարձակ շարադրանքը Եր. Շահազիզը սկսեց հորեղբոր մահվանից (1907, դեկտեմբերի 24) անմիջապես հետո և ավարտեց շուրջ վեց տարում[23], ապա հղկելով այն՝ առժամանակ պահեց գրասեղանի գզրոցում, որովհետև նա, սովորաբար, գրած աշխատությունները նախապես տպագրում էր մամուլում և հետո միայն մտածում առանձին գրքերով հրատարակելու մասին, իսկ 1910-ական թթ. մեր իրականության մեջ չկար մի այնպիսի ստվար ու երկարակյաց ամսագիր, որին կարողանար դիմել... Միայն 1944 թ. սկզբներին հայկական ակադեմիայի պրեզիդենտ Հովսեփ Օրբելին, ծանոթանալով Եր. Շահազիզի հիշյալ աշխատության բնագրին ու անտիպ մնալու պատճառներին, կարգադրում է նորաստեղծ գրականության ինստիտուտի դիրեկտոր Խորեն Սարգսյանին՝ տպագրության պատրաստել գրքի համառոտ տարբերակը, որը և շուտով լույս տեսավ ակադեմիայի հրատարակությամբ (Երևան, 1944, 94 էջ):

Եր. Շահազիզն այս գրքում ձգտել է ոչ միայն ընթերցողին ներկայացնել բանաստեղծ հորեղբոր «արժանահավատ աղբյուրների հիման վրա հյուսած» կենսագրությունը՝ մեծապես օգտվելով տարիների ընթացքում նրա հետ փոխանակած նա-

23 Բնագիրը պահվում է գիտնականի թղթերում, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Եր. Շահազիզի դիվան, II բաժին, № 21):

մակների ընձեռած տվյալներից և Պ. Պռոշյանի, Ս. Մանդինյանի, Գ. Բարխուդարյանի, Փ. Վարդանյանի ու այլոց հուշերից, այլև ամուր դրոշմել մի քանի անկոծկելի ճշմարտություններ, որոնք, ցավոք, Շահազիզի մասին գրող բանասերներից ոմանք չէին ուզում ընդունել: Ըստ այդմ՝ Սմբատ Շահազիզը թեպետև գրել ու հրատարակել է շատ քիչ, բայց նա իսկական բանաստեղծ է, սեփական դեմքով ու աշխարհընկալումով, նաև՝ մեծ հայրենասեր, որը մոռանալով անգամ սեփական անձը՝ ամեն ինչ զոհաբերել է սիրելի Հայրենիքի ու հայրենակիցների լուսավորության ու փրկության գործին: Նա գրականության ու իսկական գրողների անշահախնդիր բարեկամներից ու բարերարներից է և նյութապես գտնվելով սուղ պայմաններում, լոկ ուսուցչական մարզում խնայած միջոցներով հիմնադրել է «Աբովյան—Նազարյան» գրական ֆոնդը և նպաստներ տրամադրել գրչի կարիքավոր մշակներին՝ Պռոշյանին, Աղայանին, Թումանյանին և այլոց: Ս. Շահազիզը, այնուհետև, «Հյուսիսափայլի» բանաստեղծական դպրոցի խոշորագույն դեմքն է և Մ. Նալբանդյանի գրական աշակերտներից ամենահավատարիմը, որը միշտ հմայված մնաց ուսուցչի անձով ու գործով: Վերջապես՝ Ս. Շահազիզը խստապահանջ քերթող է և ողբերգական անհատականություն, գեղեցկի, ճշմարտության և ազատության ջատագով: Այս գաղափարների արծարծման լույսի տակ էլ շարադրվում կամ մեկնաբանվում են Սմբատ Շահազիզի կյանքի անցքերը:

Իր աշխատության մեջ Եր. Շահազիզը նաև ի մի է հավաքել Սմբատ Շահազիզի կորած ստեղծագործություններից ու հանպատրաստից հորինած երգիծական հանգաքանություններից իրեն հայտնի նմուշները՝ դրանով իսկ առավել ընդարձակելով նրա գրական ստեղծագործության ու թողած ժառանգության մասին մեր պատկերացումները:

Ոգևորված աշխատության տպագրությունից ու գտած ջերմ ընդունելությունից՝ Եր. Շահազիզն անհապաղ լծվում է գործի և շատ շուտով մարմին տալիս իր մյուս երազանքին. 1947 թ. լույս է տեսնում «Սմբատ Շահազիզ, Երկեր» հատորն իր իսկ մեկնաբանություններով ու ընդարձակ առաջաբանով՝ օգտագործելով «Կենսագրության» տվյալներն ու համապատասխան դրվագները: Այս երկու աշխատություններն էլ դարձան հայ բանասերների համար սեղանի գիրք և Սմբատ Շահազիզին նվիրված հետազոտական բնագավառի հիմքն ու սկիզբը: Բանաստեղծի մասին գրող ամեն ոք այսուհետև մեծապես պիտի օգտագործի նրա ամբարած փաստերը, հուշագրական բնույթի տվյալները, հավատով ու վստահությամբ քայլի նրա ակոսած ճանապարհով:

7

1920—30-ական թթ. Եր. Շահազիզն ստեղծում կամ վերջնականապես ավարտում է հայրենագիտական աշխատությունների մի շարք, որոնք բնույթով մերձենում են Նոր Նախիջևանի հիմնադրման պատմության և հանրային, մշակութային ու առտնին կյանքի այլևայլ կողմերը լուսաբանող գրվածքներին և առ այսօր մեծ մասով մնում են անտիպ: Երեքն են դրանք՝ «Հին Երևան», «Աշտարակի պատմությունը» (հնագիտական-պատմական տեսություն) և «Չերքեզիա կամ Չերքեզիստան և չերքեզահայք» (պատմական տեսություն): Լույս է տեսել միայն առաջինը՝ «Հին Երևանը» (Մելքոնյան հիմնադրամի հրատ., Երևան, 1931), որը գրված է Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի հանձնարարությամբ: Այս գիրքն արդար կլիներ կոչել Այրարատյան աշխարհի այդ հնագույն բնակավայրի պատմական կյանքի ու հնու-

թյան հիշատակարանների **ուղեցույց**, որի համար առատորեն օգտագործված են հնագիտական պեղումների (հարկավ, մինչև 1930 թ. եղած), վիմագիր արձանագրությունների, հայ մատենագիրների ու հիշատակագրողների և միջնադարյան ճանապարհորդների ուղեգրական երկերի ընձեռած տվյալները, իր տեսակի մեջ եզակի մի աշխատություն ու առաջին փորձ սովետական շրջանի պատմահնախոսական գրականության մարզում:

«Աշտարակի պատմությունը»[24], որն սկսված լինելով շատ վաղուց, տակավին 1908-ին, վերջնականապես ավարտվել է երկուս ու կես տասնամյակ հետո միայն, 1934-ին, յուրատեսակ որդիական պարտք էր՝ հատուցված հարազատ վայրերին: Վիմագրերը վերծանելիս ու մեկնաբանելիս՝ հեղինակին օգնել են հայտնի լեզվաբան Գ. Ղափանցյանը, արվեստաբան ու վիմագրագետ Գ. Հովսեփյանը, հնագետ Ա. Լոռու-Մելիք-Քալանթարը: Գրքի հրատարակության բախտը պիտի տնօրիներ Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտը, բայց այն մինչև ներկա տարին մնում էր ձեռագիր վիճակում: Ծերունազարդ գիտնականին շատ էր անհանգստացնում այդ, և իր «Կտակում» հատուկ պարտականություն էր դնում կտակակատարի ու հեռավոր ազգականի, Ստեփան Կամսարականի վրա՝ կատարելու իր իղձը, այդ նպատակի համար վերջինիս տրամադրության տակ դնելով դրամական ողջ միջոցները: Այժմ, գիտնականի այդ կարևոր աշխատության հրատարակությամբ, կարծում ենք, մի որոշ չափով հատուցած կլինենք հայագետների պարտքը նրա անթառամ հիշատակի հանդեպ:

Ցարդ անտիպ մնալով՝ նույնպիսի լուծման է սպասում նաև «Չերքեզիա կամ Չերքեզիստան և չերքեզահայք» աշխատությունը, որն ամբողջացվել է 1936 թ.[25], որի նյութը հայերի ու կովկասյան լեռնականների փոխհարաբերության հարցերն են և շուրջ 150 տարի առաջ հիմնադրված՝ Հյուսիսային Կովկասի Արմավիր քաղաքում հավաքված չերքեզահայերի պատմական ու ընտանեկան կյանքը՝ վերաստեղծված արժանահավատ վավերագրերի, ավանդական զրույցների և պատկառելի ու լավատեղյակ արմավիրցիների հաղորդած տվյալների օգնությամբ:

Կյանքի վերջին տարիներին Երվանդ Շահազիզն ամբողջությամբ կլանվեց իր անցած երկար ճանապարհին հանդիպած, իր ուշադրությունը գրաված, իր մտքի ու հիշողության վրա խոր հետք թողած մարդկանց դիմաստվերները կամ հուշագրական պատկերները վերաստեղծելու գաղափարով, իր իմացածները ճշտությամբ ու անկորուստ գալիք սերունդներին հաղորդելու մտատանջությամբ և օգտվելով «Էջմիածին» ամսագրի խմբագրության հրավերից՝ արագությամբ գրեց «Իմ հուշերից» շարքը (15 դիմանկար, որոնցից 10-ը լույս տեսան նույն հանդեսում, իսկ մյուսները՝ հետմահու, 1980-ին միայն):

Երվանդ Շահազիզի հիշողությունների կենտրոնական դեմքերն են՝ ականավոր հրապարակախոս Ստ. Նազարյանցը, գրողներ Ռ. Պատկանյանը, Պ. Պռոշյանը, Ս. Շահազիզը և Ղ. Աղայանը, նկարիչներ Հովհաննես Այվազովսկին ու Վարդգես

24 Աշխատության երկու տարբերակների բնագրերը պահվում են գիտնականի թողոններում, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Եր. Շահազիզի դիվան, I բաժին, № 8 և 9):

25 Տե՛ս նույն տեղում, I բաժին, № 10:

Սուրենյանցը, դերասան Պետրոս Ադամյանը, երգիչ Սաշկա Դավիդովը, թարգմանիչ Փիլիպոս Վարդանյանը, գիտնականներ Ն. Մառը, Վ. Բաստամյանը և Գ. Խալաթյանցը՝ իրենց առանձին կյանքով ու բնավորության գծերով, գիտական հետաքրքրություններով ու որոնումներով, տագնապներով ու հոգսերով: Հայագետ-բանասերի գիտական ժառանգության այս բաժինը ևս հետաքրքրասերներին ընձեռում է գրական-պատմական մեծարժեք տվյալներ և կենսագրական խոսուն դրվագներ, որոնք կարող են ուղղություն տալ երիտասարդ հետազոտողների բանասիրական որոնումներին՝ հանգեցնելով կարևոր արդյունքների:

Երվանդ Շահազիզի վերջին տարիների չարաչար պարապմունքների արգասիքներից են, վերջապես, 1945—1951 թթ. տպագրված շուրջ երկու տասնյակ հոդվածները, որոնք նվիրված են՝ Աբովյանի ու Պատկանյանի կենսագրության մասնավոր հարցերին («Խաչատուր Աբովյանին վերաբերող նորագյուտ մի վավերականի առթիվ», «Բանաստեղծ Ռափայել Պատկանյանի նամակը Գլադստոնին և դրա պատասխանը»)[26], հայոց նոր քնարերգության երկու մարգարիտների՝ «Ծիծեռնակի» և «Արաքսի արտասուքի» ստեղծագործական պատմությանն ու միջազգային առնչություններին[27], Հ. Ալամդարյանի, Մանվել Կյումուշխանեցու, Միքայել Սալլանթյանցի, Նորայր Բյուզանդացու, Քերովբե Պատկանյանի, Կարապետ Եզյանցի, Մկրտիչ Սանասարյանի, Լևոն Տիգրանյանի գրական-գիտական վաստակին, անտիպ ժառանգությանը, հանրային ու մշակութային գործունեությանը[28]:

Եր. Շահազիզի այդ աշխատությունները օգնում են ժամանակակից հետազոտողներին՝ ավելի լավ հասկանալու XIX դարի հայ մտավոր կյանքը իր գլխավոր ուղղություններով ու դեմքերով, ներքին կռիվներով ու հակամարտություններով, միաժամանակ, ու թերևս ամենից ավելի, իրեն՝ գիտնական ու մարդ Երվանդ Շահազիզին, իր քաղաքացիական բարձր նկարագրով, բազմազբաղ առօրյայով, շփումներով ու հետաքրքրություններով, աշխարհի, մարդկության ու հայության ճակատագրի մասին ունեցած հայացքներով:

Գիտնականի դիվանում հրատարակության են սպասում մեծ ու փոքր ուրիշ գրվածքներ էլ, մասնավորապես՝ «Ռ. Պատկանյանի կենսագրությունը էական գծերով» հատորը, վերջինիս մասին զանազան հոդվածներ և այլն:

Եր. Շահազիզի ծննդյան ու մահվան օրվանից անցել են 130 և 35 տարիներ: Նրա ժամանակներում ու նրանից հետո գիտության ու բանասիրության մեջ հանդես են եկել շատ նոր անուններ, հրատարակվել բազում արժեքավոր աշխատություններ: Բայց Շահազիզը, իբրև գիտնական ու մարդ, մնում է մեծ ու ինքնատիպ՝ իր ազնիվ ընթացքով, հայագիտությանը թողած գիտական արժեքավոր ժառանգությամբ, նախանձելի նվիրումով ու անսպառ եռանդով:

26 Տե՛ս համապատասխանաբար «Էջմիածին», 1948, № 5—6, էջ 43—48 և 1945, № **11—12**, էջ 63—69:

27 Նույն տեղում, 1947, № 1—2, էջ 59—64 և № 3—4, էջ 45—60: 1951, № 4—6, էջ 68—69:

28 Այդ աշխատություններից հինգը վերատպված են 1980 թ. լույս տեսած «Հիշողություններ և դիմաստվերներ» հատորում:

8

Հիմա, երբ ըստ ամենայնի ծանոթացանք Եր. Շահազիզի կյանքի ուղուն և գիտական հետաքրքրություններին, նրա հայագիտական վաստակի իրական արժեքին ու արդիական նշանակությանը, կրկին անդրադառնանք «Աշտարակի պատմությանը», որը գիտնականի ամենափայփայած զավակն էր, բայց այսպես ասած՝ դժբախտ աստղի տակ ծնված զավակը, որովհետև, քանի դեռ ողջ-առողջ էր հեղինակը, նրան չհաջողվեց չէ թե միայն տպագրյալ գրին հանձնելու, այլ, գոնե, մեքենագրել տալու ձեռագիրը, որպեսզի կրկին օրինակներ ունենալով՝ անվնաս պահեր հետագա փորձություններից (որոնցից, ինչպես կտեսնենք ստորև, այս աշխատությունը չկարողացավ խուսափել):

Հեղինակի վկայությամբ՝ Աշտարակի պատմության համար նյութերի հավաքումն ինքն սկսել է 1908-ից, բայց գրել է դանդաղ, ընդմիջումներով, և արդյունքն եղել է մի «Էսքիզային պատմություն» կամ ուրվագիծ՝ «մնայուն, երկարաշունչ հոդվածի ծավալով»: Աշխատության այդ տարբերակը, որն, ամենայն հավանականությամբ, ավարտված է եղել մինչև Եր. Շահազիզի՝ Նոր Նախիջևանից Սովետական Հայաստան (Երևան) փոխադրվելը (1922 թ. վերջերը), այնուհետև ուղարկվել է Վիեննայի Մխիթարյան միաբաններին՝ «Հանդես ամսօրյա» պարբերաթերթում (նաև՝ առանձին գրքույկով) տպագրելու համար: Այդ ձեռագիրը կորել է ճանապարհին, իսկ նախապատրաստական նյութերը և պատճենը չեն պահպանվել: Հետևաբար, այժմ հաստատ ոչինչ չենք կարող ասել ավարտման ճշգրիտ տարվա, հոդվածի իրական ծավալի և ընդգրկման սահմանների մասին:

1929 թ. առաջին ամիսներին Եր. Շահազիզը (երևի թե՝ սևագիր էջերի և հին ու նոր որոշ նյութերի հիման վրա) սկսում է վերականգնել կորած աշխատությունը: Այդ ընթացքում իրենց օգնությունը նրան չեն զլանում հայտնի հնագետ-պատմաբաններ և հայագետ-բանասերներ Գարեգին Հովսեփյանը, Գրիգոր Ղափանցյանը, Աշխարհբեկ Լոռու-Մելիք-Քալանթարյանը: Առաջինը միաժամանակ Եր. Շահազիզին տրամադրում է Աշտարակի վիմագիր հիշատակարանների իր վերծանության տետրակը, իսկ երկրորդը Կարմրավորի խորհրդավոր արձանագրության նոր վերծանությունը՝ հանդերձ պատմական տեղեկանքով: Զգալով որ մասնավորապես միջնադարյան Աշտարակի պատմության խնդիրները այնքան էլ պարզված չեն՝ նույն տարվա հունիսի 8-ին Եր. Շահազիզը Գ. Հովսեփյանին է դիմում հետևյալ խնդիրքով.

«Ինձ հատկապես ներկայումս շահագրգռում է Վաչուտյան տոհմի պատմությունը, որի մասին դուք միայն հարևանցի եք խոսում ձեր արժեքավոր աշխատանքում (իմա՛ «Խաղբակյանք և Պռոշյանք Հայոց պատմության մեջ» գրքում—Պ. Հ.): Ես, դուք գիտեք, որ տարիներ առաջ գրել էի Աշտարակի պատմությունը և ուղարկել Վիեննա, գիտեք նույնպես, որ այդ գրվածքը տեղ չէր հասել ու ճանապարհին կորստյան մատնվել: Այս ձմեռ ես վերստին գրեցի այդ «Հնագիտական ու պատմական տեսությունը», բայց ավելի ընդարձակ ու ավելի մանրամասնաբար: Օգտվել եմ ձեր՝ ինձ տված արձանագրություններից, բայց իմ ձեռքին եղածները պակասավոր են: Դուք, անկասկած, բոլորն ունեք, և ես կուզենայի բոլորն էլ օգտագործել՝ համեմատելով դրանց ընթերցումները իմի ու ուրիշների ընթերցվածների հետ, որպեսզի դրանք մնան լինեն իմ գրվածքի մեջ արդեն բոլորովին զտված ու ճշտված:

Աշտարակի արձանագրություններից չի երևում, թե դա ո՞ր իշխանական տոհմի կալվածքի մեջ է եղել՝ դրացի գյուղերի նման Վաչուտյանների՞, թե՞ մի ուրիշ

տոհմի: Արձանագրության մեջ հիշվում են Աղբուղան և յուր ամուսին Սիթի խաթունը, Արջուկ իշխանը ու յուր ամուսին «Տիկնանց տիկինը», Անանավորը ու Ղուտալչաքը և Սադուն իշխանը:

Աղբուղան հայտնի է, բայց թե ո՞վ է Արջուկ իշխանը, որի ամուսինը իրեն կոչում է «Տիկնանց տիկին», ո՞յք են Անանավորը և Ղուտալչաքը, հայտնի չեն: Մենք կարծում ենք, որ Սադունը հայտնի Սադուն Արծրունի իշխանն է, «պարոն Խութլուբուղայի» հայրը, որ, ինչպես դուք գրել եք, վախճանվել է 1282 թվին:

Այստեղ, ի միջի այլոց, ես պիտի հաղորդեմ ձեզ, որ թանգարանս այժմ ունի պարոն Խութլուբուղայի <նկարի> շատ ընտիր դիտահանությունը, որ կատարել է մեր պատվերով հայտնի Նատալյա Տոլմաչևսկայան Հաղբատի որմնանկարից:

Ահա՛ այս բոլորը և սրանց նման ուրիշ բաներ կարոտ են պարզաբանության, որի համար հարկավոր է ինձ ձեր աջակցությունը»[29]:

Գ. Հովսեփյանի պատասխանը (եթե գրվել է) չի՛ պահպանվել: Ի՞նչ նոր տվյալներ է նա հաղորդել կամ չօգտագործված աղբյուրներ մատնանշել Աշտարակի պատմության մասին, չգիտենք: Աշխատության շարադրանքն ևս ենթադրություններ անելու հիմքեր չի տալիս:

Պատմության այս երկրորդ տարբերակի ձեռագիրը հասել է մեզ և այժմ պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, գիտնականի թղթերում (I բաժին, № 9): Այն խորագրված է. «Աշտարակ (Հնագիտական պատմական տեսություն)»: Գրված է կիսված թերթերի (հաշվապահական մատյանից փրցված) երկու էջերի վրա, ունի 78 հիմնական էջ և բազում լրացումներ՝ առանձին թղթիկների և թերթերի վրա, որոնք արված են այդ ու հետագա տարիներին և տեղադրվելու էին աշխատության տարբեր մասերում: Դատելով շարադրանքից՝ հեղինակի ուշադրության կենտրոնում գլխավորապես եղել են Աշտարակի պատմական անցյալը և վիմագիր հիշատակարանները, քան ժողովրդի ներքին կյանքն ու առտնին փոխհարաբերությունները. սահմանափակ ծրագիրն ու ծավալը նրան հնարավորություն չեն տվել ընդարձակվելու: Արդյոք Եր. Շահազիզն արե՞լ է որևէ փորձ՝ աշխատության այդ տարբերակը տպագրելու, ոչինչ հայտնի չէ:

1934 թվականին (եթե ո՛չ փոքր ինչ վաղ) Եր. Շահազիզը ձեռնարկում է աշխատության նոր ու ընդարձակ տարբերակի ստեղծմանը՝ ղեկավարվելով ընդհանրապես որևէ «երկրի ընդհանուր պատմական կյանքի կապակցությամբ շարահյուսված պատմական երկասիրության» բովանդակության, ձևի, ծավալի ու գունավորման մասին ունեցած իր պատկերացումներով, իսկ Աշտարակի, որպես կենտրոնական գյուղի, պատմության դրվագները լայն հնարավորություններ էին տալիս հետազոտողին լավագույնս վերստեղծելու «Արարատյան երկրի բոլոր հայ գյուղերի անցյալ պատմական կյանքի ընդհանուր պատկերը», որին և ձգտում էր հեղինակը:

Եր. Շահազիզն «Աշտարակի պատմության» վրա աշխատել է քառորդ դարից ավելի: Նա համբերությամբ թերթել է հայագիտական ծովածավալ գրականությունն ու ձեռագիր հիշատակարանները, անհրաժեշտության դեպքում օգնության կանչել պայծառ հիշողություններ ունեցող և իր պատմության անցքերին ու անձանց ականատես հին աշտարակցիներին, միախառնել այդ բոլորին իր անձնական տպավորություններն ու անձնական հուշերը և ութսունամյա հասակում վերընթերցելով

29 Մատենադարան, Գ. Հովսեփյանի դիվան, թղթ. 96, վավ. 1212, տպ. ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1983, № 10, էջ 86—87 (Ս. Զաքարյանի հրապարակումը):

շուրջ երեք տասնամյակի ընթացքում կուտակված ատաղձները՝ դրել դրանք նոր ու վերջնական համակարգի տակ և բաշխել տասնիննը մեծ ու փոքր գլուխների մեջ՝ հանդերձ առաջաբանով, վերջաբանով և օգտագործած աղբյուրների ցանկով: Էականն այն է, որ նա հրաշալի գիտեր իր նյութը, իր նկարագրած անձանց ու անցքերից շատերին անձամբ ծանոթ էր, տարիներով ապրել ու շնչել էր աշխարհագրական նույն միջավայրում:

Եր. Շահազիզն, այսպիսով, սոսկ երկասիրության ո՛չ միայն աշխատասիրողն է, այլև սկզբնաղբյուրներից գլխավորն ու ամենավստահելին, որի անսպառ եռանդի ու անդադրում որոնումների շնորհիվ անմահացել են նախասովետական շրջանի հայ գյուղի (և նրանցից ամենատիպականի) յուրահատուկ կյանքն ու կենցաղային առօրյան, տնտեսական վիճակն ու սոցիալական փոխհարաբերությունները: Եր. Շահազիզի ուշադրության կենտրոնում են եղել հին Աշտարակի հատկապես այն դեպքերն ու դեմքերը, որոնք բացահայտում են գեղջուկ հայի բնավորությունն ու հոգեբանությունը, և իրենց կարևորությամբ, գործունեության շառավղով ու վաստակով խոր հետք են թողել Հայաստանի վերջին դարերի քաղաքական ու մշակութային կյանքի և պատմական ու հասարակական զարգացման վրա: Մի գյուղի պատմությունից գիրքը վերածել է դասական հայ գյուղի կյանքի ու կեցության հուշարձանի՝ առայժմ եզակի ու անկրկնելի յուր տեսակի մեջ:

«Աշտարակի պատմության» այս երրորդ տարբերակը Եր. Շահազիզը պատրաստել է Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտի հանձնարարությամբ և ավարտելով այն 1934 թ. նոյեմբերի 13-ին, հենց նույն օրն էլ գրել (թվագրել) է Առաջաբանը և հատուկ դիմումի հետ ներկայացնելով ինստիտուտի դիրեկտորին՝ խնդրել է հետևյալը.

«Ներկայացնելով արգությանդ իմ «Աշտարակի պատմության» ձեռագիրը, սրանով խնդրում եմ, որ կամ դուք անձամբ կարդաք և կամ հանձնեք կարդալու ինստիտուտիդ պատասխանատու քարտուղար ընկ. Կարապետ Մելիք-Հովանջանյանին և կամ ընկեր Մորուսին, և, հավանություն գտնելու դեպքում, տաք տպագրության՝ նախապես մեքենագրել տալով և ձեռագրի հին ուղղագրությունը նորի վերածելով:

Ընդսմին հատուկ խնդրում եմ, որ ընթերցանության և քննության գործը, ըստ հնարավորության, արագ կատարված լինի, և իրավունք եմ վերապահում ինձ, ձեռագրի քննության գործողությունների վերջանալուց հետո, դրա մեքենագրած և տպագրության համար պատրաստած օրինակը ետ վերցնել, պարտավորվելով նույն ժամանակ՝ իսկույն ևեթ, ըստ առաջին պահանջման, վերադարձնել, երբ ձեռագիրը տպագրության հանձնվելու լինի:

Անհրաժեշտ եմ համարում այստեղ հայտնել և այն, որ տպագրվելիք գիրքը պիտի զարդարված լինի Աշտարակի կարևոր հուշարձանների, տեսարանների և արձանագրությունների լուսանկարներով, որոնց ցանկը կցել ենք ձեռագրիս, իսկ լուսանկարները սրա հետ միասին ներկայացնում ենք»[30]:

Ինստիտուտի ղեկավարությունը Եր. Շահազիզին չընդառաջեց: Հետագա տարիներին հեղինակը ձեռագրի մեջ կատարեց մի շարք նոր լրացումներ՝ ըստ նորահայտ սկզբնաղբյուրների, որով ավելի հարստացավ աշխատության բովանդակությունը, բայց նորից, ցավոք, գրքի ճակատագիրը «վստահվեց» անորոշ ապագայի:

30 Եր. Շահազիզի դիվան, I բաժին, № 8 (առանձին թերթի վրա):

Խնդրո առարկա տարբերակի ձեռագիրն ու նկարազարդումները, որոշ կորուստներով, հասել են մեզ: Նախապես ձեռագիրը բաղկացած է եղել 260 հիմնական ու բազմաթիվ հավելյալ թերթերից և շուրջ չորս տասնյակ (գուցե և ավելի) նկարներից: Այժմ պահպանվել են թերթերից միայն 252-ը և 25-ի չափ նկարներ: Անվերադարձ կորել են ձեռագրի 168—174 և 249 թերթերը (ընդամենը՝ ութը), իրենց անուններով միայն հայտնի 24 լուսանկարներից խիստ կարևորները. «19. Շահազիզյանների տունը հին գյուղամասում, որտեղ ծնվել է բանաստեղծ Սմբատ Շահազիզյանը: 20. Պերճ Պռոշյանցի «Սոս և Վարդիթեր» վեպի Վարդիթերը... 23. Աշտարակի գործիչ, տանուտեր Իսում Շահազիզյանցը» և այլն: Զանազան առիթներով իրենց գրքերի ու հոդվածների համար այս աշխատությունից նյութեր քաղելիս (արտագրություններ անելիս)՝ որոշ վա՜յ գիտուններ «մոռացմամբ» հետները տարել են այդ թերթերն ու լուսանկարները, իսկ ձեռագիրն էլ այնպես խառնել, որ անկարելի լինի կորուստը նկատել:

Այդ վիճակում՝ «Աշտարակի պատմության» միակ ձեռագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Եր. Շահազիզի թղթերում, I բաժին № 8), մինչև որ սկսեցինք նրա ուսումնասիրությունը: Բնույթով այն մաքրագիր ինքնագիր է, թեպետ առանձին էջերում կան ջնջումներ ու հավելումներ: Բնագիրն արտագրված է հին ուղղագրությամբ, երբեմնի հաշվապահական մատյանից փրցված մեծադիր թերթերի մեկ էջի վրա, մանուշակագույն թանաքով: Տարիների ընթացքում դեղնել է թուղթը, խունացել թանաքը, և հիմա արդեն շատ բառեր և արտահայտություններ մեծ դժվարությամբ են վերծանվում: Առանձին դեպքերում էլ առաջին ընթերցումից դժվար է կռահել որոշ բառերի և տեղական ու աշխարհագրական անունների ճիշտ ձևն ու իմաստը, որովհետև Եր. Շահազիզը համարյա իրար նման էր գրում **ե** և **ի**, **ո** և **ս**, **ու**, **ա** և **ռ** (նաև՝ **և**), **ղ**, **լ** և **շ**, **ջ**, **չ** և **գ**, **յ** և **ց**, **տ** և **դ** ու մի քանի ուրիշ տառեր, և փորձված բնագրագետն անգամ չի կարող ապահովագրվել սխալ վերծանումներից: Հարկ է եղել միևնույն տողի ու բառի վերծանությանն անդրադառնալ կրկին ու կրկին անգամ, կարդալ տվյալ նյութին վերաբերող ներքին ու արտաքին աղբյուրները, թերթել զանազան բառարաններ, համեմատել Եր. Շահազիզի գրածը իր իսկ գործածած սկզբնաղբյուրների հետ, մինչև որ կարողացել ենք վերջնականապես համոզվել, թե ի՞նչ է դրոշմված թղթի վրա:

Ձեռնարկելով հրատարակության պատրաստել «Աշտարակի պատմության» բնագիրը՝ մենք նախ և առաջ պատճենահանել ենք այն իր հիմնական ու հավելյալ մասերով, որպեսզի ուսումնասիրության ընթացքում շարունակ թերթելով ձեռագիրը՝ նոր վնասներ չհասցնենք առանց այն էլ խունացած էջերին և մաշված եզրերով թերթերին: Ապա՝ վերադասավորել ենք թերթերն ըստ հեղինակի վերջին համարակալման և համապատասխան մասերում տեղադրել հեղինակային հավելումները:

Այնուհետև՝ հենց լուսապատճենների վրա, հին ուղղագրությունը վերածել ենք արդիականի, կանոնավորել կետադրությունը: Վերջապես՝ ամբողջը մեքենագրել ենք տվել, միայն դրանից հետո անցել աշխատության բուն բնագրի պատրաստմանն ու լրացմանը:

Շարադրանքի մեջ հանդիպող որոշ հնաոճ արտահայտություններ, իբրև հեղինակի յուրահատուկ լեզվի դրսևորումներ, թողել ենք անփոփոխ, բայց բառերի ուղղագրությունը մերձեցրել ենք ներկայումս ընդունված ձևերին: Աշխարհագրական անունների հեղինակային գրությունները թողել ենք նույնությամբ, միայն կրկնակի

ձևերի առկայության դեպքում, ինչպես օրինակ՝ Քասաղ-Քասախ, Մողնի-Մուղնի, նախապատվությունը տվել ենք վերջիններին:

Շատ ժամանակ խլեցին հեղինակի ուղղակի ու թաքնված (չակերտներով չընշված) մեջբերումները. մենք որոնել, գտել և սկզբնաղբյուրների հետ համեմատել ենք համարյա բոլոր քաղվածքները, վերացրել սխալ ընթերցումները, լրացրել անուշադրության պատճառով չարտագրված բառերն ու արտահայտությունները, նշել համապատասխան գրքերի, հոդվածների, պարբերականների անունները, գլուխը, էջը, որտեղից վերցված են դրանք, աղբյուրների վերաբերյալ հեղինակի արած ընդհանուր հիշատակությունները դարձրել որոշակի, ընդ որում, այդ ընթացքում, բազում ճշտումներ ենք կատարել նաև աշխատության այլևայլ մասերում և աղբյուրների ցուցակում: Միջանկյալ ասենք, որ ձեռագիր սկզբնաղբյուրների կապակցությամբ՝ ճշտել ու նշել ենք դրանց այժմյան պահպանման տեղը (Մատենադարան, Գրականության և արվեստի թանգարան և այլն):

Եր. Շահազիզի աշխատության կորած թերթերից յոթը (168—174), դատելով համապատասխան գլխի խորագրից, պարունակել են Աշտարակի դպրոցների պատմությունը: Սկզբնաղբյուրների հիման վրա այդ հատվածը մենք շարադրել ենք վերստին՝ որքան հնարավոր է պահպանելով հեղինակի շարադրման ոճը և տեղադրելով սակայն ոչ թե իր բուն տեղում, այլ հավելվածների ու լրացումների շարքում: Դրանից բացի, սույն գրքին կցել ենք այլ հավելվածներ, լրացումներ ու ծանոթագրություններ ևս (վերջինները՝ բնագրի էջատակերին), որոնց նյութը Աշտարակի պատմությանը հայող, չօգտագործված տվյալներն ու վկայություններն են՝ քաղված հեղինակին մատչելի չեղած սկզբնաղբյուրներից, ինչպես նաև որոշ պատմա-բանասիրական վարկածներ:

Աշխատության ձեռագրում տողատակի ծանոթությունները հեղինակը համարակալել է արաբական թվանշաններով անընդմեջ՝ 1—26: Իրականում, դրանց թիվը 18 է, իսկ սխալի պատճառը՝ 9-րդ ծանոթությունից հետո անուշադրության պատճառով կատարված թռիչքը. հաջորդ՝ 10-րդ ծանոթությունը համարակալված է 16, 11-ը՝ 17 և այլն (իսկ վերջին 26-րդը հապավված է): Մենք ուղղել ենք սխալը և նորից համարակալել: Տողատակերին մեր արած լրացումներն ու ծանոթությունները հեղինակայիններից զանազանելու համար մատնանշված են աստղանիշներով (*), իսկ վերջում՝ «Պ. Հ.» անվանատառերը:

Աշտարակի ժողովրդական բանահյուսության հավաքումն ու մեկնաբանումը Եր. Շահազիզի ծրագրի մեջ չի եղել: Այնուամենայնիվ, շարադրանքի մեջ նա հիշատակել ու մեջ է բերել սակավաթիվ նմուշներ, իսկ մեկն էլ պահպանվել է սևագիր նշումների մեջ, ձեռագրին կից: Դա Աշտարակի ժամկոչի՝ հավատացյալներին ուղղված հրավերն է, որ այլ ժողովածուներից ծանոթ չէ մեզ և իր ներքին բովանդակությամբ տալիս է խորհելու նյութ: Ահա՛ այն.

Օրհնյա՛լ է Աստված...
Ժամ հրամայեցե՛ք.
Դատաստան կա գալու,
Պատասխան կա տալու:
Ո՛վ բարի քրիստոնյայք,
Ժամ հրամայեցե՛ք...

Երկու խոսք էլ գրքի նկարազարդումների մասին: Ժամանակին Եր. Շահազիզը կազմել էր դրանց մանրամասն ցուցակը՝ բաղկացած երկու թերթից, և հավաքել նմուշները: Առաջինի վրա նշված է 24 լուսանկարի (հուշարձաններ, դիմանկարներ, վավերագրեր) անուն, երկրորդը չի՛ պահպանվել: Անհետացել են նաև ընտրված լուսանկարներից շատերը: Ելնելով աշխատության բնույթից և հեղինակի ցուցումներից՝ մենք ամբողջացրել (լրացրել) ենք լուսանկարների ցուցակը, պահպանվածներին ավելացնելով գրքի մեջ հիշված ճարտարապետական հուշարձանների, վայրերի ու անձանց նկարներ, նախասովետական Աշտարակից տեսարաններ ու խմբանկարներ: Այս առումով՝ մեզ անգնահատելի օգնություն է ցույց տվել Աշտարակի անցյալին ու ներկային քաջատեղյակ պատմաբան, Աշտարակի քաղսովետի նախագահ Ա. Ի. Շահնազարյանը, որի հորդորանքներին է պարտական աշխատասիրողը գրքի այժմյան ընդգրկման համար (հավելվածների ու լրացումների մի մասը նույնպես նրա խորհրդով է գրված):

Համոզված ենք, որ գիրքն այս ձևով՝ Աշտարակի ու աշտարակցիների նախասովետական կյանքի ու պատմության անկրկնելի պատկերներով, արժանի տեղ կգրավի մեր պատմա-հնախոսական և ժողովրդագիտական գրականության մեջ, որը բնավ էլ հարուստ չէ լուրջ ու վստահելի հետազոտություններով, յուրօրինակ հավերժացումը դառնալով նաև նրա հեղինակի պայծառ հիշատակի, այն մարդու, որն ակադեմիկոս Հովսեփ Օրբելու բնորոշմամբ՝ իր մեջ մարմնավորում էր «ազնիվ ու անշահախնդիր հասարակական գործչի և իսկական գրականագետ-բանասերի» լավագույն հատկությունները՝ «բուռն ու անկաշառ սերը դեպի հարազատ ժողովրդի ստեղծած մշակութային արժեքները, աշխատասիրությունն ու գործունեության համառությունը, համեստությունն ու բարեխղճությունը, գիտական զգուշավորությունն ու մանրակրկիտությունը»[31]:

Աշխատության մեջ, հարկավ, կան նվազ լուսաբանված և հնացած մասեր, բայց դրանք հատկանիշներն են պատմական սկզբնաղբյուրների, որոնց ամբողջությունը մենք կխախտեինք, եթե անհարկի միջամտություններ անեինք:

Բացի այդ, մի շարք հարցերում հեղինակը միշտ չէ, որ ցուցաբերել է դասակարգային հստակ մոտեցում, և դրանց մի մասը, հարկավ, մերօրյա ընթերցողին չի կարող բավարարել: Սակայն դա չի խաթարում Եր. Շահազիզի աշխատության գրանանաչողական նշանակությունը: Չենք կարող նաև անտեսել, որ հեղինակի նման մոտեցման դրդապատճառը, մասամբ, հետևանք է ժամանակի վուլգար սոցիոլոգիզմի ազդեցության:

Բնագիրը հրատարակում ենք ամբողջությամբ՝ բացառիկ դեպքերում միայն կատարելով աննշան կրճատումներ:

Եր. Շահազիզի աշխատությունը տպագրության պատրաստելու ընթացքում, 1985 թ. հուլիսին, Աշտարակի քաղսովետի գործկոմը շրջանային «Աշտարակ» թերթի միջոցով դիմեց հեղինակի համաքաղաքացիներին՝ խնդրելով որ իրենց բնօրրանի մասին ուշագրավ վավերագրեր և լուսանկարներ ունեցողները տրամադրեն դրանք գրքում օգտագործելու համար: Այդ հրավերին արձագանքեցին Վաղինակ և Էլեոնորա Մարգունինները, բժիշկ Աշոտ Շահազիզյանը, ինժեներ Թորգոմ Նահապետյանը, թոշակառու Սուրեն Սուքիասյանը, «Աշտարակ» թերթի խմբագրի տեղակալ Նորայր Զորյանը, Լիպարիտ և Գևորգ Շահազիզյանները, Ռոբերտ

[31] **Եր. Շահազիզ**, Հիշողություններ և դիմաստվերներ, էջ 6:

Հյուսյանը, Համոբ Սողոմյանը և ուրիշներ: Հավաքվեցին նախահեղափոխական Աշտարակին վերաբերող՝ XIX դ. վերջերի և XX-ի սկզբների արժեքավոր լուսանկարներ, որոնց մի մասն օգտագործված է սույն գրքում: Մի շարք նկարներ տրամադրել են՝ Մ. Սարյանի տուն-թանգարանը, Հայաստանի պատմության թանգարանը, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը: Գրքում օգտագործված են հայագետ Գարեգին Հովսեփյանի, հնագետ Կարո Ղաֆադարյանի, լուսանկարիչ Արտաշես Վրույրի և ուրիշների լուսանկարները՝ պատրաստված տակավին 1920—30-ական թթ.: Շատ հուշարձանների նկարներ էլ պատվիրված են հատուկ այս գրքի համար: Գիրքը հրատարակության պատրաստելիս մեզ ամեն կարգի դյուրություն են ընձեռել և անհրաժեշտ նյութեր տրամադրել Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրինությունն ու աշխատակիցները: Գունավոր սլայդները և հին լուսանկարների վերատպությունները մեծ վարպետությամբ պատրաստել է ճանաչված լուսանկարիչ Պողոս Պողոսյանը:

Մեր պարտքն ենք համարում ջերմ շնորհակալություն հայտնել մեզ աջակցած բոլոր անձանց ու հաստատություններին, բոլոր պատվարժան աշտարակցիներին:

ՊԻՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Երվանդ Շահազիզ

ԱՇՏԱՐԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հնագիտական-պատմական տեսություն

ՀԱՌԱՋԱԲԱՆ

Երկար տարիների աշխատանքի գործ է մեր այս երկասիրությունը. մենք սկսել ենք դրա համար նյութեր հավաքել դեռ 1908 թվից և գրել ենք ընդմիջումներով, այն չափով ու ծավալով, որ չափով որ մեր ձեռքին մի որոշ ժամանակի ընթացքում ստուգված և ուսումնասիրված նյութ է հավաքված եղել:

Եվ դրա հետևանքով էլ, հետզհետե, ստացվել է նույն պատմության երեք տեսակ խմբագրություն, որոնք տարբերվել են միմյանցից իրենց ծավալով, ձևով ու բովանդակության կատարելությամբ: Առաջին խմբագրությունն եղել է մի, եթե կարելի է այսպես ասել, էսքիզային պատմություն՝ մի մնայուն, երկարաշունչ հոդվածի ծավալով, որից հնարավոր է եղել միայն մի թեթև, ընդհանուր հասկացողություն ու գաղափար կազմել գյուղի մասին: Երկրորդն եղել է մի ավելի ընդարձակ պատմական տեսություն, որ կոչված է եղել ավելի ընդարձակ, մանրամասն ու լրիվ տեղեկություններ հաղորդելու գյուղի մասին: Եվ երրորդն այն է, որ հանդիսանում է իբրև ամփոփումն առաջին երկուսի և, ընդհանրապես, բոլոր մեր ձեռքին, սկզբից մինչև օրս, կուտակված նյութերի, մի վերջնական խմբագրություն, որին մենք հաղորդել ենք այն բովանդակությունը, ձևը, ծավալը և զունավորումը, որ, մեր հասկացողությամբ, պիտի ունենա ամեն մի երկրի ընդհանուր պատմական կյանքի կապակցությամբ շարահյուսված պատմական երկասիրություն:

Ինչո՞ւ մենք մեր այս պատմական ուսումնասիրության առարկա ընտրել ենք հատկապես Աշտարակը:

Համենայն դեպս, ո՛չ միայն այն պատճառով, որ դա մեր հայրենական գյուղն է, և մենք լավ գիտենք ու ճանաչում ենք դրա կյանքը, դրա պատմական իրադարձությունները, ո՛չ, այլ գլխավորապես և տիրապես այն պատճառով, որ դա ավելի համապատասխանել է մեր նպատակին, իսկ մեր նպատակըն է եղել մի փորձ փորձել՝ տալու մի կենտրոնական գյուղի պատմությունը շարահյուսելու զուգակցությամբ և, ընդհանրապես, Արարատյան երկրի բոլոր հայ գյուղերի անցյալ պատմական կյանքի ընդհանուր պատկերը:

Աշտարակը, ասում ենք, համապատասխանել է մեր նպատակին, որով-

հետև նա մեր այն սակավաթիվ գյուղերից մեկն է, որ պահպանել է յուր գոյությունը հեթանոսական ժամանակներից մինչև մեր օրերը, որովհետև նա, հենց սկզբից, հանդիսացել է, իբրև մի հայտնի բնակավայր, մի աչքի ընկնող կենտրոնատեղի ո՛չ միայն յուր՝ Արագածոտն գավառի համար, այլև բոլոր Արարատյան դաշտի համար, որովհետև նա հարատևել է միևնույն տեղում, պահպանել է անխառն յուր բնակչությունը, յուր նախնական տիպարը, յուր նախնական բարբառը, յուր վաղեմի սովորություններն ու պատմական ավանդությունները և, իբրև այդպիսին, վիճակակից է եղել բովանդակ երկրի հարափոփոխ քաղաքական կյանքի բախտին, պայմաններին ու հանգամանքներին և այդ բոլորի հետևանքն ու ազդեցությունը կրել, փոխանցել յուր կյանքի ու սովորությունների վերա, մի բան, որ շատ կարևոր է մեր և մյուս գյուղերի կյանքի ուսումնասիրության գործի համար՝ հնագույն ժամանակներից մինչև օրս:

Մեր այս պատմությունը հեքիաթական, առասպելաբանական ոչինչ չունի յուր մեջ. մենք տվել ենք Աշտարակի անցյալ երկարամյա կյանքի իրական պատկերը, օգտվելով այնպիսի աղբյուրներից, որոնք ստուգապատում լինելու տեսակետից ոչ մի առարկություն չեն կարող վերցնել, իսկ մեր արած եզրակացությունները և ընդհանրացումներն, ինքնըստինքյան, բխել են նույն աղբյուրների՝ գյուղի մասին հաղորդած հավաստի տեղեկություններից ու փաստերից: Մեր ցույց տված աղբյուրներից արժանի պետք է համարվի ուշադրության մի նոր, մինչև օրս անհայտ ձեռագիր գրվածք, որի հեղինակն է Տեր Սարգիս քահանա Բզնունին, որ ծնված, սնված ու մեծացած լինելով Աշտարակում՝ լավ է ճանաչել գյուղը և գրել է յուր գրվածքը գյուղացիներին հասկանալի լեզվով, նրանց ըմբռնողության համապատասխան եղանակով ու դատողություններով:

Մենք պատմությանս համար հիշյալ 1908 թվին աղբյուրներ որոնելիս՝ գտել էինք գյուղում և այդ գրվածքը, օգտվել դրանից, հետո և ձեռք բերել բուն ձեռագիրը Պետ-բանգարանիս համար: Պարտք ենք համարում ասել, որ, առանց այդ գրվածքի՝ մեզ մատակարարած նյութի օգնության, մենք հազիվ թե ի վիճակի լինեինք պահանջված լրությունը, լիակատարությունը հաղորդած լինել երկասիրությանս, դժվար թե կարողացած լինեինք գյուղի կյանքի մի քանի կարևոր երևույթների հիմնավորումը տված լինել:

Ավելորդ չենք համարում այստեղ նշել և Պատմությանս մի էական պակասը, բերին. այդ այն է, որ մեզ չի հաջողել ավելի լրիվ, ավելի հարուստ տեղեկություններ հաղորդել գյուղի, իբրև մի հնագույն, աչքի ընկնող կենտրոնատեղի եղած վայրի, կյանքի մասին, քան որ հաղորդել ենք: Որ Աշտարակը մի հայտնի, բազմամարդ բնակավայր է եղել, մի հայտնի կենտրոնատեղի, այդ անկասկած է, այլապես չէր կարող նրա մեջ շինված լինել ՏԻՐԱՆԱՎՈՐ կոչված հնագույն, ընդարձակ բազիլիկը, չէր կարող հանված

լինել նրա հրաշալի առուն, որ հանված լինի Ուրարտյան ժամանակները թե քրիստոնեության օրերով, միշտ էլ կմնա մի փառավոր գործ՝ վայել միայն մի բազմաբնակ վայրի, իրագործելի միայն մի նշանավոր կենտրոնի կարող ուժերով և միջոցներով: Բայց թե ի՞նչպիսի բնակավայր է եղել դա, ի՞նչպիսի կենտրոնատեղի, ի՞նչ դեր է խաղացել յուր գավառում, Ամատունյաց նախարարության ֆեոդալ տանուտերների իշխանության ներքո, և հետագայում էլ՝ յուր մյուս պետերի իշխանության ներքո, ինչպես, օրինակ՝ Զաքարյանների, որոնց կալվածներում գտնվել է նա, այդ մասին մենք հավաստի աղբյուրների պակասելու հետևանքով, ձեռնհաս չենք եղել մի որոշ բան ասել:

ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ

1934 թ. նոյ. 13
Երևան

I

ԱՆՈՒՆԸ, ՏԵՂԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Աշտարակ գյուղն յուր Աշտարակ անունը, գյուղացիների ասելով՝ ստացել է յուր Բերդաթաղի այժմ ավերակ Ծիրանավոր կոչված եկեղեցուց, որ հնումը գյուղի միակ և ամենամեծ ծխական եկեղեցին է եղել։ Դա ներսից սրբատաշ քարից է շինված, իսկ դրսից՝ հասարակ որձաքարից, և դիտողի վերա այնպիսի տպավորություն է թողնում, որ, կարծես, սրբատաշ քարից շինված շինությունն յուր գեղեցիկ, նուրբ սյուներով ու կամարներով ամփոփված է մի հաստակուռ, կարծր քարերից շինված պատյանի մեջ։ Յուր բարձր շինության վերա դա ունեցել է ապաստարան խցեր, որոնց հասնելու և մեջը մտնելու համար եկեղեցու միջից կառուցված են եղել սանդուղքներ։ Վտանգի ժամանակ գյուղի քաջ տղամարդիկը բարձրացել են եկեղեցու տանիքը, հսկել են այդտեղից թշնամու գործողություններին և հարկավոր դեպքերում պաշտպանվել և պատսպարվել խցերում, դրանց, այդ խցերի փոքրիկ՝ վերևից կիսաբոլոր ծածկույթ ունեցող լուսամուտներից, որոնք պահպանվել են մինչև այսօր, քարեր նետելով և հրաշեն պարպելով թշնամիների վերա։

Այսպիսով՝ այդ եկեղեցին մի տեսակ բերդի ամենաբարձր աշտարակի պաշտպանության դիրքի կենտրոն հանդիսանալով՝ տեղիք է տվել գյուղացիներին կարծելու, որ գյուղն էլ յուր Աշտարակ անունը ստացել է այդ պաշտպանության աշտարակից, որ, իհարկե, թյուրիմացություն է։

Աշտարակը Հայաստանի հնագույն գյուղերից մեկն է. նրա գոյության սկիզբը կորչում է խորին հնության մեջ։ Ակադեմիկոս Ն. Մառի ասելով՝ Ծիրանավոր եկեղեցու տեղում, հեթանոսության ժամանակները, եղել է վիշապի-Աշտարակ-Աժդահակի կամ Շտեկի պաշտամունքի մի տաճար, որ հետո, քրիստոնեության օրերով, վերածվել է մի հնագույն տիպարի բազիլիկի. «Аштарак, где на развалинах древней святыни дракона,— ասում է

նա,— называвшегося Aшtarak—Ajdahak или шdeк,— сооружен был христианский храм древнейшего базиличного типа» (էջ 278)։ Տաճարի մոտ, ինչպես Հայոց վանքերից ու եկեղեցիներից շատերի մոտ, հետագայում գոյացել է գյուղ, որ հնագույն սրբության անունով կոչվել է Աշտարակ[1]։

Թե ո՛րքան ճիշտ է հարգելի գիտնականի կարծիքը, մենք չենք կարող ասել, բայց հավաստի կարելի է համարել այն, որ Աշտարակ անունը շատ հին է և, իրեն շրջապատող Մուղնի*, Կարբի, Փարպի, Հուշի կամ Ուշի, Օշական և դրանց նման այլ տեղերի անունների հետ միասին, պահպանվել և հասել է մեզ նախնական՝ խալդական-ուրարտական ժամանակներից։

Աշտարակը գտնվելով Արագածի ստորոտում՝ հնումը համարվել է Այրարատյան նահանգի Արագածոտն գավառի գյուղերից մեկը, իսկ ներկայումս Խորհրդային Հայաստանի Աշտարակա շրջանի կենտրոնատեղին է։ Նրա տեղը մի սարահարթ է, որ հարավից տարածվում է դեպի հյուսիս և գտնվում է հյուսիսից՝ Մուղնի, հարավից՝ Օշական, հյուսիս-արևմուտքից՝ Փարպի գյուղերի մեջ, իսկ արևելքից՝ Քասախ գետի և դրա ձախ ափին, դեպի Երևան, Եղվարդ և էջմիածին տարածվող տափարակների մեջ։ Այդ սարահարթը, որ, հարավից սկսած, հետզհետե, բարձրանում է, անհավասար, խորդուբորդ մակերևույթ ունի։ Դրա ամենաբարձր կետն է գյուղատեղի շրջանում, նրա հյուսիսային սահմանի վերա գտնված բարձրավանդակը, որ հնուց կոչվում է Մուղնու թառ, այսինքն՝ Մուղնի գյուղի բարձրություն, որովհետև դրա վերա է թառած Մուղնի գյուղը, դրա վերայից էլ անցնում է Աշտարակից Մուղնի գնացող ճանապարհը. դա յուր բարձրությամբ իշխում է ամբողջ գյուղի վերա։

Մյուս բարձրություններից՝ սարահարթի վերա աչքի են ընկնում գյուղի հարավ-արևելյան կողմում մի բլուր, որ կոչվում է Պառնլական, որի վերա սովորություն են ունեցել հավաքվել հին աշտարակցիք՝ հայտնի տոներին զվարճանալու և այդտեղից դիտելու ձորում, գետի մեջ, Աշտարակի կտրիճների ձուկ որսալու գործողությունը և ս. Մարիանեի բարձրությունը կամ բլուրը, որ այդպես է կոչվել յուր վերա շինված ս. Մարիանե եկեղեցուց։ Սարահարթի մյուս խորդուբորդություններից ու տեղերից հայտնի են իրենց հնուց պահպանված անուններով՝ Ձորաքաշերը, Ձորաճորիկը, Վարդանաքակը, Միջնաճանգը, Օլորանը (ոլորան), Սևաճողերը, Խոպաններն և Խնբերբը, որոնց անուններով կոչվում են ներկայումս այդ տեղերում ձգված այգիները։

Գյուղատեղը, ինչպես երևում է, իրեն շրջապատող տափարակների պես տափարակ է եղել, ծածկված մեծամեծ ժայռերով և մանր խճաքարերով, և հետո

[1] Հին աշտարակցիները իրենց գյուղի անունն արտասանել են ո՛չ Աշտարակ, այլ Հաշտարակ; Տե՛ս նաև Լրացում 1 (Պ. Հ.)։

* Բնագրում մեծ մասամբ «Մողնի», ուղղում ենք ըստ ընդունված ձևի՝ Մուղնի— Պ. Հ.։

միայն, հետզհետե, մաքրվել, մշակվել է։ Այդ առապարի հետքերը մինչև այսօր էլ դեռ կարելի է տեսնել այգիներում, որոնց մեջ, տեղ-տեղ, մնացել են ապառաժներ և մանր քարերի աՀագին կույտեր և բլրակներ, որոնք կոչվում են Չընղըլներ։ Այդ քարակույտերը կազմվել են այգիների մշակության ժամանակ հավաքված ու հողի միջից հանված քարերից։ Դրանցից, այդ քարերից էլ շինված են բազմաթիվ այգիների ցանկապատերը։

2

ՕԴԸ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Աշտարակը գտնվում է խորհրդային Հայաստանի նախալեռնային կոչված գոտում, որ յուր հարավային մասում, որտեղ հենց ընկած է գյուղը, բարձր է ծովի մակերևույթից 1100—1400 մետր, հյուսիսային մասում՝ 700—1200 մետր։ Տարվա միջին ջերմության աստիճանը հարավային մասում հավասար է 9,5°, հյուսիսային մասում՝ 8—10° ց. ջերմ օրերը տևում են երկու-երեք ամիս։ Ջերմագույն ամիսները հուլիս և օգոստոս են, որոնց միջին ջերմության աստիճանը հավասար է 23—26° ց.։ Որովհետև ամենամեծ տաքությունը ընկնում է ամառվա վերջը, այդ պատճառով էլ աշնան սկիզբը շատ տաք է լինում։ Սեպտեմբերի միջին ջերմության աստիճանը, համարյա թե, հավասար է մայիսի միջին ջերմության աստիճանին՝ 19,2° ց., կամ, մինչև իսկ ավելի բարձր <գտնվող վայրերում>՝ 17,7° ց., ինչպես Աշտարակում, և հոկտեմբերինը՝ 14,4° ց., ինչպես դարձյալ Աշտարակում։ Այսպես ուրեմն՝ այստեղ ամառվա սեզոնը, կարծես, առաջ քաշված լինի մի ամբողջ ամսով, իսկ Աշտարակում՝ երկու շաբաթով։

Աշտարակն ինքն առանձնապես բարձր է ծովի մակերևույթից 1171 մետր. նրա տաք ու ցուրտ ժամանակների միջին ջերմության աստիճանը հավասար է. տաքը՝ 22,0° ց., ցուրտը՝ 1,0° ց.։ Նա այգեգործական-պարտիզպանական տնտեսություն ունի և կարոտում է արվեստական ոռոգման։

Դնում ենք այստեղ 1929 և 1930 տարեթվերի օդերևութաբանական տվյալների աղյուսակը Աշտարակի մասին[2]։

2 Աշտարակի օդին և կլիմային վերաբերյալ տեղեկությունները և թվական տվյալները մենք քաղել ենք մեր փորձառու և հմուտ գյուղատնտես Ստեփան Կամսարականի «Пути развития сельского хозяйства Армении» խորագրով ձեռագիր ուսումնասիրությունից, որ նա իրեն հատուկ սիրելությամբ դրել է մեր տրամադրության տակ։

Աղյուսակ

Աշտարակի միջին ջերմության աստիճանը 1929 և 1930 տարեթվերին, միլիմետրերով, ամսե ամիս

Ամիսներ	Ջերմության միջին աստիճան		Մթնոլորտային տեղումներ՝ միլիմետր	
	1929 թ.	1930 թ.	1929 թ.	1930 թ.
Հունվար	1,2°	0,5°	20,2	10,8
Փետրվար	0,9°	0,1°	29,1	33,4
Մարտ	5,9°	5,7°	35,0	56,5
Ապրիլ	12,8°	12,4°	43,0	60,3
Մայիս	18,9°	17,5°	21,1	19,2
Հունիս	20,5°	20,1°	21,6	46,0
Հուլիս	25,0°	25,8°	22,3	13,7
Օգոստոս	26,1°	26,6°	24,3	3,6
Սեպտեմբեր	19,7°	21,1°	16,3	5,2
Հոկտեմբեր	14,4°	12,6°	2,4	64,8
Նոյեմբեր	8,9°	8,7°	0,4	33,20
Դեկտեմբեր	1,5°	1,7°	—	31,8

3

ՈՌՈԳՈՒՄԸ

ԱՊԱՐԱՆԻ ՋՈՒՐԸ, ՄԵԾ ԱՌՈՒՆ ԵՎ ՔԱՍԱԽ ԳԵՏԸ

Հայտնի Ի. Շոպենը խոսելով Հայկական նահանգի ոռոգման մասին, Հայկական նահանգի, որի սահմանների մեջ մտնում էր և ներկա Խորհրդային Հայաստանի երկրամասի մի կարևոր և խոշոր մասը, Աշտարակի հետ միասին, ասում է. «Եթե Հայկական նահանգը բնությունից այդքան առատությամբ օժտված չլիներ ջրերով, ապա նրա հարթ մասն ամբողջությամբ դարձած կլիներ մի ահռելի, անբնակելի անապատ։ Եթե բոլոր ջրերը, որոնք անշահ մնում են գետերի մեջ, հնարավոր լիներ բարձրացնել և անցկացնել դաշտերը, որոնք մնում են անբերրի՝ ոռոգման առուներ չունենալու պատճա-

ռով, ապա մենակ միայն Հայկական նահանգն ավելի բերք կտար, քան ամբողջ Անդրկովկասյան երկիրը։ Բայց այդտեղ, ամենահացառատ գոտում, ոռոգման ջրից զրկված հողը չի կարողանում սնունդ մատակարարել մինչև իսկ ամենաչնչին խոտաբույսերին» (էջ 365)։

Եվ, ճշմարիտ, պետք է ամենայն իրավամբ նկատել, որ այդտեղ երկրի ամենակատաղի թշնամին սակավահողությունը չէ, այլ անջրությունը, որ զրկում է բնակչությանն՝ օգտագործելու յուր ձեռքի տակ գտնված ընդարձակ, անջրդի դաշտերը, որոնք իրենց հողի որակով պակաս արգավանդ չեն երկրի ջուր ունեցած մասերից։

Երկրի այդ հարթ մասում հողն առանց ոռոգման ոչ մի արժեք չունի։ Գյուղացու՝ յուր տրամադրության տակ ունեցած ոռոգման ջրի քանակով միայն կարելի է դատել նրա բավարարաչափ կամ անբավարար հողի տեր լինելու մասին, որովհետև նա կարող է շատ հող ունենալ և, սակայն, սակավահող համարվել, և, ընդհակառակը, համեմատաբար ավելի քիչ հող ունենալ և բավարարաչափ հողի տեր համարվել, նայելով թե նա ջուր ունի՞ և ո՞րքան ջուր ունի յուր հողերը ջրելու համար։ Ասել է, թե այդտեղ գյուղացու՝ հողով բավարարված լինելու չափանիշը նրա ունեցած հողի քանակը չէ, այլ ունեցած ջուրը. այդտեղ ամեն բան կախյալ է ոռոգման ջրից։

Գյուղացիներն ըմբռնելով իրենց երկրի համար ջրի այդ մեծ խորհուրդը՝ ամեն տեսակ ու միջոցով աշխատել են ջուր գտնել և ոռոգել իրենց հողերը. դրա համար նրանք ոչինչ չեն խնայել՝ ո՛չ ծախք, ո՛չ աշխատանք. նրանք իրենց նախնական, նահապետական միջոցներով, իրենց սովորական բահ ու քլունգով գետերի անդնդախոր ձորերից, հեռավոր աղբյուրներից, լեռների լանջերը փորելով, ժայռերը պատառելով, հսկայական թմբեր քաշելով, ամբարտակներ կառուցանելով, հսկայական արվեստական ջրամբարներ շինելով ու լճակներ կազմելով՝ հին ժամանակներից առատաջուր առուներ են հանել, անցկացրել իրենց դաշտերը և ոռոգման այդպիսի արվեստական ջրանցքների ցանցով ծածկել ոչ միայն հարթությունը, այլ այդ հարթությունն եզերող լեռնալանջերն ու առապարները։ Եվ անապատը ծաղկել է, առապարը կանաչել, սար ու ձոր պտղատու ծառաստանի դարձել և «մոր արտասունքը» և «արնե քրտինքը», ինչպես կոչել է գյուղացին այդպիսի դժվարություններով ձեռք բերած ջուրը, ամեն բարիքի դեղ ու դարման է եղել՝ նուշ, թութ, խաղող, բամբակ, դեղձ ու ծիրան, նուռն ու սերկևիլը և ամեն տեսակ պտուղ ու հացահատիկ առատությամբ բուսնել, աճել և լցրել է երկիրը։

Աշտարակը գտնվելով ո՛չ Արարատյան դաշտում, երկրի ցած, հարթության գոտում, այլ հետևյալ նախալեռնյան գոտում, և այն՝ նույն գոտու հարավային մասում, ասել է, թե ո՛չ հեռու հարթությունից, այլ դրան կից Արա-

գածի ստորոտներում, թեև յուր կլիմայական պայմաններով, յուր տեղի դար ու փոս, առապարային հանգամանքներով տարբերվում է նրանից, բայց նմանում է նրան յուր ոռոգման պայմաններով։ Նա այնքան էլ կարոտում է արվեստական ոռոգման, որքան և հարթությունը, և առանց այդպիսի ոռոգման նա մնացած կլիներ չոր ու ցամաք և ամայի։

Աշտարակն առատահող գյուղ է. նրա հողերի ամենախոշոր մասը գըտնըվում է Քասախ գետի ձախ ափին, իսկ փոքր մասը՝ նույն գետի աջ ափին։ Առաջինը մի ընդարձակ, անջրդի տարածություն է, որի մի փոքր մասն է միայն հնուց մշակվել ու պատրաստվել վարուցանքի համար, մնացյալն այսօր էլ դեռ մնում է քարքարոտ և ապառաժոտ առապար, անմշակ ու խոպան*։

Աշտարակցոց հույսը, սակայն այդ հողամասը չի եղել. դրանով չի եղել, որ նրանք ապրել ու ապրում են, որովհետև, ինչպես ասացինք, դրանք բոլորովին անջրդի են և միայն անձրևային տարիներն են առատ բերք տալիս, և այդ էլ՝ եթե միայն չեն վնասվում կարկտից կամ բնության մի այլ պատահարքից, իսկ երաշտ տարիներն իսպառ չորանում են։ Նրանց հույսը մյուս հողամասն է եղել, գետի աջափնյա հողամասը, որի մի մասի վերա նրանք ցանք են արել և ապահով եղել, որ բերք կստանան և, գոնե, իրենց ուտելու հացը կունենան, մի մասի վերա հնուց դեռ ձեռնարկած են եղել այգիներ տնկել, այգեգործությամբ պարապել և, հետզհետե, այդ գործը այնքան սիրել են, որ մասնագիտացել են դրանում և տարեցտարի ավելացրել այգիների տարածությունը ի հաշիվ ցանքատեղերի։

Դրա, այդ հողամասի ոռոգման համար, սակայն, նրանք ունեցել են միայն մի սակավաջուր, նվազ առու, որ կոչվել է Ապարանի ջուր, որովհետև դա հոսել, հասել է Աշտարակ Ապարանից։ Այդ առուն այժմ էլ դեռ գոյություն ունի և ոռոգում է գյուղի այն սակավաքանակ հողերը, որոնք կոչվում են Խոջա բաղի ճողեր և կազմում են Կարբի գյուղի հողերի մի մասը, և հետագայումն են միայն առնվել կարբեցիներից և տրվել աշտարակցիներին։

Ապարանի ջուրը յուր սկիզբն առնում է Դալլու չայ կոչված գետակից, որ հոսում է Արագածի լանջերից և Սաղմոսավանք գյուղից ցած թափվում է Քասախի մեջ, աջ կողմից։ Դա իսկապես գետ էլ չէ, այլ մի սովորական լեռնային հեղեղատ, որ գարնանը յուր ակունքում կուտակված սառույցների հալոցքից ուռչելով և առատաջուր դառնալով՝ մեծաքանակ ջուր է թափում Քասախի մեջ, իսկ ամառը այնքան նվազում է, որ համարյա թե ցամաքում ու աննկատելի է դառնում։ Ահա՛ այդ հեղեղատի մեջ ամառները մնացած ջրի

* Այժմ այդ հողերը մշակվում են, գցված են նոր, ընդարձակ այգիներ։ Քաղաքն ևս ընդարձակվել է և տարածվել գետի ձախ ափի լանջերին Պ. Հ.։

մնացորդն է, որ մտնում է հիշյալ առվի՝ Ապարանի ջուր կոչված առվի մեջ և ոռոգման աղբյուր հանդիսանում ներկայումս խոշա բաղերի ոռոգման համար, իսկ հին անցյալում և՝ ամբողջ աշտարակապատկան Քասախի աջափնյա հողամասի ոռոգման համար:

Թե ո՜րքան նվազ է եղել այդ առուն, ո՜րքան սակավաջուր և ո՜րքան քիչ ջուր է հասցրել նա Աշտարակին, այդ հասկանալի կլինի, եթե մենք ի նկատի առնենք այն հանգամանքը, որ այդ առուն մինչև Աշտարակ հասնելը դեռ պետք է ոռոգեր նրանից վերև գտնված գյուղերի ցանքերը՝ Հին Սերկևլերի, Հուշի գյուղի, Հանավանքի, Կարբու և Մուղնու, և հետո արդեն մտներ Աշտարակ:

Աշտարակցիների կացությունը դժվար է եղել. նրանք չեն կարողացել ավելացնել իրենց սիրած այգիների տարածությունը, որքան հարկավոր է եղել, որքան ուզեցել են. նրանք մինչև իսկ խմելու մաքուր ջուր չեն ունեցել և ստիպված են եղել տաժանելի աշխատանքով, կժերով՝ ուսերի վերա, Քասախի խոր ձորից, գետի կամրջի մոտից կրել: Նրանք, այդ դեպքում, նմանել են առասպելաբանական Տանտալոսին, որ մինչև վիզը նստած լինելով ջրի մեջ, պապակել է ծարավից: Առատաջուր Քասախը ուրախ խոխոջելով հոսում էր ցածը, նրանց ոտքերի տակ, իսկ նրանք՝ թառած վերն, ապառաժների գլխին, կարոտ էին մնում նրա սառնորակ, առողջարար ջրերին: Հասկանալի պիտի լինի, որ նրանց ուշքն ու միտքը շարունակ ուղղված է եղել այն բանին, գործել է այն ուղղությամբ, որ մի հնար գտնեն խոր ձորից գետի ջուրը վեր բարձրացնելու, իրենց անջրությունից չորացած ցանքերը և այգիները ոռոգելու համար: Դրա համար նրանք տեսել և ունեցել են օրինակներ՝ կատարված ուրիշ տեղեր, համանման տեղագրական պայմաններում: Հին կյանքում, սակայն, այդպիսի մեծ ձեռնարկումները այնքան դժվարությամբ են կատարվել, որ հասարակ մահկանացուների ուժերից վեր են համարվել, և դրանց իրագործումը վերագրվել է երկնային զորության, հրաշքների: Աշտարակի առվի հանման ձեռնարկության իրագործումն էլ բացառություն չի կազմել. Նրա կատարումն էլ վերագրվել է ժամանակին սրբակյացի համբավ ու հռչակ վայելած Գրիգոր վարդապետին, որ կոչվել է Ակնատես, որովհետև նա, իբրև թե, արժանացել է ականատես լինել, տեսնել Արագածի գըլխին, երկնքից, անպարան կախված կանթեղի լույսը, որի տակ աղոթել է Գրիգոր Լուսավորիչը:

Աշտարակում այդ մասին պահպանված ավանդությունն ասում է. «Ալագյազ սարի բուն ծերին մի կանթեղ կա՝ երկնքիցը կախ ընկած. նրա տակին Գրիգոր Լուսավորիչը ամառները, գիշեր-ցերեկ, աղոթք է արել Հաստանի համար: Էն կանթեղը ամեն մարդ չի տեսնիլ. արդար մարդի աչքին կերևա: Էն Գրիգոր վարդապետը իրա աչքովը տեսել ա, որ էն կանթեղը

գիշեր-ցերեկ վառվում ա: Հետո ուրիշ մարդկանց մոտ խոսակցություն ա էլել են կանթեղի վառ տեսնելու մասին. ոմանք ասել են՝ սուտ ա, ոմանք էլ ասել են՝ ղորդ ա: Հետո էն Գրիգոր վարդապետը երդվել ա ու ասել. «Ես ականատես եմ եղել էն կանթեղի վառվածին»: Նրանից ետ <նրա ավելորդ> մականունը մնացել ա Ակնատես» (Սարգիս Եզնունի, Ջվարճալի հարսանիք, բ. 181ա):

Թե ո՞վ է եղել և ե՞րբ է ապրել այդ Գրիգոր վարդապետը, մենք որոշապես չենք կարող ասել. նա ապրել է մոտավորապես Վաչե իշխանաց իշխանի ժամանակները, որ Հայոց ՈԿԴ թվին (1215 թ.) շինել է Սաղմոսավանքի ս. Սիոն եկեղեցին և նրա գավիթը: Թանգարանումս գտնվում է Սաղմոսավանքի նկարազարդ, ձեռագիր, մագաղաթյա կոնդակը կամ պատմությունը, որ հնացած լինելով՝ նորոգվել է 1623 թվին, Մովսես Սյունեցու (հետո՝ Մովսես Գ կաթողիկոսի) հրամանով, Մինաս գրչի և ծաղկող Սահակ դպրի ձեռքով, «ի թագաւորութեան Պարսից Շահապազին եւ բռնակալութեան տեղւոյս Ամիրկոնա խանին»: Որ այդ կոնդակը վավերական է, այդ երևում է և դրա վերա դրված կնիքից, որի վերա կարդացվում է. «Յիսուսի Քրիստոսի ծառայ Մովսէս վարդապետ, ի վիճակ Սաաթէի»:

Արդ՝ այդ կոնդակը սկսված է այսպես. «Ի սբ. եւ գերահռչակ ուխտեացս ի սբ. Նշանից եւ ի սբ. Յակոբա աջոյն եւ ի սբ. անապատի մենաստանից դրանցէ եւ յականատես սբ. Գրիգոր վարդապետի գերեզմանէ...» և այլն: Կոնդակի մեջ ասված է, որ ներկա Սաղմոսավանքի տեղում, դեռ Գրիգոր Լուսավորչի ժամանակներից, գոյություն է ունեցել մի վանք, որ անխախտ պահպանված էր եղել մինչև Վաչե իշխանաց իշխանի և Գրիգոր վարդապետի ժամանակները: Վանքի միաբանությունը ի նկատի առնելով, որ վանքի եկեղեցիների շենքերը հնացել են, և երթևեկ ուխտավորների թիվը շա՜տ բազմացել, խնդրել են Վաչեին՝ վերաշինել վանքը, որի հետևանքով և իշխանը հրամայել է Գրիգոր վարդապետին՝ ձեռնարկել շինության յուր՝ իշխանի ծախքով: «Յետոյ հրամայեաց սբ. վարդապետին մեծ իշխանաց իշխանն Վաչէ,— ասված է,— իւր ապրանաւքն շինել կաթողիկէ մեծ, որպէս ինքն կամի: Յայնժամ սկսեալ սբ. վարդապետն՝ կատարեաց հրաշալի յաւրինուածովք զսբ. Սիօնն մեծ»:

Վանքի եկեղեցու շինության արձանագրության թվականը փորագրված է միջին տաճարի դռան վերա. «Թվ. ՈԿԴ (1215): Ի ճշմարիտ սիրոյն Քրիստոսի յորդորեալք և ի սէր արարչին վստահացեալք ես Վաչէ իշխանաց իշխան, որդի Սարգսի, և ամուսին իմ Մամա խաթուն ծանեաք զաւրութեան տեառն մերոյ, և շինեցի զեկեղեցիս սբ. Սիօն ի փրկութիւն հոգւոց մերոց և յիշատակ ամիր սպասալար Զաքարէին և ի պահպանութիւն կենաց որդո նորին Շահնշահի, որ է լոյս աչաց և ապաւէն կենաց մերոց, և ողորմութեամբ պարոնին տուաք զգեղն Աղկունծ ի սբ. Սիօնն Սաղմոսավանացս և

հաստատեցաք զաւագ բեմն ամէն շաբաթ աւր պատարագ Զաքարիային, որ կատարի անխափան մինչև ի հաստատութեան է սբ. ուխտ» և այլն:

Կոնդակից և արձանագրությունից, ուրեմն, երևում է, որ Ականատես Գրիգոր վարդապետը, որի գերեզմանի վերա մարմար քար են քաշել աշտարակցիք, իբրև իրենց բարերարի, եղել է Սաղմոսավանքի վանահայր, մասնակցել է վանքի ս. Սիոն եկեղեցու շինության և ապրել է մոտավորապես XII դարի վերջերին և XIII դարի սկզբին, և վախճանել ու թաղվել է եկեղեցու մեջ:

Դույն շինությունների ժամանակներն էլ, հավանորեն, Գրիգոր վարդապետը ձեռնարկել է Աշտարակի առվի հանելու գործին. նա, ինչպես երևում է, քաջ ծանոթ է եղել Հայաստանի ոռոգման հնագույն եղանակին: Նա բռնելով Քասախի ձորի ճանապարհը՝ Աշտարակի տակից գնացել է ձորն ի վեր և հասել է Մուղնու տակը, այնտեղ, որտեղ գետի հունը հավասար է եղել Աշտարակի գյուղատեղի մակերևույթին, և այդտեղից սկսել է ժողովրդի օգնությամբ և ոռոգման գործին հմուտ վարպետների ձեռքով քանդել, տաժանելի աշխատանքով, գետի աջակողմյան բարձրության լանջերը, ջարդել, պեղել ապառաժները, որոշ քանակով ջուր առնելու չափով ու տարողությամբ առու փորել և ջուրը բերել հասցրել է մինչև գյուղագլուխը, որտեղ հետո տնկվել է մի փոքրիկ անտառիկ կամ պուրակ, որ հետագայում կոչվել է Մելիքի բախչա, երևի, այդ անտառիկը տնկող և սեփականատեր՝ գյուղի մելիքներից մեկի անունով: Ականատեսը, ասում են, յուր գավազանի ծայրով գծել է առվի տեղը, և ջուրը ինքնաբերաբար գնացել է նրա հետևից, հոսելով նրա գծած ճանապարհով:

Պռոշյանցը խոսելով յուր «Կովածաղիկ» ազգային վիպասանության մեջ (գլուխ Ի, էջ 109—111) Աշտարակի առվի և Ականատեսի մասին, ասում է. «Թո՛ղ մի երևելի ճարտարապետ էս օր մտնի Աշտարակ, և կտեսնես, որ նա կասե, որ մեր տգետ պապերն էլ պակաս ճարտարապետներ չեն եղել: Վստահ կարելի է ասել, որ իրավունք կունենա մեր գիտնականը հերքել Աշտարակու առվի արվեստականությունը: Բնությունը միայն կարող է այսպիսի մի անսովոր երևույթ հառաջ բերել, ինչպես մեր առուն է: Ի՞նչ զարմանք, եթե մեր առվի սկիզբն առնելու տեղից մինչև Աշտարակ մտնելը հազար անգամ մարդ մահն յուր աչքի առաջին կտեսնի, եթե նա կկարծի, թե յուր ոտքի տակի մի թիզ լայնությամբ հարյուրավոր գազերից բարձրացրած թումբը այս րոպեիս, ուր որ է, կփլչի, ու թե յուր մեծ կտորն ականջը կթողա և թե կղրկի աշտարակցուն յուր դարավոր տարիներով ժառանգություն ստացած հայրենիքից: Եթե, ասված մի արասցե, բերանիցս դուրս գա՝ քամին տանի, մի այդպիսի անբախտություն պատահի, մեր առվի որևիցե բիթը (առվի խախուտ տեղը, արվեստական եղանակով ձորից հանված պատաշարքը— Եր. Ծ.) քանդվի, մեր գյուղը կոչնչանա և կչորանա: Բայց, միամիտ եղի՛ր, մեր տգետ որմնադիր պապերը էնպես բան չեն շինել, որ վտանգի ենթակա լինի: Առասպելական ավանդությունը մեր առվին տվել է մի ճգնավորի բարեմաղթության ծնունդ: Ժողովրդի մեջ այսօր էլ Ականատես անունով մի անպատական փառաբանվում է. Ականատեսը Աշտարակու բարերարն է կոչվում. նա եկել է, իբր թե, հավանել Աշտարակու տեղադրությունը և օդի առողջարարությունը ու երկար աղոթքներից ու մաղթանքներից հետո գավազանի ծայրով գծելով Կարբի գյուղի տակից՝ Քասախ գետից մինչև Աշտարակ, հրամայել է այդ գծին լայնանալ, հո բացվել, քարափներ ու թմբեր ծակել, ճղվել ու առու կազմվել, իսկ ջուրը, մի ընտելացած գառան նման, քամակիցը վազել է: Աղոթքով, թե խելքով՝ ավանդությունից կարող ենք եզրակացնել, որ՝ Ականատեսն է այն հանճարը, որ մեր առվի ծրագիրը մտքումը գծագրելով՝ այսօր մեր երջանկության պատճառն է դարձել, Ականատեսն է եղել այն տգետ ճարտարապետը, որ այսօր երևելի ճարտարապետների մոլորեցնում է... Սաղմոսավանքի եկեղեցու աջակողմյան դասումն է թաղված Ականատեսը, և ամեն մի աշտարակցի, եկեղեցին մտնելուս, անպատճառ մի «ողորմի» տալիս է ու համբուրում նրա գերեզմանը»:

Առաջ, անկասկած, փոքր է եղել առուն և կարողացել է յուր մեջ առնել այնքան ջուր, որ բավարարել է գյուղի ժամանակի պահանջներին, բայց գյուղի հետզհետե մեծանալու և այգիների տարածության ընդարձակվելու հետ միասին, գյուղացիք մեծացրել, խորացրել ու լայնացրել են առուն, անդադար փորելով քարափները և տեղ-տեղ ծակելով ժայռերը և նրանց միջով անցկացնելով ջուրը: Եվ, ընդհանրապես, նկատվում է, որ աշխատանք է թափվել, ճիգ գործադրվել առուն հետզհետե հեռացնելու ձորի եզրերից, որի համար և հարկավոր է եղել վերջին ժամանակները վառոդով պայթեցնել և մտնել ժայռերի խորքը, որովհետև տեղը շատ նեղ է եղել, և ձորի եզրքին, առվի ափերին քաշված թմբերը՝ խախուտ և հաճախ չդիմացող գետից առվի մեջ մտնող մեծաքանակ ջրերի սրընթաց հոսանքին:

Գյուղի գլխից՝ Մելիքի բախչայից, առուն տարվել է գյուղամեջը, որտեղ նա անցել է գյուղի գլխավոր փողոցից, որի մի կողմը, ուռեններ տնկված լինելու պատճառով՝ կոչվել է Ուռուց (Ուռոց): Այդտեղ, փողոցի կենտրոնում, որտեղ նա ճյուղավորվել է, շինվել է առվի կենտրոնական ջրբաժան կավառը կամ քոթուկը, որտեղից առվի մի ճյուղը թեքվել է դեպի ձախ, մյուսն ուղիղ շարունակվել է, առանց թեքվելու, և կոչվել է Լոմի առու: Այդ երկուսն էլ իրենց ընթացքում ունեցել են իրենց երկրորդական քոթուկները, որտեղերից ջուրը բաժանվել, ճյուղավորվել է երկրորդական և երրորդական առուների և կազմել ոռոգման մի ամբողջ ցանց, որ անցել, կտրատել է բոլոր գյուղատեղի հողերը և ոռոգել ընդարձակ այգիները մինչև Օշականի սահմանը: Այդ երկ-

բորդական քոթուկներն ունեցել են և ունեն իրենց հատուկ, հնուց մնացած անունները՝ Պետնի fորուկ կամ կավառ (Պետրոսենց), Շնհավոrենց, Մակաrենց, Շաբոյենց, Հանդի fորուկ և այլն:

Կենտրոնական և այդ երկրորդական քոթուկներն ունեն այն բնորոշ նշանը, որ կավառների մեջ, ջրբաժան տեղում, ամրացրած են առվի լայնությամբ մի-մի հաստ քոթուկ կամ գերան, որոնց վերա փորված են ջրի ճյուղերի համար անցնելու տեղեր՝ դույն ճյուղերի ջրի քանակի չափով: Եվ այդ բոլորն այդպես շինված ու հարմարեցված են այն նկատառությամբ, որ ջրի այս ու այն ճյուղի կամ առվի մեջ մտնելու քանակի մասին կագ ու կռիվ չլինի, հնարավոր չլինի, ըստ ցանկության կամ քմահաճույքի, ջուրն այս կամ այն առվի մեջ ավելացնելու կամ պակասեցնելու: Այսպիսով՝ այդ կենտրոնական և երկրորդական քոթուկները մի տեսակ ջրչափի պաշտոն են կատարել և միջոց են տվել ջրի քանակությունը առուներում միշտ միևնույն չափով պահելու:

Որպեսզի հնարավոր լիներ ջուրն անցկացնել ամեն տեղ, հնարավոր լիներ բոլոր հողերն օգտագործել, աշտարակցիք չեն դադարել այդ նպատակին հասնելու համար նորանոր, ո՛չ էլ շատ հեշտ, աշխատանքներ կատարել, որովհետև, ինչպես արդեն ասել ենք, գյուղի հողերի մակերևույթը խորդուբորդ է, և ջուրն ինքնաբերաբար չպիտի կարողանար բնական ինքնահոսանքով հասնել ու ոռոգել ամեն տեղ: Մի տեղ, օրինակի համար, հարկավոր է եղել ջրի առաջը բռնող բավականին ընդարձակ քարոտ բարձրությունը պեղել, դալմա տալ և ջուրը տակովը անցկացնել խողովակներով, որի հետևանքով էլ այդ դալմայի (դեոլմե=պեղածո) ջրով ոռոգված տեղում տնկված այգեխումբը կոչվել է դալմաներ. մի ուրիշ տեղ հարկավոր է եղել ջրի առաջ գտնված ընդարձակ, փոս ընկած տարածությունը լցնել, լայն, պարսպանման ամբարտակ քաշել և վերայով անցկացնել ջուրը, ինչպես, օրինակ՝ Ապովենց լիրը, որ ունի մոտավորապես 170 գազ երկայնություն, մի երրորդ տեղ Լոմի առուն երկարացնելու, Խնբեrf կոչված տեղը հասցնելու համար անհրաժեշտ է եղել փորել, պեղել ապառաժուտ լեռնալանջերը, և այլն:

Աշտարակի այդ Մեծ առուն ունենալով խոշոր ու կարևոր խորհուրդ գյուղի համար և, կարելի է ասել, լինելով նրա համար նրա կենսական երակը՝ հնուց գյուղացիների և գյուղի կառավարության առանձին և գլխավոր հոգատարության և խնամքի առարկան է եղել: Հնումն առուն տարին մի անգամ արմատական մաքրության և վերանորոգության է ենթարկվել, և դրա համար գյուղի ամբողջ բնակչությունը, տանուտերի հրավերքով ու պատվերով, որոշ ժամանակ, անխտիր դուրս է եկել աշխատանքի և բանել այնքան ժամանակ, որքան հարկավոր է եղել առուն մաքրելու համար, խախտված տեղերը՝ բիբերը, վերանորոգելու, կարկատելու համար. գյուղի բնակչությունը պար-

տական է եղել հասնել օգնության և այն ժամանակները, երբ մի որևէ աղետ է պատահել, երբ, անակնկալ, թումբերը քանդվել են, և ջուրը թափել է ձորը, և կամ՝ երբ մի ավելի խոշոր վտանգ է պատահել և սպառնացել առվի գոյության: Եվ այդպիսի դեպքեր հաճախ են պատահել գարնանը, երբ վարարել է առվին ջուր մատակարարող՝ Աշտարակի Քասախ գետը:

Քասախը մի լեռնային, թեք հատակով և հունով գետ է. նա կազմվում է մի քանի առվակներից, որոնք իրենց սկիզբն առնում են Արագածի հյուսիսային ձյունապատ թեքվածքից, մասամբ էլ Մխախանայի լեռնաշղթայից, և միանում Ապարանի բարձրավանդակ դաշտում: Այստեղից նա հոսում է դեպի հարավ, Արագածի և Մխախանայի սարերի մեջ խոռոշացած հեղեղատով և, հետո, Եղվարդի քարքարոտ դաշտով, որ տարածվում է Արագածի ստորոտից մինչև Երևան: Այդ խոռոշացած հեղեղատով և քարքարոտ դաշտով Քասախը հոսում է մի նեղ, խոր, ապառաժուտ ձորի միջով: Ցռանկանոց գյուղից վեր ձորը վերջանում է, և գետը դուրս է գալիս Երևանի հարթությունը, որտեղ նրանից առնվում են բազմաթիվ առուներ, որոնցով ոռոգվում է այդ խիտ բնակված տարածությունը: Գետն այդտեղ հոսում է մի լայն, տաշտացած հունով, ցած ափերով, և Երասխի մոտ բաժանվում է բազուկների:

Ամառն այդտեղ գետատեղը բոլորովին չորանում է, որովհետև նրա բոլոր ջուրն առնվում է առուների մեջ, իսկ գարնան ջրահորդության ժամանակները լցվում է ջրով այնպիսի առատությամբ, որ նա կատաղաբար հորձանք է տալիս, դուրս գալիս ափերից և ողողում արտերը: Այդ ժամանակները նա սրբում, քշում է յուր բերած, հավաքած խճակույտերը և թափվում է Սև ջրի մեջ, անցնելով ընդամենը, յուր սկզբից մինչև վերջը, 85 վերստ տարածություն[3]:

3 Պերճ Պռոշյանը թողել է մեզ Աշտարակի գետի (Քասախի) հետևյալ պատկերավոր նկարագրությունը. «Ձորը, որի մեջ անսահման հավիտենականությունից հոսում է կատաղի գետակը, նմանում է մի կիսագալար տարածված վիշապ օձի, որի գլուխն ավելի է մեծ, քան թե ամբողջ մարմինը, որի տուտը և մարմինը փռված է ընդարձակ դաշտի մեջ, իսկ գլուխը հասցրել է յուր գալարումը մինչև մեծանիստ լեռները, որի բերանի ճեղքվածքը, թեև համեմատաբար ո՛չ այնքան լայնարձակ, բայց սուր-սուր ժանիքը՝ ծնոտների երկու կողմից դուրս ցցված, սարսափ են ներշնչում տեսնողին: Անհագնատեսիլ, խորդ ու բորդ քարափներն են գետակ-վիշապի ատամները, կապույտ ու պարզորակ ջուրն է նորա երկայն ու բարակ լեզուն:

Երևանի չափ հայ գյուղորայք շարահյուսված են գետատի շրջակայքումը՝ սկսած ճիշտ այնտեղից, ուր չքանում են ժայռերը, ուր դադարում է կարկաչաձայն խոխոջումը, և անհայտանում են փրփրադեզ ալիքները, ուր ականջ խլացնող, շատախոս կաչաղակը պապանձվում, հանդարտվում և քնած, մեռած՝ հառաչ է հոսում ավազի ու տղմերի միջով, ընդարձակ տափարակի վերայով՝ ողջույն տալու և միախառնվելու տասնապատիկ իրանց մեծ գետին՝ Հայ աշխարհի մայր, հինավուրց Արաքսին: Բայց մեր գետակն ըղձառոշոր է լինում. հենց ժայռերի պաշտպանությունից զրկված տեղումը, ինչպես ասում են՝ նորա մուրազը փորումն է մնում, փափագին չի հասնում. քաղցած գայլերի նման հարձակումն են գործում նույն տեղումն յուր

Աշտարակի մոտ Քասախը բոլոր գյուղի և նրա այգիների երկարությամբ անցնում է 2 վերստ տարածություն մի անդնդախոր ձորով՝ բարձրաբերձ, ապառաժուտ ափերով և քարքարոտ հատակով, մեծամեծ ժայռերի միջով։ Գետի մեջ գտնված այդ մեծամեծ ժայռերից մի քանիսը այնքան խոշոր են, որ հնուց առանձին ուշադրության առարկա են եղել և ստացել այս ու այն անունը, նայելով թե ինչի նման են նրանք. Ջիաֆար, Տաշտաֆար և այլն։

Ունենալով մեծ թեքվածք և անցնելով քարքարոտ հատակով և ապառաժների միջով՝ Քասախն Աշտարակի մոտ, ընդհանրապես, արագահոս է և աղմըկալից, նամանավանդ ջրահորդությունների ժամանակ, երբ նա երբեմն այնքան լցվում է ջրով ու բարձրանում, որ հին կամուրջի աչքերը սուղ են գալիս նրան, և նա բարձրանում, ուռչում է և թափվում նրա վերայից, բերելով յուր հոսանքի հետ մեծամեծ քարեր, որոնք զարնվելով միմյանց, ավելի ևս սաստկացնում են գետի մրմռոցն ու խըշխըշոցը։

Գետի ջրերի հորդանալը և բարձրանալը լինում է, սովորաբար, գարնանը, երբ նրա ակունքում սկսվում է հալոցքը։ Ձյունաշատ ձմեռները գետի ակունքում, բնականաբար, կուտակվում են մեծ քանակությամբ ձյունակույտեր ու սառցակույտեր, որոնք հալվելով՝ բարձրացնում են գետի ջուրը։ Այդ տարիներին է, որ տեղի են ունենում մեծամեծ հորդություններ, որոնք սրբում, տանում են ձորում գտնված ամեն մի շենք ու շինություն, արմատախիլ են անում հաստաբուն ծառերը և մեծ աղետ պատճառում ձորատերերին և գյուղին ընդհանրապես։ Գետի ամենամեծ հեղեղումն ու հորդությունը, որ հիշում են աշտարակցիք, եղել է 1835 թվին, երբ ջուրն այնքան բարձրացել է, որ քանդել է առվից հարյուր գազաչափ տեղ և առվի ընթացքը փոխել դեպի գետը։ Ժողովուրդն այնքան վհատել է այդ բանից, որ կամեցել է թողնել գյուղն ու գաղթել, գնալ մի ուրիշ տեղ, բայց քաջասիրտ մարդիկ առաջ են անցել և այնքա՜ն քար ու հող լցրել գետի ընթացքի դեմ, որ, վերջապես, կասեցնելով նրա սրընթացությունը՝ կարողացել են առվի ճանապարհը վերստին փոխել դեպի գյուղը։ Ջուրը այդ հորդության ժամանակ սրբել, տարել է շատ ծառատունկ և կամրջի մոտ գտնված երեք աչք ջրաղացը, և նրա տեղով տաս տարի հոսել. այդ հորդության ժամանակն է եղել, որ հեղեղը սրբել, տարել է և ձորի այրերի դեմ, գետի արևելյան եզերքին գտնված փոքրիկ, սրբատաշ քարից շինված հին եկեղեցին, որ կոչվել է Անապատ։

Մի այդպիսի աղետաբեր հեղեղումն էլ, գետի ջրհորդության ժամանակ, հավանորեն, պատահել է հնումը, որի մասին թեև հիշողություն չի պահպանվել գյուղի մեջ, բայց որ, իրոք, տեղի է ունեցել և «հիմքից խախտել առուն»։

վերա բնակվող գյուղերը և առուներով գետակի վերջին կաթիլն էլ հափշտակում։ Մեր գետակը շատ արդյունաբեր է, նորա ջուրը քաղցրահամ է, նորա ամեն մի կաթիլը ոսկի և արծաթ է» (տե՛ս «Յեղեր», 1889 թ., գլուխ ԻԲ, էջ 263—264)։

Հովհաննես վարդապետ Շահխաթունյանցը յուր «Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ» գրքում (հ. II, էջ 38) մեջ բերելով Աշտարակի Կարմրավոր կոչված Ս. Աստվածածին եկեղեցու պատերին փորագրված արձանագրությունները, ի միջի այլոց, մեջ է բերել և մի արձանագրություն, որի մեջ ասված է, թե Աշտարակի Մեծ առուն հիմքից խախտված է եղել, և մի Հակոբ անունով երեց 1292 թվին մեծ աշխատանքով վերանորոգել է՝ ժողովրդի օգնությամբ ու տուրքով. «Շնորհիւն Աստուծոյ ես՝ Յակոբ էրէցս, ըստ կարի մերոյ նորոգեցի զՄեծ առու տեղւոյս բազում աշխատութեամբ, որ խախտ էր ի հիմանց, յիշատակ հոգւոյ իմոյ, և որք ագնական եղեն տրաւք, և աւանդ գրեցի, որ շինած տուն էկեալ տնանգաց աւթևան (օթևան—Եր. Շ.) լինի. որ ի գրաց սորին <...> եսն ի ձեռն յիշատակ իմո [յ]. և ի տարին Ժ աւր, յորոյ յանուն ի տանի Խ-նիցն. ով խափանէ, դատի յաստուծոյ։ Կատարիչք գրոյս աւրհնին յաստուծոյ. թվ. ՉԽԱ (1292)»։

Թեև այս արձանագրության վերջին տողերը Շահխաթունյանցը չի կարողացել բավարար չափով կարդալ, այնուամենայնիվ դրա առաջին, կարևոր տողերն այնքան պարզ են, որ կասկածելու տեղ չեն թողնում, որ այդտեղ խոսքը Ականատեսի մեծ առվի մասին է, որ 1292 թվին արդեն հիմքից խախտված է եղել և վերանորոգվել է ժողովրդի տուրքով և Հակոբ երեցի ձեռներեցությամբ։ Իսկ այն հանգամանքը, որ ներկայումս այդ արձանագրությունը այլևս չի երևում Կարմրավորի պատերի վերա, կարելի է և պետք է մեկնել նրանով, որ դա փորագրված է եղել եկեղեցու շինության արձանագրության սկսվածքի տակը և, անկասկած, ծածկված է 1860 թվին շինված ժողովրդանոցի պատով, որ, հենց այդտեղ, ուղղակի կպած է եկեղեցու պատին և ծածկել է թե՛ շինության արձանագրության սկսվածը և թե՛ այդ արձանագրությունը։

Շահխաթունյանցը չէր կարող ինքը շարադրած լինել այդ արձանագրությունը և կամ սխալ ցույց տված լինել դրա տեղը, որովհետև այդպիսի արձանագրություն այժմ իսպառ չի երևում ընդհանրապես Կարմրավորի պատերի վերա։

Քասախն առնելով յուր սկիզբն Արագածի և Միսխանայի մաքուր աղբյուրներից և հոսելով խոր ձորերով և բնական զտման ենթարկվելով՝ բերում, հասցնում է Աշտարակ անապական, առողջարար ջուր, որ, սակայն, գյուղի մեջ հոսելով բաց առուներով՝ ապականվում ու վնասակար է դառնում խմելու համար[4]։ Հնումը դրա առաջը ժողովուրդն առել է, յուր խմելու ջուրն առնելով

4 Աշտարակի առվի ջուրը հնուց հռչակված է եղել յուր առողջարար հատկությամբ, և աշտարակցին միշտ էլ հպարտացել է յուր ջրի այդպիսի հատկությամբ և հանգիստ հոգով գործ է ածել յուր առվի ոչ թե միայն գյուղի մեջ, այլև գյուղից դուրս ապականված, վնասա-

Մելիքի բախչայից, իսկ գետի պղտորած ժամանակները, ձորում գտնված աղբյուրներից՝ Տուխոնց, Ազատենց և Բոշենց աղբյուրներից, որոնք իրենց այդպիսի անուններն ստացել են այն բնտանիքներից, որոնց ի վաղուց հետե պատկանել են հիշյալ աղբյուրների ձորերը: Առվից ու գետից ջուր առնելու տեղերը կոչվել են չրլիցք: Հայտնի է եղել Ցագենց չրլիցքը:

Քասախը, բացի մաքուր, առողջարար ջրից, մատակարարել է Աշտարակին և համեղ ձկներ՝ Կարմրախայտ, Կապույտ, Մորազ, Ճանառ, Սաձախ և այլն: Ձկնորսությունը կատարվել ու կատարվում է թոռով, թարփով և օշխայով: Հնումն օշխաները կարվել են, սովորաբար, ծննդյան և զատկի ճրագալույցներին, և բռնված ձուկը ձրիաբար բաժանվել է օշխատիրոջ ազգականներին և, ընդհանրապես, չունևորներին, այնպես որ այդ տոների նավակատիքներին գյուղում բնտանիք չի մնացել, որ ձուկ չունենար յուր սփռոցի վերա՝ խաշած, տապակած և կուտապ դրած: Ջրում, գետի մեջ, կան տեղեր, որտեղ խոշոր քարեր չկան, և ջուրը կարողանում է մի որոշ տարածության վերա կանգնել, լճանալ: Դրանք, այդպիսի լճակներն, ամառները սովորաբար

կար ջուրը, որի հետևանքով, վաղուց ի վեր, զանազան հիվանդություններ բույն են դրած եղել գյուղում և օրըստօրէ մաշել, քայքայել ժողովրդի առողջությունը: Բարեբախտաբար, գյուղում գտնվել են մարդիկ, որոնք հասկացել են այդ հանգամանքն և աշխատել են դրա առաջն առնել: Դրանք նախ և առաջ ցանկացել են իմանալ, թե ի՞նչ ջուր են գործածում և ո՞րքան դա վնասակար կամ առողջարար է, ուստի և առաջ են քաշել անալիզի խնդիրը և իրագործել:

Նրանք 1906 թվին առել են գյուղում գործածված ջրերի երկու նմուշ. առվի՝ դրա գյուղը մտնելու տեղից, և ձորի՝ Հերիկի (այրերի) տակի աղբյուրներից: Նմուշները՝ կնքված շշերի մեջ, ուղարկել են Երևան, նահանգական կառավարության բժշկական բաժինը, որտեղից դրանք առաքվել են Թիֆլիս, Կովկասի քաղաքացիական տեսչության բժշկական մասի քիմիական լաբորատորիան: Անալիզը կատարվել է, և հետևանքը, անալիզի արձանագրության հետ միասին, հաղորդվել է գյուղի հասարակությանը պաշտոնական թղթով, որից երևում է, որ ջրերի երկու նմուշներն էլ պատկանել են ջրի փափուկ տեսակին, բայց առաջինը՝ առվինը, յուր մեջ շատ օրգանիկական նյութեր պարունակելու հետևանքով՝ անպետք է տնային գործածության համար, իսկ երկրորդը՝ Հերիկինը, պիտանի է:

Լաբորատորիան, սակայն, յուր կատարած անալիզը անպայման ճիշտ ու վերջնական չի համարել, որովհետև իրեն հանձնված ջրերի նմուշները լցված են եղել ոչ պահանջված որակի համարել, որովհետև իրեն հանձնված ջրերի նմուշները լցված են եղել ոչ պահանջված որակի անոթների մեջ, այլ հասարակ շշերի մեջ, անալիզն էլ կատարվել է ջրերի նմուշների անոթները վերցնելու պահից երկար ժամանակ անցնելուց հետո, այնինչ պիտի կատարված լիներ կես ժամ վելու պահից երկար ժամանակ անցնելուց հետո:

Այսպիսով՝ թեև անալիզը չի հասել յուր նպատակին, այսինքն՝ վերջնականապես չի հաստատել ջրի վնասակար լինելը, բայց, համենայն դեպս, ցրել է ջրի մասին կազմված նախկին թյուր կարծիքը, որով և հարուցվել ու արծարծվել է Սաղմոսավանքի ձորում գտնված աղբյուրների ջրերի հավաքելու և մի առանձին առվով գյուղ բերելու կարևոր խնդիրը, որ և ներկայումս իրագործվում է խորհրդային իշխանության ձեռքով ոչ թե միայն Աշտարակի համար, այլև Հանավանքի, Հուշու, Կարբու, Մուղնու և Օշականի համար:

հանդիսացել և հանդիսանում են գյուղացոց համար իբրև լողանալու տեղեր, լողարաններ, և կոչվում են գյոլեր: Դրանցից, այդ գյոլերից, հնուց հայտնի է Առաչագյոլը:

Քասախ գետն Աշտարակի առվի սնուցանողը հանդիսանալով, ուրեմն և գյուղի կենսական երակն ու գոյության հիմքը կազմելով՝ բնականապես սիրելի է եղել նրան, և ոչ միայն Աշտարակին, այլև, ընդհանրապես, բոլոր Արարատյան դաշտին: Հնումը Հրազդանի ու Քասախի ամենօրյա տված ու բերած օգուտը ճանաչված ու գնահատված է եղել՝ առաջինը մի լիտր ոսկու, երկրորդինը մի լիտր արծաթի չափով: «Զանգուն,— ավանդաբար ասել են հին մարդիկ,— օրական տալիս է մի լիտր ոսկի, իսկ Քասախն օրական բերում է մի լիտր արծաթ»:

Առվի վերա հոգ են տարել, բացի գյուղական կառավարությունից և վերոհիշյալ Հակոբ երեցից, և գյուղացիներից մի քանիսը առանձնապես, որոնց անունները հիշվում է գյուղում մինչև այժմ: Դրանցից առաջնությունը պատկանում է բնիկ աշտարակցի Գոլոշենց Այվազին, որ վախճանվել է Հայոց ՌՃԾԶ թվին (1707): Ասում են, որ դա յուր ունիմ-չունիմն ամբողջությամբ առվի վերա ծախսելուց հետո, անցել գնացել է և Հայաստանի թուրքական մասը, որտեղ ժողովարարություն է արել ու բերել, ծախսել մինչև վերջին կոպեկը: Մեզ հաջողեց գտնել Կարմրավորից վեր, գերեզմանոցում դրա՝ այդ Այվազի գերեզմանը, որի տապանագրի մեջ հիշված է նրա՝ գյուղի և առվի վերա շատ աշխատած և ունեցած դրամը ծախսած լինելու հանգամանքը: Գոլոշենց բնտանիքը այժմ սպառված է, և «Գոլոշենց» անունը պահպանվել է այժմ միայն Սաժումենց Աղոյի այգու կալվածի վերա:

Հետագայում, երբ գյուղն այնքան մեծացել է, որ անհարմար է եղել, ոչ էլ հարկավոր, որ ամբողջ գյուղն աշխատանքի դուրս գա առվի համար, սովորություն է դարձել որոշ վարձատրությամբ առվի պահպանությունը հանձնել մի քանի անձերի, որոնք և միշտ հսկել են, որ նա ժամանակին մաքրված լինի, նորոգված և փ վիճակի լինի միշտ, անխափան, որոշ չափով ջուր մատակարարելու գյուղին:

Աշտարակի առվի և ոռոգման գործի վերին տեսչությունը պարսից իշխանության օրերով գտնվել է Կարբի-Բասարի մահալական ջրպետության իրավունքի, տնօրինության ու հսկողության տակ: Մահալական ջրպետը՝ Միրաբը, ամեն տարի, գարնանը, անձամբ այցելել է առվի բանդը, ստուգել է առվի մեջ բաց թողած ջրի քանակը և դաչել, այսինքն՝ դրա համար հատկապես պատրաստված միրաբության տախտակե կնքով կնքել և հանձնել յուր օգնական ջուարին (ոռոգման մերձավոր հսկող-ոստիկանի պաշտոն կատարող), պատվիրելով որ պարբերաբար ստուգվի՝ կնիքը անխախտ պահվի և խախտվելու դեպքում էլ կարգը վերստին վերականգնվի, և հանցավորները

պատասխանատվության կանչվլին։ Իսկ առվի և ոռոգման ցանցի ներքին կարգավորման իրավունքը պատկանել է գյուղի համայնքին, որ ամեն տարի, գարնանը, դորա համար ընտրել է ջրբաժաններ և նրանց տնօրինության և արթուն հսկողության հանձնել գյուղի այգիների և ցանքերի ոռոգման գործը։

Մեզ անհայտ է, թե ո՞րքան ջուր է հատկացված եղել Աշտարակի առվին նրա կառուցման սկզբնական շրջանում, բայց ծերունիներից լսել ենք, որ պարսից իշխանության ժամանակ, վերջին սարդար Հյուսեին Ղուլի խանի սարդարության օրերով նրան հատկացված է եղել նրա տարողության չափով մի ջրի քանակ, որ, գյուղում ընդունված ջրի չափերով, հավասար է եղել 14 բահեն ջրի կամ 28 բաղ ջրի։ Մի բահեն ջուրը հավասար է երկու բաղի։ Բաղը հավասար է կես բահեն ջրի։ Ներկայումս գյուղին պատկանում է 24 բաղ ջուր կամ 12 բահեն ջուր[5]։

---

5 Մի բահեն ջրի քանակը Սահակ վարդապետ Ամատունին յուր «Հայոց բառ ու բան» բառարանում որոշում է այսպես. «Այնքան ջուր, որ քցի բարձրանա ջրի մեջ տնկված բահի քուրը (վիզը), կամ մեկ վերշոկ հաստությամբ և 15 վերշոկ լայնությամբ ջուր» (էջ 477)։

Ս. Պ. Զելինսկին յուր «Объяснительный словарь татарских, грузинских и армянских слов, вошедших в Материалы для изучения эканомического быта государственных крестьян Закавказского края» բառարանի մեջ բահեն ջրի քանակն որոշում է այսպես. «Գյուղացիների հասկացողությամբ՝ բահեն ջուրը հավասար է ջրի այն ծորին (струя воды), որի առաջը կարելի է բռնել սովորական երկաթե բահով՝ կանգնեցնելով բահը ուղղաձիգ, հոսանքի դեմ, մի չափ, որ, իհարկե, ճիշտ հասկացողություն չի տալիս ջրի քանակի մասին»։ Դրա հետ միասին նույն Զելինսկին մեջ է բերում և ինժեներ-հիդրավլիկ Պիսարևի չափը. «Она (лапата воды) составляет расход воды одного куб. фута в 1″» (էջ 15—16)։

Սահակ վարդապետ Ամատունին յուր վերոհիշյալ բառարանում մեջ է բերում և մեր հին արձանագրություններից մի երկու օրինակ, բայց և դրանց մեջ չի որոշված բահեն ջրի իսկական ու ճիշտ քանակը։ Ինչպես երևում է, ժողովուրդն ինքն էլ չի իմանում բահեն ջրի իսկական քանակը, այն չափում ու հասկանում է մոտավորապես բահի չափով, ինչպես բառարանների որոշածը։

Աշտարակի ջրի այդ քանակի դեմ միշտ բողոքավոր են եղել ցածի գյուղերը, նամանավանդ երաշտ տարիները, երբ Քասախի ջուրը զգալի չափով նվազել է, բայց նրանց այդ բողոքը միշտ էլ մնացել է անհետևանք. վերջապես՝ 1912 թվին Էջմիածինը և Ղըլթամիր գյուղը միասին պաշտոնապես բողոք են ներկայացրել, պահանջելով որ սահմանափակվի Աշտարակի իրավունքը 14 բահեն ջուր կապելու վերաբերմամբ իրենց առվի մեջ, Քասախի 70 բահեն ջրից, որովհետև Աշտարակի հողերը մեծ առատությամբ ոռոգվում են, իսկ ցածը իրենց ցանքերը չորանում են. նամանավանդ՝ երաշտ տարիները։

Աշտարակի վաղեմի իրավունքի և գյուղի շահերի պաշտպանը «Անդրկովկասի ջրերի օգտագործման իրավունքների որոշող գլխավոր ատյան»-ում հանդիսացել է գյուղի հասարակության հավատարմատար, պետական դումայի անդամ. Վիրոզգի հայտնի կոչը ստորագրող՝ աշտարակցի հմուտ փաստաբան Լևոն Թումանյանը, իսկ Ղըլթամիրի շահերը պաշտպանելու համար Թիֆլիսից հատկապես հրավիրված է եղել Էջմիածնի սինոդի պրոկուրորի եղբայր, փաստաբան Կանչելին։

Գործը քննվել է Երևանում, 1914 թվի փետրվարի 28-ին։ Աշտարակը շահել է։ Գլխավոր

Ամառվա ամենաշոգ և ջրերի նվազած օրերին ջուրն այնքան թանկ է գնահատվել սակավաջուր գյուղերում, որ ոռոգման հերթերի ճշտության համար, մինչև իսկ օրը (ցերեկ ու գիշեր-сутка) բաժանված է եղել չորս քառորդի և միջանկյալ մոմենտների, որոնք օրը բաժանել են այլևս ութերորդական մասերի՝ ակրատ, այսինքն՝ նախաճաշի ժամանակի, առավոտվա 9 ժամից մինչև 10 ժամը. վերջինք—ցերեկվա 3—4 ժամը. խոր գիշեր.—գիշերվա 9—10 ժամը, և Աղամա-մութ—առավոտվա 3—4 ժամը։ Այդ միջանկյալ մոմենտները ցերեկները որոշվել են ստվերի երկարությամբ, իսկ գիշերները՝ աստղատեղերով։ Աշտարակն այդ կողմից բացառություն է կազմել. նա համարվել է առատաջուր գյուղերից մեկը, և մենք չենք լսել, որ ոռոգման հերթերի համար օրվա այդպիսի մանրաբաժանմունք գոյություն ունեցած լիներ այդտեղ երբևիցե։ Նա, ընդհակառակը, այնքան բավարարված է եղել յուր առվի ջրով, որ միշտ էլ թույլ է տվել մի քանի օրով վեր անելու յուր ջուրը կամ «առուն ջրկտրուկ անելու» հօգուտ ցածի գյուղերի, երբ այդ տեղերից «հավար է քցվել» ջրի պակասելու և ցանքերի վնասվելու վտանգի մասին։

Աշտարակցիք ինչպես առուն, այնպես էլ նրա տարողության չափով ջուրն իրենց անկապտելի սեփականությունն են համարել և թեև, ինչպես ասացինք, անհրաժեշտ դեպքերում ինքնահոժար կամքով թույլ են տվել առուն մի քանի օրով ջրկտրուկ անելու՝ հօգուտ ցածի գյուղերի, բայց համոզված են եղել, որ այնպիսի դեպքերում, երբ ջուրն իրենց էլ շատ հարկավոր լինի, կարող են և չթույլ տալ և մինչև իսկ իշխանության հրամանին էլ հակառակ գնալ, մի համոզմունք, որ, իհարկե, թյուր կամ սխալ հասկացողության արգասիք է եղել, որի համար և նրանք երբեմն չարաչար տուժել են։ Նրանք մոռացել են, չեն հասկացել մի բան, որ, բացի անձնական շահերից, կան և հանրային շահեր, որոնց պաշտպանը պետությունն է, որ անհրաժեշտության դեպքում կարող է և ստիպել նրանց զոհել իրենց մասնավոր շահերը հանրության շահերին։

Հնագույն անցյալից այդպիսի դեպքերի հիշողություններ չեն պահպանվել գյուղացոց մտքում, բայց մինչև այժմ էլ գյուղի ծերունիները հիշում են

ատյանը քննելով գործի բոլոր հանգամանքը, լսելով մի հայ և մի թուրք փորձագետների կարծիքը և փաստաբանների բացատրությունները, և ուշադրության առնելով Աշտարակի հողի քարքարոտ հատկությունը, որ յուր ոռոգման համար ավելի շատ ջուր է պահանջում, հաստատել է Աշտարակի՝ Քասախ գետից 14 բահեն ($^{14}/_{70}$) ջուր առնելու իրավունքը, համարելով այդ քանակի մեջ մտած և մանր առուների ջրերը։ Նույն ատյանի որոշմամբ՝ նույն թվի մարտին Աշտարակին վերապահվել է յուր 60 դեսյատին հողը ջրելու համար Դալլու չայից մի բահեն ջուր առնելու իրավունք, բայց միայն գարնան ջրերից, այն էլ՝ երկու տարին մի անգամ, հացահատիկ ցանելու պայմանով (դատի թղթերի պատճենները կարելի է տեսնել Լևոն Թումանյանի մոտ)։

մի դեպք, որ տեղի է ունեցել ռուս իշխանության ժամանակները, ցարական կառավարության օրերով։ Շոգ ամառ է եղել, և Քասախի ջուրը շատ նվազած, էջմիածնի հայ երկարամյա գավառապետ խանաղովի օրերով։ Ցածի գյուղերը «հավար են ձգել», և գավառապետն ուղարկել է յուր ռուս պրիստավներից մեկին Աշտարակ, պատվիրելով մի քանի օրով վեր անել առուն հօգուտ ցածի գյուղերի՝ չորանալու վտանգին ենթարկված ցանքերի, և հասկացնել դրա անհրաժեշտությունը ժողովրդին։ Հավաքվել են գյուղացիները, առաջ է եկել իրարանցում, և պրիստավին վայր են գլորել և սուրը ձեռքից խլել։ Լուրը հասել է Վաղարշապատ և Երևան, և զինյալ ուժեր են ուղարկվել, որոնք կալանավորել են դիմադրողների հոծ բազմությունը և տարել Վաղարշապատ, բանտարկել։ Գյուղը հուզվել է, և գյուղում մնացած երևելիներից 80 հոգի գնացել են Վաղարշապատ և պահանջել գավառապետից, որ կամ արձակեն բանտարկվածներին, կամ իրենց էլ նրանց հետ բանտարկեն, քանի որ իրենք էլ առվի բանդումն են եղել և համախոհ դիմադրողներին։ Բարկացել է խանաղովը. նա սպառնացել է օրենքի խիստ պատասխանատվության ենթարկել նրանց, սիբիրական անել և այլն, բայց հետո մեղմացել է, խրատել ու արձակել է նրանց՝ խոստանալով այդ անգամ միջնորդ հանդիսանալ նահանգապետի առաջ, արձակել տալ բանտարկվածներին և կարճել տալ գործը, որ և կատարել է։

Աշտարակցիք իրենց ոռոգման սիստեմն էլ հարմարեցրած են եղել իրենց հողաբաժանման սիստեմին։ Այդ սիստեմով՝ չարեքական ընտանիքն երկու անգամ քիչ ջուր է ստացել, քան կիսանականը, երեք անգամ քիչ, քան երեքչարեքականը և, վերջապես, չորս անգամ քիչ, քան համբայականը։ Իսկ ինչ վերաբերում է յուրաքանչյուր ծխին պատկանելիք ջրի քանակին, այդ պայմանավորվել է կամ ջրի օգտագործելու ժամանակի տևողությամբ, կամ բահեն-ջրի քանակով, այսինքն՝ որքան մեծ է եղել չարեքը, այնքան էլ երկար է օգտագործել նա ջուրը, կամ որքան մեծ է եղել չարեքը, այնքան էլ ավելի բահեն-ջուր է ստացել նա։ Այսպես, օրինակ՝ եթե համբան և չարեքը ստացել են հավասար թվով բահեն-ջուր, առաջինի համար ջրի օգտագործելու ժամանակի տևողությունն ավելի երկար է եղել, քան երկրորդի համար. իսկ եթե, ընդհակառակը, համբան ստացել է չորս բահեն-ջուր, իսկ չարեքը՝ միայն մի բահեն, այդ դեպքում ջրի օգտագործելու ժամանակի տևողությունն երկուսի համար էլ միևնույն է եղել։ Այսպես ուրեմն՝ ջրի այս կամ այն քանակի բաշխման հիմքը կազմել է մի կողմից՝ ծխի առանձին հողաբաժին ունեցող միավորների թիվը, մյուս կողմից՝ հայտնի ժամանակամիջոցը կամ ջրի քանակը՝ բահեն-ջուրը։

Ոռոգման գործի հարմարության ու դյուրության համար բոլոր ջրվելու ենթակա հողամասը համաչափվել է գյուղի տրամադրության տակ գտնված

ոռոգման ջրի քանակության հետ և բաժանվել է այնքան չարեքի, որքան ջուրը կարողացել է ոռոգել մի օրվա մեջ, առավոտից- առավոտ։ Այդ չարեքներում համախմբված են եղել հավասար թվով հողաբաժանման միավորներ՝ համբայական, երեք-չարեքական, կիսանական և չարեքական։ Այդպիսի կազմակերպության շնորհիվ՝ չարեքները բոլորը և ամեն մեկն առանձին ունեցել են հողի հավասարաչափ քանակություն, այսինքն, ուրիշ խոսքերով՝ չարեքներին բաշխված ջրի քանակը միատեսակ և միաչափ է եղել։ Հերթափոխությունը կատարվել է առավոտից-առավոտ, և համայնապատկան ամբողջ ջուրը ստացել է մի չարեքը բովանդակ օրվա ընթացքում՝ գիշեր ու ցերեկ, և այդ բոլորն այն հաշվով, որ համայնքի ամեն մի անդամ ջուր ստացած լիներ։

Այսպես է եղել Աշտարակում ոռոգման կարգը հնումը, երբ գյուղի ջրարբի հողերի վերա դեռ ցանք են արել և հաճախակի հողաբաժանություն կատարել, և անշեղ գործադրել համբա-չարեքության հողաբաժանության սիստեմը, բայց երբ նույն հողերի վերա հետզհետե ցանքերին փոխանակել են այգիները, և հողաբաժինների տերերն իրենց բաժինների վերա տնկած այգիների սեփականատեր են դարձել, և դրա հետևանքով էլ այդ հողերի հողաբաժանությունն էլ հետզհետե վերջացել է, ու դրա հետ միասին վերացել է և գործադրված համբա-չարեքական եղանակը, ոռոգման եղանակը ևս փոփոխության է ենթարկվել։ Նա ավելի պարզվել ու հեշտացել է. պահպանվել է հին չարեքական կարգով ոռոգելու եղանակը, բայց չարեքն արդեն հին բովանդակությամբ չի եղել. նա կորցրել է յուր նշանակությունն ու խորհուրդը։ Այնուհետև դարձյալ այգիների բռնած հողի ամբողջ տարածությունը համաչափվել է ունեցած ջրի ոռոգելու կարողության հետ և բաժանվել է այնքան չարեքների, որքան որ հնարավոր է եղել եղած ջրով ոռոգել մի օրվա ընթացքում, առավոտից-առավոտ, բայց չարեքների մեջ արդեն համախմբվել են իրար մոտ գտնված որոշ թվով այգիներ՝ ընդհանուր տարածությամբ ջրի մի օրվա ընթացքում ոռոգելու կարողության չափով, և ջուրը բաշխվել է նրանց հերթով։

Հերթն այդ դեպքում կարևոր խորհուրդ ու նշանակություն է ստացել, որովհետև չարեքներին, ինչպես ասացինք, ջուրը տրվել է որոշ ժամանակով, և ով որ չի կարողացել այդ միջոցում ջրել յուր այգին, ստիպված է եղել սպասել մյուս հերթափոխության, որ կատարվել է երկու շաբաթից, երբեմն էլ, հաճախակի, 16—20 օրից հետո, և այգին չորանալու վտանգին է ենթարկվել։ Դրա համար էլ չարեքի այգետերերն աշխատել են իրար առաջ տալ, վերջացնել իրենց այգիների ջրելը մինչև ջրի կտրվելը, որի հետևանքով և դիմել են զանազան ապօրինի միջոցների իրենց դրացիների վերաբերմամբ։ Նրանք իրարից ջուր են գողացել, ժամանակից առաջ իրար ջուր կտրել և

այլն և այլն, և ոռոգման սեզոնում, դրա հետևանքով, գյուղացիների մեջ կագն ու կռիվը և դատավարությունը ջրի համար անպակաս է եղել:

Հերթերը բաժանվել են գիշերվա և ցերեկվա. ձեռնտու է եղել ունենալ գիշերվա ոռոգելու հերթ, քան ցերեկվա, որովհետև, բացի նրանից, որ ցերեկները ջուրն ավելի է գոլորշիանում, այլև ցերեկները դրացիներն ավելի ջուր են վերցրել հերթական ջրից իրենց շինությունների և այլ սովորական կարիքների համար, քան գիշերները, մի բան, որ սրբագործված է եղել վաղնջական սովորությամբ, և ջրի հերթապետները չեն կարողացել, իրավունք չեն ունեցել առարկել դրա դեմ: Հետագայում, մեր օրերում, այդ բոլորի առաջն առնվել է նրանով, որ կարգ է սահմանվել ջուրը չկտրել չարեքի վերայից, մինչև որ նրա մեջ համախմբված բոլոր այգիները լիակատարորեն ջրված, վերջացած չեն լինի, մի կարգ, որ գրվում է մինչև օրս և դրված է խորհրդային իշխանության կարգավորությամբ:

4

ԱՇՏԱՐԱԿԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

ԲՆԻԿ ԵՎ ԵԿԱՄՈՒՏ ՏԱՐՐԸ, ՇԱՀԱԶԻԶ-ԿԱՄՍԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԸ, ԱՇՏԱՐԱԿՑՈՒ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ԽՈՍՐՈՎ ԽԱՆԻ ՄԱՅՐԸ, ԱՇՏԱՐԱԿԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԹԻՎԸ, ԱՇՏԱՐԱԿՑՈՒ ՏԱՐԱԶԸ

Հայաստանի տակնուվրայությունների ժամանակ, երբ բազմիցս քանդվել ու վերաշինվել են նրա քաղաքները և գյուղերը, ժողովուրդն էլ ներքին և արտաքին գաղթականության ենթարկվելով, տարուբերվել է այստեղ ու այնտեղ, երկրի մեջ, բնականաբար, շատ քիչ տեղեր են մնացել, որ հնուց պահպանած լինեն իրենց բնիկ բնակչությունը: Աշտարակն ահա՛ այդ սակավ տեղերից մեկն է: Աշտարակցիք թեև շատ անգամ են ստիպված եղել վերահաս վտանգից ազատվելու համար թողնել իրենց գյուղը և ցրվել զանազան կողմեր, նրանք, թեև քանիցս անգամ գերեվարվել և միահամուռ տարվել, ուրիշ տեղեր են բնակեցվել, բայց ամեն անգամ էլ, վտանգն անցնելուց հետո, վերստին վերադարձել են իրենց տեղը: Մինչև իսկ պարսից Շահ-Աբբասի օրերով, երբ Հայաստանում այնպիսի ավերածություններ են գործվել, որ, կարելի է ասել, քար-քարի վերա չի մնացել, երբ Արարատյան երկրի բովանդակ հայ բնակչությունը գերեվարվել, տարվել է Պարսկաստան, Աշտարակը, ինչպես երևում է, զերծ է մնացել այդ վտանգից և մի քանի ուրիշ տեղերի հետ միասին՝ Վաղարշապատի, Օշականի, Փարաքարի և Քանաքեռի հետ, անխախտ մնացել յուր տեղում, անխառն պահելով յուր բնակչությունը, յուր նախնական սովորությունները, ավանդությունները, կենցաղը և, մինչև իսկ, յուր նախնական տիպարը, որով նա զատվել ու զատվում է շրջակա հայաբնակ

մյուս տեղերի բնակչությունից, ուրույն կենցաղ ու սովորույթներ, որ այնքան վարպետությամբ հավաքել, նկարագրել ու պահպանել է յուր «Սոս և Վարդիթեր» և յուր՝ Աշտարակի կյանքից առած մյուս գրվածքների մեջ Աշտարակի մեծ որդիներից մեկը՝ Տեր-Առաքելյան Հովհաննես — Պերճ Պռոշյանը: Մենք ասում ենք՝ Աշտարակը զերծ է մնացել Շահ-Աբբասի գերեվարության վտանգից, որովհետև այդ մասին ոչ մի հիշողություն չի պահպանվել գյուղում, մի բան, որ անկարելի կլիներ, եթե Աշտարակն էլ ենթարկված լիներ ընդհանուրի վիճակին կամ մի որևիցե լուրջ վտանգի:

Աշտարակցին ուրույն նկարագիր ունի. նա կենդանի է, շարժուն, աչքաբաց ու ճարպիկ, մի նկարագիր, որ արտահայտվում է նրա շարժումների, նրա արագախոսության, նրա՝ յուր խոսակցությունը հաճախ զվարճալի սրախոսություններով համեմելու սովորության մեջ: Աշտարակցու տիպարի, խառնվածքի ու նկարագրի այդպիսի առանձնահատկությունը նկատել է և հրապարակախոս Գրիգոր Արծրունին, երբ նա հայ ժողովրդին ծանոթանալու նպատակով 1890 թվին ուղևորություն է կատարել և շրջել Երևանի նահանգի հայ գյուղերը: Այդ մասին նա նույն 1890 թվի «Մշակի» 175 համարում, յուր «Երևանյան նահանգում» խորագրով բանասիրականում գրում է. «Ամբողջ գյուղը (Աշտարակը—Եր. Տ.) բաղկացած է զուտ հայ ազգաբնակությունից, որոնք ոչ թե գաղթականներ են, Երևանյան նահանգի ուրիշ շատ գյուղերի բնակիչների պես, այլ շատ հին, բնիկ ժողովուրդ են, պարսից ժամանակներից մնացած: Այդ է պատճառը, որ աշտարակցու տիպն ու բնավորությունը նշանավոր կերպով տարբերվում է նահանգի՝ մինչև այժմ իմ տեսած ուրիշ գյուղերի բնակիչների տիպից և բնավորությունից: Աշտարակցին նման չէ, օրինակ, իմ տեսած հայ գյուղերի, մեծ մասամբ, թեև աշխատասեր. բայց կոշտ ու կոպիտ, գրեթե բթացած, մեքենա դարձած երկրագործ տարրին: Աշտարակցին ավելի նման է փոքրիկ քաղաքի բնակչին. նա աշխույժ է, ինտելիգենտ է, մեծ մասամբ գրագետ է, ճարպիկ է և, նույնիսկ, խորամանկ: Նա վերին աստիճանի շատախոս է և, նույնիսկ, պերճախոս և սրամիտ է: Նույնիսկ աշտարակցու հռչակավոր հայհոյանքները շատ սրամիտ են»:

Աշտարակցու արագախոսությունը մինչև իսկ զանազան զվարճալի պատմությունների առարկա է եղել, հակադրվելով լոռեցու դանդաղախոսության: Պատմում են, օրինակի համար, որ մի անգամ աշտարակցին ու լոռեցին միասին, մի ամանից կերակուր ուտելիս՝ վեճի են բռնվել, թե ո՞վ առաջինը պիտի սկսի ուտել, և որոշել են, թե նա, ով որ ավելի շուտ յոթ գյուղի անուն կտա: Եվ մինչև որ լոռեցին մի երկու անուն է տվել՝ հլէ՜ Դսեղը, հլէ՜ Գյուլագարակը, հլէ՜ Վարդաբլուրը... աշտարակցին արդեն մի շնչով ասել, վերջացրել է.

Ուշի, Ուշական,
Կարբի, Բիրական,
Թալին, Թալիշ, Մաստարա.
Քթալի պոչը դեմն արա՛։

Ջվարճախոս և սրամիտ մարդկանց <մեջ> մի առանձին համբավ են վայելել Աշտարակում Շուխոնց Բեգլարը, Պետրոսենց Շամոն և Բաբելենց Մադոն։ Գրիգոր Արծրունին դրանցից առաջինի մասին յուր վերոհիշյալ հոդվածում ասում է. «Գյուղի ինտելիգենտ ներկայացուցիչների շրջանում ճաշեցինք Ներսես V-ի տանը. ճաշի ժամանակ 80 տարեկան սրամիտ Բեգլար ծերունին զբաղեցնում էր մեզ իր անվերջանալի պատմություններով անցյալից, իր ռամկական սրամտություններով ու իր տարօրինակ դատողություններով քաղաքականության մասին»։

Մենք ասացինք, որ Աշտարակն յուր բնակչությունն անխառն պահպանել է հին ժամանակներից. նա յուր երկարամյա գոյության ընթացքում գաղթականներ յուր միջից շատ քիչ է հանել, դրսից էլ գաղթականներ համեմատաբար քիչ է ընդունել և ընդունվածներին էլ կարողացել է յուր հետ այնպես խառնել, ձուլել, ասիմիլյացիայի ենթարկել, որ մի որոշ, համեմատաբար կարճ միջոց անցնելուց հետո, այլևս դժվար է եղել ջոկել գյուղում եկամուտ տարրը բնիկներից։

Դրսից եկած և Աշտարակում վերաբնակված ընտանիքներից հնում հիշվում են Ղափանցյանները, որոնք, ինչպես երևում է իրենց ազգանունից, եկել են Զանգեզուրի Ղափան կամ Կապան գավառակից։ Դրանք եղել են երեք եղբայր, որոնք այդպես են կոչվել Աշտարակում, իսկ իրենց բուն հայրենիքում՝ Ղափանում, նրանց իսկական ազգանունն եղել է Բարխուդարյան։ Հարությունյան ընտանիքը, որի տոհմապետ Մարգարը դուրս է եկել Կարսից։ Դա ունեցել է երեք որդի՝ յուզբաշի Բաղդասարը (Ավչի Բաղդոն), աստիճանավոր Եփրեմը և Գևորգ արքեպիսկոպոսը (Վեհապետյան)։ Արզըններ, որոնք դուրս են եկած եղել Արզնի գյուղից և վերաբնակված Աշտարակում, հավանորեն, այդ գյուղի՝ յուր հայ բնակչությունից դատարկվելուց հետո։ Դրանցից է եղել Աշտարակի առաջին դպրոցի առաջին ուսուցիչ Սահակ Վարդանյանը, որ ուսած է եղել Կալկաթայի Մարդասիրական ճեմարանում, Հնդկաստան նվիրակ գնացած աշտարակցի Տփանենց Վրթանես արքեպիսկոպոսի հոգացողությամբ ու ծախքով. դրանցից է եղել և առաջ Ներսես Աշտարակեցու սպասավոր, հետո կաթողիկոսի եղբայր, Կարբու մհալի միրբոլուկ Կարապետ աղա Շահազիզյանցի՝ Աշտարակի կալվածների կառավարիչ Ստեփան աղա Տեր-Հովսեփյանը, էջմիածնի սյունհոդոսի հայտնի պրոկուրոր Նիկողայոս Տեր-Հովսեփյանի հայրը։ Պռոշյանները, որոնց տոհմապետն եղել է Դանիել Դառնեցին։ Դրանցից Աշտարակում վերաբնակվածներն առաջ կոչվել են Տեր-

Առաքելյաններ, որոնց շառավիղներից մեկն էլ եղել է դերձակ Ստեփան Տեր-Առաքելյանը, որի որդի Հովհաննես Տեր-Առաքելյանը համարելով իրեն սերած հին Պռոշյան իշխանների ցեղից, փոխել է յուր անունն ու ազգանունը և վերակոչել է իրեն Պերճ Պռոշյանց։

Բայց ամենահին ու ամենամեծ ընտանիքը, որ դրսից ընդունել է յուր մեջ Աշտարակն, եղել է Շահ Ազիզ կոչված Կամսարականների գերդաստանը, որ եկել է Շիրակից և վերաբնակվել Աշտարակում, Պարսից Ջհան շահի և Երևանի Յաղուբ խանի ժամանակները։ Շահազիզենց տան ավանդությունն այսպես է ավանդում իրենց տոհմի՝ Անիից դուրս գալը, երկար ժամանակ այստեղ ու այնտեղ բնակվելը և, վերջապես, Աշտարակ հասնելու և այդտեղ ընդմիշտ հաստատվելու պատմությունը։ Դրա՝ այդ գերդաստանի տոհմապետն, ասում է ավանդությունը, եղել է Ներսեհ Կամսարականը, որ Անիի ավերվելուց և անմարդաբնակ դառնալուց հետո, դուրս է եկել յուր գերդաստանով և գնացել բնակվել Մարմաշեն գյուղում, այդտեղից էլ հետո նա փոխադրվել է Սևանի Գոմաձորը և երկար ժամանակ այդտեղ ապրել։ Կամսարականի գերդաստանն որոնել է յուր համար հարմար հողեր և անվտանգ, ամուր դիրքով բնակվելու տեղ, որին չեն բավարարել ո՛չ նախկին Մարմաշենը և ո՛չ Գոմաձորը, ուստի, ժամանակ անցնելուց հետո, նրանք այդտեղից էլ գաղթել, հաստատվել են հողաշատ և արգավանդ Եղվարդ գյուղում։ Թե ո՞րքան ժամանակ են նրանք այդտեղ մնացել, հայտնի չէ, ավանդությունն ասում է միայն, որ Եղվարդը թեև յուր ընդարձակ, արգավանդ հողերով բավարարել է նրանց տնտեսական պահանջներին, բայց չի բավարարել նրանց յուր դաշտային դիրքով և բնությամբ, քանի որ նա մի ամուր պատվար չի տվել նրանց թշնամիների հարձակումներից պաշտպանվելու համար։ Ահա՛ այս պատճառով նրանք այդտեղ էլ ընդմիշտ չեն մնացել, այլ մի որոշ ժամանակ ապրելուց հետո, վերստին տեղահան են եղել և այդտեղից, և եկել, հասել Քասախի ափը, Աշտարակի մոտ, կամենալով մտնել Աշտարակ, որ և՛ լավ հողեր ուներ, և՛ ամուր դիրք ու բերդ։ Սակայն աշտարակցիք վախենալով, որ նրանք շատվոր և ուժեղ մարդիկ լինելով, եթե իրենց գյուղը մտնեն, կարող են տիրել ամենալավ հողերին և իշխել իրենց վերա, գեղովի դուրս են եկել նրանց դեմ և արգելել գյուղը մտնելու, ուստի և նրանք ստիպված են եղել բնակություն հաստատել գետի ափին, ս. Սարգսի սարավանդի վերա, Աշտարակի դեմ ու դեմ։

Այդտեղ նրանք շինում են գոմեր՝ իրենց բազմաթիվ անասունների համար, տներ՝ իրենց բնակության համար, ջրաղաց Քասախի ձորում՝ իրենց ցորենն աղալու համար, մի նեղ, բայց հարմար ճանապարհ՝ ձոր իջնելու և ջուր առնելու համար, և մի մատուռ՝ իրենց առօրյա աղոթքն անելու և կրոնական ծեսերը կատարելու համար, որ անվանում են ս. Սարգիս՝ իրենց

ծխատեր և տանու քահանա Տեր Սարգսի անունով: Նրանք, ինչպես երևում է, երկար են ապրել այդտեղ, որովհետև ս. Սարգսի մոտ այժմ ևս դեռ երևում են բազմաթիվ գերեզմաններ հասարակ տապանաքարերով, որոնք, սակայն, չունենալով տապանագրեր՝ հնարավորություն չեն տալիս որոշելու նրանց այդտեղ մնալու ժամանակամիջոցի, գոնե, մոտավոր տևողությունը: Կամսարականի գերդաստանի այդպիսի աստանդականությունն եղել է յուր տոհմապետ Ներսեհ Կամսարականի և նրա թոռան թոռների՝ Մնացական և Տեր Պետրոս Կամսարականների ժամանակները: Աշտարակի դեմ ու դեմ, ս. Սարգսի սարավանդի վերա նրանց բնակություն հաստատելու ժամանակ Մնացականը և Տեր Պետրոսը արդեն վախճանված են եղել, և գերդաստանի ներկայացուցիչներն եղել են նրանց ժառանգները՝ Մնացականի որդի Մարգարը և Տեր Պետրոսի որդի Թորոսը, և թոռները՝ Գրիգորը և Ահարոնը: Գերդաստանն այդ ժամանակներն արդեն շատ բազմացած է եղել. նրանց ծառաների թիվը միայն եղել է 200 հոգի, որոնցից երկու-երկու ընտանիք պահում են եղել նրանց անասունները, երկու-երկու ընտանիք վարում, ցանում են եղել նրանց հողերը և այդպիսի կարգով մյուսներն էլ կատարում են եղել թե՛ տնային և թե՛ այլ ծառայությունները:

Գերդաստանի հիշյալ ներկայացուցիչները տեսնելով որ աշտարակցիք չթողին իրենց գյուղը մտնել և պատսպարվել բերդում, տեսնելով որ օրեցօր վտանգը սաստկանում է, մտածել են գնալ և մտնել ծառայության երկրի տերերի մոտ, և աշխատել իշխանության հասնել և այդպիսով ապահովել իրենց կյանքը: Այդ մտադրությամբ՝ Մարգարը գնում է Թավրիզ և ծառայության մտնում Ջհան շահի մոտ, Թորոսն էլ գնում է Երևան և ծառայության մտնում Յաղուբ խանի մոտ, իսկ մյուսները մնում են կառավարելու և պահպանելու գերդաստանը: Դրանք երկուսն էլ իրենց ծառայության տեղերում այնպիսի հավատարմությամբ են սպասավորում իրենց տերերին, որ շատ հաճելի են դառնում նրանց, և Մարգարը կոչվում է Շահ Ազիզ, այսինքն՝ Շահի սիրելին, իսկ Թորոսը՝ Խան ղուլի, այսինքն՝ խանի հավատարիմ ծառա:

Երբ նրանք այդպես մեծանում ու պատվի են արժանանում, վերադառնում են իրենց տեղը և բռնությամբ գրոհ տալիս, մտնում գյուղը: [Աշտարակցիների կասկածներն արդարանում են]. Նրանք գյուղում տեր են դառնում արգավանդ հողերի և իշխանական ազդեցություն ձեռք բերում գյուղացոց վերա: Նրանք շինում են մեծամեծ տներ, ջրաղացներ, տնկում են մի մեծ այգի գյուղի մոտ և այդ այգուն կից հողամասը դարձնում են տոհմական գերեզմանատուն, որ կոչվում է Մնացականենց գերեզմաններ:

Կամսարական մեծ գերդաստանը գյուղում բաժանվել է երկու ճյուղի, որոնցից առաջինի անդամները Մարգարի «Շահ Ազիզ» մականունով կոչվել են Շահազիզենք, երկրորդը Թորոսի «Խան ղուլի» մականունով՝ Խանղուլենք, և մոռացության է տրվել Կամսարական տոհմանունը: Յուր հարստությամբ և իշխանական ազդեցությամբ՝ մի առանձին դիրք է գրավել Շահ Ազիզ Մարգարի տունը, որ Մարգարի հոր անունով կոչվել է Մնացականենց տուն կամ ընտանիք՝ Մնացականենք, իսկ Տեր Պետրոսի սերնդի մեջ աչքի է ընկել յուր գյուղին տված ականավոր մարդկանցով Հովակիմենց տունը՝ Հովակիմենք, որ այդպես է կոչվել Տեր Պետրոսի թոռն Գրիգորի որդի Հովակիմի անունով: Շահ Ազիզ Մարգարի որդին եղել է Թորոսը, դրա որդին՝ Տեր Հարություն քահանան, որի ընտանիքում 1771 թվին, փետ. 13-ին* ծնվել են Թորոսը, որ հոգևորական դառնալով վերակոչվել է Ներսես՝ Ներսես V Աշտարակեցին, և դրա եղբայր Կարապետ աղան: Հովակիմն ունեցել է երեք որդի՝ Գրիգոր աղա, Տեր Սիմեոն և Մեսրովբ հիսնապետ: Տեր Սիմեոնի ընտանիքում 1841 թվի սեպ. 5-ին ծնվել է բանաստեղծ Սմբատ Շահազիզյանցը:

Շահազիզ Մարգարի թոռնորդի հիշյալ Կարապետ աղան, մասամբ շնորհիվ յուր անձնական ընդունակությունների, մասամբ էլ շնորհիվ յուր եղբայր Ներսեսի, որ XVIII դարու վերջին քառորդին, Պարսից պատերազմի և Երևանի առման նախօրյակին սկսել էր խոշոր դեր խաղալ թե՛ Էջմիածնի միաբանության մեջ և թե՛ Պարսից և Ռուսաց քաղաքական հարաբերության մեջ, հետզհետե ավելի ու ավելի հմայք է ձեռք բերում, հետզհետե ավելի ու ավել ազդեցիկ է դառնում և մեծության ու պատվի արժանանում թե՛ Աշտարակում, թե՛ Երևանում և թե՛ պարսից և ռուսաց քաղաքական հարաբերության մեջ, հետզհետե ավելի և իրեն իսկ՝ Երևանի սարդար Հյուսեին Ղուլի խան Ղաջարին. նրան սկսում են ճանաչել և՛ թագաժառանգ Աբբաս Միրզան, և՛ մինչև իսկ ինքը՝ Ֆաթ-Ալի շահը: Դրա հետևանքով՝ պարսից կառավարությունը կամենալով սիրաշահած լինել նրան, ճանաչում է նրա տոհմի մեծությունը, տալով նրան՝ Հարությունի որդի Կարապետին, բարխանության (այսինքն՝ ազատի, ազատանու, հին նշանակությամբ) պատիվ, իրավունք ու արտոնություն, նամանավանդ որ Դանիել կաթողիկոսն էլ, հենց այդ ժամանակները, վկայած է եղել Շահ Ազիզ-Կամսարականների հին և ազնիվ օջախից սերած լինելու մասին: Դրանց, պարսից կառավարության այդ մասին արձակած պաշտոնական թղթերի իսկական օրինակները՝ սարդարի թալղան, թագաժառանգի բարձրագույն հրամանը և շահական ֆիրմանը, կաթողիկոսի վկայագրի հետ միասին, մինչև օրս էլ պահպանվել են և գտնվում են պետ. Թանգարանում**:

* Բնագրում՝ 1761 թվին, որ ակնհայտ վրիպակ է: Ուղղում ենք, նշելով հանդերձ, որ ըստ Աղեքսանդր Երիցյանցի էլ՝ Ներսեսը ծնվել է 1770 թ. ամառը (տե՛ս «Պատմություն... Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի», հ. Ա, Տփղիս, 1898, էջ 1):— Պ. Հ.:

** Թղթերից երկուսը ներկայումս պահվում են Մաշտոցյան մատենադարանի պարսկերեն վավերագրերի հավաքածուում: Թագավորական հրովարտակում, որը հասցեագրված է Երևանի Հուսեյն-խան սարդարին, նշված է, որ փոխարքա Աբբաս Միրզայի ներկայացրած զեկուցագրի

1828 թվին, Պարսից պատերազմից հետո, Կարապետ աղան յուր ընտանիքը թողնելով Թիֆլիսում, ուր փախել, գնացել էր հենց պատերազմի նախօրյակին, վերադառնում է Աշտարակ և վերստին տիրանում յուր սարդարըլըխ արված կալվածներին՝ ջրաղացներին, այգիներին և տներին, և կարգվում Կարբի մահալի գավառապետ (միրբոլուկ) և այդ պաշտոնի մեջ մնում երեք տարի շարունակ, բարյացակամ հանդիսանալով յուր համագյուղացիներին և ամեն բանի մեջ օգնող նրանց յուր պաշտոնին վերաբերյալ գործերով-խորհուրդներով։ Նա հիմնում է առաջին դպրոցն Աշտարակում և պահպանում յուր ծախքով, վարժապետ կարգելով մեր արդեն հիշած Սահակ Վարդանյանին՝ Արզընենց տոհմից։

1829 թվին Թիֆլիսից գալիս է Աշտարակ մի կին, որի համար ասում են եղել, թե Խոսրով խանի մայրն է և կոչվում է Խանում[6]։ Դա ունենում է յուր ձեռքին պարսից շահից ստացված մի ֆիրման, որի մեջ գրված է եղել, թե Աշտարակն այդ տիկնոջ սեփականությունն է մուլքադարական իրավունքով։ Մի ամբողջ տարի դա Աշտարակի բոլոր արդյունքներից բաժին է գանձել խստագույն միջոցներով, որից ժողովուրդը չափազանց ճնշվել է։ Դրանից ազատվելու համար, Կարապետ աղայի խորհրդով և թելադրությամբ՝ աշտարակցիք մի աղերսագիր են ուղարկել Ռուսաց կայսեր, որ տեղեկանալով գործի հանգամանքներին, անմիջապես հրամայել է ազատ կացուցանել գյուղացոց հիշյալ խանումի պահանջմունքից։

Երեք տարի պաշտոնավարելուց հետո, Կարապետ աղան թողնում է Աշ-

համաձայն տիր նմանների մեջ ազնվագույն, մեծատոհմ ազնվական, հայազգի պարոն Կարապետը, Աբբասի անդրանիկ որդուն՝ փոխարքա Աբբաս Միրզային ներկայացրած խնդրագրով զեկուցել է, որ նա Կամսարական (Քամսարզադե) մելիքների ժառանգներից է և հայ թագավորների սերնդից, նրա նախնիները շարունակ ծառայել են իսլամական տերության և մեծաշուք արքաների շնորհներին արժանացել։ Ուստի նրան պատկանող մուլքերն ու այգիներն ու ջրաղացները, ինչպես նաև ցանքսերն ու մի քանի ընտանիք ռանչպարները, հնուց ընդունված կարգով՝ ապահարկ և գրանցումից ազատված համարել, ինչպես նաև, եթե հետագայում, կարողության ձեռք բերելով՝ նա ի վիճակի լինի որևէ մուլք կամ գյուղ գնել, ո՛չ ոք իրավունք չունի արգելել կամ բռնանալ» (Կաթողիկոսական դիվան, պարսկերեն վավերագրեր, թղթ. 1գ, վավ. 1024։ Թարգմանել է պրոֆ. Հ. Փափազյանը, որի համար հայտնում ենք մեր ջերմ շնորհակալությունը) — Պ. Հ.։

[6] Խոսրով խանը թիֆլիսեցի է եղել, Ղայթմազյան ընտանիքից. նա երկար ժամանակ ապրել է Պարսկաստանում և ներքինի լինելով շահի հարեմում, մեծամեծ պատիվների է հասել և խոշոր հարստության տեր դարձել (տե՛ս այս մասին՝ **А. С. Грибоедов**, Путевые заметки. Предисловие и примечания к тексту И. К. Ениколопова, с. 53)*։

* Ի դեպ, Ա. Ս. Գրիբոյեդովը 1827 թ. հունիսի 7-ի օրագրում Աշտարակի մասին թողել է հետևյալ գրառումը. «Հիասքանչ գյուղն Աշտարակ. եռահարկ կամուրջը՝ երեք կամարների վրա, որոնց տակով Ապարան գետը զարկվում է քարերին ու փշրվում։ Այգիներ, քաղաք։ Գյուղը պատկանում է Խոսրով խանի մորը։ Շոգ» (նույն տեղում, էջ 72)։ Թեպետև հույժ ձիգ, բայց խիստ բանաստեղծական, տարողունակ ու դիպուկ են այս դիտողությունները — Պ. Հ.։

տարակը և հեռանում Թիֆլիս, յուր ընտանիքի մոտ, և վախճանվում այնտեղ, յուր մյուս կալվածքում՝ Դունդուկ գյուղում, թողնելով երկու որդի՝ Հարություն և Հովակիմ աղաները։ Դրանք չունենալով իրենց հոր ընդունակությունները և միաժամանակ Թիֆլիսում ապրելու պատճառով խորթացած լինելով գյուղից, չեն կարողանում նրա տեղը բռնել, և Շահազիզյանների ազդեցությունը (իբրև գյուղի աղաների) պակասում, ընկնում է Աշտարակում։ Նրանց՝ Աշտարակում թողած կալվածները կառավարում են առաջ տանուտեր Խեչանը և Մելումենց Մարգարը՝ Կարապետ աղայի կենդանության օրերով, հետո՝ Տեր-Հովսեփյանց Ստեփանը և Սաժումենց Սիմեոնը՝ Հովակիմ և Հարություն աղաների ժամանակ։ Այդ վերջինի՝ Սաժումենց Սիմեոնի կառավարչության օրերով Հովակիմ և Հարություն աղաները բաժանում են իրենց մեջ տոհմական կալվածները, Թիֆլիսի Դունդուկը առնում է Հովակիմը, իսկ Աշտարակի կալվածները, Ղըզըլ-Թամուր և Աղթամուր գյուղատեղին՝ Հարությունը։ Այդ վերջինս էլ դրանից հետո շուտով վաճառում է Աշտարակի կալվածները, և նրանք բոլորովին կտրվում են Աշտարակից։ Գյուղում մնացած մյուս Շահազիզյաններն էլ, որոնք դրանից դեռ շատ առաջ կորցրած են եղել իրենց իշխանական կացությունը, հետզհետե շատ բազմանալով և ճյուղավորվելով և, դրա հետևանքով էլ, իրենց կալվածները բաժան-բաժան և կտոր-կտոր անելով՝ աղքատանում են և ժամանակի ընթացքում հասնում, հավասարվում մյուս գյուղացիների վիճակին ու կացության։

Բայց ի՞նչ է եղել, ի՞նչ բնույթ է կրել Շահազիզյանների իշխանական ազդեցությունն Աշտարակում, իբրև ազնվականների, իշխանների։ Նրանք ոչ մի ժամանակի օրենքով սրբագործված, հաստատված իրավական առանձին կացություն չեն ունեցել, որի զորությամբ կարողացած լինեին իշխանություն բանեցնել գյուղացոց վերա. նրանք կալվածատեր չեն եղել, այլ սեփականատեր, ինչպես և մյուս գյուղացիները, և, իբրև այդպիսին, չեն ունեցել ո՛չ մուլքադարական, ո՛չ էլ, նամանավանդ, թիուլական իրավունք, ուստի և գյուղացիները կապված չեն եղել նրանց հետ և ոչ մի հարկատվության և անձնական ծառայության պարտականությամբ։ Նրանց կացությունն Աշտարակում, ըստ ամենայնի, նմանել է Աբովյանների կացության Քանաքեռում, որոնց մասին բարոն Հաքստհաուզենը ասում է. «Հայերի մեջ չի նկատվում մի առանձին տարբերություն կամ ներհակություն զանազան դասակարգերի մեջ։ Այստեղ քաղաքը գյուղից խիստ չի տարբերվում, չի տարբերվում քաղքենին շինականից։ Շինականը տարբերվում է քաղաքի բնակիչներից միայն նրանով, որ ապրում է գյուղում և ոչ քաղաքում. քաղաքներում բնակիչների մի խոշոր մասը զբաղվում է առևտրով և արհեստներով, իսկ գյուղերում դրանցով շատ քչերն են զբաղվում, և նույնը, ընդհակառակը, կարելի է ասել երկրագործության վերաբերմամբ։

Միայն սակավաթիվ հին, հարգված տոհմեր, այսպես կոչված՝ թարխանների տոհմեր (թարխան բառացի նշանակում է ազատ), վայելում են առանձին արտոնություններ և ազատվում են հարկատվությունից։ Երկուսն այդպիսի թարխան տոհմերից, Աբովյանների տոհմի պես, ունեցել են գյուղում տանուտերական ժառանգական իրավունք... Այդ տոհմերը սակայն կալվածատիրական և ոչ մի իրավունք չեն ունեցել գյուղերի վերա և չեն կարող եղել պահանջել ո՛չ բնատուրք վճարելու պարտականություն, ո՛չ էլ մի այլ ծառայություն գյուղի մյուս բնակիչներից» (А. Гакстгаузен, Закавказский край, ч. I, с. 180)։

Հաքստհաուզենի այս վկայությունից երևում է, որ Աբովյանները Քանաքեռում դեռ ավելի իրավունք են ունեցել, քան Շահազիզյանները Աշտարակում. դրանք՝ Շահազիզյանները, այդպիսի իրավունք էլ չեն ունեցել՝ գյուղական տանուտերական ժառանգական իրավունք։ [Շահազիզյանները մեծ գերդաստան են եղել և նրանց ներկայացուցիչները՝ ունևոր և առաջավոր մարդիկ, իրենց մտավոր զարգացման աստիճանով և այլ կողմերով շատ ավելի բարձր աշտարակցի գյուղացիներից, ուստի և կարողացել են և առանց հիշյալ իրավունքների իրենց իշխանական դիրքը անխախտ պահպանել գյուղում։ Հասկանալի պիտի լինի, որ այդ գերդաստանի մեծերը հենց սկզբից գրավել են գյուղում իրենց արժանի տեղը, ազդեցիկ դեր խաղալով գյուղի կառավարության գործում և նախաթոռ հանդիսանալով գյուղի համայնական ժողովներում ևս և հաճախ տանուտեր ընտրվելով, որի հետևանքով և նրանք, բնականաբար, սկսել են վայելել գյուղացիների կողմից այն հարգանքն ու մեծարանքը, որ, ժամանակի սովորությամբ, կարգ է եղել մատուցանել գյուղի մեծամեծներին, առաջավորներին և իշխաններին, պատիվ ու մեծարանք, որ արտահայտվել է նրանց աղա հորջորջելու պատվավոր տիտղոսի և նրանց խոսքին լսելու և պատվերները կատարելու հանգամանքների մեջ]։

Բացի Շահազիզյաններից և վերոհիշյալ մյուս՝ դրսից եկած և Աշտարակում վերաբնակած օտարականներից, գյուղում հնուց բնակելիս են եղել և բոշաներ, որոնք ժամանակի ընթացքում հայացել են և մյուսների պես խառնվել բնիկների հետ, թողնելով պատմության ժառանգություն իրենց բնիկ Լոմ անունը Մեծ առվի գլխավոր ճյուղերից մեկի վերա՝ Լոմի առու, և բոշա անունը, իբրև ազգանուն, գյուղում մինչև օրս էլ գոյություն ունեցող ընտանիքներից մեկի վերա՝ Բոշենք, Բոշյանց։

Թե ո՞րքան բնակիչ է ունեցել Աշտարակը հնագույն ժամանակները, մենք չենք կարող ասել. Դանիել կաթողիկոսի 1808 թվի հուլիսի 20-ին Կարապետ-աղա Շահազիզ-Կամսարականին տված վկայագրից միայն, որի տակ դրել են իրենց ստորագրությունը այնպիսի ժամանակին հայտնի մարդիկ, ինչպիսին եղել են Արշարունյաց գավառի իշխող Կամսարական-<Արշարունյան-> Սատաթբեկյան-Հակոբյան Մելիք-Մինասը, Միրզա Թադեոս Մելիք-Մինասի Սատաթբեկյան-Կամսարականը և երևանցի Գաբրիել և Հովհաննես Գեղամյանները, երևում է, որ մինչև Շահազիզյանների՝ գյուղում վերաբնակվելը, Աշտարակն եղել է միայն մի փոքրիկ ագարակ, իսկ նրանց վերաբնակվելուց հետո դարձել է կատարյալ մեծ գյուղ և, մինչև իսկ, գյուղաքաղաք։ Այդ մասին վկայագրի մեջ ասված է. «Որ և այս խանդոյլի փոխադրեալ զբնակութիւն և զընտանիս իւրեանց յայն կոյս գետոյն, ի գիւղն Աշտարակ, որ յայնժամ լինի փոքրիկ ագարակ մի... Իսկ զկնի ընդ երկար ծառայութեան երեք եղբարքն ևս գան ժողովին առ ընտանիս իւրեանց, յԱշտարակ, և ըստ չափու տանելութեան գեղջն լայնացուցանեն զբնակութիւնս իւրեանց և ստանան զանդս և զայգիս և զայլ ստացուածս, և յատկացուցանեն ինքեանց զգերեզմանատուն յատուկ ի գլուխն այգւոյն եղելոյ առ դրան պալատան իւրեանց։ Եւ յայնմհետէ օրըստօրէ ժողովեալ անտէն բազմութիւնք ազատաց և ռամկաց, մեծացուցանեն զգեօղն, մինչև լինիլ գիւղաքաղաք...»*։

Ծերերի ասելով՝ Աշտարակը հնումը բազմամարդ գյուղ է եղել. նա հին ժամանակներն ունեցել է 700 տուն բնակիչ, որոնք սակայն լեկզիների հարձակումներից, գերեվարություններից և կոտորածից և պարսից պատերազմի նախօրյակին կատարված տեղահանությունների ժամանակ ևս, և պատերազմին հաջորդած ժանտախտի ու հնդախտի տարիները կոտորվել ու սպառվել են, և գյուղի բնակչությունը պակասելով՝ նրանց թիվը 1840 թվին հասած է եղել 120 տան։ Սակայն խաղաղություն տիրելուց և վարակիչ հիվանդությունների և համաճարակի տարիների անցնելուց հետո, գյուղն յուր մաքուր օդի և առողջարար ջրի շնորհիվ վերստին սկսել է արագ աճել ու մեծանալ։ 1890 թվին գյուղացիների՝ Գրիգոր Արծրունուն այդ մասին հաղորդած տեղեկություններից հայտնվել է, որ 1859 թվին գյուղն ունեցել է արդեն 220 տուն, 1873-ին՝ 320, 1886-ին՝ 380 տուն, 1890-ին՝ 500 տանից ավելի և, վերջապես, պաշտոնական տեղեկություններից՝ 1908-ին արական սեռի 2125 հոգի, իգական սեռի 1875, բնակիչների թիվն ընդամենը 4000 հոգի (տե՛ս «Памятная книжка Эриванской губернии на 1908 г.», отдел III, с. 24—25)[7]։

* Եր. Շահազիզն օգտվել է վկայագրի բուն օրինակից, որը մեզ մատչելի չի եղել։ Արտագրությունը տե՛ս Մատենադարան, ձեռագիր № 2946, թ. 3բ։ Հրատարակված է՝ Ա. Երիցյանց, Նյութեր Ներսես Ե-ի կենսագրության համար, Տփղիս, 1877, էջ 6 (վկայագրի վերջում եղած ստորագրությունները հապավված են) — Պ. Հ.։

7 Ներկայումս (1934 թ.) գյուղի բնակչության ընդհանուր թիվն է 5243 հոգի, որից արական սեռի՝ 2512, իգական սեռի՝ 2731 հոգի. դրանց մեջ վերաբնակիչ՝ 300 հոգի։ Բոլոր տնտեսությունների թիվն է 1198, որից մենատնտեսականներ՝ 830, կոլտնտեսականներ՝ 368։ Բնակչության ընդհանուր թիվը 1930 թվին եղել է 4477 հոգի, իսկ ներկայումս, ինչպես ասացինք, 5243 հոգի, բայց այս աճելության մեջ հաշված են և ներգաղթողները։ Գյուղի բնական աճելության մասին գաղափար կազմելու համար մենք ավելորդ չենք համարում նշել, որ 1934 թ. հունվարի 1-ից մինչև մայիսի 31-ը ծնվել են 24 հոգի և մահացել են նույն միջոցում 15 հոգի։

Աշտարակցին, ինչպես ասել ենք, յուր տիպարով տարբերվում է շրջակա բոլոր հայ գյուղերի գյուղացիներից. նա երկարահասակ է, նիհար, բայց ջղուտ և ամուր կազմվածքով: Նրա դեմքը երկարավուն է, աչքերը՝ փայլուն, երեսահարքը՝ զվարթ, վիզն՝ երկար, մեջքը՝ բարակ: Հնումը աշտարակցի տղամարդը գլխին դրել է [գառան շագանակագույն] մորթե մեծ գդակ՝ բարձր, սրածայր. հագել է ղաղաք արխալուղ՝ ղայթանե զուգմաններով, երկար չուխա և խոնջանով վարտիք՝ տեղական բրդե կոպիտ, բայց շատ դիմացկուն գործվածքից, բրդե փափուկ գուլպաներ, որոնց ճիտքերի մեջ սովոր է եղել հագցնել վարտիքի ծոփերը, ոտքերը պնդել և հայկական տրեխների մեջ կաշվե խրոցներով կամ հագել է կաշվե անկրունկ ոտնամաններ՝ յամանիներ, մեջքին կապել է կաշվե գոտի կամ արծաթե կոճակներով կամար (քամար)· նա գործ է ածել և զանգապաններ՝ զանգալներ, նամանավանդ ճանապարհ գնալիս, և ցրտից պաշտպանվելու համար վերան ձգել է փուչոտ տառատոկ (յափնջի):

Աշտարակցի կինը գլուխը շինել է հայկական ձևով, որի հատկանիշ մասերն եղել են և են ճլպինդը, բասպինդը, պոլը, օշմաղը, քնթկալը (քիթկալ), շուշտակը, բաշորթիկը, գլխաշորը. նա հագել է մինթան-մինթանա՝ գույնզգույն, արևելյան ճաշակով նկարեն կտորներից, վերայից՝ թավիշ քաթիպա, ոտքին՝ մաշիկներ, և մեջքին կապել է արծաթե կամար, ու առջևից՝ սովորական գոգնոց (աշխատանքի ժամանակ): Կանացի զարդարանքները եղել են ճակատի ոսկիներ, ականջի գինդեր (օղեր) և յաղութ, զմրուխտ, գոճազմ (փիրուզա) քարերով մատանիներ:

Աշտարակցի աղջիկը հագել է մինթանա, մաշիկներ, մեջքին կապել է արծաթե կամար, գլխին՝ թաշկինակ, վզին՝ գույնզգույն հուլունքի շարոցներ, և մազերը հյուսել ու արձակել բարակ հյուսիկներով: Նա տան աղբը և թոնրի մոխիրը «մոխրատով» կրելիս, ջրի կուժը (սափորը) ջրկիցքից և խաղողի քաղլակը այգուց բերելիս՝ ուսին ձգել է ուսաշոր, որ հաճախ, հատկապես հենց այդ նպատակի համար, պատրաստվում է եղել ասեղնագործ, զարդարուն: Աղջիկների ականջը փոքր հասակից ծակելը և գինդ կամ օղ հագցնելը հին Աշտարակում սովորական, ընդհանուր երևույթ է եղել, նրանց գլուխը շինելը՝ հարսնության նշան: Հին Աշտարակում կանանց ամենամեծ առաքինությունը համարվել են նրանց ամոթխածությունը, համեստությունը և չխոսկանությունը. ուստի և այնպիսի ձև ու տարազ է տրված եղել կանացի զգեստին, որ դա բոլորամասն ի վիճակի լինի պահպանել կնոջ այդ հատկությունները[8]: Մինթանան այնքան երկար է ձևած եղել, որ ծածկել է կնոջ ամբողջ

8 Մարիետա Շահինյանը 1926 թվի փետրվարին եղել է Աշտարակում, մի քանի օր ապրել յուր ազգականների մոտ և այդտեղից էլ գնացել Օշական և Թալին, և այդ տեղերում տեսածների մասին դիտողությունները գրել յուր 1932 թվին Լենինգրադում տպագրված «Дневники,

մարմինը, վզից բռնած մինչև ոտքի սրունքները, գլխաշորերն էլ այնպես են հարմարեցրած եղել, որ կինը ի վիճակի լինի, հարկավոր դեպքերում, խուշուշկը[՞] այնքան ցած քաշել և քնթկալը այնպես պինդ հուպ տալ, որ վարագուրված լինի երեսը:

5

ԱՇՏԱՐԱԿՑՈՒ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԸ

ՎԱՐՈՒՑԱՆՔ, ՀՈՂԱԲԱԺԱՆՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿԸ, ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ԱՊՐԱՆՔԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ, ԶԱՐՎԱԴԱՐՈՒԹՅՈՒՆ, ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԱՐՀԵՍՏՆԵՐ

Աշտարակցիք նախնական ժամանակները պարապել են գլխավորապես երկրագործությամբ. նրանք առաջ վարուցանք են արել իրենց ջրարբի հողերի վրա, որովհետև այդտեղ բերքն իրենց համար ապահովված է եղել, բայց հետո, երբ գյուղի մեծանալու և այգիներ տնկվելու պատճառով այդ ջրարբի հողերի տարածությունը սկսել է պակասել վարուցանքի համար, նրանք ձեռնարկել են ցանել և իրենց պատկանած ոստին հողերը, որոնք հետագայում ավելի ընդարձակվել են և բաժանվել երեք մասի՝ Վերի դեմի, Ջաղի դուզ և Ուլաշտիկ: Որովհետև ջրարբի հողերը թանկարժեք են եղել և նրանց տարածությունը՝ սահմանափակ, այդ պատճառով էլ գյուղացիք շահագրգռված են եղել, որ նրանք արդարությամբ և հավասար չափով բաժանված

1917—1931» խորագրով գրքի մեջ: Դրանք՝ այդ դիտողությունները, իհարկե, լուրջ ուսումնասիրության արդյունք չեն, այլ մի տուրիստի հարևանցի, առաջին տպավորության ազդեցության ներքո արված թռուցիկ ծանոթություններ, ուստի և այդպիսի դիտողություններից պահանջել լիակատար ճշտություն չի կարելի: Բայց և այնպես, մենք ավելորդ չենք համարում այստեղ նշել մի-երկու շատ աչքի ընկնելու սայթաքումներ, որոնք կարող են մոլորության մեջ ձգած լինել անծանոթ ընթերցողներին, սայթաքումներ, որոնք, սակայն, ավելի վերագրելի են հարգելի գրողի առաջնորդողներին, նրան այդպես հասկացնողներին, քան իրեն՝ տեղական հանգամանքներին անծանոթ գրողին: Նա մի տեղ յուր գրքում (էջ 160), օրինակի համար, ասում է, թե իրեն Ս-ն ասել է, որ հայ կանայք (Աշտարակի), «որքան կարող են (ВО-ВСЮ), դավաճանում են իրենց ամուսիններին», մի ուրիշ տեղ (էջ 159), թե Ջիմն իրեն ասել է, որ աշնանը Աշտարակում «ամենքն առավոտներն օղի են խմում, որից և նրանց այտերը կարմրած են լինում, մինչև իսկ կանանց այտերը շառագունված են լինում, և այդտեղ չխմող մարդ չկա». մի երրորդ տեղ էլ (նույն 159 էջ), թե Աշտարակը և Օշականը հարուստ գյուղեր են, ունեորները վաստակում են 15 հազարական ռուբլի, միջին կարողության տեր մարդիկ՝ 3—4 հազարական ռուբլի, «բայց փող չեն ծախսում, ապրում են խողի պես, վատ են կերակրվում» և այլն և այլն:

Այդ հայտարարություններն այնքան անհիմն ու անհեթեթ են, որ կարոտ չեն լուրջ քննադատության և հերքման. ամեն ոք, որ քիչ թե շատ ճանաչում է Աշտարակն ու Օշականը, ինքը կարող է դատավոր լինել դրան և բարոյական պատասխանատվության հրավիրել զանազան Ջիմերին և Ս-երին, որ ա՛յդ աստիճան ի չար են գործ դրել հարգելի գրող-տիկնոջ վստահությունը:

լինեն իրենց մեջ, ուստի և հաճախ հողաբաժանություն են կատարել, որ վերացրած լինեն սպրդած անհավասարությունը և անարդարությունը։

Հողաբաժանության համար նրանք գործադրել են Համբա-պճեղային կամ Համբա-չարեքական կոչված եղանակը, որ հայերի սիրած և Հին Հայաստանում ամեն տեղ տարածված եղանակն է եղել։ Դրա հիմքը կազմել է ամեն մի շունչ կամ հոգի, ինչպես այդպիսին, և ամբողջ ընտանիքը հոգիներից, իբրև կենդանի էակներից բաղկացած մի ամբողջություն կամ միություն, որոնք պահանջում էին սնունդ։ Այդ տեսակետից և՝ մանուկներն անգամ համարվել են հոգիներ և իրավունք են ունեցել հողաբաժին ստանալու։ Եվ, ճշմարիտ, հնումը և՛ ծծի երեխաները իրենց ծննդից հետո կատարված հողի վերաբաժանման ժամանակ ստացել են իրենց պատկանելիք շնչաբաժինը, և՛ այդ հին կարգը գործադրվել է երկար ժամանակ, և՛ հասել է պարսկական իշխանության, և՛, մինչև իսկ, ռուսական տիրապետության առաջին շրջանին։

Այդ եղանակի էությունն այն է եղել, որ յուրաքանչյուր համայնք բաղկացած է եղել որոշ թվով համբաներից, երեք-պճեղներից, կիսաններից և պճեղներից։ Երկրի վաղնջական սովորույթով, հին ժամանակներից սահմանված է եղել հողաբաժինների հինգ կարգ՝ ամբողջ կամ համբային, երեք-պճեղային (երեք-չարեքական), կիսանական (կես համբայի), պճեղական (չարեքական) և, վերջապես, կես-պճեղային։ Ամբողջ կամ լիակատար բաժնի տերը կոչվել է համբա, երեք-պճեղականի տերը՝ Երեք-պճեղ, կիսանականի տերը՝ կիսան, պճեղականի տերը՝ պճեղ, կես-պճեղականի տերը՝ կես-պճեղ։ Վերջին՝ կես-պճեղական կարգը թեև սահմանված է եղել իբրև հողաբաժին երկու հոգուց բաղկացած ընտանիքի համար, բայց այն, դրա հետ միասին, հողաբաժանության ժամանակ ծառայել է իբրև հավասարեցուցիչ միություն, հավասարեցուցիչ հողաբաժին։

Այդպիսի հողաբաժանության եղանակն ունեցել է այն առավելությունը, որ այս կամ այն հողաբաժնի տեր լինելը որոշել է համայնքի յուրաքանչյուր ընտանիքի՝ ծխի, իրավական կացությունը։ Մեծագույն հողաբաժնի տերը մեծագույն էլ հարկ է վճարել և ծառայություններ մատուցել, փոքրագույնի տերը՝ փոքրագույն հարկ և ծառայություն։ Այսպես, օրինակ՝ համբայի հողաբաժինը չորս անգամ ավելի է եղել պճեղայինից, բայց դրա փոխարեն դրա տերը՝ համբան, չորս անգամ էլ ավելի հարկ է վճարել, քան պճեղայինի տերը՝ պճեղը։

Այս կամ այն կարգի հողաբաժնի տերը լինելը կախյալ չի եղել համայնքի անդամի ազատ կամքից կամ ցանկությունից, այլ նրա ընտանիքի մեջ եղած առանձին-առանձին, իրոք գոյություն ունեցող, հոգիներից, այնպես որ համայնքի այն անդամը, որ ցանկացել է համբա լինել և համբայի հողաբաժին ունենալ, պետք է անպատճառ ունենար այնպիսի ընտանիք, որ բաղկացած

լիներ 16 հոգուց (երկու սերից)։ Այսպիսի հիմնական սկզբունքի հետևանքով՝ երեք-պճեղային ընտանիքը պետք է բաղկացած լիներ 12 հոգուց, կիսանականը՝ 8 հոգուց, պճեղայինը՝ 4 հոգուց և, վերջապես, կես-պճեղայինը՝ 2 հոգուց։ Երկու սերի հոգիների թիվն է եղել, որ կոչվել է հանդիսացել այս կամ այն չափով հողաբաժնի տեր լինելու իրավունքին։ Այսպիսով՝ համբա-պճեղային հողաբաժանության սիստեմը, ուրեմն, եղել է մի առանձնահատուկ ցենզի նման բան, որի հիմունքով առանձին ընտանիքները, սկսած մեծ նահապետական ընտանիքներից և վերջացրած պարզ, երկու հոգուց բաղկացած ընտանիքներով, համայնքի մեջ այս կամ այն իրավական կացությունն են. ունեցել։ Ե՛վ հողը, և՛ ջուրը, և՛ հարկերը, և՛ ամեն տեսակի ծառայություն բաժանվել են համայնքի անդամների վրա՝ համաձայն այդպիսի ցենզին և համաձայն նրանց բաժին հանված հողամասերին։ Համայնքի այսպիսի կազմակերպության հետևանքով, եթե միայն խստիվ պահպանված է եղել այդ հիմնական սկզբունքը, ո՛չ ոք դժգոհ չի եղել, որովհետև համայնքի անդամներից և ո՛չ մեկը զրկված չի եղել։

Այս սիստեմով հողաբաժանման հիմնական միավորը համարվել է պճեղը, որ բաղկացած է եղել 4 հոգուց, ուստի և ինքը՝ հողաբաժանման այդ սիստեմըն էլ, կոչվել է համբա-պճեղական։ Կես-պճեղային հողաբաժինը, ինչպես արդեն ասել ենք, ծառայել է իբրև հավասարեցուցիչ հողաբաժին, երկու հոգուց բաղկացած ընտանիքներին և բեքարաներին, այսինքն՝ ո՛չ տնտեսություն և ո՛չ էլ ընտանիք ունեցող անհատներին, հողաբաժին հատկացնելու համար։ Բազմանդամ ընտանիքները կազմել են համայնքի բարձր, համբայական դասը, երեք-պճեղավոր և կիսանավոր ընտանիքները կազմել են համայնքի միջին դասը, պճեղավորները՝ համայնքի փոքր և ստորին դասը։

Համբայական և մյուս կարգերը մշտական, կայուն մեծություններ չեն եղել. նրանց չափը՝ մեծությունը կամ փոքրությունը, կախյալ է եղել ոչ միայն առանձին ընտանիքների հոգիների թվից, այլև բնակչության աճելությունից և համայնքի՝ հողի քանակով հարուստ կամ աղքատ լինելուց։ Մարդը, իբրև բնության ստեղծած հոգի, ըստ վաղնջական սովորույթի, կարող էր զուրկ մնացած լինել հողից միայն երկու, միմյանց հաջորդող հողի վերաբաժանման միջոցում. նույնպես և մեռած ու ընտանիքից ու համայնքից դուրս եկած հոգիները մի վերաբաժանումից մինչև մյուսը շարունակել են համարվել այն ընտանիքների անդամ, որոնց առաջ պատկանած են եղել, հետևաբար և իրավունք են ունեցել հողաբաժին ունենալու։ Այս պատճառով էլ ամեն մի փոփոխություն, որ տեղի է ունեցել ընտանիքի կազմի մեջ, ազդել է նրան բաժին ընկած ու ընկնելիք հողի չափի վրա։

Նույնպես և ազդեցություն են ունեցել և՛ բնակչության աճելությունը, և՛ համայնքի՝ հողի քանակով առատ և սակավահող լինելու հանգամանքները։

Ընդունենք, օրինակ, որ տվյալ համայնքը, որ բաղկացած է եղել հարյուր համբայից կամ 1600* հոգուց, ունեցել է 1000 դեսյատին հողաբաժանմամբ հատկացված հողամաս, այնպես որ ամեն մի համբա ծխին բաժին է ընկած եղել 10 դեսյատին, երեք-պճեղավորին՝ $7\frac{1}{2}$, կիսանավորին՝ 5, և վերջապես պճեղավորին՝ $2\frac{1}{2}$ դեսյատին։ Բայց, եթե ընդունենք, որ նույն համայնքի մեջ, 40 կամ 50 տարուց հետո, համբաների թիվը աճել, հասել է 150-ի, իսկ համայնապատկան հողի քանակը նույնն է մնացել, ինչպես որ, սովորաբար, եղել էլ է, այդ դեպքում, իհարկե, համբայական հողաբաժինն էլ պակասել է, այնպես որ համբա ծուխը ստացել է ո՛չ 10, այլ միայն $7\frac{1}{2}$ դեսյատին, նույնպես և մյուս կարգերը։ Ահա՛ այս ընդհանուր ձևն ու կառուցվածքն է, որ ունեցել է հնագույն համբա-պճեղության սիստեմը։

Սակայն հողաբաժանության այդ սիստեմն ունենալով որոշ առավելություններ՝ ունեցել է և պակասավոր կողմեր կամ թերություններ, որոնց առաջն աշխատել են հետզհետե առնել համայնքները։ Եվ ամենախոշոր թերությունը հենց այն է եղել, որ ընտանիքները միշտ էլ բաղկացած չեն եղել 16, 12, 8, 4 և երկու հոգուց, այլ, ընդհակառակը, կյանքում հաճախ պատահել են ընտանիքներ, որոնք բաղկացած են եղել 3, 5, 6, 7, 9 և այլն, մինչև 40 և ավելի հոգուց։ Արդ՝ վաղնջական սովորույթը հենց այդպիսի ընտանիքների համար սահմանել է թե՛ երկչնչյան վերոհիշյալ հավասարեցուցիչ հողաբաժինը և թե՛ կենտ հոգիներից բաղկացած ընտանիքների վերա մի-մի հոգի ավելացնելու կարգը, այսինքն՝ ընդհանուր նորմայից մի հոգով պակաս ընտանիքի վերա ավելացվել է մի ավելորդ հոգի և նրան տրվել է հաջորդ բարձր կարգի հողաբաժինը, առանց ի նկատի առնելու, թե քանի հոգուց է բաղկացած եղել ընտանիքը, որի վրա հավելումն է արվում։ Այդ դեպքում՝ մինչև իսկ միանձնյա բեքարաններն էլ բացառություն չեն կազմել. Նրանց ընդունված նորմայով պատկանել է մի հոգու հողաբաժին, բայց հողբաժանները ի նկատի առնելով, որ հողի այն չնչին բաժինը, որ պատկանել է նրանց, ոչ մի գին և տնտեսական խորհուրդ չի կարող ունենալ, նրանց էլ հատկացրել են, հայտնի բան է, համայնական ժողովի համաձայնությամբ՝ երկու հոգու հողաբաժին։

Նույնը կատարվել է և այն ընտանիքների վերաբերմամբ, որոնք թեև բաղկացած են եղել զույգ թիվ հոգիներից, բայց և այնպես չեն համապատասխանել ընդունված կարգերին. նրանց էլ տրվել է, բացի նորմալ հողաբաժնից, և երկչնչյան հավասարեցուցիչ հողաբաժին, որպեսզի հատկացված հողաբաժինների քանակը համապատասխան լինի ընտանիքի հոգիների թվին։ Վեց հոգուց բաղկացած ընտանիքը, օրինակ, չի համապատասխանել նորմային, որովհետև. ինչպես արդեն նկատել ենք, վաղնջական սովորույթը ճանաչել է

* Բնագրում՝ 1000, ուղղում ենք (100×16=1600)— Պ. Հ.։

միայն ընտանիքների հինգ կարգ՝ համբային, երեք-պճեղային, կիսանական, պճեղային և կես-պճեղային։ Վեց հոգուց բաղկացած ընտանիքը ստացել է, բացի նորմալ պճեղական բաժնից և մի ավելորդ հողամասն երկու հոգու պատկանած հավասարեցուցիչ հողաբաժնի չափով։ Ավելորդ հողաբաժին նույն չափով ստացել են և այն ընտանիքները, որոնք բաղկացած են եղել 10, 14, 18, 20 և ավելի հոգուց։ Գոյություն չունեցող հոգիների հավելման կարգը նպատակ է ունեցել հողի բավարար չափով ապահովելու համայնքի ամենաչքավոր անդամներին։ Ժողովրդի հասկացողությամբ՝ ավելի բարվոք է համարվել ավելիքով վարձատրել չքավորներին, քան զրկել նրանց, որովհետև ամեն մի հոգի, իբրև բնության արարած, իրավունք է ունեցել հողի և ջրի վերա, որոնք բնության պարգևն են։ Ինքը՝ հոգին, կարող է հրաժարվել հողից, բայց ո՛չ ոք իրավունք չպետք է ունենա՝ այդ անել տալու նրան։

Այդպիսի դեպքերում էլ, սակայն, առաջ է եկել մի ուրիշ անպատշաճություն՝ շահվել են կենտ հոգիներից բաղկացած ընտանիքները, ի վնաս զույգ հոգիներ ունեցողների, որովհետև առաջինները ստացել են հավելումն՝ գոյություն չունեցող, ֆիկտիվ հոգիների հաշվին, այնինչ վերջինները ստացել են միայն իրոք գոյություն ունեցող հոգիների հողաբաժիններով։ Բացի սրանից, հողաբաժանության այդպիսի միջոցը հանդուրժելի կարող էր լինել և գործադրվել միայն հողառատ գյուղերում, որտեղ համայնքների անդամները կարոտություն չեն ունեցել հողի և, սիրով ու հոժարությամբ, մի կամ երկու հոգու հավելումն են արել, իսկ սակավահող գյուղերում, որտեղ ամեն մի կտոր հող թանկ է գնահատվել, այդպիսի հավելումները հարուցել են զորեղ դժգոհություն, որի հետևանքն էլ այն է եղել, որ հողի վերաբաժանումը այդպիսի գյուղերում ավելի հաճախ է տեղի ունեցել, բաժանման ժամանակ էլ առաջ են եկել պայքար, իրարանցում և վեճեր։

Դրա առաջն առնելու համար էլ, բայց արդեն ավելի նոր ժամանակները, վաղնջական սովորույթը մշակել է հողի և ջրի մի այլ հավասարեցուցիչ միջոց՝ Հառակաշությունը, որ գործադրվել է հատկապես սակավահող գյուղերում։ Բեքարանները և անդամների կենտ թիվ ունեցող ընտանիքները միացել, համախմբվել են միասին աշխատելու համար, կազմելով ազատ ընկերակցություններ, որոնք կոչվել են Հառակաշություններ: Այդ դեպքերում պահանջվել է միայն, որ այդ ընկերակցություններն իրենց հոգիների թվով համապատասխան լինեին կամ համբայական, կամ երեք-պճեղական, կամ կիսանական և կամ պճեղական ծխերին, կամ թե, վերջապես, ունենային զույգ թվով հոգիներ։ Մյուս բոլոր կողմերով ու հանգամանքներով՝ այդ ազատ ընկերակցությունները լիակատար ազատություն են վայելել և գործել ինքնագլուխ, ինչպես ընկերակիցների ընտրության գործում, նույնպես և միմյանց հետ ունենալիք փոխադարձ հարաբերության մեջ։

Պարսից իշխանության օրերով Երևանի Սարդարության երկրում, որի գյուղերից մեկն էլ եղել է Աշտարակը, կլիմայական, տեղագրական և կենցաղական պայմանները, իհարկե, այնքան զանազանակերպ են եղել, որ դժվար է եղել հողաբաժանության մի ընդհանուր եղանակ գործադրել ամեն տեղ, և եղել են համայնքներ, որոնք իրենց պայմաններում գործադրել են տարբեր եղանակներ, բայց այդ բոլորն եղել են միայն պատահական երևույթներ. մեծ մասը՝ համայնատարածը, եղել է Հին Հայաստանից ժառանգածը՝ վերոհիշյալ համբա-չարեքական եղանակը, որից, ընդհանրապես, չենք կարծում, որ բացառություն կազմած լինի և Աշտարակը։ Դրա համար նա չի ունեցել ո՛չ կլիմայական, ո՛չ տեղագրական և ո՛չ էլ կենցաղական այնպիսի պայման, որ ստիպված լիներ նրան յուր հողերի բաժանման վերաբերմամբ մի այլ եղանակ գործադրելու։ Նա, ընդհակառակը, յուր ջրարբի կամ ջրովի գնող հողերի սակավ լինելու հետևանքով, ինչպես արդեն ասել ենք, շահագրգռված է եղել, որ ճշտիվ չափավորված լինեն յուր հողաբաժինները, և գյուղացիները մեկը ի վնաս մյուսի ավելի ստացած չլինի, ջոկողություն չլինի, անարդարություն գործված չլինի, որի համար և ժամանակի ամենանպատակահարմար եղանակն եղել է Համբա-չարեքությունը։ Ճիշտ է, դա մի փոքր արվեստական կառուցվածք է ունեցել և որոշ պակասություններ ու թերություններ է ունեցել, որոնք հետագայում աչքի են ընկել և մեր վերը մեջ բերած միջոցառումներով հետզհետե շիտկվել, բայց դա ժամանակի հայ գյուղացիության համար ամենապարզը, ամենադյուրըմբռնելին է եղել[9]։

Որ այդ սիստեմն եղել է և գործադրվել է Աշտարակում, այդ երևում է և այն հանգամանքից, որ մինչև օրս էլ դեռ այդտեղ այգիները ոռոգվում են չարեքական կարգով, չարեքներով, այսինքն՝ բաժանվում են չարեքների, և ջուրը տրվում է առաջ մի չարեքի մեջ գտնված այգիներին, հետո՝ մյուսին, և այսպես՝ հերթով։ Մեզ թվում է, որ այգիների ոռոգման այդ չարեքը մնացորդ է հողաբաժանության չարեքների։ Հայտնի է, որ հարկերը բաժանվել են չարեքների վերա, նրանց հոգիների թվով, և համբան ավելի շատ է վճարել, քան երեք-պճեղավորը, և երեք-պճեղավորն՝ ավելի, քան կիսանավորը, և այլն։ Նույնն եղել է և ջրի վերաբերմամբ. ջուրն ավելի երկար ժամանակ օգտագործել է համբան, հետո՝ երեք-պճեղավորը, հետո՝ կիսանավորը, և այսպես, ըստ կարգի, և իրենց չարեքի համեմատ մեկը մյուսից ավելի է վճարել։

9 Նախկին Սարդարության երկրի գյուղերի մասին, ջրատիրության, հողաբաժանության, հարկատվության սիստեմների մասին մենք մեր մեջ բերած տեղեկությունները քաղել ենք Ս. Ա. Եղիազարյանի «Исследования по истории учреждении в Закавказьи, часть I, Сельская община» (Казань, 1889) գրքից։ Հին Հայոց համբա-պճեղային կոչված հողաբաժանության սիստեմի մասին մեզ պատմել և մանրամասն տեղեկություններ է հաղորդել և նորքեցի Ավետիք Նազարի Տեր-Ավետիքյանը։

Աշտարակում միայն, ինչպես երևում է, հողաբաժանության այդ սիստեմն ավելի վաղ է վերացվել կամ, լավ է ասել, ավելի վաղ է կորցրել յուր կանոնավոր, անշեղ ընթացքը և անխախտ գործադրությունը, քան մյուս գյուղերում , նրա ջրարբի հողերում այգիներ տնկվելու, ցանկապատվելու պատճառով։ Մնացել են անջրդի՝ ստորին հողերը, որոնք այնքան ընդարձակ են եղել, որ ավելիքով լրացրել են վարուցանք անողների բոլոր կարիքներն ու պահանջները։ Հասկանալի պիտի լինի, որ այդպիսի հանգամանքներում և հողաբաժանության հիշյալ եղանակի գործադրությունը կորցրել է յուր սուր բնավորությունը, քանի որ այնուհետև այլևս կարիք չի եղել հողաբաժինների խստագույն չափավորման և նրանց սահմանների ու անջրպետ նշանների պահպանության խիստ հսկողության։ Եվ Աշտարակի համար այնուհետև ավելի կարևորություն են ստացել ջրի, ջրաբաժանության խնդիրները, և նրա տանուտերական դատավարության առաջ ավելի հաճախ հանդես են եկել ոռոգման ջրի մասին տեղի ունեցած կագ ու կռիվների ու վեճերի գործեր, քան նախկին հողաբաժինների սահմանների և դրանց անջրպետ նշանների՝ ոյրուղների խախտման խնդիրներ։

Վարուցանքի հետ միասին աշտարակցիք, վաղ ժամանակներից, պարապել են և այգեգործությամբ՝ պտղաբուծության հետ միասին, որ հետագայում նրանց գլխավոր պարապմունքն է դարձել։ Դրա, այդ պարապմունքի զարգացման նպաստել են գյուղի հողի հատկությունը և կլիմայական պայմանները, որոնք հատուկ պայմաններ են ստեղծել խաղողի որթի և պտղատու ծառատունկի հաջող աճելության համար։ Բացի դրանից, նպաստել է այդ գործի զարգացման և մի այլ հանգամանք։ Պարսկաստանում, ընդհանրապես, և Սարդարության երկրում, մասնավորապես, գոյություն է ունեցել մի վաղընջական օրենքի զորություն ստացած սովորույթ, որի զորությամբ տնկված ու ցանկապատված տարածությունները համարվել են տնկողների ու ցանկապատողների սեփականությունը։ Աշտարակցիք օգտվել են դրանից և ձեռնարկել են գյուղի ջրարբի՝ իրենց բաժին ընկած հողամասերի վերա տնկել այգիներ և նրանց սեփականատերը դառնալ, որի հետևանքով և այգիների թիվը տարեցտարի այնքան բազմացել է, և նրանց տարածությունն այնքան ընդարձակվել, որ բռնել է, համարյա թե, ջրարբի հողերի ամբողջ տարածությունը։

Իրենց պարապմունքի այդպիսի վաղեմության և այն մեծ սիրո հետևանքով, որ նրանք տածել են դեպի այդ գործը, ևս և այն չարքաշ աշխատանքի հետևանքով, որ նրանք գործադրել ու թափել են դրա համար, նրանք ժառանգաբար, որդին հորից սովորելով, հմտացել և մասնագիտացել են այդ գործի մեջ։ Աշտարակցին կարողացել է տաժանելի աշխատանքով առապար հողը մշակել և տնկելիք այգու համար տեղ պատրաստել. նա իմացել է պատ-

բաստված տեղը վարպետորեն ձևել և չափել, որի համար կիրառել է յուր ցանքսատեղերի չափելու համար հնուց գործածված և մինչև օրս պահպանված չափերը՝ պարան-տեղը և լոգրեն-տեղը (պարանն երեսուն լիտր է, 48 լիտրը՝ մի գեսյատին)*. Նա այնուհետև թողնելով այգատեղի չորս կողմն որոշ լայնությամբ ափեր, բուն այգետեղը նույն վարպետությամբ բաժանել է տախտակների, որոնց մեջ կապել է թմբեր՝ ոռոգման ջրի համար թմբազլուխ մի թմբից մյուսը բաց է արել անցքեր, որոնք կոչվել են «պոլ»-եր, տախտակները միմյանցից բաժանել է միջնակներով, վերջին մեծ տախտակներին կցել է «բաչ»-եր, այսինքն՝ փոքր տախտակներ, համապատասխան փոքր թմբերով, և որթերի մառերը տեսակավորելով, միմյանցից որոշ չափի հեռավորությամբ տնկել է այն հաշվով, որ գինու խաղողի տեսակները համախմբված լինեն մի տեղ, «ալաները»՝ մի ուրիշ տեղ:

Եվ աշտարակցին իմացել է այնպես խնամել յուր նորատունկ այգին, ինչպես որ նորա ծնողները գիտեն և կարող են խնամել իրենց զավակներին. նա ժամանակին էտել է (հատել է) որթը, փորել թմբերը, «սուզը տվել», քաղհանել, պաշտպանել դաղձից, «ծերկապ արել», թաղել, «թաղը վեր տվել», ագրել, հողել, ջրել ու ջուրը կարել թմբերի վերայից այն հաշվով, որ վերջին թմբերը ջրվեն «սրտոպով», այսինքն՝ առաջին թմբերի ջրերի հավելվածով կամ քամվածքով: Եվ հասկանալի պիտի լինի, որ այդպիսի խնամող ձեռքի տակ և՛ խճահող բլուրների լանջերին, և՛ ապառաժուտ ձորաբաշերին, և՛ քարքարոտ առապարներում ծլել, կանաչել, աճել և փարթամ «տաշնակներ» է արձակել նրա այգին և 30 և ավելի տեսակ խաղող պտղաբերել, 30 տեսակ գույնզգույն, հյութալից, անուշահամ խաղող՝ սև ու սպիտակ Գինուկ, Իծապտուկ, Ալանի խաղող, Ճիլար, Եղաչք, Կոթուունց, Հալաղի, Հաչարաշ, կարմիր ու սպիտակ Սհարի, Մսխալի, կարմիր ու սպիտակ Քիշմիշի, Եղանտոտի, Տաքյարղանդի, Զավուշտարի, Խարճու, Սև ամրահի, Ասկյարի, Խալիլի, Խաթուն- բարմաղի և այլն:

Հանգուցիչ է եղել ժամանակի աշտարակցու այգու պատկերը. նա ջրաշատ է եղել, զվարթ ու ակնապարար և յուր մշակված ու խնամքով պահված լինելու հանգամանքով մարդու սիրտ ուրախացրել. ջրերը զրնգալով հոսել են նրա գլխով, թմբերը մաքուր քաղհանված են եղել, միջնակներում և թմբերի մեջ արոտը կարճ հնձած, հավաքված, ափերը զմրուխտ կանաչով ծածկված, ծառերը սովերաշատ, սաղարթագեղ: Բարեկից է եղել նրա այգին պտղի ժամանակ. ծառերը ուռճացած հասուն պտուղներով, խաղողը լցված ու ծանրացած ողկույզներով կարմրին, սպիտակին և սևին են տվել խշմարների վերայից, թփերի տակը և հնձանը կաղմ և պատրաստ՝ ընդունելու և ամբարելու յուր

* Մի լիտրը 50 քառակուսի սաժեն (ծան. հեղինակի):

մեջ այգու բարիքը, որ պիտի ապահովեր տիրոջ կյանքը մինչև հաջորդ պտղաքաղը և այգեկութը:

Աշտարակը այդ ժամանակները դեռ բուն մտքով առանձին պարտեզներ չի ունեցել և չունի կամ, լավ է ասել, քիչ է ունեցել. նրա ծառերը տնկված են եղել նրա այգիների ափերին, ցանկապատերի երկարությամբ, միջնակներում և, մինչև իսկ, թմբերի մեջ: Այդ հանգամանքը, ճիշտ է, վնասել է այգու բերքատվության, որովհետև ժամանակի ընթացքում աճած ու բարձրացած բարձրուղեշ ծառերը իրենց դեպի այգու թմբերը տարածած ճյուղերով հով են տվել, շվաք արել որթերի վերա և արգելք հանդիսացել արեգակի կենսատու ճառագայթներին թափանցելու, ընկնելու նրանց վերա, բայց այգետերերը դրա վերա մի առանձին ուշադրություն չեն դարձրել, քանի որ խաղողի բերքն առատ է եղել, և ծառապտուղը՝ ո՛չ պակաս հարկավոր ու կարևոր նրանց համար: Աշտարակին հատուկ են, և հաջողությամբ աճում են նրա հողի վերա գեղձենին, ծիրանենին, փշատենին, թթենին, խնձորենին, տանձենին, բալենին, սալորենին, ընկուզենին, սերկևլենին, նշենին և մյուս նախալեռնյան գոտու հարավային մասին հատուկ պտղատու ծառերը: Հայտնի են Աշտարակի Մատնափշատը, «խճճկենի» խաղողի պտուղը, ճղվի և լոձ գեղձը, Խոսրովշահի ծիրանը և այլն:

Աշտարակցիք իրենց այգիները սկսել են տնկել առաջ գյուղամոտ տեղերում, հետո՝ և մյուս ավելի հեռավոր տեղերում: Խոպանները (խուբան) նրանք սկսել են տնկել 1825 թվից, իսկ մինչև այդ դրանք խոպան հողեր են եղել և այդ պատճառով էլ դրանց վերա տնկված այգիները կոչվել են Խուբաններ: Աշտարակը ստորագրող Տեր Սարգիս Բղնունին ասում է, որ այդ հողերի վերա առաջ նույնպես եղել են այգիներ, բայց հետո քանդվել ու երկար ժամանակ խոպան են մնացած եղել: Համեմատաբար ավելի նոր ժամանակները տնկվել է Միջնահանդը, որը ջրարբի հողերի հանդերի վերջին մնացորդն է եղել: Նորագույն ժամանակները տնկվել են Խճբերը, երբ Լամի առվի ջուրը լեռնալանջով տարվել է այդ կողմը, խոպանների՝ Օշականի սահմանների մոտ գտնված մասերը և, վերջապես, ձորաբաշերը՝ Պատռելակոճը և դրա շարունակությունը մինչև Օշականի սահմանը: Այգիները տնկվել են շարքերով, որոնք կոչվել և կոչվում են Սառնաներ՝ Ձորաբաշերի սառնա, Խուբանների սառնա, Միջնահանդի սառնա, Վարդանաբակի սառնա և այլն:

Ջրարբի հողերը այգիներով բռնելուց հետո, գյուղացիք այլևս, կարելի է ասել, վարուցանքով չեն պարապել կամ, լավ է ասել, քիչ են պարապել. համենայն դեպս, վարուցանքն այնուհետև նրանց համար դարձել է երկրորդական պարապմունք, և նրա տեղը բռնել է այգեգործությունը, որովհետև հացն էժան է եղել, և այգիների արդյունքն այնքան առատ, որ նրանք միշտ

էլ ի վիճակի են եղել իրենց ապրուստի համար հարկավոր հացի պաշարը ձեռք բերել դրսից կամ դրամով, կամ իրենց պտղեղենի ու խաղողի փոխանակությամբ։ Հետագայում նրանք հետզհետե արդեն այնքան քչացրել են իրենց վարուցանքի աշխատանքը, որ մինչև իսկ ավելորդ են համարել դրա համար ամենաանհրաժեշտ ինվենտարը պահել, և երբ կամեցել են կամ անհրաժեշտ կարիք են ունեցել ցանելու իրենց հողաբաժինները Դեմիում, կիսաբարության պայմանով կապվել են շրջակա գյուղերի գյուղացիների հետ, որոնք վարել, ցանել, հնձել, կալսել և քամել են ցորենը և իրենց աշխատանքի համար ստացել են արդյունքի կեսը։

Աշտարակցիք վաղ գարունքից մինչև ուշ աշունք զբաղված են եղել, բանել են իրենց այգիներում, որովհետև հնումը բանվոր-մշակ վարձելու սովորություն չի եղել, և բոլոր աշխատանքը նրանք իրենք իրենց ձեռքով են կատարել։ Բայց, որովհետև այգիների աշխատանքը սեզոնային է եղել, և անհրաժեշտ է եղել ամեն բան յուր ժամանակին անել վերջացնել, նրանք գործադրել են փոխարա կոչված բանելու ձևը, այսինքն՝ վեց-ինը հոգով խմբեր կազմելով, փոխեփոխ բանել են մեկզմեկու այգիներում և այդ միջոցով հաջողել են ամեն բան լիովին, ժամանակին կատարել, վերջացնել։ Ամառները նրանք իրենց թարմ պտուղները՝ ծիրանը, սալորը, բեռ են բռնել, այսինքն՝ լցնելով իրենց ձեռագործ ճլուռոց (ճիլուռի) գործած մեծ քթոցների մեջ և բառնալով իրենց յաբուներին (բեռնակիր ձիերին), տարել են Արագածի լանջերի հայ, քուրդ և թուրք գյուղերը և փոխանակել յուղի և պանրի, աշնանը, երբ հասել է խաղողը, նրանք նույն ձևով այդ տարել են Ապարանի և Շիրակի հացառատ գյուղերը և փոխանակել ցորենի, ձավարի, ոսպի, սիսեռի և հաճարի հետ, իսկ ձմեռը, երբ նրանք արդեն բոլոր աշխատանքները վերջացրած են եղել, բերքը տուն բերած, գինին պարզեցրած և բրորներից ու կճեռներից փրփրուն օղիները քաշած, նրանք դարձյալ բեռ բռնելով՝ տարել են տկերի ու տկճորների մեջ լցրած գինին ու օղին գինեզուրկ և օղեզուրկ հեռավոր տեղերը և հասել Ջալալօղլի, Գյումրի ու մինչև իսկ հեռավոր Ջավախքի Ախալքալաքը, որտեղ և վաճառել և լավ շահ ստացել։

Դրանից, գինու այդ եղանակով արտահանելուց, գյուղում առաջ է եկել և մի նոր առանձին պարապմունք, որ կոչվել է Զարվադարություն, իսկ դրանով պարապողները՝ Զարվադար, մի գործ, որով պարապել են գյուղացիք հատկապես ձմեռները։ Զարվադարները, այսինքն՝ ձի բանեցնողները, ձիապանները, գյուղում այն չքավոր գյուղացիներն են եղել, որոնք ունենալով փոքր այգիներ, Աշտարակում ամենքն էլ ունեցել են մի-մի ձեռք այգիներ, չեն կարողացել նրանց արդյունքով կառավարվել և կարոտել են կողմնակի աշխատանքի։ Դրանք մեծ մասով եղել են առույգ, հուժկու, խիզախ տղամարդիկ, որոնք չեն վախեցել ո՛չ զորեղ սառնամանիքներից, ո՛չ բուք ու բորա-

նից, ո՛չ ձմեռային ճանապարհների դժվարություններից, ո՛չ էլ դրանց հետ կապված սովորական վտանգավոր պատահարներից՝ բքախեղդ լինելուց, սառչելուց և ավազակների ձեռքն ընկնելուց։

Նրանք, որոշ վարձատրությամբ, տարել են իրենց յաբուներին բարձած՝ գյուղի ունեորների գինու և օղու ծանր տկերն ու տկճորները վերոհիշյալ հեռավոր շուկաները, ոտով քայլելով ձիերի ետևից դժվարակոխ լեռնային կտրուկ կածաններով և, հաճախ, մինչև գոտկատեղը խոր ձյուների մեջ խրրվելով։ Նրանք ունեցել են իրենց մանզիլները՝ իրենց ընտրած ճանապարհի վրա գտնված գյուղերում, որտեղ իջևանել են, բեռները ցած դրել, ձիերը գոմերում կապել, կեր տվել, իսկ իրենք օդաներում պառկել, գիշերել, փափուկ մորթե գդակները բարձ դարձնելով իրենց համար և փոշոտ յափունջիները՝ վերմակ։

Այսպես, նրանք գնացել են հանգույցե-հանգույց՝ կամ մենակ, կամ, հաճախ, ընկերությամբ, ուրախ, զվարթ, ասելով, խոսելով, ծիծաղելով, երգելով, շուտ-շուտ էլ գինի-օղիով կատարները տաքացնելով, մինչև որ տեղ են հասել և բեռները հանձնել, ում պետք է, և վերադարձել նույն ճանապարհով իրենց տեղը։ Աշտարակում և ամեն տեղ հեշտ է եղել ճանաչել այդ չարվադարներին նրանց հավասարաչափ, հաստատուն քայլվածքից, հագնվելու ձևից և երեսահարքի ցրտահար կացությունից՝ մորթե գդակը խոր, մինչև ականջները խրած, ղանդապանները հագած ու դրանց մեջ վարտիքի ծոպերը մի տեսակ ղաշանկ (սիրուն), չարվադարաբար հագցրած և յափնջին անհոգորեն վիզը ձգած։ Նրանք ամեն տեղ «մանզիլ գյուղերում» հաճելի հյուր են եղել. որ օդայում որ նրանք իջևանել են, խաղ ու հարսանիք է եղել. Նրանք ասել, խոսել, զվարճացրել են գյուղացիներին իրենց՝ աշտարակցիներին հատուկ կատակներով և սրաբանություններով, նամանավանդ որ այդ բոլորը ցողվել է Աշտարակի շողշողուն, 14—16 աստիճան կտրուկություն ունեցող գինիով և բրտի փրփրուն, անույշ օղիով։ Դրանից ես և Աշտարակում առատորեն գինի-օղի գործածելուց և աշտարակցու սփռոցը գինու գավից և օղու շշից անպակաս լինելուց է եղել, որ աշտարակցու անունը գինիխում է հռչակվել ամեն տեղ, և անցյալում սովորություն է եղել Երևանում, աշտարակցի տեսնելիս՝ ծաղրելով նրա բարբառը և շատ գինի գործածելու սովորությունը, ասել.

Հաշտարակցի, հաշտարակցի,
Հաց ունյեմ, քացախ ունյե՞ս,
Տա՛մ, բրդյես, ուտյես։

Սրանով, այդ բնորոշ խոսքերով, իհարկե, կամեցել են ասել ու հասկացնել, որ աշտարակցիք այնքան սիրել են գինի-օղին, որ պատրաստ են եղել մինչև իսկ քացախի մեջ հաց բրդել, ուտել։

Աշտարակցիների երրորդ պարապմունքն եղել է առևտուրը։ Հին ան-

ցյալում գյուղը փակ տնտեսություն է ունեցել. նա չի կարոտել դրսի շուկաներին, ուստի և ո՛չ արտահանել է յուր ունեցածը, ո՛չ էլ դրսից մի որևէ ապրանք ներմուծել: Նա ունեցել է ամեն բան բավարար չափով՝ այն մտքով, որ նրա ունեցածը բավարարել է նրա համար նահապետական կյանքի ժամանակի բոլոր էական կարիքներն ու պահանջները: Գյուղը կարոտել է, և այդ՝ սակավ կարևոր դեպքերում, կտորեղենի կամ, ինչպես ասել են աշտարակցիք, ճոթեղենի և մի քանի մանրունք ապրանքների, որոնց պահանջը մասամբ լրացրել են շրջավաճառ-փերեզակները, որոնք գյուղեգյուղ շրջելով, վաճառել են իրենց «չարչի-խուրդասին» և որոնցից մեկի նկարագիրը թողել է մեզ Պերճ Պռոշյանն յուր «Բզզի» խորագրով կենցաղական վեպի մեջ: Կարևոր սակավ դեպքերից մեկը և գլխավորն եղել է հարսանիքներին հարսի համար Ֆրեր գնելու դեպքը, որի համար անհրաժեշտ է եղել ստիպողաբար Երևանի Բազազխանան գնալ, որովհետև Ֆրեր նշանակել է նորահարսի համար պատրաստելիք, կարելիք հանդերձեղեն, որի կտորեղենը թանկագին լինելով՝ կարելի է եղել միայն քաղաքի խանութներում ձեռք բերել «կարմիր չարթեյի ղանավուզ»՝ մինթանայի համար, «կանաչ խառա»՝ քաթիպայի համար և այլն:

Գյուղացիների՝ իրենց վարուցանքը մի խոշոր չափով պակասեցնելու և իրենց հետզհետե բոլորամասն այգեգործության նվիրելու հետևանքով, նրանց կյանքի մեջ հետագայում առաջ է եկել մի խոշոր փոփոխություն. նրանք ստիպված են եղել իրենց ունեցած ապրանքն արտահանել և դրսից իրենց չունեցածը ներմուծել, մի բան, որ նրանք առաջ կատարել են ապրանքափոխանակությամբ, որ առևտրի նախնական ձևն է եղել, և հետո՝ դրամի փոխանակությամբ, որ դրամով առևտուր անելու առաջին, թույլ փորձն է եղել: Գյուղացիների՝ մեր վերոհիշյալ իրենց պտղեղենի և խաղողի տանելը Արագած, Ապարան ու Շիրակ և փոխանակելը յուղի, պանրի և ցորենի, առաջին ձևի առևտրի արտահայտությունն է եղել, իսկ նրանց՝ իրենց գինին և օղին հեռավոր շուկաները փոխադրելը և դրամով վաճառելը՝ երկրորդի: Դրանք թեև դեռ իսկական առևտուր չեն եղել, այսինքն՝ անձուկ մտքով մեկից մի բան առնելը և մյուսին վաճառելը և մեջը վաստակելը, բայց, համենայն դեպս, իսկականի առաջին, թույլ քայլերը և փորձերն են եղել, որոնք հետզհետե այնքան զարգացել են, որ հետագայում բուն առևտրի և վաճառականության կերպարանք են ստացել, և Աշտարակը փոխարկել մի փոքրիկ առևտրական շուկայի՝ շրջակա գյուղերի համար:

Առաջին խանութները գյուղում բացվել են Ղրիմի պատերազմից հետո. դրանք առաջին նվագ մի երկու-երեք փոքրիկ կրպակներ են եղել շատ սահմանափակ քանակի և տեսակի ապրանքով՝ ճոթեղեն և մանրուք, առնված Երևանում, և այն էլ պարտք վերցրած՝ քիչ-քիչ հատուցանելու պայմանով: Առաջին տարիները դրանք շարունակել են գայթ ի գայթ առևտուր անել, սա-

կավ դրամագլխով ու դարձվածով, բայց հետո տակավ առ տակավ ամրացել են, ոտքի են կանգնել, մինչև որ, վերջապես, վերա է հասել 1877 թվի ռուս-տաճկական պատերազմը, որի հետևանքով խոշոր գումարներ են մտել գյուղը և զորեղ թափ հաղորդել նրա առևտրին: Կրպակների թիվը կրկնապատկվել ու եռապատկվել է. նրանք մեծացել, վերածվել են իսկական խանութների, լցվել տեսակ-տեսակ մեծաքանակ ապրանքներով, որոնք ստացվել են ոչ միայն Երևանից, այլև Թիֆլիսից, իսկ հետագայում, ավելի նոր ժամանակներն, առաջ են եկել մինչև իսկ մի քանի առևտրական տներ, որոնք արդեն տասնյակ հազարների դարձված են արել, անմիջապես հարաբերության մեջ մտնելով Մոսկվայի հետ և առաջին ձեռքից, և ավելի էժան գներով ապրանք ստանալով նույն տեղից և մրցելով երևանցիների հետ,— Վարդազարենց, Փարվանենց և Մուխսոնց առևտրական տները կամ ֆիրմաները:

Աշտարակցիք պարապել են և արհեստներով. Աշտարակն ունեցել է յուր հյուսները և ատաղձագործները, որոնք կոչվել են խառատներ, յուր քարտաշները և որմնադիրները, յուր գդակ կարողները և դերձակները, յուր կոշկակարները ու մաշակարները և այլն, բայց նրա պատմությունից չի երևում, որ երբևիցե նրա մեջ արհեստներն ընդհանրապես և մի որևէ արհեստ մասնավորապես ծաղկյալ վիճակի մեջ եղած լինեն: Դրանք եղել են սովորական արհեստավորների տիպարի արհեստավորներ, որոնք կատարել են ու լրացրել են գյուղացիների սովորական, համեստ պահանջները. չի երևում, որ դրանցից մեկն ու մեկը յուր արհեստի մեջ այնպես մասնագիտացած, այնպիսի վարպետության հասած լիներ, որ անուն թողած լիներ կամ մի որևէ հիշատակ: Այստեղ մենք չենք խոսում, իհարկե, կոշկակարության, դերձակության, գդակակարության և դրանց նման արհեստների մասին, այլ՝ ատաղձագործության և շենքերի կառուցման արհեստների մասին, որոնք Հայաստանում այնքան ծաղկած, այնքան բարձր զարգացման աստիճանի են հասած եղել, որ նրանց թողած հուշարձանները ներկայումս էլ դեռ բոլոր աշխարհի զարմանքն են հարուցանում ամեն տեսակետից:

Հենց յուր իսկ՝ Աշտարակի մեջ մինչև օրս էլ դեռ կանգնած են այնպիսի հուշարձաններ, որոնցից ամեն մեկը հին հայկական ճարտարապետության մի-մի ընտիր կոթող կարող են համարվել. Կարմրավորը, որ մեր երկրում յոթերորդ դարից պահպանված հուշարձաններից մեկն է, Ծիրանավորը, որ հնագույն բազիլիկների մի նմուշ է, և ս. Մարիանեն, որ, գուցե, Հայաստանում մնացած և յուր ճարտարապետության մեջ գոթիկ ճարտարապետության տարրերը պահպանած միակ հուշարձանն է, և բազմաթիվ քանդակազարդ խաչքարեր: Արդ՝ աշտարակցին, որ ամեն օր տեսել ու անցել է դրանց մոտից, որ ինքը, հնագույն գյուղի բնիկ բնակիչ լինելով, գուցե, դրանց կառուցող վարպետների թոռներից ու ծոռներից սերած, ի՞նչ է ժառանգել յուր հայրերից

ու պապերից։ Աշտարակցի Փարվանյանց Գևորգը 1839 թվին ս. Մարիանե եկեղեցու տանիքի աջ թևի վրա, հարավ-արևմտյան կողմից, շինել է ավել, պետք է կարծել՝ աշտարակցի քարտաշ և որմնադիր վարպետների ձեռքով, մի փոքրիկ զանգակատուն, որ յուր անհամաչափությամբ և անարվեստ կառուցվածքով ոչնչով չի հիշեցնում հինը, որի վրա ինքը շինված է. դա մի տգեղ կարկատան է հնի, գեղեցկի վրա։

Աշտարակում, վերջերս, գինու մեծաքանակ չափերով արտահանման հետևանքով, մուտք է գործել և մի նոր արհեստ՝ տակառագործություն, որ առաջ անհայտ է եղել գյուղում. գյուղացիք, մինչև այդ, գինին պահելիս են եղել կարասներում, իսկ հեռավոր տեղերը փոխադրում են եղել ներսից կպրամած տկերով ու ռումբիններով, որից և գինին կպրի համ է ստանում եղել։ Տակառներն ամեն կողմից էլ ավելի հարմար են եղել և՛ գինին իրենց մեջ անարատ պահելու, և՛ տեղից-տեղ փոխադրելու տեսակետներից։

6

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ (I)

ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՅ ԳՅՈՒՂԸ, ՀԱՅ ԳՅՈՒՂԸ ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՐՈՎ ԵՎ ԱՇՏԱՐԱԿԸ

Թե ի՞նչ են եղել հայ գյուղերը, կառավարության ի՞նչ եղանակ են ունեցել նրանք հնագույն ժամանակները, մենք ճշտորեն որոշել չենք կարող, որովհետև մեր պատմագիրների գրվածների մեջ այդ մասին տեղեկություններ չեն պահպանվել։ Հնագույն տեղեկություն այդ մասին հաղորդում է մեզ հույն պատմագիր Քսենոփոնտեսը, որ 401 թվին Քրիստոսից առաջ յուր բյուրով (տասը հազար զորքով) անցել է Հայաստանից և յուր ճանապարհին պատահած գյուղերը մտնելով և օրերով բնակվելով նրանց մեջ, նկարագրել է նրանց և մեզ հիշատակ թողել յուր «Անաբազիս» կոչված գրվածքում, որի հայ թարգմանությունը կրում է «Նահանջ բյուրու» խորագիրը։

Հայաստանն այդ ժամանակները բռնում է եղել Արածանի գետի հովիտը և բաժանվում է եղել արևելյան և արևմտյան մասերի. նա առանձին պետություն է եղել, ունեցել է յուր թագավորը և մտնում է եղել պարսից թագավոր Դարեհ Վշտասպյանի 19 սատրապությունների շարքը, համարվելով 13-րդ սատրապությունը և մյուս սատրապությունների մեջ ավելի արտոնություններ վայելելով։ Հայոց թագավորը վճարել է պարսից մեծ թագավորին տարեկան հարկ և պարտական է եղել պատերազմի ժամանակ յուր զորքով օգնելու նրան. Նա ունեցել է 40 հազար հետևակ զինվոր, ութ հազար ձիավոր, իսկ թագավորական գանձի չափն եղել է երեք հազար տաղանդ արծաթ։ Քսենոփոնի՝

Հայաստան եղած ժամանակ, Հայոց թագավորն եղել է Օրոնտասը, իսկ արևմտյան Հայաստանի կառավարիչը՝ Տիրիբազը։ Առաջինը պարսից թագավորի փեսան է եղել և արյունով պարսիկ, իսկ երկրորդը՝ նրա, պարսից թագավորի «բարեկամը», որ իրավունք է ունեցել օգնելու թագավորին ձի հեծնելիս։

Ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել Քսենոփոնի նկարագրության հայ գյուղերին վերաբերյալ մասը քաղվածորեն, օգտվելով պրոֆեսոր Մանանդյանի «Անաբազիսից» բառացի կատարած հիշյալ նկարագրության թարգմանությունից, որ նա, իրեն հատուկ սիրելությամբ՝ մեր տրամադրության տակ է դրել։

Քսենոփոնն յուր զորքով Կարդուխների երկրից իջնելով դաշտը՝ հասնում է Կենտրիտես գետի ափը (Բոհդան-սու, Տիգրիսի արևելյան ճյուղը), որ բաժանում էր Կարդուխների երկիրը Հայաստանից։ Գետի մյուս կողմում հույները տեսնում են ձիավորներ, իսկ մի փոքր հեռու, բարձրության վրա, շարքերով կանգնած հետևակ զորք, որոնք Օրոնտասի զորքերից էին և միտք ունեին նրանց գետանցքն արգելել և թույլ չտալ, որ նրանք մտնեն Հայաստան։ Բայց նրանք խորամանկությամբ անցնում են գետը և դասավորված շարքերով առաջ գնում, անցնելով դաշտավայրերով և լերկ բլուրներով։ Մինչև այդ, նրանք ոչ մի հայ գյուղ չեն տեսնում, որովհետև հայերի և Կարդուխների մեջ եղած մշտական պատերազմների պատճառով վերոհիշյալ գետի եզերքին ու սահմանամերձ տեղերում գյուղեր չկային։ Նրանք, վերջապես, հասնում են Տիգրիս գետի ակունքը և այդտեղից էլ Տելեբոաս գետի եզերքը (Մեղրագետ), որ շատ գեղեցիկ էր և որտեղ խմբված էին բազմաթիվ գյուղեր։ Այդտեղ նրանց առաջը բռնում է Տիրիբազը, որ թարգմանի միջոցով բանակցում է նրանց հետ։ Պայմանավորվում են, որ հույներն իրավունք ունենան անցնել երկրի միջով և ուղեցածի չափով պաշար վերցնեն, միայն որ չայրեն գյուղացիների տները, չվնասեն։

Հույները շարունակում են իրենց ճանապարհը, իսկ Տիրիբազը հետևում է նրանց յուր զորքով 10 ստադիոն հեռավորության վրա. Նրանք հասնում են մի արքայատան կամ պալատ, որի շուրջը գտնվում էին բազմաթիվ գյուղեր, որոնք լի էին պաշարեղենով։ Երբ նրանք բանակ են դնում, լուսաբացին առատ ձյուն է գալիս, և նրանք որոշում են տեղավորել զորքն ու դրա զորավարներին գյուղերում, բայց բանակից դուրս մնացածներից ոմանք նախազգուշացնում են, որ իբր թե գիշերը տեսել են լուսավոր կրակներ։ Այդտեղ նրանք ունեին ընտիր պաշարեղեն՝ մսացու անասուններ, հաց, հին անուշահոտ գինիներ, չամիչ և ամեն տեսակ ընդեղեն և անուշահոտ յուղեր։

Հույները, վերջապես, մեծամեծ դժվարությունների ու նեղությունների ենթարկվելով՝ մի կողմից ցրտաշունչ քամիներից, զորեղ սառնամանիք-

ներից և խոր ձյուներից, ես և արջաաքաղցից, մյուս կողմից էլ բարբարոսներից, որոնք քայլ առ քայլ հետևում են նրանց, հասնում են մի գյուղ և հանդիպում աղբյուրի մոտ, ամրոցի առաջ, ջուր տանող գյուղացի կանանց և աղջիկների, որոնցից իմանալով, որ Սատրապը գտնվում է հեռու մի փարսախ, վճռում են զորքը տեղավորել գյուղերում և հանգստանալ. նրանք վիճակով բաժանում են իրար մեջ այն գյուղերը, որ տեսնում էին, և ամեն մեկը գնում է յուր զորամասի հետ յուր գյուղը: Վաշտապետներից մեկը առաջ է ընկնում և մտնում այն գյուղը, որը վիճակով ընկել էր Քսենոֆոնին, ձերբակալում է բոլոր գյուղացիներին և գյուղապետին և 17 ձիու քուռակ, որ սնուցանում էին, որպես տուրք, թագավորին հասուցանելու համար:

«Տներն այստեղ գետնափոր էին, մուտքը ջրհորի բերանի նման, բայց ներքևը ընդարձակ: Կենդանիների համար հատուկ մուտքեր կային փորված, իսկ մարդիկ վերևից ցած էին իջնում սանդուղքով: Տների մեջ կային այծեր, ոչխարներ, եզներ, հավեր և սրանց ձագերը: Բոլոր կենդանիները ներսում կերակրվում էին խոտով: Բայց կար նաև ցորեն, գարի, ընդեղեններ և կարասներում՝ գարուց պատրաստված գինի: Գարու հատիկները լողում էին կարասների բերաններում: Մեջերը դրված էին մեծ և փոքր եղեգներ, որոնք ծնկներ չունեին: Երբ մեկն ուզում էր խմել, պետք է այս եղեգները բերանն առներ և ծծեր: Եվ շատ թունդ էր, եթե մեկը ջուր չխառներ, բայց սովոր մարդու համար շատ ախորժելի խմիչք էր...*

Արդ՝ այդ գիշերը բոլոր զինվորները տեղավորվեցին բնակարաններում և այդպես գիշերեցին լի առատության մեջ, կալանավորված պահելով գյուղապետին ու նրա զավակներին՝ շարունակ հսկողության տակ:

Հետևյալ օրը Քսենոֆոնը գյուղապետի հետ գնաց Խեյրիսոֆոսի մոտ: Ուր որ գյուղ էր մտնում, գնում էր գյուղերում եղողների մոտ և ամեն տեղ գտնում էր նրանց կերուխում անելիս և ուրախ: Եվ ոչ մի տեղից բաց չէին թողնում, որ գնան, մինչև չմատուցանեին նրանց ամենաընտիր կերակուրները: Չկար մի տեղ, ուր չդնեին սեղանի վերա ոչխարի, այծի, խոզի, հորթի և հավի միս և մեծ քանակությամբ գարու և ցորենի հաց: Երբ մեկը մտերմաբար կամենում էր մի ուրիշի կենացը խմել, քաշ էր տալիս նրան կարասի մոտ, և այնտեղ հարկավոր էր կռանալ ու խմել, ծծելով եզան նման: Գյուղապետին ևս թույլ տվին վերցնել՝ ինչ որ կամենում էր: Իսկ նա ոչինչ չէր վերցնում, այլ՝ ուր որ տեսնում էր ազգակիցներին, միշտ իր մոտ էր տանում:

Երբ եկան Խեյրիսոֆոսի մոտ, սրանց ևս գտան կերուխում անելիս,

---

* Քսենոֆոնի «Անաբասիսից» քաղված այս և մյուս հատվածները, որ բերվում են բաց Հ. Մանանդյանի թարգմանությամբ, համեմատել ենք գիտնականի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» I հատորի հավելվածների հետ և ուղղել— Պ. Հ.:

պսակված չոր խոտե պսակներով. սպասավորում էին արմենների երեխաները՝ բարբարոսական զգեստներով, և նրանց ցույց էին տալիս, իբրև մունջերի, թե ինչ պիտի անել. երբ Խեյրիսոֆոսը և Քսենոֆոնը իրար ողջունեցին, սկսեցին միասին հարցափորձ անել գյուղապետին պարսկերեն խոսող թարգմանի միջոցով, թե ի՞նչ երկիր է այս: Եվ նա ասաց, որ Արմենիան է...

Ապա Քսենոֆոնը մեկնեց՝ տանելով գյուղապետին նրա ընտանիքի մոտ, և պառավ ձին, որ ստացել էր, տվեց գյուղապետին, որ կերակրի ու զոհ բերի, որովհետև լսել էր, թե նվիրագրված էր Արևին: Նա վախենում էր, որ կսատկի, որովհետև ճանապարհի պատճառով հալից ընկել էր: Իսկ ինքը վերցրեց քուռակ ձիերից մեկը և մեկ-մեկ քուռակ ևս տվեց իր մյուս զորավարներից և վաշտապետներից յուրաքանչյուրին:

Այստեղի ձիերը պարսկական ձիերից փոքր էին, բայց շատ ավելի կայտառ: Ահա՛ այդ ժամանակ գյուղապետը սովորեցնում է, որ ձիերի և գրաստների ոտներին, ձյան վրայով գնալիս, պետք է պարկեր փաթաթեն, որովհետև առանց պարկերի կխրվեն ձյան մեջ մինչև իրանները:

Երբ արդեն ութերորդ օրն էր, Քսենոֆոնը տվեց Խեյրիսոֆոսին, իբրև առաջնորդ, գյուղապետին, իսկ նրա ազգականներին բաց թողեց, բացի որդուց, որ մոտ էր չափահասության: Այս որդուն Քսենոֆոնը հանձնեց Ամֆիպոլսեցի Եպիսթենեսին, որ հսկողության տակ պահե, որպեսզի հետո, եթե գյուղապետը լավ առաջնորդե, վերադառնան միասին: Գյուղապետի տունը ներս տարան, որքան կարելի էր, շատ պաշարեղեն, և պատրաստվեցին ու ճանապարհ ընկան:

Գյուղապետը նրանց ցույց էր տալիս ճանապարհը ձյան միջով և կապված չէր: Եվ արդեն երրորդ օրվա ճանապարհն էր, երբ Խեյրիսոֆոսը բարկացավ նրա վրա, որ չէր առաջնորդել դեպի գյուղը: Իսկ նա ասում էր, որ այս տեղերում գյուղեր չկան: Եվ Խեյրիսոֆոսը թակեց նրան, բայց չկապեց: Դրանից հետո գյուղապետը գիշերը փախավ՝ թողնելով իր որդուն»:

Արդ՝ ի՞նչ պետք է հասկանալ կամ եզրակացնել այդ նկարագրությունից. ի՞նչ են եղել հայ գյուղերն այդ նախնական ժամանակները և ի՞նչ կառավարության ձև են ունեցել նրանք:

Դրանից, այդ նկարագրությունից, պետք է, անկասկած, եզրակացնել, որ, նախ՝ Արմենիան կամ Հայաստանն այդ հնագույն ժամանակները տիրապես գյուղացիական երկիր է եղել. հույներն անցել են նրա միջով համարյա թե ծայրեծայր և ոչ մի քաղաք չեն տեսել, այլ միայն մեծ ու փոքր գյուղեր՝ առանձին-առանձին և համախմբված միասին. գյուղում գտնվել է և երկրի արևմտյան մասի կառավարիչ Տիրիբազի արքայարանը կամ պալատը, գյուղերում գտնվել են և այլ ապարանքներ ու ամրոցներ, որոնց շուրջը համախմբ-

ված են եղել գյուղերը, ասել է թե՝ երկրում գոյություն է ունեցել և ազնվականություն, որոնց պատկանել են այդ ապարանքներն ու ամրոցները. երկրորդ, որ գյուղացիները պարապել են երկրագործությամբ և անասնապահությամբ, և խաղաղ, աշխատասեր, հյուրասեր և հյուրընկալ ժողովուրդ են եղել, մի բան, որ այնուամենայնիվ արգելք չի եղել լուսավորյալ հելլեններին՝ նրանց բնակարաններում հյուրընկալվելուց ու հյուրասիրվելուց հետո, այրել նրանց տները, ծեծի ենթարկել գյուղապետներին և կապկպել գյուղացիներին, և որ երկիրն առատ է եղել ամեն տեսակ մթերքներով՝ մսեղենով, ընդեղենով, բուսական անուշահոտ յուղերով, հին անուշահոտ գինիներով, գարու և ցորենի հացով. երրորդ, որ գյուղերը կառավարվել են գյուղապետներով, այսինքն՝ տանուտերներով, ուրեմն, հավանորեն և տանուտերական կարգուկանոններով. չորրորդ, որ գյուղացիք ունեցել են քուռակներ, որ, իբրև տուրք, տան թագավորին, քուռակներ, որոնք թեև պարսկական ձիերից փոքր են եղել, բայց նրանցից ավելի կայտառ են եղել, և որ նրանք՝ գյուղացիները, նվիրագրված են եղել Արևին, այսինքն՝ արևապաշտ են եղել, և վերջապես, հինգերորդ, որ երկրի արևմտյան մասի տները վերերկրյա են եղել և իրենց վրա ունեցել են աշտարակներ, իսկ արևելյան մասի տները՝ գետնափոր, նույն տեսակ կառուցվածքով, որոնց նմուշները մինչև օրս էլ դեռ պահպանվել են մեր երկրի խուլ անկյուններում, օդաները:

Հայոց իշխանության օրերով Մեծ Հայաստանի բոլոր տասնհինգ նահանգների գավառները, բացի Այրարատի մի մասից, որ համարվում էր թագավորական սեփականություն, բացի Չորրորդ Հայքի Հաշտենից, Տուրուբերանի Աղիովիտ և Վասպուրականի Առբերանի գավառներից, որոնց մեջ բնակվում էին արքայազունները՝ կառավարվելով այդ գավառներից ստացած եկամտով, և, վերջապես, բացի այս բոլոր կալվածներից, որոնք պատկանում էին, հեթանոսության ժամանակ՝ քրմերին և մեհյաններին, քրիստոնեության ժամանակ՝ հոգևորականության, վանքերին, եկեղեցիներին և աստվածահաճո հաստատություններին, բաժանված էին նախարարական տոհմերի մեջ, կազմում էին նրանց սեփականությունը և կոչվում էին նախարարական կալվածներ:

Յուրաքանչյուր նախարարական տոհմ կազմում էր մի տուն, որ կոչվում էր նախարարություն, և բաժանվում էր մեծ և փոքր նախարարական տների: Մեծ կոչվում էին այն նախարարությունները, որոնք հարուստ և մեծ կալվածների տեր լինելով՝ իրենց ազգակցությամբ ևս մոտ էին նահապետական և թագավորական գերդաստաններին, և կամ իրենց սկիզբն առնում էին ամենահին և նույն ժամանակ պատմության մեջ դեր խաղացած իշխանական տոհմերից, իսկ փոքր կամ կրտսեր կոչվում էին այն նախարարությունները, որոնք, ընդհակառակը, համեմատաբար աղքատ լինելով, ազգակցությամբ ևս հեռու

էին հին նահապետների և թագավորների գերդաստաններից, և պատմության մեջ ևս մի առանձին աչքի ընկնելու դեր խաղացած չէին: Ամեն մի՝ թե՛ մեծ և թե՛ փոքր նախարարական տուն կազմում էր մի գերդաստան, որի գլուխը կոչվում էր Տեր, Նահապետ, Տանուտեր, Զեռնավոր իշխան, իսկ գերդաստանի մյուս անդամները՝ սեպուհներ:

Նախարարական գերդաստաններում նախարարական պատիվը ժառանգական էր և անցնում էր որդեցորդի· հորը ժառանգում էր, սովորաբար, անդրանիկ որդին, որին մյուս անդամները պարտական էին ցույց տալ նույն անպայման հնազանդությունը, որ ցույց էին տալիս հորը՝ նրա կենդանության ժամանակ: Նախարարությունները տիրում էին իրենց կալվածները անձնիշխանաբար և կառավարում էին նույն կալվածներում ապրող ժողովուրդը անսահմանափակ իշխանությամբ, բայց այդ անսահման, բացարձակ իշխանությունը կրում էր ավելի նահապետական բնույթ ու եղանակ, այսինքն՝ այնպես, ինչպես մի հայր նահապետական ժամանակներում կառավարում էր յուր ընտանիքը, քան թե բռնակալական՝ բառիս բուն իմաստով: Ճորտություն կամ ստրկություն, ինչպես դրացի երկրներում, Հայաստանում չի եղել, գոնե մենք այդ մասին մեր ոչ մի հեղինակի ու պատմագրի գրվածքների մեջ չենք գտնում և ո՛չ մի հաստատուն տեղեկություն կամ ցուցմունք: Մեր յոթերորդ դարու երկրորդ կեսի հեղինակ, հայտնի Անանիա Շիրակացու՝ յուր «Յաղագս հարցման և լուծման» խորագրով գրվածքի ԻԱ հարցման մեջ հաղորդած տեղեկությունը Արշավրի որդի Ներսեհ Կամսարականի մասին, թե նա հաղթական վերադառնալով Բահղեճաց պատերազմից՝ բերել է բազմաթիվ գերիներ, որոնցից մի մասն էլ հասցրել է Հայաստան և տվել յուր կրտսեր եղբայր Հրահատին, ավագ եղբայր Սահակին և Վաղարշապատի եկեղեցուն, և հինգ հարյուր յոթանասուն անձն էլ իրեն պահել, չի կարող ապացույց համարվել Հայաստանում էլ ստրկության գոյության, որովհետև դա սովորական զինվորական գերություն է եղել յուր բոլոր «չար ծառայության» հետևանքներով գերիների համար: Կրկնում ենք, որ ստրկությունը, իբրև մի ընդհանուր երևույթ, իբրև մի ինստիտուտ, որով պայմանավորված լիներ երկրի՝ ստրուկների աշխատանքով մշակելու գործը, Հայաստանում գոյություն չի ունեցել, և զուր են փորձերը զանազան քաշքշուկներով ապացույց տալու, հիմնավորելու միայն դրացի երկրների օրինակով և «ծառա» բառի «ստրուկ» բառի մեկնաբանությամբ՝ Հայաստանում ևս ստրկության, իբրև մի ընդհանուր երևույթ, իբրև մի ինստիտուտ, գոյության հանգամանքը, ինչպես, օրինակ, այդ արել է Բ. Ա. Բորյանը յուր «Армения, международная дипломатия и СССР» ուսումնասիրության առաջին մասի մեջ (Մոսկվա—Լենինգրադ, 1928, էջ 6—7):

Մի որոշ ցուցմունք այդ մասին մենք չենք գտնում և Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» և մեր եկեղեցական ժողովների կանոնագրքում, որոնց մեջ, ամեն տեղ և միշտ, «ազատին» հակադրվում է «շինականը», ռամկը, բայց ոչ «ստրուկը»: Այդ մասին, վերջապես, մենք ունենք և էջմիածնի «Բարեկարգության կառավարիչ ժողովի» ո՛չ միայն կտրուկ բացասական, այլև հանդիմանական կարծիքը, որ նա 1809 թվին հայտնել է Գեղամյան առհմի ներկայացուցիչներ «կնէազ Գաբրիէլ, կնէազ Յոհաննէս և կնէազ Բարսեղ քրիստոսազօր հարիւրապետացն», երբ դրանք խնդրել են վկայել ռուս պետության առաջ իրենց ճորտատիրության իրավունք ունենալու մասին իրենց 230 բնտանիք գյուղացիների վերա: Ավելորդ չենք համարում այդ կարծիքից այստեղ մեջ բերել մի-երկու հատված.

«Գիր ձեր ի 19 և ի 27 մարտի 1809 ամի առ Բարեկարգութեան կառավարիչ Սուրբ ժողովն, որով խնդրէք գրել առ արդարութեան և բարերարութեան ադբիւր... Սենատն տիեզերակալ կայսերութեան ամենայն Ռուսաց զվկայութիւն ճշմարիտ վասն կացութեան և ազգատոհմութեան ձերոյ, ընկալաք ի 5 ապրիլի:

Բարւոք էր խնդիր ձեր, և մեք, ըստ որում գիտեմք զձեզ սերեալ յերևելի իշխանաց Հայոց, որք էին տէրք բազում գիւղից և աւանաց ի մեծահռչակ գաւառն Հայոց ի Գեղամ, և հաստ եմք լաւապէս վասն նոյնպիսի իշխանական ճոխութեան ձերոյ անդէն, ի հայրենի գաւառի ձերում, առ ի ժամանակս տէրութեան Պարսից մինչև ցայսօր իսկ, կարող եմք տալ զվկայութիւն վասն ձեր յաղագս ամենայնի այսոցիկ, սակայն անվայելուչ է, առանց հարցանելոյ Սենատին զմեզ, գրել առ նա մեղէն, վասն որպիսի և իցէ վկայութեան, առ որ յուսամք, թէ և դուք բաւականապէս կարող էք զգալ այնպէս:

Սակայն այս ի՞նչ է, զի ի սկզբանէ թագաւորութեան Հայոց մինչև ցայսօր ժամանակի ստրուկ անուն, որ է ճորտ անուն, և կամ ստրկական հանգամանք չէ եղեալ ի վերայ ազգի հայոց... Քանզի նախնի թագաւորք Հայոց, որք կարգ կացութեան անօրինեցին ազգի հայոց, սահմանեցին զնախարարութիւն, զազգ<ա>պետութիւն, զզաւառապետութիւն, զաղատորդիութիւն և զայլըս, բայց ո՛չ զստրկապետութիւն, և յայնմ օրէ մինչև ցայսօր ժամանակի յամենայն սահմանս Հայաստանի ո՛չ ուրեք զտեղի կալաւ ստրկապետութիւն, և ո՛չ ոք ի նախարարութեանց կամ յազատորդաց անտի ճոխացաւ ստրկապետութեամբ...

Մեք այսպէս գիտեմք և ըստ այսմ կարեմք տալ վասն ձեր և վասն ժողովրդեան ձերոց զվկայութիւն և այն՝ յորժամ հարցանիցեն զմէնջ յուսանքէ:

Ողջ լերուք և Տէր՝ որ ամենաբաւական է՝ եղիցի ընդ ձեզ և ամենայն ազգի հայոց զօրավիգ և պաշտպան անքուն ակամբ:

Արքեպիսկոպոսք ժողովոյն բարձրագոյն խորհրդարանի Սրբոյ էջմիածնի.
Տեղապահ՝ Բարսեղ արհեպիսկոպոս, Յովակիմ արհեպիսկոպոս, Անդրէաս արհեպիսկոպոս, Ալէքսան արհեպիսկոպոս, Ստեփան արհեպիսկոպոս, Յովհաննէս արհեպիսկոպոս, Ներսէս արհեպիսկոպոս և Ռէքլոս եպիսկոպոս

1804 ամի ապրիլի 18,
ի Սուրբ էջմիածին»

Այս վավերաթուղթը, որ, համեմատաբար, նոր ժամանակի (1809 թ.) գործ լինելով՝ չի կարող վերջնականապես լուծել Հին Հայաստանում ստրկությ ան ո՛չ իբրև մասնավոր, այլ իբրև ընդհանուր երևույթ լինելու կամ չլինելու հանգամանքը, բայց, մեր տեսակետից, ո՛չ պակաս կարևոր է, քան այն բազմաթիվ վկայությունները, որ մեր ուսումնասիրողներից մի քանիսը մեղվաջան աշխատությամբ քաղելով մեր հին մատենագիրներից՝ մեջ են բերում իրենց ուսումնասիրությունների մեջ, իրենց եզրակացությունները հիմնավորելու համար: Եվ այդ՝ այն պատճառով, որ այդ վկայությունների մի խոշոր մասը, եթե չասենք՝ հարյուր տոկոսը, այնքան մութ են, այնքան երկմտի, որ ո՛չ մի հաստատուն կռվան չեն տալիս և չեն էլ կարող տալ իրենց հավաքողներին՝ լուծելու խնդիրը, և նրանք վերջ ի վերջո, ղարձյալ ստիպված են լինում շատանալ «հավանական է», «դույցե», «մեր կարծիքով» և այլն այդպիսի ենթադրություններով:

Այդ «կարծիքը» կարևոր է մեզ համար հատկապես այն մտածությամբ, որ մեր եկեղեցին, ինչպես ասում է Նիկողայոս Ադոնցը, նախարարական է ենթարկված եղել, այսինքն՝ ընդունած է եղել նախարարությունների մեջ գոյություն ունեցած ավատականության կարգերը, և մեր հոգևորականները նույնպիսի ֆեոդալներ են եղել, ինչպիսին եղել են նախարարները: Սրդ՝ էջմիածինը, որ ամենախոշոր հոգևոր ֆեոդալն է եղել և յուր խոշոր կալվածներով հարատևել է սկզբից մինչև մեր օրերը, բնականապես, կարող էր 1809 թվին դեռ պահպանած լինել կենդանի հիշողություններ Հին Հայաստանում ընդհանրապես գոյություն ունեցած և, մասնավորապես, յուր իսկ երբեմն ունեցած ստրկատիրության և ճորտատիրության իրավունքի մասին, եթե միայն այդպիսին եղած լիներ: Դարձյալ ասում ենք, որ այստեղ մեր խոսքը ընդհանուր երևույթի մասին է և ո՛չ մասնավոր, որ, անկասկած, դրացի երկրների օրինակով, նամանավանդ ղինվորական ստրկությունը, գոյություն է ունեցել Հին Հայաստանում ևս, այստեղ ու այնտեղ, զանազան ժամանակներ: Եվ էջմիածինը, ինչպես արդեն ասացինք, համաձայնելով վկայել Գեղամյան առհմի ազնվական տանից սերած լինելու մասին, եթե իրեն հարցնեն, մերժելով մերժել է ու չի ճանաչել նրանց ճորտատիրական իրավունքը՝ Հայաստանում այդպիսին գոյություն չունենալու պատճառով:

Գրավոր օրենքներ չեն եղել. ամեն բանում իշխել է նախարարի կամքը, որ սահմանափակվում է եղել միայն սովորույթի իրավունքով, որ դարերով կազմակերպված և արմատացած լինելով ժողովրդի մեջ՝ ստացել էր մի տեսակ օրենքի զորություն և խորհուրդ: Տանուտերը, իբրև լիակատար տեր յուր կալվածքի, ստանում էր երկրի բերքի մի խոշոր մասը և դրանով ապրում էր յուր գերդաստանով՝ առատության ու ճոխության մեջ, և պահում էր յուր նախարարական զորքը: Նախարարները ժողովրդի մեջ կազմում էին առաջին գլխավոր զինվորական-ազնվական դասակարգը, կոչվում էին ազատ, ազատորյար և ամեն բանում վայելում էին առանձին, մեծամեծ արտոնություններ՝ թագավորության ընդհանուր և եկեղեցական օրենքների հիմունքով: Եկեղեցական օրենքների հիմունքով, օրինակ, միևնույն ոճրի կամ հանցանքի համար նախարարն ավելի թեթև պատժի էր ենթարկվում, քան թե ռամիկը, բայց, որ գլխավորն է, ազատն երբեք չէր ենթարկվում մարմնական կամ ֆիզիկական պատժի, այլ դրամական տուգանքի, այնինչ ռամիկը տուժում էր և՛ նյութականապես, և՛ ֆիզիկապես, ինչպես այդ կարելի է տեսնել 447 թվականին եղած առաջին Շահապիվանի եկեղեցական ժողովի կանոններից. «Եթե ոք կին ունիցի և պոռնկիցի և զկարգ ամուսնութեան սրբութեամբ ո՛չ պահիցէ... զայնպիսին կշտամբեսցեն գլխաւորք գանիւք և բանիւք օգտակարօք և յեկեղեցւոյն հանցեն... եթէ ազատ է և զան չմարթի հարկանել, ի տուգան և յապաշխարութիւնն...» և այլն:

Նախարարները, բացի պատերազմի գործերից, զվարճություններից և որսի գնալուց, ուրիշ ոչնչով չէին պարապում. Նրանք չէին ցանում, բայց հնձում էին, այսինքն՝ ապրում էին ուրիշների քրտնքի աշխատանքով, պատրաստի եկամտով, որ առատությամբ ստանում էին իրենց կալվածներից. Նրանք էին կազմում թագավորի փայլուն ավիտը, նրանք էին վարում տերության մեծամեծ պաշտոնները, միով բանիվ, ինչպես վկայում է Պլինիոսը, նրանք վայելում էին այնքան մեծ իշխանություն, որ կազմում էին բազմաթիվ մանր թագավորություններ Հայոց ընդհանուր ու մեծ թագավորության մեջ: Այսպիսի մեծ իշխանության հայոց նախարարները, հայտնի բան է, միանգամից չէին հասել. Նրանց իշխանության այդպիսի կազմակերպության հիմքը, ընդհակառակը, կորչում է խորին հնության մեջ և հասնում է մինչև իսկ Հայոց հնագույն պատմության առաջին շրջանին: Նախարարության իշխանության սկիզբն և նրանց կալվածական իրավունքներն սկսվելով Հայաստանի քաղաքական կյանքի հնագույն ժամանակներից, կազմակերպվել ու զարգացել են համեմատ հայ ազգի քաղաքական կյանքի հանգամանքներին, ճիշտ այնպես, ինչպես մենք այդ տեսնում ենք շատ ուրիշ երկրներում: Հայոց թագավորների՝ Հայաստանում հաստատած իշխանությունը չի եղել միապետական, բառիս բուն իմաստով, այլ միապետական ու տանուտերական: Իսկական

միապետական իշխանություն, որ երբեմն մենք տեսնում ենք մեր պատմության մեջ մի քանի թագավորների ժամանակ, երբեք մի ընդհանուր բնույթ չի կրել, այլ միշտ, համարյա, կապված է եղել, կախումն է ունեցել միապետի ընդունակություններից և նրա բազկի զորությունից: Ընդհանրապես, նախարարական տոհմերը ունեցել են այնքան ուժ, որ երբեք, համարյա, չեն կորցրել իրենց ունեցած արտոնությունները, և թագավորների գործադրած բոլոր միջոցները՝ Արշակավաններն և Կամսարական նախարարական տոհմի կոտորածները, ապարդյուն են եղել, չեն հասել իրենց նպատակին՝ սահմանափակելու զոռող տանուտերների իշխանությունը: Այսպիսով՝ Հայոց թագավորությունը հենց սկզբից ստացել է տանուտերական-ավատական կամ ֆեոդալական, նման միջնադարյան Եվրոպայի պետություններին, կազմակերպություն, որի մեջ թագավորը համարվում էր տեր կամ մեծ նախարար, իսկ նախարարական տոհմերը՝ փոքր նախարարներ կամ վասալներ:

Պատմության օրենքները ամեն տեղ անփոփոխ են. Նրանք բոլոր ազգերի մեջ գործում են միևնույն տեսակ, առաջ բերելով նրանց կյանքում բազմաթիվ համանման երևույթներ, որոնք թեև մասնավորապես զանազանվում են միմյանցից, ի նկատի ունենալով ժամանակը, երբ կատարվում են այդ երևույթները, երկիրը, ժողովուրդը, որոնց մեջ երևան են գալիս նրանք, բայց ընդհանուրում, համարյա թե, նույնն են: Հայ ազգը, իբրև դեռ շատ հին ժամանակներից կազմակերպված մի համախմբություն կամ հասարակություն, իբրև յուր սեփական երկիրը, կառավարությունը, սովորությունները, լեզուն, գրականությունը և կրոնքը ունեցող մի ժողովուրդ, մի խոսքով՝ իբրև մի պատմական ազգ, որ ամենահին ազգերի՝ փյունիկեցիների, եգիպտացիների, բաբելացիների, ասորեստանցիների հետ միասին քաղաքական կյանք ստանալով դուրս է եկել պատմական ասպարեզ և գործել, ըստ յուր կարողության և հանգամանքների, հայտնի բան է, չէր կարող բացառություն կազմել այդ ընդհանուր պատմության օրենքներից: Հայոց պատմության մեջ ևս գործել են վերոհիշյալ անփոփոխ օրենքները, որոնց հիմունքով աստիճան առ աստիճան զարգացել ու կազմակերպվել են հայի քաղաքական և հասարակական կյանքի երևույթները, որոնք միատեսակ պատճառների հետևանք լինելով՝ ստացել են ուրիշ ազգերի պատմության մեջ նույն անփոփոխ օրենքների հիմունքով արտահայտված երևույթների բնույթը: Այսպիսի ընդհանուր երևույթներ Հայոց պատմության մեջ շատ կան. դրանց թվին պատկանում է հայ իշխանական տոհմերի կազմության, նրանց՝ մեծամեծ իշխանության ձգտելու և հասնելու երևույթը, ավատական կամ ֆեոդալական իշխանության սիստեմի գոյությունը Հայաստանում:

Եվրոպական ավատականության սկիզբն, ինչպես մենք, գիտենք, կազմում էր ալլոդականությունը կամ կալվածատիրությունը, որի գոյությունը Հայաս-

տանում նկատվում է դեռ հայ ազգի քաղաքական կյանքի նախնագույն շրջանում: Այդ ժամանակները դեռ մի ամբողջ տերություն չկա. Երկրի մեջ իշխող տարրը կազմում են տանուտերները, որոնք կազմելով մի առանձին զինվորական դասակարգ, բաժանել են իրենց մեջ բոլոր երկիրը, կազմելով նրանից բազմաթիվ տանուտերական կամ նախարարական կալվածներ, ինչպես Եվրոպայում, Միջին դարերի սկզբներում, ֆրանկների հերցոգների ալլոդները: Տանուտերների կալվածները իրենց մեծությամբ հավասար չեն միմյանց, ինչպես որ հավասար չեն եղել և հերցոգների ալլոդները: Մեծ նախարարություններինը ավելի ընդարձակ էին, քան փոքրներինը, իսկ թագավորինը, երբ այդ պատիվը մեծ տանուտերներից մեկը սեփականեց իրեն, իրենց ընդարձակությամբ գերազանցում էին բոլորից: Հայ թագավորը, ինչպես և ֆրանկներինը, առաջին նվագ ոչ մի առանձին առավելություն չուներ տերության մեջ. նա մեծ, կալվածներով ավելի հարուստ տանուտեր էր միայն, և հայոց մյուս տանուտերները նայում են նրա վերա, ինչպես իրենց համահավասար իշխանություն ունեցողի վերա: Սակայն, ժամանակի ընթացքում, ինչպես ֆրանկների թագավոր Խլոդվիգի տերության մեջ, Հայոց թագավորների իշխանությունը ևս տակավ առ տակավ սկսում է մեծանալ. արտաքին բազմաթիվ պատերազմների պատճառով նրանց իշխանության տակ ևս կենտրոնանում են շատ ընդարձակ հողեր ու կալվածներ, որ նրանք ֆրանկների թագավորների պես սովորություն են անում շնորհել իրենց հավատարիմ ծառայող թե՛ հայ և թե՛ օտար իշխաններին, նախարարական պատվի հետ միասին, որով Հայաստանի մեջ ևս հաստատվում է մի տեսակ լենական-կալվածատիրական սիստեմ:

Հայկական այդ տեսակ կալվածատիրական սիստեմը զարգանում է Արշակունյաց հարստության օրերով և, հատկապես, Վաղարշակ թագավորի ժամանակ, որ Խորենացու ասելով՝ գալով Պարթևաստանից Հայաստան, ուրիշ շատ անկարգությունների և պակասությունների թվում, նախարարությունների կազմակերպությունը ևս գտնում է վերին աստիճանի անորոշ և մութ, որի մասին դժգոհությամբ գրում է յուր եղբորը. «Այս աշխարհի երևելիներից հայտնի չէ ո՛չ առաջինը և ո՛չ վերջինը, և չկա ոչինչ օրինավոր, այլ բոլորը խառն ի խուռն է և վայրենի»: Վաղարշակը մինչև յուր ժամանակ Հայաստանում եղած կալվածատիրական սիստեմը չի փոխում. նա, ընդհակառակը, շարունակում է ավելի ևս առատությամբ բաժանել կալվածներ իշխաններին, որով թեև մի կողմից ավելի ևս զարգացնում է Հայաստանի կալվածատիրությունը, բայց մյուս կողմից զորեղացնում է և թագավորական իշխանությունը, հնազանդեցնելով հզոր նախարարներին յուր կամքին և՛ որոշելով նրանց պարտականությունները թագավորի հանդեպ, և՛ իրավունքները տերության մեջ:

Վաղարշակն այս դեպքում խաղում է այն դերը Հայաստանում, կատա-

րում է այն, ինչ որ Կարլոս Մեծը Եվրոպայում: Նա սկիզբն է դնում իշխանների՝ թագավորի կամքին հնազանդելու գործին, որից, ինչպես և Արևմտյան Եվրոպայում Կարլոսի ժամանակ, առաջ է գալիս երկար ու ձիգ մաքառումն թագավորի և նախարարների մեջ, որ, թեև այնպիսի հաջող ելք չի ունենում թագավորի իշխանության համար, ինչպես Եվրոպայում, բայց և այնպես Հայոց կալվածատիրական սիստեմին տալիս է մի նոր բնույթ, որ շատ մոտենում է, կարելի է ասել՝ նույնանում է եվրոպական ֆեոդալականության հետ: Ճիշտ է, Հայաստանում չի կատարվում ֆեոդալականության վերաբերյալ այն մանրամասն և հանդիսավոր ծիսակատարությունը, որ կատարվում էր Եվրոպայում, թեև կալվածներ բաժանելու սովորության հետ միասին մեզանում ևս ընդհանրանում է նախարարական կոչումն, բարձ և պատիվ, և զանազան պալատական պաշտոններ, իբրև շնորհ, տալու կարգը, այնպես ճշտորեն չեն որոշվում նախարարի պարտականություններն ու իրավունքները, այնպիսի վճռական քաղաքականություն չի կիրառվում նախարարների վերաբերմամբ, ինչպիսին կիրառվել է Եվրոպայում, բայց Վաղարշակի և մյուս թագավորների բոլոր ձգտումները, նպատակներն ու ձեռնարկությունները և, ընդհանրապես, նրանց բոլոր գործունեության եղանակն ու հոգին Հայաստանի կալվածատիրության կազմակերպության վերաբերմամբ՝ մեզ հիշեցնում են եվրոպական ավատականությունը Կարլոսի ժամանակ:

Ահա՛ այսպիսի, ընդհանուրում շատ նման եվրոպական ֆեոդալականության, իսկ մասնավորում յուր արևելյան-հայկական առանձնահատկություններով, ավատական բնույթ Հին Հայաստանը պահպանում է ո՛չ թե միայն Արշակունյաց ժամանակները, այլև Բագրատունյաց հարստության ժամանակ ևս, այսինքն՝ մինչև բուն Մեծ Հայոց թագավորության վերջանալը: Եվ էլ ավելին, Հայոց նախարարություններն իրենց այդպիսի ավատական կազմակերպությամբ անխախտ պահպանվել են և այն ժամանակները, երբ բուն Մեծ Հայաստանը անցել է պարսից, արաբական, սելջուկյան, մոնղոլյան և այլ իշխանությունների ձեռքը, քանի որ և այդ արևելյան օտար պետությունների կազմակերպությունը ընդհանուր գծերով նման է հայոց պետության կազմակերպության, և հայ երկիրն ու ժողովուրդն էլ նրանց իշխանության ներքո պահպանած են եղել ներքին ինքնավարություն և իրենց բնիկ տանուտերների ձեռքով կառավարվելու արտոնություններ: Ցպետք է մոռանալ և այն հանգամանքը, որ Բագրատունյաց թագավորության վերջանալուց հետո, դեռ երկար ժամանակ, գոյություն են ունեցել առաջ դրա մասը կազմած և հետո միայն դրանից բաժանված Արծրունյաց, Կարուց (Կարսի) և Կյուրիկյան փոքր թագավորությունները և այլև մի քանի անկախ ու կիսանկախ հայկական իշխանություններ, որոնց մեջ անխախտ պահպանվել են Հայոց թագավորության կարգերը և ավանդություններն իրենց տանուտերական-ավատական կազմա-

կերպությամբ։ Ճիշտ է, պարսից մարզպանության օրերով և արաբական ոստիկանության օրերով համառ և, հաճախ, շատ դաժան փորձեր են եղել ոչնչացնելու և իսպառ բնաջինջ անելու հայ նախարարական տոհմերը, բայց այդ փորձերը չեն հասել իրենց նպատակին. Նախարարական տոհմերից շատերը, այո՛, ոչնչացել, սերհատվել են, բայց շատերն էլ դեռ մնացել են և այնքան տոկունություն ու ուժ են ունեցել, որ դրանից հետո էլ դեռ կարողացել են վերականգնել Հայոց թագավորությունը Բագրատունյաց մեծ նախարարության գլխավորությամբ։

Այդ թագավորության անկումն մի նոր, խոշոր փորձանք է եղել նախարարների համար. Նրանք չխրատված լինելով իրենց նախնիքների անցյալում արածներից՝ Արշակունյաց հարստության անկման վերաբերմամբ, նույնը կրկնել, արել են և Բագրատունյաց վերաբերմամբ, և հնձել են այն, ինչ որ ցանել էին։ Դրա հետևանքով՝ նախարարական տոհմերի մի մասը ստիպված է եղել թողնել իրենց բուն հայրենիքը և դիմել, իրենց ժողովրդով, դեպի Փոքր Հայք և ապավինել Բյուզանդիոնի կայսրներին. մյուս, ավելի խոշոր մասը դիմել է դեպի Կիլիկիայի Տավրոս և Սյավ լեռները և թառել դրանց դժվարամատույց կատարներին, և ապաստարան գտնել նրանց ծործորների մեջ, որտեղ և նույն Բագրատունի թագավորների շառավիղ ու ազգական Ռուբեն իշխանի գլխավորությամբ հիմնել են առաջ Կիլիկիո Հայոց փոքր իշխանությունը, հետո և Կիլիկիո Ռուբինյանց թագավորությունը՝ լիակատար արևմտյան եվրոպականին նման ֆեոդալական կազմակերպությամբ։ Բայց դրանից հետո էլ դեռ, ինչպես ասացինք, պահպանված են եղել բուն Հայաստանում բավականին թվով նախարարական տոհմեր, որոնք ապրել ու իշխել են իրենց կալվածներին օտար պետությունների իշխանության ներքո, և դրանց հեռավոր շառավիղները հարատևել, հասել են մինչև վերջին ժամանակները, թեև արտաքուստ արդեն փոփոխված անուններով և գունավորությամբ, բայց ներքուստ զուտ հնույց, իրենց նախնիքներից ժառանգած կարգերով ու ավանդություններով։ Հիշյալ օտար պետություններից ամենաերկար ու տևական իշխանություն ունեցել են Հայաստանի արևելյան խոշոր մասի վերա պարսիկները, որոնց շահերը իշխել են այդ մասին, կարճատև ընդհատումներով, մինչև XIX դարու երկրորդ քառորդի սկիզբը, և այդ մասում իրենց գոյությունը պահպանած հայ կալվածատեր տոհմերը կոչվել են մելիքություններ, և դրանց տանուտերները՝ մելիքներ։ Ահա՛ դրանք, այդ մելիքներն են եղել, որոնք 1736 թվին, Աբրահամ Գ Կրետացի կաթողիկոսի գլխավորությամբ՝ հրավիրվել և գնացել են Մուղանի դաշտը, Պարսից ավագանու հետ միասին ներկա գտնվելու և շնորհավորելու Թահմազ ղուլի խանի՝ Նադիր շահի, գահակալությունը և «խիլայուել» (պարգևատրվել), և վերադարձել են իրենց տեղերը, ստանա-

լով «րաղամներ», այսինքն՝ հրովարտակներ, որոնցով նրանք վերահաստատված են եղել իրենց վաղեմի արտոնությունների մեջ։

Գյուղերը Հայոց իշխանության օրերով գտնվել են, խոշոր մասով, նախարարական կալվածներում, և գյուղացիք բոլորամասն ենթարկված են եղել իրենց ֆեոդալ-տանուտերների իրավասության։ Աշտարակը գտնվելով Այրարատի Արագածոտն գավառում, պետք է կարծել, որ գտնվել է Ամատունյաց մեծ նախարարության իշխանության ներքո և, բնականաբար, ենթարկվել է Ամատունյաց նախարարների իրավասության, իբրև այդ գավառի տանուտերների, որոնք «վռամական» կոչված գահնամակի մեջ 15-րորդ տեղի «բարձ ու պատիվ» են վայելել։ Թե ի՞նչպիսի փոխհարաբերություն է եղել գյուղերի ու նախարարների մեջ, և ի՞նչ կացության մեջ են գտնվել գյուղացիներն իրենց հայ ֆեոդալների իշխանության ներքո, մենք մեր պատմագիրների ցիր ու ցան, այստեղ ու այնտեղ իրենց գրվածներում հաղորդած այդ մասին կցկտուր տեղեկություններից չենք կարող մի որոշ ու հավաստի գաղափար կազմել։ Մենք միայն կարող ենք, այն էլ՝ ընդհանուր գծերով միայն, պարզել, որ նախարարները անաշխատ լինելով հանդերձ, այնքան խոշոր եկամուտներ են ունեցել, որ կարողացել են և՛ թագավորավայել կյանքով ապրել, և՛ հարկատու և զորատու լինել թագավորին։ Արդ, ո՞ր աղբյուրից են նրանք ստացել իրենց խոշոր եկամուտը, եթե ո՛չ՝ իրենց հարուստ կալվածներից և այդ կալվածները մշակող աշխատավոր գյուղացիությունից. ո՞րտեղից են հավաքել հարկավոր թվով զինվորացու երիտասարդներ, հագցրել, զինել նրանց, կազմել նախարարական գնդեր և իրենց առաջնորդությամբ, պատերազմների ժամանակ, տարել թագավորական ընդհանուր բանակը, եթե ո՛չ՝ նույն իրենց կալվածներից, դրանց մեջ ապրող գյուղացիներից։

Հին Հայաստանում, ինչպես երևում է, գյուղացիներն իրենց գյուղերին հատկացրած հողերի համայնական եղանակով մշտական օգտագործողն են եղել, կապված իրենց ֆեոդալ նախարարների հետ նահապետական վաղնջական սովորույթի հարկատվության և պարտադիր ծառայության կարգերով։ Իսկ թե վաղնջական սովորույթի հարկատվության և պարտադիր ծառայության ի՞նչ վաղեմի կարգեր են եղել Հայաստանի ֆեոդալականության սիստեմի մեջ, դրա համար մենք ունենք և մի հավանական աղբյուր. այդ մեր վերը հիշած մելիքներն ու մելիքություններն են, որոնցից մի քանիսը հավաստիորեն մեր նախկին իշխանական տոհմերի շառավիղների հետին մնացորդները լինելով, որը նրանցից՝ նվազագույն չափով, որն էլ՝ առավելագույն, պահպանած են եղել իրենց հեռավոր նախնիների տոհմական կարգերն ու ավանդությունները և հասցրած մինչև մեր օրերի մոտ անցյալը։ Այդ մելիքություններից մեկն՝ յուր տոհմի հնագույն նախարարական տոհմերից մեկի սերնդից սերելու

և առավելագույն չափով հարազատությամբ զույն տոհմի կարգերն ու ավանդությունները պահպանած լինելու տեսակետից, անուշադրավ չպիտի լինի մեզ համար: Դա Սուրմալուի (Սուրմառու) «Արշարունյաց տեր» Կամսարականների շառավիղ և սերունդ մելիքությունն է, որի մոտավոր անցյալի տոհմապետն եղել է Մելիք-Մինաս Սաաթբեկյան-Կամսարականը (1745—1824), որի ատոպագրությունը մենք տեսանք մեր հիշած Դանիել կաթողիկոսի՝ Աշտարակի Հայրության որդի Կարապետ աղայի՝ նրա Կամսարականների սերնդից սերված լինելու մասին տրված վկայագրի տակ:

Կարծում ենք, որ կասկածելի չպիտի լինի այդ մելիքության փոկությունը և հնությունը, քանի որ նրա մելիքները և նրանց արտոնությունները, ի դեմս հիշյալ Մելիք-Մինասի, ճանաչված են եղել վրաց Հերակլ Բ-ի հրովարտակով, 1785 թվին, Իմերեթի Սողոմոն թագավորի՝ 1811 թվին, պարսից Ֆաթալի շահի թագաժառանգ Աբբաս Միրզայի, հիջրի 1225 թվին, հրովարտակներով: Դրա, այդ տոհմի հնության և իսկության վավերական, բացի հիշյալ հրովարտակներից, կարող են համարվել և դրա տոհմապետ մելիքների գերեզմանների տապանագրերը, Մելիք-Մինասինը ու նրա հոր՝ Մելիք-Յագուբինը (1708—1779) Սուրմալուի Բլուր գյուղի հին գերեզմանոցում և ս. Սահակ ավերակ եկեղեցու մեջ, դրանց հետևյալ յոթ նախնիքներինը՝ Բեջրլու գյուղում, մինչև XVI դարը և դրանցից էլ հին Կամսարականների տապանագրերը՝ Մրենի եկեղեցում, որոնց անվանացուցակը, դժբախտաբար, մեր ձեռքը չի հասել:

Արդ՝ այդ մելիքության տան մեջ պահպանված և մելիքների վերջին շառավիղների միջոցով մեզ հասած ավանդություններով, որոնք հավաստիանում են և վրաց Հերակլ Բ արքայի վերոհիշյալ հրովարտակով, «Արշարունյաց տեր» մելիքները իրենց իշխանության ներքո ունեցել են Սուրմալուի մահալը մի խումբ գյուղերով՝ Բլուր, Բեջրլու, Փանիկ, Բայանդուր, Կողբ, Ջոռ, Խոշխաբար և այլն, որոնց բնակիչ գյուղացիներից, իբրև իրենց ժողովրդից, հարկ են առացել բերքով և դրամով, ունեցել են մահալի մեջ և իրենց անձնական, սեփական հողերը, որ մշակել են գյուղացիները և բերքը հավաքել ու իրենց սայլերով կրել մելիքի շտեմարանը պարտադիր ծառայության կարգով: Եվ այդ կարգերն այնքան վաղեմի են եղել և վաղնջական սովորույթի կարգն անցած, որ, երբ երկիրն անցել է ռուս իշխանության ներքո, և մելիքության մեջ զուտ պարսկական մուլքադարական և թիուլական փնտախտուտների գոյություն չունենալու հետևանքով վերացել են և հարկատվության ու պարտադիր ծառայության կարգերը, գյուղերից մի քանիսը, դեռ մինչև 1836 թվականը և հետո էլ, ըստ իրենց վաղեմի սովորության, շարունակել են և՛ հարկ, և՛ բերք վճարել, թեև արդեն ո՛չ սոփյմունք և ո՛չ պահանջ է եղել: Տոհմապետ մելիքն յուր ժողովրդի լիակատար տերն է եղել և կառավարել է ժողովուրդն ու երկիրն անսահման իշխանությամբ. Նա յուր ժողովրդի հետ միասին պահպանել է

երկիրը թշնամիներից, հարկավոր դեպքերում կռվող ուժեր հավաքելով, զինելով ու պատրաստելով. նա է եղել ժողովրդի կարևոր ու ծանրակշիռ գործերի գլխավոր դատավորը, և նրա արձակած վճիռները վերջնական են եղել և ի կատար ածվել. Նա մինչև իսկ իրավունք է ունեցել մահվան վճիռներ արձակելու և ի կատար ածելու: Մելիքության տան՝ մեզ հասած վերոհիշյալ ավանդությամբ, մելիքն յուր արձակելիք վճռի անաչառությունը լիակատարորեն պահպանած լինելու նկատառումով՝ գործերի դատավարությունը կատարել է նստած, վարագույրի ետևը, այնպես որ չի՛ տեսել, չի՛ ճանաչել ո՛չ դատվողներին, ո՛չ էլ վկաներին:

Կարծում ենք, որ Հին Հայաստանում էլ մոտավորապես իշխել են զույն կարգերն ու սովորությունները երկրի աշխատավոր գյուղացիության և անաչկարգերն ու սովորությունները երկրի աշխատավոր գյուղացիության և անաշխատ, իշխող տարրի փոխհարաբերության մեջ ընդհանրապես, և զույն փոխհարաբերության կարգերով էլ, մասնավորապես, կապված են եղել իրենց ֆեոդալ նախարարների հետ դրանց կալվածներում ապրող գյուղացիները: Պարտադիր ծառայություն, որ, ինչպես տեսանք, գոյություն է ունեցել հիշյալ մելիքության մեջ, եղել է և Հին Հայաստանում, բայց ճորտական կացություն կամ հողի հետ պարտադիր կիսակապվածության պես մի բան (полукрепостничество), որի գոյությունը, Արշակավանի օրինակով, ձգտում են հիմնավորել մի քանիսը, հակասում են պատմական տվյալներին: Արշակավանում հավաքվել, բնակություն էին հաստատել ոչ հասարակ, անմեղ մարդիկ, այլ, ըստ Խորենացու՝ «ժողով մարդկան մեղաւորաց. և ետ հրաման (Արշակ Բ— Եր. Շ.), որ ոք անկեալ անդր բնակեսցի՝ մի՛ լիցի ի վերայ նորա իրաւունք դատաստանի» (Գ, իէ)[10]:

10 Այս գլխում ամփոփված՝ Հայոց վաղ ֆեոդալականության վերաբերյալ տեղեկությունները մենք քաղել ենք, համեմատելով ու կրճատումներով, մեր «Նախարար և Նախարարություն» ընդարձակ հոդվածից, որ տպագրված է Մոսկվայի «Գրականական և պատմական հանդեսի» 1890 թվի չորրորդ գրքում, իսկ «Արշարունյաց տեր» Կամսարականների մելիքության վերաբերյալ տեղեկությունները մեզ հաղորդել է այդ մելիքության շառավիղ Ստեփան Կամսարականը, որ բաց ծանոթ է յուր նախնիքների պատմության և տոհմական թղթերի, որոնց թվում և մեր հիշած՝ վրաց Հերակլ Բ արքայի կարևոր հրովարտակի բովանդակության, թղթեր, որոնք գտնվելիս են եղել «Тифлис, Депутатское дворянское собрание»-ի գործերի մեջ և այնտեղ էլ մնացել են: Ս. Կամսարականի ձեռքին ներկայումս պահպանվել է միայն մի համառոտ քաղվածք Հերակլ Բ-ի հրովարտակի ռուսերեն թարգմանությունից՝ կատարված վրացերեն բնագրից, Ռափայել Էրիստավի ձեռքով, որից երևում է, որ Սուրմալուի մահալը, ես և Քյալակարխի, Ղուրդուղուլու և Սարիչորանի մելիքությունները հաստատանելիս են եղել մելիքին (Մելիք-Մինասին) ռուսական դրամով տարեկան՝ ունևորները 1 ռուբլի, միջակները 80 կոպեկ և քիչ ունեցողները 60 կոպեկ, ես և ամենքը՝ մի-մի բեռ ցախ և մի-մի հավ, իսկ գութան և արոր ունեցողները պարտական են եղել և մի-մի օր, տարվա ընթացքում, վարել, ցանել, հնձել և կալսել մելիքի համար:

Այս այսպես լինելուց հետո հասկանալի պիտի լինի, որ և Աշտարակը, իբրև հնագույն ժամանակներից գոյություն ունեցող մի բնակավայր, կառավարվել է ամբողջ երկրում իշխող նույն ռեժիմով և կապված է եղել յուր գավառի ֆեոդալ-նախարարության տանուտերների հետ նույն փոխհարաբերության կարգերով. նա էլ, ուրեմն, վայելել է նույն հարկավճարության, պարտադիր ծառայության, զինվոր տալու և, ընդհանրապես, յուր տիրոջ ու գերդաստանի օջախը յուր քրտինքի աշխատանքով շեն ու պայծառ պահելու քաղցր պտուղներն ու արտոնությունը: Ցավում ենք, որ պատմական նյութերի պակասելու հետևանքով չենք կարող Աշտարակի կյանքի մասին, այդ հնագույն շրջաններում, ավելի շահեկան ու բովանդակալից տեղեկություններ հաղորդել, բայց, համենայն դեպս, կարող ենք մի բան հաստատ ասել, որ նա և՛ այդ հնագույն ժամանակները՝ հեթանոսության օրերով ու քրիստոնեության առաջին դարերում, յուր գավառի մի աչքի ընկնելու տեղն է եղել, իբրև կենտրոնական, բազմամարդ մեծ գյուղ կամ գյուղաքաղաք. ուրիշ կերպ չի կարելի մեկնել այն հանգամանքը, որ IV—V դարերում արդեն կառուցվել է այդտեղ այն մեծ, ընդարձակ բազիլիկը, որի պատկառելի ավերակները գոյություն ունեն մինչև այսօր՝ Ծիրանավորը. մենք ավելին կասենք, գուցե և նրա հրաշալի առուն Ուրարտյան ժամանակների կառուցվա՞ծք է, ինչպես կարծողներ կան, և հետագայում միայն զարդարված է քրիստոնեական ավանդավեպով և վերագրված «Սաղմոսավանքի վանահայր, սրբակյաց Սկանատեսին», որի մանրամասն պատմությունը մենք արդեն արել ենք յուր տեղում:

Աշտարակն յուր այդ դիրքը, իբրև յուր գավառի աչքի ընկնող մի կենտրոնատեղի, պահպանած է եղել և հետագա դարերում: Յոթերորդ դարում նրա մեջ կառուցվել է «Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և շինութեան Աշտարակի և պտղաբերութեան սահմանիդ» Կարմրավոր կոչված ս. Աստվածածին եկեղեցին, մի նշանավոր հուշարձան, որ կանգուն է մինչև այսօր:

1184 թվին (ՈԼԳ) կանգնվել է նրա հնագույն խաչքարը, որից այժմ պահպանվել է միայն պատվանդանն յուր արձանագրությամբ. 1268 թվին (ՉԺԷ)՝ Սադուն Արծրունու գեղեցկաքանդակ խաչքարը, նրա կենդանության օրերով, նրա արևշատության համար. 1281 թվին (ՉԼ) կառուցվել է նրա ս. Մարիանե եկեղեցին՝ յուր պատմական արձանագրություններով և այլն:

7

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ (II)

ՊԱՐՍԻՑ՝ ԵՐԵՎԱՆԻ ՍԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԳՅՈՒՂԸ ԵՎ ԱՇՏԱՐԱԿԸ

Ամենալրիվ տեղեկություն պահպանվել է պարսից իշխանության օրերով Երևանի սարդարության երկրում գտնված հայ գյուղերի կառավարության ձևի մասին:

Երևանի սարդարության գյուղը համադասակարգային կազմակերպություն է ունեցել, այսինքն՝ այդտեղ ապրել և օգտվել են գյուղին հատկացրած հողերից և այլ դասակարգերի ներկայացուցիչներ, թեև դրանց թիվը համեմատաբար սահմանափակ է եղել: Սարդարության գյուղի այդպիսի խառն կազմակերպությունը մահմեդական Արևելքի իրավական կյանքի արգասիքն է եղել: Արևելքում մարդու կացությունը որոշվել է գլխավորապես նրա զբաղմունքի տեսակով, այնպես որ, եթե մեկը ապրել է գյուղում և գյուղացիների պես, հատկապես զբաղվել է երկրագործությամբ, նա արդեն օտար եղած չէ համայնքի մեջ: Այդ տեսակետից ահա՛ բոլոր ապրողները գյուղում, թո՛ղ դրանք պատկանած լինեն այս կամ այն դասակարգին, կազմել են մի տնտեսական-վարչական միություն, պահանջվել է միայն, որ նրանք ամենքն էլ իրենց զբաղմունքով միատարր լինեին և կազմեին մի երկրագործական դասակարգ:

Սրա հետևանքով՝ գյուղում ապրել են և՛ քաղաքացի վաճառականներ ու արհեստավորներ, որոնք ձեռք բերելով հողային սեփականություն՝ դրա միջոցով մտել են գյուղական համայնքի մեջ, և՛ գյուղական ազնվականներ, որոնց ծագումը և առաջ գալը պարսկական կառավարության առանձնահատուկ սիստեմի մի արդյունքն է եղել: Երևանի սարդարությունը պարսից երկրի վարչական բաժանմունքի գլխավոր միավորներից մեկն է եղել, որի կառավարիչ խանը կոչվել է սարդար: Դա, ինչպես և մյուս կառավարիչ խաները, յուր սարդարությունը կառավարելու համար ունեցել է ծառայողների մի ամբողջ շտաբ:

Առանձին գյուղերի կառավարությունը հանձնվել է պատվավոր նայիբների, ընտրովի մելիքների և զինվորական յուզբաշիների: Նայիբները և յուզբաշիները կարգվել են կառավարիչ այն գյուղական համայնքների, որոնք զուտ մահմեդական և խառն բնակչություն են ունեցել, իսկ մելիքները՝ զուտ հայաբնակ գյուղերում: Դրանք թեև սարդարի ստորին կարգի ծառայողներից են եղել, բայց դրանց, մի որոշ չափով, վերապահված է եղել և դատաստանական և վարչական իշխանություն, մասնավորապես վերջերումս, ռու-

սական իշխանության օրերով, գյուղապետներին պատկանած իշխանության չափով:

Այդ գյուղական նայիբներն ու մելիքներն եղել են միջնորդ սարդարի և իրենց հանձնված գյուղերի համայնքների մեջ, այնպես որ գյուղական համայնքները ոչ մի անմիջական կապ ու հարաբերություն չեն ունեցել սարդարի ու նրա գլխավոր կառավարիչների հետ, այլ միայն իրենց մելիքների, նայիբների և յուզբաշիների միջոցով, և սարդարն ու նրա գլխավոր կառավարիչներն ամեն մի հրաման, պահանջ, կարգադրություն արել են ոչ անմիջապես գյուղերին, այլ նրանց կառավարիչ մելիքներին, նայիբներին և յուզբաշիներին, և շատ քիչ են խառնվել համայնքների ներքին կյանքին: Այդպիսով՝ գյուղական համայնքներն իրենց ներքին կյանքում չեն զգացել սարդարի կամայականությունը, և եթե զգացել էլ են, այդ եղել է միայն արտաքուստ, իսկ ներքուստ բոլորովին ինքնուրույն և ինքնագլուխ են եղել:

Նայիբների, մելիքների և յուզբաշիների հետ միասին, գյուղերում կարգված են եղել և սարճյարներ, որոնց պարտականությունն է եղել սարդարի նյութական շահերի պաշտպանությունը և տիրապես նրան պատկանած բահրայի, այսինքն՝ բերքի որոշ մասի գանձումը:

Այսպես են կառավարվել այն գյուղական համայնքները, որոնք պատկանել են սարդարին, իբր երկրի կառավարչին: Ինչ վերաբերում է մուլքադարական գյուղերին, այսինքն՝ այն գյուղերին, որոնք շնորհված են եղել ծառայող բեկերին մուլքադարական իրավունքով, նրանք երբեմն կառավարվել են հենց իրենց՝ մուլքադար բեկերի ձեռքով, և այդ դեպքերում միայն խոշոր մուլքադար-կալվածատերերին է վերապահված եղել վարչական-դատական իշխանություն գյուղերի վերա:

Սարդարության գավառների՝ մահալների վերա, որոնք այնպես են հարմարեցրած եղել, որ բռնել են այս կամ <այն> գետի հովիտն ու ջրաբաշխը՝ բասսարները, կարգվել են մահալական նայիբներ կամ միրբոլուկներ: Սարդարության մի քանի մահալներ, վերջապես, կազմել են երկրորդական խանություններ՝ մի-մի խանի գլխավորությամբ: Այդ առանձին, երկրորդական խաները կարգվել են կամ շահի կողմից, կամ սարդարի:

Սարդարի այդ ծառայողները՝ գյուղական նայիբները, մելիքները, յուզբաշիները, գավառական նայիբները, միրբոլուկները, իրենց աստիճանով ու գրաված դիրքով թեև տարբերվել են միմյանցից, բայց համահավասար են եղել միմյանց այն բանով, որ նրանք ամենքն էլ, խաներից սկսած և վերջացրած վերջին սարքյարով, կարգվել են ժամանակավոր, և նրանց տիտղոսները առաջին նվագ ունեցել են ծառայության պաշտոնի բնույթ և ժառանգաբար չեն անցել որդեցորդի: Դրանք մնացել, հարատևել են իրենց պաշտոններում, քանի որ ծառայել են սարդարին հավատարմությամբ և բարեխղճորեն, հա-

կառակ դեպքում զրկվել են իրենց պաշտոններից, և նրանց տեղը կարգվել են
ուրիշները: Ամեն բան կախյալ է եղել շահի կամ սարդարի կամքից:
Միայն ականավոր տոհմերի ներկայացուցիչներին և պատվավոր անձերին
ու հավատարիմ ծառայողներին սարդարը տվել է պաշտոններ ցկյանս: Այդ-
պիսի դեպքերում այդ պաշտոնատարերը կարող էին եղել, իհարկե, սարդարի
համաձայնությամբ, իրենց պաշտոնները հանձնել իրենց ժառանգներին:
Մելիքները և բեկերը բաժանվել են երեք կարգի: Առաջին կարգին պատ-
կանել են տոհմական-ժառանգական մելիքներն ու բեկերը, որոնց այդ կոչումը
շնորհվել է շահի առանձին բարձրագույն հրամանով կամ ֆիրմանով: Երկ-
րորդ կարգին պատկանել են սարդարական մելիքներն ու բեկերը, որոնց այդ
պատիվը տրվել է սարդարի կողմից, առանձին թղթով կամ բալղայով: Վերջին
տեղը՝ վերջապես, բռնել են այն մելիքները, բեկերը և նայիբները, որոնք
ժամանակավոր կամ ժառանգաբար կառավարել են գյուղական համայնքները,
առանց ֆիրմանների և թալղաների: Այդ վերջին կարգի նայիբներն ու մելիք-
ներն եղել են գյուղապետները, որոնք այլեւ կոչվել են մահմեդական և խառն
բնակչությամբ գյուղերում՝ քյոխվաներ և քյադխուդաներ, և հայ գյուղերում՝
ռեսներ կամ տանուտերներ: Դրանք, բացի հարկատվությունից և ծառայու-
թյուններից ազատ լինելուց, ուրիշ արտոնություններ չեն ունեցել: Գյուղացիք
դրանց էլ անվանել են մելիք կամ բեկ, բայց այդ միայն պարզ պատվի նշան
է եղել, և դրա հետ կապված չեն եղել իսկական տոհմական բեկերին ու մե-
լիքներին վերապահված արտոնությունները:
Իսկական տոհմական-ժառանգական բեկերին ու մելիքներին սարդարը
մոտեցրել է իրեն, բարձր պաշտոններ է տվել, կարգելով գավառների նա-
յիբներ, միրբոլուկներ և, մինչև իսկ, գավառական (երկրորդական) խաներ,
և դրանք, այդ հին տոհմերի ներկայացուցիչներն էլ հենց կազմել են պարսկա-
կան իսկական ազնվականությունը, իսկ մյուս մելիքները, նայիբները, յուզ-
բաշիները և բեկերը ապրելով գյուղերում և կառավարելով գյուղական հա-
մայնքները գյուղապետներին վերապահված իրավունքներով, իրենց իրավական
կացությամբ, իրենց կրթությամբ ու մտավոր զարգացմամբ նույն գյուղացի-
ներն են եղել. նրանք, համահավասար գյուղացիներին, ստացել են հողամասեր
և պարապել երկրագործությամբ, ուստի և նույնպես օտար չեն եղել գյուղա-
կան համայնքներում: Դրանք են եղել ահա՛, որ կազմել են գյուղական
ազնվականությունը:
Բացի քաղաքացի վաճառականներից, արհեստավորներից և գյուղական
ազնվականությունից, գյուղում ապրել են և հայ ու մահմեդական հոգևորակա-
նությունը: Հայ հոգևորականները միշտ և ամեն տեղ ընտրովի են եղել և
ընտրվել են ժողովրդի ձեռքով: Սարդարական գյուղում նրանք ընտրվել են
գրագետ և հասկացող գյուղացիներից և հովվել են իրենց ծխականներին հնուց

պահպանված կարգով: Որքան քահանա է եղել գյուղում, այնքան ծուխ է եղել՝ 1, 2, 3 և այլն: Ամեն մի ընտանիք մի ծուխ է եղել, և որոշ թվով ընտանիքներ՝ ծուխեր, կազմել են քահանայի ծուխ: Ծխատեր քահանայի մահից հետո, հաճախ, հաջորդել է նրան նրա որդին. այսպես ուրեմն՝ քահանայությունն էլ հաճախ ժառանգական է եղել, իսկ եթե քահանան արու զավակ չի ունեցել, կամ ունեցածը քահանայացու չի եղել, ծուխն ընտրել է յուր համար մի ուրիշ քահանայացու, որին և առաջնորդը ձեռնադրել է քահանա: Քահանաներն ընտրված լինելով գյուղացիներից և միշտ էլ ապրելով գյուղում, համահավասար գյուղացիներին հողաբաժին են ունեցել և պարապել են երկրագործությամբ. Նրանք տարբերվել են գյուղացիներից միայն նրանով, որ, ազնվականների պես, ազատված են եղել հարկատվությունից, և այն՝ ոչ միայն ինքյանք, այլև իրենց ամբողջ տունը, այսինքն՝ իրենց սերունդը ուղիղ գծով և իրենց ազգականները, որոնք ապրել են իրենց հետ, միևնույն տան մեջ: Առանձին պատիվ ու հարգանք վայելող քահանաները հաճախ ավելի խոշոր հողաբաժիններ են ստացել, քան մյուսները: Այսպիսով՝ սարդարության գյուղերի հայ քահանայությունն էլ մի փակ, մի առանձին առանձնաշնորհումներով օժտված դասակարգ չի եղել, այլ նույն գյուղացիությունը, իրենց շահերով կապված գյուղի հետ, ուրեմն՝ դարձյալ ո՛չ օտար գյուղական համայնքի համար:

Գյուղական մահմեդական հոգևորականությունը, ինչպես շիաները, նույնպես և սուննիները, նույնպես կապված են եղել ժողովրդի հետ: Նրանք բաժանվել են երկու կարգի: Առաջին կարգին պատկանել են շիաների ախունդները և սեիդները և սուննիների շեյխերը. դրանք եղել են փակ կաստաներ և առաջ եկած եղել այնպիսի տոհմերից, որոնք իրենց սերած են համարել մի որևէ մահմեդական սրբից, ուստի և կոչվել են իմամի ողիլ–իմամ օվլադի: Դույնպես և սուննիների շեյխերը համարել են իրենց սերունդ հայտնի, հաճախ առասպելական սրբերի, և օրինական ներկայացուցիչներ նրանց օջախների: Դրանց հակառակ, հիշյալ երկու դավանության մոլլաներն էլ կազմել են գրագետ մարդկանց մի դաս, որոնք ուսումնասիրած են եղել մահմեդական ծիսարանը և իմացել են բոլոր աղոթքները, որ կարդացվում են զանազան կրոնական ծեսերի և սրբագործությունների ժամանակ: Մոլլաների կոչումը չի անցել նրանց որդիների վերա, այնինչ ախունդները, սեիդները և շեյխերը ժառանգական են եղել: Դրանք՝ մոլլաները, ամենքն էլ համահավասար գյուղացիներին, ստացել են հողաբաժիններ և գյուղացիների հետ միասին պարապել են երկրագործությամբ: Մահմեդական շիական հոգևորականությունը սակայն, իբրև երկրի իշխող կրոնքին ու դավանության պատկանող, վայելել են ավելի ընդարձակ արտոնություններ, քան թե մյուս դավանությունների՝ սուննիների և հայերի: Այսպես, օրինակ՝ սարդարն ախունդներին, սեիդներին

և մոլլաներին հաճախ շնորհել է, ինչպես յուր մյուս ծառայողներին՝ տոհմական-ժառանգական ազնվականներին, ամբողջ գյուղեր թիուլական իրավունքով:

Այսպես ուրեմն՝ պարսկական գյուղն ընդհանրապես և սարդարական գյուղը մասնավորապես բաղկացած է եղել բուն գյուղացիներից, քաղաքներից գյուղ փոխադրված վաճառականներից և արհեստավորներից, և երկու արտոնյալ դասակարգերից՝ գյուղական ազնվականությունից և հոգևորականությունից, որոնք մաաֆ կամ բարխան են եղել հարկերից և այլ պարտադիր ծառայություններից՝ կոռ ու բեգյարից, որով և տարբերվել են բուն գյուղացիներից, իսկ մյուս բոլոր կողմերով նրանք նույն գյուղացիներն են եղել, նույն պարապմունքն են ունեցել, նույն շահերով կապված են եղել գյուղի հետ և մինչև իսկ իրենց կենցաղավարությամբ, մտայնությամբ, աշխարհայացքով, հաճախ և իրենց մտավոր զարգացման աստիճանով, չեն տարբերվել գյուղացիներից, որի հետևանքով նրանք ծառայության որոշ պաշտոններ կատարելով հանդերձ, ըստ էության, գյուղացի են եղել և կազմել գյուղական համայնքի բաղկացուցիչ մասը:

Հարկատու գյուղացիությունը կոչվել է ռայաթ–ըռահատ և, իբրև այդպիսին, ենթարկվել է հարկատվության և այլ ծառայությունների՝ կոռ ու բեգյարի, որ դրված է եղել գյուղական համայնքի վերա: Այդ պարտականությունը տարածվել է և՛ քաղաքացի վաճառականների, և՛ արհեստավորների վերա, որոնք ապրել են գյուղում: Մինչև հողաբաժին ստանալը նրանք վճարել են միայն անհատական հարկ, որ առնվել է տանից, ծխից և գլխից, բայց, հենց որ նրանք ստացել են հողաբաժին, համարվել են ռայաթ և ենթարկվել են, մյուս գյուղացիների պես, գյուղի համայնքի վերա դրված բոլոր հարկերին ու ծառայություններին:

Գյուղացիությունը ճորտացած չի եղել. նա ազատ է եղել և իրավունք է ունեցել յուր կամքով, երբ կամեցել է, թողնել գյուղը, փոխադրվել քաղաք և, մինչև իսկ, անցնել մի ուրիշ խանի մոտ: Գյուղն այդպիսի դեպքերում արգելք չի հանդիսացել փոխադրվողներին, որովհետև երաշխավոր չի եղել նրանց համար, պարտական չի եղել նրանց հարկերը հատուցանել, նրանց վերա դրված ծառայությունները կատարել: Բայց երբ մեկը քաղաքից փոխադրվել է գյուղ, և հարկավոր է եղել նրան ընդունել գյուղական համայնքի մեջ, գյուղացիք հեռատես են եղել և զգույշ վարվել, և երկար ժամանակ հսկողության տակ պահել նրան: Վատ վարքի տեր մարդկանց նրանք ոչ միայն հողաբաժին չեն տվել, այլ զոռով վտարել են գյուղից:

Ռայաթները բաժանվել են մի քանի կարգի: Առաջին կարգին պատկանել է մեծամասնությունը, որ ապրել է հարկատու հողի վերա՝ արզ խարաջի, երկրորդին՝ յարիճյարի և ռաշպար կոչված գյուղացիները, որոնք ապրել են

իմամների հողի վերա՝ արզ իմամի: Այդ հողերը պատկանել են սարդարին՝ սեփականության իրավունքով, դրանք սարդարի անձնական կալվածներն են եղել՝ խալիսաները և մազրաները: Ռայաթների երրորդ կարգը, վերջապես, նրանք են եղել, որոնք ապրել են մուլքադարների հողերի վերա, հողեր, որոնք շնորհված են եղել բեկերին, աղալարներին, մելիքներին, հայոց վանքերին և մահմեդական հաստատություններին:

Ռայաթների բոլոր այդ կարգերն իրենց անձնական իրավունքի տեսակետից հավասար են եղել և միևնույն իրավական կացություն են ունեցել. նրանք, ինչպես ասացինք, ճորտացած չեն եղել, այլ՝ անձի և գույքի լիակատար իրավունքի տեր, և տարբերվել են միմյանցից միայն իրենց հատուցած տուրքերի քանակով և մատուցած ծառայությունների տեսակով: Այսպես, օրինակ՝ սովորական ռայաթները հատուցել են բոլոր տուրքերը և կատարել բոլոր ծառայությունները. ռաշպարները, որոնք պարտական են եղել հատուցանել սարդարին իրենց բերքի $^{2}/_{3}$-ից մինչև $^{4}/_{5}$ մասը, համարյա միշտ ազատված են եղել մյուս տուրքերից. յարիքյարինները հատուցել են ընդհանուր բերքի $^{1}/_{2}$-ը և հաճախ, ռաշպարների պես, ազատված են եղել մյուս դրամական և այլ տուրքերի հատուցումից: Վերջապես՝ մուլքադարական գյուղացիները տուրքերը հատուցել են մուլքադարին, որով և սահմանափակվել է նրանց ունեցած պարտականությունը մուլքադարի վերաբերմամբ. մուլքադարն իրավունք չի ունեցել յուր գյուղացիներից պահանջել անհատական ծառայության կամ մի այլ բնական տուրք: Իսկ տալիք բահրայի քանակը միանգամ ընդմիշտ որոշված է եղել վաղնջական սովորությամբ, և մուլքադարն ավելին պահանջելու իրավունք չի ունեցել, հակառակ դեպքում գյուղացիներին իրավունք է վերապահված եղել բողոքելու սարդարին, որ այդպիսի դեպքերում միշտ գյուղացիների կողմն է պահել:

Եվ միայն առանձին պատիվ ու հարգանք վայելող մուլքադարներին գյուղացիները մատուցել են, և այդ՝ հոժարակամ, մի քանի ծառայություններ, ինչպես, օրինակ՝ նրանց ախչա կոչված հողերի բերքի հնձելը, կալսելը և շտեմարան տանելը: Բացառություն են կազմել միայն սարդարի տոհմի անդամները և այն բեկերը, որոնք մի առանձին ծառայություն են մատուցած եղել սարդարներին. այդպիսի ազնվականներին սարդարները շնորհած են եղել կալվածներ ոչ թե մուլքադարական իրավունքով, այլ բոլոր տուրքերով և ծառայություններով: Այդ դեպքում կալվածատերը, իբրև սարդարի պատկերը կամ նրա իրավունքները վայելողը, կարող է եղել, իհարկե, ավելի ծանր ծառայությունների ենթարկել յուր գյուղացիներին, բայց այդպիսի ծառայությունների քանակը, չափը ավելի չպետք է լիներ, քան սարդարին իրեն մատուցածները: Սակայն և այդ դեպքում, համենայն դեպս, գյուղացին ճորտացած չի եղել, այլ անձնապես ազատ է եղել և միշտ էլ

կարողացել է թողնել գյուղը, փոխադրվել քաղաք կամ, մինչև իսկ, անցնել մի այլ խանի կամ կալվածատիրոջ:

Աշտարակն Երևանի սարդարության Կարբի-բասար մահալի զուտ հայաբնակ գյուղերից մեկն է եղել և ունեցել է նույն համադասակարգային կազմակերպությունը և կառավարության ձևն ու եղանակը, որ հատուկ է եղել սարդարության բոլոր գյուղերին: Նա առաջ էջմիածնապատկան գյուղերից մեկն է եղել՝ էջմիածին, Աշտարակ, Բաթրինջ, Նորագավիթ, Աղունատուն, Քիրաշլու և Մուղնի, որ մակվեցի Ջալալբեկյան Գրիգոր Ժ կաթողիկոսը (1443—1453) գնել էր Ամիր Ռուստամից և հատուկ վախըֆնամայով հատուկ տվել իբրև էջմիածնի կալվածք: Սակայն դրան հաջորդած խառնակ ժամանակները, մինչև Մովսես Գ (1629—1632) և դրա հաջորդ Փիլիպպոս (1633—1655) կաթողիկոսները, երբ էջմիածինը, կարելի է ասել, հոգեվարքի մեջ է եղել, զույն գյուղերը Աշտարակի հետ միասին դարձյալ խլվել, անցել են տաճիկների ձեռքը: Փիլիպպոս և Հակոբ կաթողիկոսները հազիվ-հազ կարողացել են ետ առնել հիշյալ յոթ գյուղերից երեքը՝ էջմիածինը, Մուղնին և Քիրաշլուն, իսկ մյուս չորս գյուղերը՝ Աշտարակ, Նորագավիթ, Բաթրինջ և Աղունատունը, մնացել են խլողների ձեռքին մինչև Երևանցի Սիմեոն կաթողիկոսը (1763—1780), որ կարողացել է ետ առնել Երևանի Հյուսեին Ալի խանից Աշտարակ, Եղվարդ, Մուղնի և Քիրաշլուն, որոնք այդ ժամանակները գտնվել են նրա ձեռքին:

Այս մասին, թե ինչպես են ետ առնվել այդ գյուղերը, Սիմեոն Երևանցին յուր «Ջամբռ» գրքի ԺԸ գլխագում գրում է. «Իսկ Աշտարակ, Նորագաւիթ, Բաթրինջ և Աղունատուն մնացին յայնմհետէ (այսինքն՝ Փիլիպպոս և Հակոբ կաթողիկոսներից հետո— Եր. Շ.) ի ձեռս տաճկաց, և անուանք նոցին ամենևին անհետք եղեն ի յԱթոռոյս մինչև ցայսօր: Եւ այս այնքան անհետացեալ և հնացեալ՝ մինչ զի թէ՛ Աթոռայինքս և թէ՛ բոլոր երկրականքս իբր հաւաստապէս և անկարծիք կարէին երդնուլ թէ՝ գեօղօրայքս այսոքիկ ո՛չ երբէք են լեալք մուլք սրբոյ Աթոռոյս, և մեծ վախուպնամայն ևս, ո՛րպէս թէ խափանեալ ու անպէտ կայր անկեալ ի յանկիւնս անյայտ և անհետ: Սոցա նման իմա՛ և զգեօղն Եղուարդ, և զվախուպնամայն նորա, զորմէ սակաւ ինչ ասացաք ի ճառս իւր: Իսկ ի յետին ժամանակս զՄուղնի գիւղն ևս զաւթեալ էին տաճիկք (որպէս ասացաւ ի ճառս իւր), և Քիրաշլուն ևս էր ամայի և անմարդ, որ և է այնպէս մինչև ցայսօր: Որ ի ներկայումս՝ յորում նուաստութիւն մեր յաջորդեաց զԱթոռս՝ մնացեալ էր սրբոյ Աթոռոյս մուլք միայն մեր էջմիածնի գեօղս:

Ապա՝ յաւուր միում կոչեցաք զՀիւսէին Ալի խանն Երևանու ի յԱթոռս, ի պատիւ որպէս թէ. և ի գալն՝ առանձին արարեալ ցուցաք նմա զմեծ վախուպնամայն Գրիգոր Կաթուղիկոսի և զվախուպնամայն Եղուարդայ, ծանուցանելով

նմա զպարագայն: Իսկ ողորմութեամբն աստուծոյ (յորոյ ձեռին են սիրտ իշխողաց) կակղացեալ խանին, զայնս գեօղօրայսն՝ որք ի ձեռս իւր էին, որոց զմուլքսն ինքն առնոյր, եւ մեզ հաստատուն գրով, որք են գեօղս այս Աշտարակ, Եղուարդ, Մուղնի և Քիրաշլու (որ թէպէտ ի ձեռս մեր էր, սակայն մինչ էր ամայի, զի մի՛ յետոյ և սա անհետասցի, գրեցուցաք), զորս յանուանէ գրէ ի գիրս իւր՝ վկայելով թէ՝ տեսի զվախուպնամայն և գիտացի հաւաստեաւ՝ որ ի բնէ անտի վախմ են սուրբ էջմիածնի: Այսպէս գրելով՝ կնքէ ինքն, կնքեցուցանէ և Շէխիպամին և այլոց մեծամեծաց, և տայ մեզ ընդ յիշեցեալ գեօղորէից ի ՌՄՁԲ թուոջն տաճկաց և ՌՄԺԷ (1768) թուոջն մերում: Զոր գտցես ցուցակաւն, և ամուր պահեա՛, զի կարի պիտանի է և յաւ պահելի»:

Դրանից հետո անցել է մի քանի տարի, և Հյուսեին Ալի խանը զղջացել է, որ Աշտարակի պես մեծ եկամուտ տվող գյուղը վերադարձրել է էջմիածնին, և մի հարմար առիթ է որոնել, որ կարողանա գյուղը վերստին իրեն սեփականել: Այդ մասին Աշտարակում պահպանված ավանդությունն ասում է. «Մի ժամանակ մեր գեղը էջմիածնա վանքի սեպհականությունն ա էլել... Մենք էլ մեր գեղի հարկն էլ, բահրեն էլ վանք էինք տալիս: Բայց մի տարի մի անխիղճ վարդապետ եկավ մեր գեղի հարկը հավաքելու. նա շատ անզգթաբար վարվեց ժողովրդի հետ ու զզվացրեց: Հետո՝ մեր գեղի Սողոմոնենց (բնագրում՝ Սողոմանենց—Պ. Հ.) Գասպարը տանուտեր էր, ինքն էլ չար մարդ էր, ժողվեց գեղի առաջադեմ մարդկանցը, գնացին... Երևանա տիրապետող խանին՝ գանգատելով վանքի վարդապետից: Խանն էլ նրանց ամենքին մի չնչին խալաթ էր տվել ու խաբել, ճանապարհ գցել. մեր հիմար մարդիկն էլ ուրախացած՝ ետ էին դառել գյուղը, ասելով թե՝ վարդապետի ձեռքիցը ազատվեցինք: Էլ չէին իմանում, որ բոլորովին գաղանի ձեռք են ընկնում: Հետո կաթուղիկոսն հիմացել էր, էն վարդապետին կարգալուծ էր արել ու մեր գեղացվոց վրա մի անեծքաթուղթ էր գրել ու տվել մի վարդապետի, որ բերի, մեր գեղումը կարդա: Էդ էլ առաջագույն իմացել էր Սողոմոնենց Գասպարը <և> Պիտումի հիգու գլխին, որ հիգանոնց մեջտեղն էր, չորս հոգի դարավուլ էր դրել, որ անեծքաթուղթ բերող վարդապետին ծեծեն ու ետ դարձնեն, և այդպես էլ արել էին: Հիմա երբեմն, կարկուտը խուբաններին որ տալիս ա, մինչև Պիտումի այգին, հիմա ասում են. «Կաթուղիկոսի անեծքաթուղթը հասած տեղիցը վերև չի անց կենում կարկուտը» (Սարգիս Բզնունի, Ջվարճալի հարսանիք, թ. 182ա—բ):

Ներսես Աշտարակեցու՝ 1823 թվի սեպտեմբերի 13-ին Թիֆլիսում, Կովկասի կառավարչապետ Ալեքսեյ Պետրովիչ Երմոլովին ներկայացրած մի ընդարձակ թղթից երևում է, որ Ներսեսը թվելով այն նեղությունները, զրկանքները, որ կրել է վանքը Երևանի սարդարների երեսից, սկսած Ղուկաս կաթողիկոսի մահից (1797 թ.) մինչև Հյուսեին Ղուլի խանը, խնդրել է միջնորդ

հանդիսանալ կայսեր առաջ և գրել Աբբաս Միրզային՝ հովանավորելու էջմիածնին և ազատելու վանքը բռնակալությունից, ծանրատուկս պարտքերից, որոնց տակ հեծում է եղել նա: Այդ վավերականի մեջ հատկապես Աշտարակի մասին ասված է. «Թողեալ զայլոցն հանապազօրդեան մանրամասնեալ զրկանաց և հարստահարութեանց Աթոռոյն և պատրիարգին, զոմանց երևելեացն միայն հարկաւոր համարիմ յառաջ բերել ատենօր. զի յամի 1811 արեգակնափայլ ժառանգն տէրութեան Պարսից Աբբաս Միրզայ համաձայն յուսադրութեանց իւրոց վասն մշտնջենաւոր խնամակալութեանց ի վերայ Աթոռոյ էջմիածնի, յարգելով զխնդիր սրբազանագոյն պատրիարգին (իմա՛ Եփրեմ կաթողիկոսին — Եր. Տ.), վերադարձոյց Աթոռոյ էջմիածնի բարձրահրաման հրովարտակաւ իւրով զսեպհական կալուած նորա զգիւղն անուանեալ Աշտարակ, զոր յափշտակեալ ունէր հայրն Մահմէտ խանի՝ Հիւսէյին Ալի խան, այլ ինքն սարտարն պահանջելով պարգև ինքեան ի մասին այնորիկ հազար թուման դրամ, մինչև ցայսօր ժամանակի ո՛չ Աթոռն կարաց տալ նմա զայն դումար և ո՛չ ինքն սարտարն կամեցաւ յանձնել աթոռոյն զայն գիւղ. և ահա՛ 13 ամ Աթոռն էջմիածնի վայելէ միայն զպատուելագոյն հրովարտակ արքայորդւոյն, և սարտարն՝ զբոլոր գիւղն և զամենայն արդիւնս առ ի նմանէ» (թ. 3ա):*

Աշտարակցիք պատկանել են ռանչպարների առաջին կարգին և դրա հետևանքով վճարել են բոլոր հարկերը, և կատարել են բոլոր հարկադիր ծառայությունները: Աշտարակի գյուղապետը կոչվել է տանուտեր, պաշտոնապես՝ fյոխվա. դա ընտրովի է եղել և ընտրվել է գյուղի պատվարժան ընտանիքներից և տոհմերից, և հաճախ ժառանգական է եղել միևնույն տոհմի մեջ շարունակ, երկար տարիներ: Աշտարակի տանուտերն էլ վարչական և դատական իշխանություն է ունեցել և կառավարել է իրեն հանձնված համայնքը գյուղի պատվավոր անձերի և ծերերի խորհրդակցությամբ և օգնությամբ: Այդ պատվավոր անձերը և ծերերը կոչվել են իշխաններ և մի առանձին պատիվ ու հարգանք են վայելել գյուղացիներից: Տանուտերի հրամանները, կարգադրությունները անմիջապես գյուղական համայնքին հաղորդողը եղել է գզիրը, որ նրա պաշտոնյան է եղել և նրա արած ամբողջ գյուղական համայնքին վերաբերյալ կարգադրությունները հաղորդել է գյուղին՝ փողոցները շրջելով և որոշ տեղերում կանգնելով և բարձրաձայն հայտարարություններ անելով, իբրև մունետիկ:

Աշտարակի գյուղական համայնքի ներքին, սարդարի և նրա գլխավոր կառավարիչների հետ անմիջական կապ չունեցող կյանքը յուր բոլոր հանգամանքներով, յուր առօրյա չարն ու բարիքով, ամբողջապես գտնվել է տանուտերի հսկողության, խնամքի և հոգացողության ներքո, իսկ նրա՝ համայնքի,

* Տե՛ս նաև Լրացում 2 (Պ. Հ.):

արտաքին կյանքում նա միջնորդ է հանդիսացել համայնքի և սարդարի կառավարության միջև. Նրա միջնորդությամբ են կառավարության հրամանները հաղորդվել գյուղին և նրա ձեռքով էլ կատար ածվել: Եվ, իբրև այդպիսին, նա պարտական է եղել համայնքի վերա դրված հարկերը գանձել և հասցնել սարդարի գանձարանը ամենայն ճշտապահությամբ, հսկել, որ գյուղի սահմաններում գտնված ճանապարհները, առուները և կամուրջները կարգին պահված լինեին, ժամանակին վերանորոգված ու շինված, հսկել համայնքի բարեկարգության ու խաղաղության վերա, ընդունել սարդարի ծառաներին, որոնք նրա կամ նրա կառավարության հրամանով շրջում էին գյուղերը, և բավարարել նրանց անհրաժեշտ պահանջները, պիտույքները և այլն:

Ի նկատի առնելով այն, որ Պարսկաստանում ամեն տեղ մեկ անգամ ընդմիշտ ընդունված պարտականացուցիչ կարգով առանձին գյուղերն են երաշխավոր և պատասխանատու համարվել կառավարության առաջ ամեն մի պետական հանցանքի համար, որ կատարվել է գյուղի սահմաններում, Աշտարակն էլ և, առաջին հերթին, նրա տանուտերը և գյուղական իշխաններն են պարտական եղել գտնել, բռնել հանցավորին և ներկայացնել նրան պատշաճ իշխանության, իսկ եթե այդ չի կատարվել կամ չի հաջողվել, և հանցավորը կարողացել է ճողոպրել նրանց անհոգության պատճառով, նրանք հարկադրաբար ստիպված են եղել դրա համար սահմանված տուգանքը վճարել կամ, ինչպես ասել են՝ ջառման քաշել, և այդ տուգանքը պարտական է եղել տանուտերը գանձել ամբողջ գյուղից և հասցնել սարդարի գանձարանը:

Յուր այդպիսի բազմադիմի պարտականությունները տանուտերը կատարել է ոչ մենակ, այլ դահերի՝ տասնակների և այլ համայնական խմբավորումների կամ, ինչպես կոչվել են, բոլուկների հետ: Գյուղական համայնքը բաժանվել է տասնակների, որոնք բաղկացած են եղել որոշ, անպատճառ հավասար թվով համբայական, երեքպճեղական, կիսանական և պճեղական ծխերից կամ, ընդհանրապես, միաքանակ հողաբաժին ստացող միավորներից: Դրանք, այդ տասնակները կամ դահերը, իրենց տասնակապետներով կամ դահբաշիներով գոյություն են ունեցել գլխավորապես այն գյուղերի համայնքներում, որոնք գտնվել են սարդարական երկրի թագավորական կոչված մեծ, բանուկ ճանապարհների վերա, ինչպիսին եղել է և Աշտարակը, և կապված են եղել գյուղացիների՝ կառավարության մատուցանելիք անձնական օլամա և բեգար կոչված հարկադիր ծառայությունների հետ: Հասկանալի է, որ այն համայնքները, որոնք կոչված են եղել իրենց ուսերի վերա կրելու պետական բոլոր ծառայությունների ծանրությունը, աշխատել են համախմբվել տասնակների և այլ բոլուկների մեջ, որ ի վիճակի լինեն արդարացիորեն և համահավասար չափով բաժանել բոլոր ծառայությունները համայնքի անդամների մեջ:

Հնումն ամեն մի տասնակի մեջ մտնող ընդհանուր ծխերի թիվը կազմել են տասը համբա, 20 կիսան կամ 40 պճեղ: Հաճախ այնպես է պատահել, որ տասնակները կազմակերպվելուց հետո էլ մնացել են ավելորդ ծխեր, որոնք և ավելացվել են առանձին-առանձին տասնակների վերա, իբրև հավելումներ, և այդ հավելումներից հետագայում, բնակչության աճելության հետևանքով, կազմվել են նոր տասնակներ:

Այդ տասնակներն իրենց տասնակապետներով օգնել են տանուտերին հողաբաժանության, ջրաբաժանության, հարկաբաժանության ժամանակները և օլամա, բեգարի բաժանման գործում ևս, և գյուղը պահպանելու համար զինյալ պահապաններ հանելու անհրաժեշտ հարկավոր դեպքերում:

Աշտարակի տանուտերն էլ գյուղական համայնական ժողովներ է գումարել, սովորաբար, տարին երկու անգամ՝ աշնանը և գարնանը, երբ հարկավոր է եղել բովջի անել, այսինքն՝ հարկաբաժանություն կատարել, իսկ հարկավոր դեպքերում՝ և հաճախ: Ժողովատեղին եղել է Թորոսենց կալը. գյուղից դուրս, Մուղնու թառի տակը, Կարմրավոր եկեղեցուց ո՛չ հեռու: Հրավիրվել են ժողովի թե՛ բոլոր տնատերերը, բայց առաջնությունը պատկանել է ծերերին, իսկ երիտասարդները միայն հանդիսատես են եղել, մի բան, որ բոլորովին համապատասխանել է նույն ժամանակի ժողովրդի պարզ, նահապետական կյանքին ու հասկացողությանը:

Ժողովներում խնդիրները լուծվել են ու որոշվել միաձայն, ձայների մեծամասնության կարգը չի գործադրվել: Առանձնապես աղմկալից բնավորություն են կրել ժողովները նամանավանդ երբ քննարկության է դրված եղել հողերի վերաբաժանման խնդիրը. դրանց քննարկումը հաճախ տևել է օրեր, շաբաթներ, և ժողովը գումարվել ու ցրվել է, վիճաբանությունները անցել են խմբավորումների մեջ և տեղի են ունեցել Ուռուցում և, ընդհանրապես, ամեն տեղ, որտեղ սովորություն է ունեցել հավաքվել ժողովուրդը. վիճել են անվերջ, տաք-տաք, մինչև որ, վերջապես, փոխադարձ զիջումներով եկել են որոշ համաձայնության: Ղեկավարել են ժողովները տանուտերը, տասնակապետները և մյուս խմբավորումների ներկայացուցիչները:

Աշտարակի տանուտերն էլ, ասացինք, դատական իշխանություն է ունեցել. նա, սակայն, դատել, քննել ու տեղնուտեղը վերջացրել է իրեն դիմողների ոչ կարևոր, փոքր գործերը, իսկ քիչ թե շատ կարևորները հանձնվել են համայնական միջնորդ դատավորների քննության: Այդ միջնորդ դատավորները կոչված են եղել ամեն մի դատական գործ վերջացնել հաշտությամբ: Դատվող կողմերի՝ դատավորների արձակած վճռին համակերպվելու դեպքերում ամեն գործ էլ կարող էր վերջանալ հաշտությամբ, հակառակ դեպքերում՝ դատվողներին իրավունք է վերապահված եղել դիմելու Կարբի բասարի մհալի դատական օրգաններին՝ տոհմական մելիքին կամ մհալի բեկին: Սրանց,

նամանավանդ տոհմական մելիքներին, հավատք են ընծայել հայերը և անպայման և անվերապահորեն հնազանդվել ու համակերպվել են նրանց արձակած վճիռներին։ Աշտարակցիներին, ինչպես և մյուս գյուղացիներին, վերապահված է եղել իրավունք՝ դիմելու և Երևանի շարհատի դատարանին, և՛, մինչև իսկ, իրեն սարդարին, բայց այդպիսի դեպքեր շատ քիչ են եղել և միայն ծայրահեղ դեպքերումն են պատահել, որովհետև դրանք, այսինքն՝ սարդարն ու շարհատի դատավոր ախունդները, իրենց կատարած դատի համար հարկադրաբար պահանջել ու ստացել են և՛ տուգանքներ, և՛ ընծաներ, և՛ կաշառքներ՝ ռուշվատ։ Միջնորդ դատավորները, եթե բարեխիղճ ու հմուտ մարդիկ են եղել, կարողացել են հաճախ հաշտությամբ վերջացնել մինչև իսկ մահվան պատիժ պահանջող քրեական գործերը, որոնց դատն ու քննարկությունը վերապահված է եղել միայն երկրի խանին՝ սարդարին։

Միջնորդ դատավորների կազմի ընտրությունը կախյալ է եղել մասամբ շահագրգռված կողմերի ցանկությունից, մասամբ էլ յուր՝ տանուտերի ընտրությունից, բայց պահանջվել է, որ ջրի հերթի և հողերի սահմանների անջըրպետ նշանների խախտման վերաբերյալ բոլոր գործերի դատավարությանն անհրաժեշտորեն մասնակցեն տասնակապետները և մյուս բոլուկների ներկայացուցիչները։

Գործերի քննարկությունները կատարվել են հրապարակորեն. հավաքվել, ներկա են գտնվել քննարկության և՛ ծերերը, և՛ երիտասարդները, մի խոսքով՝ հավաքվել, եկել են ամենքը, որոնք զբաղմունքից, գործից ազատ են եղել։ Տանուտերի թույլատվությամբ՝ վիճաբանության իրավունք են ունեցել, մասնակցել հանդիսատեսներից ամեն մեկը, նամանավանդ ծերերը։ Հաճախ ինքը՝ տանուտերը, դիմել է պատվավոր ծերերին և խնդրել խորհուրդ տալ, որոնք և, առանց քաշվելու, հայտնել են իրենց կարծիքը քննության դրված գործի մասին։ Հաստատուն, գրավոր օրենք չլինելու հետևանքով՝ դատավորները դատական գործերի քննության և վճիռ կայացնելու ժամանակ ղեկավարվել են տեղական վաղնջական սովորույթներով։ Աչառու վճիռներ արձակելու դեպքերում ժողովուրդը, հենց տեղնուտեղը, այդպիսի վճիռները լսելուն պես, կշտամբել, անգոսնել է դատավորներին։ Այսպիսով՝ դատական գործերը քննվել են համայնքի ներկայությամբ, ժողովրդի աչքի առաջ, և դատավորները զգուշացել են վարվել հասարակության կարծիքին հակառակ։ Այնքան պարզ, այնքան անսեթևեթ է եղել ժամանակի հայ գյուղացու, հայ բռահաթի հասկացողությունը, այնքան նախնական, նահապետական՝ նրա կյանքը ընդհանրապես և Աշտարակի բռահաթի հասկացողությունն ու կյանքը մասնավորապես։

Աշտարակցիք էլ ճորտացած չեն եղել. նրանք էլ անձնապես բոլորովին ազատ են եղել և իրավունք են ունեցել տեղափոխվել, ուր որ կամենան, բայց

նրանք, ինչպես որ ասել ենք, իրենց գյուղը թողնելու և ուրիշ տեղեր փոխադրվելու սովորություն չեն ունեցել, և Աշտարակը քիչ գաղթականներ է տվել և շատ ընդունել յուր մեջ, որի հետևանքով և նա փոքրիկ, չնչին ավանից, ինչպիսին եղել է հնագույն ժամանակները, համեմատաբար ավելի կարճ ժամանակամիջոցում, մեծացել ու ընդարձակվել է։

Աշտարակի պատմությունից երևում է, որ նա յուր մեջ ապրող տոհմական-ժառանգական մելիքներ չի ունեցել, ինչպես մյուս հայ գյուղերը. եթե ունեցել էլ է այդպիսիները հնագույն ժամանակները, նրանց մասին տեղեկություն չի պահպանվել, մեզ, գոնե, այդ մասին ոչինչ հայտնի չէ։ Մելիքի բախշա անունը, գուցե, պահպանված լինի հնումն Աշտարակում ապրած մի այդպիսի տոհմական-ժառանգական մելիքական տոհմից, որի սերունդը ժամանակի ընթացքում սպառված է եղել։ Միակ ազնվական տոհմը, որ միջին դարերում (XV դար) եկել, բնակել է Աշտարակում, եղել են Ճահազիզ-Կամսարականները. դրանք էլ, սակայն, ինչպես արդեն ասել ենք, դարերի ընթացքում բազմաթիվ ճյուղերի բաժանվելով՝ իրենց կացությամբ բոլորովին հավասարվել են գյուղացիներին և պարզ ռահաթներ դարձել։ Միակ ընտանիքը, որ մնացել է դրանցից և հետագայում յուր իշխանական վիճակը պահպանել, եղել է մեր արդեն հիշած Կարապետ աղա Ճահազիզ-Կամսարականը, որ վերահաստատվել է յուր թարխանության իրավունքների մեջ։ Այդ ընտանիքի ներկայացուցիչներն էլ կոչվել են ոչ մելիքներ, այլ աղաներ, որոնք թեև ունեցել են իրենց վայելուչ նիստուկացը, բայց ոչ մի կալվածատիրական-մուլքադարական կամ թիուլական իրավունքներով կապված չեն եղել գյուղացիների հետ։

8

ՀԱՐԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅ ԳՅՈՒՂԻ ՀԱՐԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ
ՀԱՅ ԳՅՈՒՂԻ ՀԱՐԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՍԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՐՈՎ
ԵՎ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՐԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Քսենոֆոնի՝ հայ գյուղերի նկարագրությունից մենք արդեն տեսանք, որ հայ գյուղացիները պահելիս ու սնուցանելիս են եղել հայկական նժույգների քուռակներ, որ տալիս են եղել թագավորին, իբրև տուրք։ Հայտնի բան է, դրանով չի սահմանափակվել գյուղացիների հարկատվությունն այդ նախնական ժամանակներում. նրանք, անկասկած, և ուրիշ տեսակ հարկեր հատուցանելու և անձնական պարտադիր ծառայություններ մատուցանելու թագավորներին և տանուտերներին (կալվածատեր իշխանավորներին) պարտականություն էլ են ունեցել, բայց թե ի՞նչ տեսակ հարկեր են այլևս հատուցել և ի՞նչ տեսակ հարկադիր ծառայություններ մատուցել, այդ մասին մեզ տեղեկություններ չեն հա-

սել: Համենայն դեպս, մի բան կարելի է հաստատ ասել, որ հատուցված հարկերն եղել են ո՛չ դրամական տուրքեր, այլ բնատուրքեր:

Այդ մասին մեզ տեղեկություններ չեն հասել և Հայոց պատմության հետագա շրջաններից, մինչև Արշակունյաց հարստության վերջանալը և Մարզպանությունը, երբ արդեն մեր պատմագիրները և այլ գրավոր աղբյուրները մեզ որոշ չափով տեղեկություններ են հաղորդել այդ մասին իրենց ժամանակներըը: Պրոֆեսոր Հ. Մանանդյանի մի շահեկան ուսումնասիրությունից, որ վերաբերում է Մարզպանության ժամանակներին՝ «Հայաստանի արքունի հարկերը Մարզպանության շրջանում», մենք իմանում ենք, որ պարսից Հազկերտ Բ-ի ժամանակ (439—457) Հայաստանը շարունակում է եղել հատուցանել պարսից գանձարանին այն բոլոր հարկերը, որ նա հատուցանելիս է եղել Արշակունյաց վերջին թագավոր Արտաշիրին, նրա գահընկեց լինելուց առաջ՝ Հաս, Սակ, Բաժ, Մուտ, Հարկք լերանց և դաշտաց և մայրեաց, Բեկար, կոռ և պահակություն (վեցկէ կոռ ու կամին կոռ և մարդոյ կոռ): Վաստակավոր պրոֆեսորի մեկնաբանությամբ՝ հաս-ն եղել է հողային հարկ, սակ-ը՝ գլխահարկ, բաժ-ը՝ մաքսային հարկ, մուտը՝ քաղաքներում վճարվող հարկեր կամ եկամուտի նշանակությամբ, կոռ և պահակություն՝ հարկադիր աշխատանք ու ծառայություն, հարկք լերանց և դաշտաց և մայրեաց՝ արոտատեղերի հարկ կամ արքունի կալվածների հարկեր, բեկար՝ հողային հարկ արաբական խառաջի իմաստով և այլն: Հարկերը Հայաստանում, մարզպանական շրջանում, գանձվել են կառավարչական հատուկ պաշտոնյաների ձեռքով, որոնք կոչվել են գործակալներ, իսկ հարկային գործի գերագույն վարչական իշխանությունը, իբրև հատուկ գործակալություն, կոչվել է հազարապետություն: Պարսկական Հայաստանի հարկերին վերաբերյալ բոլոր գործերը և գրագրությունները կենտրոնացած են եղել Հայաստանի մարզպանական կենտրոն Դվին քաղաքի դիվանում, որին ենթարկվել են բոլոր շրջանները, բացի Սյունիքից, որ 572 թվի նախարարական ապստամբությունից առաջ միացրել էին Ատրպատականի շահրմար-ին (աշխարհամար), և նրա գործերի դիվանը փոխադրել էին Դվինից Փայտակարան քաղաք[11]:

11 Պարտք ենք համարում այստեղ նկատել, որ Բագ. Ավդալբեգյանը շատ լուրջ առարկություններ է արել Հակոբ Մանանդյանի բացատրությունների դեմ՝ հաս, սակ և բաժ հարկերի վերաբերմամբ: Տե՛ս այդ մասին նրա «Հաս, սակ ու բաժ» ուսումնասիրությունը, որ նա գրել է իբրև քննադատություն և լրացումն Հակոբ Մանանդյանի ուսումնասիրության՝ «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում»: Թե՛ Մանանդյանի և թե՛ Ավդալբեգյանի ուսումնասիրությունները, երկուսն էլ նախապես կարդացված են եղել Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի պատմական-հասարակագիտական բաժնում և տպագրված նույն ինստիտուտի «Տեղեկագրի» առաջին տետրակի մեջ և հետո, արդեն այդտեղից, արտատպված 1926 թվին, առանձին տետրակներով:

Ի նկատի առնելով, որ Արշակունյաց հարստության անկումը կամ բառնալը և Արշակունյաց վերջին թագավոր Արտաշրի գահընկեցությունը կատարվել է պարսից Վռամ թագավորի ձեռքով՝ Հայոց նախարարների ցանկությամբ և խնդիրքով, որոնք հոժարակամ կամեցել են մտնել պարսից թագավորի իշխանության ներքո, ի նկատի առնելով և այն, որ դրա հետևանքով Հայաստանում ոչ մի փոփոխություն չի կատարվել, այլ երկիրը պահել է յուր ինքնավարությունն՝ յուր բոլոր նախկին կարգերով, բացի հարկերից, որոնք այնուհետև գնացել են պարսից թագավորի գանձարանը, պետք է կարծել, որ հիշյալ հարկերը, դրանց տեսակները և դրանց գանձվելու կարգերը գոյություն են ունեցել և Արտաշրից առաջ, Արշակունյաց հարստության և մյուս թագավորների ժամանակ: Հիշյալ հարկերը կամ տուրքերը, տիրապես՝ հողային տուրքերը, դարձյալ դրամական տուրքեր չեն եղել, այլ բնատուրքեր:

Ավելի լրիվ տեղեկություններ մենք ունենք Երևանի սարդարության երկրի հարկատվության սիստեմի մասին, սարդարական երկրի, որի հայ գյուղերից մեկն էլ, ինչպես արդեն ասել ենք, եղել է Աշտարակը: Արդ՝ սարդարության տուրքերը բաժանվել են երկու տեսակի՝ դրամական տուրքերի և բնատուրքերի, որոնցից առաջինը սարդարական եկամտի փոքր մասն են կազմել, երկրորդը՝ մեծ մասը: Գյուղատնտեսական բոլոր ճյուղերից էլ գյուղական համայնքները պարտական են եղել մի որոշ հարկ հատուցանել. ցանքերից, այգիներից և պարտեզներից, մեղվաբուծությունից և այլն: Բացի այս հիմնական, պետական հարկերից, գոյություն են ունեցել այլ ևս բազմաթիվ, երբեմն այնպիսի մանր-մունր գանձումներ, որ դժվար է մինչև իսկ հարկերի շարքը դասել: Մինչև իսկ պարգևները՝ փեշքեշները, որոնք ընծայաբերվել են սարդարին, այնպիսի պարտադիր բնույթ են կրել, որ տուրքի հաշվի են եղել: Ամենքը պարտական են եղել Նովրուզի (Նոր տարի) և Ռամազանի (տոն 30-օրյա պահեցողությունից հետո) տոներին որոշ ընծաներ տալ սարդարին՝ մետաքսե, բրդե գործվածքներ, դրամական նվերներ, գառ և ոչխար և, մինչև իսկ, հավ և ձու: Այսպիսի պարգևներ առել են ինքը սարդարը և նրա կարգած աստիճանավորները: Սարդարի եկամտի մի զգալի մասն էլ կազմել են ջարիմա-ները (տուգանքները), որ առնվել են թե՛ բրեական հանցանքների և թե՛ այլ իրավախախտման (правонарушение) գործերի համար:

Եվ այդ բոլորը մտել է սարդարի գանձարանը, իսկ ինքը սարդարն ոչինչ չի ծախսել երկրի բարեկարգության և ժողովրդի բարեկեցության գործերի վրա: Նա, ճիշտ է, առանձնապես ուշադրություն է դարձրել ռազմական վերաբերյալ կառուցվածքների վրա, բայց դրանք բոլորն էլ շինվել են ժողովրդի ձեռքով՝ պարհակային կարգով: Սարդարն յուր ծախքով միայն անց<կաց>րել է ջրանցքներ, որովհետև այդ մահմեդական իրավունքի տեսակետից աստվածահաճո գործ է համարվել:

Մինչև իսկ երկրի կառավարությունը սարդարի վերա փող չի նստել. վարչական պաշտոնների հետ կապված են եղել և որոշ գանձումներ, որ պաշտոնյաները գանձել են ժողովրդից իրենց համար՝ միրաբ-ները (ջրպետ), սարքյար-ները, գավառական նայիբները և, մինչև իսկ, յասաղուլ-ները։ Սարդարը ռոճիկ է հատուցել միայն յուր միրզա-ներին (քարտուղար), բայց և նրանց արգելված չի եղել որոշ ընծաներ ընդունել ժողովրդից, նամանավանդ, երբ նրանք գործուղված են եղել սարդարության մահալ-ները (գավառ)։

Բոլոր գանձումներից, որոնք գանձվել են հօգուտ սարդարի գանձարանի, կարող էին հարկերին վերաբերել, հարկ համարվել, տեխնիկական մտքով, միայն հետևյալները՝ բահրա-ն (բահրակ), որ բնատուրք է եղել և առնվել է բերքերից որոշ մասերով։ Նրա չափը, քանակն որոշ մշտական ու կայուն մեծություն չի ունեցել, այլ փոփոխական. նա տատանվել է $^{3}/_{30}$ և $^{15}/_{30}$, և մինչև իսկ $^{20}/_{30}$-ի մեջ, ցորենի, գարու, կորեկի, վուշի և այլ բերքերից, $^{0}/_{30}$, մետաքսի և բամբակի բերքերից։ Բահրայի բնորոշ հատկությունն այն է եղել, որ նա առնվել է ոչ միայն հատիկներից, այլև ծղնոտից, հարդից և առվույտից և այդ՝ նույն իսկ չափով, որ առնվել է և հատիկներից, այն է՝ $^{3}/_{30}$, $^{15}/_{30}$, $^{20}/_{30}$ խոտի խուրձերի ընդհանուր թվից։ Հաճախ սարդարը արոտի և ծղնոտի բահրայի փոխարեն պարտադրել է համայնքներին՝ պահել որոշ թվով եղջյուրավոր անասուններ կամ ձիեր, և այդ՝ այն պայմանով, որ նրանք իրենց վերցրած անասունները վերադարձնեին ամբողջությամբ, անպակաս, այլևայլ պատահարներից, համաճարակներից մահանալու հանգամանքն էլ ի նկատի չեն առնվել, այդ բոլորին պատասխանատու են համարվել պահողները։

Հարկվել են, ինչպես տեսանք, ոչ միայն երկրագործության բերքերը՝ հացահատիկները, այլև գյուղատնտեսության և մյուս ճյուղերը, և, առաջին հերթին, պարտեզներն ու այգիները։ Այգիների ու պարտեզների բերքի հարկը, որ կոչվել է բաղ փուլի, ըստ մեծի մասին առնվել են դրամով կամ դրամական եկամտի չափով՝ $^{1}/_{11}$, կամ այգիներից ու պարտեզներից հասանելիք բահրայի չափով, կամ ծառերի թվով և կամ, վերջապես, այգու և պարտեզի բռնած տեղի տարածության համեմատությամբ։ Մի խալվարեն տեղ բռնած այգին, օրինակ, հարկվել է 14 ռուբլիով, որ անում է 72 ռուբլի* դեսյատինից. ամեն մի պտղատու ծառից հատուցել են 2 կոպ., ընկույզի (պոպոք) ծառից՝ 36 կոպ. և այլն։ Որ սարդարն այգիների ու պարտեզների բահրան հաճախ փոխանակել է դրամականի կամ, լավ է ասել, պահանջել ու ստացել է դրամով, այդ հասկանալի է, եթե ի նկատի առնենք այն հանգամանքը, որ խաղողը և մյուս պտուղները շուտ փչացող ապրանք են, և նրանց երկար ժամանակ պահել

* Նախապես՝ 62,9 ռուբլի, հետո ուղղված է՝ 72—Պ. Հ.։

կարելի չի եղել, նամանավանդ որ խաղողն ու պտուղներն այնքան առատ են եղել, որ նրանք սարդարի աչքին մի առանձին գին չեն ունեցել, և ավելի ձեռնտու է եղել նրա համար դրամով ստանալ դրանց բահրան։

Մուլքադարական գյուղացիները նույն կացությունն են ունեցել, ինչպիսին ունեցել են ընդհանրապես և սարդարի գյուղական ռահաթները. նրանց վերա դրված հարկերն իրենց տեսակով ու քանակով ոչ մի բանով ավելի կամ պակաս չեն եղել, քան սարդարին պատկանած գյուղացիներինը։ Մուլքադարական իրավունքը, ըստ յուր էության, այն է եղել, որ սարդարներն այս կամ այն գյուղը շնորհել են իրենց ծառայող դասակարգի ներկայացուցիչներին։ Նրանց իրավունքներն իրենց տված գյուղերի վերա, ըստ մեծի մասին, այն է եղել, որ նրանք ստացել են գյուղի բահրան. նրանց, բացի դրանից, տրամադրվել է և մի առանձին հողամաս, որ կոչվել է ախչա։ Այդ ախչա հողամասը շատ սակավ է պատահել, որ 2 խալվարեն տեղից ավելի լիներ, որ անում է 4—5 դեսյատին. ախչաների տարածությունը, ըստ մեծի մասին, 4—10 խալվարեն տեղից ավելի չի եղել, այսինքն՝ 9—22$^{1}/_{2}$ դեսյատին։ Այդ հողամասը մուլքադարի լիակատար իրավունքի կամ տրամադրության տակ է գտնվել, և նա, իբրև կալվածատեր, այդ հողի վերա կամ յուր սեփական տնտեսությունն է կազմակերպել և, մյուս գյուղացիների պես, պարապել է վարուցանքով, կամ վարձու է տվել յուր հողամասը գյուղացիներին կիսարարության կարգով։ Գյուղի մյուս հողերի վերա նա ոչ մի իրավունք չի ունեցել. նա իրավունք չի ունեցել նույնպես խառնվելու համայնքի ներքին գործերին ու կարգերին. հողաբաժանությունը, հարկաբաժանությունը, դատն ու դատաստանը, այդ բոլորն ազատ է եղել կալվածատիրոջ ուղղակի կամ կողմնակի մասնակցությունից։ Կալվածատերը, բացի բահրա ստանալուց, ուրիշ արտոնություններ և իշխանություն գյուղացիների վերա չի ունեցել։ Նրան հասանելիք բահրայի չափն Երևանի սարդարության մեջ, ընդհանուր բերքից, տատանվել է $^{6}/_{10}$, $^{7}/_{20}$, $^{3}/_{30}$, $^{4}/_{30}$ և $^{12}/_{30}$-ի մեջ։

Բացի այն հարկերից, որոնք մտել են սարդարի գանձարանը, գոյություն է ունեցել և մի առանձին տուրք, որ կոչվել է կոլլուղ փուլի- ծառայության փող, որ հատկացված է եղել, իբրև վարձատրություն, սարդարի ծառայողներին՝ դարղերին (կալվածի կառավարիչ), դարուղաներին (սարդարի կարգած գյուղապետ), յասաղուլներին։ Մենք արդեն ասացինք, որ սարդարը քիչ է պատահել, որ ռոճիկ սահմանած լիներ յուր աստիճանավորներին. երկրի ամբողջ վարչությունը պահվել է ժողովրդի հաշվով։ Հայ տոհմական մելիքները վարձատրություն են ստացել հայ համայնքներից, հարկահավաքները գանձել են իրենց համար մի առանձին տուրք, որ կազմել է հարկագումարի 4%—7%-ը. յասաղուլները ստացել են դրճախլըխ (սմբակային) 25 կոպ. գումարից։ Այս վերջին տուրքը գանձվել է այն զավեշտական պատճառաբանությամբ,

որ յասաղուլն յուր ծառայության համար կատարած ուղևորումների վրա իբրև թե փչացրել է յուր ձիու սմբակները, ուստի և յուր կրած վնասը պետք է վարձահատուցված լիներ: Սարքյարների համար սահմանված է եղել մի առանձին տուրք, որ կոչվել է չիլյակ. դա հավասար է եղել ցորենի, գարու և այլ բերքերի 1/30 մասին:

Այս տուրքերով դեռ չի սպառվել շինականության հարկումը. շինականությունը կոչված է եղել կատարելու մի շարք անձնական ծառայություններ, որոնք կոչվել են օլամա կամ բեգարա: Այդ ծառայություններից մի քանիսն ունեցել են հասարակական և պետական խորհուրդ, մի քանիսն էլ սահմանված են եղել սարդարի անձնական նպատակների համար: Առաջին տեսակի ծառայությունների թվին պատկանել են բերդերի կառուցումը, ճանապարհներ շինելը, ոռոգման առուներ հանելը և արվեստական ջրամբարներ շինելը: Բերդեր կառուցանելու գործի համար կանչվել են սարդարության բոլոր գյուղերը, սակայն շատ հեռավոր համայնքները, սովորաբար, իրավունք են ունեցել իրենց աշխատանքը փոխանակելու դրամով: Մեծ ճանապարհների շինության և վերանորոգության պարտականությունը դրված է եղել դրանց մոտ գտնված գյուղերի համայնքների վրա: Ինչ վերաբերում է առուների հանման գործին, դրան մասնակցել են միայն նրանք, որոնք ինքյանք էլ պետք է օգտվեին առվի ջրից՝ իրենց արտերը ջրելու համար: Թե որքան ծանր է եղել զանազան ոռոգման կառուցվածքների գործն, այդ կարելի է տեսնել Երևանի Դալմայի ջրանցքի վերականգնման գործից, որ պահանջել է մի քանի հազար բանվոր, մի քանի տարի շարունակ: Սակայն ժողովուրդը դժգոհ չի եղել այդպիսի ոռոգման վերաբերյալ ծանր աշխատանքներից, որովհետև հենց յուր բարեկեցությունն էլ կախյալ է եղել հողի ոռոգումից: Նույնը չի եղել գյուղացիների վերաբերմունքը բերդեր շինելու վերաբերմամբ, որովհետև այդ բերդերը ծառայելով սարդարի տիրապետության ապահովելուն՝ էլ ավելի նպաստել են նրանց ստրկացման գործին:

Անձնական ծառայությունները՝ օլաման և բեգարան, որոնք սահմանված են եղել սարդարի անձնական նպատակների համար, եղել են սայլեր հանելը սարդարի ցորենը կենտրոնական շտեմարաններ կրելու համար և ձիեր տալը սարդարի աստիճանավորներին, որոնք նրա հրամանով երթևեկում էին նրա հանձնարարությունները կատարելու համար, հեռավոր լեռներում գտնված անտառներից փայտ և ածուխ կրելը, սարդարական տեղական ամբարների կառուցումը և այլն և այլն: Սարդարը ջրանցքներ անցկացնելով ամայի հողերը՝ նրանց վրա է ածել խալիսաների և մազրաների, այսինքն՝ յուր սեփականության է դարձրել: Նա այդ հողերն օգտագործել է զանազան եղանակով: Նա նրանց վրա կամ բնակեցրել է հող չունեցող գյուղացիներ՝ յարիֆ-յարիական և ռաշպարական իրավունքով, կամ նրանց վրա կազմակերպել

է յուր սեփական տնտեսությունը լիակատար ինվենտարով, կամ, վերջապես, տնտեսական բոլոր աշխատանքը դրել է սարդարության ամբողջ հարկատու բնակչության վրա: Ամբողջ աշխատանքը, վերջին դեպքում, ինչպես, օրինակ՝ հողի մշակումը, ոռոգումը, հունձը, բերքի հավաքումը, կալսումը և, մինչև իսկ, հացահատիկի կրելը սարդարի շտեմարաններն, ամբողջապես և պարտադրաբար, դրված է եղել գյուղացիների վրա: Յուրաքանչյուր համայնք, սահմանված ժամանակ, յասաղուլների գալուն և պահանջելուն պես, պարտական է եղել հանել որոշ թվով արորներ, գութաններ, հնձող, կալսող և այլն:

Օլաման և բեգարան սրանցով էլ դեռ չի սահմանափակվել. ժողովուրդը պարտական է եղել կատարել և ոստիկանական ծառայություն, որովհետև խաղաղության պահպանության գործը թե՛ գյուղացիների և թե՛ քաղաքացիների պարտականություններից մեկն է եղել: Արևելքում եղած հանրային երաշխավորության կարգի (круговая порука) հետևանքով՝ ամեն մի համայնք պատասխանատու է եղել և տուգանք վճարել այն հանցանքների համար, որոնք կատարվել են գյուղի սահմաններում և նրա հողերում, եթե միայն իսկական հանցավորը կարողացել է ժամանակին փախչել, ծողոպրել: Այդպիսի տուգանքները կամ ջարմանները կամայական են եղել. դրանց մի մասը տրվել է վնասվածին, իբրև հատուցումն, մյուսը մտել է սարդարի գանձարանը, եթե ինքը սարդարն է քննել գործը, իսկ եթե գործի քննությունը սարդարի պատվերով հանձնված է եղել դավառի կամ մահալի վարչության, տրվել է նրան, այդ վարչության: Համայնքներն այդ տուգանքներից ազատվելու համար ամեն միջոցներով աշխատել են առիթ չտալ այդպիսի պահանջներին, ուստի և կամ ինքյանք որոշ թվով, հերթով զինյալ պահապաններ են հանել, կամ դրա համար առանձին պահապաններ՝ հասասներ են վարձել, որոնք և պարտական են եղել ճավարի դեպքերում օգնության հասնել: Եթե գյուղի շրջակայքում ավազակները հարձակվել են կարավանների կամ ճանապարհորդների վրա, հարձակման ենթարկվողների ճավարը լսելուն պես պահապանները հասել են օգնության և հետապնդել: Այդպիսի հետապնդումների մասնակից է եղել բովանդակ գյուղը, ամեն մի տղամարդ, որ ընդունակ է եղել զենք կրել: Ոստիկանական այդպիսի ծառայությունը թեև մի ծանր բեռն է եղել համայնքների համար, բայց ունեցել է այն լավ կողմը, որ գյուղական համայնքները ինքյանք, հավաքաբար հետապնդելով ավազակությունը՝ պահպանել են իրենց երկրի խաղաղությունը և իրենց կյանքի հանգստությունն ու անդորրությունը, մի բան, որ դժվար թե կարողանար անել սարդարական կառավարությունը:

Ի՞նչպես են հավաքվել հարկերը:

Հարկերի ցուցակն ամեն մի համայնքի համար ինքը՝ սարդարն է ամեն տարի կազմել: Դրա համար հարկավոր է եղել, նախ և առաջ, հայտաբերել ամեն մի համայնքի մեջ եղած ծխերի թիվը, որովհետև հարկատվության ենթակա

է եղել ամեն մի ծուխ, իբրև այդպիսին: Այդ սարդարի համար դժվար չի եղել. նրա յասաղուլները միրզաների ընկերակցությամբ, միշտ և հանապազ, շրջում են եղել սարդարության մեջ՝ կամ սովորական հարկերի գանձման համար, կամ սարդարի հրամանները տանուտերներին հաղորդելու համար, կամ համայնքների քանի հոգուց բաղկացած լինելը ստուգելու համար և կամ, վերջապես, տնտեսությունների վիճակը նկարագրելու համար: Հասկանալի պիտի լինի, ուրեմն, որ սարդարը քաջ տեղյակ է եղել ժողովրդի տնտեսական կացության հանգամանքներին: Ծխերի թվի համեմատ էլ նա բաշխել է դրամական և հացահատիկների հարկը գյուղերի վերա, նախապես հանելով ցուցակից հոգևորականներին, թարխաններին (մելիքներին, բեկերին և աղալարներին), տանուտերներին, գզիրին և, մինչև իսկ, վարսավիրներին: Թարխան են համարվել, այսինքն՝ հարկերից ազատ են եղել, և այրիները, որբերը, միայնակ ծերունիները, անաշխատունակները, մուրացկանները և հաշմանդամները, որոնք Արևելքում կոչվել են Աստուծուց զրկված մարդիկ:

Ցուցակների այսպես պատրաստվելուց հետո, սարդարն յուր յասաղուլների և միրզաների միջոցով հաղորդել է գյուղերի տանուտերներին՝ նրանց կառավարած համայնքներից հասանելիք հարկերի չափը, որոնք և ցուցակները կամ հրամանը ստանալուն պես ձեռնարկել են իրենց ձեռքի տակ գտնված համայնքների մեջ բաժանել հարկը: Այդպիսի հարկաբաժանությունը համայնքներում կատարվել է կամ հասարակական ժողովի մեջ, կամ տանուտերների ու ոռոգման գործին հսկող ընտրովի մարմինների ձեռքով: Վերջին դեպքում պահանջվել է, որ տանուտերի ու նրա ընկերների կատարածն անհրաժեշտորեն ստուգված և հաստատված լինի հասարակական ժողովի կողմից: Հարկահավաքությունը տեղի է ունեցել սովորաբար աշնանը:

Սրանից ակներև է, որ սարդարը և նրա կառավարիչ մարմինները չեն խառնվել հարկաբաժանության գործին, և համայնքներն այդ կողմից լիակատար ազատություն են վայելել: Համայնքի մեջ հարկատվության նյութակա է եղել ոչ ծուխը, որպես այդպիսին, այլ համբան, չարեքը և հողաբաժանման այլ միավորները, նայելով թե սարդարության մեջ ո՛րտեղ ինչ հողաբաժանման եղանակն է ընդունված եղել, որովհետև գյուղացիք բոլոր հարկերը և պարտադիր ծառայությունները (ПОВИННОСТИ) սովորություն են ունեցել փոխադրելու հողի վերա և այդ միջոցով հասել հարկատվության բեռի ծանրության հավասարեցման. հարկերն ընկել են հատուցողների վերա, նրանց տիրած հողի քանակի համեմատությամբ:

Ո՛չ թե միայն հարկերը, այլև մյուս բոլոր դրամական տուրքերի գանձումը և տանել-հասցնելն էլ սարդարի գանձարանը կատարվել է մելիքների, տանուտերների, տոհմապետների, երբեմն և մուլքադարների ձեռքով, և այդ այն պատճառով, որ գյուղացիք չեն ցանկացել հատուցանել հարկահավաքների

համար սահմանված տուրքերը և ինքյանք շտապել են յուր ժամանակին հատուցած լինել գանձարանին հասանելիքը և դրանով առաջն առած լինել հարկահավաքի գյուղ գալուն-գնալուն, որ կապված է եղել շատ անախորժությունների հետ: Սարդարն էլ յուր կողմից հսկողություն ունենալու և հարկերն երկրորդ անգամ ժողովրդից պահանջելու առաջն առնելու համար սահմանած է եղել դրամական հարկագիր գանձումների ընդունելության համար մի որոշ կարգ՝ հարկերի մուծելու միջոցին հատուցանողներին տվել են անդորրագրեր: Այնուհետև գավառապետները շրջել են իրենց գավառները, հավաքել են անդորրագրերը և տարել, հանձնել սարդարին:

Նույն հիմունքով ու կարգով կատարվել են անձնական հարկագիր ծառայությունները՝ օլաման և բեգարը: Սարդարը ծխերի թվի համեմատ սահմանել է արբաների, հեծվորների, խոտհարների և բանվորների թիվը, որոնք ընկնում էին յուրաքանչյուր համայնքի վերա, իսկ բուն ծառայության կարգի սահմանումն արդեն կախյալ է եղել համայնքից, որ ինքն է որոշել խմբակները, որոնք հերթով աշխատանքի պետք է գնային: Այդ համայնքի ներքին գործն է եղել, և սարդարը չի խառնվել այդ գործին. նրա համար միևնույնն է եղել, թե համայնքն ի՛նչ կարգով է կատարելու սահմանված և պահանջված ծառայությունը. նա պահանջել է միայն, որ հարկավոր ծառայությունը ժամանակին կատարված լինի:

Բոլորովին այլ կարգով է կատարվել բնատուրքի գանձումը՝ բահրան, որ պատկանում էր սարդարի գանձարանին: Այդ գանձումն եղել է ցորենի և գյուղատնտեսության այս կամ այն առանձին ճյուղերի բերքերից: Այդ դեպքում սարդարը նմանել է մի մասնավոր, մեծ կալվածատիրոջ. նա նայել է պետական կալվածների վերա, ինչպես յուր սեփական անշարժ կայքի վերա, և տարվա հաջող կամ ձախող բերքի համեմատ էլ բահրա է ստացել՝ մի տարի շատ, մյուս տարի քիչ, նայելով հանգամանքներին, թե ի՛նչպիսի բերք է եղել: Այգիներից, պարտեզներից և անասուններից հասանելիք գանձումները, սակայն, ստացվել են դրամով, և այն՝ կանոնավորապես: Միայն գյուղում ապրող հողազուրկները և վարձու աշխատողներն են եղել, որոնք բանվորություն են արել և չեն ենթարկվել ո՛չ ծառայության, ո՛չ էլ հարկատվության՝ բեքարանները և ռաշպարները:

Գյուղացին, հաշվի առնելով յուր տրամադրության տակ գտնված ոռոգման ջրի քանակը, իրավունք է ունեցել ավելացնելու կամ կրճատելու յուր վարուցանքի չափը, եթե միայն համայնքը հակառակ չի եղել: Համայնքի ամեն մի անդամ մինչև իսկ իրավունք է ունեցել բոլորովին հրաժարվել հողից, և համայնքը հարկավոր չի համարել հարկադրել նրան, որ չհրաժարվի, ընդունի հողը, քանի որ հանրային երաշխավորության կարգը գոյություն չի ունեցել այդպիսի դեպքերի համար, և համագյուղացիները պատասխանատու, երաշ-

խավոր չեն համարվել, պարտական չեն եղել նրա չօգտագործած հողից ստացվելիք բահրան ֆինքյանք վճարելու <...>

Բերք թաքցնելու առաջն առնելու համար սարդարը խիստ հսկողություն է ունեցել սարքյարների միջոցով գյուղացիների բոլոր տնտեսական գործողությունների վերա։ Բացի դաշտերի մշակման, ցանքի ու ոռոգման աշխատանքներից, գյուղացու մյուս բոլոր դաշտային աշխատանքները՝ խոտհարքը, ցորենի հունձը, հավաքումը, կալսումը և այլն, կատարվել են սարդարի սարքյարների արթուն հսկողության ներքո, սարքյարների, որոնք կարգվում են եղել գյուղերում։ Այդ սարքյարների գործունեությունը շատ գեղեցիկ և ճշտորեն նկարագրել ու բնավորութագրել է յուր «Исторический памятник состояния Армянской области» գրվածքի մեջ հայտնի Ի. Շոպենը (տե՛ս այդ գրվածքի 1131—1133 էջերը)։

«Գարնանը,— ասում է նա,— երբ մարգագետիններն սկսում էին կանաչ հագնել, կարգվում էին ամեն մի գյուղում մի-մի, երբեմն և՝ երկու-երկու կամ ավելի հարկահավաք, որոնք կոչվում էին սարքյարներ։ Երբեմն էլ մի քանի փոքր, իրար մոտ գտնված գյուղերում կարգվում էր մի սարքյար։ Սարքյարները երկու տեսակ էին լինում. մի քանիսին կարգում էր ինքը՝ սարդարն այն գյուղերում, որտեղ նա նկատած էր լինում հարկերի նվազում նախկին տարիների համեմատությամբ, մի քանիսն էլ կարգվում էին գավառապետների կողմից։ Սարդարը հետևելով հարկահավաքման գործին, հաճախ փոխանակում էր յուր կարգած սարքյարներին գավառապետների կարգածների հետ, և թույլ էր տալիս՝ նույնն անելու և գավառապետներին յուր կարգածների վերաբերմամբ։ Յուր այսպիսի դիվանագիտական տնօրենությամբ նա հարուցանում էր նրանց մեջ մրցումն՝ արմատախիլ անելու հարկահավաքման գործի մեջ սպրդած չարագործությունները։

Սարքյարը, սովորաբար, ժամանում էր յուր համար նշանակված գյուղը մայիսին, որտեղ նրա առաջին գործն էր լինում հայտաբերել ամեն մի բնակչի, առանձին-առանձին, ցանքի չափը կամ քանակը. ցանքը հավաքելու ժամանակ բերքի մի մասը բաժանվում, մի կողմ էր դրվում հնձողի համար, եթե մինչև իսկ հնձողը հանդիսանում էր նույն իսկ ինքը՝ ցանքի տերը. այդ մասը ցորենից և գարուց հավասար էր լինում $^1/_{10}$-ի, իսկ չալթուկից ու բամբակից՝ $^1/_{20}$-ի։ Սակայն, հարկի այդ մասից չզրկված լինելու համար, սարդարը պահանջում և ստանում էր դույն մասից մի տասներորդը կամ 34-ական շահի մարդագլուխ, մի բան, որ նպաստում էր բերքի ստուգման գործին։

Երբ սկսում էին կալսել, սարքյարը հետևում էր կալերի պատրաստման գործին, հսկում էր, որ նրանք բոլորը մի տեղ շինված լինեն, գյուղից կես վերստ հեռու, ոչ ավելի. բոլոր կալերի մեջտեղը շինվում էր մի աշտարակաձև շինություն (каланча́), որի վերայից սարքյարը հսկում էր, որ բնակիչները

տուն չտանեին դեռ չչափված ցորենը։ Ամեն երեկո, կալսելու ու քամելու աշխատանքներից հետո, բերքը հավաքվում էր կալերում մեծ-մեծ կույտերով, և սարքյարը դաջում էր, այսինքն՝ կույտերի շուրջը և գագաթը կնքում էր կնքամման տախտակով, և գիշերը պահապան էր դնում կալերում՝ դաջերի անխախտ մնացած լինելու վերա հսկելու համար։ Մյուս օրը սարքյարը ստուգում էր յուր կնիքը կույտերի վերա, և գողության դեպքերում, որ շատ սակավ էր տեղի ունեցած լինում, խմաց էր տալիս գավառապետին՝ քննություն բանալու և հանցավորի դեմ պահանջ հարուցանելու համար. իսկ եթե ամեն բան կարգին ու տեղն էր գտնում, նա դնում էր յուր տեղը։

Ցորենի կալսելուց, քամելուց և ամեն բան վերջացնելուց հետո բնակիչները և սարքյարը ձեռնարկում էին բոլոր բերքի չափելուն։ Բահրամյարականյարի-գյուղերից սարդարն առնում էր ամեն մի 30 մասից տասական մաս, և ֆյարականներից՝ նախապես թողնելով հաջորդ տարվա սերմացուի համար 15-ական մասը, մնացյալ բոլորն ածել էր տալիս գյուղի պետական շտեմարանը, որի դռներն այդ ժամանակ փակված ու կնքված էին լինում. բերքը լցնում էին նրա մեջ վերևից, այնպես որ մեջը լցնել կարելի էր, բայց ո՛չ հանել։

Երբ այսպես ամեն մի բերք հավաքված ու լցված էր լինում գյուղական շտեմարանը, գավառապետը կամ նրա միրզան, կամ խանի հանձնարարությամբ մի այլ անձն, սարքյարի, գյուղի տանուտերի և քահանայի կամ մոլլայի ներկայությամբ հանում էր կնիքը, բաց էր անում շտեմարանը և չափելով հայտաբերում էր մեջը լցված բերքի քանակը (մուլքադարական գյուղերում այդ միջոցին ներկա էր գտնվում և ինքը մուլքադարը, որի բաժինը հենց այդ ժամանակն էլ չափվում, տրվում էր իրեն)։ Այս բոլորը վերջանալուց հետո, գյուղացիները պարտական էին պետական հարկն իրենց սայլերով ու գրաստներով կրել, տանել, ուր որ նշանակեին... գյուղացիները, որոնք իրենց չքավորության կամ գրաստ չունենալու պատճառով ի վիճակի չէին հարկի իրենց մասը կրել, տանել շտեմարանը, այդ պարտականությունից ազատ էին կացուցվում, և սարդարը կրում էր նրանց բաժինը կամ յուր սեփական գրաստներով, կամ դրացի գյուղացիների գրաստներով՝ պարհակային կարգով (по наряду)»։

ժամանակամիջոցում, և ի՞նչպես են նրանք վարվել գյուղացիների հետ։

Ի՞նչպես են ապրել սարքյարները գյուղերում, իրենց հարկահավաքության

Այդ մասին մեզ լիակատար տեղեկություն է հաղորդում գերմանացի ճանապարհորդ Հաքստհաուզենը խաչատուր Աբովյանի՝ իրեն հաղորդածի հիման վրա։ Աբովյանը 40-ական թվականներին Հաքստ-

հաուզենին հաղորդել է.— «Մեր գյուղը (Քանաքեռ),— ամեն տարի, ամառը գալիս էր <սարդարի> սարքյարը՝ պետությանը պատկանած ցորենի մասը հավաքելու համար։ <Գյու-

ղացիներից> այդ հասարակ, պարզ պարտքը ստանալու համար, որ պահանջում էր ո՛չ երկար ժամանակ, նա մնում էր գյուղում երեք-չորս ամիս։ Այդ ժամանակամիջոցում նրան տրվում էր գյուղի ամենալավ բնակարանը. նա պահանջում էր տալ իրեն մի հոգացող ծառա և ընտիր սնունդ՝ յուր ծառաների համար, և կեր՝ ձիերի համար։ Նրա համար ամեն օր նրա բնակարանն բերում էին ամենալավ մթերքները՝ հավ, ձու, կարագ, միս և այլն, մինչև իսկ և գինի, որովհետև ոչ ամենքն արհամարհում էին այդ ըմպելիքը։ Գյուղական ծառայողն ամեն օր, տնետուն ընկած՝ շրջում էր, որպեսզի կարողանա ճարել բոլորը, ինչ որ հարկավոր էր։ Նրան, սովորաբար, ուղեկցում էր սարքյարի ծառան, որ մտրակը ձեռին դրդում էր նրան կամ պատժում, եթե նկատում էր. որ նա դանդաղում է. նա ծեծում ու հարվածում էր նրան, առաջը ձգած քշում էր, անթիվ, անհամար հայհոյանքներ թափելով նրա գլխին. հայհոյանքներ, որոնցով այնքան առատ է թուրքերեն լեզուն մյուս լեզուների համեմատությամբ։ Երբ որ տնատերն իսկույն չէր տալիս բոլոր պահանջածը, այդ մարդը գազանացած կատաղությամբ տուն էր ընկնում, ջարդուփշուր էր անում ամեն բան, ծեծում էր ամենքին, խտրություն չանելով ո՛չ հասակի, ո՛չ էլ սեռի մեջ» (տե՛ս «Закавказский край» А. Гакстгаузена, часть *I*, стр. 185—186)։

Բայց, իհարկե, սարդարի բոլոր ատրճանավորներն այնպես չեն եղել, ինչպիսին եղել են Աբովյանի նկարագրած սարքյարները։ Նրանց մեջ եղել են և մարդիկ, որոնք շատ բարի և լավ կառավարիչներ են եղել և ժողովրդի սերն ու հարգանքը վայելել։ Աշտարակում պահպանվել է հիշողություն մի Սաֆար Ալի բեկ անունով ատրճանավորի մասին, որ չորս տարի շարունակ ապրել է յուր ընտանիքով գյուղում և յուր բարեհամբույր վարվեցողությամբ և անշահասեր գործունեությամբ ամենալավ անունը թողել։ Թե դա ի՞նչ ատրճանավոր է եղել, որոշակի չի հիշատակվում։ Ասում են միայն, որ սարդարը նրան ուղարկած է եղել Աշտարակ՝ գյուղացիներին հափշտակություններից, գողություններից և այլ չարագործություններից պաշտպանելու համար։ Աշտարակի շրջակայքում, Արագածի լանջերին, ապրելիս են եղել զանազան ավազակաբարո ցեղեր՝ Ախսախլու, Սեիդլու, Մուղանլու, որոնց գլխավոր պարապմունքն ավազակությունն է եղել։ Դրանք այնքան հանդուգն են եղել, այնքան վստահ ու համարձակ, որ չեն քաշվել մինչև իսկ, օրը ցերեկով, մտնել գյուղացիների այգիները և ուղեցածների չափ խաղող քաղել, բառնալ իրենց գրաստներին ու հեռանալ։ Եթե այգետերերն արգելել են, նրանք հեռացել են, բայց գիշերը վերադարձել են իրենց ընկերների հետ և կոտրատել, արմատախիլ արել այգին։ Այդ և դրա նման չարիքի առաջն առնելու համար, ինչպես մենք տեսանք, գոյություն ուներ գյուղերում և դրանց հողերի սահմաններում երևան եկած հանցագործություններն իրենց՝ գյուղացիների հանրային երաշխավորության կարգով խափանելու, ոչնչացնելու պարտադիր օրենքը։ Բայց, ինչպես երե-

վում է, Աշտարակում ստեղծված է եղել մի այնպիսի բացառիկ կացություն, որ սարդարը ստիպված է եղել դրա համար երկար ժամանակով մի առանձին մարդ ուղարկել գյուղը պաշտպանելու համար՝ արմատական միջոցներ ձեռք առնելու հրահանգով։

Դա, այդ Սաֆար Ալի բեկը, միանգամայն կտրել է ավազակների ոտքն Աշտարակից և ազատել գյուղացոց այգիները, ինչքն ու ստացվածքը հափշտակությունից։ Թե ի՞նչպիսի խիստ միջոցներ է գործադրել նա, որ կարողացել է հասնել այդ նպատակին, այդ կարելի է տեսնել այն ավանդությունից, որ պատմում են։ Մի օր, ասում են, Բեկը տեսել է մի թուրք, որ ձեռքին մի տոպրակ մածուն բռնած՝ անցնում է եղել գեղամիջով։ Նա հարցրել է, թե ո՞ւր է տանում այդ մածունը։ Թուրքը պատասխանել է, թե մածունն ինքն ընծա է բերել յուր խոճախս Ազգենց [՞] Սահակի համար։ Հա՜ա՜, բարկանում է Բեկը, դու բերել ես այդ չնչին մածունը, որ դրա փոխարեն խեղճ հայից մի բեռը խաղո՞ղ պոկես։ Եվ հրամայում է նա յուր մարդկանց՝ մածունը շուռ տալ նրա գլխին և այդ վիճակի մեջ, երեք օր շարունակ, ծառից կապած պահել։

Ահա՛ այն պետական հարկերը և պարտադիր գանձումները (сборы), որ հատուցել են, և պարտադիր ծառայությունները, որ կատարել են սարդարության բոլոր առաջին կարգի ռահաթ համարված գյուղերը, որոնց թվում և Աշտարակը։ Աշտարակցիք բամբակ, չալթուկ (չծեծված բրինձ) և վուշ չեն ցանել, ուստի և ազատ են եղել դրանցից հատուցանելիք բահրայից, նրանք անասնապահությամբ և մետաքսագործությամբ էլ չեն պարապել, ուստի և դրանց համար էլ հարկ չեն վճարել։ Աշտարակցիք գլխավորապես վճարել են, իբրև այգեգործ ռահաթ, բաղափուլի, և այդ՝ դրամով, որ բովչի են արել, և իրենց տանուտերների ձեռքով ժամանակին հանձնել սարդարի գանձարանին, և պատաշաճ անդորրագիր ստացել, որի հետևանքով և հարկահանները շատ էլ հաճախ չեն գնացել-եկել գյուղը, իսկ Աբովյանի նկարագրածի պես սարքյարները, ինչպես երևում է, բոլորովին չեն ուղարկվել Աշտարակ. այդ մասին, գոնե, ոչ մի հիշողություն չի պահպանվել, մի բան, որ, եթե եղած լիներ, անկարելի է, որ յուր մասին մի որևէ հիշողություն թողած չլիներ։

Աշտարակում հիշողություններ են պահպանվել այն մասին, թե ինչպես են կոռուբեգարության կարգով աշխատեցրել ժողովրդին, երբ Հյուսեին խան սարդարը, Երևանի առումից մի 10—12 տարի առաջ, շինելիս է եղել Արաբ և բարձր, հաստաբեստ աշտարակներով ու դարպասներով։ Գյուղացիները, որոնց թվում և աշտարակցիք, որոնցից ամեն անգամ տանում են եղել աշխատանքի 20-ական հոգի հերթով, աշխատել են զարհուրելի տանջանքների մեջ, առավոտյան ծեգից մինչև երեկոյան արևամուտքը, խեղդվելով շոգից, և առվի

տաքացած, մամռոտ ջուրը խմելով՝ աշխատել են մարակավոր վերակացուների հսկողության ներքո, մեջքերը կորացրած և վերանները հող լցրած ու դաշած (կնքած), այնպես որ նրանք չեն համարձակվել բարձրանալ, շիտկվել, որովհետև այդ դեպքում կնիքը կքանդվեր, և այդ կանգնելու, չբանելու նշան կհամարվեր, որի համար նրանք մահու չափ գանակոծության կենթարկվեին։

Պահպանվել են և հիշողություններ, որ աշտարակցիք նույն կոռուբեգարության կարգով բանել են և յուր, սարդարի համար. նրանց է հանձնված եղել, իբրև այգեգործ մասնագետների, սարդարի Երևանի խանապատկան այգիների մշակությունը, իսկ աշտարակցի կանայք ուղարկվել են սարդարի բամբակի ցանքերը քաղհանության։

Ի՞նչ կարծիք են ունեցել հին աշտարակցիք պարսից կառավարության մասին։

Հին աշտարակցիք շատ վատ հիշողություններ են պահպանած եղել պարսից կառավարության մասին, հիշողություններ, որ նրանք սերնդե սերունդ ավանդ են թողած եղել իրենց հետնորդներին և հասցրել մինչև մեր օրերը։ «Պարսից ժամանակը,— ասում են ծերունիները,— շատ նեղության մեջ ինք։ Մեր այգիքը մերը չէր համարվում, էս մեր մոտիկ, շրջակա գյուղերի պարսիկները՝ Մուղանլու, Ախսախլու, Սեյիդլու ասված անիծած ազգերը (թուրք ցեղեր—Եր.Շ.) կգային, կմտնեին զոռով մեր այգիքը ու, որքան որ իրենց հարկավոր էր, իրենց ձեռքովը կքաղեին, կթոցները լիքը կբառնային իրենց եղներին կամ ձիերին, էնպես կտանեին, առանց վարձի, իսկ եթե կհակառակեինք չտալ, հետո, գիշերը, այն թուրքը կվերցներ իրան դրացիքը և ամբողջ այգին թփերովը կջարդեր ու կքանդեր։ Այնպես կվնասեին մեզ և կզրկեին, խաշ ու հալատ կհայհոյեին. ուրտեղ գանգատ գնային, ոչ ոք չէր լսում, էնպես գերու նման ապրում էինք թուրքերի ձեռքին։ Մանավանդ թուրքերի խաները չափազանց ճնշում էին. ում լավ ձի ուներ, խլում էին, գեղեցիկ աղջիկ ունեցողը սարսափի մեջն էր ընկած, թե էսօր կամ վաղը կգան, կխլեն, կտանեն, կթուրքացնեն, էնպես էլ գեղեցիկ կնոջ տերը ահ ու երկյուղի մեջ էր ըլնում. հարուստ, փող ունեցող մարդը, հարկավ, իրան աղքատ ու մուրացկան էր ձևացնում... Տարենը մի անգամ խաները հրաման էին հանում, թե սարդարը հայի գեղեցիկ աղջիկներ է ուզում, որ ինքը հավանի ու իրան կին առնի. էդ պատճառով՝ աղջիկները ժողովում էին մի տեղ, և խաները ժողոված աղջիկներից ջոկում էին գեղեցիկները. որը սարդարին էին տալիս և որը իրանց համար վերցնում։ Եվ այդ պատճառով՝ երբ լսում էին, թե ղըզ-եզաճ (այն է՝ աղջկա հավաքում —Եր. Շ.) պիտի ըլնի, ժողովուրդը իրենց աղջիկները մեկ-մեկի տղի վերա պսակել էին տալիս, էլ մեծ ու փոքր չէին հարցնում, միայն չհասը անկարելի էր պսակելը, մինչև յոթը պորտը անցած չլիներ, տերտերը չէր պսակիլ, թեկուզ ի ջհուտն էլ տաներ, իրան կարգը ու օրենքը կպահեր... Էս

բաները Մամմատ խանի ժամանակներն էր։ Նրանից հետը երբեմն լավ խան էր նստում Երևան և երբեմն՝ վատը» (Սարգիս Բզնունի, Ջվարճալի հարսանիք, թ. 114 բ—115 ա)։

9

<ԱՇՏԱՐԱԿԸ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ>

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ՝ ՑԻՑԻԱՆՈՎԻ ԵՎ ԳՈՒԴՈՎԻՉԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԱՌՄԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԱՌՄԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ ՔԱՇԱԾ ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿՐԱԾ ՏԱՌԱՊԱՆՔԵՐՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ԵՎ ԱՇՏԱՐԱԿՑԻՆԵՐԻ ՔԱՇԱԾՆԵՐՆ ՈՒ ԿՐԱԾՆԵՐԸ ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ

Պարսից մասի Հայաստանի հայ բնակչությունը դարերի ընթացքում այնքան ծանր կացության է ենթարկված եղել պարսից կառավարության ռեժիմից, որ ամեն մի չնչին լուր անգամ, որ հասել է նրանց քրիստոնյա երկրներից, հատկապես Ռուսաստանից, և քիչ թե շատ հույս է ներշնչել նրանց՝ ազատագրվելու այդ ռեժիմից և, ընդհանրապես, պարսից լծից, ընդունել է մեծ խանդավառությամբ։ Այդ հույսերը և դրանց առաջ բերած խանդավառությունը նամանավանդ զորեղ է եղել նրանց մեջ, որովհետև նրանք դրա հետ կապել են ոչ միայն սոսկ ազատագրումն, այսինքն՝ երկրի ռուսաց ձեռքով նվաճվելը և իրենց՝ նրանց հպատակ դառնալը, և նրանց հովանավորության ներքո խաղաղ և հանգիստ ապրելը, այլև քաղաքական ազատագրումը՝ ինքնավար Հայաստան կազմակերպվելու հանգամանքը Ռուսաստանի հովանավորության ներքո, մի հույս և՛ ակնկալիք, որ ներշնչել էին նրանց մեջ հայ քաղաքական գործիչները, սկսած Իսրայել Օրիից մինչև Ներսես Աշտարակեցին, և ռուսաց ցարերի, սկսած Պետրոս Մեծից մինչև Նիկողայոս I-ը, իրենց՝ հայ ազգին, նրա ականավորներին, նրա հոգևորականությանն ուղղած բազմաթիվ հրովարտակների մեջ արտահայտված բարեհաճ վերաբերմունքը։ Եվ այդ խանդավառությունը չի՛ սառել, չի՛ պակասել մինչև իսկ բազմաթիվ հուսախաբություններից հետո, որոնց հետևանքն այն է եղել, որ պարսից անկարգ, կամայական, բռնակալական սովորական ռեժիմը, որ գործադրվել է պարսկահպատակ բոլոր ժողովրդի վերաբերմամբ անխտիր, հայերի վերաբերմամբ հատկապես փոխվել է բացարձակ հալածանքի։

Դրանցից, այդ հալածանքներից, հատկապես տուժել է Արարատյան դաշտը՝ սարդարության երկիրը, որի հայաբնակ մասերն ենթարկվել են ավերածության, նրա գյուղերը՝ հաճախակի կատարված տեղահանության շնորհիվ, տնտեսական քայքայման, և էջմիածինը՝ բռնի սնանկացման։ Եվ այդ ոչ թե այն պատճառով, որ սարդարները վախեցել են հայ ժողովրդից, ո՛չ. հայ ժողովուրդը նրանց համար ոչ մի քաղաքական արժեք և ուժ չի ունեցել, այլ, որով-

հետև, նրանք հայերին են պատճառ համարել ռուսական արշավանքներին և սարդարության սահմաններում գտնվող նրանց կրոնական կենտրոն Էջմիածինը, իբրև նույն արշավանքների դրդապատճառ և ռուսներին հրավիրող:

Ցիցիանովի ու Գուդովիչի արշավանքներին ուղեկցել և օժանդակել է, Ներսես Աշտարակեցու պատվերով, հայտնի Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանը յուր 500 ղարաբաղցի ձիավոր գնդով, որը հայտնի է եղել յուր քաջությամբ, մի բան, որ առանձնապես զայրացրել է պարսիկներին և առիթ տվել նրանց՝ ռեպրեսիաներ գործադրելու հայերի դեմ:

Սարդարները նույն ժամանակ շատ լավ հասկացել են, որ ռուսների համար հայերն ու Էջմիածինն էլ միայն արտաքին, ձևական պատճառներ են, իսկ գլխավորը, էականը նրանց համար, Վրաստանը գրավելուց հետո, եղել է դրա սահմանների ապահովեցումը Պարսկաստանի կողմից, որ կարող էր իրագործված համարվել միայն Երևանի և Նախիջևանի խանությունների նվաճումով և Երասխ գետը սահման դարձնելով: Այդ հանգամանքը շատ վարպետորեն ձևակերպել է Երևանի սարդար Մահմադ խանը (1779—1805), որի ժամանակ տեղի է ունեցել Ցիցիանովի արշավանքը (1804). Նա մերժողական պատասխան գրելով Ցիցիանովի վերջնագրին, որի մեջ, իբրև հաշտության պայման, առաջին տեղում դրված է եղել պահանջ այդ ժամանակներն Էջմիածնի կաթողիկոսական գահի համար իրար դեմ մաքառող երկու արքեպիսկոպոսներից Դանիելին (ռուսաց կուսակից) կաթողիկոսական գահը բարձրացնել և նրա հակառակորդ Դավթին (պարսից կուսակից) ուղարկել Թիֆլիս, ասել էր. «Դու ուրիշ բան ասա, թե չէ արժե՞ երկու հայ եպիսկոպոսների համար այդքան աղմուկ հանել»:

Բայց և այնպես, պարսից կառավարությունը կամենալով և այդ պատրվակը վերացրած լինել, Ցիցիանովի անհաջող արշավանքից հետո ետ է կանչել Մահմադ խանին և 1807 թվին սարդարության պաշտոնով ուղարկել Երևան Հյուսեին Ղուլի խանին՝ հրահանգելով կատարելու ռուսների պահանջը Դանիելին կաթողիկոսական գահը բարձրացնելու վերաբերմամբ, որ և նա, յուր եղբայր Հասան խանի հետ միասին ժամանելով Երևան՝ կատարել է մեծ հանդիսավորությամբ: Եվ ոչ միայն այդ, այլև, Ֆաթ Ալի շահի թագաժառանգ Աբբաս Միրզայի հրամանով, թույլատրվել է նրան՝ Դանիել կաթողիկոսին, կրել ս. Աննայի առաջին աստիճանի շքանշանը, որ դեռ Մահմադ խանի օրերով, Ցիցիանովի արշավանքից առաջ, Ռուսաց կայսրն ուղարկել էր նրան: Չնայելով պարսից կողմից արած այդ բոլոր զիջումներին՝ հաջորդ 1808 թվի սեպտեմբերի սկզբին կատարվել է ռուսական երկրորդ՝ Գուդովիչի դարձյալ անհաջող արշավանքը, որ հետևանք է եղել ռուսաց կողմից արած չափազանց մեծ պահանջների և պարսից կողմից այդ պահանջները մերժելուն, չընդունելուն:

Թե ի՞նչ նեղություններ են քաշել և ի՞նչ տառապանքներ կրել հայ գյուղերը Ցիցիանովի արշավանքի ժամանակները, այդ կարելի է տեսնել այն նախազգուշական միջոցներից, որ գործադրել է Մահմադ խան սարդարը. Նա հայերին պատժած լինելու նպատակով, նրանց ռուսասիրության համար, թույլ է տվել մեր արդեն հիշած Մուղանլու, Ախսախլու և Սեիդլու ավազակաբարո թուրք ցեղերին անպատիժ և բացարձակ կողոպտելու հայ գյուղերը, որի հետևանքով և գյուղացիներից շատերը թողել են իրենց գյուղերը և փախել, ցրվել Շիրակի, Փամբակի, Լոռվա և Ղարսի կողմերը. Նա ամեն մի հայ գյուղից տարել, փակել է բերդում նրանց հայտնի, պատվավոր մարդկանց և խիստ հսկողության տակ պահել, իբրև պատանդներ, որ ռուսներին չօգնեն:

Աշտարակն այդ ժամանակները համարյա թե դատարկվել է յուր բնակչությունից. դրանց մի մասը չդիմանալով ամենօրյա հարձակումներին և կողոպտումներին, հետևել է մյուս գյուղացիների օրինակին և փախել, ցրվել հիշյալ կողմերը, մյուս մասն էլ, երբ Մահմադ խանը մի ինչ-որ չնչին պատրվակ գտնելով՝ բերդում կախաղանով խեղդամահ է արել գյուղից պատանդ տարված երևելիներին՝ Գևորգենց Հովակիմին (Շահազիզենց տոհմից), Անտոնենց Գրիգորին և Տեր Հաչենց Աբգարին, խմբովի գաղթել, գնացել են Շիրակ և բնակվել Արթիկ, Ղըշախ և Ղարաքիլիսա գյուղերում, որի հետևանքով և գյուղն անմարդաբնակ է դարձել, ավերվել ու քանդվել, և այգիները՝ խոպանացել (1805 թ.):

Այս կացության մեջ մնացել են գյուղերը մինչև Հյուսեին Ղուլի խանի՝ սարդարի պաշտոնով Երևան գալը, երբ հալածանքները միառժամանակ դադարել են, և գյուղացիք իրենց փախած տեղերից վերադարձել են և վերստին վերանորոգել, շենացրել են իրենց օջախները: Այդ ժամանակավոր խաղաղությունն ու հանգիստը, սակայն, երկար չեն տևել. Դանիել կաթողիկոսից եպիսկոպոս ձեռնադրված Ներսես Աշտարակեցին, նրան հաջորդած Եփրեմ կաթողիկոսի պատվերով, 1814 թվին գնացել է Թիֆլիս՝ առաջնորդի պաշտոնով, որտեղ և նա շարունակել և ավելի ևս զարգացրել է յուր քաղաքական գործունեությունը, որ ամբողջովին ուղղված է եղել պարսից կառավարության դեմ, հօգուտ Էջմիածնի և Արարատյան երկրի ազատագրման պարսից դարավոր լծից: Հայտնի է, որ նա դրանից դեռ տարիներ առաջ, Մահմադ խանի օրերով, ուղարկված լինելով խանի կողմից Պավել Ցիցիանովի մոտ, մի՝ յուր, խանի համար կարևոր հանձնարարությամբ, մի կողմ թողնելով հանձնարարությունը, նախ՝ մասնակցել էր Ցիցիանովի կատարած Գանձակի արշավանքին, և հետո՝ յուր ձեռքից եկած բոլոր միջոցներով նպաստել նրա կազմակերպած՝ Երևանի արշավանքին (1804 թ.):

<Ներսես> Աշտարակեցու՝ Թիֆլիսում, հատկապես Երմոլովի կառավարչապետության օրերով, ցուցաբերած քաղաքական գործունեության մեջ

մի առանձին տեղ են գրավում նրա ընդարձակ բողոքագրերը՝ ուղղված Ֆաթ Ալի շահին ու Աբբաս Միրզային, Երևանի ժամանակի սարդար Հյուսեին Ղուլի խանի և նրա եղբայր Հասան խանի՝ էջմիածնի վերաբերմամբ գործադրած բռնությունների մասին, բողոքագրեր, որոնք արդարացի ու ճիշտ լինելով հանդերձ, շատ սուղ են նստել, շատ ցավալի հետևանքներ են ունեցել հայ ժողովրդի համար ընդհանրապես և աշտարակցիների, իբրև նրա համագյուղացիների համար մասնավորապես։ Շահը և Աբբաս Միրզան հանդիմանում և բացատրություններ են պահանջում սարդարից, և նա պատասխանել է, բայց չի կարողացել արդարանալ, որովհետև բողոքագրերի մեջ առաջ են բերված եղել այնպիսի փաստեր, որոնք վկայել են, որ սարդարը զլացել է նույնիսկ Աբբաս Միրզայի հրամաններն ու կարգադրությունները կատարել, ինչպես օրինակ Աշտարակի չհանձնելը վանքին և 13 տարի շարունակ յուր ձեռքին պահելը, և նրա եկամտից օգտվելը, հակառակ այդ մասին եղած «բարձրագույն պատվերին»։

Հասկանալի պիտի լինի, որ այդ բոլորից հետո սարդարը և յուր եղբայրն իրենց վայրույթը և մաղձը թափել են հայ ժողովրդի գլխին և, առաջին հերթին, հենց աշտարակցիների գլխին, իբրև նրա համագյուղացիների, և Կարապետ աղայի գլխին, իբրև նրա հարազատ եղբոր։ Աշտարակի կոռ ու բեգարը շատացել ու սաստկացել է, գյուղից 10 հոգի սարվազ են տարել՝ Հովակիմենց Մեսրովբը Շահաղիզենց տոհմից, Մելքումենց Կարապետը Բդնունենց տոհմից, Մելքումենց Եղիազարը, Խեչիբարենց Պապանը, Ազատենց Ռստակը, Աղզենց Կարապետը, Սիմոնենց Գեորգը, Ճանճապանենց Գրիգորը, Մակարենց Մատթեոսը և Փարվանենց Փարվանը, և խստագույն ծառայության ենթարկվել։ Թորոսենց սառաչ Մարտիրոսի գեղեցիկ կնոջը Ջաֆար խանը քաշել-տարել է յուր հարեմը և, մի շաբաթ պահելուց հետո, վաճառել է յուր մարդու վրա։ Տանուտեր Եկանենց Հովհաննեսի որդի սիրունատես Խնչանին կամեցել են տանել, թուրքացնել, բայց նա փախել է Ռուսաստան և ազատվել նրանց ձեռքից։

Նրանք նամանավանդ խստությամբ հսկել են Ներսեսի եղբայր Կարապետ աղայի վերա և պատրվակ են որոնել Ներսեսի դեմ ունեցած ու պահած ոխը նրանից հանել, սակայն դժվար է եղել մի այդպիսի պատրվակ գտնելը, որովհետև, աշտարակցիների ասելով, Կարապետ աղան մի բարեսիրտ և ժողովրդասեր մարդ է եղել, համարձակ խոսող և Շահզադեին էլ անձամբ հայտնի, և աշտարակցիք էլ շատ սիրելիս են եղել նրան։ Բայց նա ունեցել է և թշնամիներ, որոնք գնացել, զրպարտել են նրան սարդարի առաջ, թե նա, իբրև թե, ծածկաբար պահում է յուր տանը օսմանցոց սուլթանի սեղանավորի կնոջը՝ Հաջի Նանային, որ յուր ամուսնու գլխատվելուց հետո, Ներսեսի բարեկամներից մեկի օգնությամբ, փախել, եկել է Աշտարակ և բնակել Կարապետ աղայի

1. Երվանդ Շահազիզ

2. Երվանդ Շահազիզը Ծարավ աղբյուրի մոտ (1938 թ.)



3. Ու:ատիտիկ (Բրոնզեդարյան ամրոցի մնացորդներ)
4. Վերին նավերի դամբարաններից





5. Ծիրանավոր (ներսից)
6. Ծիրանավոր (լուսամուտներ)
7. Ծիրանավոր (հարավից)





8. Կարմրավոր (VII դար)
9. Կարմրավոր (հարավից)
10. Կարմրավորի պարսպի հարավային դուռը

11. Սբ. Մարիանե եկեղեցին հարավ-արևմուտքից
12. Սբ. Մարիանեի արևմտյան դռան երկու կողմի որմնանկարները
13. Սբ. Մարիանեի արևմտյան մուտքի ճակատի որմնանկարները



14. Սբ. Մարիամենին կից եկեղեցու վերանորոգման նախագիծը (1905 թ., ճարտ. Վ. Ե. Հովհաննիսյան)
15. Սբ. Մարիամենի արևելյան պատի արձանագրությունները՝ ՉՀԲ (1323) թ.
16. Սբ. Մարիամենի հարավային պատի արձանագրությունները ՉՀ (1321) և 1839 թ.
17. Սպիտակավորը արևմուտքից







18. Սպիտակավոր
19. Սբ. Կյուրակե եկեղեցու մնացորդները (տապալված գմբեթով)
20. «Երեք եղբայր» խաչքարերը (XII դ., այժմյան Աքովյանի փողոցի № 14 և 16 տների միջև)
21. Սբ. Սարգիս մատուռը Քասախի ձորագլխին



22. «Երեք խաչեր» Կարմրավորի գավթում
23. Երեք խաչքար Կարմրավորի գերեզմանոցում, քանդակագործ՝ Քիրամ կազմ.ղ. 1602 թ.
24. Խաչքար Հին գերեզմանոցում (1225 թ.)
25. Կարմրավորի գերեզմանոցի խաչքարերից (1280 թ.)



26. «Ծակ քար» խաչքարը Սադուն Արծրունու արձանագրությամբ (1268 թ.) առջևում Ներսես Աշտարակեցու նոր՝ Տեր Հարությունի գերեզմանը
27. Խաչքար Կարմրավորի մուտքի մոտ
28. Խաչքար Կարմրավորից Հյուսիս արևմուտք (այժմ՝ Աբովյան փողոցի Առաջին նրբանցքի № 5 տան առաջ)



29. Ծիրանավորի խաչքարը
30. «Վարդիկի գերեզմանը» (իրականում 1751 թ. լեզգիների ասպատակությունների օրերին զոհված՝ աշտարակցի Մկրտումի տապանաքարը)
31. Խաչքար Սբ. Մարիանեի գավթում՝





32. Ականատեսի առուն
33. Փոկաբերդ
34. «Դառապավոր» այրերը Քասախի ձորում
35. Քասախի ձորի այրերը և սուրբ Անապատ եկեղեցու մնացորդները

36. Ֆաթալի շահի՝ Ներսես Աշտարակեցու եղբայր Կարապետին շնորհած թարխանության ֆիրմանը



37. Մուղնու Սուրբ Գևորգ մենաստանը (1664—1669 թթ.)

38. Մուղնի

39. Ներսես Աշտարակեցի (գործ Հակոբ Հովնաթանյանի)
40. Աշտարակի ճակատամարտի հերոս գեներալ Ա. Կրասովսկի
41. Ներսես Աշտարակեցին դիմավորում է ռուսական զորքերին, 1827 թվականի հունիսի 8 (գործ Վ. Մաշկովի)
42. Հայ կամավորական զորքի դրոշակը (1827 թ.)
43. Աշտարակի ճակատամարտի հուշակոթողը (1835 թ.)





44. **Մ. Սարյան.** Կարմրավոր (1956 թ.)
45. **Մ. Սարյան.** Աշտարակ (1933 թ.)
46. **Մ. Սարյան.** Աշտարակից մի անկյուն (1956 թ.)



47. Ռ. Ծանվերդյան. Ճանապարհ դեպի Աշտարակ

48. Սադուն-Արծրունու որդու՝ Խութլուբուղայի նկարը (Հաղբատի վանք)

49. Ներսես Աշտարակեցին 1844 թվականին (Ս. Հաքստհաուզենի «Անդրկովկաս» գրքից)
50. Պ. Պռոշյան
51. Պ. Պռոշյանը իր կնոջ և զավակների հետ

տանը, բերելով յուր հետ մի փթաչափ մարգարիտ, թանկագին գոհարեղեն և անչափ ոսկի։ Հասան խանը հրավիրել է յուր մոտ Կարապետ աղային և մահվան սպառնալիքով մեկնություն պահանջել։ Նա սակայն կարողացել է արդարանալ, պատասխանելով որ այդ կինը, որի ամուսինն յուր եղբոր՝ Ներսեսի բարեկամն է եղել, դեռ Մահմադ խանի ժամանակներից յուր տանն է ապրում, և որ նա ոչ մի առնչություն չի ունեցել, որ բերած լինեը յուր մոտ և այլն։ Կարապետ աղան թեև այդ անգամ կարողացել է արդարանալ և անվնաս դուրս գալ սարդարի ապարանքից, բայց հասկացել է, որ խանը պատրվակ է որոնում իրեն վնասելու, ուստի և սկսել է պատրաստություն տեսնել՝ փախչելու Թիֆլիս, եղբոր մոտ։

1819 թվի ապրիլին, աշտարակցիներից, յուր բարեկամներից և ծառաներից գաղտնի, նա յուր տան ծանր իրեղենները թաքցնում է, թեթևները բեռ կապում և ընտանիքով պատրաստվում։ Մի քանի օր առաջ նա պատվիրում է յուր մտերիմ Բաբաջանենց Իգնատիոսին ապրիլի 15-ին, մութն ընկած ժամանակ, մի քանի ձիերով գալ գյուղի մոտ, իրենց մեծ այգին, որ այնտեղից աննկատելի հեռանան, գնան։ Այդ նպատակով՝ նա պատվիրում է և տանուտեր Խեչանին, որ գյուղի Մեծ առուն կտրել տա մաքրելու համար և հրամայի, որ գյուղում մարդ չմնա, ամենքն էլ դուրս գան առվաճանուրյան։ Նրա պատվերը ճշտությամբ կատարվում է, և նա կարողանում է անտեսանելի՝ կապած բեռները փոխադրել այգու հնձանը։ Ապրիլի 14-ին լույս 15-ը, երբ գյուղացիք, առվահանության աշխատանքից հոգնած, վերադարձած են լինում և խոր քնած իրենց տներում, նա ընտանիքով գնում է այգին և բարձելով բերած ձիերը՝ ճանապարհ է ընկնում Ապարանի վերայով դեպի Փամբակաձորը, աշխատելով մինչև լուսանալը անցնել սահմանագլուխը։ Պարսից սահմանապահները գտնվել են Ապարանում, և նրանց գլխավորն եղել է Քյուչուկ-Քյանդցի Սելիմ խանը, որ Կարապետ աղայի լավ բարեկամն է եղել։ Ճանապարհին փախստականները պատահել են նրանց, բայց նրանք, Սելիմ խանի հրամանով՝ փոխանակ բռնելու նրանց, ընդհակառակը, քաղաքավարությամբ ուղեկցել են նրանց մինչև սահմանը և վերադարձել իրենց գործին։ Երբ լուսանում է, և ամենքը զարթնում են գյուղում, դրացիները զարմանում են, որ Կարապետ աղայի տան դուռը չի բացվում, տավարը նախիր չի գնում, և միայն փակ դռների ետևից լսվում է անասունների ողորմելի բառաչը։ Դրանից մի աղետ գուշակելով՝ նրանք իմաց են տալիս տանուտերին, որ առնելով յուր հետ գյուղի իշխաններից մի քանիսին, գալիս է Կարապետ աղայի տունը և կանչել տալիս աղայի ծառաներին, որոնք իմացած լինելով աղայի փախուստը՝ արդեն գիշերը խույս էին տվել և թաքնվել։ Բաց են արել դռները և տեսել, որ Կարապետ աղան փախել է, որովհետև տանը, բացի տավարից, տաշտ ու մաղից, շիշ ու շամփուրից և գինու դատարկ և մի քանի լիքը կարասներից, ոչինչ չէր մնացել։

Որոշվում է այդ մասին անմիջապես իմաց տալ սարդարին, և խեչանը գնում է Երևան և զեկուցում եղելության մասին։ Բարկանում է սարդարը և հրամայում է՝ իսկույն վաճառել մնացած տավարը և տները, այգիները և ջրաղացները հարքունիս գրավել՝ սարդարլըխ անել, և սպառնում է աշտարակցոց՝ ասելով որ այդ բոլորի ոխը նրանցից պիտի հանե։ Էլ այնուհետև չարիք չի մնում, որ նրանց գլխին չթափեն, զրկանք, նեղություն չի մնում, որ նրանց չտան. կոռ ու բեգար, գոփումներ, ապօրինի գանձումներ, աղջիկ քաշել, կողոպուտ, ծեծ ու դին-մասաբի հայհոյանք՝ սովորական երևույթներ են դառնում Աշտարակում։

Այսպես անցել են աշտարակցիների օրերը մինչև 1826 թիվը, երբ այդ թվի սեպտեմբերի 15-ին հանկարծ հրաման է եկել, որ նրանք գյուղովի տեղահան լինեն և գնան Քանաքեռ, որ, հայտնի բան է, կամ այն նպատակով է եղել, որ նրանք ավելի մոտ լինեն, և ավելի հեշտ լինի հսկել նրանց գործողությունների վերա, և կամ, որ ավելի հավանական է, նրանց հավատարմությունը փորձելու համար։ Սարդարը կասկածել է, որ աշտարակցիք հարաբերություն ունեն Ներսեսի ու նրա եղբոր հետ։ Եվ այդ կասկածներն անհիմն չեն եղել. Ներսեսը գնալով Թիֆլիս առաջնորդի պաշտոնով՝ տարել էր յուր հետ, իրեն սպասավորելու համար, աշտարակցիներից երեք հոգի՝ Ստեփան Տեր-Հովսեփյանին, Սարգիս Ջավյանին և Կարապետ Ղուլաղյանին, որոնց միջոցով նա միշտ լուրեր է հաղորդել յուր համագյուղացիներին այն մտքով, որ նրանք համբերող լինեն, որ մոտ է ազատության օրը և այլն և այլն։ Ժողովուրդն էլ հետևելով այդ նախազգուշության՝ անտրտունջ կատարել է սարդարի բոլոր հրամանները, և այժմ էլ, տեղահան լինելու հրաման ստանալուն պես, դարձյալ անտրտունջ, տեղահան է եղել և եկել Քանաքեռ, և տեղավորվել մասամբ գյուղացիների տներում, մասամբ էլ՝ քարաշեն մեծ եկեղեցում, որի մեջ ժամասացություն չի կատարվում եղել։

Երկու շաբաթ նրանք մնացել են այդտեղ, և ապա՝ թույլատվություն է ստացվել վերադառնալ իրենց տեղը։ Թեև սարդարն Աշտարակի սարվազներից մի քանիսին ուղարկել էր՝ պահպանելու գյուղը գյուղացիների բացակայության ժամանակ, բայց և այնպես նրանք վերադառնալով՝ գտել են գյուղի ծայրամասի այգիները կողոպտված և փչացված։ Զարմանալին այն է, որ պահապան սարվազներից մեկը՝ Ազգենց Կարապետը, գողության տեղում բռնել, սպանել էր մի թուրք, և դրա համար չէր պատժվել, այլ մինչև իսկ սարդարի գովասանքին էր արժանացել. «Բարա՛քյալլահ, սարվազ»,— բացականչել է նա։

Անցել է 1826 թվականը, և ժամանել է 1827-ը, երբ մարտի սկզբին լուր է տարածվել Աշտարակում, թե Կարապետ աղան նամակ է գրել տանուտեր խեչանին և մյուս իշխաններին, թե «Աչքերդ լույս, ահա՛ ս. Հարության զատկին Ռուսաց զորքը գալիս է Երևան, որոնց հրամանատարը և զորապետն

գեներալ Բաղկևիչն է»։ Աշտարակցիք ուրախացել են, բայց վախեցել են իրենց այդ ուրախությունը բացարձակորեն և ազատ արտահայտել, այլ փսփսալով իրար ականջի են միմյանց հաղորդել այդ լուրը. նրանց սրտում ամուր տպավորված է եղել Հասան խանի քանիցս արած սպառնալիքը, որ եթե ինքը Աշտարակում մի որևէ հակապետական բան նկատի կամ լսի, իսկույն ամենքին, գյուղովի, քշել կտա Ղաղբին կամ Խորասան։

Կարապետ աղայի հաղորդածը պատերազմի մասին ճիշտ է եղել, բայց այդ վերաբերել է արդեն պաշտոնապես հրապարակված, ամեն տեղ հայտնի պատերազմին, թե չէ ընդհարումները ու պատերազմական գործողություններն արդեն սկսված են եղել 1826 թվին։ 1825 թվին զորահավաք էր կատարվել Պարսկաստանում, և զորքերը կենտրոնացվել սահմաններում, իսկ հաջորդ, 1826 թվին Հասան խանը սարդարության մեծաքանակ հեծելազորով անցել էր սահմանը և հարձակվել Փամբակի ու Շորագյալի հայ գյուղերում տեղավորված ռուսաց սակավաթիվ վաշտերի վերա, և մեծ կոտորածներ արել՝ հիմնահատակ կործանելով գյուղերը և գյուղացիներին, որոնք ռուսների հետ միացած՝ կռվել էին նրա դեմ, սրի քաշել. Աբբաս Միրզան 60 հազար զորքով մտել էր Ղարաբաղ և գնացել, պաշարել Շուշին. Ներսես Աշտարակեցին հրատարակել էր յուր կոչը «Պատվարժան հայոց ազգին» և այլն և այլն։

Սարդարական կառավարությունն օրեցօր սպասելով ռուսների գալուն՝ 1826 թվի աշնանը և հաջորդ, 1827 թվի վաղ գարնանը գործադրել է յուր սովորական նախազգուշական միջոցները, նախազգուշական միջոցներ, որոնք իրենց դաժանությամբ ու խոշոր չափերով՝ գերազանցել են Աղա Մահմադխանի գործադրածները և փոքր չափով նման են եղել, հիշեցրել են Շահ Աբբասի գործադրածները։ Պարսիկներն աշխատել են ամայի անապատ դարձնել Այրարատյան դաշտը, որպեսզի թշնամին այդտեղ ո՛չ հաց, ո՛չ ուտելեղենի մի այլ պաշար գտնի, ո՛չ էլ տեղի քրիստոնյա ժողովրդից կարողանա մի որևէ օգնություն ստանալ։ Այդ նպատակով՝ նրանք խստիվ արգելել են բնակչության հիշյալ թվերի աշնանը և վաղ գարնանը վարուցանք անել, բռնագրավել են, ոչնչացրել գյուղացիների ունեցած պաշարը և իրենց՝ գյուղացիներին էլ տեղահան արել, քշել Երասխի այն կողմը և, մինչև իսկ, Թուրքիայի սահմանները. դատարկել են էջմիածնի ամբարները և վանքի միաբաններին տարել, Երևան քաղաքի բնակչության հետ միասին ղալաբանդլըղ արել, այսինքն՝ փակել բերդում, և այլն և այլն։

Աշտարակը մյուս հայ գյուղերից, իհարկե, բացառություն չի կազմել. ապրիլի 7-ին հրաման է ստացվել սարդարից, որ գյուղացիք պատրաստվեն տեղահան լինելու՝ քոչի, և երեք օր ժամանակ է սահմանվել պատրաստվելու համար։ Աշտարակցիք տանուտեր խեչանի խորհրդով ընտրել են իրենց միջից չորս քաջ տղամարդ՝ ղարսեցի Մարգարի որդի յուզբաշի Բաղդասարին, Տնտեսենց

Հակոբին, Տեր-Միքայելյանց Ղուկասին և Թումանենց Անտոնին, որոնց պատվիրել են երթալ սահմանագլուխ Միրագ գյուղը, որտեղ, ինչպես լսած են եղել, բանակել էր ռուս զորքի այն մասը, որի մեջ եղել է Ներսեսը, տեսնվել նրա հետ և խորհուրդ հարցնել, թե ի՞նչ անեն, և պատասխան են ստացել անտրտունջ կատարելու սարդարի հրամանը, որ ժողովուրդը չվնասվի:

Ապրիլի 10-ին եկել են պարսիկ սուրհանդակները և տեղահան են արել ժողովրդին, պահապան թողնելով գյուղին գյուղացիներից 20 հոգի և Աշտարակի սարվազներից երկու հոգի՝ Մելքումենց Կարապետին և Մելքումենց Եղիազարին, որոնք հերթով, երկու շաբաթը մի անգամ, պիտի փոխանակեին միմյանց: Ժողովուրդը քոչել, գնացել է տանուտեր Խեչանի և Մուղնու ս. Գեորգի վանահայր Շուխոնց Մարկոս վարդապետի առաջնորդությամբ, և պարսիկ սուրհանդակների ուղեկցությամբ: Նրանք հասել են Երասխի ափը, Դոխկուզներ կոչված տեղը, և անցնելով գետը՝ ապրիլի 17-ին հասել, հանգըստացել են հայաբնակ Կուլապ գյուղում: Այդտեղից սարդարից նոր հրաման է եկել, թե տեղահանվածները հանձնվում են քուրդ Հյուսեին աղայի տնօրինության, որ ուր ուզենա, տանի նրանց, միայն որ խստագույն հսկողության տակ պահի նրանց: Մայիսի 7-ին նրանք շարունակել են ճանապարհը և հասել Աբբաս գյոլ գյուղատեղին, և հրաման ստացել այդտեղ հանգստանալու մինչև մյուս օրը, սակայն, երբ գյուղացիք սկսել են իրենց կերակրի պատրաստությունը տեսնել, վերստին հրամայել են նրանց՝ շարունակել ճանապարհը, և նրանք ստիպված են եղել թափել կիսեփ կերակուրները և կատարել հրամանը, մինչև որ նրանք հասել են Ալաշկերտի Գըլասոր, Ղոմլուջա և Ղոմլուպոճախ գյուղերը և, Հյուսեին աղայի հրամանով, բնակել այդ հայ գյուղերում:

Հացի պաշարի սղության և թանկության պատճառով՝ առաջին օրերը նրանք շատ նեղվել են այդտեղ, հետո նրանք դիմել են աղային և իրավունք ստացել՝ ցորեն բերելու իրենց համար Աշտարակից: Մի քանի քաջ տղամարդիկ այդ նպատակով ուղարկվել են գյուղը, որոնք և ցորեն են բերել և տեղեկություններ հաղորդել գյուղի վիճակի մասին: Նրանք տեղեկացել են, որ պահապան կարգված գյուղացիները և սարվազները հավատարմությամբ կատարում են իրենց վերա դրված ծանր պարտականությունը՝ հսկելով որ շուրջը վխտող ավազակները չքանդեին տները, չգտնեին ու չկողոպտեին հորերում և ձորի այրերում թաքցրած իրեղենը, որի համար պահապաններից մեկը՝ ծերունի Բաբել Արամյանցը, իրենց դրացու այգին ջրելու ժամանակ ենթարկվել է ավազակների հարձակմունքին, որոնք այնքան ծեծել են նրան, որ նա երկու օր հիվանդ պառկելուց հետո վախճանվել է. ավազակները նույնպես կամեցել են կենդանի բռնել պահապաններից և մի ուրիշին՝ Բադալենց Հովակիմին, բայց դա փախել է և փախչելու ժամանակ Վանանց այգու քարափից վայր գլորվել և տեղնուտեղը բաճճոգի եղել:

Աշտարակցիք մնացել են Ալաշկերտում մինչև հուլիսի վերջը, երբ սաստիկ նեղվելով՝ որոշել են խնդրել, որ իրենց թույլ տրվի երթալ Կողբ գյուղը և այնտեղ բնակվել, որի համար ուղարկել են տանուտեր Խեչանին Երևան, սարդարի մոտ, հուսալով որ նա յուր ճարտար լեզվով և խոհեմությամբ կարող կլինի խոսք անցկացնել: Խեչանը արդարացրել է նրանց հույսերը. Նա երկար ժամանակ լեզու թափելուց, թախանձելուց և Հասան խանի ոտքերն ընկնելուց հետո, վերջապես, կարողացել է համոզել նրան և թույլատվություն ստանալ: Երեք օր պատրաստություն տեսնելուց հետո, ժողովուրդն ուրախությամբ դուրս է եկել Ալաշկերտից և օր ու գիշեր, անդադար, ճանապարհ կըտրելուց հետո հասել է տեղ և մեծ հյուրասիրություն և հյուրընկալություն գտել կողբեցիներից <...> Հյուսեին աղան ժողովրդին հասցնելով Կողբ, որտեղ գտնվում էին և օշականցիք ու փարաքարցիք, ինքը թողել, հեռացել է, պատվիրելով որ տղամարդիկ ազատ են, ուր որ ուզենան, կարող են գնալ, բայց նրանց ընտանիքները պիտի մնան Կողբում:

Այստեղ, Կողբում, նրանք կողբեցիների՝ իրենց ցույց տված սիրալիր ընդունելության և քաղցր հյուրասիրության հետևանքով հանգստացել են այն բազմադիմի տառապանքներից, որոնք հատուկ են եղել պարսից կատարած այդպիսի բռնի քոչերին: Այստեղ չպետք է մոռանալ հիշել, որ սարդարը հրահանգած է եղել մտրակավոր սուրհանդակներին՝ քոչեցնելու ժամանակ մի քանի գյուղերի վերաբերմամբ առանձին խստություններ բանեցնել, որոնց թվում եղել է և Աշտարակը, որ առանձնապես ենթարկվել է այդպիսի խստությունների յուր՝ Ներսեսի և Կարապետ աղայի հետ մոտ հարաբերություն պահպանած լինելու համար: Աշտարակցոց տարել են սահմանի այն կողմը, Թուրքիայի Ալաշկերտ գավառը, Օշականցոց՝ Բայազետ, և այլն, որի համար, հավանորեն, պարսից ու Թուրքաց կառավարությունների մեջ նախօրոք համաձայնություն է կայացած եղել: Նրանց հարկավոր է եղել անցնել Երասխը, և այն՝ գարնանը, ջրերի հորդացած ժամանակ, երբ գետը ծովացած է եղել, և անցնելիք տեղում՝ Դոխկուզներում, նրա ինը ճյուղերը միացած. Նրանց տարել են կտրուկ, դժվարակոխ ճանապարհներով, ուստի և նրանք ստիպված են եղել գնալ առապարներով, սար ու ձորով, և այն՝ շատերն ոտքով, երեխաներին շալակած, հիվանդների, ծերերի ձեռքը բռնած, կես-քաղցած, կես-կուշտ, գարնան տեղատարափ անձրևների տակ, գիշերել սարերի ձյունածածկ լանջերին և այլն և այլն, և հյուծվել ու մաշվել են, մինչև որ հասել են Ալաշկերտ՝ իրենց բնակության համար սահմանված գյուղեր, որտեղ նրանց սպասել են <...> հացի ու սնունդի սղությունը և վարակիչ ծաղիկ հիվանդությունը, որ կարճ միջոցում հնձել, տարել է գերեզմանը երեխաների մի խոշոր մասը:

Եվ հուսահատության րոպեներ շատ է եղել նրանց այդ տառապալից

սատանդականության օրերում, երբ ամբոխը, նամանավանդ կանայք, լացով ու կականով սկսել են հայհոյել ու անիծել Ներսեսին, որ ռուսների գալու պատճառն է եղել և դրանով գրգռել իրենց բռնավորների գայրույթը, քեն ու ոխը. բարեբախտաբար, նրանց առաջնորդները՝ տանուտեր Խեչանը և Մարկոս վարդապետը, որոնք հավասարապես բաժանել են ժողովրդի հետ նրանց կրած բոլոր տառապանքներն ու թշվառությունները, խոհեմ ու հասկացող մարդիկ են եղել և այդպիսի րոպեներին միշտ կարողացել են փարատել նրանց լքումը և մխիթարել նրանց գալիք լավ օրերի հույսերով, և Հյուսեին աղան* էլ (քուրդ), որ մի ներողամիտ և քաղցրաբարո մարդ է եղել, թույլ է տվել տղամարդկանց երթալ, ուր որ ուզենան, իրենց ընտանիքների ապրուստը հայթայթելու համար, և միշտ համոզել է համբերող լինել և տոկալ, հուսադրելով որ, ռուսների հեռանալուն պես, ինքն իսկույն կվերադարձնե նրանց իրենց տեղը և այլն։

Աշտարակցիք մնացել են Կողբում մինչև 1827 թվի սեպտեմբերի 12-ը։

10

ՊԱՐՍԻՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ, ԱՇՏԱՐԱԿԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ, ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԱՌՈՒՄԸ ԵՎ ԱՇՏԱՐԱԿՑԻՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Պարսից պատերազմի նախագիծը կազմված է եղել այն հաշվով, որ 1827 թ. գարնան սկզբին զորքերը մտնեն սարդարության երկիրը և արշավեն դեպի Երևան։ Գլխավոր բանակը պիտի գնար Նախիջևան, որտեղ պիտի գար, միանար նրա հետ և Ղարաբաղում եղած զորամասը։ Դրանք այդտեղից պիտի անցնեին Երասխ գետը, նվաճեին Թավրիզը և, երբ հարկավոր լիներ, արշավեին և դեպի Թեհրան։ Պասկևիչին իրավունք է վերապահված եղել և խաղաղության դաշն կռելու Նախիջևանի խանության, Երևանի խանության, Օրդուբադի շրջանի՝ Ռուսաստանին ընդմիշտ միացվելու, Երասխ գետի սահման դառնալու, եւ և Պարսկաստանից քառասուն միլիոնի չափ մի գումար պատերազմական տուգանք ստանալու պայմաններով. ահա՛ այդ ծրագիրն իրագործելու համար է եղել, որ 1827 թվի ապրիլի 2-ին առաջապահ զորքը, զորավար Բենկենդորֆի առաջնորդությամբ, Բորչալուից անցել է սահմանը։ Այդ առաջապահ զորքի հետ եղել է և Ներսես Աշտարակեցին։ Ապրիլի 9-ին դրանք մոտեցել են Երևանի սահմաններին և զարմանքով տեսել են, որ երկիրն անմարդաբնակ, ամայի անապատ է դարձված, ուստի և չէր կարելի հուսալ, որ այդտեղ հնարավոր լինի հացի պաշար գտնել, ինչպես որ հավատացած են եղել նախա-

* Բնագրում՝ Հյուսեին խանը, ուղղում ենք —Պ. Հ.։

գծի հեղինակ կոմս Դիբիչը, Բենկենդորֆը և ինքը՝ Ներսես Աշտարակեցին։
Նույն ամսի 13-ին նրանք մտել են Էջմիածին, որտեղ տեսել են նույն դատար-
կությունն ու ամայությունը. վանքի շտեմարանները դատարկված են եղել,
միաբանները՝ տարված Երևան և բերդում ղալաբանդյըղ արված, Երևանի բնակ-
չության և շրջակա գյուղերի բազմաթիվ հայ գյուղացիների հետ միասին։
Վանքում թողնված են եղել պահպանության համար միայն 22 հոգի վանական։
Զորավար Բենկենդորֆը, մի քանի օր Էջմիածնում հանգստանալուց հետո,
մի վաշտ զորք է թողնում Էջմիածնի պաշտպանության համար և ինքը գնում
Երևան, և պաշարում բերդը, բայց հաջողություն չի ունենում, որովհետև
կլիմայական աննպաստ պայմանների շնորհիվ շուտով հիվանդություն է ընկ-
նում զորքի մեջ, և Էջմիածինը լցվում է բազմաթիվ հիվանդներով, որոնց
խնամելու հոգսը ծանրանում է Ներսես Աշտարակեցու վրա։ Պասկևիչը հունիսի
8-ին ժամանելով Էջմիածին և տեսնելով բերդը պաշարող զորքի կացությունը՝
ետ է կանչում Բենկենդորֆին զորքի հետ միասին, նրա տեղը ուղարկում է
պաշարումը շարունակելու համար զորավար Կրասովսկուն, իսկ ինքն առ-
նելով յուր հետ Բենկենդորֆին և գլխավոր բանակը՝ գնում է Նախիջևան։
Սակայն և Կրասովսկին, որ հունիսի 15-ին գալիս է Էջմիածնից Երևան,
երկար չի կարողանում և չի էլ ուզում պաշարել բերդը, որովհետև նախ՝ դեռ
չէին տեղ հասել պաշարելու և բերդն առնելու համար անհրաժեշտ, պաշարո-
ղական մեծ թնդանոթները, երկրորդ՝ արդեն սկսվել էին Երևանի զորեղ շո-
գերը, որին չէին դիմանում Ռուսաստանից նոր Կովկաս ժամանած նրա զո-
րադրի զինվորները և հարյուրներով հիվանդանում էին, և անընդմեջ էին
դառնում կովելու։ Նա ստիպված է լինում, Պասկևիչի թույլտվությամբ, նույն
թվի հունիսի 21-ին թողնել բերդը և հեռանալ Ապարանի սարերը, որտեղ և՛
օդը հովասուն էր, և՛ ջուրն առողջարար, և՛ արոտը դալար, և այդտեղ սպասել
մինչև Երևանի եղանակի փոխվելը, զորքի հանգստանալը, կազդուրվելը և
հիշյալ հրետանու ժամանելը։
Նա գալիս է Էջմիածին, վեց օր մնում է այդտեղ, պատրաստում է հացի
առատ պաշար և այլ ուտելիք, տեղավորում է հիվանդներին, որոնց թիվը
հասնում էր հազարի, ամրացնում է վանքի պարիսպների երեք աշտարակը
դաշտային թնդանոթներով, թողնում է պահապան զորք՝ մի գումարտակ, հինգ
թնդանոթ և հայ հեծելազորի հարյուրակը, որ ինքը Ներսեսը խնդրել էր թողնել
իրեն, պաշտպանելու վանքը, և առհասարակ վանքում այնպիսի կացություն
է ստեղծում, որ նա, հարկավոր դեպքում, ինքը կարողանար յուր ուժերով
պաշտպանել իրեն, և ինքը հունիսի 30-ին ճանապարհ է ընկնում դեպի Ապա-
րան՝ Օշական-Աշտարակի ճանապարհով։ Ահա՛ հենց այդ միջոցում է եղել,
որ տեղի է ունեցել այն արյունահեղ կռիվը, որ ռուսաց պատմության մեջ

հայտնի է Աշտարակի ճակատամարտ անունով։ Մենք այդ ճակատամարտի նկարագրության համար մեր ձեռքի տակ ունենք երկու աղբյուր՝ մի ձեռագիր, մեծադիր տետրակ, որ պարունակում է յուր մեջ Ներսես Աշտարակեցու համառոտ կենսագրությունը մինչև նրա կաթողիկոս ընտրվելը, յուր իսկ Ներսեսի բերանից լսված ու գրի առնված, մյուսը՝ հայտնի Կովկասի պատերազմների պատմության շարահյուսող Վ. Պոտտոյի գրածը։ Մենք ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել երկուսն էլ, որոնք լրացնում են միմյանց և որոնցից կարելի է մի ամփոփ գաղափար կազմել այդ ճակատամարտում երկու անհավասար ուժերի՝ միմյանց դեմ մղած մենամարտության մասին։

«Պարսից թագաժառանգ Աբբաս Միրզեն,— ասում է ձեռագիր կենսագրությունը,— տեղեկանալով <սարդարից>, թե էջմիածնա վանքում ռուսաց զորքը սակավաթիվ է, գալիս է 60 հազար զորոք (30 հազար), բանակ է դնում Հռիփսիմեի վանքի շուրջը և այնտեղից ուղղում է թնդանոթները դեպի էջմիածնա վանքը ու սկսում է ռմբակոծել էջմիածնա տաճարը։ Նա լուր է ուղարկում Ներսեսին, թե «անձնատուր լինեք, ապա թե ոչ՝ էջմիածնա տաճարը հիմնահատակ քանդել կտամ»։ Ներսեսը լրաբերին պատասխանում է. «Մենք անձնատուր չենք լինի. որ տաճարը քանդում ես, քանդե, ես ոսկուց կառուցանել կտամ էջմիածնա տաճարը»։

Նա նույն ժամանակ աշտարակցի Պետրոսի ձեռքով գիր է ուղարկում Կրասովսկուն Ղարաբուլաղ։ Այս Պետրոսը գիշերը, գետի միջով, փորսող գնում է, հասնում է այնտեղ, որտեղ պարսից պահապաններն են լինում։ Պահապանների գլխավորը լինում է Ներսեսի հավատարիմ, Քյուչիկ քյանդ գյուղի կալվածատեր Սելիմ բեկը, որի վերա վստահ է լինում Ներսեսը։ Սա ճանաչելով Պետրոսին, որ Ներսեսի մարդն է, և տեղեկանալով դրանից, որ թուղթ է տանում Կրասովսկուն, հրամայում է իրա հավատարիմ մարդկանց՝ Պետրոսին լռելյայն, անվտանգ հասցնեն փոթով Ղարաբուլաղ և իրանք շուտով վերադառնան...

Կրասովսկին ստանալով Ներսեսի գրությունը, տեղեկանալով էջմիածնա վտանգավոր դրությունը՝ նույն օրն աճապարում է հասնել օգնության էջմիածնա։ Նա շտապփույթ քայլով (форсированным маршом) գալիս է <և> նույն օրը գիշերում է Աշտարակա հանդեպ, հայնկույս Քասախ գետի։ Աբբաս Միրզեն լուր առնելով, թե գեներալ Կրասովսկին գալիս է էջմիածնա օգնության, թողնում է վանքի պաշարումը և դիմում է հանդեպ Կրասովսկուն. Նա իրա զորաց մի մասը (տեղավորում է) Աշտարակ գյուղի այգյաց (մեջ), գետեզերքի մոտ, և Օշականա գյուղի բարձր բլուրի (Դիզի կոնդ) վերա դնում է թնդանոթներ, որ ռուսաց զորաց անհնարին լինի Քասախ գետից ջուր վերցնել

օգոստոս ամսի շոգ ժամանակ. պարսից զորքի մի մասն <էլ՝> հրամանատարությամբ քաջ պատերազմող Ջաֆար խանի, շրջապատում է ռուսաց զորաց թիկունքից, երկու թևից և ճակատից, քաջությամբ պատերազմելով երկու կողմից շոգ և անջրդի դաշտում, ամբողջ օր։

Երկու վերստ հեռավորությամբ, չհասած էջմիածին, մեծ առու կա, որ ջրում է Վաղարշապատու այգիք. պարսիկները գետից առատ ջուր են թողնում այդ առվի մեջ։ Ռուսաց առաջընթաց զորքը, սաստիկ ծարավութենե թալկացած, ընկնում են առվի ջրի վերա, գլուխներն ընկղմում են առվի մեջ՝ ծարավությունը հագեցնելու։ Պարսիկները վրա են հասնում, սկսում են անխնա կոտորել. ռուսաց զորքն այնքան ծարավութենե թալկացած են լինում, որ երբ պարսից թրերը նրանց գլխի վերա կանգնած են լինում, գլուխները կտրում են, նոքա գլուխներն անգամ ջրից չեն բարձրացնում։ Կրասովսկին տեսնելով պարսից շրջապատելը զորաց՝ կարտեչով ճանապարհ է բաց անում մնացյալ ռուսաց զորաց։ Այն մարտին ռուսաց կողմից ընկնում է 1300, պարսից կողմից՝ չորեքպատիկ։

էջմիածնա պահակ զորքը տեսնելով <այդ>, սկսում է թնդանոթ ձգել էջմիածնա պարիսպներից պարսից վերա, և այնպես է ձևացնում, իբր թե օգնության է գալիս Կրասովսկուն։ Պարսիկները կասկածելով, թե երկու կրակի մեջ կընկնեն, փախստական դառնում են։

Կպատմեր հանգուցյալ Ներսես կաթողիկոսը, թե գեներալ Կրասովսկին, երբ այս անցքից ետ, մնացյալ զորաց հետ, մտավ էջմիածնա պարիսպը, ամենևին տխրություն չէր երևում վրեն, կարծես թե գրոսանքից վերադարձել էր։ Պասկևիչը այս անհաջող լուրը ստանում, աճապարում է փութով զորոք, վերադառնում է էջմիածին, շատ անբավական է լինում գեներալ Կրասովսկուց, թե ինչո՞ւ էջմիածնա վանքի փրկությունը այդքան բազմություն զորաց զոհեց, և ուզում է բարձրագույն զինվորական դատաստանի մատնել Կրասովսկուն։ Ներսեսը տեսնում է, թե Պասկևիչի դիտավորությունն է, անշուշտ, վնասել գեներալ Կրասովսկուն, բոլոր գեներալների ներկայությամբ պաշտպան է կանգնում Կրասովսկուն, ասելով Պասկևիչին. «Ես, որպես աշակերտ սուրբ Ավետարանի, ինքս ուղղակի կբողոքեմ առ կայսեր և բոլոր ճշմարտությունը կհայտնեմ, ըստ իմ պարտավորության։ Ես ձեզ խորհուրդ տվի, որ առաջ Երևանա բերդը կպաշարեք և երբ Աստված հաջողեր, Երևանա բերդը առնվեր, այնուհետև բոլոր նահանգ՝ թե՛ Երևանա և թե՛ Նախիջևանա, անձնատուր էին մեր զորաց, որովհետև բոլոր նահանգաց բանալին է Երևանա բերդը։ Դուք ինձ չկամեցաք լսել։ Երևանա բերդը բաց թողած՝ հեռացաք Երևանա, գնացիք Աբասաբադ։ Եվ գեներալ Կրասովսկին ո՛չ միայն էջմիածնա վանքի փրկության եկավ, թեև էջմիածնա վան-

քըն էլ քիչ ծառայություն մատուցած չէ կայսերական զորաց։ Երբ զգալի կարոտություն ունեին զորքն ուտելյաց պաշարի, քան հազար փութ ցորյան ձրի մատույց վանքն յուր գաղտնի շտեմարանից. միաբանությունը յուր վերջին ապրուստը չխնայեց, այլ քրիստոսավայել մարդասիրական հոգվով մատակարարեց զոռաց. Եվ էջմիածնա՝ ձեր թողած 300 զինվորական 4 թնդանոթով կարո՞ղ էր դեմ դնել պարսից 60000 (30000) զորաց։ Եվ եթե մենք անձնատուր լինեինք պարսից, անպատվություն չէ՞ր լինիլ ռուսաց զինուց և զինվորության, և առիթ կտար պարսից քաջալերության և խրախուսանաց, և ո՞վ գիտե, ի՞նչ տեսակ նոր կունենար պատերազմի վախճանը։

Պասկևիչը երբ տեսնում է Ներսեսի պաշտպանությունը գեներալ Կրասովսկուն, նույնպես նկատում է շտաբի նաչալնիկ, գրաֆ Սուխտելինի և գեներալ Բենկենդորֆի համակրությունը Ներսեսի ասությանց, զիջանում է և գեներալ Կրասովսկու ձախորդ պատահմունքը շրջում է հաղթության՝ 4000 ռուսաց զորաց ընդդեմ պարսից 60000 զորաց. Նա առաջարկում է առ կայսեր պարգևներ Կրասովսկու հրամանատարության զորաց։ Բայց այնուհետև փորձառու և շրջանկատ անձինք նկատում են, թե Պասկևիչը չունի առ Ներսես առաջվա անկասկած սերտ մտերմությունը, թեև առ երես ջանադիր է լինում ձևանալ նույն մտերմություն ունեցող առ Ներսես» (էջ 14—16)*։

Զորավար Կրասովսկին, Վ. Պոտտոյի պատմելով, հանգստանալիս է լինում Ապարանում, երբ օգոստոսի 4-ին հայտնվում է էջմիածնի դաշտում պարսից 30 հազարանոց զորքը՝ Աբբաս Միրզայի առաջնորդությամբ։ Այդ լուրը հաղորդում է Կրասովսկուն Մելիք-Սահակը, որ անձամբ եղել էր թագաժառանգի բանակում և տեսել սովար զորքը։ Օգոստոսի 5-ին պարսից զորքն արդեն երևում է էջմիածնից 15 վերստի վրա, իսկ 6-ին նա մոտենում է Աշտարակին և բռնում գյուղը, էջմիածնի և Ջենգլեի** (Կրասովսկու բանակի տեղը) մեջ. Կրասովսկու չորս հազարանոց զորագունդն այժմ գտնվում էր պարսից գլխավոր ուժերի դեմ։ Այս մասին ռուսաց գլխավոր բանակին ոչինչ հայտնի չէր, ուստի և նրանից օգնություն հուսալ չէր կարելի, պաշարողական թնդանոթներն էլ, որոնց հետ գալիս էր մի ամբողջ գունդ, ուշանում էին։ Կացությունը դժվար էր, եթե չասենք՝ հուսահատական։

Աբբաս Միրզան, սակայն, թեև տասնապատիկ ավելի զորք ուներ Կրասովսկու սակավաթիվ զորքի դեմ, բայց և այնպես չէր վստահանում հարձակ-

* Բնագիրը մեջ է բերված լեզվական որոշ խմբագրմամբ— Պ. Հ.։

** Վ. Պոտտոյի աշխատության մեջ Կրասովսկու բնակատեղը անվանված է Ջենգուլի (Дженгули), տե՛ս հ. III, պրակ 3, էջ 457 —Պ. Հ.։

վել նրա վրա, և երկու հակառակորդներն էլ մի քանի ժամանակ կանգնած են մնում իրար դեմ՝ մանր հետախուզական ընդհարումներով քննելով միմյանց դիրքերը և չափելով ուժերը։ Այսպես շարունակվում է մինչև օգոստոսի 15-ը, երբ պարսիկները մոտենում են ռուս բանակի դիրքերին, կրակ են ձգում շըրջապատող արտատեղիները և, վերցնելով իրենց բանակի մի մասն Աշտարակից, փոխադրում են Օշական, և այդտեղից էլ զորք ուղարկում, պաշարում էջմիածինը և սկսում սաստիկ ռմբակոծել։ Այդ մի միջոց է եղել, որով Աբբաս Միրզան կամեցել է ստիպել Կրասովսկուն թողնել յուր ամուր, լեռնային դիրքը, իջնել դաշտ, որտեղ ավելի հեշտ պիտի լիներ ջարդել նրան։

Օգոստոսի 16-ին, առավոտվանից սկսված՝ ռմբակոծության զորեղ որոտը հնչում է դաշտում, շարունակվում է մինչև կեսօր և կարծել է տալիս, որ պարսիկներն որոշել են անպատճառ գրավել վանքը և քարուքանդ անել, մի հանգամանք, որ կարող էր անդարմանելի հեղաշրջում առաջ բերել ձեռնարկված գործում։ Կրասովսկին որոշում է գնալ օգնության՝ վստահելով յուր զորքի անձնվեր հավատարմության և անձնուրաց քաջության։ Նա առնելով 1800 հոգի հետևակ, 500 հոգի հեծյալ, 12 թնդանոթ և յուր ձեռքի տակ գտնված հայ և վրացի սակավաթիվ ձիավորներին, նույն օրն էլ, ամսի 16-ին, երեկոյան ժամը 5-ին դուրս է գալիս յուր ամուր դիրքերից և դիմում դեպի էջմիածին։ Ջենգլեից մինչև էջմիածին 35 վերստ ճանապարհ է, և որոշում է այդ օրը գիշերել ճանապարհին, իսկ մյուս օրը հասնել էջմիածին։ Զորքը գնում է առաջից, իսկ հետևից շարժվում են պաշարեղենով գլխեգլուխ բեռնավորված ծանր սայլերը և հրետանին. զինվորները գնում են ուրախ, զվարթ, հնչում են երգերը, նվագում է երաժշտությունը։ Օրն արդեն թեքված է լինում, երբ նրանք բարձրանալով բարձրավանդակներից մեկի գլուխը՝ տեսնում են իրենց առաջ, դաշտում, թշնամու ձիավորների խիտ շղթան, որոնք սկսվում են գլխապատառ արշավել, որ իմաց տան իրենց բանակին՝ ռուսների գալու մասին, և կես ժամից պարսից ամբողջ բանակը շարժման մեջ է դրվում սարի վրա և դրա շուրջը, Օշականում։ Զորքն իջնում է դաշտ և գիշերելու համար բանակում մարտային կարգով, Սաղմոսավանքի դեմ։ Երեկոյան ժամի ինն է լինում։

Մյուս օրը, օգոստոսի 17-ին, նրանք թեև շատ կանուխ են ճանապարհ ընկնում, բայց արդեն շոգը զգալի է լինում, իսկ ճանապարհը գնալով դժվարանում է. քարքարոտ, դար ու փոս, անջրդի ճանապարհ։ Ծանր սայլերը սկսում են ետ մնալ, կոտրվել, ձիերը ընկնել. մարդիկ ստիպված են լինում ինքյանք քաշել, բարձրացնել, և հոգնում, հյուծվում են՝ խեղդվելով, պապակելով ծարավից, թեև դեռ առավոտ է եղել։ Առավոտյան ժամը 7-ն է լինում, երբ զորքը, վերջապես, բարձրանում է մի ապառաժուտ բլուր, որտեղ մի փոքր

հանգստանում է և դիտում յուր առաջ տարածված դաշտը, որ ամբողջովին ծածկված է լինում թշնամու բազմությամբ, և՛ սարը, որի տակ գտնվում է Օշականը, և՛ Քասախի եզերքը, ուր Աշտարակից գալիս, խմբվում էին ձիավորները:

Ռուս զորքն իջնում է բլուրից և առաջ է շարժվում դեպի Էջմիածին գետի ձախ ափով, այն ճանապարհով, որ այժմ էլ դեռ ցույց են տալիս աշտարակցիք և կոչում Ռըսի Ճամփա, մի նեղ լեռնամեջ գտնվող տաշտաձև, կրճանման, քարքարոտ, դար ու փոս, ահարկու ճանապարհ, որով զորքը չէր կարող ընթանալ լայն ճակատով, այլ միայն՝ սեղմված զորասյուներով, ենթարկվելով ամեն կողմից թշնամու հոծ բազմության կրակին ու հարձակումներին: Եվ ահա՛ այդ ճանապարհին, ռուսների համար ամենադժվար հանգամանքներում և աննպաստ պայմաններում, 1827 թվի օգոստոսի 17-ին տեղի է ունենում այն ճակատամարտը, որ, ինչպես ասացինք, հայտնի է Կովկասի պատերազմի պատմության մեջ Աշտարակի ճակատամարտ անունով, մա՛րտ երկու անհավասար ուժերի մեջ, երկու հազարի՝ 30 հազարի դեմ, մա՛րտ կյանքի ու մահվան:

Կովկասյան պատերազմի պատմագիր Վ. Պոտտոն, որից մենք քաղում ենք Աշտարակի անվան հետ կապված այդ ճակատամարտի պատմությունը, այսպես է նկարագրում դրա գլխավոր մոմենտները.

Այն ժամանակ, երբ ռուս զորքը՝ դասավորած յուր մասերը համապատասխան ստեղծված կացության, առաջ է ընթանում, ասում է նա, «պարսից զորամասերն արագ ավելանում են Քասախի մյուս կողմից (Աշտարակից—Եր. Ծ.) հասնող նորանոր զորախմբերով, որոնք թողնելով իրենց մոտից անցնող ռուս զորքի զորասյուները՝ հարձակվում են նրա վերջապահի վերա, շարժվելով մռայլ, սպառնալից ամպակույտի նման, ձախ կողմից, որպեսզի միջոց չտված լինեն նրանց՝ շեղվելու ճանապարհից և դուրս գալու գետի մյուս կողմում տեղավորված մարտկոցների կրակի տակից: Եվ ահա՛ նրանք նոր միայն հասած են լինում այն կետին, որի դեմ-դիմաց գտնվում է Օշականը, երբ գետի հակառակ ափից որոտում է պարսկական հրետանին՝ շարունակելով գնդակահարել անցնող զորքը անընդհատ, մի քանի վերստ տարածության վերա, և նա ոչ մի հնար չի ունենում խուսափելու կրակից: Օշականի մարտկոցների այդ կրակից էլ հազիվ-հազ ազատված՝ <ռուս> զինվորներն ընկնում են մյուս մարտկոցների կրակի տակ, որոնք բերված լինելով Քասախի այն կողմից՝ տեղավորվել էին արդեն գետի ու զորքի մեջ գտնված բարձրավանդակների թեքվածքների վերա: Նույն ժամանակ էլ 8 թնդանոթ հարվածում են նրանց թիկունքից և ձախակողմյան բարձրություններից, նետելով իրենց ռումբերը ռուսաց մարտկոցների վերա ու զորամթերքների սայլերի ուղղությամբ:

Ռուս զորքի կացությունը գնալով դժվարանում ու վտանգավոր է դառնում.

թշնամու բովանդակ հետևակ զորքը, որ մինչև այդ թաքնված էր ձորում, այդ պահին դուրս է գալիս բարձրության վերա և արագորեն առաջ է գնում, որ բռնած լինի կիրճի ելքը. նրան օգնության է հասնում ռուս զորքից դեպի ձախ, բարձրությունների վերայով արշավող մի հինգ հազարանոց հեծյալ ջոկատ: Թշնամին ձգտում է առաջ անցնել, որպեսզի օղակաձև սեղմի յուր շարքերը և ամեն կողմից շրջապատի ռուսներին... Եվ ահա՛ նա՝ <Կրասովսկին>, որ<պեսզի> բաց արած լինի յուր համար ճանապարհ դեպի վանքը, հրամայում է առջևում կանգնած 39-րդ գնդի զորասյուներին՝ թափով հարձակվել թշնամու վերա: Բարեբախտաբար, եգերները կարողանում են վազեվազ բռնել բարձրությունները առաջ, քան թշնամին հաջողում է միանալ, և զորեղ կրակով նրա գլխավորության առաջն են առնում. թշնամու հեծելազորը ընկնելով նրանց կրակի տակ՝ ետ է շպրտվում, իսկ հետևակն ինքն է կանգ առնում: Դրա փոխարեն, սակայն, թշնամին այժմ յուր բոլոր թափը կենտրոնացնում է ռուսաց վերջապահի վերա, որ, ըստ հնարավորության, կարողանա արգելք հանդիսանալ նրա արագորեն առաջ շարժվելուն: Զուր Կրասովսկին հրամայում է շտապել ետ նահանջել, որպեսզի, որքան կարելի է շուտ, անցնեն կորստաբեր կիրճը. դրա (այդ հրամանի—Եր. Ծ.) կատարումը, սակայն, կապված է լինում անհաղթելի դժվարությունների հետ:

Հոգնած, վաստակած՝ հինգ ժամ տևող կռվից, զինվորները սկսում են ուժասպառ լինել, այնինչ թշնամու հետևակի հարձակումը վերջապահի վրա գնալով ավելի ու ավելի կատաղի է դառնում: <Ռուս> զորքը ո՛չ մի տեղից օգնության հույս չուներ. նա պաշտպանվում է հուսահատ վճռականությամբ, և, իհարկե, թշնամուն էժան չի նստում նրա հարձակումը՝ կարտեչը բրդում է նրանց անխնայաբար: 40-րդ գնդի զինվորների քաջությունը գերազանցում է ամեն մի երևակայություն: Մինչև այն սարի լանջը, որտեղից արդեն սկսվում էր Էջմիածնի տափարակը, մնում էր չորս վերստ, բայց այդ չորս վերստը քառասուներորդ գնդի և նրա հետ գործող հրետանու համար մի ահռելի տարածություն է լինում:

Ճանապարհն այստեղ ավելի քարքարոտ ու դժվարակոխ է դառնում: Հրետանին ոստոստելով քարեքար, հազիվ-հազ առաջ է գնում ձորի կեռմաններով. ձիների վերայից բարձրանում է թանձր գոլորշին, սայլերի սռնիները ճռընչում են, անիվները կոտրատվում, և ամեն մի կոտրված կամ ընկած սայլ բռնելով ճանապարհը, կասեցնում է բոլոր զորքի շարժումը: Զորքի խուճապն այդ դեպքերում, բնականապես, աճում է, և մարդիկ խռնված մի տեղ՝ ընկնում են զանգվածորեն, թշնամու խաչաձև արձակած կրակից: Ամեն մի քայլ, որ նրանք անում են դեպի առաջ, ավելացնում ու սաստկացնում է կորուստը:

Հարկ է լինում ամրացնել վերջապահը Ղրիմյան մի ամբողջ բատալիոնով, և Կրասովսկին քանիցս ստիպված է լինում ինքն անձամբ առաջնորդել սվինամարտի այս կամ այն ջոկատամասը, որպեսզի մյուսներին միջոց տված լինի հետևելու ռազմամթերքի սայլերին: Այն ժամանակ թնդանոթները մեծամեծ դժվարություններով բարձրացվում, տարվում են հրետանուն սպասարկող ձիերի և զինվորների հետ: Զինվորների հոգնածությունը հասնում է նվաղելու աստիճանի, նրանց կորուստն այնքան շատ է լինում, որ անհնարին է դառնում բանեցնել հրետանին: Զինվորներից շատերն ընկնում են իրենց թնդանոթների մոտ և թիկն տալով քարերին՝ սառնասիրտ շունչ են քաշում թշնամու գնդակների տարափի տակ...

Այսպես շարունակ կռվելով էլ զորքը, սակայն, պահպանում է կարգը մինչև վերջին րոպեն: Եվ ահա՛ նրա առաջ վերջին զառիվերը, որից այն կողմը սկսվում էր տափարակը: Ամենքը հասկանում են, որ հենց այդտեղ զորքի առաջը ճակատից կփորձի բռնել թշնամու գլխավոր ույժը, որ նրա առաջը փակած լինի էջմիածնի ճանապարհը. վրա է հասնում ճակատագրական րոպեն, երբ շրջապատված տասնապատիկ զորեղ թշնամուց՝ հարկավոր պիտի լիներ առաջ խաղալ գլխապատառ, որ փրկած լինեին դրոշակները: Կարտեչի պաշարը սպառված էր: Կրասովսկին ստիպված է լինում թողնել տրանսպորտը և ազատել միայն հրետանին, առնելով թնդանոթները բատալիոնի մեջ. Ղրիմյան գնդի քահանան՝ Ֆյոդորովը, խաչը ձեռքին առաջ է ընկնում: Բարեբախտաբար, հենց այդ վայրկյանին էջմիածնի պահապան զորքը դուրս է գալիս վանքի դարպասներից, և թշնամին՝ երկու կրակի մեջ ընկնելու երկյուղից, ճանապարհ է տալիս:

Կրասովսկին արագորեն իջնում է տափարակը և կանգնում վանքից երկու վերստի վերա, որտեղ սպասում է վերջապահներին: Ղազախներին և հրացանաձիգներին, որոնք գտնվում էին ճանապարհի մյուս կողմը, հրաման է ուղարկվում, որ նրանք շտապեն միանալ զորասյուներին, բայց հրացանաձիգները պապակելով ծարավից՝ վազում են ոչ թե միանալու զորասյուներին, այլ դեպի լայն առուն, և ոչ մի ստիպմունք, ուժ չի կարողանում հեռացնել նրանց սառը ջրից: Թշնամին օգտվում է այդ հանգամանքից. ամբողջ պարսկական հեծելազորը թափվում է հրացանաձիգների վերա և սկսում է կոտորել նրանց այնպես, ինչպես որ միայն կոտորել գիտե արևելյան հեծելազորը: Ղազախները, իրենց սակավաթիվ լինելու պատճառով, ոչ մի օգնություն չեն կարողանում հասցնել նրանց և ստիպված են լինում նահանջել ու միանալ զորքին:

Հրացանաձիգների կորուստն անխուսափելի է դառնում: Զինվորներից շատերը՝ նվաղած հոգնածությունից ու ծարավից, ընկնում են գետին և չեն էլ փորձում պաշտպանվել: Պարսիկները գերի չեն առնում, այլ կտրում են բոլորի՝

կենդանիների ու մեռյալների գլուխները, կապում են իրենց թամբերին և այդ արյունաշաղախ ավարով արշավում են ետ, որ ստանան խոստացված տասական ոսկին ամեն մի գլխի համար, որի հետևանքով էլ համարյա բոլոր սպանված ռուսների դիակները հետո գտնվում են գլխատված:

Նույն իսկ րոպեին, երբ գլխավոր վտանգը ողջ զորքի համար արդեն անցած էր համարվել, հանկարծ ռուս զորքին տոգորում է պանիքական ահն ու սարսափը, հրետանին, չհուսալով որ ինքը պաշտպանված կլինի, գլխապատառ արշավում է դեպի վանքը. դրան հետևում են մյուսները այնպիսի իրարանցումով և անկարգապահությամբ, որ վերջապահը խառնվում է մյուս մասերի հետ»:

Ահա՛ այդտեղ, այդ ժամանակ, երբ անհնարին է դառնում խանգարված կարգը վերականգնել, ընկնում են ընտիր քաջերից շատերը. Ինքը Կրասովսկին, որ արդեն նախկին ընդհարումներին վիրավորված էր ձեռքից, ազատվում է մահից միայն բարեհաջող պատահականությամբ:

Ճակատամարտը վերջանում է: Դրա մեջ կատարված բազմաթիվ քաջագործություններից հայտնի է դառնում և մի հայի՝ երևանցի Հակոբ Հարությունյանի հերոսական անձնվիրությունը: «Դա պարսից հրետանու մեջ թնդանոթաձգության պաշտոն կատարելով՝ կռվի ամենատաք միջոցին այնպես է ուղղում յուր թնդանոթը, որ նրա ռումբերը միշտ ընկնում են ոչ ռուսաց զորքի մեջ, այլ՝ պարսից: Նրան բռնում են, բայց նա կարողանում է կռվի ժխորի մեջ փախչել, սակայն վերստին բռնվում է, և Երևանի սարդարը հրամայում է հանել նրա աչքերը, կտրել քիթը, շրթունքը, ականջները և կրունկները: Լլկված, այլանդակված՝ սակայն նա կարողանում է հասնել էջմիածին: Հետագայում ռուս կառավարությունը վարձատրում է նրան՝ տալով նրան, միանվագ, տասը ոսկի և հատկացնելով կենսաթոշակ՝ տարին 100 ռուբլի:

Էջմիածնի դարպասի առաջ Կրասովսկին կանգնեցնում է առջևից գնացող զորքը, որպեսզի միջոց տված լինի բոլորին մի տեղ հավաքվելու: Զինվորները այնպես տկարացած և ուժասպառ կացության մեջ են լինում, որ կիսամեռ ընկնում են վանքի բարձր պարիսպների ստվերի մեջ, և երբ վերկենալու հրաման է տրվում, եգերներից հինգ հոգի, որոնք ո՛չ վիրավորված են լինում, ո՛չ էլ ջարդվածքներ ստացած, գտնվում են մահացած ուժասպառությունից: Կրասովսկին բերում է վանքը յուր զորքի մի չնչին մնացորդը միայն, կորցրած լինելով այդ ահարկու օրվա ընթացքում յուր ամբողջ տրանսպորտը, 24 սպա և 1130 զինվոր, մի ահագին կորուստ, եթե ի նկատի առնվելու լինի, որ ամբողջ զորքի թիվն երկու հազարից ավելի չի եղել» (էջ 471—478):

Բարեբախտաբար, աշտարակցիք այդ ճակատամարտի և դրա պատրաստության օրերում գյուղում չեն եղել, թե չէ՝ դժվար է անգամ երևակայել, թե նրանք ի՞նչ քաշած կլինեին Աբբաս Միրզայի 30 հազարանոց բանակի երեսից,

որ բռնած է եղել գյուղը և տեղավորված դրա մեջ օգոստոսի 6-ից մինչև 15-ը։
Աշտարակի 20 հոգի պահապանները և երկու սարվազը, որոնք փոխեփոխ
եկել են գյուղ, մինչև այդ շատ հավատարմությամբ և բարեխղճորեն կատարել
էին իրենց ծանր պարտականությունը. Նրանք ժամանակին ջրել, պահ-
պանել էին այգիները չորանալուց, պահպանել էին գյուղը շրջակա ավազա-
կաբարո ցեղերի հափշտակություններից, բայց նրանք անզոր են եղել Աբբաս
Միրզայի և սարդարի հրոսակների դեմ։ Եվ գյուղը չարաչար տուժել է։ Բուն
բանակը տեղավորված է եղել այգիներում, ուստի և առաջին հերթին տրոր-
վել, ոտքի տակ են գնացել հեծելազորի ձիերի սմբակների տակ այգիները.
խաղողը նոր միայն սկսած է եղել հասնել կամ, ինչպես ասում են, նոր միայն
ջուր ընկած է եղել, և այդ կիսահաս խաղողը չեն փետել, չեն քաղել, այլ թփերի
հետ միասին ջարդել, տարել են. Ճղակոտր են արել, փչացրել և պտղատու
ծառերը, որոնք այդ ժամանակները արդեն պտուղներով ուռճացած են եղել.
տների և այլ շինությունների փայտեղեն մասերը՝ պատուհանների, լուսամուտ-
ների փեղկերը, դռները և, մինչև իսկ, ծածկերի գերանները հանել, քանդել են
և գործածել վառելիքի և այլ կարիքների համար, մի խոսքով՝ արել են այն,
ինչ որ, սովորաբար, կարող է անել մի անզուսպ, խառնիճաղանջ, հրոսակա-
յին բազմամարդ բանակ, որոնց քաշում է պատերազմի դաշտը, ո՛չ գաղա-
փարը, ո՛չ հանրային շահը, այլ միայն և միայն կողոպտելու, ավերելու
բնազդը։ Եվ այդ ավերանքը կատարել են <...> հեծելազորը և, հատկապես,
Հասան խանի, Ջաֆար խանի հրոսակները և Նաղի խանի ղարափափախները։
Աշտարակցիք թողել էին իրենց սիրած Աշտարակը շեն ու կանաչազարդ, իսկ
այժմ, երբ նրանք պիտի վերադառնային, նրանց սպասում էր ավերված ու
քանդված Աշտարակը։

Աշտարակի ճակատամարտից հետո, երբ ռուս բանակի մի խոշոր մասն
արդեն համախմբված է եղել էջմիածնում, և Թիֆլիսից էլ եկած, հասած՝
սպասված պաշարողական մեծ թնդանոթները, Պասկևիչը հնարավոր է համա-
րել պաշարել Սարդարապատը, առնել ու հետո երթալ Երևանի վերա։ Այդ նպա-
տակով նա թաքցնելով յուր մեջ այն տեսլությունը, որ նա վաղուց ի վեր տա-
ծում էր Կրասովսկու հանդեպ և, Աշտարակի ճակատամարտից հետո, և Ներսե-
սի հանդեպ, տեսլություն, որի հետևանքը ապագայում պիտի լիներ այդ երկու
գործիչների տապալումը, առաջինին կարգում է Սարդարապատի պաշարման
գլխավոր ղեկավար, իսկ երկրորդին խնդրում է հացի պաշար գտնել։ Ներսես
Աշտարակեցին խոստանում է հոգալ զորքի հացի պաշարն, եթե իրեն տրամա-
դրվեն որոշ չափով զինյալ ուժեր։ Զորքը ճանապարհ է ընկնում դեպի Շահրիար
գյուղ, որից չորս վերստ հեռու գտնվում էր դրանից 15 տարի առաջ շինած
Սարդարապատ զորեղ բերդը։ Այդտեղից զորքը բաժանվել է երկու մասի. խո-
շոր մասը գնացել է Սարդարապատ և պաշարել բերդը, իսկ փոքր մասը, Ներ-

սեսի առաջնորդությամբ և զորավար Սուխտելինի հրամանատարությամբ՝
Սուրմալուի Կողբ գյուղը, որտեղ Ներսեսի՝ աշտարակցիներից ստացած տե-
ղեկությամբ, գտնվում էր պարսից հացի և գարու մի մեծ շտեմարան։ Առնելով
այդտեղ գտնված մի քանի հազար սոմար հացը և պարեն, ևս և՝ գյուղում,
պարսից ձեռքով տեղահանված և հավաքված մի քանի հարյուր գերդաստան-
ներ Աշտարակ, Օշական և Փարաքար գյուղերից, շտապով վերադառնում և
սեպտեմբերի 12-ին միանում Պասկևիչի բանակի հետ։

Գաղթականները զորքի օգնությամբ, անվտանգ անցնում են Երասխը և
շարունակելով իրենց ճանապարհը Արմավիրա դաշտով՝ հասնում են Քյալակ-
արխ կոչված գյուղը և իջևանում Սարդարապատի առվի վերա։ Մյուս օրը
նրանք հասնում են Սարդարապատ և իջևանում բերդի հարավային կողմը,
Շահրիարի հյուսիսակողմը, դարձյալ Սարդարապատի առվի վերա, որտեղ գա-
լիս է նրանց տեսնելու Ներսեսը. Նա մխիթարում է նրանց, հույս տալով, որ
շուտով կվերջանան նրանց տառապանքները, և նրանք կհանգստանան իրենց
հարազատ օջախներում։ Սեպտեմբերի 20-ին առնվում է բերդը, և գաղթական-
ները մտնում են բերդը և հյուրասիրություն գտնում այդտեղ ղալաբանդըլըղ
եղած 700 տուն հայերից։ Այդտեղից նրանք, Ներսեսի պատվերով, գնում են
Վաղարշապատ, որտեղից օշականցիներն ու փարաքարցիները իսկույն մեկ-
նում են իրենց գյուղերը, իսկ աշտարակցիք, վեց օր այնտեղ մնալուց
հետո միայն, հրաման են ստանում մեկնելու իրենց գյուղը։ Նրանք հասնում
են գյուղ և գտնում են իրենց այգիները փչացված ու տները կիսավեր. Երև-
վանից փախչում, գալիս են և գյուղից առնված սարվազները*։

11

ԹՈՒՐՔՄԵՆՉԱՅԻ ԴԱՇՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆՈՐԱՆՎԱՃ ԵՐԿՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿԸ ԵՎ ԱՇՏԱՐԱԿԸ

1827 թվի հոկտեմբերի 1-ին առնվել է Երևանը, նույն ամսի 13-ին գրավ-
վել է Ատրպատականի մայրաքաղաք Թավրիզը, իսկ 1828 թվի փետրվարի 9-ին
կնքվել է Թուրքմենչայի դաշնագրությունը, որի զորությամբ Արարատյան
երկիրը, այսինքն՝ Երևանի և Նախիջևանի խանությունները Օրդուբադի շրջանի
հետ միասին, անցել է Ռուսաստանին, և Երասխ գետը դարձել է սահման
Ռուսաստանի և Պարսկաստանի մեջ։ Բացի նրանից, Պարսկաստանը պարտա-
վորություն է ստանձնել արգելք չհանդիսանալ և թույլ տալ Ատրպատականի
հայ բնակչության՝ ազատորեն փոխադրվելու Ռուսաստանի սահմանները,

* Աշտարակցիների՝ Երևանի գրավմանն ունեցած մասնակցության մասին տե՛ս լրացում
3 (Պ. Հ.)։

ով որ ցանկանա, նա և՝ վճարել, իբրև պատերազմական տուգանք, 10 ղուրուր
ոսկի, այսինքն՝ 20 միլիոն ռուբլի։

Ի՞նչ փոփոխություն է տեղի ունեցել երկրի կառավարության գործի մեջ՝
պարսից կառավարության ձևի համեմատությամբ։

Երկիրը սկսել է կառավարվել այն կարգերով, այն ձևով ու եղանակով,
այն սիստեմով ու հոգով, որոնք հատուկ են եղել ցարական Ռուսաստանի ռե-
ժիմին <...> Երկրի քրիստոնյա տարրը այլևս չի՛ ենթարկվել հալածանքի
յուր դավանանքի համար, չի՛ հալածվել նրա խաչն ու հավատքը, կարողացել է
ազատ և անարգել կատարել յուր կրոնական ծեսերը. վաղնջական սովորույթ-
ների և շարիաթի տեղը բռնել են հաստատուն, գրավոր օրենքներ, որոնցով
համեմատաբար ավելի է պահպանված եղել անձի, գույքի, ստացվածքի ան-
ձեռնամխելիությունը և հնարավորություն է ստեղծված եղել կամայականու-
թյունների առաջն առնելու համար և, որ գլխավորն է, ասպարեզ է բացվել և
հնարավոր է դարձել ուսանել և մտավորապես զարգանալ։

Առաջին նվագ, ինչպես հայտնի է, վերոհիշյալ նորանվաճ խանությու-
ների ու շրջանի երկրներից կազմվել է Հայկական նահանգ կամ Հայոց աշ-
խարհ կոչված երկրամասը (Армянская область), որ յուր կառավարության
ձևով ու օրենսդրությամբ տարբերվել է Ռուսաստանի մյուս երկրամասերից։
Դա մի ինքնուրույն զինվորական կառավարության ձև է եղել, որի մեջ ի նկա-
տի են առնված եղել երկրի մեջ դարերի ընթացքում եղած կարգերը, գոր-
ծադրված վաղնջական սովորույթները և ժողովրդի վարք ու բարքին համա-
պատասխան հաստատությունները։ Զպետք է, իհարկե, կարծել, որ այդ դեպ-
քում այդտեղ ցարական կառավարության սիստեմն էլ փոփոխված է եղել, ո՛չ.
կառավարության սիստեմն ու հոգին նույնն է մնացել, ռուս ցարական բա-
ցարձակ միապետական իշխանության կառավարության սիստեմն ու հոգին,
և միայն ժամանակավորապես պահպանված են եղել տեղական կարգերը,
մինչև որ ժողովուրդը քիչ թե շատ ծանոթանար ռուս լեզվին, ընտելանար
ռուսական կառավարության եղանակին ու հոգուն։

Ժամանակավորապես երկրի հիմնարկների մեջ թույլ է տրված եղել տե-
ղական լեզուների մասնավոր գործածությունը ռուսերենի հետ միասին, դա-
տարաններում փորձ է արվել գործադրելու «Հայոց դատաստանագիրքը»
(Մխիթար Գոշի Դատաստանագիրք, XII դար) և մուսուլմանական իրավունքը,
պետական ընդհանուր կարգադրությունները, շրջաբերականները հաղորդվել են
ժողովրդին երեք լեզուներով՝ ռուսերեն, հայերեն ու թուրքերեն, կառավար-
չական ապարատներում եթե ո՛չ գլխավոր, գոնե երկրորդական պաշտոնները
հանձնված են եղել տեղացիներին, գործադրության մեջ են թողնված եղել երկ-
րի նախկին աշխարհագրական անունները, պաշտոնեության կոչումները, վար-
չական բաժանումները և, մինչև իսկ, կազմվել է երկրի Հայկական նահանգ կամ

Հայոց աշխարհ պաշտոնական անվան համապատասխան հայկական զինա-
նշան (областной герб)։

Երկրում սահմանված ինքնավարության նմանող այդպիսի կառավարության
ձևը, իհարկե, ինքնավարություն չի եղել, և Հայկական նահանգ և Հայոց աշ-
խարհ անուններն իրենց համապատասխան ներքին բովանդակությունը չեն
ունեցել։ Երկրի գլխավոր կառավարության ղեկը գտնվել է Պասկևիչի ձեռքին,
որ նստած Թիֆլիսում, կառավարել է նորանվաճ երկիրը մի առանձին գեներալ-
նահանգապետի ձեռքով, արթուն հսկելով, որ թե՛ նահանգապետը և թե՛ ժա-
մանակավոր կառավարության անդամ Ներսես Աշտարակեցին չթույլ տված
լինեն իրենց անել երկրի կառավարության գործում մի այնպիսի քայլ, որ քա-
ղաքական ինքնուրույնության մի կնիք կրեր և հայ ժողովրդին նախապատ-
վություն տալու հանգամանք ունենար, և երբ նկատել է, չասենք՝ նրանց կող-
մից կատարված այդպիսի ակներև գործողություններ, այլ միայն աղոտ նշան-
ներ, անմիջապես տապալել է և՛ Ներսես Աշտարակեցուն, պատվավոր աքսոր
ուղարկելով նրան Բեսսարաբիա, և՛ առաջին գեներալ-նահանգապետ Կրա-
սովսկուն, որ համախոհ ու գործակից էր գտնվել նրան։

<...> Քաղաքականապես շահված լինելով կատարված փոփոխությունից՝ քիչ
է շահված եղել ժողովուրդը տնտեսապես. այդ կողմից շահված է եղել գլխա-
վորապես հայ և թուրք ժողովրդի միայն մի փոքր մասը՝ թուրք կալվածատե-
րերը (հայ կալվածատերերի թիվը շատ քիչ է եղել) և հայ առևտրականները,
որոնցից առաջինները առաջ են քաշվել, վարձատրվել աստիճաններով, շքա-
նշաններով, եկամտավոր պաշտոններով և հաստատվել իրենց կալվածատի-
րական իրավունքների ու արտոնությունների մեջ, իսկ երկրորդների առաջ
ազատ ճանապարհ և լայն ասպարեզ է բացվել ընդարձակելու իրենց առևտրա-
կան գործառնությունները, դարձվածները և պետական կապալառուական
գործունեությունը և հարստանալու։ Իսկ ժողովրդի հոծ բազմությունը, սովոր
զանգվածը՝ գյուղացիությունը, թեև մի որոշ և համեմատական չափով տեր է
դարձել յուր գույքին, ստացվածքին և յուր քրտինքով վաստակածին, և պաշտ-
պանություն գտել գոյություն ունեցող հաստատուն օրենքներից, բայց դրա
փոխարեն նա հենց առաջին օրերից սկսել է տուժել կառավարության՝ կոպտա-
բար գործադրած բռնի ռուսացման քաղաքականությունից և շարունակել է գե-
րի և սորուկ մնալ կառավարող նոր աստիճանավորների ձեռքին։ <...> Աշ-
տարակը, որ պարսից իշխանության օրերով, ինչպես ասել ենք, գտնվել է Սար-
դարության 15 մահալներից 12-երորդի մեջ՝ Կարբի բասարում, և կառավարվել
է դարձյալ միրբոլուկ կոչված մահալապետների կամ գավառապետների ձեռ-
քով և ենթարկվել է այն ռեժիմին, որ հաստատված է եղել հիշյալ նահանգում։
Հայկական նահանգի գոյության ընթացքում, մնացել է նույն մահալում, կառավարվել
դույն մահալի մահալապետ միրբոլուկների ձեռքով, ռուսաց օրերով էլ, Հայկա-

Աշտարակցոց հիշողության մեջ գավառի այդ ժամանակաշրջանի միրբոլուկ-
ներից պահպանվել է Ներսես Աշտարակեցու եղբայր Կարապետ աղայի անու-
նը, որի մասին մենք յուր տեղում արդեն մանրամասնաբար խոսել ենք: Դա
երեք տարի շարունակ (1828—1831) վարել է այդ պաշտոնը և միշտ էլ առան-
ձին հոգ տարել Աշտարակի մասին և խնամակալել գյուղացոց:

Աշտարակը մի խաղաղ գյուղ է եղել. գյուղացիք, ինչպես արդեն ասել ենք,
Սարդարապատի առումից հետո վերադարձել էին իրենց գյուղը և գտել իրենց
տները կիսավեր և այգիները՝ շատ մասով փչացված: Նրանք անմիջապես
ձեռնարկել են իրենց բնակարանների վերանորոգության և այգիների վերա-
մշակման կարևոր գործին, ուստի և կասկածանքի առիթ էլ չեն տվել և, բնա-
կանաբես, ազատ են մնացել զանազան համայնական պատիժներից. այդ մա-
սին, գոնե, ո՛չ մի հիշողություն չի պահպանվել գյուղում: Դժբախտաբար,
նրանք երկար չեն կարողացել շարունակել իրենց այդ խաղաղ աշխատանքը.
վրա են հասել պատերազմի ու գաղթի զրկանքներին ենթարկված և տնտեսա-
պես ու ֆիզիկապես քայքայված ժողովրդին անբաժան ընկեր՝ համաճարակ հի-
վանդություններ, ևս և՝ բնության դժբախտ պատահարներ, որոնք և ընդհատել
են նրանց այդպիսի շինարար աշխատանքը և արգելք հանդիսացել նրանց
հանգստանալուն և վերականգնելուն իրենց քայքայված տնտեսությունը այն
թափով ու արագությամբ, որ նրանք ցանկացել են:

1830 թվին, տակավին Կարապետ աղայի միրբոլուկության օրերով, հայտ-
նվել է Վաղարշապատում ժանտախտը և արագ տարածվելով՝ մտել է և Աշ-
տարակ, կոտորած արել և ընդհատումներով կրկնվել և՛ հաջորդ տարիները.
1840 թվին տեղի է ունեցել Ակոռու երկրաշարժը, որի առաջ բերած սասանումն
այնքան զորեղ է եղել և զգալի Աշտարակում, որ ժողովուրդը ստիպված է
եղել դուրս գալ բնակարաններից և երկու ամիս շարունակ, ահ ու դողի մեջ,
ապրել այգիներում: 1841 թվին, ավելի զորեղ, քան նախկին տարիները, կը-
կրնվել է ժանտախտը* և յուր հետևանքներով այնպիսի սարսափ տարածել Աշ-
տարակում, որ գյուղացիներից շատերը թողել են գյուղը և դես ու դեն փախել:
Աշտարակին կից գտնված Մուղնի գյուղը դրանից համարյա թե ամայացել,
անմարդաբնակ է դարձել. այդտեղ, ի միջի այլոց, վախճանվել է և տեղի Ս.
Գևորգի վանահայր, աշտարակցի Մարտիրոս վարդապետը, որ չի վախեցել
համաճարակից, այլ համարձակապես շրջել է տառապող գյուղացիների բնա-
կարանները, մխիթարել է ամենքին, թաղել մեռյալներին և ինքն էլ վարակվել:

Հայկական նահանգն յուր այդպիսի կազմակերպությամբ գոյություն է
ունեցել 13—14 տարի՝ 1828—1841 թիվը, որից հետո նա միացվել է Թիֆլի-

* Առավել մահաբեր է եղել 1847 թ. ամառը բռնկված ժանտախտը —Գ. Հ.

սի նահանգին, կազմելով նրա երկու գավառը՝ Երևանի և Նախիջևանի: Դրա
հետևանքով, բնականաբես, առաջ է եկել դրանց մեջ վարչական բաժանմունքի
որոշ փոփոխումն՝ նահանգի մյուս գավառների նմանությամբ. Երևանը և Նա-
խիջևանը դարձել են իրենց անունը կրող գավառների վարչական գլխավոր
կենտրոնատեղի, գավառական քաղաքներ, որտեղ նստել են դույն գավառների
կառավարիչ ատյաններ, որոնք կոչվել են գավառապետներ՝ уездные
начальники, իսկ գավառները բաժանվել են գավառամասերի, որոնց կառա-
վարիչ ատյաններ, որոնք կոչվել են թուրքական բառով մուրովներ (участ-
ковый заседатель): Աշտարակն, իբրև Երևանի գավառի գյուղերից մեկը, են-
թարկվել է դույն գավառի էջմիածնի գավառամասի մուրովների իրավասու-
թյան. նրանց բնակության տեղը մի ժամանակ եղել է Սև ջրի գլխին շինված
Ղազախի շտաբ կոչված տներում, հետո փոխադրվել է հայ Ջեյվա գյուղը:
Դրանց, այդ մուրովների մասին Աշտարակում քաղցր հիշողություններ չեն
պահպանվել. գյուղացիների՝ այդ ժամանակաշրջանին վերաբերյալ պատմութ-
յունների մեջ մուրովները հատկապես ներկայանում են իբրև կաշառակեր ատ-
յանների մեջ մուրովները հատկապես ներկայանում են իբրև կաշառակեր ատ-
ատյանավորներ, իբրև իրենց յասաուլների մարակին ու բռունցքին գոր տվող
կառավարիչներ: Հիշվում է նամանավանդ մի հայ՝ Քյարխանով ազգանունով
մուրով, որ բայի նրանից, որ եղել է չափազանց կաշառակեր, այլև մի կվար-
ճախոս և արտաքո կարգի հայհոյաբերան և հիշոցատու մարդ:

Այդ ժամանակաշրջանում էլ դեռ շարունակվել են աշտարակցիների տա-
ռապանքները համաճարակներից ու բնության պատահարներից. 1847 թ.
հայտնվել է ու արագ տարածվել հնդախտը, որից Աշտարակում հինգ օրվա ըն-
թացքում միայն մեռել են 125 հոգի. նույն թվին, գարնանը, երևան է եկել մա-
րախը, որ ամառը թևավորվելով՝ տարածվել է ամեն տեղ. դա հաջորդ, 1848
թվին հասել է Աշտարակ, որտեղ անցնելով Քասախ գետը՝ մտել է գյուղի այ-
գիները, արտերը և ամեն բան կերել չորացրել է, և գետն անցնելու ժամանակ
այնքան խեղդվել է ջրի մեջ և քարափների խոռոչներում, այնքան սատկել,
որ գարշահոտությունից անկարելի է եղել մտնել ձորը: Այդ բոլորի հետևանքով՝
ցորենը այնպես թանկացել է, որ խալվարը վաճառվել <է> 20 ռուբլու, որ այն
ժամանակները մի ահռելի գին է եղել Աշտարակի համար, չտեսնված ու
չլսված գին:

Երևանի և Նախիջևանի գավառները մնացել են կցված Թիֆլիսի նահան-
գին մինչև 1850 թիվը (1841—1850), երբ բաժանվելով նրանից՝ նախկին Հայ-
կական նահանգի բոլոր երկրամասերի, Ալեքսանդրապոլի և Մեղրի գավառ-
ների հետ միասին կազմել են մի առանձին նահանգ կամ գուբեռնիա, որ յուր
նահանգական քաղաք Երևանի անունով կոչվել է Երևանի նահանգ: Այդ նոր փո-
փոխության հետևանքով էլ նորակազմ նահանգի մեջ մտած երկրամասերն են-

թարկվել <են> նոր նահանգներին հատուկ վարչական բաժանմունքի՝ գավառների, գավառամասերի և այլն, և Աշտարակը մտել է էջմիածնի գավառի մեջ և ենթարկվել նրա գավառական իրավասության, մի փոփոխություն և վարչական բաժանմունք, որ Աշտարակի համար այնուհետև մնացել է կայուն, անփոփոխ և տևողական, մինչև ցարական Ռուսաստանի տապալումը, այսինքըն՝ ամբողջ 67 տարի, 1850—1917 թիվը։

Մենք ասել ենք, որ երկրի մեջ եղած նախկին կարգերը առաջին նվագ մնացել են անփոփոխ և հետո միայն փոխվել ու մուծվել ռուսական կարգերը, և այդ կատարվել է ոչ միանգամից, այլ հետզհետե, զգուշությամբ, այսօր մեկը, վաղը՝ մյուսը, աննկատելի կերպով։ Այդ մեր խոսքերից, սակայն, չպետք է եզրակացնել, որ երկրի մեջ ամեն բան էլ թողնվել է միևնույնը, ինչպես եղել է պարսից իշխանության օրերով։ Եղել են, ի՛հարկե, կարգեր, որոնց փոփոխումն անհետաձգելի է համարվել, և այդպիսիների փոփոխման ու վերացման ձեռնարկվել է անմիջապես, նույն իսկ Հայկական նահանգի գոյության ընթացքում։ Առաջին հերթին հենց վերացվել է սարքյարությունը, այսինքն՝ սարդարական գյուղերն ուղարկվող սարքյարների ձեռքով հարկ հավաքելու կարգը, սարքյարներ, որոնք ատելի են եղել ժողովրդին. վերացվել են ղըռնաղ փուլի և կուլլուղ փուլի հարկերը և հարկերի բնույթ կրող պարտադիր պաշտոնական փեշքեշները և այլ այդպիսի անհեթեթություններ, որոնք հատուկ են եղել սարդարական կառավարության։ Կրճատվել են հարկերի չափերը՝ յարիքյարինները սկսել են վճարվել ամբողջ բերքի $^{1}/_{2}$-ի տեղ $^{1}/_{4}$-ը, բահրիքյարինները՝ $^{1}/_{3}$-ի տեղ $^{1}/_{4}$, մուլքադարական գյուղացիները $^{4}/_{30}$-ի* տեղ, $^{8}/_{30}$ (որից $^{3}/_{30}$-ը կամ $^{1}/_{10}$-ը՝ մուլքադարին, $^{5}/_{30}$-ը՝ պետական գանձարանին)։

Դույն Հայկական նահանգի գոյության օրերով, 1834 թվին գեներալ նահանգապետ Բեհբուդովը ձեռնարկել է կազմել նահանգի հարկատվության փոփոխության մի այլ ավելի ընդարձակ և ընդհանուր նախագիծ, որ հաստատվել ու սկսվել է գործադրվել 1836 թվից։ Դրանով, այդ նոր օրենքով՝ հարկատվության գործի մեջ մուծվել է համրային երաշխավորության կարգը՝ համերաշխիքը (круговая порука), պահպանվել է բնատուրքը, բայց միայն սահմանվել է դրանց ճիշտ չափը, ավելորդ է համարվել օրանների թիվը հունձից հետո համարելը և հացահատիկի քանակի չափելը կալսելուց հետո, ինչպես որ համարում ու չափում են եղել սարդարության ժամանակները. իրավունք է վերապահվել հարկատուներին՝ իրենց տալիք բնատուրքը, եթե ցանկանային, փոխանակել դրամատուրքի տեղական գների արժեքով, ևս և՝ հարկատվության ենթարկել, ինչպես սարդարի ժամանակները, հողի բերքի բոլոր տեսակները, բացի սերմերից, բամբակից, հարդից, առվույտից և ծղնոտից, որոնցից մինչև

* Նախապես՝ «$^{10}/_{30}$-ի տեղ», հետո վերևից դարձված է՝ «$^{4}/_{30}$-ի տեղ»— Պ. Հ.։

ռուսական տիրապետությունը առնվում էր այնքան մաս, որքան և հատիկից։

Իսկ բոլոր մյուս մանր-մունր հարկերի փոխարեն, որոնք առաջ գանձվում էին սարդարի համար, օրենքը պահանջել է ստանալ դրամատուրք. 2 ռ. 50 կոպ.-ի չափով՝ պետական գյուղացիների ընտանիքներից, և 2 ռ.՝ մուլքադարական գյուղացիների ծխից։ Այդ հարկից ազատված են եղել վրանաբնակները, որոնք առաջ էլ ազատված են եղել սարդարական գանձումներից, և թիուլական գյուղերը՝ «ի հարգանս նրանց տերերի իրավունքի»։

Սակայն այսպիսի փոփոխությունն էլ բավարար չի համարվել, և նույն Հայկական նահանգի գոյության ընթացքում, հենց հաջորդ 1837 թվին, ձեռնարկվել է երկրի հարկատվության գործի ուսումնասիրության, որի համար և կազմվել է մի առանձին հանձնաժողով, որի ամենաեռանդուն անդամն եղել է Բեզակը, ուստի և այդ հանձնաժողովի կազմած նախագիծը կոչվել է նրա անունով։ Այդ նոր նախագծով հարկատվության հիմք ընդունվել է ծուխը, որ հիմք է ընդունված եղել և սարդարության ժամանակները, և ժողովուրդն արդեն ընտելացած է եղել դրան։ Հատկապես ծուխ համարվել է այն ընտանիքը, որ, քանի որ ապրում է միասին, ունի ընդհանուր, անբաժան գույք ու տնտեսություն. բայց ի նկատի չի առնվել ծխի անձնական կազմն ու թիվը, այնպես որ երբեմն բազմանդամ ընտանեկան համայնքները, երկանդամ ընտանիքների հետ միասին, ենթարկվել են միատեսակ հարկատվության։ Բեզակը հարկատվության միակ հիմք ընդունել և միաչափ ընտանիքի ինքնուրույն տնտեսություն ունենալու իրողությունը, իսկ տնտեսության որակը, որ կախումն ունի ընտանիքի տնտեսական ունակությունից, ի նկատի չի առել, որից և առաջ է եկել հարկերի անարդար ու անհավասար բաժանումը, մի բան, որ ռուսական կառավարության հարկադրության սիստեմի ամենապակասավոր կողմն է եղել։

Բեզակի այդ նախագիծը, որ համարվել է հին, մինչև ռուսական տիրապետությունը դեռ գոյություն ունեցած սիստեմի «կարկատած ու շտկած» տեսակը, երբ ընդունվել և օրենք է դարձել, պահպանվել և հարատևել է յուր էական մասերով այնուհետև դեռ երկար ժամանակ՝ և՛ Հայկական նահանգի գոյության ընթացքում, և՛ ղրա՝ Թիֆլիսի նահանգի գավառների վերածված ժամանակաշրջանում, և՛ առանձին նահանգի փոխված ժամանակամիջոցում, և՛ հետագայում, մինչև 900-ական թվականները։

12

ՍԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՊԱՀՊԱՆՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԵՎ ԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ, ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԵՐԻ ՄՈՒԾՈՒՄԸ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՆԱՀԱՆԳԻ ԳՅՈՒՂԵՐՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ԵՎ ԱՇՏԱՐԱԿԸ ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ

Հարկատվության կարգը փոխելուց ու կարգավորելուց հետո, ձեռնարկել են փոփոխության ենթարկելու սարդարության ժամանակներից մնացած կառավարության ձևի և այն կարգերը, որոնք ռուսական կառավարության տեսակետից, անհրաժեշտորեն կարոտել են փոփոխության ու բարելավության՝ գյուղական համայնքների կազմակերպությունն ու բնույթը, հողաբաժանության սիստեմը, ջրօգտագործությունը, տանուտերների ընտրությունը, նրանց ֆունկցիաները, դատարանական գործը և այլն և այլն:

Նախկին կարգերով, ինչպես մենք յուր տեղում ցույց ենք տվել, սարդարության գյուղերի համայնքները համադասակարգային բնույթ և կազմակերպություն են ունեցել. գյուղացիների հետ միասին, գյուղերում ապրել են և այլ իրավական կացության տեր մարդիկ, որոնք հող են ունեցել, պարապել են երկրագործությամբ և բուն գյուղացիներին հավասար իրավունքներով մասնակցել են համայնական-հասարակական կառավարության գործերին: Արդ՝ 1866 թվին հրատարակված գյուղական համայնքներին վերաբերյալ սահմանադրությամբ կամ պոլոժենիայով *գյուղերում ապրող այլ իրավական կացության պատկանողները վերջնականապես զրկվել, հեռացվել են հասարակական գործերից, և դրա հետևանքով իրավաբանորեն կազմակերպվել են փակ, զուտ դասակարգային «գյուղական հասարակությունները»:*

Նախկին սարդարության գյուղերում գործադրված հողաբաժանության կարգը, որի՝ հատկապես հայ գյուղերում ընդհանրացած եղանակը, ինչպես ասել ենք, եղել է համբա-չարեքությունը, որի հիմքը կազմել է պճեղը, այսինքն՝ ծխերի *անդամների որոշ թիվը կամ խմբակցությունը, փոխվել է, և հիմք ընդունվել է առանձին շունչը, հոգին կամ գլուխը, որոնց վրա և բաժանվել է հողը* (подушная разворотка земли):

Սարդարության գյուղերում տանուտերները մի տեղ ընտրովի են եղել, մյուս տեղ՝ նշանակովի, և ընտրվել ու կարգվել են ժառանգաբար, հին տոհմերի ներկայացուցիչներից, և գերմանացի գիտնական ճանապարհորդ Հաքստհաուզենը, դեռ 40-ական թվականներին, տեսել է Քանաքեռում գյուղի կառավարության գլուխ կանգնած հայ ժառանգական տանուտերներ, իսկ նոր, ռուսական կարգով՝ ամեն տեղ նստակյաց գյուղերի տանուտերները ընտրովի են դարձել, և հին տոհմերի ժառանգական տանուտերությունը վերացվել է և իրավաբանորեն զրկվել այդ իրավունքից:

Հին, սարդարական կարգերով՝ գյուղերը կառավարել են տանուտերները, համայնական ժողովների և գյուղական իշխանների ու ծերերի խորհրդակցությամբ և օգնությամբ, և պատասխանատու են համարվել ու եղել սարդարի առաջ գյուղերում ու նրանց սահմաններում կատարված հակաօրինական համարված գործերի համար: Նույն կարգերով՝ տանուտերներին և գյուղական իշխաններին են հանձնված եղել և գյուղացիների դատական գործերը, որոնք և տեսել են դատն ու դատաստանը միջնորդական, հաշտարարական եղանակով, վաղնջական սովորույթի օրենքներով: Վերոհիշյալ 1866 թվի սահմանադրությունը կամ օրենքը, որ կոչվել է «Положение о крестьянах Закавказского края», *չի ճանաչել համայնք* — община, *իբրև ինքնուրույն, անկախ վարչական-դատական միավոր, այլ նա ճանաչել է միայն* գյուղական հասարակություններ, *որոնց մեջ մտել են կամ մի-մի բազմաբնակ, մեծ գյուղեր, կամ առանձին սակավաբնակ, փոքր գյուղեր համախմբվել, կազմել են մի գյուղական հասարակություն, թեև կրոնական, տնտեսական և այլ տեսակետներից այդ գյուղերը հաճախ և ո՛չ մի նմանություն, ո՛չ մի ընդհանուր շահ միմյանց հետ չեն ունեցել: Այդ գյուղերի հասարակությունների գլուխ կանգնած են եղել գյուղապետները՝* **сельский старшина**, *որոնք հայերեն կոչվել են* հասարակական տանուտերներ *և ընտրվում են եղել գյուղական ընդհանուր հասարակական ժողովների կողմից, իսկ հասարակությունների մեջ մտած առանձին սակավաբնակ գյուղերի գլուխ կանգնած են եղել* գյուղական տանուտերները, *որոնք համարվել են հասարակական տանուտերների օգնականները և ընտրվում են եղել իրենց գյուղերի հասարակական ժողովների կողմից: Թե՛ հասարակական և թե՛ գյուղական տանուտերները ունեցել են, համարյա՛ թե, նույն հասարակական և ոստիկանական պարտականությունները, որ ունեցել են սարդարական տանուտերները. առաջինները կատարել են նույն պարտականությունները իրենց հանձնված հասարակությունների վերաբերմամբ, իսկ երկրորդները՝ իրենց գյուղերի վերաբերմամբ, միայն այն տարբերությամբ, որ դրանք, այդ վերջինները, ստորադրյալ են եղել առաջիններին, և իրենց գումարած գյուղական ժողովներն էլ համարվել են մասնավոր ժողովներ և կախումն են ունեցել հասարակական ժողովներից:*

Հասարակական և մասնավոր ժողովներ գումարելու գործի, դրանց մեջ քննության առարկա եղած խնդիրների և դրանց քննարկության ու լուծման եղանակների մեջ, սարդարական գյուղերի ժողովների համեմատությամբ, մի առանձին տարբերություն չի եղել: Ժողովների կազմակերպումը նույնքան էլ պարզ է եղել, որքան սարդարականինը. նրանք գումարվել են, սովորաբար, տոն օրերը, տանուտերների հրավերքով, և կազմված են եղել ամեն կրոնի և դավանության չափահաս, տնատեր, գյուղական հասարակության անդամ և առանձին ծուխ *համարված գյուղացիներից և գյուղական ընտրովի պաշտոնա-*

տար անձերից: Քննվելիք խնդիրները ղեկուցվել են տանուտերների կողմից և
լուծումն են ստացել՝ նայելով կարևորության, կամ ձայների բացարձակ
առավելությամբ, կամ համեմատական և կամ ընդհանուր համաձայնությամբ:
Միակ կարևոր տարբերությունը ռուսական օրենքի և սարդարականի մեջ այն
է եղել, որ ռուսական օրենքով ժողովների վերա դրված են եղել այնքան շատ
ու բազմադիմի պարտականություններ և հատկացված են եղել նրանց այնպիսի
մեծ իրավունքներ, որ սարդարականն երբեք չի ունեցել:

Սարդարական գյուղերի միջնորդական, անկազմակերպ դատի ու դատաս-
տանի փոխարեն նույն ռուսական օրենքով կազմակերպվել է մի լիակատար,
կազմակերպված, կայուն և որոշ կարողությամբ դատարան, որ իրավունք է
ունեցել վերջնականապես քննել ու լուծել յուրաքանչյուր գյուղական հասարա-
կության պատկանած գյուղացիների՝ իրար մեջ ունեցած վեճերը և պահանջ-
մունքները հարյուր ռուբլու արժողությամբ, ինչպես անշարժ կայքերի և հողերի,
նույնպես և փոխառությունների, գնումների, վաճառումների և ամեն տեսակ
պարտականությունների վերաբերմամբ: Նրա, գյուղական այդ դատարանի լուծ-
ման ենթակա են եղել և բոլոր այն գործերը, որոնք վերաբերել են գյուղացիների
կայքին և գույքին հասցրած վնասներին: Բայց միայն դրանով չի սահմանա-
փակվել դատարանի կարողությունը: Նա իրավունք է ունեցել քննել ու լուծել
գյուղացիների մեջ ծագած ընդհանրապես և բոլոր գործերը, առանց արժեքի
սահմանափակման, եթե միայն դատվողները փոխադարձ համաձայնութ-
յամբ ցանկացել են ենթարկել նրա քննության այդպիսի գործերը: Օրենքը
միայն սահմանել է, որ եթե գործը հարյուր ռուբլուց ավելի արժեք ունենա,
կամ վեճը վերաբերելիս լինի որոշ ակտով գյուղացիներին պատկանած ան-
շարժ կայքին, կամ եթե վեճին մասնակից են այլ իրավակացության կամ ուրիշ
հասարակության պատկանած անձեր, կողմերից մեկի պահանջով՝ այդպիսի
գործը պետք ենթարկվի ընդհանուր դատարանների քննության: Գյուղական
դատարանին օրենքով ենթակա են եղել միայն տվյալ գյուղական հասարակու-
թյան գյուղացիների կատարած ո՛չ շատ կարևոր, փոքր հանցագործություն-
ները, որոնց համար դատարանն իրավունք է ունեցել դատապարտել մեղա-
վորներին վեց օրվա հասարակական աշխատանքի, կամ երեք ռուբլու հատուց-
ման և կամ յոթն օրվա կալանավորման, և դատարանի այդպիսի վճիռները
համարվել են վերջնական:

Դատարանի նիստերը կազմվել են, սովորաբար, կյուրակի և տոն օրերը,
դատավարությունը կատարվել է բանավոր: Դատավորները կողմերին լսելուց
հետո, նախ՝ աշխատել են համոզել կողմերին հաշտությամբ վերջացնելու գոր-
ծը, և որոշում կայացնելու գործին ձեռնարկել են միայն այն դեպքում, երբ
կողմերը չեն կամեցել հաշտվել: Դատարանը լուծել է վեճերը կամ ներկայաց-
ված գրավոր փաստաթղթերի հիմունքով, կամ, եթե այդպիսի փաստաթղթեր

չեն եղել, վաղնջական սովորույթի օրենքով: Արձակված որոշումներն ու վճիռ-
ները կազմվել են գրավոր և ի կատար են ածվել տանուտերի ձեռքով:

Գյուղական հասարակությունների կառավարության բոլոր պաշտոնատար
անձերն ընտրվել են գյուղական և հասարակական ժողովների կողմից և հաս-
տատվել են նահանգական կամ գավառական իշխանությունների կողմից. նրանք
բոլորն էլ գտնվել են նույն իշխանությունների հսկողության ներքո: Իրենց պաշ-
տոններում ցուցաբերած անհոգության համար նրանք հեռացվել են ծառա-
յությունից, իսկ կատարած մի որևէ հանցանքի համար դատի են ենթարկվել:
Պաշտոնյաները որոշ ռոճիկ չեն ստացել. նրանց ռոճկի չափը որոշվել է նրանց
և ժողովների մեջ կայացած փոխադարձ համաձայնությամբ: Պաշտոնյա ըն-
տրվելու համար անհրաժեշտորեն պահանջվել է, որ ընտրվելին անբիծ, անբա-
սիր վարքի ու բարքի տեր լինի և 25 տարեկանից ոչ պակաս: Վարձովի են
եղել միայն դաշտերի պահապանները՝ ղորուղչիները, ջուարճները (առուների
վերա հսկող վերակացուները) և հասարակական գրագիրները:

Փոփոխության ենթարկվել է և ջրատիրության և ջրօգտագործության կար-
գը: Սարդարության ժամանակները երկիրը վարչականապես բաժանվելիս է
եղել 15 մահալների, որոնք միաժամանակ եղել են և ոռոգման դիստրիկտներ
կամ շրջաններ, որովհետև ամեն մի մահալ բռնում է եղել մի գետի ջրաբաշխ,
որի ջրերով ոռոգվել է նա: Մահալներում ջրերի բարձրագույն վարչությունը
հանձնված է եղել ջրպետին կամ միրաբին, որին կարգում է եղել ինքը սար-
դարն յուր իշխանությամբ, իսկ նրա ձեռքի տակ, իբրև ստորադրյալներ, գըտ-
նըվել են ջուարճները, որոնք ոստիկանական պարտականություններ են կատա-
րում եղել: Ջրերի պահպանությունը նրանց բուն ակունքում, որտեղից սկիզբն
էին առնում ջրատար առուները, ջրատերերի խախտված իրավունքների վերա-
կանգնումը, համայնքների ջրօգտագործության հերթականության կանոնավորու-
թյան վերա հսկելու գործը՝ այս բոլորն եղել է ջուարճների պարտականությունը,
ջուարճների, որոնց հանձնվում է եղել ամեն մեկին մի որոշ ջրատար առու:

Ջրատիրության և ջրօգտագործության այդ հին կարգը սկսվել է փոփոխ-
վել Երևանի՝ Թիֆլիսի գավառ եղած ժամանակները, 1846 թվից, իշխան Վո-
րոնցովի օրերից, և նրա նախաձեռնությամբ կազմված և կայսեր հաստատու-
թյան ներկայացված «Ընդհանուր կանոններով՝ ջրերի վարչության մասին»:
Կայսեր հաստատությամբ՝ 1847 թվին օրենք դարձած այդ «Ընդհանուր կա-
նոնները», որոնց հիմքը կազմած է եղել ընտրական սկզբունքը, այնուհետև, 50
երկար տարիների ընթացքում, շարունակ փոփոխվելով և վերամշակվելով՝
վերջնականապես ձևակերպվել, ամփոփվել է որոշ օրենք դարձած նոր կանոն-
ների մեջ, որով պահպանված լինելով ընտրական սկզբունքը՝ խստագույն հըս-
կողության են ենթարկվել միրաբների գործողությունները և դրանով նրանց
կամայականությունների առաջն առնվել:

Աշտարակն էլ, իհարկե, ենթարկվել է կատարված փոփոխություններին և անմիջապես ազդվել նրանցից, սակայն նա յուր կառավարության գործում կատարելով այդ փոփոխությունները, որոնք պարտադիր են եղել նրա համար, մեծ նախանձախնդրությամբ աշխատել է յուր ներքին գործերում պահպանել, իհարկե, օրենքի սահմաններում, յուր նախկին հնավանդ սովորույթները, կարգերը, որոնցից շատերը պարսկական էլ եղած չեն, այլ եկած ու հասած իրեն հնագույն և վաղեմի ժամանակներից, հայկական իշխանության օրերից, ինչպես, օրինակ, տանուտերությունը և տանուտիրական կառավարության եղանակը, դատն ու դատաստանը, հողաբաժանության սիստեմը և դրա հետ կապված հարկաբաժանության և ջրաբաժանության կարգերը և այլն և այլն, որոնք պարսից դարավոր իշխանության օրերում մասամբ, արտաքին փոփոխության ենթարկված լինելով, պարսկական գունավորություն ստացած՝ պահպանել էին իրենց հայկական ներքին էությունն ու բովանդակությունը:

Աշտարակի տանուտերը միշտ ընտրովի է եղել. նա կալվածատիրական և այլ իրավական կապերով յուր հետ կապված հին ազնվական տոհմից յուր մեջ չի ունեցել, ուստի և ժառանգական տանուտերություն էլ, այդպիսի տոհմերից, չի եղել գյուղում: Ճիշտ է, Երևանի Յաղուպ խանի և պարսից Ջհան շահի ժամանակներից եկած, բնակություն են հաստատած եղել գյուղում Կամսարականների տոհմից Շահ-ազիզ մականվանյալ մեծ գերդաստանը, որոնցից հաճախ ընտրված են եղել և տանուտերներ, բայց նրանք ոչ մի իրավական, կալվածատիրական կապերով, ինչպես ասել ենք յուր տեղում, կապված չեն եղել գյուղի և գյուղացիների հետ:

Համբա-չարեքության հողաբաժանության եղանակը, յուր բոլոր թերություններով հանդերձ, ունեցել է այն մեծ արժանավորությունը, որ նա յուր հավասարեցուցիչ հավելումներով, հարակաշության օգնությամբ՝ գյուղացիներին շատ մանր կամ փոքր հողաբաժիններով չի թողել և դրանով, այսպես ասած՝ անճողփնություն չի ստեղծել: Դրա հակառակը, նոր մուծված շնչաբաժանության եղանակը թեև շատ պարզ է եղել և գյուղին՝ գործադրության համար, բայց նրանով հողը բաժանվել է, նամանավանդ, սակավահող գյուղերում, շատ մանր, փոքր մասերի կամ բաժինների, այն էլ դեռ՝ կտոր-կտոր եղած ու ընկած այստեղ ու այնտեղ, միմյանցից հեռու տեղերում, ուստի և ոչ ձեռնտու ու շահավետ՝ մշակության համար, որի հետևանքով և այդպիսի բաժինների տերերը ստիպված են եղել թողնել իրենց հողերը և ուրիշ գործերով պարապել, և հաճախ մտնել ծառայության ունևորների մոտ, որով և ստեղծվել է անհողինություն՝ յուր վնասակար հետևանքներով:

Բարեբախտաբար, Աշտարակն այդ կողմից գտնվել է ավելի նպաստավոր պայմաններում. նա համեմատաբար ավելի առատահող գյուղ լինելով՝ չի տուժել կամ, լավ է ասել, տուժելու վտանգին չի ենթարկված եղել այդ նորամուծությունից: Նրա ոստին հողերը բնակիչների թվի համեմատությամբ այնքան ընդարձակ են եղել, որ մի առանձին կարիք էլ չի եղել հողաբաժանության. ով որքան ցանկացել է ու կարողացել է, վարել ու ցանել է, և եթե հողաբաժանություն էլ եղել է, եղել է շատ երկար ընդմիջումներով՝ 15 տարին մի անգամ կամ ավելի ևս ուշ-ուշ: Իսկ ջրովի հողերը գյուղացիք վաղ ժամանակներից են սկսած եղել տնկել և ցանկապատել, այնպես որ, մինչև ռուսաց տիրապետությունը և հետո էլ, մինչև հողաբաժանության նոր եղանակի մուծումը, դույն հողերի մի խոշոր և լավագույն մասն արդեն տնկված, ցանկապատված և իրենց տնկողների սեփականությունն է դարձած եղել: Եվ մենք չենք սխալված լինիլ, եթե ասենք, որ այդ ժամանակները ամեն մի բնիկ աշտարակցի արդեն ունեցել է յուր սեփական մի ձեռք այգին, և նրանք, բնականաբար, չեն կարոտել այդ հողերի անտնկիլ մնացած փոքր մասի հողաբաժանման, որ սխտեմով էլ որ դա լիներ, քանի որ դրա, այդ մասի վրա էլ դեռ արագ
Թափով շարունակվել է այգիներ տնկելու գործողությունը:

Աշտարակը, թե՛ պարսից իշխանության օրերով և թե՛ ռուսաց տիրապետության, շատ է տանջված եղել միրաբների կամայականություններից: Սարդարության ժամանակները, ինչպես վերը հիշեցինք, միրաբներին* կարգել է ինքը սարդարը յուր իշխանությամբ, բայց հոգ չի տարել սահման դնելու նրանց հապօրինի գործողություններին և խիստ հսկողություն ունենալ՝ սանձելու համար նրանց կամայականությունը: Նույն հանգամանքը շարունակվել է և ռուսաց տիրապետության օրերով, մինչև 1847 թիվը, երբ սարդարության կարգը փոխվել է, և նոր կարգ ու որոշ կանոններ են սահմանվել միրաբության մասին: Այդ կանոններով՝ մահալների միրաբներին այնուհետև ընտրել են մահալի բնակիչները. ակտիվ կամ գործոն ընտրական իրավունքը վերապահված է եղել ամեն մի անձի, որ հող է ունեցել ռռոգման շինականության, իսկ պասսիվ՝ հոգևորականներն <են> եղել, որ զրկված շրջանի սահմաններում, և միայն հոգևորականներն ռռոգման սեզոնի են եղել երկուսից էլ: Երեք տարին մի անգամ, վաղ գարնանը, ռռոգման սեզոնի սկզբին, յուրաքանչյուր համայնք նախապես ընտրում է եղել որոշ թվով նախընտրողներ՝ մի-մի հոգի ամեն մի հինգ կամ վեց կամերալ ծխից, հետո այդ նախընտրողները, գավառապետի կամ նրա օգնականի ներկայությամբ, փակ քվեարկությամբ՝ միրաբ են ընտրել երեք տարով: Միրաբ լինելու համար, բացի 25 տարեկան և անբիծ վարքուբարքի տեր լինելուց, ուրիշ ցենզ չի պահանջվել: Միրաբը ստացել է որոշ ռոճիկ, բայց ոչ գանձարանից, այլ գավառի բոլոր բնակիչներից, ինչպես այդ եղել է և սարդարության ժամանակները: Ռոճկի չափն Երևանի գավառում, հետո և՝ Երևանի նահանգում, երբ Երևանը բաժանվել է Թիֆլիսից և կազմել առանձին նահանգ, տարբեր է եղել: Մա-

* Բն. միրաբներ, ուղղում ենք — Պ. Հ.:

հալներից մի քանիսում ամեն մի կամերալ ծխից ստացել է նա 15-ական կոպեկ, մի քանիսում՝ 22 կոպ., մի քանիսում էլ 20-ական կոպ.։

Բազմաթիվ և ընդարձակ իրավունքների թվում, միրաբին, ի միջի այլոց, վերապահված է եղել հավարի ստուգման և ավելի ջրի (արթղ սու) տնօրինելու իրավունքը, որ, նրանց գործողությունների վերա խիստ հսկողություն չսահմանված լինելու պատճառով, կատարյալ չարիք է եղել։ Նրաշտ տարիները՝ ոռոգման ջրերի շատ նվազած լինելու հետևանքով, ինչպես յուր տեղում մենք ասել ենք, երբեմն այս կամ այն գյուղական համայնքը հավար է ճցել, պատահել ենք, երբեմն այս կամ այն գյուղական համայնքը հավար է ճցել, պահանջելով հերթից դուրս ջուր։ Արդ՝ այդպիսի դեպքերում միրաբին է վերապահված եղել իրավունք շրջել մահալում և ստուգել թե՛ յուր օգնական ջուարների գործողությունները և թե՛ հերթից դուրս ջուր պահանջող համայնքների ցանքերը։ Ավելի ջուր կոչվել է ջրի այն մնացորդը, որ ջրերի՝ համայնքների մեջ բաժանվելուց հետո, ավելացել է։ Այդ ավելացած ջուրը դրված է եղել միրաբի տրամադրության ներքո այն նպատակով, որ նա, վաղնջական սովորույթի համեմատ, տա այդ ավելցուկ ջուրը, հերթից դուրս, այն անձերին, որոնց ցանքերը չէին կարող մնալ առանց ոռոգման մինչև հաջորդ հերթի օրը։ Այդ և վերոհիշյալ ցանքատերերի հավարը ստուգելու իրավունքը միրաբներին իրենց ձեռքին առևտրի առարկա և եկամտի առատ աղբյուր են դարձրած եղել։ Սակավաջուր մահալներում հաճախ այդպիսի ավելորդ ջուր չի էլ մնացել, բայց միրաբներն ամեն տեսակ խարդախ միջոցներով կարողացել են ջրբաժանության ժամանակ ջուր գողանալ, ավելի ջուր գոյացնել։

Աշտարակը հատկապես տուժել է հավարներից, որ առանց անհրաժեշտ կարիքի, հաճախ, սարքել ու կազմակերպել են միրաբները, շահված լինելով այս կամ այն գյուղական համայնքից, որոնք կամեցել են հերթից դուրս մի ավելորդ անգամ ջրած լինել իրենց ցանքերը։ Աշտարակցիք չե՛ն վստահել միրաբներին, չե՛ն հավատացել նրանց կատարած՝ հավար ձգողների ցանքերի ստուգման, ուստի և առարկել են և երբեմն իսկ դիմադրել և արգելք հանդիսացել իրենց առվի վեր անելուն, որից առաջ են եկել այն անպատեհությունները, որոնց մասին մենք յուր տեղում խոսել ենք։

Ծխահարկը, որ Բեզակի ոչ ճիշտ սահմանած՝ հարկատու ծխի հասկացողությամբ, յուր երկար տարիների գոյության ընթացքում, ամեն տեղ հարուցած է եղել դժգոհություն, վերացվել է 90-ական թվականներին և փոխանակվել պետական հողային հարկի (Государственный поземельный налог) և տեղային հողային հարկի (Земский поземельный налог), որոնցից առաջինը մտել է գանձարան, երկրորդը՝ գործածվել տեղական կարիքների վերա։ Աշտարակցիք 1890 թվին իրենց կարիքների մասին Գրիգոր Արծրունուն՝ նրա այդ թվին Աշտարակում եղած ժամանակ պատմելիս, դժգոհությամբ են խոսել, ի միջի այլոց, և իրենց՝ ցարական կառավարության հատուցած ծխահարկի ու

մյուս հարկերի մասին։ Այդ մասին Արծրունին 1890 թ. «Մշակի» 115 համարում, յուր «Երևանյան նահանգում» խորագրով՝ Աշտարակին վերաբերյալ հոդվածում գրել է. «Աշտարակի այգիները այլևս չեն տալիս գյուղի բնակիչներին իրենց առաջվա եկամուտները, և գյուղացիները ստիպված են այժմ, բացի իրանց վաղեմի այգեգործությունից, որոնել կյանքի ապրուստի համար ուրիշ, կողմնակի աղբյուրներ՝ մասամբ առևտուր և արհեստներ, մասամբ էլ վարուցանք։ Այժմ գյուղացիք սկսեցին գյուղի մոտակա դեմի (չջրվող), քարքարոտ հողերը (որոնք արքունի հողեր են) վարել ու ցանել։ Բայց այդ հողերից ստացվող արդյունքը չի համապատասխանում նրանց մշակության վրա գործ դրվող դժոխային աշխատանքին. այդ հողերի վրա բուսնող ցորենը, որի արդյունքի մի հայտնի տոկոսը գյուղացին այնուամենայնիվ պետք է վճարե տերությանը, տալիս է շատ-շատ մեկին՝ չորս կամ հինգ։ Այդ ամբողջ ամայի, քարքարոտ դաշտերը, եթե ջրվեին, զույց միմիայն խաղողի պլանտացիաների համար պետք կգային։

Աշտարակի այգիները համարվում են գյուղացիների անձնական սեփականություն. Աշտարակում չկան ո՛չ համայնական, ո՛չ մուլքադարական հողեր, այլ մինչև վերջին ժամանակները յուրաքանչյուր այգի համարվում էր բացառական սեփականություն։ Սակայն սահմանաչափության կատարվելուց հետո Աշտարակի այգիների հողն էլ ճանաչվեց արքունի հող։ Գյուղացի այգետերը, այսպիսով, թեև այգու արդյունքի մասը չի հատուցանում կառավարությանը, բայց վճարում է արքունի գանձարանին հողային հարկ այն այգուց (համեմատ նրա ընդարձակության), որը նա մինչև այժմ իր բացառական սեփականությունն էր համարում, բայց վերջին տարիներումս հայտնվեց արքունի հող։ Բացի սրանից, աշտարակցին վճարում է կառավարության, ինչպես ամեն տեղ, և ծխական սալած հարկը, տարեկան 2 ռուբլի ծխից (լինի դա 2 թե 20 հոգուց բաղկացած ծուխ)»։

Բացի այս հարկերից, աշտարակցիք վճարել են կառավարության և ակցիզ կոչված հարկը, որ մյուս բոլոր հարկերից ծանրագույնը և դժվարագույնն է եղել նրանց համար։ Այդ մասին էլ Գր. Արծրունին յուր նույն հոդվածում ասել է. Աշտարակ «գյուղը միշտ համարվել է և մի ժամանակ ճշմարիտ էլ եղել է նահանգի ամենահարուստ գյուղերից մեկը։ Այդ հարստությունը աշտարակցին ձեռք էր բերել գլխավորապես օղիի պատրաստությունից, որը նա քաշում էր իր խաղողի մնացորդներից՝ իր գինին պատրաստելուց հետո, քանի որ մինչև վերջին ժամանակները օղեհանության վերա դեռևս ակցիզ սալած հարկը մտցրած չէր։ Բայց հենց որ մտցվեց ակցիզը, աշտարակցին այլևս չկարողացավ օղեհանությունից այդ օգուտը ստանալ, ինչ որ ստանում էր անցյալներում։ Հիմա արաղ քաշելը դարձել է նույնիսկ ո՛չ արդյունավետ և վնաս բերող զբաղմունք, քանի որ օղիի պատրաստության վրա արած ուրիշ

ծախսերը չհաշված՝ 5 ռուբլի արժեցող օղին յուրաքանչյուր վեդրոյից (դա էլ
լավ տարիների գին է) գյուղացին վճարում է ակցիզ 2 ռ. 40 կոպեկ»։

Մենք ասացինք՝ 1866 թվի սահմանադրությամբ գյուղական համայնքն,
իբրև մի ինքնուրույն, անկախ վարչական-դատական միավոր, չի ճանաչվել,
այլ միայն գյուղական հասարակությունները՝ բաղկացած կամ մի բազմարնակ
գյուղից, կամ իրար մոտ գտնված մի քանի սակավարնակ, փոքր գյուղերից։
Այդ հիմունքով և Աշտարակն՝ յուր մոտ գտնված Մուղնի, Կարբի, Հանավանք,
Հուշի, Իլանչալան, Սաղմոսավանք, Պատի գեղ և Ղոթուր, կազմել է մի գյու-
ղական հասարակություն (сельское общество) և կառավարվել է մի հասարա-
կական տանուտերով (сельский старшина, главный—գլավին), մի գյուղա-
կան դատարանով (сельский суд) և մի ընդհանուր գյուղական ժողովով
(сельский общий сход)։

Դրանով որոշ և, մենք կասենք՝ էական մասերով սահմանափակվել է Աշ-
տարակի համայնքի, իբրև մի ինքնուրույն համայնքի, իրավունքները. նա թեև
պահպանել է յուր ներքին անկախությունը՝ յուր զուտ տեղական, միայն իրեն
վերաբերյալ խնդիրները և կարիքները տնօրինելու վերաբերմամբ, որի հա-
մար նա շարունակել է ունենալ յուր առանձին տանուտերը և գյուղական ժո-
ղովը, բայց այդ տանուտերը և գյուղական ժողովը ստորադրվել են հասարա-
կական տանուտերին և հասարակական ժողովին։

Աշտարակը տիրապես այգեգործական տնտեսություն ունեցող մի գյուղ
է և, իբրև այդպիսին, բնականապես, ունի յուր առանձնահատուկ կարիքներն
ու պահանջները, որ, հարկավ, չէին կարող լավ ըմբռնել, իրենց սրտին մոտ
համարել և ցանկանալ ու աշխատել բավարարել նրա հետ միացած զուտ
երկրագործական Մուղնի, Կարբի, Հանավանք, Սաղմոսավանք և Իլանչալան հայ
գյուղերը և անասնապահ ու կիսավրանաբնակ Հուշի, Ղոթուր և Պատի գեղ
թուրք գյուղերը։ Ցարական կառավարությունը նախկին փոքր համայնքներով
գյուղերը համախմբելով միասին և կազմելով նրանցից մի խոշոր գյուղական
հասարակություն՝ առաջին հերթին, ինչպես երևում է, նպատակ է ունեցել երկ-
րի գյուղական համայնքների կառավարության գործում եղած նախկին խառն,
անկազմակերպ քաոտիկական վիճակը վերացնել և դրա փոխարեն ստեղծել մի,
բստ ամենայնի, կազմակերպված և հաստատուն կանոններով հիմնավորված,
վարչականապես հեշտ կառավարելու եղանակ ու ձև։ Եվ եթե դրա հետ միասին
ի նկատի է առնվել և այն, որ այդ կարող էր քրիստոնյա և մահմեդական
տարրերն իրար մոտեցնել և նրանց մեջ եղբայրական հարաբերություն ստեղ-
ծել, վատ չի եղել, բայց այդ դեպքում մոռացվել է մի կարևոր հանգամանք, որ
գործի օգտի համար բավական չի եղել միայն համախմբել գյուղերը մի հա-
սարակության մեջ, պատահաբար և արտաքուստ, արվեստականորեն կապել
նրանց իրար հետ մի վարչական կապերով, այլ պետք է եղել այդ կապը և

հիմնավորել համախմբվելիք գյուղերի կյանքի ներքին բովանդակությամբ։
Դրա հետևանքով՝ հաճախ համախմբված են եղել իրար հետ ոչ մի տնտեսա-
կան ընդհանուր շահ չունեցող, իրենց զբաղմունքի, կենցաղավարության,
մտավոր զարգացման և այլ տեսակետներից իրար բոլորովին չնմանող գյու-
ղեր, որի հետևանքն էլ այն է եղել, որ համախմբված գյուղերի ներկայացու-
ցիչներն իրենց ընդհանուր, գյուղական, հասարակական ժողովներում, փո-
խանակ համերաշխության, հաճախ ցուցաբերել են հակառակորդության հոգի
և տրամադրություն միմյանց հանդեպ, որով և վնասել են և՛ միմյանց, և՛ ընդ-
հանուր շահերին։ Այդպիսի անհամերաշխ գործունեության դեպքեր բազմաթիվ
են եղել. թուրքը թուրքին է յուր սպիտակ քվեն տվել, հայը՝ հային. հարկերը
թուրքը թուրքի մեջ է բովչի արել, հայը՝ հայի մեջ. ընդհանուր հասարակական
տանուտեր թուրքերը ձգտել են թուրք ընտրել, հայերը՝ հայ, և այլն և այլն։

Ներքին համերաշխության այդպիսի բացակայության հետևանքով՝ չէ
իրագործված եղել և խմբված գյուղերի քրիստոնյա և մահմեդական տարրերի
եղբայրական մերձեցման գործը, քանի որ նրանց շաղկապումն, ինչպես ար-
դեն ասացինք, միայն արտաքուստ և արվեստական է եղել, և դրա, այսպիսի
մերձեցման համար, չեն ստեղծված եղել հարկավոր և անհրաժեշտ ներքին
պայմանները։ Եվ դժվար է եղել ցարական կառավարությունից ակնկալել
դույնպիսի պայմանների ստեղծումն, քանի որ այդ կառավարությունը հաճախ,
յուր քաղաքական նպատակների համար, ինքն է հրահրելիս եղել յուր հպա-
տակ այլազան տարրերի մեջ ազգային-կրոնական շովինիզմի վատ բնազ-
դումները, ղեկավարվելով հայտնի սկզբունքով. «Բաժանեա՛, գի տիրեսցես»։

Աշտարակի հասարակության մեջ, օրինակ, երևան է եկած եղել և հատ-
կապես զարգացել, ռուսաց տիրապետության երկրորդ կեսին, մի զարշելի և
շատ վնասակար երևույթ՝ իրարից վրեժխնդիր լինելու նպատակով փոխադար-
ձաբար մեկզմեկու այգու որթերը կտրատելու, թափելու երևույթ, և հաճախ
կարելի <է> եղել պատահել ու տեսնել Ուռուցում, տանուտերի առաջը թա-
փած որթերի դալար բարունակներ ու տաշեղներ, և դրանց տիրոջը՝ ձեռքերը
ծոցում կանգնած, դառնապես և աղիողորմ գանգատվելիս. զարգացած է եղել
նույնպես մեկզմեկու այգուց ձմեռները fարած արfաոր և խչմարը գողա-
նալու սովորությունը, սրա-նրա դգանը, հնձանը, մարագը հրդեհելու խուժա-
նական արարքը։ Հանցավորներին ամենքը ճանաչել են, բայց հնար ու ճար չեն
ունեցել դրա առաջն առնելու, այդ չարիքը, գյուղի այդ պատիժն ու պատուհասը
մի անգամ ընդմիշտ արմատախիլ անելու։ Նախկին ժամանակները, երբ գյու-
ղը դեռ անկախ ու ինքնուրույն համայնք է եղել, նա իրավունք է ունեցել յուր
վնասակար և արատավոր անդամներին դուրս շպրտել յուր միջից և այդ մի-
ջոցով սանձած կացության մեջ պահել գյուղի բնակչության ամբարտավանացած
տարրը, բայց նոր կարգերի մուծվելուց և գյուղում հաստատվելուց հետո,

գյուղը զրկվել է և այդ իրավունքից։ Մեր վերը քանիցս հիշած 1866 թվի օրեն-
քով արատավոր և վնասակար անդամներին դուրս անելու իրավունքը բացա-
ռապես վերապահված է եղել միայն գյուղական հասարակությունների ընդ-
հանուր ժողովներին, որոնց մեջ Աշտարակի խոհեմ-հասկացող մարդկանց այդ
մասին քանիցս արած փորձերն անհաջող ընթացք են ունեցել, և նա ստիպ-
ված է եղել հանդուրժել, պահել յուր մեջ հիշյալ վնասակար տարրը՝ ի մեծ
վնաս յուր խաղաղ բնակչության։

Պերճ Պռոշյանցը յուր «Ցեցեր» խորագիրը կրող վեպի մեջ հենց այդ վնա-
սակար և արատավոր տարրն է համարել Աշտարակի ցեցերից մեկը և յուր
սուր գրչով խարազանել ու նշավակել նրանց և նրանց անպատկառ ընթացքը.
նա այդ մասին, գյուղի կյանքի յուր ստուգապատում նկարագրության մեջ, մի
տեղ (գլուխ Ա, էջ 8) ասում է. «Բայց նա (այսինքն՝ վեպի հերոս Սամփսոնը—
Եր. Ծ.) գյուղը սասանեցնող խմբակների անդամ չէր, այն փչացած, լկտված
և զզվելի տանու գողերի, որ դուրսը, դաշտումը մի զինավորված թուրք տեսնե-
լիս՝ կամ քարերի տակ ու փոսերի մեջ կմտնեն, կամ երկչոտությունից լեզու-
ները կկապվի, անցորդի ձիու ոտքի տակը կընկնեն, պռոշները կպատռվի, ար-
յունը կերթա և «ա՛լ, աղա՛ (ա՛ռ, տե՛ր)» ասելով իրենց հրացանն ու զենքերը
միամիտ ճանապարհորդին կտան ու կգնան, գյուղի մեջ կպարծենան, որ Եղի-
կը, Խեչոն կամ Քյարամն իրանց թալանեց։ Սամփսոնն ատում էր այդպեսնե-
րին, որոնք դուրսն այն ստրիճան կնատ են վարվում, իսկ գյուղումը լեզու-
ներն երկու գազ մեծացնում են, ո՛չ մեծ են հարցնում, ո՛չ փոքր, ամեն բանի
մեջ խառնվում են, գոռում են, հայհոյում են, կռիվ են քցում և վերջը սպառ-
նալիք տալով՝ ժողովում են միասին, խորհում, թե ո՞ւմ հանգստությունը
խանգարեն, ո՞ւմ հավերը գողանան, ո՞ւմ խոտի դեզերը, հասած բամբակի
արտերը կրակ տան, ո՞ւմ այգու խաղողի պտղատու որթերը՝ կիսահաս խաղո-
ղով, արմատից, հողի բերանից կտրատեն, թափեն ու յուրյանց վրեժն անեն»։

Մի ուրիշ տեղ էլ (գլուխ Ե, էջ 60), դարձյալ նույն վեպի մեջ, նույն կա-
տեգորիայի ցեցերի մասին վեպի հերոս Սամփսոնն ասում է յուր նշանած Սո-
նային. «Էս տարի որ քեզ (հերդ — Եր. Ծ.) չպսակեց, էս ձմեռ մեր քար ու
քանդ գեղի նամարդ, աղափ տղերքը ձեր մարագումն անկրակիլ խոտ կթողա՞ն,
ձեր բաղերի բարունակներն ու տաշնակները քոքի վերա կմնա՞ն, ձեր գոմու-
մը տավար, ձեր թառերի վերա հավեր կթողա՞ն, չե՞ս իմանում, որ մի կարգ
ջահելներ կան, որ տնաքանդությունից ու գողությունից ավելի՝ ձեռներից
բան չի գալի՞ս. չե՞ս իմանում, որ էդ վախլուկ ալապստրակները չոլումը մուկն
են դառնում, գեղումը՝ կատո՞ւ։ Հիմի էլ որ քուչովն անց ես կենում, դու ես
բերանների մատակը»։

Աշտարակ էլ մուծված գյուղական կառավարության նոր կարգերը՝ «1866

թվի ինքնավարությունները», որոնք, կրճատ ձևով, Անդրկովկասի վերա ևս
տարածված՝ Աղեքսանդր II-ի ճորտերի ազատագրման և մյուս ռեֆորմների
թույլ արձագանքները և գործադրումն են եղել, գյուղացիների կողմից ըն-
դունվել են մեծ խանդավառությամբ, և այդ կարգերով անդրանիկ տանուտեր
ընտրվել է Ծուխյանց Սարգիսը (Ծուխոնց Սերգեյը), որ յուր՝ ռուսերեն լեզ-
վին տիրապետելու <համար> և մտավոր զարգացումով ժամանակի գյու-
ղում հարգված և աչքի ընկնող մի մարդ է եղել։ Հասկանալի պիտի լինի ժո-
ղովրդի այդպիսի խանդավառության պատճառը, եթե մենք ի նկատի առնենք
այն կարևոր հանգամանքը, որ «առաջները,— Պռոշյանցի ասելով,— ո՛ր
գրպանից վնգոցի ձայնը բարձր էր ղողանջում, նա՛ էր ճիպոտը ձեռքն առնում,
գլուխ ջարդում» («Ցեցեր», գլուխ Բ, էջ 19), իսկ այժմ հասարակությունն յուր
միաբանությամբ առաջին անգամ հնարավորություն է ստացած եղել յուր միա-
համուռ, հոժար կամքով՝ յուր ուզեցած մարդուն գործերի գլուխ կանգնեցնել։

Եվ Ծուխյանց Սարգիսը, ըստ ամենայնի, արդարացրել է յուր վերա դըր-
ված հույսերը։ «Գյուղի փողոցները,— ասում է Պռոշյանցը,— մաքրվեցան
աղտոտություններից. գյուղն ազատվեցավ ընտանի ցե-
տարիներով դարսված աղտոտություններից. գյուղն ազատվեցավ ընտանի ցե-
ցերից, կաշառակեր տանուտերներից, երեսպաշտ իշխաններից, աղքատին
խեղդող գզիրներից, տանու գողերից և հարամկեր հարկաժողովներից. մեծ
ու պստիկի մեջ փոխադարձ սեր, հարգանք և պատվապահություն մտավ, վե-
րացան գյուղից սովորական, անվայել հիշոցներն ու անկարգ զրույցները,
ամեն մարդ յուր պարտքը ճանաչեց, յուր հերթը հասկացավ. էլ հարուստ
ամիսներով անվրդով չէր պառկում, քնում, իսկ աղքատն երեք օրը մի անգամ
գիշերապահության հերթ կատարում» (Նույն տեղում, էջ 19—20)։

Այդ առաջին, գյուղացիների հոժար կամքով և միահամուռ քվեով ընտրված
տանուտերի ժամանակներից գյուղում պահպանվել են շատ զվարճալի պատ-
մություններ։ Հայտնի է Աշտարակի հիշոցասիրությունը։ Նոր օրենքով ընտրը-
ված տանուտերը՝ կամենալով վերացրած լինել գյուղի անվան արատ բերող
այդ հոռի սովորությունը, խստիվ կատարել է նոր օրենքի պահանջը՝ դրամա-
կան տուգանքի է ենթարկել հիշոցատուներին և, ընդհանրապես, հասել է յուր
նպատակին, և շատերը, Պռոշյանցի արտահայտությամբ, իրենց «հայհոյանքի
տոպրակը թաղել են գյուղական դատարանի շեմքի տակին»։ Բայց եղել են
անհատներ, որոնք չեն կարողացել զսպել իրենց, մոռացության տալ իրենց
այդ հոռի սովորությունը, ինչպես, օրինակ՝ «Ցեցերի» Մելիք-Բադալը, որը
հայտնի հիշոցատու է եղել և որի հիշոցներից ոչ ոք էլ իրեն վիրավորված չի
համարել։ Դրանք, այդպիսիները, շարաշար տուժել են շարունակ տուգանվե-
լով ու տուգանվելով։

Ծուխյանց Սարգիսը, սակայն, երկար տանուտերություն չի արել. նրա դեմ
լարվել են թակարդներ Աշտարակի այլ կատեգորիայի զորեղ ցեցերի, «ցեցերի

ցեցերի» և ցեցապետների ձեռքով, և նա ստիպված է եղել շուտով թողնել յուր օգտավետ ծառայությունը և հեռանալ մինչև իսկ գյուղից: Նրան հաջորդել են մեկը մյուսի ետևից այլ տանուտերներ, որը՝ ընտրված ըստ արժանիքի, որն էլ կաշառքով և այլ խորամանկահյուս միջոցներով, ցեցերի ցանկությամբ, որոնք եկել են մի ավելորդ անգամ երևան հանելու «օրենք ի ձեռս առաջնորդաց են» խոսքերի այն հավիտենական ճշմարտությունը, որ լավ օրենքն էլ պետք է լավ գործադրող ունենա, որ հասնի յուր նպատակին, ապա թե ոչ՝ նա լավագույն դեպքում կմնա մեռյալ տառ և չի ծառայիլ ընդհանրության շահերին:

Պռոշյանցն յուր վերոհիշյալ վեպում երևան է հանել և այլ կատեգորիայի ցեցերին՝ վաշխառուներին և կաշառակերներին, մերկացրել մեքենայությունները, բաց արել հասարակության առաջ նրանց կեղծ-կրոնական բարեպաշտությամբ և կեղծ-ազգասիրությամբ վարագուրված դեմքերը, և մյուս ցեցերի պես անխնա խարազանել ու նշավակել նրանց: Ճիշտ է, վեպի մեջ դրանց արածների ու կատարածների գույները թանձրացրած են, գծերը՝ խոշորացրած, բայց, ըստ էության, կենցաղագիր վիպասանի վարպետ վրձինով քաշած դրանց պատկերը և արածների նկարագիրը համապատասխանում են ժամանակի Աշտարակի իրականության: Դրանք, այդ ցեցերը, ամենքին էլ քաջ ծանոթ և հայտնի անհատներ են, առնված գյուղի իրական, կենդանի կյանքից, և ոչ հնարովի կամ, ինչպես ասում են, մոգոնովի են, անհատներ, որոնց անուններն այսօր էլ դեռ թարմ են և հաճախ հիշվում են գյուղում: [Այդ ցեցապետ Բալասան աղան էջմիածնի սինոդի պրոկուրոր Նիկողայոս Տեր- Հովսեփյանն է. գյուղական գրագիր Գնթունին վանեցի վարժապետ Արամյանն է. խլղաթենց Տեր-Սուքիասը՝ Միկիտան Սաքոյի երկվորյակը, Աշտարակի քահանա Տեր Սարգիսն է. դրանց, այդ վաշխառուների և կաշառակերների դեմ մաքառող տանուտեր Գոմշակերյանցը Շուխյանց Սարգիսն է. հիշոցատու Մելիք-Բադալը Ստեփանենց Բեգլյարն է, և այլն և այլն]:

13

ԱՇՏԱՐԱԿ ԳՅՈՒՂԸ ԵՎ ԴՐԱ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Աշտարակ գյուղը Հայոց պատմության մեջ հիշվում է իններորդ դարու վերջից, և առաջին անգամ հիշողը Ստեփաննոս Ասողիկ պատմագիրն է, որ յուր պատմության մեջ (գիրք Բ, գլուխ Բ) այդ մասին գրում է. «Եւ ապա Տէր Գէորգ (կաթողիկոս Հայոց ի վախճան Թ-րդ դարու— Եր. Շ.) յԱրագածոտն, ի գեղջէ Աշտարակաց՝ ամս Գ»: Չպետք է շփոթել այս գյուղը Բագրևանդ գավառի համանուն Աշտարակա գյուղի հետ: Աշտարակը ձգված է, ինչպես ասել ենք,

Քասախ գետի աջ ափին և տարածված է, յուր այգիների հետ միասին, հյուսիսից դեպի հարավ՝ գետի երկարությամբ, մինչև Օշականի սահմանը:

Գյուղը բաժանված է հինգ թաղի՝ Բերդաթաղ, Վերին թաղ (կամ ս. Մարիանեի թաղ), Ամենափրկչի թաղ, Կարմրավորի թաղ և Կավահանքի թաղ: Առաջինը ստացել Հնագույնը Բերդաթաղն է, նորագույնը՝ Կավահանքի թաղը: Առաջինը ստացել է յուր անունը բերդից, որ շինված է եղել այդտեղ ու որի մեջ հաստատված է եղել գյուղի առաջին, նախնական բնակչությունը, որ հետագայում բազմանալով՝ հետզհետե, ժամանակի ընթացքում, տարածվել է մյուս կողմերը և կազմել մյուս թաղերը: Սակայն այդտեղից հեռացած և մյուս թաղերում բնակություն հաստատած գյուղացիները, քանի որ շեն ու կանգուն է եղել բերդը, իսպառ կտրված չեն եղել նրանից. նրանք ունեցել են և պահպանած են եղել բերդի մեջ մի-մի փոքրիկ խրճիթ, որոնց մեջ պատսպարվելիս են եղել, երբ մի որևէ վտանգ է սպառնալիս եղել գյուղին:

Բերդը բռնած է եղել համեմատաբար մի ոչ շատ մեծ տարածություն ձորի ամենաբարձր, ապառաժոտ քարաբաշին. նա երեք կողմից շրջապատված է եղել բարձր, հաստատուն պարիսպներով, որոնցից արևմտյան կողմինը բարձրագույնը և ամենաերկարն է եղել, քարուկիրով շինված և չորս տեղ կոփածո քարից կառուցված բուրգերով ամրացրած: Արևելյան կողմը պարիսպ չի ունեցել, որովհետև այդ կողմից անդնդախոր ձոր լինելով՝ բնականապես անմատչելի է եղել, և գյուղացիների տների պատշգամբները կախված են եղել ուղղակի ձորի վերա: Բերդը, որ երկարավուն քառանկյունու ձև է ունեցել, յուր հյուսիսային և հարավային անկյուններում, ձորաբաշի վերա, ունեցել է մի-մի եկեղեցի. հյուսիսայինը՝ Ծիրանավոր կոչված ս. Աստվածածին մեծ եկեղեցին, և հարավայինը՝ Սպիտակավոր կոչված ս. Աստվածածին փոքր եկեղեցին, որոնց ավերակները մնում են մինչև այսօր: Բերդի այդ պարիսպները մինչև 1864 թիվը թեև կիսավեր, բայց կանգուն են եղել. այդ թվից թաղի գյուղացիք սկսել են քանդել և տեղը, նրանց հիմքերի ուղղությամբ, բնակարաններ շինել, բնակարաններ, որոնց մեջ մինչև այսօր էլ դեռ կարելի է նշմարել նրանց հետքերը:

Ծիրանավորը գյուղի ամենամեծ եկեղեցին է եղել, և նրա մեջ է կատարվելիս եղել ժամասացությունն ամբողջ գյուղի համար, որովհետև մյուս եկեղեցիները մատռանման փոքրիկ շինություններ են եղել, սակավաթիվ ժամավորների համար: Դրա ավերակների մեջ, ներսը պահպանված մնացորդներն իրենց սրբատաշ քարից շինված գեղեցիկ, նուրբ սյուներով ու կամարներով հիշեցնում են, որ դա հնագույն տիպարի մի բազիլիկ է եղել, շինված նախնագույն ժամանակները, վիշապի տաճարի տեղը կամ նախնագույնի՝ հետո վերանորոգած, հարազատ ժառանգորդը: Հետագայում, ավելի նոր ժամանակներում, ավերված է եղել կամ, լավ է ասել, վերածված է եղել պաշտպանը, դա համարեցրած է եղել

պանվելու տեղի, ամրոցի, որի համար կառուցվել է հարավային ամրակուռ
պատը, և ամբողջ հին, նուրբ շինությունը առնվել մի տեսակ քարե ամուր
պատյանի մեջ, տաճարի միջից կապվել է քարե սանդուղք՝ տանիքը բարձրա-
նալու համար, տանիքի վերա շինվել են խցիկներ՝ կիսաբոլոր ծածկույթներով
վարագուրված փոքրիկ լուսամուտներով, պաշտպանվելու համար, և կախվել է
մի միատանի քարե ամրակուռ դուռ, ինչպես Փարպի գյուղի համանուն և հա-
մանման եկեղեցու դուռը, եկեղեցու, որ Փարպիում նույն պաշտպանության և
ամուր դիրքի պաշտոնն է կատարել, ինչպես Ծիրանավորն Աշտարակում։ Հին
բազիլիկը, հնագետների կարծիքով՝ հինգերորդ դարու գործ է, իսկ վերանո-
րոգման՝ բերդի վերածվելու ժամանակը դժվար է ճշտությամբ որոշել, քանի
որ այդ մասին շինության վերա ոչ մի արձանագրություն չի պահպանվել։ Շի-
նությունն ունի դրսից, պատերի մեջ հագցրած մի-երկու փոքր խաչքար, որոն-
ցից մեկի՝ հարավային դռան վերը, բարձր, պատի մեջ, ճակատին գտնվածի
վերա կարդացվում է. «Ախաճին. ՌՃԾ» — 1150 (1701)։ Իսկ շինության մեջ,
հարավային դռան աջ կողմը, պատի շարվածքի մեջ, աչքի է ընկնում մի կոպիտ
տաշվածքով մեծ քար, որի վերա փորագրված է մի գրություն, որ սակայն
դժվար է կարդացվում և հասկացվում, քանի որ գրվածքը կիսատ, թերի է՝
քարի մի կեսի պահպանված լինելու պատճառով։ Եթե ընդունենք, որ դռան
վերի խաչքարը հագցրած է եղել պատի մեջ եկեղեցու վերաշինության ժամա-
նակ, գուցե, հնարավոր դառնա կարծել, որ ՌՃԾ—1701 թվականը հարավային
պատի շինության և, ընդհանրապես, ընդհանուր վերաշինության թվականն է,
երբ հին, նուրբ բազիլիկը հագցրել են վերոհիշյալ բերդանման, կոպիտ պատ-
յանի մեջ։

Հուշարձանը շեն ու կանգուն է եղել մինչև 1815 թիվը, երբ հնությունից ու
Երևանի շարժից (1679 թ.) խախտված լինելով՝ քանդվել են տանիքը, վերին
խցերը, սեղանը, կամարների ու սյունազարդի մի խոշոր մասը, և ճեղքվել է
վերից վայր արևելյան պատը։ Արժանի են ուշադրության, բացի կամարների
ու սյուների մնացորդներից, արևմտյան լուսամուտը և մի քանդակազարդ, սի-
րուն խաչքար, որ կիսականգուն՝ աչքի է ընկնում սեղանի բեկորների մեջ։
Քարե միակտուր դուռը այլևս չկա. դա հանված է, և տեղը մի փայտե դուռ
հագցրած, և թաղի գյուղացիներից մեկը վերջերս յուր խոտն է եղել պահում
հուշարձանի մեջը և դուռը փակում։ Թե ե՞րբ է հանվել դուռը, ինչո՞ւ համար
և ո՞վ է եղել հանողը, հայտնի չէ։ Ասում են, որ դուռը հանվել է հուշարձանին
կից գտնված, մեր պատմության ընթացքում քանիցս հիշած՝ ղարսեցի Բաղդա-
սարի որդի բժ. Մնացական Հարությունյանի տան շինության ժամանակ. դու-
ռը հանել են և հենց այդտեղ, բակումն էլ, հուշարձանի մոտ, հողածածկ արել։
Պետք է կարծել, որ դուռը հանել է և նոր դուռ է հագցրել հենց այն գյուղացին,
որ խոտանոց է դարձրած եղել հուշարձանը, որովհետև քարե դուռը տաճարի

քանդվելուց հետո, պատի նստվածքից կիսաբաց է մնացած եղել և այլևս չի
փակվել, իսկ գյուղացին շահագրգռված է եղել, որ յուր խոտանոցը դուռ ունե-
նա և փակվի։

Սպիտակավոր ս. Աստվածածինը մի փոքրիկ, սիրուն եկեղեցի է՝ շինված
կարմրագույն, սրբատաշ քարից. դրա պատերն ու սեղանն ամբողջովին կան-
գուն են, և խոնարհված է միայն տանիքը։ Դա գտնվում է ուղիղ ձորաբաշին,
քարափի վերա, և ունի երկու դուռ՝ ձորի և արևմտյան կողմերից։ Առաջինը
դուրս է գալիս ուղղակի քարափի վերա, և պետք է զարմանալ, թե ի՛նչպես
էին ելևմուտք արել այդ դռնից ժամավորները, քանի որ դա բաժանվում է զըլ-
խապտույտ, անդնդախոր ձորից մի անցուղարձի նեղ շավիղով միայն. երկ-
րորդը գլխավոր մուտքն է. դրա երկու կողմն երևում են արձանագրության
հետքեր, բայց դրանք այնքան եղծված են, որ անվերծանելի են դարձել, ուստի
և չի կարելի ճշտությամբ իմանալ ո՛չ դրա շինության ժամանակը, ո՛չ էլ շի-
նողի անունը։ Հնագետների կարծիքով՝ այդ հուշարձանը ԺԳ դարու գործ է։
Նրանից տարիներ առաջ թաղի գյուղացիներից մեկը, որի տան կից է գտնվում
դա, փայտածածկ էր արել դրա տանիքը և գործ էր ածում յուր համար իբրև
պահեստի տեղ, մթերանոց, որով և մասամբ պահպանում էր ավերումից.
ներկայումս այդ հողածածկն էլ քանդվել է, և նա շրջակա տների համար դար-
ձել է աղբանոց։

Ամենափրկչի թաղն յուր անունը ստացել է այդտեղ եղած Ամենափրկիչ
եկեղեցուց։ Դա հնուց մնացած, սրբատաշ քարից շինված մի մատուռ է եղել,
որին հետագայում կցվել է մի հասարակ, փայտածածկ ժողովրդանոց, և, Ծի-
րանավորի քանդվելուց հետո, այդտեղ փոխադրվել ժամասացությունը բովան-
դակ գյուղի համար։ Վերջին ժամանակներս հնությունից ավերվել է և այդ
ժողովրդանոցի հետ միասին, և ձեռնարկվել է մի նոր եկեղեցու շի-
նության, որի հիմքը դրվել է, բայց մնացել է անավարտ։ Այդ նոր եկեղեցու
հիմնարկության ժամանակ փլատակված մատուռի վերջին մնացորդներն էլ
սրբվել, մաքրվել են նոր շինելիք եկեղեցու համար տեղ բանալու նպատակով,
և չի պահպանվել, գոնե, մի արձանագրության քար (եթե եղել է), որով կա-
րելի լիներ իմանալ, թե հին մատուռն ի՞նչ շինություն է եղել, ե՞րբ է շինված
եղել և ո՞ւմ ձեռքով։

Գիտնական Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի «Խաղբակյանք կամ
Պռոշյանք հայոց պատմության մեջ» կարևոր աշխատասիրության մեջ դրված
է մի ծանոթություն (գլուխ Բ, էջ 221), որի մեջ ասված է. «Աշտարակ քաղա-
քում երկու եկեղեցիներ կան Զ և Է դարերի. առաջինը բազիլիկա է և ավերակ,
կոչվում է Ծիրանավոր, իսկ երկրորդը՝ գմբեթավոր, խաչաձև մատուռ. այժմ,
տարաբախտաբար, նորոգության պատճառով մասամբ փոխած հին ձևը, կոչ-
վում է Կարմրավոր։ Մի երրորդ եկեղեցի, որ քանդել են և հնի տեղը հիմքը

դրել, կիսատ թողնելով, կոչվում է Ամենափրկիչ, որ հիշատակվում է 1478 թվին գրված մի ավետարանի հիշատակարանի մեջ («Արցախ» Բարխուդարյանի, եր. 343)[12] և ապա՝ ս. Մարինեում պահված մի երկրորդ ավետարանի հիշատակարանում, 1716 թվին»: Մեզ համար այս ծանոթության մեջ կարևոր է Ամենափրկիչ մատուռի շինության, գոնե, մոտավոր ժամանակն որոշելու խնդիրը: Արդ՝ եթե հիշված ավետարանի մեջ այդ մատուռը կամ փոքրիկ եկեղեցին հիշատակվում է 1478 թվին, պետք է, ուրեմն, եզրակացնել, որ դա գոյություն է ունեցել դրանից դեռ շատ առաջ: Մենք կարծում ենք, որ դա մոտավորապես շինված է եղել Սպիտակավոր ս. Աստվածածնի և ս. Մարիանեի շինության ժամանակները, այսինքն՝ ԺԳ դարում: Այստեղ հարևանցիորեն պետք է նկատենք, որ, ինչպես վերն ասել ենք, Ամենափրկիչը չեն քանդել, այլ ինքն է, հնացած լինելով, ժողովրդանոցի հետ միասին քանդվել*, Կարմրավորն էլ վերանորոգության չի ենթարկվել, այլ պահպանել է յուր հին ձևն, ինչպես որ եղել է:

Վերին կամ ս. Մարիանեի թաղն ստացել է յուր անունը գյուղի բարձր կողմը գտնվելու պատճառով և այդտեղ կառուցված ս. Մարիանե եկեղեցուց: Մարիանեն սրբատաշ քարից շինված մի փոքրիկ, սիրուն եկեղեցի է, որ յուր սրածայր գմբեթով և նուրբ, դեպի վեր սլացող կամարներով, ըստ ամենայնի, հիշեցնում է գոթական ճարտարապետական ոճը. դա կառուցված է, ինչպես երևում է եկեղեցու ներսը, ձախակողմյան խորանի գլխին փորագրված արձանագրությունից, Գրիգոր անունով վարդապետի առաջնորդության օրերով, ՉԼ=1281 թվին, և հնումը աբեղաների վանք է եղել, և ունեցել է ճյուրատուն-եղբայրանոց, իսկ հետագայում վերածվել սովորական ծխական եկեղեցու, որի համար դրան կից շինվել է ժողովրդանոց, ինչպես Ամենափրկիչը, որը սակայն հետո ավերվել է, և ծխականները փոխադրվել են առաջ՝ Ծիրանավոր, և հետո՝ Ամենափրկիչ:

1839 թվին այդ Վերին թաղի գյուղացիները վերանորոգել են ս. Մարիանեի քանդված ժողովրդանոցը և վերստին վերադարձել են իրենց եկեղեցին: Այդ ժամանակն էլ հենց մասնավոր վերանորոգության է ենթարկվել հին եկեղեցին, և աշտարակցի Փարվանենց Գևորգը շինել է դրա տանիքի աջ թևի վերա, հարավ-արևմտյան կողմից, մի փոքրիկ, աններդաշնակ և անհամաչափ զանգա-

12 1478 թվի ավետարանի հիշատակարանը մեջ է բերել Ղևոնդ Ալիշանն յուր «Այրարատում», էջ 187: Դրա, այդ հիշատակարանի մեջ հիշված է ոչ միայն Ամենափրկիչը, այլև ս. Մարիանեն և Կարմրավորը այսպես. «Ես՝ Պատրոնս (Բջնեցի) և ամուսին իմ Մէլիք խաթուն, ստացաք զսուրբ աւետարանս ի յարդար վաստակոց մերոց, և տուաք զսա ընծայ ի դուռն Ս. Ամենափրկչին և Ս. Մարիանին և Ս. Կարմրաւորին, ի վայելումն մանկաց սոցա... Եւ մի՛ որ իշխեսցէ հեռացուցնել... ի դրանէ Ս. Ամենափրկչին և Ս. Վանօրեացս»:

* Ամենափրկչի տեղում հետագայում կառուցվել է Աշտարակի քաղաքային շուկան —Պ. Հ.:

կատուն, որի շինության արձանագրությունը նա փորագրել է տվել եկեղեցու հարավային պատին, դրսից.

1. կառուցաւ փոքրիկ զանգակատունս յամի 1839 ար
2. դեամբք սոյն գիւղացի Գէորգայ Փարվանեանց
3. ի յիշատակ ինքեան Գէորգայ եւ ամուսնոյ նորին
4. Եղիսաբեթի եւ որդւոց եւ զաւակաց նոցին: ՌՄՁԹ:*

Եկեղեցու հյուսիսային պատին փորագրված է և մի այլ աշտարակցու նվիրաբերության արձանագրություն.

1. Ես՝ Աշտարակեցի Յօվակի
2. մի որդի Խէչանս եւ իմ
3. կենակից Մարանս ետուք սբ
4. Մարիամո եկեղեցոյ յիշատակ
5. 25 րմն վոյ հինգ ճաւլակատեց յիշա
6. տակեն մեզ ի մեջ պատրգին 1847:

Այդ ս. Մարիանե եկեղեցու շինության մասին գյուղում պահպանվել է հետևյալ ավանդությունը:— Երբեմն, ասում են, Աշտարակում եղել է մի երիտասարդ, ունևոր քահանա, որ վաղաժամ զրկվել է յուր երեցուհուց. Նա խնդրել է ժամանակի կաթողիկոսից իրավունք՝ կրկին ամուսնանալու: Կաթողիկոսը՝ չկամենալով անմիջապես մերժել նրա ապօրինի խնդիրքը, մտածել է այնպես անել, որ քահանան հասկանալով յուր խնդիրքի անտեղի լինելը, ինքը հրաժարվի յուր ցանկությունից: Նա պատվիրել է նրան առաջ մի եկեղեցի շինել, հետո ամուսնանալ: Քահանան կատարել է նրա պատվերը և շատ դրամ ծախսելով ու ճիգ ու աշխատանք թափելով՝ շինել է ս. Մարիանեն: Երբ տաճարը պատրաստ է եղել, նա կրկնել է յուր խնդիրքը և նոր պատվեր է ստացել՝ շրջապատելու եկեղեցու բակը բարձր ու ամուր պարիսպներով ևս, և միաբանության համար խցեր շինելու: Քահանան կատարել է և այդ պատվերը, և ծախսել է յուր ունեցած բոլոր կարողությունը, և ինքն էլ հասակն առել, ծերացել: Եվ երբ այդ բոլորից հետո նա իրավունք է ստացել ամուսնանալու, հրաժարվել է յուր ցանկությունից և ապաշխարել, միաբան գրվելով յուր շինած եկեղեցուն և նրա եղբայրության:

Նորագույն ժամանակները, մեր օրերում, թաղեցիք քանդել են հիշյալ, հնուց շինված և հետո վերանորոգված ժողովրդանոցը և դրա տեղը, դարձյալ հին եկեղեցու արևմտյան դռան առաջ, կից ձեռնարկել են շինել մի նոր եկեղեցի, որի համար հինը պիտի ծառայեր իբրև սեղան և դաս, բայց չեն կարո-

* ՌՄՁԹ թվականը համընկնում է 1840 թ., մինչդեռ ըստ արձանագրության՝ զանգակատունը կառուցվել է 1839-ին —Պ. Հ.:

ղացել վերջացնել: Այդ հնագույն ժողովրդանոցի պատերը, ինչպես երևում է, զարդարված են եղել որմնանկարներով, որոնցից դեռ պահպանված է մի նմուշ հին եկեղեցու արևմտյան պատի վերա, դրսից: Դա, այդ պահպանված որմնանկարը, մեզ հիշեցնում է Երևանի Զորավոր եկեղեցու արևմտյան պատի վերա, դռան երկու կողմը գտնված որմնանկարը և կարծել է տալիս, թե միևնույն վարպետի ձեռքի գործը պիտի լինի (տե՛ս այդ մասին մեր «Հին Երևվանը», էջ 195—196):

Ս. Մարիանեն հնումը ունեցել է ձեռագիր մատյաններ, որոնցից մինչև վերջին ժամանակները մնացել էին մի քանի հատ, որոնք և, մեզ անհայտ նպատակով, տարիներ առաջ, առնվել էին եկեղեցուց Մարգարյան Կարապետ (Ջելիմանի Կարապետ) անունով անձի ձեռքով և թաղվել հողի տակ: Ի նկատի առնելով, որ ձեռագրերը հողի տակ խոնավությունից կարող էին փչացվել, մենք յուր ժամանակ զեկուցել էինք այդ մասին լուսժողկոմ ընկեր Ասքանազ Մռավյանին, որ և պատվիրել էր էջմիածնի մատենադարանապետ ընկ. Սենեքերիմ Տեր-Հակոբյանին՝ գտնել պահված ձեռագրերը և փոխադրել ձեռագրատունը, որ և կատարվել էր ճշտությամբ: Ներկայումս այդ ձեռագրերը խնամքով պահվում են էջմիածնի ձեռագրատանը, մյուս ձեռագրերի հետ միասին: Դրանք հինգ հատ են, բոլորն էլ ավետարան, գրված թղթի վերա. երեքը՝ բոլորագիր, երկուսը՝ շղագիր, մեկը՝ հայկական ՊՂ թվին (1441 թ.), մեկը՝ ՋԽ թվին (1491 թ.), մեկը՝ ՋԾԳ թվին (1504 թ.), մեկն՝ ԱՃԻԳ թվին (1676 թ.)*, մեկն էլ անթվակիր: 1441 թվի ձեռագիրը գրված է Հաղբատում, 1491 թվինը՝ Փառակունիսում, Մանվել երեցի ձեռքով, 1504 թվինը՝ ծաղկող Կարապետ Աղթամարցու ձեռքով:

Ս. Մարիանեի բակում և պարիսպներից դուրս կան շատ հին գերեզմաններ: Բակի գերեզմանների մեջ, ի միջի այլոց, գտնվում է և պատմության մեջ հիշված գյուղի գործիչ, տանուտեր Խեչանի գերեզմանը, որի գերեզմանաքարի վերա գրված է հետևյալ տապանագիրը. «Այս է տապան տանուտէր Խեչանի, որ է որդի տանուտէր Յակոբին, եղբայր Մարտիրոսի, յազգէն Շահնազարեանց, որ վախճանեցաւ յամի ՌՄՁԳ — 1834»: Հնումը, ինչպես երևում է, եղել են շատ խաչքարեր, որոնցից մի-երկու հատ պահպանվել էին մինչև վերջին ժամանակներս, բայց ներկայումս կանգուն է մնացել դրանցից միայն մեկը՝ եկեղեցու դռան առաջ, իսկ մյուսը, որ մի առանձին ուշադրության արժանի զարդաքանդակներ ունի, գլորած, ձգած, կոտրած է: Դա մի «բարեխոսութեան» խաչքար է, որի վերա պարզ կարդացվում է հայոց ՌՃԽԲ թիվը — 1693**:

* Թվականի նշման տարօրինակ ձև, որովհետև ԱՃԻԳ=123+551=674, թերևս վրիպակ է և պիտի կարդալ՝ ՌՃԻԵ (=1125+551=1676) —Պ. Հ.:

** Այս պարբերությունը գրված է առանձին թերթիկի վրա: Տեղադրել ենք բովանդակությունից ելնելով —Պ. Հ.:

Կարմրավորի թաղն յուր անունն ստացել է Կարմրավոր կոչված ս. Աստվածածին եկեղեցուց, որ շինված է բարձրավանդակի վերա, Մուղնու թաղի արևելյան կողմը: Դա մի փոքրիկ տաճար է լայնանիստ գմբեթով և կղմինդրածածկ տանիքով, որի բակը շրջապատված է մեծամեծ քարերից շինված հաստակուռ պարիսպներով (այժմ կիսավեր): Թեև դրա շինության արձանագրությունը, որ սկսված լինելով հարավային պատի ծայրից (այժմ ծածկված՝ ժողովրդանոցի տանիքով), միակարգ, միատող, գոտեձև շարունակվում է ցածից հինգերորդ քարաշարքի վերայով և անցնում հյուսիս-արևելյան պատերի վերա, թվական չունի, բայց շինության ոճից երևում է, որ դա կառուցված պիտի լինի յոթերորդ դարում:

Մեր համալսարանի դասախոս, աշտարակցի Գրիգոր Ղափանցյանը, որ լավ ուսումնասիրել է այդ եկեղեցին, մեզ՝ յուր այդ մասին հաղորդած գրավոր ծանոթության մեջ, ասում է. «Կարմրավորի տիպի եկեղեցի, այն է՝ խաչի չորս դրսևորված թևերով, մենք ունենք նաև Թալինում, որը շինված է Ներսեհ Կամսարականի ձեռքով, VII դարում, և Ալաման գյուղում (Կարսի նահանգ): Կարմրավորի VII դարին պատկանելը ապացուցվում է թե՛ յուր կոնստրուկցիայով՝ նման նույն դարի մյուս երկու փոքրիկ եկեղեցիներին (Թալինում և Ալամանում), թե՛ յուր գոտեձև և միատող արձանագրությամբ և թե՛ տանիքի կղմինդրով, որը նույնպես հատուկ է եղել VII դարին, ինչպես մեզ բանավոր կերպով հայտնել է հնագետ Սմիրնովը (Я. И. Смирнов)»:

Կարսի Ալամանի (Ալեմ) այժմ ավերակ եկեղեցին կոչվում է ս. Անանե. դա շինված է Հերակլ կայսեր 27 տարին (636 թ.), Շիրակա և Արշարունյաց տեր Ներսեհի օրով: Եկեղեցու շինողն է Գրիգոր Եղուստրը (Illustris) և յուր կին Մարիամը: Նորոգությունն է արել եկեղեցու վերա Աշոտ Ողորմածի դուստր և վրաց թագավորի կին Սոփիա թագուհին Ժ—երորդ դարում (տե՛ս այդ մասին Հուսիկ վարդապետ Մովսիսյանի «Կարսի վիճակի հնությունների մասին համառոտ տեղեկություններ» խորագրով հոդվածը, «Արարատ», 1890, թիվ Գ, էջ 158):

Թալինը (հին), որի մասին ասում են, որ դա հնումն այնքան մեծ և փարթամ բնակչության վայր է եղել, որ այդտեղ ծննդյան ու զատկի տոներին 360 նորապսակ հարսներ արծաթապայտ մուճակներով են եկեղեցի գնացել, ունի յուր հյուսիսային կողմը մի փոքրիկ, անսյուն տաճար՝ խարտյաշ քարից շինված, որի շինության արձանագրությունը գտնվում է դրա արևմտյան պատի վերա, դրսից.

«Ես Ներսէհ ապոհիպատ պա … <Շիր> ակայ և Արշարունեաց տէր, շինեցի զեկեղեցիս յանուն սրբ … Ածածնին ի բարեխաւսութիւն ինձ և Շուշանայ … յամուսնոյ իմոյ եւ Հրահատայ որդւոյ մերոյ»:

*Ի նկատի առնելով, որ արձանագրության մեջ հիշված՝ Արշարունյաց տերը
համարվում է ծերունի Վահան Կամսարականի որդին, որ 690 թվին կարգվել
է Հուստի<նի>անոս Բ կայսրից Հայոց կյուրոպաղատ, հյուպատոս ու պատ-
րիկ կոչումով, կարելի է, ուրեմն, եզրակացնել, որ և այս եկեղեցին շինված է
յոթներորդ դարում (տե՛ս այդ մասին* Յովհ. եպիսկ. Շահխաթունեանց, *Ստո-
րագրութիւն ..., հատոր II, էջ 50):*

*Կարմրավորը շրջապատող վերոհիշյալ հաստակուռ պարիսպները շատ հին
են. դրանք, ինչպես երևում է հարավային դռան (պարիսպների) վերա ձգված
կիսաբոլոր կամարակալ քարի վերա փորագրված արձանագրությունից, շին-
ված են ս. Մարիանեի ձախ ավանդատան անկյունի արձանագրության մեջ հիշ-
ված Ասնավորի և յուր ամուսին Ղուտալշաքի ձեռքով, որոնք գրվել են միաբան
եկեղեցուն և զանազան շինություններ արել: Դա՝ Կարմրավորը, հնումը կու-
սանաց վանք է եղել, ինչպես ս. Մարիանեն՝ աբեղաների վանք, և այդպես
մնացել է մինչև 1813 թիվը: Դրա միաբան կույսերից վերջինն եղել են բայա-
զետցի կույս Հռիփսիմեն և դրա աշակերտուհի, աշտարակցի Ազատենց կույս
Շողակաթը, որոնցից առաջինը վախճանելով՝ թաղվել է եկեղեցու բակում:
Կույս Հռիփսիմեի վերա գրված է եղել տապանաքար, որ հետո գերեզմանի
վերայից առնվել, զետեղվել է եկեղեցու ժողովրդանոցի հարավային պատի
արևելյան անկյունում, իբրև անկյունաքար: Դրա, այդ տապանաքարի վերա
փորագրված է.*

1. Այս կոյս եզնազեաց, անուն Հռիփսիմէ,
2. Տառայեաց վանիցս ի բոլոր սրտէ.
3. Յորչափ եկաց առ յիւրում կայանի,
4. Այս Կարմրաւոր վանս չեթող ամայի:
5. Ծնաւ 1208 Հայկական թրվի (1759),
6. [Վախճ.] 1811 յամի ի 1 ապրիլի:

*Կույս Ազատենց Շողակաթը Հռիփսիմեի մահից հետո, այլ ևս երկու տարի,
սպասավորել է վանքին և հետո թողել, հեռացել է, և եկեղեցին դարձել է ուխ-
տատեղի, և այդպես մնացել է մինչև 1860 թվականը, երբ 40 տուն, հետևե-
լով Վերին Թաղեցիների օրինակին, բաժանվել են Ամենափրկչի ծխից, փոխա-
դըրվել են Կարմրավոր՝ շինելով նրան կից, ներկայումս գոյություն ունեցող հա-
սարակ, փայտածածկ ժողովրդանոցը: Այդ ժամանակն է եղել ահա՛, որ բար-
բարոսաբար, անխտիր, քանդվել է եկեղեցու բակում, ներկա ժողովրդանոցի
տեղում գտնված՝ աշտարակցի Մկրտիչ վարդապետի մատուռը, ջարդվել են շատ
հին ճարտարվեստ խաչքարեր և պատմական տապանաքարերը և գործադրվել
ժողովրդանոցի անոճ շինության վերա և սալահատակվել նրա հատակը: Մա-
տուռից պահպանվել է միայն նրա մեջ թաղված վարդապետի փոքրագիր խաչ-*

քարը, որ այժմ դրված է եկեղեցու բակը տանող սանդուղքի գլխին. աջ կող-
մից, և դրա վերա կարդացվում է.«Մկրտիչ վարդապետ Շահազիզեանց, 1832
թ.»: *Իսկ խաչքարերից պահպանվել են՝ մեկի պատվանդանը հին արձանագրու-
թյամբ, որ այժմ դրված է ժողովրդանոցի հյուսիս-արևելյան անկյունում, իբրև
անկյունաքար, երկուսը, որոնք անարձանագիր են, բայց քանդակազարդ,
հագցրած են ժողովրդանոցի հարավային պատի մեջ, դռան աջ ու ձախ կողմերը,
մեկը կանգնեցրած է վերոհիշյալ սանդուղքի գլխին, ձախ կողմից, մեկը՝
պարսպների հարավային դռան առաջ, բակում, մյուսներն էլ ցիրուցան ընկած
են բակում ու դրա շուրջը, ո՛րը պատվանդանի վրայից ընկած, բայց անվնաս
մնացած, ո՛րն էլ ջարդված և կտոր-կտոր եղած: Դրանց, այդ բոլորի մեջ ուշա-
դրության արժանի է հիշյալ, ձախ կողմից սանդուղքի գլխին գտնվածը. դա ունի
ջատ պարզ և սիրուն քանդակազարդեր, կոչվում է Հազախաչ ժողովրդի բերա-
նում, և ունի յուր կողքի վերա փորագրված, բայց մինչև օրս չնկատված ու
չկարդացված արձանագրություն, որի շարունակությունը գտնվում է քարի
հետևը:*

*Կարմրավորում պահվում են երկու, արժանի ուշադրության հնություններ:
Դրանցից առաջինը մի հնդու* ղալամքյար *(նկարեն) վարագույր է, որ 1798—
99 թվերին, մի քանի թանկարժեք եկեղեցական սպասների հետ միասին, Կալ-
կաթայից և Դաքայից բերել է Ամենափրկչի համար Հնդկաստան նվիրակու-
թյան պաշտոնով գնացած աշտարակցի Տիգրանենց Հարությունի որդի Վրթա-
նես Եպիսկոպոսը: Այդ վարագույրը, որ Ամենափրկչի քանդակելուց հետո փո-
խադրվել է Կարմրավոր և այժմ կախված է դրա սեղանի առաջ, ունի յուր
վերա հետևյալ հիշատակ<ագրությունը>.* «Յիշատակ է [վարագոյրս]
Կիրակոսին և Թագուհուն. բոյին ՌՃԾԸ=1709»: *Երկրորդը մի ձեռագիր ավե-
տարան է, որ առաջ աշտարակցի Շուխյանց ընտանիքին պատկանած լինելու
պատճառով կոչվում է* Շուխոնց աւետարան: *1873 թվին դա տրվել է ի հիշա-
տակ Ամենափրկիչ եկեղեցուն և այդտեղից էլ, վերոհիշյալ վարագույրի հետ
միասին, փոխադրվել է Կարմրավոր:*

Այդ գրչագիրն ունի հետևյալ հիշատակարանը.

*«Փառք եռանձնեայ տէրութեան և այլն: Արդ յանկ ելեալ և կատարեցաւ
սուրբ աւետարանս և բերան Քրիստոսի և քարոզ Յիսուսի՝ Տեառն աստուծոյ
մերոյ. ի քաղաքն Տօշ, որ ասի Իսպահան, ի գեօղն Ջուղայ, ընդ հովանեաւ
սուրբ ուխտի Ամենափրկչի, ձեռամբ սուտ անուն և եթ կրօնաւոր Բարսղի, ի
թվականի հայկազեան սեռի ՌՃԺԸ (1669 թ.) ի մայիս ամսոյն Ժ և Է, ի օրն
կիրակի, ի հայրապետութեան Հայոց տեառն Յակոբ կաթուղիկոսի և Ջուղայու
վանից առաջնորդութեան Դաւիթ արքեպիսկոպոսի և ի փաթշահութեան պար-
սից Շահ Սըլէմանի:*

Արդ՝ աղաչեմք զՁեզ, ո՛վ մանկունք եկեղեցւոյ, որք հանդիպիք ի սուրբ տառիս կարդալով և կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ սուրբ յաղօթս ձեր հեղաոգի զխօջայ Մանասն և կողակիցն իւր Նուրմահալն, որ ըստացաւ զսուրբ աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց և ետ յիշատակ իւր հոգոյն ի դուռն սուրբ եկեղեցւոյ, և դուք, ռամք քահանայից, որք հանդիպիք կարդալով զսուրբ աւետարանս, բերան մի ողորմիս ասացէք Պարոն Մանասին և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ ամէն» (թ. 279բ—280ա):

Կավահանքի թաղն յուր անունը ստացել է, ինչպես անունից էլ երևում է, այդտեղ եղած կավի հանքից. հնումն այդ հանքից է հանվել գյուղին հարկավոր եղած բոլոր կավը: Այդտեղ գտնվել է մի հարթ, հավասար տարածություն, որ կոչվել է Կավաճաճի դուզ, և գյուղի համար ծառայել է իբրև ձիարշավի կամ, ինչպես ասել են հին աշտարակցիք, ջիրիդ խաղալու տեղ: Զատկի ախառ-կյուրակեին գյուղի ժողովուրդը սովորություն է ունեցել հավաքվել այդտեղ՝ դիտելու յուր կտրիճների մկնդախաղը: Երիտասարդները՝ ծոպավոր ղարաչէններով զարդարված ձիեր հեծած, ղաճավուզ դոշլուղները կապած, գտակները ծուռ դրած, չուխաների փեշերը գրպաններից հանած, չարխամաշ, ծիրանի մկունդները ձեռքերին բռնած՝ պատրաստ կանգնած են եղել, և դաբ ու զուռնայի նշան տալուն պես, զույգ-զույգ սլացել են, արշավել, աշխատելով միմյանց առաջը տալ և մկունդներն այնպես նետել, որ նրանք թռչին և շեշտակի կպչեն իրենց հակառակորդների մեջքին:

Ձիարշավից ու ջիրիդից հետո, նույն տեղում, տեղի է ունեցել հավաքված հանդիսատես կանանց և աղջիկների կլոր պարը՝ յալլին, որի պարագլուխն եղել է գյուղում հայտնի Բեյվանի կանանցից մեկը (տե՛ս «Սոս և Վարդիթեր», երկ. հրատ., Երևան, 1887, էջ 70):

Այդ Կավաճաճի դուզի մոտից է անցել մեր արդեն հիշած Օլոռան կոչված ճանապարհը. այդտեղ էլ, ս. Մարիանեի հետևը, գտնվում է և գյուղի լուսնաճողի ճաճքը, որտեղից աշտարակցիք հանել, տարել են և մինչև օրս էլ հանում, տանում են հողն իրենց մաթի (դոշաբ) և շուջուխի շիրան պարզեցնելու համար, այգեկութի ժամանակ[13]:

Աշտարակը հնում ունեցել է երկու հանգստարան, որոնցից մեկը գտնվել է Օլոռանի ճանապարհի վերա և պատկանել է, ինչպես ասել ենք, Շահազիզյանց

13 Ավելի նոր ժամանակները, երբ ս. Մարիանեի հետևը, Օլորանի ճանապարհի վերա շատ տներ են շինվել, որոնց թվում և գյուղական դատարանի շենքը, այդտեղ գոյացել է և մի նոր թաղի պես բան, որ կոչվել է Խշմարագողի թաղ, և անունից էլ հասկանալի է, թե ինչու պետք է այդպես կոչված լինի: Գյուղի այդ կողմը, սակայն, մինչև օրս էլ պաշտոնապես չի ճանաչված իբրև մի առանձին թաղ՝ համահավասար հնուց ճանաչված մյուս պատմական թաղերին. ժողովուրդն էլ Խշմարագողի թաղ ասելով, ավելի ճիշտ կլինի ասել, որ հասկացել ու հասկանում է ո՛չ իբրև առանձին թաղի անուն, այլ իբրև տեղի անուն:

տոհմին, որ վաղուց ի վեր բարձիթողի է արված, և այսօր այլևս այնտեղ հանգուցյալներ չեն թաղվում, մյուսը՝ Մուղնու բառի կամ Կարմրավորի բմբի գերեզմանոցն է, որ կոչվում է ճասարակաց և որտեղ մինչև օրս էլ դեռ թաղվում են գյուղի հանգուցյալները:

Առաջնի մասին Պռոշյանցն յուր «Կուլածաղիկ» վիպասանության մեջ (գլուխ ԺԴ, էջ 76—77, հրատ. 1878 թ.) ասում է. «Այսօր էլ Աշտարակ մտնողը գտնում է երկու գերեզմանատուն: Մինը՝ մեծը, ճասարակաց կոչվածը, Կարմրավորի թմբինն է, գյուղի արևելա-հյուսիսային կողմումը, իսկ երկրորդը ընկնում է Աշտարակու արևմտա-հարավային ծայրը, որտեղից սկիզբ են առնում Օլորան կոչված այգիները: Առաջին այգին, որին կից է այդ գերեզմանատունը, մինչև վերջին տարիներս էլ պատկանում էր Շահազիզենց տան մի ներկայացուցչին...

Հյուսիսային պատը բաժանում է այգին գերեզմանատնից: Շահազիզենց, Թոռոսենց կամ Գեորգենց. այսպես է կոչվում այդ հանգստարանը: Մինչև այսօր էլ այնտեղ են թաղում այս մեծ ազգատոհմի, մի խոսքով ասած՝ Շահազիզյանց Կամսարականների հանգուցյալներին. երևում է, որ շատ եսական մարդիկ են եղել սրանց նախնիքը. նոքա յուրյանցից հավիտյանս բաժանված անդամներին էլ չեն թողել իրենց աչքից հեռանալու. այգուցը կտրել, նրանց տեղ են տվել» և այլն:

Երկրորդը՝ հասարակաց հանգստարանը, բռնում է մի ընդարձակ տարածություն բարձրավանդակի վերա. դա սկսվում է Կարմրավորի պարիսպների տակից և տարածվում է դեպի հյուսիս-արևելք և հյուսիս արևմուտք և, ինչպես երևում է, շատ հին է և հենց նախնական ժամանակներից գյուղի գերեզմանատունն է եղել: Դրա հնագույն և հին մասերն ունեն իրենց մեջ խաչքարեր, որոնցից մի քանիսը իրենց ճարտարարվեստ քանդակագործությամբ և հնությամբ արժանի են ուշադրության, ինչպես, օրինակ՝ Կարմրավորի մոտ, Ջիբ թիվը (1273) կրող արձանագրությամբ խաչքարը, Երեք խաչերը և մյուսները: Այդ բոլորի մեջ, սակայն, յուր բարձրությամբ, զարդաքանդակների նրբությամբ և հնությամբ առանձնապես աչքի է ընկնում մի խաչքար, որ յուր պատվանդանի մեջ սկիհ դնելու համար մի քառակուսի փորվածք ունենալու պատճառով կոչվում է Ծակ քար. դրա վերա փորագրված արձանագրությունից երևում է, որ Տեր Թումաս քահանան դրել է այդ խաչքարը պարոն Սադունի և դրա զավակների արեշատության համար, 1268 թվին:

Այս խաչքարի մոտ, արևմտյան կողմը, թաղված է Ներսես Աշտարակեցու հայրը՝ Տեր Հարություն քահանան, որ վախճանել է 1801 թվին: Ասում են, որ Աշտարակեցին այդ գերեզմանի վերա է բերել և արտասվալից աչքերով երդվեցրել զորավար Կրասովսկուն, <ու խոսք առել>, որ նա բոլոր միջոցներով

նպաստի Էջմիածնի և Արարատյան երկրի ազատագրման պարսից լծից, մի
բան, որ նրա հոր նվիրական ցանկությունն է եղել։

Աշտարակի ձորում ու նրա բաշերին կան որոշ տեղեր ու շինություններ,
որոնք հնագիտական-պատմական խորհուրդ ունեն. Հէրէրը (այրեր), Փոկա-
բէրդը, ս. Սարգիսը, կամուրջը և Ուլատիտիկը:

Հերերը կամ այրերը մի քանի բնական այրեր են Քասախի ձորի աջակողմ-
յան բարձր քարափների մեջ, Ականատեսի առվի ակունքի վերը և Գոմշախրամ
կոչված ձորամուտից ոչ հեռու։ Դրանցից ամենամեծը և գլխավորը՝ ունենալով
յուր առաջ դառապա, այսինքն՝ պատշգամբի պես մի բան (դառապա
արաբերեն նշանակում է տախտակ), որի մնացորդները մինչև օրս էլ դեռ կան
ու պահպանել են իրենց գոյությունն հեռու անցյալից, ահագին բարձրության
վերա, կոչվում է Դառապավոր, այսինքն՝ տախտակավոր։ Դրանք, այդ մեծ
այրը մյուսների հետ միասին, ծառայել են Աշտարակի բնակչության համար
իբրև ապաստարան, վտանգի ժամանակ պատսպարվելու տեղեր։

Հայաստանի դժբախտ անցյալում, ինչպես հայտնի է, հաճախակի են տեղի
ունեցել արշավանքներ, որոնց ժամանակ ավերվել ու քանդվել են նրա գյուղերն
ու քաղաքները, և դրանց բնակչությունը գերեվարության, կողոպտման և սրա-
ծության ենթարկվել։ Այդպիսի արշավանքներն ու հարձակումները հատկա-
պես բազմացել են XVIII դարու սկզբին, երբ մեծամեծ խռովություններ են
ծագել Պարսկաստանում։ Աֆղանների Միր Մահմուդ խանը դուրս գալով Ղան-
դահարից, հասել է Իսպահան, գահընկեց արել Թուլամորթ Հյուսեին շահին և
ինքը նրա տեղ թագ կապել, շահի որդին՝ Թահմասպն էլ, փախել է Մազան-
դարան և այդտեղ պարսից թագավոր հռչակել իրեն։ Դրա հետևանքով, բնա-
կանապես, երկիրն անպաշտպան է մնացել և մատնվել սրա-նրա ավարառու-
թյան։ Հայաստանի արևելյան մասն էլ, որ այդ ժամանակները գտնվել է պարսից
իշխանության ներքո, զերծ չի մնացել այդ հարձակումներից և ավարառում-
ներից։ Լազգիները՝ խառն ուրիշ լեռնորդի ցեղերի հետ, մտել են Հայաս-
տանի հյուսիս-արևելյան գավառները և անխնա կոտորելով, կողոպտելով և գե-
րելով գյուղերը՝ հասել են Սևանա ծովը և այդտեղից ասպատակ սփռել ամեն
տեղ։ Այդ ասպատակավոր խմբերն ու հրոսակները մտել են և Արագածոտնի
գյուղերը և ամեն տեղ ահ ու սարսափ տարածել։

Աշտարակցիք ուրիշ միջոց չգտնելով պաշտպանվելու նրանցից՝ առել են
իրենց անհրաժեշտ իրերը և մտել, պատսպարվել են այդ այրերի մեջ, որոնք
իրենց անմատչելիությամբ՝ վերևից և ցածից, ապահով ապաստարան են եղել։
Այրերի մուտքը ցածից շատ բարձր է, վերևից՝ շատ ցած, և դրանց մեջ հնա-
րավոր է մտնել միայն պարանների միջոցով, մի միջոց, որ, հավանորեն, գոր-
ծադրել են աշտարակցիների նախնիքը։ Դառապայի պատրաստվելուց հետո հեշ-
տացել է իջնելու և բարձրանալու գործը. այդ կատարվել է ճախարակի միջո-

ցով, որ ամրացրած է եղել դառապայի վերա։ Ձորում, այրերի տակը, մինչև օրս
էլ ցույց են տալիս մի տապանաքար, որ կոչվում է Նահատակի գերեզման։
Ավանդությունն ասում է, որ լազգիները բռնելով գյուղացիներից մեկին, բերել,
կանգնեցրել են Դառապավորի տակը և ստիպել նրան, որ նա ցածից ձայն տա,
համոզի, որ թաքնվածները դուրս գան իրենց ամուր և անվտանգ ապաստա-
րանից, բայց նա, մահն աչքի առնելով, ընդհակառակը, հորդորել է նրանց, որ
պինդ կենան իրենց տեղում և դուրս չգան, որի համար և տեղն ու տեղը նահա-
տակվել է։ Ասում են, որ նա կանչել է.

Ա՜յ ձորի մարդիկ,
Անուճս է Վարդիկ.
Ինձ տեսեf, ձեր գլուխը լացեf,
Ուտեղ որ եf, ղայիմ կացեf*:

Սակայն, շարունակում է ավանդությունը, եթե լազգիները չեն կարողացել
այդ միջոցով իրենց նպատակին հասնել, նրանք դրան հասել են ուրիշ միջոցով։
Դառապավորի մեջ, ի միջի այլոց, պատսպարված է եղել և Սողոմոնենց ընտա-
նիքը, որ ունեցել է մի անզգամ հարս։ Դա գիշերը, երբ ամենքը խոր քնով
քնած են եղել այրում, ճախարակի պարանն արձակելով՝ իջել է ցած և գնացել
լազգիների ասպատակավոր խմբի վրանը, որ գտնվել է գետի մյուս ափին։ Մի
օր նա լազգիների վրանում մնալուց հետո, մյուս օրը, գիշերը բերել է լազգի-
ներից վեց հոգի, կանգնեցրել այրի տակ և ձայն տվել, որ իրեն վեր քաշեն։
Աշտարակցիք միամտաբար կատարել են նրա ցանկությունը և հարսի փոխարեն
վեր քաշել զինված լազգիներից մեկին։ Լեղապատառ են եղել վեր քաշողները,
երբ իրենց առաջ, հարսի տեղ, տեսել են զինված լազգուն. նրանք անմիջապես
փախել, մտել են այրի մեջ և թաքնվել ծակուծուկերում, իսկ լազգին օգտվելով
հաջող բոպեից՝ մեկ-մեկ վեր է քաշել յուր մյուս ընկերներին։ Դրանք սրախ-
մամբ վայր են իջեցրել բոլոր թաքնվածներին, կողոպտել, շատերին էլ գերե-
վարել։

Ասողներ էլ կան, որ այդ նահատակի գերեզման համարվածն աշտարակցի
հայտնի Գալուստ եպիսկոպոսի՝ Ներսես Աշտարակեցու կնքահոր պապի, գերեզ-
մանն է, պապի, որ վախճանած լինելով դառապավորում՝ ցած է բերվել և թաղ-

* Մ. Թաղիդյանցի «Ճանապարհորդութիւն... ի Հայս» գրքում (Կալկաթա, 1847, էջ 198)
մեջ է բերված այս ավանդական զրույցի մեկ այլ տարբերակ, ուր Վարդիկը դուրս է բերված
օշականցի, իսկ նրա երգը՝ օշականցիներին ուղղված դիմում.

Օշական՛ մարդիկ,
Անուճս է Վարդիկ.
Ի՛նձ տեսե՜ք,
Ձե՛զ լացե՜ք
Ուր որ կեք՝ ամու՜ր կացե՜ք... (Պ. Հ.)։

վել այդտեղ. տապանաքարն էլ խնքը՝ եպիսկոպոսն է քաշել գերեզմանի վերա: Այդ Գալուստ եպիսկոպոսին է պատկանել Բերդաթաղի ձորաբաշին գտնված գեղեցիկ, ընդարձակ այգին, որ նա նվիրել է էջմիածնին, ուստի և կոչվել է Վանանց այգի: Այդտեղ ամառներն ամառանոց է եկել Կարբեցի Հովհաննես կաթողիկոսը: Աշտարակը այդ ժամանակները, Քանաքեռի պես հռչակված է եղել յուր անուշահամ, առողջարար ջրով և օդով, որի հետևանքով Արարատյան երկրում սովորություն է դարձած եղել ասել. «Դողացնո՞ւմ ես, Աշտարակ գնա՛, առողջացի՛ր»:

Բայց հիշյալ նահատակի ո՞վ լինելու մասին մենք ունենք և մի այլ տեղեկություն, որ կարծում ենք, թե ավելի ճիշտ պիտի լինի: Գյուղում մինչև օրս կենդանի է մի ութսուն տարեկան ծերուն՝ Էրամենց (Արամյանց) ընտանիքից, և հայտնի է գյուղում Շեկ Վարդանի Էրամ (Արամ) անունով: Դա ասում է, որ Հերերի տակի նահատակի գերեզմանը յուր պապի գերեզմանն է, որ նահատակվել է «նետ ու աղեղով» չաչանների ձեռքով: Ծերունին հիշում է, թե ի՛նչպես ինքն յուր մանկության օրերով, յուր պապի հետ, գերեզման օրհնեքներին գնացել է գերեզմանը, և թե ի՛նչպես հաց են տարել, և պապը օրհնել է տվել գերեզմանը գյուղացիների խուռն բազմության ներկայությամբ:

Գերեզմանն ունի եղծված և անընթեռնելի դարձած տապանագիր, որ, սակայն, կարելի է միայն հասկանալ, որ նահատակվածը աշտարակցի է եղել, անունը Մկրտում, և սպանվել է, եթե մեր ընթերցվածը ճիշտ է, ՌՄ թվին-1751*:

Նոր ժամանակներս գյուղացիներից մի քանիսը փորձել են և հաջողել են մտնել այդ այրերի մեջ, բացի պղինձ-պղնձակալից և զանազան շորացու կտորների ու տնային մանր-մունր իրերի մնացորդներից, ուրիշ բան չեն գտել նրանց մեջ: Այրերից մեկի բերանը շարված է սրբատաշ քարերով և արտաքուստ կարծել է տալիս, որ դա այրի մեջ շինված մի եկեղեցի կամ մատուռ պիտի եղած լինի, բայց հետախուզությունը ցույց է տվել, որ դա դարբնոց է եղել, որովհետև դրա մեջ գտնվել են դարբնական փուքս և այլ պարագաներ:

* Դառապավոր քարանձավի դեմ-հանդիման, Քասախի ձորում գտնվող այդ խորհրդավոր տապանաքարի արձանագրությունը հետևյալն է.

Ով ճանդիպողք իմոյս շիրմի.
Զձեզ աղաչեմ՝ տուք զողորմի,
Եւ իմ անունս Մկրտում կոչի.
Տեղեաւ գոլով Աշտարակցի,
Երկիւղէ այլասեռի
Վաղչանեցա յայսմ տեղի:
ՌՄ (=1751) թվին:

(Սույն վերծանությունը մեզ է տրամադրել բազմաշխատ հնագետ Ս. Սաղումյանը, որի համար հայտնում ենք մեր ջերմ շնորհակալությունը —Պ. Հ.):

Այրերի դեմ, գետի մյուս ափին, քարափները ժանիքանման կատարներ
ունեն և կազմում են բերդապարիսպների նման մի ամբողջ ապառաժների շարք.
դա կոչվում է Փոկաբերդ: Որ դա կոչվում է բերդ, այդ հասկանալի է, որովհետև,
տև, ինչպես ասացինք, այդ ժանիքավոր քարափները նմանում են բերդի պա-
րիսպների, բայց որ դա կոչվում է Փոկաբերդ, այդ մեզ համար անհասկանալի է:

Քասախի կամուրջը մի հին, երեք աչքանի, կոփածո քարից կառուցված,
հաստատուն շինություն է, որ կապում է գետի երկու ափերը միմյանց հետ և
որի վերայից անցնում է խճուղին դեպի Երևան ու դեպի Ապարան: Դա Աշտա-
րակի հնագույն կամուրջը չէ, հնագույնի տեղն այժմ էլ դեռ երևում է դրա կող-
քին: Թե ե՞րբ է շինված այդ կամուրջը և ո՞ւմ ձեռքով, մինչև այսօր դեռ լավ
չի որոշված, որովհետև արձանագրության տեղը, որ պարզ երևում է երկու մեծ
աչքերի կամարների մեջտեղը, եղծված է: Դրա մեջը դատարկ է և ունի մի լու-
սամուտի նման օղախաղաց ծակ, այնքան մեծ, որ գետի մեջ, կամրջի տակ լո-
ղացող երեխաները կարողանում են այդտեղից մտնել դատարկության մեջ և
դուրս գալ: Ահա՛ այդ լուսամուտի մեջ փորագրված է մի թվական՝ ՌՃԿ, և Բա-
ղրամ անունը, որ հիմք է տվել և տալիս է ենթադրելու, որ կամուրջը շինված
է 1701 թվին, Բարաղամի ձեռքերով: Աշտարակցիք ավանդաբար ասում են, որ
դրա շինողն եղել է քանաքեռցի հայտնի մեծատուն խոջա Փլավը, որ շինել է
և Երևանի Կարմիր կամուրջը, և այդ շինության ժամանակ բանվորների հացը
թխվել է Զալաբուց * ճացատանը, որի տանիքի գերաններից մեկի վերա,
իբրև թե, փորագրված է եղել դրա արձանագրությունը:

Առաքել վարդապետ Դավրիժեցին յուր Պատմության մեջ (գլուխ ԻԶ, էջ
352—353) խոսելով Աշտարակի կամրջի մասին, դրա շինությունը վերագրում
է երևանցի հայտնի բարեգործ Մոծակենց Մահտեսի խոջա Գրիգորին, ՌՃԺԳ
թվին (այսինքն՝ 1664 թվին): «Իսկ կամուրջն,— ասում է նա,— որ է ի վերայ
Քասախ գետոյն, ի մէջ խորագոյն ձորոյն, որ մերձ է ի գիւղն Աշտարակ, որ
էր մեծակն և բարձրաշէն, կրով և գործուն քարիւ շինեալ, սա հնացեալ էր և
խախտեալ և ական կէսն ևս փլուզեալ. բայց կարի հարկաւոր էր, քանզի բազում
գաւառաց և բազում ճանապարհաց անցուրդ է: Վասն որոյ բարեպաշտ և քրիս-
տոսասէր այրն՝ Մահտեսի խոջայ Գրիգորն, զոր մականուամբ Մոծակենց Գրի-
գոր ասէին, որ է բուն տեղացի յԵրևան քաղաքէն: Սա զհին կամուրջն, որ
մերձեալ էր ի փլանիլ, քակեաց և ապա փոխեաց զտեղն և սկսաւ ի հիմանէ նոր
շինել, ամուր և հաստատուն կրով և գործուն քարիւ, ըստ պատշաճի և բարե-
վայելուչ, յօրինեալ ի հիմանէ մինչև ցկատարումն, վասն հոգւոյ իւրոյ փրկու-
թեան և վասն առ Աստուած յուսոյն, բազում աշխատանս կրեալ և բազում

* Այս գերդաստանի ժառանգներից է Կարո Զալաբյանը, աշտարակցիների սիրելի դերասանն ու զվարճախոսը —Պ. Հ.:

գանձս ծախեալ մինչև ցկատարումն հասուցեալ, ի թուականիս մերում ՌՃԺԳ, ի փառս Աստուծոյ»։

Պատմագրիս այս վկայությունն այնքան որոշ և մանրամասն է, որ, կարծում ենք, այլևս տեղիք չի մնում կասկածելու և այլևայլ ենթադրություններ անելու։ Կամուրջը շինել է Երևանցի Մոծակենց Գրիգորը 1664 թվին, հավանորեն հին կամրջի քարերով, որ Նորի կողքին է եղել և որ նա քակել է տվել։

Սբ. Սարգիսը հնուց մնացած՝ Շահազիզյանց տոհմի մատուռի ավերակն է, դա շինված է գետի ձախ ափին, մի ժայռոտ սարավույթի վերա, որ կախված է կամրջից դուրս գալու ու դեպի Երևան ու առապարը գնալու ճանապարհի վերա։ Այդ ավերակից մինչև վերջին տարիները պահպանվել էր սեղանն յուր կամարով։ Առաջին անգամ մաքրել էր տվել այդ ավերակը գյուղի Տ. Սարգիս քահանա Բզնունին, կամենալով վերանորոգել այն, բայց հոգևոր իշխանությունից թույլտվություն չէր ստացել։ 1917 թվին գյուղացի մահտեսի Մնացական Ղալաչյանը վերադարձած լինելով Երուսաղեմից, որտեղ, յուր ասելով, «երազում քեռի սբ. Սարգիսը պատվիրել էր նրան՝ վերանորոգել իրեն անվան նվիրված Աշտարակի մատուռը», քանդել է հնության և այդ վերջին մնացորդը՝ սեղանը, սրբատաշ քարից շինված սիրուն կամարով, և նրա հիմքի վերա շինել է ներկա հասարակ, փայտածածկ, գյուղական տնակը* և մի քանի տարի օգտվել ուխտավորների մատաղներից և նվիրած դրամից։ Եվ չի գտնվել այդ մեծ գյուղում մեկը, որ բռներ նրա ձեռքը, արգելք հանդիսանար և թույլ չտար վանդալաբար քանդելու հին, պատմական հուշարձանի և այդ վերջին մնացորդը։ Ընդհակառակը, դեռ գտնվել են ժողովրդի մեջ մարդիկ, որոնք օժանդակող են հանդիսացել Մահտեսուն՝ նրա կատարած սխրագործության գործում, որ և նա անմահացրել է, արձանագրելով յուր ձեռակերտի ճակատին. «Հիշատակ է մահտեսի **Մնացական Ղալաչյանին. օգնեց ժողովուրդ. 1917»**։

Գյուղի ստորին հողերի Ուլատիրիկ կոչված մասում, գետափից մի-երկու վերստ հեռու, գտնվում է մի մեծ բլուր, որ կոչվում է Ուլատիրիկ։ Բլուրի այդ անունը, ինչպես երևում է, նոր է և համապատասխանում է ժողովրդի նոր հասկացողության, համաձայն խոսքի իմաստին, իբրև ուլերի, խաշինքի մակաղելու, հանգստանալու տեղ։ Հայտնի չէ, թե ի՞նչ է եղել դա հնումը։ Հնագետների կարծիքով՝ այդ բլուրն ամփոփում է յուր մեջ նախապատմական դամբարաններ. կարծողներ էլ կան, որ դա նախնական ժամանակներում եղած պիտի լինի պաշտպանվելու դիրք կամ մի փոքրիկ ամրոցիկ, որովհետև դրա շուրջն երևում են շինությունից թափված քարեր, և վերան՝ մեծագույն քարերից կառուցված մի ո՛չ մեծ, հնագույն շինության մնացորդներ։ Ապագայում կատարվելիք պեղումներին է մնում պարզելու դրա ի՞նչ եղած լինելու հանգամանքը

* 1985—86 թթ. ընթացքում, ճարտարապետներ Հ. Գասպարյանի և Հ. Խաչատրյանի նախագծով վերականգնվել է Սբ. Սարգսի մատուռն իր նախնական տեսքով— Պ. Հ.։

(տե՛ս այդ մասին Գ. Ղափանցյանի «Հնության մի քանի հիշատակարաններ» խորագրով հոդվածը, «Արարատ», 1914, հունվ., էջ 91—96, մասնավորապես էջ 93)*։

Աշտարակի այդ հուշարձանները և, հատկապես, նրա Ծիրանավորը, ս. Մարիանեն և Կարմրավորը, արժանի են առանձին ուշադրության և այն տեսակետից, որ դրանք իրենց համեմատաբար ավելի լավ պահպանված լինելու հանգամանքով՝ ներկայացնում են իրենց ժամանակի և իրենց տեսակի հայ հուշարձանների ամենացայտուն նմուշները[14]։

* Գ. Ղափանցյանը հիշյալ հնավայրի մասին գրել է. «Աշտարակ գյուղի Ուլատիրիկ կոչված բարձրավանդակի հնությունները՝ նշմարելի երկու տեղում, հավանաբար, նախապատմական մարդու հետագա շրջանների մնացորդներ են, քանի որ քարերի կուտակները, կասես թե, ավելի արվեստորեն է կատարված. սրանցից մեկը նման է... օղուցների կլոր սենյակի՝ ունենալով ավելի մեծ տրամագիծ, մոտ $1^{1}/_{2}$—2 սաժեն. իսկ մյուսը ներկայացնում է փուլ եկած շինությունից առաջացած քարերի կույտեր։ Շատ կարելի է, որ այս Ուլատիրիկի հնությունները ծառայելիս եղած լինեն իբրև պաշտպանողական դիրքեր, ամրոցներ» («Արարատ», 1914, №1, էջ 93)։ Ցավոք, Ուլատիրիկ հնավայրն այժմ գրեթե ոչնչացված է՝ ջրամատակարարման նպատակով ջրամբար կառուցելու ձախող փորձերի ժամանակ։ Աշտարակի տարածքում կան հնության ուրիշ հուշարձաններ էլ. 1975 թ. ամռանը ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Հնագիտության ու ազգագրության և Արվեստի ինստիտուտների, պետական համալսարանի Հայագիտական հետազոտությունների կենտրոնի միացյալ հնագիտական արշավախումբը պեղումներ կատարեց Աշտարակի Վերին Նավերում, Վարդանաբակերի մոտ և հայտնաբերեց միջին բրոնզեդարյան դամբարանադաշտ (մ. թ. ա. II հազարամյակի առաջին կես) և վաղ-երկաթդարյան (մ. թ. ա. XI—X դդ.) թաղումներ— Պ. Հ.։

14 Գյուղի այս բոլոր հուշարձանները մինչև օրս (1934 թ.) շատ վատ են պահպանվել, կարելի է ասել, որ դրանց վրա ոչ մի խնամք չի տարվել, որի հետևանքով սբ. Սարգսի հին ավերակները քանդվել են գյուղացիներից մեկի ձեռքով և տեղը շինվել շահագիտական նպատակով ներկայումս այդտեղ գոյություն ունեցող անշնորհք, փայտածածկ շինությունը՝ մատաղատան բոլոր հարմարություններով, Ծիրանավորի հնագույն քարե դուռը հանվել, անհայտացվել է, ավերակը խոտնոցի վերածվել, գանձ որոնողների պեղումների առարկա դարձել, Սպիտակավորը աղբանոց դարձել և այլն։ Ներկայումս, մեր ձեռքին գտնված պաշտոնական տեղեկություններով, շրջգործկոմին կից կա հուշարձանների պահպանության խորհուրդ։ Լուսբաժինը Կուլտուրայի պատմության ինստիտուտի հետ պայմանագիր է կնքել և, հնագիտական փակ շրջանի կապալավարձի հաշվին, կազմակերպել է պահպանությունը։ Բացի տեղական կազմակերպություններից, Կուլտուրայի պատմության ինստիտուտը ունի տեղում թե՛ վճարովի և թե՛ անվճար հսկիչներ, ամսական 2—3 անգամ էլ այցելում է ինստիտուտի տեսուչ-հրահանգիչը կամ մի այլ աշխատակից։ Հուսով ենք, որ այսուհետև ոչ միայն կմաքրվեն հուշարձանները և այն վիճակի մեջ կդրվեն, որ ամոթ չլինի ցույց տալու տուրիստներին, այլև հոգ կտարվի պահպանելու ավերակները և ապահովելու նրանց գոյությունը, գոնե, այնպես, ինչպես որ կան։ Ծիրանավորի դռան մոտ պահպանված սիրուն կամարները արդեն ուռել, թափվելու վրա են, ս. Մարիանեի պատերը վտանգավոր ճեղքվածքներ են տվել, Կարմրավորի հիմնաքարերը խախտվել և այլն և այլն։

14

ԱՇՏԱՐԱԿԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՀԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[15]

Ս. ՄԱՐԻԱՆԵԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1

Հարավային պատին, դռան ձախ կողմը, դրսից.

1. [Կամաւ ամենակալին այ ե]ս Թուխան եւ ամուսին իմ Մա
2. լ[տի]կին միաբանեցաf սբ Մարիանէիս եւ տվաf զմեր հալ
3. [ալ գանձ]ագին հողն եւ զմեր շինած տունն ի սբ եկեղեցիս եւ
4. ...[սպասա]ւորfս հաստատեցին ի տարին : Գ: պատարագ. զ: Ա: Թու
5. ... խանայ առնեն եւ զ :Բ: Մալտիկնայ անխափան:

Կամաւ ամենակալին աստուծոյ ես՝ Թուխան, եւ ամուսին իմ Մալտիկին միաբանեցաf սուրբ Մարիանէիս եւ տվաf զմեր հալալ գանձագին հողն եւ զմեր շինած տունն ի սուրբ եկեղեցիս, եւ սպասաւորfս հաստատեցին ի տարին :Գ: պատարագ՝ զ :Ա: Թուխանայ առնեն եւ զ :Բ: Մալտիկնայ անխափան:

2

Սրա տակն է անմիջապես

1. Շնորհիւն այ ես Խաթունիկս եւ իմ որդ իմ [իմ որդի իմ] Յովհաննէս մի
2. աբանեցաf սբ Մարիանէիս եւ տվաf զմեր Աչախառ
3. ուին այգոյն կէսն եւ այլ արդիւնս եւ սպասաւորf սբ ու
4. խտիս խոստացան ի տարին :Գ: աւր ժամ :Ա: Խաթունկանն :Ա: Ովան

15 *Աշտարակի այս արձանագրությունները առաջին անգամ կարդացել և գրի է առել Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցը յուր «Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հատոր երկրորդ» գրքում (1842), որից հետո օգտվել են և անփոփոխ մուծել իրենց երկասիրությունների մեջ ուրիշները՝ Հայր Ղևոնդ Ալիշանը («Այրարատ») և Կարապետ Կոստանյանը («Վիմական տարեգիր, Ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց»)։ Մենք կրկին ու կրկին կարդացել և ստուգել ենք, ունենալով մեր ձեռքին և՛ «Այրարատը», և՛ «Վիմական տարեգիրը», և՛ «Ստորագրութիւնը», և գտել ենք շատ սխալ ընթերցվածքներ, որ և ուղղել ենք։ Սակայն մեր այդպիսի ստուգած ընթերցվածքից հետո էլ դեռ մնացել են կասկածելի տեղեր և մեզ չբավարարող ընթերցվածքներ, ուստի և մի անգամ էլ ստուգել ենք, համեմատելով մերը Հ. Գարեգին արքեպիսկոպոսի՝ իրեն հատուկ սիրելությամբ մեր տրամադրության տակ դրած յուր նույն արձանագրությունների ընթերցվածքի ձեռագիր տետրակի հետ։ Այս բոլորից հետո էլ դեռ, անկասկած, մնացած կլինեն և մնացել էլ են կասկածելի ընթերցվածքներ, որ, մեր կարծիքով, միայն շատ հմուտ լուսահանությամբ և էստամպաժով, գուցե, հնարավոր լինի վերջնականապես ուղղել, մի բան, որ մենք հնարավորություն չենք ունեցել անել։*
Մեզ մեր ընթերցանության գործում օգնել ու նպաստել են, բացի հ. Գարեգին արքեպիսկոպոսից, և՛ պրոֆ. Աշխարհ-բեկ Քալանթարը, և՛ Աշտարակի Կարմրավոր ս. Աստվածածին եկեղեցու քահանա տ. Մարտիրոս Կարապետյանը, որոնց և պարտք ենք համարում հայտնել մեր խորին շնորհակալությունը։

5. նիսին :Ա: Մխիթարչին ի նոր կիրակէն առնեն անխափան
6. թվ: ՉՀԲ: կատարիչfն ահին յայ+:

Շնորհիւն աստուծոյ ես Խաթունիկս, եւ որդի իմ Յովհաննէս միաբանեցաf սուրբ Մարիանէիս եւ տվաf զմեր Աչախառուին այգոյն կէսն եւ այլ արդիւնս, եւ սպասաւորf սուրբ ուխտիս խոստացան ի տարին :Գ: աւր ժամ՝ :Ա: Խաթունկանն, :Ա: Ովաննիսին, :Ա: Մխիթարչին ի Նոր կիրակէն առնեն անխափան թվ :ՉՀԲ: (=1323/1324): կատարիչfն աւհնին յաստուծոյ+:

3

Հարավային պատին, դռան աջ կողմը

1. Կամաւ ամենայկալին այ եւ ողորմութբ պարոն Աղբ
2. ուղային եւ Սիթի խաթունին ես Յակոբ էրէց ի վանfս շ
3. ինեցի հոյրայտուն :Դ: դուռն ի պարըսպին դունես էլ տն
4. եր շինեցի եւ զամէն հոյրայտանն տվի ով որ հանգչ
5. ի զիրաւունfն ի հոյրայտուն տան եւ պարոնայfն
6. զայն տներոյն զամէն հարկ թողին ոչ բարաթ ոչ
7. սւսուն ոչ ամիրայ ոչ ձեռնաւոր ոչ գզիր ո
8. չ դ[գ]ուշա ոչ ով հետ ի էն տներոյն բան չունի ոչ
9. [վանա]ցս հայր. փոfր աւեր խուպան կայր հոյրայտ
10. [ան] համար շինեցի եթէ ոf վերոյ գրելոց
11. ս հակառակ լինի դատի յայ եւ մեր մեղացն պարտական է
12. եւ վարձf զՈւդայի եւ զԿայենի առցէ թվ :ՉԿԶ:

Կամաւ ամենայկալին աստուծոյ եւ ողորմութեամբ պարոն Աղբուղային եւ Սիթի Խաթունին, ես՝ Յակոբ էրէց, ի վանfս շինեցի հոյրայտուն (հիւրատուն) :Դ: դուռն, ի պարըսպին դունես էլ տներ շինեցի եւ զամէն հոյրայտանն տվի. ով որ հանգչի զիրաւունfն ի հոյրայտուն տան, եւ պարոնայfն զայն տներոյն զամէն հարկ թողին. ո՛չ բարաթ, ո՛չ սւսուն, ո՛չ ամիրայ, ո՛չ ձեռնաւոր, ո՛չ գզիր, ո՛չ դ(իլ)գուշա[?], ոչ ով հետ ի էն տներոյն բան չունի, ո՛չ վանացս հայր: Փոfր աւեր խուպան կայր, հոյրայտան համար շինեցի, եթե ոf վերոյգրելոցս հակառակ լինի դատի յաստուծոյ եւ մեր մեղացն պարտական է, եւ վարձf զՈւդայի եւ զԿայենի առցէ. ի թվ :ՉԿԶ: (=1317/1318):

4

Նոյն հարավային պատին, դռան աջ կողմի արձանագրությունից դեպի աջ

Ի թվ. :ՉՀ:

1 Կամաւ ամենակալին այ ես Տիկնանց Տիկին ամուսին Արշ
2. ուկին միաբանեցա սբ Մարիանէիս եւ ետու զՓարաս
3. անց այգոյն կէսն յ :ԳՃ: սպ. գնեցի եւ տվի եւ սպաս
4. աւուրք սրբոցս խոստացան ի տարին :Բ: պատարագ ի տաւնին Ղա
5. զարու Կատարիչքն աւրհնին յայ ամէն:

Ի թվին :ՉՀ: (=1321/1322) Կամաւ ամենակալին աստուծոյ ես՝ Տիկնանց Տիկին, ամուսին Արշուկին, միաբանեցայ սուրբ Մարիանէիս եւ ետու զՓարասանց այգոյն կէսն յ :ԳՃ: սպիտակ գնեցի եւ տվի, սպասաւորք սրբոցս խոստացան ի տարին :Բ: պատարագ ի տաւնին Ղազարու. Կատարիչքն աւրհնին յաստուծոյ ամէն:

5

Արևելյան պատին, դրսից

1. Ի յոյսն ամենեցուն ի Քս ապաւինել ես Սիրի խաթուն ամուսին Աղպուղային ետ
2. ու ի սբ Մարիանէի միաբանաց տունն զՓարպոյ հողին կէսն որ Այծամանց
3. երկիրն որ զկէսն Ակոբ Ապլղարիփի որդին գնել էր ի Թուրանէն ի Խոսրովէն ու սբ Մարիան
4. էիս տվել որ զ: Ա: էլ կէսն ես տվի ու ի յամ հարկէ ազատեցի չունի ոչ ով դաւի ոչ չարի
5. ոչ չարիատի ոչ էլ մեծ կամ փոքր խարճով զմեր հաստատ յիշատակս խաբանել ջանա
6. ի մերոց կամ յաւտարաց դատի յայ եւ անէծս առցէ եւ մեր մեղացն պարտական է ի թվ :ՉՀԲ:

Ի յոյսն ամենեցուն, ի Քրիստոս ապաւինել, ես՝ Սիրի խաթուն, ամուսին Աղպուղային, ետու ի սուրբ Մարիանէի միաբանաց տունն զՓարպոյ հողին կէսն, որ Այծամանց երկիրն, որ զկէսն Ակոբ Ապլղարիփի որդին գնել էր ի Թուրանէն ի Խոսրովէն ու սուրբ Մարիանէիս տվել, որ զ :Ա: էլ կէսն ես տվի ու ի յամենայն հարկէ ազատեցի. չունի ոչ ով դաւի՝ ո՛չ չարի, ո՛չ չարիատի, ո՛չ էլ մեծ

կամ փոքր խարճով զմեր հաստատ յիշատակս խաբանել ջանայ ի մերոց կամ յաւտարաց, դատի յաստուծոյ եւ անէծս առցէ, եւ մեր մեղացն պարտական է. ի թվ :ՉՀԲ: (=1323/1324):

6

Անմիջապես դրա տակը, բովանդակությամբ էլ կապ ունի

1. Ես Ակոբ Ապլղարիփի որդիս էլ տվի հետ իմ գնած Փարպոյ հողին զիմ գնած խուպանն
2. որ Աւշականոյ հանդին որ Պետրոս իրիցու :Ճ: սպ. գրաւ էր Պետրոս զիւ սպն էր տվել ես զհայ-
3. րենիքն տվի անդաւի իմ յամ ազգէ եւ միաբանքս խոստացան ի տարին :Բ: աւր ժամ ի տաւնի Համբարձմանն
4. Կատարիչք աւրհնին յայ ամէն:

Ես Ակոբ՝ Ապլղարիփի որդիս էլ, տվի հետ իմ գնած Փարպոյ հողին զիմ գնած խուպանն, որ Աւշականոյ հանդին, որ Պետրոս իրիցու :Ճ: սպիտակ գրաւ էր. Պետրոս զիւր սպիտակն էր տվել, ես զհայրենիքն տվի անդաւի իմ յամենայն ազգէ, եւ միաբանքս խոստացան ի տարին :Բ: աւր ժամ ի տաւնի Համբարձմանն. կատարիչք աւրհնին յաստուծոյ ամէն:

7

Չախակողմյան խորանի դռան գլխին, ներսը

1. Յառաջնորդութե Գր վպին ի շին
2. ութե սբ եկեղեցոյս ես Թագուհի դու
3. ստր Սահակ իրիցու էտու զիմ հայրէնի
4. տունն եւ զքարհանոցն այգին ի սբ Մարիան
5. էս եւ խոստացան ի տարին :Գ: պատարագ ինձ առ
6 նեն ի Նոր կիրակէն անխափան *(փակագիր)* թվի :ՉԼ:

Յառաջնորդութեան Գրիգոր վարդապետին, ի շինութեան սուրբ եկեղեցոյս, ես՝ Թագուհի, դուստր Սահակ իրիցու, ետու զիմ հայրենի տունն եւ զՔարհանոցն այգին ի սուրբ Մարիանէս, եւ խոստացան ի տարին :Գ: պատարագ ինձ առնեն ի Նոր կիրակէն անխափան. թվի :ՉԼ: (=1281/1282):

8

Սրա տակը, կից

1. Ես Յակոբ որդի Ասլանկանն էտու զիմ այգո
2. յն կէսն եւ զՎահանայ գաւթին հուն [?] ի սբ
3. Մարիանէս եւ խոստացան ի տարին :Գ: պատ
4. արագ ինձ ի տաւնի սբ Յակոբն կատարեն
5. (*տողի կիսում*՝ «խփի»):

Ես՝ Յակոբ, որդի Ասլանկանն, ետու զիմ այգոյն կէսն և զՎահանայ գաւթին հուն [?] ի սուրբ Մարիանէս, եւ խոստացան ի տարին :Գ: պատարագ ինձ ի տաւնի սուրբ Յակոբայ կատարեն «խփի» (*Երևի*՝ անխափան):

9

Հարավային պատին, ձախ ավանդատան անկյունից

1. Կամաւն ամենակալին այ Ես Ասնաւորս եւ ամուսին իմ Ղուտալշ
2. աք եւ զաւակ մեր Ջաքարէ միաբանեցաք սբ Մարիանէիս եւ գնեցի
3. զՔարգործենց հողն ի հալալ ընչից մերոց որ ի տեառն րն
4. Ջ որ ի առվէն ներքեւ է եւ սպասաւորք սրբոցս խոստացան ի տարին :Բ: աւր պատ
5. արագ :Ա: Ասնաւորին :Ա: Ղուտալշաքին ի տաւնի սբ խաչին կատարեն ան-խափան:

Կամաւն ամենակալին աստուծոյ Ես՝ Ասնաւորս, եւ ամուսին իմ Ղուտալշաք, եւ զաւակ մեր Ջաքարէ միաբանեցաք սուրբ Մարիանէիս, եւ գնեցի զքարգործենց հողն է հալալ ընչից մերոց, որ ի տեառն րն Ջ [?] որ ի առվէն ներքեւ է, եւ սպասաւորք սրբոցս խոստացան ի տարին :Բ: աւր պատարագ :Ա: Ասնաւորին, :Ա: Ղուտալշաքին ի տաւնի Սուրբ խաչին կատարեն անխափան (*փակագիր*):

10

Սրա տակը, կից

1. Յուսով անմահին այ Ես Հայոց [?] միաբանեցա սբ ուխտիս եւ տվի ար-դիւնս
2. եւ սպասաւորք սրբոցս խոստացան ի տարին :Բ: աւր պատարագ Թամթա խաթունին
3. ի տաւնի վարդավարին կատարիչքն ահնին յայ :ի թվ :ՉՀԵ:

Յուսով անմահին աստուծոյ Ես՝ Հայոց [?], միաբանեցայ սուրբ ուխտիս եւ տվի արդիւնս, եւ սպասաւորք սրբոցս խաստացան ի տարին :Բ: աւր պատարագ Թամթայ խաթունին, ի տաւնի Վարդավարին, կատարիչքն աւրհնին յաստուծոյ: ի թվ :ՉՀԵ: (=1326/1327):

11

Աշ ավանդատան գլխին

Ի թվ: ՉԿԱ:

1. Յուսովն այ Ես Դանէլս
2. Ետու զիմ հալալ դրամագին էգ
3. ին ի սբ Մարիանէս եւ սպասաւորք
4. սրբոցս խոստացան :Ե: աւր ժամ
5. ի տարին : յայտն :Ը: աւրացն անեն (առնեն)
6. :Ա: Գորգայ :Ա: Մարեմայ :Ա: ինձ
7. :Ա: Բախտաւորին :Ա: էլխաթունին կատար
8. իչք գրոյս արհնին յայ եւ խափ
9. անողքն :ՅԺԸ: իցն նզոված է եւ մեր մեղացս
10 որ է ... <*երկու բառ անընթեռնելի*>:

Ի թվին :ՉԿԱ: (=1311/1312) Յուսովն աստուծոյ Ես՝ Դանէլս, Ետու զիմ հալալ դրամագին էգին ի սուրբ Մարիանէս, եւ սպասաւորք սրբոցս խոստացան :Ե: աւր ժամ ի տարին : յայտն (յայտնութեա՞ն) :Ը: աւրացն (ութօրէից) անեն [առնեն] :Ա: Գորգայ :Ա: Մարեմայ :Ա: ինձ :Ա: Բախտաւորին :Ա: էլխաթունին, կատարիչք գրոյս աւրհնին յաստուծոյ, եւ խափանողքն :ՅԺԸ: իցն նզոված է եւ մեր մեղացս տէր է <*2 բառ անընթեռնելի*>:

12

Հյուսիսային պատի լուսամուտի տակը

1. Յիշխանութե եւ ի տէրութե պարոն Խութ
2. լու բուղին Ես Աւէտիս որդի Տերուամին Ետու
3. յիմո [ւ]մ ձեռն[աւ]որութես զվերի առվին ձեռնաւոր
4. աջուրն ի սբ Մարիանէս Եթէ ոք խփենել ջանա դատի
5. [յ]այ : ի թվ :ՉԼԴ:

Յիշխանութեան եւ ի տէրութեան պարոն Խութլուբուղին, Ես՝ Աւետիս, որդի Տերուամին, Ետու յիմում ձեռնաւորութեանս զվերի առվին ձեռնաւորաջուրն ի սուրբ Մարիանէս. Եթէ ոք խափանել ջանայ, դատի յաստուծոյ : ի թվին :ՉԼԴ: (=1285/1286):

ԿԱՐՄՐԱՎՈՐ Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1

Եկեղեցու շինության արձանագրությունը
միատող, միակարգ, գոտեձև, ցածից հինգերորդ քարաշարքի վրա

[Ես Դաւիթ մեղաւոր [ի] գիւղաքաղաքէս յերիցուն]եաց Գրիգորի քահանայի եւ Մանասեի որդիք տուաք շինել զեկեղեցիս սրբոյ Աստուածածնիս վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ շինութեան Աշտարակի և պտղաբերութեան սահմանիդ եւ վասն փրկութեան հոգւոց մերոց ազգի մերոյ կենդանեաց և մեռելոց սմա փափագեցաք սուրբ լուսոյս, սա կոչեցաւ որդի վշտաց... (VII դար):

2

Եկեղեցու հարավային բեհի վրա, լուսամուտի տակ

1. Ան[ու]ամբ անեղին այ հաւր եւ
2. Որդոյ եւ սբ հոգոյն ի ղանութե
3. Հասանբէկին կաթող[ի]կոսութե տր Ըռ[ստ]ակէսին...*

Անուամբ անեղին աստուծոյ, Հաւր եւ Որդոյ եւ Սուրբ հոգոյն՝ ի ղանութեան Հասանբէկին, կաթուղիկոսութեան տեր Ռստակէսին... (1465—1469 թթ. միջև—Պ. Հ.)

3

Նույն բնի վրա, բարձր (անկյունում՝ խաչ)

Սբ խչս բարխս է տր վրդնա էպկսին
թիվ :ՊՂԶ: առ Քրիստոս

Սուրբ խաչս բարեխօս է տէր Վարդանա եպիսկոպոսին, թիվ ՊՂԶ (=1447/1418) առ Քրիստոս:

4

Ժողովրդանոցի հյուսիս-արևելյան անկյունում
հազգրած պատի մեջ, խաչքարի պատվանդանի վրա

1. + Ի թ. :ՈԼԳ: [կ]անկնեցաւ սբ
2. Նշանս ի բարեխաւսութի

* Աշխատության ձեռագրում այս և հետագա արձանագրությունների կրկնակ վերծանությունները բացակայում են։ Վիմագրերի մատուցման՝ Եր. Շահազիզի կարգը պահպանելու համար այդ բացը լրացնում ենք մեր վերծանմամբ —Պ. Հ.։

3. Թագուհեա մաւր իմոյ... <*այստեղ մի բառ չի կարդացվում*>
4. Որք երկրպագէք յիշեսջ<իք>
5. ի Քս ողորմի Սարքսի կազմ...

Ի թվին :ՈԼԳ: (=1184/1185) կանկնեցաւ սուրբ նշանս ի բարեխաւսութիւն Թագուհեա՝ մաւր իմոյ <1 եղծված բառ>. Որք երկրպագէք, յիշեսջ<իք>ի Քրիստոս. ողորմի Սարքսի կազմողի:

5

Եկեղեցու շինության արձանագրության սկսվածքի տակը

Շնորհիւն այ ես Յակոբ էրէցս ըստ կարի մերոյ նորոգեցի զմեծ առու տեղւոյս բազում աշխատութբ որ խախտ էր ի հիմանց յիշատակ հոգւոյ իմոյ եւ որք աւգնական եղեն տրաւք ես աւանդ գրեցի որ շինած տունն էկէլ [?] տնանգաց ութեան (ութեան) լինի որ ի գրոց սորին... եսն [?] ի ձեռն յիշատակ իմո (յիշատակի իմոյ) եւ ի տարին :Ժ: աւր յորո[յ] յանուն ի տաւնի :Խ: հիցն (քառասնիցն) ով խափանէ դատի յայ կատարիչք գրոյս աւհնեին յայ թվ. :ՉԽԱ:

Շնորհիւն աստուծոյ ես՝ Յակոբ էրեցս, ըստ կարի մերոյ նորոգեցի զՄեծ առու տեղւոյս բազում աշխատութեամբ, որ խախտ էր ի հիմանց, յիշատակ հոգւոյ իմոյ, եւ որք աւգնական եղեն տրաւք, ես աւանդ գրեցի, որ շինած տունն եկեալ [՞] տնանգաց ութեան լինի: Որ ի գրոց սորին... եսն [՞] ի ձեռն յիշատակ իմոյ, եւ ի տարին :Ժ: աւր յորո[յ] յանուն, ի տաւնի քառասնիցն. ով խափանէ, դատի յաստուծոյ: կատարիչք գրոյս աւհնին յաստուծոյ. թվին ՉԽԱ (=1292/1293):

6

Պարսպի հարավային դռան կամարակալ քարի վրա

1. Կամաւ ամենայկալին
2. այ : եւ ողորմութբ պարոն Աղբու
3. ղային եւ Սիթի խաթունին ես Ասնաւորս եւ
4. Ղուտալշաքս միաբանեցաք սբ Ածածնիս եւ շ
5. ինեցաք զպարիսպս զշրջայմաղն եւ զգուռն յիշ
6. ատակ մեզ եւ զաւակի մեր Ջաքարի եւ տվի տարէնն :Ժ: փաս գինի...
7. յայգոյն ով որ զայգին ուտի բաժակ տա : եւ սպասաւորք սրբոցս

8. խոստացան ի տարին :Բ: աւր պատարագ :Ա: Ասնաւորին :Ա: Ղուտալշաքին ի տաւնի ածած
9. նին կատարին

Կամաւ ամենակալին Աստուծոյ եւ ողորմութեամբ պարոն Աղբուղային եւ Սի-թի խաթունին, ես՝ Ասնաւորս, եւ Ղուտալշաքս միաբանեցաք սուրբ Աստուածած-նիս եւ շինեցաք զպարիսպս, զշրջայմաղն և զգուրն՝ յիշատակ մեզ եւ զաւակի մեր Զաքարի, եւ տվի տարէնն :Ժ: փաս գինի... յայգոյն. ով որ զայգին ուտի, բաժակ տա: Եւ սպասաւորք սրբոցս խոստացան ի տարին :Բ: աւր պատարագ՝ :Ա: Ասնաւորին, :Ա: Ղուտալշաքին, ի տաւնի Աստուածածնի կատարի:

ՀԱՍԱՐԱԿԱՑ ՀԱՆԴՍՏԱՐԱՆԻ (ՄՈՒՂՆՈՒ ԹԱՌ) ՏԱԿ ՔԱՐ ԿԱՄ ՏԱԿ
ԽԱՉ ԿՈՉՎԱԾ ԽԱՉՔԱՐԻ ԿԻՍՈՎ ՉԱՓ ԵՂԾՎԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1

Ի թվ. :ՉԺԷ: Ի թագաւորութե .... [շնոր] հիւն այ ես տր Թումաս կանգ-նեցի զսբ նշանս վս յերկար կենաց պարոն Սագունին եւ զաւակաց իւրոց

եւ յիշատ	որք երկրպ
ակ հոգո ի	ագէք կենս
մո եւ ծն	աբեր նշա
ողաց իմո[ց]	նիս զմեզ
	յիշեցէք
	ի Քս : ...

Ի թվին ՉԺԷ (=1268/1269), ի թագաւորութեան .... շնորհիւն աստուծոյ ես՝ տէր Թումաս, կանգնեցի զսուրբ Նշանս վասն յերկար կենաց պարոն Սա-դունին եւ զաւակաց իւրոց, եւ յիշատակ հոգո իմո եւ ծնողաց իմո[ց]: Որք երկրպագէք կենսաբեր Նշանիս, զմեզ յիշեցէք ի Քրիստոս:...

2

ԽԱՉՔԱՐ ՉՀԲ—1323 ԹՎԱԿԱՆՈՎ
ԿԱՐՄՐԱՎՈՐԻ ՄՈՏ, ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

Ի թվին :ՉՀԲ:

1. Ողորմութբն այ ես Սարգիս քահանայ եւ Ածատուր
2. Մեծանց քոյր իմ կանգնեցաք զխաչս

3. ի բարեխաւսութի հաւր իմո Գրիգորո եւ մաւր
4. Նազին եւ քվեր իմո Սետաին որ հանգուցել են
5. առ ոտն սորայ որք երկրպագէք մեղաց թողու
6. թի խնդրեցէք սոցա ի Քէ յաղա[ւթս]
7. յիշեցէք Գ [?] անձակշահն եւ զԱշխէն:

Ի թվին ՉՀԲ (=1323/1324). Ողորմութեամբն աստուծոյ ես՝ Սարգիս քա-հանայ, եւ Աստուածատուր մեծանց քոյր իմ կանգնեցաք զխաչս ի բարեխաւ-սութիւն հաւր իմո Գրիգորո եւ մաւր Նազին, եւ քվեր իմո Սետաին, որ հան-գուցեալ են. առ ոտն սորա որք երկրպագէք, մեղաց թողութիւն խնդրեցէք սոցա ի Քրիստոսէ. յաղա[ւթս] յիշեցէք Գ [*] անձակշահն եւ զԱշխէն:

*Աշտարակի արձանագրությունները, ինչպես երևում է դրանց թվականներից, ԺԲ, ԺԳ, ԺԴ և ԺԷ դարերի գործ են և, իբրև այդպիսին, ունեն մեր հին արձա-նագրություններին հատուկ բոլոր այն առանձնահատկությունները, որոնք դըժ-վար վերծանելի են դարձնում դրանց: Այդ առանձնահատկություններից գլխա-վորը, և, հատկապես, աչքի ընկնողը դրանց չափազանց մեծ թվով կցվածա-գրություններ կամ խառնագրություններ ունենալն է (*лигатура*), որոնց հետե-վանքով արձանագրություններից մի քանիսը առաջին նվագ միանգամայն անընթեռնելի են թվում և ապա միայն, երկար ու ձիգ որոնումներից հետո, հետզհետե պարզվում, ջոկվում ու կարդացվում են:*

Արձանագրություններիս մեջ, ինչպես կարելի է տեսնել, հիշվում են շատ անուններ՝ մարդկանց, տեղերի, անծանոթ պաշտոնյաների, պաշտոնների, որոնց պարզաբանությունը և ընդարձակ ուսումնասիրությունը թողնելով մաս-նագետներին՝ մենք այստեղ կանգ կառնենք հատկապես մի քանի մարդկանց անունների վրա, որոնք պատմական անձնավորություններ են և որոնց անուն-ները հիշվում են մեր պատմության մեջ. Աղբուղա, Սադուն և Խութլուբուղա:

Պարոն Աղբուղան, որի ողորմությամբ Հակոբ երեցը 1317 թվին շինել է ս. Մարիանեի հյուրատունը և պարսպի դռները և դրանց վրա եղած տները, և նրա ամուսին Սիթի խաթունը 1323 թվին նվիրել է նույն եկեղեցու միաբանատան՝ «Այծամանց երկիր» կոչված տեղում Փարպու հողի կեսը, և՛ Ասնավորը, և՛ դրա ամուսին Ղուդալշաքը շինել են Կարմրավորի պարիսպները և հարավային դու-ռը,— եղել է Զաքարե Ամիրսպասալարի որդի Շահնշահի թոռը, Իվանեի որդին: Դա, ինչպես երևում է, հիշյալ թվերին Արագածոտն գավառի՝ Զաքարյաններին պատկանած մի երկրամասի, որի մեջ մտնում է եղել և Աշտարակը, կառավա-րիչն է եղել:

Որ դա՝ այդ պարոն Աղբուղան, եղել է Զաքարե Ամիրսպասալարի որդի

Շահնշահի թոռն, Իվանեի որդին, երևում է Նոր Թալինի բերդի հին բուրգի հետևյալ արձանագրությունից. «Թվին ԺԶ [1267]. Շնորհիւ ողորմածին յաստուծոյ այս իմ գիր է պարոն Աղպուղայիս թոռն մեծին Շահնշահի, որդի Իվանէի՝ որ կամ եղեւ ինձ յաստուծոյ, եւ թողի զիմ հայրենի գեղիս զԹալնայ գինոյ խալէն վասն արեւշատութեան Ամիրսպասալար Շահնշահի եղբաւր իմոյ և ինձ Աղպուղայիս, և Սիթի խաթունիս եւ զաւակաց մերոց, եւ վասն մեր պարոն նախնեացն յիշատակութեան» (տե՛ս «Ստորագրութիւն...» Շահխաթունյանցի, հատոր երկրորդ, էջ 53):

Հասարակաց հանգստարանի Ծակ fur կոչված խաչքարի կիսով չափ եղծված և անընթեռնելի դարձած արձանագրության մեջ հիշված պարոն Սադունը, որի կենդանության ժամանակ նրա արևշատության համար Տեր Թումաս քահանան 1268 թվին կանգնել է այդ մեծ և գեղեցկաքանդակ խաչքարը, հավանորեն, Սադուն Արծրունի մեծ իշխանն է, որ ժամանակակից է եղել Խաղբակյանց Պռոշ իշխանին, մասնակցել է նրա շինարարության գործին և վախճանել 1285 թվին: Այդ Արծրունիները սերել են Սասնո Ամիր Քրդի տոհմից: Նրանք ազգական են եղել Զաքարյաններին, կառավարել են Հայաստանի որոշ գավառները և Զորագետի Կայենո և Մահկանաբերդի տերերն են եղել:

Մենք կարծում ենք, որ այդ Սադուն Արծրունին հենց այն մեծ իշխան Սադուն Արծրունին է, որի մասին Մաղաքիա Աբեղան յուր «Վասն ազգին նետողաց» պատմութեան մեջ (էջ 28) նկարագրելով Մուֆարղին քաղաքի (Նփրկերտ, Մարտիրոսաց քաղաք) պաշարումը և առումը Հուլաղուի զորքի ձեռքով, Հայոց զորքի և իշխանների մասնակցությամբ, ասում է. «Հայոց զորքն, որ կային ընդ Տաթարին, բաղում նշխարս գտեալ ի սրբոցն՝ տարան աշխարհն իւրեանց: Իսկ մեծ իշխանն Հայոց Թաղէաթինն անուն, յազգէն Բագրատունեաց, ըմբռնեալ երէց մի ասորի և ի խոստ ածեալ, եգիտ զաջ սրբոյ առաքելոյն Բարդողիմէոսի. և տարեալ մեծաւ ուրախութեամբ յաշխարհն իւրեանց յարևելք, և եդ ի վանս իւր: Եւ յետոյ հարկեալ ի մեծ իշխանէն Արծրունեաց՝ որ ասի Սադուն անուն, ետ նմա. և առեալ Սադունն՝ տէրն Հաղբատայ մեծ և հռչակաւոր սրբոյ ուխտին, ետ զսուրբ աջն Բարդուղիմէոսի առաքելոյն ի սուրբ ուխտն Հաղբատ, և է անդ ստուգապէս»:

Պատմագրիս այս հատվածից երևում է, որ Արծրունյաց մեծ իշխան Սադունին և նրա տոհմին, բացի Զորագետի Կայենո և Մահկանաբերդի կալվածներից, պատկանել է և հռչակավոր Հաղբատ վանքն յուր հողերով, որի մեջ պահպանվել է մինչև օրս ս. Մարիանեի 1285 թվի արձանագրության մեջ հիշված Խութլուբուղա իշխանի որմնանկարը, Խութլուբուղայի, որի իշխանության և տերության օրերում Տերուսամի որդի Ավետիս «ձեռնավորը» նվիրել է եկեղեցուն Վերի առվի՝ իրեն պատկանած ջրի մասը: Արդ՝ ի նկատի առնելով, որ այդ Խութլուբուղայի պատկերը նկարված է Սադուն Արծրունյաց մեծ իշխանին և նրա

տոհմին պատկանած վանքի պատին, ի նկատի առնելով և և այն, որ ս. Մատոհմին պատկանած վանքի պատին, ի նկատի առնելով և այն, որ ս. Մա-
տոհմին պատկանած վանքի պատին,

թիանեի հիշյալ արձանագրության մեջ ասված է «յիշխանութեան և ի տէրութեան Խութլուբուղային», պետք է, ուրեմն, և կարելի է կարծել, որ դա, այդ Խութլու- բուղան, նախ՝ Արծրունյաց Սադուն մեծ իշխանի ընտանիքի մերձավոր անդամներից մեկն է եղել, երկրորդ՝ Արծրունյաց կառավարության ենթակա երկրամասերից մեկի իշխողը և կառավարիչը:

Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը յուր «Զագավանից ժողովը» հոդվածում, որ տպագրվել է «Շողակաթ, ս. Էջմիածնի հայագիտական ժողովածուի» մեջ, խոսելով այդ Սադուն մեծ իշխանի մասին, ասում է. «Մեր Սադուն <մեծ> իշխանը պետք է լինի, հավանորեն, և Աշտարակի Ծակ fur կոչված խաչքարի արձանագրության մեջ հիշվածը... Նրա պապն էր Սադուն, Քրդի կամ Ամիր Քրդի որդին, որ իշխում էր Կայենո և Մահկանաբերդո կողմերը, հայրը՝ Շեր-բարոբ, իսկ որդին՝ Խուտլուբուղա, որի որմնանկարը գտնվում է Հաղբատում» (էջ 27):

Սադուն և Խութլուբուղա իշխանների անունները հիշվում են Պռոշ իշխանի և դրա որդիների անունների հետ միասին և Խաչատուր Կեչառեցու «Գանձառը իշխանացն Հայոց» կամ, ըստ Ալիշանի, «Վասն աւերման տանս Արևելեան» խորագրով քերթվածի մեջ.

...Մնաՙն իշխանՀՆ մեր ցանկալի.
Սադո՛ն, սիրած Ապաղա ղանի,
Գոված ՚ւ ընտիր յամէն առնի,
Զաչերըդ բա՛ց, ՀաՆ զԴամասկոսի,
Տե՛ս զզատսս ի տարատրոսի:

ԶեկեղեցիՀս ի մեծ վըտանգի,
Եւ ՀանանայՀս ի յերերմանի,
Զխութլու Բուղայն յարեան ճապաղի,
Զիւր անձման պատկերն ի մոխրի:

Զպարոն Պռաշըն զարդ ճեծելի,
Որ զերկաթի դուռն առնէր փոշի,
Աշոյ բազուկըն նոր Սիովնի,
Հիմըն հաստատ Հայոց ազգի:

Կամ զիւր որդիՀըն զարմանալի՝
ԶՄըկդէմ, Վասակ, կորիւնՀՆ առիւծի.
Զայն Զօրաւորն ի պատերազմի
ԶԱմիր-Հասանայ բազուկըն Հաջի և այլն:

* Կեչառեցու Ողբի այս հատվածը Եր. Շահազիզը քաղել է մեզ անծանոթ ձեռագրից, որը տարբերվում է Երուսաղեմի «Սիոն» ամսագրում տպագրված բնագրի խմբից (տե՛ս 1861, № 1, էջ 6—7), ունի փոքր-ինչ տարբեր խորագիր՝ «Ողբացանձ իշխանացն Հայոց» և զանազան այլընթերցումներ: Վերջին 8 տողերը նույնությամբ տե՛ս Ալիշան, Այրարատ, էջ 268— Պ. Հ.:

Որ այստեղ հիշված Սադոնը կամ Սադունը մեր ասած Կայենո, Մահկանա-
բերդի և Հաղբատի տեր, մեծ իշխան Արծրունի Սադունն է, այդ մասին առար-
կություն չպետք է, որ լինի, բայց որ Խութլուբուղան Գարեգին արքեպիսկոպոսի
ասած մեծ իշխան Արծրունի Սադունի որդի Խութլուբուղան լինի, մենք կասկա-
ծելի ենք համարում, որովհետև, եթե իրոք այդ Խութլուբուղան Սադունի որդին
լիներ, Կեչառացուն այդ հայտնի կլիներ, և նա, անշուշտ, այդ հիշած կլիներ յուր
քերթվածի մեջ, Սադունի հետ միասին, ինչպես որ հիշել է Պռոշի որդիներին:
Մենք մինչև իսկ կարծում ենք, որ Աշտարակի արձանագրության մեջ հիշված
Խութլուբուղան հենց Կեչառացու հիշածն է, և ոչ մեծ իշխան Արծրունու որդի
Խութլուբուղան (Սադունի տոհմի մասին տե՛ս «Պատմութիւն Հայոց՝ արարեալ
Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», էջ 368—371, «Վասն աւերածի Մուֆար-
կին քաղաքին», հրատ. 1909, Թիֆլիս, շապիկի վրա՝ 1910—Պ. Հ.):

15

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆ ԱՇՏԱՐԱԿՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

. . . .
. . . .
. . . .
. . . .
. . . .
. . . .

...* [և երկրորդը՝ ավելի ընդարձակ ծավալով գիտելիքներ հաղորդել:
Սակայն դրանք շատ էլ մեծ հաջողություն չեն ունեցել, որովհետև թե՛ առաջնի
և թե՛ երկրորդի մեջ դասավանդությունը կատարվել է երեխաներին միանգա-
մայն անհասկանալի՝ ռուսաց լեզվով, և ուսուցիչները, որոնք հայ երիտասարդ-
ներ են եղել, պետական դպրոցների շրջանավարտներ, իրավունք չեն ունեցել
մայրենի լեզվի օգնության դիմելու և նրա միջոցով հասկացնելու իրենց պատ-
մածն ու հաղորդածը]:

* Եր. Շահազիզի աշխատության այս գլխի առաջին յոթ էջերը (ինքնագրի էջ 168—174) ան-
հետացել են խորհրդավոր հանգամանքներում: Չկա նաև դրանց սևագրությունը: Բնագիրը պատ-
ռասել ենք առանց այդ մասի՝ պակասող էջերի փոխարեն դնելով յոթ տող բազմակետեր: Կարծ
հատվածի բովանդակությունը, գեթ մասամբ, վերականգնելու համար գրքին կցում ենք մի հավել-
ված՝ «Աշտարակի դպրոցները» խորագրով, օգտվելով հենց այն աղբյուրներից, որոնք եղել են նաև
Եր. Շահազիզի ձեռքի տակ, սույն Պատմությունը շարադրելիս: Պետական երկդասյա ռուսա-
կան դպրոցի գործունեության մասին տե՛ս սույն աշխատության «Վերջաբանը», էջ 256—7 (Պ. Հ.):

Դրանք, այդ հայոց և պետական դպրոցները, թեև ունեցել են, ինչպես մենք
տեսանք, իրենց խոշոր թերությունները, բայց և այնպես տվել են Աշտարակի
հասարակության բազմաթիվ գրաճանաչ անդամներ և որոշ չափով նպաստել
գյուղի մտավոր զարգացման գործին. դրանք, թո՛ղ ներվի մեզ արտահայտվել
պատկերավոր ոճով, մի աղոտ շողք են եղել, ծագած գյուղի տգիտության թանձր
խավարի մեջ:
Այսպես է եղել ուսման և լուսավորության գործը Աշտարակում յուր մեջ,
բայց այդտեղ գտնվել են և շատ ծնողներ, որոնք չբավարարվելով իրենց մեջ
ունեցածով, ձգտել են իրենց զավակներին ավելի բարձր ուսման արժանացնել,
ուստի և ուղարկել են նրանց ավելի հեռու տեղեր՝ Երևանի հոգևոր դպրոցը, երբ
դա բացվել է 1836 թվին, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Թիֆլիսի գիմնազիոնը,
Մոսկվայի Լազարյան ճեմարանը և, մինչև իսկ, Թեոդոսիայի Խալիբյան դըպ-
րոցը: Դրա հետևանքով է եղել, որ Աշտարակը մյուս հայ գյուղերից ավելի
առաջ է ունեցել յուր համալսարանավարտ ուսուցիչները, իրավաբանները և
բժիշկները, որոնք, սակայն, իրենց ուսման ընթացքն ավարտելուց հետո, այլևս
չեն վերադարձել գյուղ, չեն ապրել իրենց հարազատ հասարակության մեջ,
հաղորդակից չեն եղել նրա կյանքին, նրա չարն ու բարիքին, և իրենց ձեռք
բերած գիտությունից բաժին չեն հանել նրան, չեն օգնել... դրանք իրենց գյու-
ղի համար մեռյալ ուժեր են եղել:
Աշտարակի գործիչներից, որոնք ցավել են նրա ցավերով, ուրախացել նրա
ուրախություններով, որոնք իրենց բնատուր շնորհքը, ընդունակությունն ու
կարողությունը գործ են դրել նրա համար, նրա օգտին, մի առանձին քաղցր
հիշողություն պահպանվել է գյուղում խալֆա կոչված Գևորգ Շահազիզյանցի
մասին, որի անունը հենց այսօր էլ գիտե, միտն է պահում և հաղորդում յուր
ժառանգներին ամեն մի հասակավոր աշտարակցի: Դա ապրել է Սիմեոն կաթո-
ղիկոսի օրերով և վախճանել 1804 թվին: Դա կոչվել է խալֆա, որովհետև մի
կարդացող մարդ է եղել, եկեղեցական ընթերցմունքը լավ իմացող և քահանա-
ների հետ եւ հավասար ժամասացություն կատարող. նա խելոք է եղել, խոհեմ և
անչափ բարի ու ողորմած, ամենքին օգնող, ամենքի կարիքին հասնող: Ավան-
դությունն ասում է, որ նա ունեցել է ահագին կարողություն. նրա բակից յոթ
գութան է դուրս գալիս եղել. նա ունեցել է 40 գոմեշ, 200 կով, 2000 մաքի, տասն
այգի, մեծ տուն ու պարտեզ, և այդ տանն օրական 200 մշակ, բանվոր ու աղքատ
սեղան են նստել, հաց կերել. Նրա պարտեզների ու այգիների բերքն այնքան շատ
է եղել, որ, աշտարակցոց արտահայտությամբ, չի վերեfվել (հավաքվել), կա-
թը գյուղից դուրս շինված փարախներից ու գոմերից գետնի տակով անցկաց-
րած հունկերով է գալիս եղել, թափվել տուն և յուղ ու պանիր պատրաստվել:
Խալֆան զավակ չի ունեցել և յուր այդ բոլոր կարողությունը գործ է դրել գյու-
ղի կարիքների համար, գյուղի չքավորներին, կարոտյալներին օգնելու համար,

սարդարի, նրա գլխավոր իշխանների ու գործակալների աչքերը կշտացնելու և
գյուղից հեռու պահելու համար, ուստի և նրա օրերով թուրքերի ոտքը կտրվել
է Աշտարակից, և ոչ մի չարիք չի պատահել նրան կամ, ինչպես ասում են, «ոչ
մի ունլի քիթ չի խուռել»։ Նա հայտնի է եղել ոչ միայն Աշտարակում, այլև Էջ-
միածնում և բոլոր շրջակայքում. նրան ճանաչել են ոչ միայն սարդարները ու
նրանց մեծամեծները, այլ երկրի բոլոր ավագանին, և հաճախ նա հրավիրվել է
այստեղ-այնտեղ, փբրև հաշտարար և խորհրդատու, և այլ կարևոր դեպքերում։
Գեորգ խալֆայի պատիվը չափազանց մեծ է եղել Աշտարակում. Կարմրա-
վորի պատի տակ, որտեղ սովորություն են ունեցել իրենց առօրյա զրույցների
համար հավաքվել գյուղի պատվավորները, Թօրոսենց կալում, գյուղական-հա-
մայնական ժողովների ժամանակ և գյուղի բոլոր հավաքույթներում ու հանդես-
ներում նրան է պատկանել ավագության բարձն ու պատիվը, իսկ նրա բացա-
կայության ժամանակ, բացօթյա տեղերում, այն քարը, որի վերա նա նստել է,
և տներում այն բարձն ու մութաքան, որոնց նա թիկնել է, բաց են մնացել։
Գեորգ խալֆային հավասար պատիվ է վայելել և նրա կինը՝ Խորիշան խա-
նումը, Գառնի ավանից դուրս եկած և Աշտարակում վերաբնակված Ազարիա
Պռոշյանցի դուստրը, և այդ ոչ թե նրա համար, որ նա Գեորգ խալֆայի կինն է
եղել, այլ յուր տնարարության, օրինակելի վարք ու բարքի ու առատաձեռնու-
թյան համար, որով նա բարի օրինակ է հանդիսացել գյուղի բոլոր կանանց հա-
մար։ Դրանց, այդ զույգի մեծ տանը հաճախ իրեն վայել հյուրասիրություն է
գտել Սիմեոն կաթողիկոսը, որ դրանց մտերիմ բարեկամն է եղել. դրանց տանն
արքայավայել, ճոխ հյուրասիրություն և ընդունելություն է գտել և վրաց Հե-
րակլ Բ արքան յուր 300 ձիավորների հետ, երբ նա յուր երկրորդ արշավանքի
ժամանակ, Սիմեոն կաթողիկոսի միջնորդությամբ, Երևանի Հյուսեին Ալի խանի
հետ հաշտվելուց հետո, Աշտարակի վերայով վերադառնալիս է եղել Վրաստան։
Այս հանգամանքը, ևս և Սիմեոն կաթողիկոսի սիրալիր ընդունելությունը,
երևի, մոռացած է եղել Հերակլ արքան, որ, երբ 1779 թվին նա երրորդ անգամ
արշավել է Երևան, Հյուսեին Ալի խանի վերա, չի ընդունել կամ, լավ է ասել,
կոպտաբար մերժել է ընդունել Սիմեոն կաթողիկոսի միջնորդությունը, և ինքն
էլ չկարողանալով առնել բերդը՝ յուր խառնիճաղանջ զորքի սրի բերանն է տվել
հայ գյուղերը, քանդել, ավերել է յոթ գյուղ, որոնց թվում և Աշտարակը՝ յուր
Գեորգ իշխանի (խալֆայի) առաջնորդությամբ, գերեվարել, տարել է Վրաս-
տան՝ Ղարայազ, Թիֆլիս, Լիլով, Թելավ և այլ տեղեր բնակեցրել և ճորտական
վիճակի մեջ պահել նրանց, մինչև որ, վերջապես, հաշտություն է կայացել, և
գերեվարված գյուղերը ազատվել, վերադարձել են իրենց տեղերը։
Եվ զարմանալին այն է, որ այս մասին Աշտարակում ոչ մի հիշողություն չի
պահպանվել. այնինչ այդ շատ հեռավոր անցյալի եղելություն էլ չէ, և կատար-
վածն էլ՝ ո՛չ հասարակ ավանդություն, այլ ճշգրիտ պատմական փաստ, որի

մասին հիշում է յուր պատմական հիշատակարանում ավագ քահանա Ոսկերչյան
Վաղարշապատցին (տե՛ս այս մասին՝ «Կռունկ հայոց աշխարհին», 1862, №4,
էջ 276—281, «Յաղագս դիմելոյ Հերակլայ պատերազմ յԵրևան, և արտասահման
առնելոյ զքանի գեօղօրեայս հայոց յԱրարատու» գլուխը— Պ. Հ.*)։
Գեորգ խալֆան, ինչպես ասացինք, վախճանել է 1804 թվին և թաղվել
Շահազիզենց տոհմական հանգստարանում, բայց այժմ այդտեղ, աղբակույտով
ծածկված այդ գերեզմանոցում, նրա գերեզմանաքարն այլևս չի երևում։ Պռոշ-
յանցն յուր «Կուլածաղկի» վերջին (ԾԸ) գլխի վերջին տողերում այդ մասին
ասում է.
«Աշտարակու Շահազիզենց կամ Թորոսենց գերեզմաններ կոչված հանգստա-
րանումն այսօր էլ ձգված են միմյանց մոտ երկու մամռոտած ձիաքար գերեզ-
մաններ։ Տապանագրերը ցույց են տալիս այս նվիրական նշխարների տերերին։
Առաջինն է. «Այս է տապան բազմաշխատ Գէորգ խալֆին, որ է որդի Յով-
հաննէսին, բայց ոչ ծնաւ որդի և որդուց կարօտ վախճանեցաւ. թվ։ Հայոց
ՌՄԾԳ», որ Քրիստոսի թվականով լինում է 1804։
Երկրորդ տապանագիրն է. «Այս է տապան Խորիշանին, որ է կենակից
Գէորգ խալֆին և է դուստր Ազարիային Գառնեցւոյ Պռօշեանց. թվ։ Հայոց
ՌՄԾԱ» [1802] (էջ 343—344)։
Աշտարակի երկրորդ, մեզ հայտնի գործիչը, Գեորգ խալֆայից հետո, եղել
է Տփղենց Վրթանես եպիսկոպոսը։ Դա աշտարակցի Տփղենց Հարությունի
որդին է եղել, որ յուր մանկությունից ուղարկված լինելով Էջմիածնի ժառան-
գավորաց դպրոցը, ուսել, սնվել, մեծացել է այդտեղ, ավարտել յուր ուսման ըն-
թացքը, հոգևորական դարձել և երևանցի Սիմեոն գործունյա կաթողիկոսի ամե-
նահավատարիմ և եռանդուն գործակիցն եղել։ Նա գրաված լինելով կաթողիկոսի
վստահությունը՝ յուր վարդապետության օրերով ուղարկվել է նրա կողմից նվի-
րակ Հնդկաստան, որտեղ նա յուր քարոզություններով և խոհեմ վարմունքով,
ձեռք է բերել այդ հեռավոր հայ գաղութի համակրությունը և մեծամեծ պատիվ-
ների ու հյուրընկալության արժանացել, որի հավաստիքները կարող են լինել
այն թանկարժեք ընծաները, որ նա 1798—99 թվերին ստացել է ժողովրդից,
Կալկաթայում և Դաքայում, արծաթ, ոսկեզօծ, ականակուռ եկեղեցական սպաս-
ներ, զգեստներ և այլ եկեղեցական իրեր, որոնց մեջ արժանի են եղել առանձին
ուշադրության, իրենց գործվածքի ու շինության արվեստի տեսակետից, մի
զույգ մաքուր արծաթից պատրաստված՝ պատարագիչ քահանայի քանդակագործ
և արվեստաշեն սաղավարտ և վակաս 12 առաքյալների պատկերներով, մի գե-
ղեցկաշեն, արծաթապատ կողքով ավետարան և արծաթե բուրվառ, մի հատ
հնդու նկարեն, տպածո, ղալամքյար, սեղանի վարագույր և այլն։ Այդ նվեր-

* Տե՛ս նաև լրացում 4 (Պ. Հ.)։

նրբը թեև նվիրված են եղել «Ի վայելս Վրթանէս վարդապետի Աշտարակեցւոյ»,
բայց նա այդ բոլորը բերել, նվիրել է Աշտարակի Ամենափրկիչ եկեղեցուն: Բայց
ամենամեծ ծառայությունը, որ նա մատուցել է յուր հայրենի գյուղին, եղել է
այն, որ նա առաջինն է եղել, որ մտածել է գյուղի ուսման ու կրթության գործի
մասին: Նա Հնդկաստան գնալիս յուր հետ տարել է մի պատանի՝ Սահակ Վար-
դանյան անունով, Աշտարակի Արղընենց տոհմից, և աշակերտության տվել
Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը, հոգալով նրա բոլոր ծախքերը այն
պայմանով միայն, որ նա յուր ուսման ընթացքն ավարտելուց հետո, վերադառ-
նա գյուղ և ուսուցչությամբ պարապի: Պատանին ճշտությամբ կատարել է պայ-
մանը. նա ավարտելով ճեմարանի ուսման ընթացքը՝ վերադարձել է գյուղ և
մասնավորապես աշակերտներ հավաքել և գրագիտություն սովորեցրել, մին-
չև որ գյուղում բացվել է առաջին գյուղական դպրոցը, և նա կարգվել է
ուսուցիչ այդ դպրոցում: Գյուղը գնահատել է յուր այդ գործչին և երախտա-
հատույց եղել նրան, ամեն տարի գյուղովի օրհնել տալով նրա ծնողների գե-
րեզմանները Կարմրավորի բակում:

Աշտարակի երրորդ գործիչը կամ, լավ ենք համարում ասել, խնամակալը,
նրա վերաբերյալ ամեն բան յուր սրտին մոտ ընդունողն եղել է Ներսես Աշտա-
րակեցին: Նա, իհարկե, Աշտարակում չի՛ ապրել և մշտապես անմիջական շը-
փումն չի՛ ունեցել գյուղացիների հետ, բայց որտեղ էլ որ եղել է, Էջմիածնո՞ւմ,
Թիֆլիսո՞ւմ, թե՞ Քիշինևում, ամեն տեղից էլ նրա ուշն ու միտքը և, մենք կա-
վելացնենք՝ սիրտը ուղղված է եղել դեպի Աշտարակը, դեպի յուր սիրած ծննդա-
վայրը: Նա խնամակալել է յուր համագյուղացիներին յուր եղբայր Կարապետ
աղայի միջոցով, երբ դա պատերազմից առաջ դեռ Աշտարակումն է եղել, և պա-
տերազմից հետո էլ, երբ վերադարձել է Թիֆլիսից և միրբոլուկի պաշտոն է
վարել: Անկասկած, նրա կողմնակի ազդեցության և միջնորդության շնորհիվ է
եղել, որ աշտարակցիների՝ Կարապետ աղայի խորհրդով, կայսեր անունով
ուղարկած աղերսագիրը խոսրով խանի մոր մասին այնպես շուտով լսելի է
եղել և բավարարվել: Աշտարակցի այն երեք սպասավորներն էլ, որոնք, նրա
կաթողիկոս ընտրվելուց առաջ, միշտ նրա մոտ են գտնվել, հասարակ սպա-
սավորներ չեն եղել, այլ նրան մոտ մարդիկ, նրա գաղտնի խորհրդներին,
նպատակներին ծանոթ մարդիկ, որոնց միջոցով նա մշտապես վառ է պահել
յուր հարաբերությունը աշտարակցոց հետ, որոնց բերանով նա հաղորդել է
նրանց յուր խորհուրդներն ու կարգադրությունները:

Պատերազմի ժամանակ, երբ բովանդակ Արարատյան երկիրը տակնուվրա-
յության է ենթարկվել, և պարսից ձեռք առած բռնբեսիվ միջոցների երեսից երկ-
րի հայ ժողովուրդը, կարծես, յուր վերջին օրերն ապրել, գյուղերը քանդվել և
գյուղացիությունը տեղից տեղ քշվել, վտարվել, սովի ու սրածության մատնվել,
Ներսեսն է եղել, որ հեռվից ցուցմունքներ է տվել աշտարակցոց, թե ի՞նչ պիտի

անեն նրանք, ի՞նչպես պիտի պահեն իրենց, որ չվնասվեն այդ ընդհանուր քա-
բուքանդության մեջ. նա է եղել նույնպես, որ ապահովել է նրանց անվտանգ ու
անքույթ վերադարձը քշված ու վտարված տեղից, երբ դեռ ոչ միայն պատերազ-
մը վերջացած չի եղել, այլ Սարդարապատն էլ դեռ նոր միայն առնվելու վերա
է եղել: Այդպիսի խնամքը, որ տարվել է նրա կողմից, իհարկե, վայելել են և
Աշտարակին բախտակից և վիճակակից եղած բոլոր մյուս գյուղերը՝ Փարաքա-
րը, Օշականը և մյուսները, բայց հատկապես աշտարակցիք մի առանձին խնամք
են վայելել, հավանորեն, ի տրիտուր իրենց՝ նրա պատճառով կրած մեծամեծ
նեղությունների ու տառապանքների:

Ներսես Աշտարակեցին այնքան սիրել է Աշտարակը ու աշտարակցիներին,
որ յուր կաթողիկոսության օրերով, Թիֆլիսում, երբեմն մարդ է ուղարկել քա-
ղաք՝ աշտարակցիներ գտել ու բերել, սեղանակից արել իրեն:

Այս բոլորի փոխարեն աշտարակցիք էլ անկեղծ սեր են տածել, հարգան-
քով գլուխ խոնարհել նրա հիշատակի առաջ, միշտ օրհնել նրան, երախտապարտ
համարել իրենց նրան և նրա անունը սերնդե սերունդ ավանդել իրենց հետ-
նորդներին: Նրանք չափազանց խոշոր համարմունք են ունեցել նրա մասին,
միամտաբար չափազանցրել նրա արածներն ու կատարածները: Նրանց կարծի-
քով՝ պարսից պատերազմն ամբողջովին նրա մտքի հղացումը, նրա ձեռքի գործն
է եղել, ռուս զորքի հաղթությունները, բերդերի առումը, քաղաքների նվաճումը՝
այս բոլորը, բոլորը նրանք վերագրել են նրա իմաստության, նրա հանճարին:

Աշտարակի պատմական անցքերի ստորագրող Սարգիս Բղնունին յուր այդ
պատմական հիշատակարանին կցել է և Աշտարակի կյանքից առած «Ջվարճալի
հարսանիք» խորագրով մի շատ միամիտ վիպասանություն, որի մեջ նա, ի մի-
ջի այլոց, ամփոփել է և Աշտարակին վերաբերյալ յուր լսած ու իմացած ավան-
դությունները և գյուղի կենցաղին վերաբերյալ մի շարք տեղեկություններ: Ահա՛
դրանց, այդ ավանդությունների մեջ, մենք կարդում ենք և ավանդական բնույթ
կրող մի զրույց Ներսես Աշտարակեցու մասին, որ կարող է աշտարակցիների՝
նրա մասին ունեցած, մեր վերը հիշած չափազանցրած կարծիքների արտահայ-
տությունը համարվել: Նա ծերունի Եսայու բերանով պատմում է.

«Ես հլամ նրանից (Ներսեսից — Եր. Շ.) չորս ամսով էլ մենծ եմ. օղորմա-
ծիկ մերս կասեր, թե դու մենծ ես տիրացու Ներսեսիցը՝ Տեր Հարությունի
տղիցը. ասում էր մերս, թե դու գարունքը էլար, համա տերտերակին Սուսամ-
բարը Ներսեսին ամառը, ծիրանի վախտը բերուց... Նրա անումը Թորոս էր՝
իրան պապի անումը, հետո վանքը տարան, անումը փոխեցին, դրին Ներսես:
Շատ աչքաբաց տղա էր. Տաշտաքարի ճուխքը որ կտրումին, նա մեզանից լավ
էր ձուկը կալնում. նա շատ ղոչաղ էր, ամեն բանով էլ ժիր էր, էն էր, որ
դառավ կաթուղիկոս...

Բելլու էր, որ նա լավ մարդ պտի դառնա. նրա գլխին զուրբան... նա ի՞նչ-

քան լավություն արեց հայ ազգին... Ախր մենք եսիր էինք մնացել անիծած Հասան խանի, Ջաֆար խանի ձեռքերին. Ներսես կաթուղիկոսը պրծացրուց, ուսի ղոնշունը նա բերեց, Երևանու, Սարդարապատու բերդերը նա առնել տվեց, էջմիածինը նա ազատեց, էն խաներին նա հալածական արեց: Հմիկ որ մենք, արխեին նստած, մի կտոր դինջ հաց ենք ուտում, նրա սայիցն ա. մեր դինն ու մեր եկեղեցին ու խաչը հայհոյող չկա, մեզ համար ի՜նչքան ուրախություն ա: Տո՛, նրա հե՛րն էլ լավ քահանա էր. իլլաքի նրա աղբեր Կարապետ աղան. նա՛ էլ շատ լավ մարդ էր...

Ներսես կաթուղիկոսի արած բարերարությունը Հայոց ազգի համար շա՜տ, շա՜տ ա: Ռուսները որ էս երկիրը տիրապետեցին, եգսի տարին էլ պարսից հետ պատերազմեցին, ընչանք Ղաֆլանթուն առան, որ Թավրեզիցը շատ դենն ա: Սալմաստա, Ուրմիա, Խոյա, Մաքուա գավառների հայերին բերին, էս Արարատյան դաշտումը բնակեցրին, ո՞վ ա գիտում քանի հազար տուն էր: Ընդուց ետը, մյուս տարին էլ տաճկաց հետ պատերազմեցին, ընչանք Ղալբին առան, Արզրումա, Բասենու, Մշու, Ղարսա, Ալաշկերտու հայերին բերին, Շորագյալ, Փամբակ, Ապարան, Դարաչիչակ ու Գեղարքունու գավառներում բնակեցրին: Էստոնք բոլորը Ներսես կաթուղիկոսի խորհրդովն էր, բոլորը... Ռուսաց Նիկոլայ Պավլովիչ կայսրը Ներսես կաթուղիկոսին շատ էր սիրում... Ներսեսը <Նրա հետ> պայման էր արել, որ հայոց ազգիցը զորք ժողովի, որ առանձին գունդ կազմեն և մնան միշտ պարսից և տաճկաց սահմանապահը: Էն հայոց զորքի հացը հայոց ազգը տա, իսկ հագուստը ու ռոճիկը ռուսի թագավորը տա... Հինգ հարիր հոգուց ավելի սալդատ ժողովեց Երևան. մի տարի էր թե երկու տարի, սովորացնում էին. չորս հոգի էլ մեր գեղիցը տարավ. մինը՝ Բղնունի Մելքումենց Խաչատուրին, երկրորդը՝ Աղումենց Մանվելին, երրորդը՝ Փարվանենց Արզումանին, չորրորդը՝ Սուքիասենց Ներսեսին: Սրանք էլ լավ սովրում էին ուրսների նման, բայց երբ որ Ներսեսին տարան Բեսսարաբիա, էն չորս հոգին ետ դարձան իրանց տները, ինչպես էլ բոլորը ցրվեցին իրանց տները» (թ. 120բ—122ա):

Այն բոլորի վերա, որ Ներսես Աշտարակեցին արել է աշտարակցիների համար, մենք պետք է ավելացնենք և նրա՝ նրանց վերա տարած մի այլ խնամքը կամ հոգացողությունը, որ, կարծում ենք, պակաս կարևոր խորհուրդ չի ունեցել նրանց համար, քան մեր վերը հիշածները: Այդ այն է, որ նա գյուղի չքավոր գերձակ Տեր Առաքելենց Ստեփանի որդի, նոր միայն գրի ու գրագիտության համն առած Հովհաննեսին հանել է յուր խղճուկ վիճակից, որ սպառնալիս է եղել նրան կամ հնձվոր մշակի աննախանձելի կացության ենթարկել ու կորցնել այդպիսի հազարավոր գյուղացիների ծովի մեջ, կամ տարագրել նրան օտար հորիզոններ և մատնել նրան անհայտության, գուցե և վտանգի ու կորստյան: Նա տարել է նրան Թիֆլիս, յուր հարազատ քվերորդու հետ յուր հիմնած դըպրոցը և դաստիարակել, կրթել, ոչնչով չզատելով նրան յուր հարազատից, մարդ դարձրել, մի նոր գործիչ պատրաստել և նվիրել Աշտարակին:

Այո՛, Պռոշյանը գործիչ է եղել և Աշտարակի համար, և ո՛չ պակաս գործիչ, քան որ եղել են նրա համար մյուսները. նա նրա մտավոր կյանքի գործիչն է եղել և, իբրև այդպիսին, նա նրա փառքն, պատիվը և պարծանքն է եղել, և է. նա յուր վեպերի ու վիպասանությունների մեջ հավաքելով ու ամփոփելով Աշտարակն յուր բոլոր չարն ու բարիքով, նրա կյանքի, եթե կարելի է այսպես ասել, ամբողջ բովանդակությունը, անմահացրել է նրա անունը, պահպանելով նրա կենցաղը ապագայի համար, իբրև ճշգրիտ, լուսանկարչական ճշտությամբ արձանագրված տաղձ, որի մեջ գալոց սերունդը շատ շահեկան նյութեր պիտի կարողանա գտնել յուր կատարելիք ուսումնասիրությունների համար: Մեր քննադատները նրա վեպերի ու վիպասանությունների մեջ գտնում են շատ պակասավոր կողմեր: Այո՛, իհարկե, նրա վեպերն ու վիպասանությունները շատ միամիտ բաներ են և ամենևին չեն համապատասխանում մեր այժմյա հասկացողության՝ իսկական վեպերի ու վիպասանությունների մասին. նրա հերոսները զուրկ են հոգեկան գրգիռից, զորեղ հույզերից ու մաքառումներից, նրանց մեջ պակասում են բարդ հանգույցները, նրա պարզ հանգույցներն էլ լուծվում են հաճախ ո՛չ բնականորեն, այլ արվեստականորեն: Բայց Պռոշյանցն իրեն իսկական վիպագիր ու վիպասան չի էլ համարել. վիպական ձևը նա հաղորդել է յուր գրվածներին, որ կարողանա հետաքրքրական, կենդանի իրադարձումների առթիվ նրանց մեջ ու շուրջը համախմբել յուր սիրած կենցաղի նկարագրությունը, որպեսզի զուտ կենցաղի նկարագրության ընթերցումը ձանձրալի չլինի ընթերցողների համար:

Պռոշյանը հատկապես ու տիրապես կենցաղագիր գրող է և այդ ասպարեզում արժանի հիշատակի Խ. Աբովյանի հավատարիմ աշակերտն ու հետևողն է, որ, սակայն, իբրև այդպիսին, յուր ուսուցչից մի քայլ առաջ է անցել, գերազանցել նրան:

Պռոշյանցն էլ մշտապես չի ապրել Աշտարակում, նրա կյանքի մեծ մասն անց է կացել գյուղից հեռու, նրա ծառայության տեղերում: Աշտարակում ապրել է նա միայն յուր այդտեղ ուսուցիչ եղած ժամանակը, յուր թեմական տեսչության տարիները և այլ ժամանակամիջոցներ, ընդմիջումներով: Բայց ասված է. «Մարգարէ յիւրում գաւառի պատիւ ո՛չ ունի», կամ՝ «Տանու տերտերին օրհնյա՛ ի տեր չկա», մի իմաստուն խոսք կամ ասացված, որ, ըստ ամենայնի, արդարացել է Պռոշյանցի օրինակով: Նա յուր՝ Աշտարակում եղած ժամանակները, ըստ արժանվույն, չի գնահատվել յուր համագյուղացիներից, ավելին, նա ծաղրի ու քամահրանքի է ենթարկվել. նրան կոչել են «ագռավի, կաչաղակի միս ուտող», որովհետև նա սիրել է և սովորություն է ունեցել որսի գնալ, նրան ծաղրելով՝ անվանել են ոչ Հովհաննես, այլ Իվանուշկա, իսկ երբ

նա անունը փոխել, Պերճ է կոչվել, այդ անունը ծամել են, ճերպ են կոչել՝ հետևելով գյուղի ծերունի ու խուլ ափուներից մեկի օրինակին, որ լավ լսած չլինելով ու հասկացած չլինելով՝ Պերճ անունը ճերպ է դարձրած եղել։ Աշտարակցիք խոնարհել, երկրպագել են մովրովներին, գավառապետներին, պրիստավներին, հաշտարար միջնորդներին և ունևորներին, մի խոսքով՝ պաշտել են աստիճանը, իշխանությունը և դրամը, իսկ նրան, որ այդ բոլորից շատ հեռու է եղել և, դրա փոխարեն, գյուղի կենցաղի ամենալավ պատկերացնողն է եղել, քամահրել են, «ծռտի-պռտի» բաներ գրող են համարել։

Եղել է մինչև անգամ մի ժամանակ, որ գյուղում նրա դեմ կազմվել է մի թշնամական բանակ գյուղի վերնախավերից, որովհետև նա գյուղում անտարբեր չի գտնվել յուր աչքերի առաջ կատարված ու կատարվող ապօրինությունների, չարագործությունների վերաբերմամբ, այլ համարձակաբար բողոքել է գրավոր և բանավոր, և անարգանքի սյունին գամել դրանց կատարողներին՝ կաշառակեր տանուտերներին ու դատավորներին, վաշխառու ցեցերին ու ցեցապետներին և հոգևոր սքեմի տակ վարագուրված Միկիտան Սաքոներին։ Գյուղի «Միկիտան Սաքոն»՝ Սարգիս քահանա Բղնունին, մինչև իսկ մեր վերը հիշած՝ յուր «Ջվարճալի հարսանիքի» մեջ ամբողջ էջեր է նվիրել նրան, մուր քսել նրա ազգանակի վրա և իրեն էլ դուրս բերել, ներկայացրել իբրև անբարոյական մեկը, մի պասքվիլ, որ զզվանք է հարուցանում գործին ու հանգամանքներին տեղյակ ընթերցողի մեջ[16]։

Պռոշյանցի պատիվը գյուղում բարձրացել է միայն այն ժամանակ, երբ նա Թիֆլիսում անուն է հանել գրականության մեջ, երբ տոնվել է նրա հոբելյանը և

16 Ավելորդ չենք համարում այստեղ բացատրել, որ Աշտարակի Ամենափրկիչ եկեղեցու երկարամյա քահանա Տեր Սարգիս Բղնունին, որ մեր քանիցս հիշած «Ջվարճալի հարսանիք, Նոտրագրություն և վիպասանություն» երկի հեղինակն է, թեև մի մեծ ուսման տեր մարդ չի եղել, բայց ժամանակի հասկացող, գրագետ գյուղական քահանաներից մեկն է եղել։ Նա գյուղում Պռոշյանցի անհաշտ հակառակորդն է եղել. նրա և Պռոշյանցի մեջ եղած թշնամությունը սկսված է եղել այն օրից, երբ լույս է տեսել Պռոշյանցի «Հացի խնդիր» վեպը, որի մեջ ուռուցիկ ձևով և հյութալից, թանձր գույներով քաշված «Միկիտան Սաքոյի» (մարկիտան Սաքոյի) խենեշ պատկերի մեջ Տեր Սարգիսը ճանաչել է յուր իսկական պատկերը։ Նա յուր հակառակորդից վրեժ առնելու նպատակով կամեցել է նույն զենքը գործադրած լինել, այսինքն՝ վեպին վեպով պատասխանած լինել, և գրել է յուր վերոհիշյալ «Ջվարճալի հարսանիքը», որի մեջ ընդարձակ էջեր է նվիրել Պռոշյանցին։ Սակայն, չունենալով վեպ գրելու տաղանդ ու տիպար ստեղծելու շնորհք՝ նա վրիպել է յուր նպատակի մեջ։ Նրա՝ Պռոշյանցի մասին գործից դուրս է եկել մի տգեղ պասքվիլ, իսկ վեպից՝ հանդիսարան բազմաթիվ անհավատալի սխրագործությունների ու քաջագործությունների, իբրև թե կատարված վեպի երկու հերոս աշտարակցիների ձեռքով։ Այդ գրվածքը, սակայն, ունի և յուր գնահատելի կողմը. դրա մեջ հեղինակը հավաքել, դրել է գործող անձերից մեկի (ծերունի Եսայի ափունի) բերանը յուր իմացած և լսած՝ Աշտարակի պատմության և նրա ներքին կյանքին վերաբերյալ շատ հետաքրքրական, հին զրույցներ ու ավանդություններ, որոնք առատ նյութ են մատակարարում Աշտարակի պատմության համար։

երբ, վերջապես, նա արժանացել է «մագիստրոսության» աստիճանին՝ Ավետարանը աշխարհաբար թարգմանելու համար։

Աշտարակի գործիչների շարքում մի համեստ տեղ էլ գրավել է քանիցս պատմության ընթացքում հիշված տանուտեր Հակոբյան Խաչանը, որ ապրել է XVIII դարու վերջերին և XIX-ի սկզբներին. նա վախճանել է 1834 թ. և թաղվել ս. Մարիանեի բակում։ Նա ապրած լինելով պարսից պատերազմի օրերով, այսինքն՝ աշտարակցոց համար ամենավտանգավոր ժամանակները, և վարած լինելով տանուտերության պատասխանատու պաշտոնը, ունեցել է այնքան խոհեմություն, տակտ, կառավարելու կարողություն, ճարպկություն և լեզու թափելու ընդունակություն, որ և՛ ինքը չի վտանգվել, և՛ ժողովրդին պահպանել է վտանգից։ Նա այնքան մոտ է եղել Ներսես Աշտարակեցու եղբայր Կարապետ աղային, որ, կարելի է ասել, նրա աջ ձեռքն է եղել, ուստի և, իհարկե, անտեղյակ չի եղել և չէր էլ կարող լինել նրա փախչելու գործի հանգամանքներին, բայց նա այնպես է պահել իրեն, որ ո՛չ գյուղումն են իմացել և ո՛չ Երևանում։

Պարսից կառավարությունը, ինչպես ասել ենք, անկասկած, տեղյակ է եղել աշտարակցոց՝ Ներսեսի հետ ունեցած հարաբերության, ուստի և, բնականապես, Հասան խանն իմանալով Կարապետ աղայի փախուստը, պիտի կասկածեր, որ աշտարակցիք ծածկել, թաքցրել են իրենից փախստի նախապատրաստության հանգամանքը և դրա համար, առաջին հերթին, հանցավոր համարեր քյոխվային և հետո՝ գյուղի բոլոր իշխաններին, որոնք այդպիսի դեպքերում, սարդարության օրենքով, պատասխանատու են եղել սարդարի առաջ գյուղում կատարված հանցագործության համար։ Բայց Խաչանն այնպես է բռնել գործը, որ առաջինն հենց ինքն է անմիջապես փախստի առավոտը զեկուցել սարդարին եղելությունը և համոզեցուցիչ խոսքերով հավատացրել, որ փախուստը և դրա պատրաստությունը կատարվել է այնպիսի գաղտնապահությամբ, որ ծածուկ է մնացել թե՛ իրենից իբրև գյուղի կառավարիչ, և թե՛ գյուղացիներից ընդհանրապես, և որ ինքն էլ, գյուղն էլ հավատարիմ են կառավարության, և չի կարելի մի Ներսեսի և նրա եղբոր արածների համար պատասխանատու համարել բոլոր գյուղը և այլն և այլն։

Դրանով, իհարկե, իսպառ չի փարատվել սարդարի կասկածը, և աշտարակցիք տուժել են, բայց այդ եղել է մի ընդհանուր տույժ ու պատիժ, հակառակ դեպքում և՛ տանուտերը, և՛ իշխաններն իրենց գլուխներով պիտի պատասխանատու լինեին։

Տեղահանության ժամանակ դարձյալ նույն Խաչանն է եղել, որ, իբրև տանուտեր, առաջնորդ ու ղեկավար հանդիսանալով տեղահանվածներին՝ յուր համբերատար վարմունքով մեղմել ու չափավորել է ժողովրդի անհամբերատար բռնկումները և հուսահատության արտահայտությունները, և խոնարհությամբ

նեղությունների տոկալու առաջին օրինակը հենց ինքն է ցույց տվել և ժողովրդին էլ նույնը քարոզել ու հետևից տարել, որով և կարողացել է անզահանության գլուխ կանգնած իշխանի սիրտը գրավել և թեթևություններ ձեռք բերել ժողովրդի համար և մեղմ վերաբերմունք։ Դրա, այդ մեղմ վերաբերմունքի հետևանքով է, որ, երբ նրանք հասել են Ալաշկերտ և տեղում բավարարաչափ հացի պաշար չեն գտել իրենց համար, խնդրել էլ իրավունք են ստացել մարդիկ ուղարկելու Աշտարակ, որոնք և՛ հացի պաշար են բերել, և՛ հավաստի տեղեկություններ՝ գյուղի բարվոք կացության մասին։ Դրա հետևանքով է եղել, որ մի քանի ժամանակ անցնելուց հետո, նրանք կարողացել են իրենց տանուտերին ուղարկել Երևան, սարդարի մոտ, թույլտվություն ստանալու հողը փոխադրվելու համար, մի դժվար առաքելություն, որ, սակայն, այնքան փայլուն հաջողությամբ կարողացել է գլուխ բերել ճարտարախոս Խնչանը։

Յուր խոհեմության ու ճարտար լեզվի շնորհիվ է եղել, որ նույն Խնչանը, երբ կանայք, երբեմն նեղսրտված ու գաղզղած իրենց կրած տառապանքներից, սկսել են բարձր ձայնով լալ, կական բարձրացնել և անիծել Ներսեսին, նրան պատճառ համարելով իրենց այդ տառապանքներին, կարողացել է հանգստացնել նրանց և գալիք բարիքի հուսով հուսադրել ու մխիթարել. իսկ երբ նրանք վերադարձին հասել են Աշտարակ և իրենց բնակարանները գտել ավերված և լքված, ու հուսահատ, մնացել են շվարած կանգնած ավերակների առաջ, նա է դարձյալ եղել, որ ամեն տեղ հասել, քաջալերել, խրախույս կարդացել և դրդել է մոլորված չմնալ, այլ անմիջապես ձեռնարկել վերանորոգության։ Արդարություն, սակայն, պահանջում է ասել, որ այդ բոլորը Խնչանը մենակ չի արել. նրան օգնել են գյուղի իշխանները և, նամանավանդ, մեր արդեն մեկ անգամ հիշած՝ Մուղնու սբ. Գևորգի վանահայր, աշտարակցի Շուխոնց Մարկոս վարդապետը, որ ամեն բանում և ամեն տեղ խորհրդակից և գործակից է եղել նրան։

Գյուղի մեջ հայտնի գործիչներից են եղել և Խումմ Տահաղիղյանցը և Շուխյանց Սարգիսը։ Խումմը մի սրաբան, հյուրասեր, ճշմարտախոս ու հասկացող մարդ է եղել. նա ժամանակի կաշառակեր մոլրոլներին խոհեմությամբ սիրաշահելով և նրանց ընդունելության համար, ի սեր ընդհանուր շահերի, հացկերույթի առատ սեղաններ պատրաստելով՝ կաշառքներով և հարևանցի ակնարկներով հասկացրել է կատարված ու կատարվող կաշառակերությունը, պեղծումները, ժողովրդի քաշած նեղությունները և դրանով հաճախ զերծ է պահել գյուղը նրանց օգնականների, գրագիրների և յասավուլների գափողական հիշատակաքներից։ Նրա գլխավոր արժանիքը, սակայն, որ գյուղացիների հիշողության մեջ է մնացել, այն է եղել, որ յուր տանուտերության օրերով, Երևանի ճանապարհին կատարված մի քանի կողոպտումների և սպանությունների առթիվ, շատ աշխատել է հասկացնել գյուղացիներին իրենց անձնապաշտպանու-

թյան համար զենք բանեցնելու անհրաժեշտությունը, ևս և Ղրիմի պատերազմի
տարիները, երկրում մահմեդական և քրիստոնյա տարրերի մեջ ծագած ցավալի
գժտությունների և թշնամական գործողությունների ընթացքում, մեծ հմտու-
թյամբ կազմակերպել է գյուղի ինքնապաշտպանության գործը, որով առնվել է
գյուղին սպառնացող խոշոր և անխուսափելի վտանգի առաջը։ Այդ վերջին, կա-
րևոր գործում եռանդուն աշխատակից և գործակից են հանդիսացել նրան ղար-
սեցի Մարգարի որդի յուզբաշի Բաղդասարը և գյուղի՝ ժամանակի իշխաննե-
րից Ստեփան աղա Տեր-Հովսեփյանցը։ Դրա, այդ Ղրիմի պատերազմի տարինե-
րին Աշտարակում տանուտեր եղած Խումի բնութագիրը վարպետորեն գծել է
Պերճ Պռոշյանցն յուր «Հացի խնդիր» ազգային վիպասանության մեջ (տե՛ս այդ
մասին այդ գրվածքի 1880 թվի հրատարակության ԺԸ գլուխը)։

Շուխյանց Սարգսի կամ, ինչպես սովորաբար գյուղում կոչել են նրան՝ Շու-
խոնց Սերգեյի մասին մենք արդեն առիթ ենք ունեցել խոսել Պատմության
12-րդ գլխում, հաշտարար ատյանների 1866 թվին Աշտարակում հաստատվելու
առթիվ։ Դրա համառոտ կենսագրությունը և գործունեությունը ևս գծել է Պռոշ-
յանցն յուր «Ցեցեր» գրվածքում, կոչելով նրան Գոմշակերյանց, ինչպես
մենք յուր տեղում ցույց ենք տվել։

16

ԱՇՏԱՐԱԿԻ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԳՅՈՒՂԱՄԱՍԵՐԸ, ՀԻՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՏՆԵՐԸ, ԱՇՏԱՐԱԿՑՈՒ ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ, ՍՆՈՒՆԴԸ ԵՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

Աշտարակ գյուղը ներկայումս բաժանվում է երկու մասի՝ հին և նոր գյու-
ղամասերի։ Հին գյուղամասը հին գյուղատեղում գտնված մասն է, որ սկսվում
է Մուղնու քառի լանջերից և տարածվում է մինչև այգիները, նորը՝ այգիներում
տեղավորված մասն է. գյուղամերձ այգիները, ձորաբաշերի մի մասը և, հա-
կապես, Վաղարշապատի խճուղու երկու կողմը գտնված այգիները։

Գյուղացիք հին գյուղատեղից սկսել են քաշվել այգիները մոտավորապես
XIX դարի յոթանասնական թվականներից սկսած, և այդ շարունակվում է կա-
տարվել մինչև օրս էլ։ Դրա պատճառն եղել է և է հին գյուղատեղի քարակի-
տուկ, իրար վերա թափված, խճողված լինելը, նրա ծուռ ու մուռ, նեղ փողոց-
ները, տների ու դրանց բակերի նեղվածք լինելը, ջրի հեռավորությունը, ծառա-
տունկի և բուսականության բացակայությունը, որի հետևանքով գյուղացիք
ամառվա շոգերին խեղդվել են փոշուց, նեղվել են ջրի պակասությունից և արևի
այրող ճառագայթներից։ Այդպիսի տեղափոխությամբ նրանք, բացի նրանից,
որ հնարավորություն են ձեռք բերած եղել ապրել լայն, արձակ, ծառերի հովա-
նու տակ, բլբլան առուների ափերին, թարմ բուսականության և մաքուր օդի
մեջ, այլև մոտ լինել իրենց ծառաստղին, իրենց կյանքի ու կենդանության աղ-

բյուր խաղողին, և մեկ անգամ ընդմիշտ ազատված են եղել ամեն ամառ, ծառապտղի ու խաղողի ժամանակ, տանից այգի և այգուց տուն փոխադրվելու հոգսերից:

Գյուղի հնագույն և հին տների նմուշները պահպանվել են, ինչպես, հին գյուղամասում, որ այժմ ավերակի կույտերի տպավորություն է թողնում և, մի ընդարձակ մասով, տաճկահայ գաղթականների և այլ տեղերից եկածների բնակավայր է հանդիսանում:

Հին Աշտարակի տները, ինչպես երևում է պահպանված նմուշներից, շինված են եղել խոշոր, անտաշ որձաքարից ու ցեխից և ծածկված են եղել հաստաբեստ, ամուր, թակագլուխ ներցուկ սյուների վերա հենված գերաններով և հողի հաստ շերտով: Նրանք իրենց պատերի միջից հանված լուսամուտներ չեն ունեցել, այլ՝ տանիքի միջից բացված երդիկներ, որոնք միևնույն ժամանակ և՛ լուսամուտներ են եղել, և՛ ծխի դուրս գալու տեղեր: Տները շինված են եղել խմբակներով, մեկը մյուսին կից, իրար կպցրած և տանիքներով միացած, և ունեցել են տանից-տուն, մեկզմեկու մեջ բացված դռնակներ կամ դրիչակներ՝ գաղտնի հաղորդակցության համար, որից և պետք է եզրակացնել, որ գյուղի նախնական բնակությունն եղել է տոհմերով և ամբողջ գերդաստաններով, և տներից յուրաքանչյուրն առանձին և խմբակները միասին պատկանել են մի տոհմի ու գերդաստանի անդամների:

Տների մի քանի խմբակներ միացած՝ կազմել են մեծ տնախմբեր, որոնք բաժանվել են միմյանցից նեղ, ծուռումուռ փողոցներով, որոնք կոչվել են քուչաներ. դրանք, այդ քուչաները, բացի մի քանիսից, առանձին անուններ չեն ունեցել, այլ կոչվել են փողոցներում տուն ունեցող հայտնի ընտանիքների անուններով: Առանձին անուններ ունեցող փողոցներից հայտնի են. գյուղամեջի մեծ և բանուկ փողոցը, որ կոչվել ու կոչվում է Ուռուց (Ուռոց)՝ յուր մի կողմն ուռենիներ տնկված լինելու պատճառով. Պուճուր քուչա, որ տարել ու տանում է Ուռոցից ձորաբաշերը կամ ձորաբաշի այգիները. Մակ դուռ քուչա, որ տարել է դեպի կամուրջը. Խեչի գրչի ճանբա, որ տարել է դեպի Փարպի. Շուխոնց դեմի ճանբա, որ տարել է դեպի ձորը:

Աշտարակում հնումն ամեն մի տուն ունեցել է յուր առանձին պարսպապատ բակը, որի մեջ առաջին տեղում շինված է եղել մի մեծ, ընդարձակ շենք. դա աշտարակցիների նախնական բուն բնակության տեղն է եղել, շինված քսենոֆոնյան հայկական գյուղերի տների նմանությամբ, միայն այն էական տարբերությամբ, որ հույն պատմագրի նկարագրած տները գետնափոր են եղել, իսկ Աշտարակինը՝ վերերկրյա: Այդ մեծ շենքը բաղկացած է եղել երկու մասից՝ գոմից, որտեղ կապել ու պահել են անասուններին, և օդայից, որտեղ բնակել են տնատերերը: Գոմը մի-երկու աստիճանով ցած է եղել օդայից և բաժանված նրանից ճաղերով (մուհաջառ): Հին աշտարակցիք պահել են՝ եզ, կով, ձի, ոչխար և այծ. նրանք գոմեշ, էշ, ջորի և ուղտ պահելու սովորություն չեն ունեցել: Էշ պահելու սովորությունը գյուղում նոր բան է՝ առաջ եկած տնտեսական պայմաններից. գյուղի բեռնակիր գրաստն եղել է մեր արդեն հիշած յաբու կոչված ձին, իսկ, հատկապես հեծնելու համար, կարողություն ունեցողները պահել են ավելի ազնվացեղ ձիեր: Ամբողջ գոմը, օդայի հետ միասին, տաքացել է անասունների շնչով. հետագայում օդայի մեջ շինվել է և մի առանձին վառարան՝ բուխարի, որ հարկավոր դեպքերում վառել են:

Բացի գոմից և օդայից, բակում շինված է եղել մի չարդախ, որի տակ, անձրևից ու ձյունից պահպանելու համար, հավաքել ու պահել են վառելիքը, երկրագործական և այգեգործական գործիքները, սայլերը և այլ մեծ ու ծանր անհրաժեշտ իրեղենները. չարդախի տակ եղել է և թոնիրը (թունդիր), որի մեջ տարվա որոշ ժամանակները թխել են տան տարեկան պաշար հացը՝ ավանդական լոշը կամ լավաշը: Այդտեղ, բակում, վերջապես, շինված է եղել մի առանձին անկյունում և հարկավորության տեղը: Խոտ ու դարման պահելու տեղը միշտ առանձին է եղել. դրա համար յուրաքանչյուր աշտարակցի տնատեր ունեցել է Մուղնու թառի լանջում յուր մարագը:

Այսպես են եղել, մոտավորապես, բնակարաններն Աշտարակում, հնագույն ժամանակները: Հետագայում, ինչպես երևում է, կատարվել է արմատական փոփոխություն. այսպես կոչված դրսի բակից կտրվել, բաժանվել է պարսպով ու դռնով մի կիսով չափ տարածություն և կազմվել ներսի բակ, որի մեջ և կառուցվել են բնակության համար հատուկ սենյակներ կամ տներ. մեծ տուն, չիրատուն (չիրախանա), կախանատուն, մառան և մի օթախ: Դրանցից ամենամեծ և կենտրոնական սենյակը եղել է մեծ տունը, որ կոչվել է այլ և հացատուն, որովհետև դրա մեջ են եղել մեծ և փոքր թոնիրները՝ հաց թխելու և ձմեռները քուրսի դնելու համար: Այդ ընտանիքի համար ապրելու և նիստուկացի գլխավոր սենյակն ու տունն է եղել. դրա պատերից մեկի մեջ շինված է եղել սրբատաշ քարից կամարակապ օջախը, որ հին հայի ամենապաշտելի սրբությունն է եղել, և ոչ միայն հին, հեթանոս հայի, այլև հին, քրիստոնյա հայի: Օջախը ինքը ընտանիքն է եղել, նրա կենդանությունը, հարատևությունը. եթե օջախը հանգչեր, ընտանիքն սպառված կլիներ: Օջախը այնքան մաքուր ու սուրբ պիտի լիներ, որքան և կրակը, ուստի և չի թույլատրվել, որ նրա առաջ մի որևէ վատ բան կատարվեր: Նույն սենյակի մի այլ պատի առաջ, դրան կից, շինված են եղել պատոցներ, որոնց վերա կարգով շարված՝ պահվել են տան մաքուր սրբված ու կլայեկված պղինձ-պղնձակալը-պղնձակարգը. տան մի անկյունում էլ, թոնրից ոչ հեռու, դրվել է փայտե բարձր ճրագկալը, որի ծայրից փոքր-ինչ ցած հագցրած փայտե թաթի վերա դրված է եղել ձեթե ճրագը, որ վառ է պահվել ամբողջ գիշերը մինչև լուսադեմը, երբ տղամարդիկ զարթնել են, վեր կացել՝ տավարի տակը մաքրելու և ջուր ու կեր տալու համար:

Այդ մեծ, կենտրոնական տան մեջ բացված են եղել զանազան ուղղությամբ երեք դուռ, որոնցից մեկը տարել է շիրատունը, որի մեջ, պատերի երկայնությամբ՝ շարված են եղել գինու կարասները իրենց պարագաներով, քացախի և բրորի կարասները, օղու ակերն ու տկճորները. երկրորդ դուռը տարել է կախանատունը, որի առաստաղի գերաններից կախել են պահունի տանձի, խնձորի, դեղնասալորի և ալվան խաղողի հաստակաշի և դիմացկուն տեսակների կախանները, ծիրանաչորի, սալորաչորի և դեղձաչորի (չիր) կթոցները, շուջուխը և մաթի բղուղները, ալանին, փշատը և նոր տարուն բացվելիք՝ շուջուխով, չրով, փշատով և ալանիով լցրած բունուճիկները. երրորդ դուռը, վերջապես, տարել է մառանը, որտեղ պահվել են ձմեռվա պաշարեղենը՝ ավանդական ղավուրման, յուղը, պանիրը՝ մեծ բղուղների մեջ, սիբեխի ղոխի, քեղի ղոխի, ողորմակոթի (օղորմակոթ), բոխի և վարունգաթթվի բռնվածքները, ալյուրը, ցորենը, ձավարը, սիսեռը, ոսպը, աճարը և լոբին, բրինձը և այլն։ Այդտեղ պահվել է և առաստաղի գերաններից կախված ու ճոճի պես հարմարեցրած, լայն տախտակների վրա դարսված՝ լավաշ հացի պաշարը։

Օթախը, որ մի գաջած, ֆարշած, մաքուր փռվածքով և բուխարիով առանձնացած սենյակ է եղել, հատկացված է եղել պատվավոր հյուրերի ընդունելության համար. նա շինված է եղել դուրսը, մեծ տան բակի կողմի պատին կից, նրա՝ մեծ տան հաշտի (նախասենյակ) ուղղությամբ, հաշտի, որի մեջ և բացված է եղել նրա, այսինքն՝ օթախի դուռը։ Այդ բոլորի առաջ էլ, բակի կողմից քաշված է եղել մի պատշգամբ կամ, ինչպես աշտարակցիք ասել ու ասում են, յազմա (գյաղմա)։

Աշտարակի հին տան այս ընդհանուր ձևն հետագայում, հետզհետե, դարձյալ փոփոխության է ենթարկվել. դրսի ու ներսի բակերը միացվել, կազմել են մի ամբողջություն, և ներկայումս շատ քիչ կարելի է գտնել հին տների նմուշներ, որոնք պահպանած լինեին առանձին-առանձին դրսի ու ներսի բակեր. հին շենքի վերա շինվել են մի կամ երկու սենյակ՝ ամառվա բնակության համար, մաքուր գաջած, պարսից ձևի գույնզգույն ապակիներ ունեցող, վեր և վար քաշվող լուսամուտներով և բուխարիներով սենյակներ, որոնք կոչվել են բանապի և որոնց առաջ դարձյալ քաշվել է մի նոր յազմա, ցածի յազմայի վերա, այնպես որ յազմաներն էլ տան նման դարձել են կրկնահարկ։

Հին Աշտարակի տները և դրանց բաղկացուցիչ մասերը, որոնց ընդհանուր նկարագիրն ու ձևը մենք խոշոր գծերով և համառոտաբար այստեղ պատկերացրինք, օգտվելով Պռոշյանցի գրվածներից և պահպանված սակավաթիվ, այն էլ ոչ առանց նորագույն փոփոխությունների մնացած նմուշներից, ըստ ամենայնի, բավարարել ու համապատասխանել են հին աշտարակցու ճաշակին, կենցաղին, նահապետական կյանքի պայմաններին և զբաղմունքի հանգամանքներին։

Աշտարակի հնագույն ժամանակների ներքին կյանքի մասին մենք գրավոր,

ճիշտ տեղեկություններ չունենք, քիչ թե շատ ճիշտ, ավանդական տեղեկությունններ էլ պակասում են. մեր ունեցած գրավոր աղբյուրները և հավանական ավանդական տեղեկությունները վերաբերում են պարսից սարդարական իշխանության վերջին շրջանին և հատկապես վերջին Հյուսեին և Հասան խաների սարդարության և երկրի՝ ռուսաց տիրապետության տակ մտնելու ժամանակներին։ Արդ՝ այդ աղբյուրներից մենք իմանում ենք, որ XIX դարասկզբին Աշտարակը կազմել է մի ինքնամփոփ, սեղմ համայնք, որ մի պարզ, նահապետական կյանք է վարել. նա փակ տնտեսություն է ունեցել, առևտուր, մեր ներկա հասկացողությամբ, չի արել. նա ո՛չ արտահանել է, ո՛չ էլ ներմուծել. նա յուր նահապետական համեստ կյանքի պահանջները հոգացել է յուր արտերից, այգիներից, անասուններից և հավուճվից ստացածից, իսկ ինչ որ էլ չի ունեցել, ինչ որ էլ պակասել է, ձեռք է բերել, լրացրել Արագածոտնի գյուղերից, ապրանքափոխանակության կարգով։ Կյանքն էժան է եղել, ձվի հարյուրը, ասում են, վաճառվում է եղել պարսից դրամի երեք շահի ու կեսով, հինգ կոպեկով՝ ռուսաց փողով. դրամը թանկ է եղել, ու նրա շրջանառությունը՝ սահմանափակ։ Դրամը հարկավոր է եղել աշտարակցուն կամ պետական որոշ, դրամով վճարելիք հարկերը հատուցանելու և ամենակարևոր գնումներն անելու համար, ինչպես, օրինակ, Երևանի շուկայում բրեք կտրելու (նորահարսի զգեստացու գնելու) և, ընդհանրապես, շորացու կտորեղեն գնելու համար։

Սարդարության երկրում շրջանառություն* ունեցած դրամներից աշտարակցիների հիշողության մեջ պահպանվել են հետևյալ դրամների անուններն՝ իրենց մոտավոր արժեքներով.

Չորս մանր պղնձի դրամներ	մի շահի
Երկու շահի	մի յուզ ալթուն
Չորս շահի	մի աբասի
Քսան շահի	մին ալթուն
Հինգ աբասի	մի հազարդյան
Տասհազարդյան	մի թուման
Երկու աբասի	մի սահիպղրան
Տասնյոթ կոպեկ	մի փանահբատ

Պարսից դրամների շրջանառությունը պահպանվել ու շարունակվել է և ռուսաց տիրապետության ժամանակ, և ռուսաց դրամի հետ միասին, մինչև 1850 թվականը, երբ նա իսպառ վերացվել է, և մնացել է ռուսական դրամը, բայց, ինչպես առաջ, պարսից դրամների շրջանառության ժամանակ, այնպես էլ հետո, դեռ մի որոշ ժամանակ ժողովուրդը շարունակել է ընդունել ռուսական դրամը պարսկականի հաշվով, այսպես.

* Բնագրում, այստեղ և ստորև՝ շրջանություն— Պ. Հ.։

Հինգ կոպեկը	. . . .	երեք շահի ու կես
Քսան կոպեկը	. . . .	14 շահի
Ռուբլին (մանեթը)	. .	երեք հարյուր տասը շահի
Երեսուն կոպեկը	. . .	մի սահիպղրան

Վրաց արքա Հերակլ Բ-ի արշավանքների ժամանակներից սարդարության
երկրում շրջանառություն է ունեցել և վիրական ջխտանոց կոչված դրամը, որ
պարսից դրամի և ռուսական դրամի հետ միասին ընթացք է ունեցել և ռուսաց
տիրապետության ժամանակ, և ընդունվել է պարսից երկու աբասու և ռուսաց
40 կոպեկի հաշվով։

Աշտարակցու տանը մսի գործածությունը չափավոր է եղել, գյուղումն էլ
արդեն շատ էլ հաճախ միս չի մորթվել։ Դրա փոխարեն աշտարակցին սիրել է
և առատությամբ գործ է ածել ցանովի և վայրի բանջարեղեն, ինչպես և այժմ
սիրում ու գործ է ածում։ Առաջնի համար նա վաղ գարնանից յուր այգու ափերի
մի որոշ տարածության վերա մարգեր է արել, որտեղ ցանել է յուր սիրած սո-
վորական ընդեղենը՝ ռեհան, կորդին (կորդյուն), մաղադանոս (աղատքեղ), սա-
միթ, համեմ (գինձ), կոտեմ, նիխուր, տաքդեղ, կապույտ ու կանաչ պորինջան
(կարմիրը հնումը չեն կերել, սերմացու են համարել), սոխ ու սխտոր, բակլա,
մաշ և, նամանավանդ ու հատկապես, լոբի (պոլոճիկ). իսկ երկրորդը, վայրի
բանջարեղենը, որ Աշտարակում առվել է աղցան, կանայք ու աղջիկները, գար-
ձյալ վաղ գարնանը, ձյունը վերկենալուն պես, սովորություն են արած եղել
բանջարաքաղիներով քաղել ու հավաքել Քասախի ձորից, այգիներից ու մոտ ու
հեռավոր առապարներից, ձոբերից ու լեռներից՝ եղինջ, ղողլապատ, ծնեբեկ, պա-
րոն-բանջար, իրիցանուկ, բոլի, սիբեխ, առվի կարաս, գառանանկաջ, թրթնջուկ,
թելուկ, սինձ, բոխ, քեղի, ողորմակոթ (օղորմակոթ), խնունիկ (խնունուկ),
շրեշ, ավելուկ, օրոհունդ [°] և այլն։ Սրանցից մի քանիսը թարմ-թարմ խաշել,
աղցան են արել ու կերել, կամ պաս օրերին քաղցր ձեթով (շիրբախտ), ուտիս
օրերին յուղով տապակել, մի քանիսն էլ, ինչպես բոխը, ողորմակոթը և քեղու
զոխը, աղը դրել, իբրև բռնվածք, պահել ձմեռվա համար։

Հենց այդ կանաչեղենի ու բանջարեղենի առատության շնորհիվ է եղել, որ
հին աշտարակցու թե՛ ուտիս ու թե՛ պաս օրերի սեղանն մի առանձին համ ու
հոտ է ունեցել. նա, օրինակ, հենց յուր պասուց սեղանի վերա կարողացել է
հանել յոթ տեսակի, տեղական ճաշակով, համադամ խորտիկներ՝ չորացրած
կանաչ պոլոճկի բորանի, դդմի չիր, կարմիր խաշած պոլոճիկ, շիրբախտ ձեթով
տապակած աղցան, զարբար չամչով ու քաղցրեղենով շինած փլավ, պասուց
տոլմա և ալյուրի մեջ տապակած բոխ։

Աշտարակցու տնտեսության մեջ մի առանձին տեղ գրավել է և ձուկը,
հատկապես աղը դնելու Սևանի Կողակ ձուկը։ Մենք արդեն յուր տեղում նկատել
ենք, որ Քասախ գետը մատակարարել է նրան տեսակ-տեսակ համադամ, մանր

ձկներ, բայց գյուղում այդ ձկները սեղան են հանվել թարմ-թարմ, և աղը դնելու
համար բավարար չափով չի էլ բռնվել։ Ճիշտ է, սառցվել է և արդեն պատրաս-
տի, աղը դրած Վանա տառեխը, և գյուղի տնտես կանայք, գոնե, մի-մի փոքրիկ
բղուղ այդ ձկնից պահել են ձմեռվա համար, բայց այդ էլ, իհարկե, բավական
չի եղել. նրան հարկավոր է եղել ձկան խոշոր տեսակը և այնքան շատ, որ բա-
վարարեր նրա պահանջին ու կարիքին ամբողջ տարվա ընթացքում։ Այդպիսին
եղել է Սևանա Կողակը, որ ամեն տարի մայիս ամսին բերվել է ոչ անմիջապես
ծովից, այլ Քյավառի Ադիաման գետից, և այդ բերելու գործողությունն էլ կա-
տարվել ո՛չ հասարակ կերպով, այլ, կարելի է ասել, գյուղովի, ամբողջ հասա-
րակության ձեռքով, մի որոշ հանդիսավորությամբ, իբրև ամբողջ գյուղի համար
մի շատ անհրաժեշտ տնտեսական կարիք հոգալու բան։
Ամեն տարի մայիսի 25-ին գյուղի տանուտերը գզիրի բերանով հրավեր է
կարդացել գյուղացիներին, որ ձի ունեցողները պատրաստություն տեսնեն կո-
ղակի գնալու։ Հրավերքն ընդունվել է սիրահոժար պատրաստակամությամբ, և
ամսի վերջը, նշանակված օրը հավաքվել է 200 հոգուց բաղկացած մի ձիավոր
կարավան, որոնցից յուրաքանչյուրը բերել է յուր հետ 20 զույգ լավաշ, կես լի-
տըր գինի, մի քառորդ բրինձ, քացախ, սխտոր, կարմիր տաքդեղ և մի-մի ջըխ-
տանոց դրամ, որից պիտի վճարվեր և՛ ձկան գինը, և՛ հոգացվեին լինելիք բո-
լոր անհրաժեշտ ծախքերը։ Բերած պաշարները հավաքվել, կազմվել են առան-
ձին ձիաբեռներ, կարավանապետ է ընտրվել գործին հմուտ, գյուղում հայտնի
մարդկանցից մեկը, կազմվել են տասնյակներ՝ դաճեր, որոնցից ամեն մեկն
ընտրվել <է> յուր համար տասնապետ՝ դահբաշի, ևս և՝ ձիապաններ, խո-
հարարներ, պաշարեղենը պահող-պահպանողներ և թոռ fցող-ձուկ կալճողներ։
Երբ այսպես՝ ամեն բան պատրաստվել է, և մասնակցողներից ամեն մեկը
առանձին և ամենքը միասին խոսք են տվել հլու հնազանդ լինել կարավանա-
պետին, տասնյակների անդամներն էլ՝ իրենց տասնապետներին, ճանա-
պարհ են ընկել Քյավառ արդեն հայտնի մարշրուտով։
Առաջին օրը նրանք իջևանել են Եղվարդի առվի վերա, Ղարաջորանի հան-
դում, երկրորդ օրը՝ Արզաքյանի անտառում, որտեղից նրանք առել են մի-մի
բեռ դալար ճյուղեր՝ լամբարճեր շինելու համար, և երրորդ օրը տեղ հասել,
Ադիաման գյուղը ու բանակ դրել համանուն Ներքին Ադիաման գետի ափին։
Ջկան կապալառուների հետ տեսնվելուց և ամեն մի բեռի համար մի սահիպղը-
ռան վճարելու պայման կապելուց հետո, կարավանը բաժանվել է երկու մասի,
որոնցից մեկը մնացել է յուր տեղում, իսկ մյուսը՝ լամբար շինողները, թոռ
fցողները, ձուկ կալճողները և, ընդհանրապես, ձկնորսության գործին հմուտ-
ները, գնացել են Վերին Ադիաման գյուղի հանդեպ գտնված գետի ձորը և այդ-
տեղ, Նահատակ Իշխան կոչված վարդապետի գերեզմանից ցած, բնակություն
հաստատել քարափների տակ։ Վեց օր նրանք մնացել են այդտեղ, որովհետև

ձուկը դեռ դուրս եկած չի եղել դեպի գետը, և գետում էլ այնքան ձուկ չի եղել, որ բավարարեր բոլոր կարավանի պահանջներին։

Աշտարակում պահպանված ավանդությունն ասում է, որ այդ Իշխան վարդապետը մի նահատակ սուրբ մարդ է եղել. Նրա խնդրվածքով ու աղոթքով՝ մի տարի, երբ երկրում մեծ սով է եղել, գետի մեջ ծովից եկել, այնքան ձուկ է լցվել, որ ամենքը կերել, հագեցել են, որով և սովի առաջն առնվել է։ Դրանից հետո սովորություն է դարձած եղել ամեն անգամ, ձկան ուշանալու դեպքերում, մատաղ անել նահատակի գերեզմանի վերա և խնդրվածք՝ ձկան առատության համար։ Ձկան գալու մասին էլ պատմվում է, որ ձուկը դուրս է եկել ծովից դեպի գետը անթիվ, անհամար քանակությամբ և ահագին վտառներով. առջևից գալիս է եղել մի խոշորագույն Իշխանաձուկ, որ յուր մեծության ու ծանրության պատճառով դժվարությամբ է շարժվում եղել. Նրա ետևից գալիս է եղել մի մեծ Կողակ, այնքան գեր ու ճարպոտ, որ ամբողջ մեջքը դեղին է եղել և արևի ճառագայթների տակ փայլել, փողփողել է ոսկու պես. դրա ետևից էլ, վերջապես, գալիս է եղել ցանկալի կողակը այնպիսի քանակությամբ, որ, ասում են, ավազին թիվ է եղել, նրան թիվ չի եղել և այլն։

Կարավանը կատարել է այս բոլոր ավանդական սովորությունները, մինչև որ, վերջապես, հայտնվել է ձուկը։ Իսկույն կարավանի երկու մասերը միացել են և բռնելու համար բոլոր պատրաստությունները տեսել։ Այնքան ձուկ է բռնըվել, որ բոլոր բեռները լցվել են ընտրովի, խոշոր տեսակով, և դեռ ավելորդ էլ է մնացել։ Հետևյալ օրը նրանք բեռները բարձել են և իրիկնապահին, հովով ճանապարհ ընկել և վերադարձել ուրիշ ճանապարհով։ Առաջին գիշերն անց են կացրել Ուչ Թափալար կոչված ամարանոցատեղի ավերակներում, երկրորդ գիշերը՝ Շաղըբուլաղ կոչված տեղում, և երրորդ գիշերը՝ դարձյալ Եղվարդում։ Այդտեղից էլ դուրս են եկել գիշերը շատ կանուխ, այն հաշվով, որ արշալույսին արդեն հասած լինեն Աշտարակ, և Եղվարդի սահմանից դեպի Աշտարակ անցնելու ժամանակ, Տրեշապատ կոչված տեղում, արձակել, դատարկել են հրացանները, որ հարսները լսեն, վեր կենան, ջուր պատրաստեն՝ ձուկը լվանալու, խոտոցների բաժանելու և աղը դնելու համար, որ չմնա շոգին ու չփչացվի։

Գյուղովի, այսպիսի հանդիսավորությամբ՝ կողակ բերելու սովորությունն եղել է Աշտարակում պարսից իշխանության օրերով և շարունակվել է ռուսաց տիրապետության ժամանակները ևս, մինչև 1850 թվականը, երբ դադարել ու իսպառ վերացվել է։ Դրա պատճառն եղել է ձկան հետզհետե թանկանալը և ծովի ձկնորսության կապալառության վարձագնի չափազանց բարձրանալը։ Պարսից իշխանության օրերով և ռուսաց տիրապետության առաջին տարիները մի բեռի համար, ինչպես տեսանք, առնվել է մի սահիպղրան, այսինքն՝ երեսուն կոպեկ, իսկ կապալավարձը եղել է 700 մանեթ, իսկ 1848 թվին մի բեռի գինը հասել է 15 մանեթի, և կապալավարձը՝ մի քանի հազարի։ Հասկանալի պիտի

լինի, որ, դրա հետ միասին, համեմատաբար, շատ թանկացել է և գնալ-գալը և այնտեղ 7—8 օր մնալը, և ծախքի ընդհանուր գումարն այնքան մեծացել ու զգալի է դարձել, որ արդեն ձեռքը պակաս մարդկանց համար ձեռնտու չի եղել այդ եղանակով ձուկ բերելը։ Աշտարակը, հայտնի բան է, այնուհետև էլ շարունակել է աղը դնել կողակը, որովհետև դա նրա տնտեսության մեջ, ինչպես ասացինք, մի որոշ տեղ է բռնել, մի որոշ դեր խաղացել, բայց փոխվել է նրա ձեռք բերելու եղանակը. այնուհետև կամ մասնավոր մարդիկ են ձուկը բերել ու վաճառել գյուղերում, և ով էլ կամեցել է, գնել է, կամ աշտարակցիք, ամեն մեկն առանձին կամ փոքրիկ խմբերով, գնացել են ծովը, գնել բռու ֆցողներից և բերել իրենց համար։

Այդպիսի կարգով էլ հին աշտարակցին յուր տարեկան աղի պաշարն է բերել. Նրանք հավաքվել են տնազլուխ մի մարդ և գնացել են Կողբի աղահանքը։ Այդտեղ թե՛ պարսից իշխանության օրերով ու թե՛ ռուսաց տիրապետության առաջին տարիները աղահանքը կապալով չի տրվել, և աղն էլ վառոդով չի պայթեցվել, այլ՝ մրճերով կտրվել։ Աղը կտրվել է տասը և քսան լդրանոց աղաքարերով և վաճառվել է տասը լդրանոցը՝ մի աբասի, իսկ քսան լդրանոցը՝ մի սահիպղղանի։ Մրճավորներն եղել են ինքեանք կողբեցիք, որոնք իրենց աշխատանքի համար որոշ աշխատավարձ են ստացել իշխանությունից, իսկ աղավճարը ստացել է իշխանության ներկայացուցիչը, որ մշտապես այդտեղ է նստել։ Աշտարակցիք կարողացել են ամեն մի ձիու բառնալ 40 լիդր, ուրեմն՝ երկու-երկու տասը լդրանոց աղաքար, որ և ավելիքով բավարարել է ամեն մի տան պահանջին։ Աշտարակի աղի կարավանը կարողացել է մի հինգ օրվա մեջ գնալ ու վերադառնալ։

Եվ, ընդհանրապես, աշտարակցիք սիրել են իրենց բոլոր, շատ թե քիչ կարևոր աշխատանքները խմբովին կատարել. Նրանք, ինչպես մենք յուր տեղում տեսել ենք, իրենց այգիների մշակումը՝ էտը, փորը, սուղը, խոտհունձը, այգեկութը, ծերկալը, թաղը, կատարել են ընկերությամբ, փոխարա բանելով. Նրանք մինչև իսկ իրենց ձմեռվա պաշար աղը դնելու բանջարեղենը՝ բոխը և ղոխը հավաքելու վերոհիշյալ գործը, որի համար, երբեմն, հարկավոր է եղել հեռուները երթալ, կատարել են խմբովին, ընկերությամբ, և աշտարակցի այդպիսի աղցանավորների տուրը հասել է Բյուրական, Ծաղկեվանք (Արայի սարը) և մինչև իսկ Համամլու, Արզաքյան, Թայչարուխ և Դալլար։ Աշխատելու այդպիսի խմբական ձևն ու տեսակը սիրելի է եղել նրան, որովհետև դա համապատասխանել է նրա ասելու, խոսելու, ծիծաղելու և զվարճախոսություններ անելու, ևս և՝ շուտ մտենալու, ընկերական, բարեկամական սերտ կապերով կապվելու, ողջում աղբեր դառնալու տրամադրության և հակումներին, որով և՛ աշխատանքն է արագացել ու հաջողությամբ գլուխ եկել, և՛ աշխատելու ծանրությունը թեթևացել։

Այդ բոլորից կարելի է և պետք է եզրակացնել, որ հին աշտարակցու
սնունդն առատ է եղել և առողջարար, և այդ սնունդն էլ ձեռք բերելու համար
նպատակահարմար եղանակով հարմարեցրած է եղել և նրա աշխատելու ձևն ու
եղանակը: Ջպետք է մոռանալ մեր վերը հիշած և այն հանգամանքը, որ նա՝
աշտարակցին, այդ վաղեմի ժամանակները փակ տնտեսություն է ունեցել, որի
հետևանքով, բնականաբար, նա ինչ որ վաստակել, ստացել է յուր արտերից,
այգիներից ու պարտեզներից, ամբողջովին մնացել է յուր ձեռքին, յուր մառանն
է մտել, և նա միջոց է ունեցել առատությամբ և՛ ուտել-խմելու, և՛ արևելյան-
հայկական սովորությամբ՝ հյուրեր ընդունելու և անպակաս հյուրասիրելու հա-
մար: Պերճ Պռոշյանցի՝ յուր «Հացի խնդիր» ազգային վիպասանության մեջ
մեզ թողած Բարեկենդանի նկարագրությունը նրա երևակայության ար-
դյունքը չէ, այլ զուտ իրականություն, ինչպես որ իրականություն է եղել և
«Վերք Հայաստանիի» Բարեկենդանի նկարագրությունը, որից պետք է հե-
տևեցնել, որ հիշյալ հին ժամանակները մեր գյուղացիների սննդի բարեհա-
ջող հանգամանքները և աշխատելու ու վաստակելու պայմաններն և ուղիները
համանման են եղել բոլոր Արարատյան դաշտում ընդհանրապես:

Իսկ ինչ վերաբերում է մեր վերը հիշած մսի չափավոր և բանջարեղենի
առատ գործածության, այդ հանգամանքն էլ ընդհանուր է եղել, և պետք է վե-
րագրել ժամանակի գյուղացու ո՛չ տնտեսական կյանքի սղության, այլ երկրի
ջրի, օդի և, ընդհանրապես, կլիմայական պայմաններին. հայտնի է, որ հյուսի-
սային երկրներում մսակերությունը ավելի տարածված է, քան հարավային եր-
կրներում, որտեղ ժողովուրդն այնքան էլ մսի կարիք չի զգում և սիրում է ավելի
մեծ չափերով բարեխառնել յուր առօրյա կերակուրը բանջարեղենով, արմտիքով
և կաթնեղենով:

17

ՀԻՆ ԱՇՏԱՐԱԿՑՈՒ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՇՏԱՐԱԿԻ ԱՅԳԻՆԵՐԻ ՀՆՁԱՆՆԵՐԸ ԵՎ ՀՆՁԱՆԱԲԱԿԵՐԸ. ԱՇՏԱՐԱԿԻ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԵՋ ՊԱՀՊԱՆՎԱԾ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՏԱՐՐԸ, ԱՇՏԱՐԱԿՑՈՒ ԿՐՈՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ. ՄՈՎՐՈՎՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԸ ԵՎ ԱՇՏԱՐԱԿՑՈՒ ՆԵՂ ՕՐԵՐԸ, ՀԱՐԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՈՌԸ, ԱՇՏԱՐԱԿՑՈՒ ՍԵՐԸ ՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՆԴԵՊ

Հին աշտարակցին շատ աշխատասեր է եղել. այն բազմաթիվ այգիները,
որ այժմ մենք տեսնում ենք Աշտարակի բարձրավանդակ կոչված տեղի վերա
ձգված, ինչպես մի ակնապարար օվազիս, լայնատարած քարքարոտ առապար-
ների մեջ, այն հարուստ ծառատունկը, որով կանաչազարդված է Քասախի՝ գյու-

ղին պատկանած չոր, ապառաժոտ ձորերը, այն հրաշալի առուն, որ յուր հինգ
վերստ տարածության վերա շատ տեղ հոսում է պեղված ու փորված ապառաժ-
ների և անդնդախոր ձորերից հանված, պատաշարներով ամրացրած թումբերի
միջով, այդ բոլորը, բոլորը նրա չարքաշ և քրտնաթոր աշխատանքի արգասիքն
է: Մենք դեռ մեր մանկության օրերով տեսել ենք շատ աշտարակցիներ՝ խպառ
մաշված կամ կիսամաշ եղունգներով, որ, իհարկե, նրանց մշտապես հողի ու
քարի հետ գործ ունենալու հետևանքն է եղել: Տեսեք այն ահագին քարակի-
տուկները, որոնք այսօր ամեն տեղ, այգիներում, սարի նման բարձրացած՝ աչ-
քի են ընկնում. ի՞նչ են դրանք, եթե ոչ նրա ձեռքով հավաքված, հողի միջից
փորված, հանված քար ու խիճ, որոնցով երբեմն բոլորամասն ծածկված են
եղել այգետեղերը: Մեր խոսքը շնիլների մասին է, որոնք այսօր մի-մի բլուր
են դարձել և ծառայում են այգետերերին իբրև թարմ պտուղների չորացնելու տե-
ղեր, չիր անելու, ալանի ու չամիչ չորացնելու տեղեր:

Աշտարակցու աշխատանքը սկսվել է գարնանը, հենց որ ձյունը վեր է կա-
ցել, փետրվար և մարտ ամիսներին, և շարունակվել է մինչև հոկտեմբերի վեր-
ջը, և այդ ինն ամիսների ընթացքում նրա աշխատանքի ամենաեռուն, ամենա-
դժվար ժամանակամիջոցն եղել է այգեկութի ամիսը, երբ նա մոռացած է
եղել իրեն, յուր հագնվելն ու կապվելը, յուր քունն ու մաքրությունը, մի խոս-
քով՝ երբ նա, ինչպես ասում են, գլուխը քորելու ժամանակ չի ունեցել: Նա շարել
է յուր այգու ցանկապատի՝ ձմեռվա ընթացքում քանդված, թափված տեղերը՝
խոռերը, ավլել, մաքրել է ափերը, մարգեր է արել, պատրաստել է ջախերը
լորու՝ պոլոճկի համար, այգու թաղը վեր է ավել, էտել է, արքատը հավաքել,
կոճ արել և արքատատեղում քարել, այգին փորել է, սուղը ավել, խշմարել,
թմբերը քաղհանել, դաղձը խնամքով մաքրել, խոտը հնձել, մայիսից մինչև
սեպտեմբերի 10-ը, 5—7 անգամ, նայելով հողի հատկության, ջրել, կթոցներ
գործել, հնձանը կարգի բերել, առագաստը և տաքարները յուղել և ամեն բան
պատրաստել պտղաքաղի և այգեկութի համար: Հասել է պտղաքաղի ժամանա-
կը: «Գյուղական կյանքն,— ասում է Պռոշյանցն աշտարակցու այդ ժամանակ-
վա աշխատանքի մասին,— եռում է. ամենածեր պապերից և տատմնա-
մերից սկսած մինչև նոր ոտնավորված, թոթովախոս մա-
նուկ՝ ամենքն էլ գործում են. մինն ուռ է քաղում, մյուսը կախանում է
<պահունի տանձը, խնձորը, սերկևիլը>, երրորդը բեռն է բարձում, չորրորդը
քթոցը ոտքի տակին կախ է տալիս, կանայք դեղձ են կլպում, աղջիկներն ալանի
շինում, երեխայքը չորացածներն են հավաքում տնագործ տափակ, ու-
յա մատուցարանների՝ սալաների մեջ, ա՛յս են անում, ա՛յն են անում, ես ի՞նչ
գիտեմ, ի՞նչ են անում, բայց որ ամենքն էլ բանի են, ամենքն էլ շտապում են

ծառապտղից պրծնել, որ կպչեն այգեկութին՝ ամենայն երջանկության գագաթնակետին» (տե՛ս «Ցեղը», գլուխ Դ, էջ 39):

Ժամանել է, վերջապես, և այդ «ամենայն երջանկության գագաթնակետ» այգեկութը: Աշտարակցին առաջ քաղել է կախանացու խաղողը՝ ծիրանագույն, զմրուխտ հալաչին, մարգարտահատ, սպիտակ քիշմիշին, շողակն, շողշողուն ասկիարին, հակինթ, խոշորապտուղ եղնաչքին և այլ գոհարանրման, պահունի, ալվան խաղողի տեսակները և տուն ուղարկել՝ ուռենու ճյուղերի վերա շարելու և կախելու մառանի առաստաղի գերաններից, իբրև ձմեռվա պաշար, հետո բավարարել է սարի գյուղերից եկած բեռնավորին՝ փոխանակելով մեկին-մեկ, մեկին-երկու յուր թարմ խաղողը նրանց բերած ոսպին, սիսեռին, հաճարին և այլ ձմեռվա պաշարեղենին: Եվ այս բոլորը վերջացնելուց հետո միայն ձեռնարկել է բուն այգեքաղին. նա մի կողմից քաղել է խաղողը, մեծ կթոցներով հնձանի կտուրը հանել և երդկից ուղիղ թափել առագաստը, որտեղ տրորել են, և մույն առու դարձած գնացել, թափվել է տաքարները, մյուս կողմից՝ տաքարներում շատ թե քիչ նստած, պարզված շիրան կամ, ինչպես ասում են՝ քաղցուն, լեշքերով (լեշկ), այսինքն՝ հորթի անկպրել տկերով, կրել է յուր շիրատունը և լցրել կարասները, երրորդ կողմից էլ կանայք են առել իրենց բաժին քաղցուն, մաթ եփել, ամանել և շփոթ պատրաստել, պոպոքի, նշի, սեխի կորիզի շարերը թաթախել, շուջուխ արել: Մնացել է խաղողի մնացորդը՝ կճճեռը, որից աշտարակցին սովորություն է ունեցել օղի քաշել. նա անմիջապես, հենց այդտեղ էլ, այգում սարքել է յուր օղեքաշության կաթսաները և մի-երկու օր էլ, գիշերցերեկ տանջվելով՝ քաշել, վերջացրել, փիփրան օղին տկերը լցրել, տուն ուղարկել և հետո արդեն այգին թաղել, հնձանի դուռը փակել և ընտանիքով տուն վերադարձել, որտեղից, դրանից մի երկու-երեք ամիս առաջ, այգին էր փոխադրվել:

Թե ի՞նչ օրի է եղել և ի՞նչպիսի կացության մեջ աշտարակցին յուր եռուն աշխատանքի օրերին, յուր այդ չարչարանքի, բայց երջանիկ օրերին, երբ հավաքել է յուր ամբողջ տարվա չարքաշ աշխատանքի արդյունքը և ապահովել յուր համեստ, նահապետական կյանքը մինչև հաջորդ այգեկութը, այդ էլ կարելի է տեսնել Պռոշյանցի այդ մասին մեզ թողած մի նկարագրից, որից ավելորդ չենք համարում մենք այստեղ քաղվածորեն մի-երկու հատված մեջ բերել:

«Այգեքաղն սկսած օրից մինչև այգեթաղն ու արաղները քաշելը աշտարակցուն միայն աշտարակցին կճանաչի: Նրանց սևացած, քաղցուտ երեսին այնքան փոշի է նստել, որ երեսը չի զանազանվիլ նրանց հագի արխալղահըննից: Արաբստանից եկածներն էլ էս օրին չեն լինիլ. նրանցն՝ իրենց բնական

սևությունն է և մաքուր, իսկ սրանցը՝ տարթակալած կեղտ է... Ամեն մի աշտարակցի առավոտը վաղ՝ զարթնելուն պես՝ յուր առաջին պարտավորությունն է համարում ձիուն ջուրը տանելուս, ինքն էլ մի քանի անգամ մեր անմահական առվի վերա չուփ տալ, երեսը լվանալ, գտակով սրբել, երեք անգամ խաչհանել ու յուր ընտանիքի տարեկան ապրուստ ճարող ձիու քաղցուտ ու սևացած փալանի մեջ ոտքերն երկու կողմից կախ քցել ու գնալ յուր մշակությունին... Նա ինքն էլ մեղավոր չի. առավոտենց մինչև երեկո քաղցուի ու փոշիների մեջն է, ի՞նչպես անի, որ բարձելու ժամանակը լեքշի պաճախն (ոտքը) երեսին չկպչի: Է՜հ, ի՞նչ կա՝ որ փոշի ու քաղցու է, կուպր հո չի՞, թող մինչև երեկո երեսին մի քանի շապիկ կապի, բանթող անելուց հետո՝ քնելու համար երկու չափ տալումն է՛լի էն խտակն է, է՛լի էն գեղեցիկ տղամարդը: Շորերի համար երբեք չենք կարող նրանց մեղադրել, էն կեղտոտ արխալղահինն է, որ դիմանում է, թե չէ էնքան քարեքար դիպչելուն, էնչափ բեռը վերցնել վեր դնելուն ի՞նչ կդիմանա, խեր ու խաշուն (օգուտը) էս քրքրտած արխալղի մեջն է: Միջոցը շատ երկար չի, ամենաշատը՝ երկու ամիս. Հոկտեմբերին շնորհ բերեք Աշտարակ, ու կտեսնես, թե այն կեղտոտ մուկն ի՞նչպես պարզ և մաքուր հաղնված է, ջանին էլ որ ձեռք տաս, մախմուրի պես կակուղ է» (տե՛ս «Կովածաղիկ», էջ 331—332, հրատ. 1878)[17]:

Բաղնիքի հետ միասին, մինչև վերջին ժամանակներս, Աշտարակը չի ունեցել և կանոնավոր լուսավորություն. գյուղամիջում այստեղ-այնտեղ միայն տնկված են եղել մի քանի լապտերասյուներ, որոնց վրա ամրացրած նավթի լապտերները աղոտ լույս են սփռել խավար անկյուններին: Ներկայումս գյուղը լուսավորվում է էլեկտրական լուսավորությամբ, որի համար շինված են երկու էլեկտրակայան, որոնցից մեկն ունի 50 ձիու ուժ, մյուսը՝ 16*:

---

17 Այստեղ ավելորդ չենք համարում նկատել, որ Աշտարակը բացառություն չի կազմել Արարատյան դաշտի մյուս հայ գյուղերից, որոնք մաքրության տեսակետից հնում շատ ետ են մնացած եղել: Նրանք բաղնիքներ չեն ունեցել. կանայք ինքեանք լողացել ու լողացվել են և լողացրել ու լվացել են իրենց երեխաներին տներում, մեծ կոնքերի մեջ (թեշտեր), իսկ տղամարդիկ, կարելի է ասել, միայն իրենց փեսայության օրերում են բաղնիքի երես տեսել, իսկ, սովորաբար, անլվա են մնացել, եթե միայն ամառները երբեմն չեն լողացել գետի քյուլերում (լճացած տեղերում): Այդ հայ գյուղերի անկուլտուրական կյանքի ամենացայտուն երևույթներից մեկն է եղել, և Մարիետա Շահինյանը շատ սխալվել է, որ ներկայումս Աշտարակում գոյություն ունեցող բաղնիքի շինությունը հին է համարել (տե՛ս նրա «Дневники, 1917—1931», էջ 158): Այստեղ վերջերս միայն, 1907—8 թվերին, Դոնդարենց Առաքելը (Վարդազարյանց) և Աղամենց Հակոբը շինել են, իհարկե, շահագիտական նպատակով, եղած բաղնիքը՝ նախկին Մելիքի բախչի տեղում, որ ներկայումս, խորհրդային իշխանության օրերով, գյուղի սեփականությունն է դարձել և բանում է կանոնավորապես:

*Ըստ ժամանակակից ավանդության (որ մասամբ շեղվում է բուն իրողությունից)՝ Աշտարակում առաջին բաղնիքը կառուցվել է 1901 թվականին, Արշակ Զաքարյանի նախաձեռնությամբ և Գաբրիել Վարդազարյանի նյութական աջակցությամբ: Ժողովուրդն այն կոչում էր «Աղքատների բաղնիք» (Վ. Առամյան, Վերադարձ, Ե., 1983, էջ 76—85):— Պ. Հ.:

Ներկայումս Աշտարակն յուր այգիներում այլևս հնձաններ չունի. վա-
ղուց արդեն խաղողն այլևս չի տրորվում այգիներում, այլ քաղի ժամանակ
մի կողմից խաղողը քաղվում է, մյուս կողմից էլ՝ ձիերով, էշերով և սայլերով
կրվում է գյուղ, որտեղ տներում, ամեն տեղ շինված են առագաստներ ու
տաքարներ։ Այդտեղ խաղողը տրորվում, մզվում ու թափվում է տաքար-
ները, և քաղցուն անմիջապես կախկալներով (դույլ) փոխադրվում է շիրա-
տները և լցվում է պատրաստված տակառների մեջ։ Նախկին հնձանների տեղ
ներկայումս այգիներում շինվել են երեքպատանի երեսբաց, թեթև, ժամա-
նակավոր շինություններ՝ դագաներ, որոնց մեջ պտղաքաղի ու այգեկութի
ամիսներին այգիները փոխադրված այգետերերը պատսպարվում են անձրև-
ներից։

Նախկին հնձանների մնացորդներից, որոնք դեռ տեղ-տեղ երևում են այ-
գիներում, կարելի է տեսնել, որ դրանք եղել են պարզ, մեկ հայտնի փայտա-
ծածկ շինությունները, որոնց մեջ մի կողմը շինված են եղել առագաստը և
տաքարները, մյուս կողմն էլ՝ սովորական օջախը։ Հնագույն ժամանակները
այդ պարզ, փայտածածկ հնձանների տեղ էլ եղել են ուրիշ տեսակ շինու-
թյուններ, որոնք կոչվել են ճնձանաբագեր։ Թե ի՞նչ տեսակ շինություններ
են եղել դրանք, դժվար է ասել, որովհետև դրանցից և ո՛չ մի նմուշ կանգուն
վիճակի մեջ մեզ չի հասել. մի տասնյակ տարի առաջ դեռ կարելի է եղել
տեսնել դրանց բեկորները՝ թափված այս կամ այն այգու մի խուլ անկյունում
և ծածկված մացառներով, թփերով, հաճախ և հաստաբուն, բազմաճյուղ և
ստվերաշատ թեղի ծառերով, որոնք և բուսած լինելով այդ ավերակների մեջ,
կարծես, իրենց հովանավորության և պահպանության տակ են առած եղել
այդ հնության վերջին մնացորդները։

Թեղին (կարաղաչ), Աշտարակի և Արարատյան դաշտի մյուս այգեշատ
գյուղերի ավանդությամբ՝ սուրբ ծառ է համարվել, և ամենքն էլ իմացել են,
որ նրան ձեռք տալ, նրա ճյուղը կտրել չի կարելի, որովհետև, եթե փորձեին
կտրել, արյուն կբխեր։ Թեղին Թուխ Մանուկի տնկածն է, և հենց ինքը՝ թեղին
էլ Թուխ Մանուկն է. ծառի փշանման, բարակ ոստերը նրա երակներն են,
տերևները՝ նրա գզգզված մազերը։

Ավանդությունն ասում է, որ թրքական գյուղերից մեկում երբեմն եղել
է մի դաժան, մոլեռանդ մոլլա, որ, բացի Մահմեդի կրոնքից, ուրիշ ոչինչ
չի ճանաչել, և այդպիսի մոլեռանդության հոգով էլ կրթել, մեծացրել է յուր
միունճար որդուն, որին անչափ սիրել է։ Բայց որդին մեծանալով և կարդալով
Ավետարանը, հավանել է Քրիստոսի քարոզածներին և ընդունել է քրիստոնե-
ությունը ու թողել մահմեդականությունը։ Հայրը փորձել է, նախ, մեղմաբար
համոզել՝ ետ կասեցնել նրան մոլորությունից, բայց չի հաջողել, ուստի և

զայրացել է և սկսել սպառնալ։ Եվ երբ այդ էլ չի օգնել, նա մերկացրել է
սուրը, հարձակվել նրա վերա. որդին խույս է տվել նրանից, փախել և հասել
մի հնձանաբագի, որտեղ նրա հետևից հասել է հայրը և սուրը վրա բերել,
որ սպանի, բայց որդու՝ աստուծուն արած խնդրվածքի հետևանքով, ինքը
փոխվել է թեղի ծառի, որի ճյուղերից մեկին էլ կպել է հոր վրա բերած սուրը
և ճյուղի գերծված տեղից արյուն բխեցրել, մի սև, չորացած արյունով գերծ-
ված, որ, իբրև թե, այսօր էլ դեռ երևում է ամեն մի թեղի ծառի՝ սրի կպած
ու կտրած տեղում։

Մի ուրիշ ավանդությամբ էլ հնձանաբագի ավերակը համարվել է օձի
թագավորի պալատ, որի դաղաչափ, քառանկյունի, կոփածո քարերի ճեղքե-
րի մեջ, իբրև թե, ապրել է նա յուր նազիր-վազիրներով, յուր անթիվ, ան-
համար զորքով և որտեղից պատերազմ է գնացել նա ուրիշ օձի թագավոր-
ների վերա, Արագածի ստորոտը՝ Ամբերդի ձորը, և Մասսի վհերը։ Այդ պա-
լատի դուռն էլ եղել է մոտակա քարակիտուկի տակից, դուռը, որի առաջ,
իբրև թե, սիրել է թագավորն ամառվա շոգ, կիզող օրերին գալարվել բազ-
մաթիվ կուտապ եկած, կանգնաչափ օձերի մեջ և խաղացնել յուր անգին
շողակը՝ հուլը, հանելով այն լեզվի տակից, տեղավորելով եղջյուրների մեջ-
տեղը և վեր-վեր ձգելով ու բռնելով։

Այդ ավանդություններն են եղել, որ, անկասկած, նպաստել են հնձանա-
բագերի մնացորդների բեկորների՝ դարերի ընթացքում պահպանվելուն։ Որ
հնձանաբագն եղել <է> Արարատյան այգիների նախնական հնձանն յուր
բուն իմաստով, այդ մասին, կարծում ենք, տարակուսություն չպետք է որ
լինի, բայց թե դա ի՞նչ տեսակ շինություն է եղել, ինչո՞վ է տարբերվել մեր
օրերի հնձաններից և ինչո՞ւ է կոչվել ճնձանաբագ և ո՛չ պարզ՝ ճնձան, այդ
մենք դժվարանում ենք ասել։

Նոյեմբեր, դեկտեմբեր, հունվար և փետրվարի կեսը աշտարակցու հա-
մար հանգստանալու, զվարճանալու ամիսներ են եղել. նա աշնանն արդեն
յուր գյուղական բարիքը հավաքած լինելով յուր տունը և ձմեռվա պատ-
րաստությունն էլ բոլորամասն տեսած լինելով՝ այդ ձմեռվա ամիսներին
լիակատարորեն հանգստացել է, անընդհատ հյուրասիրվելով յուր ազգական-
ների, բարեկամների տներում և ինքն էլ հյուրասիրելով նրանց յուր տանը։
Նրա սեղանի վերա շատ կանուխ է հանվել նոր գինին, որ դեռ գինի էլ չի
եղել, այլ մաճառ, այսինքն՝ կծպծան, քաղցր-մեղցր, պղտոր քաղցուն, որ դեռ
յուր եռալու, իսկական գինի դառնալու պրոցեսի, կացության մեջ է եղել։
Բայց որ ախորժելի է եղել գործածության համար և կտրուկության տեսա-
կետից էլ իսկական կռռած գինուց ոչ պակաս ազդեցություն արել խմողների
վերա։ Գինին մի փոքր ուշ է կտավել, երբ եռը բոլորովին դադարել է, և
քաղցուն կարասների մեջ նստել, պարզվել. նստած, պարզված մասը զգուշու-

թյամբ երեսից քաշվել, բաժանվել է նստվածքից, լցվել առանձին կարասի մեջ, բերանը ծեփվել ու պահվել, իբրև արդեն հասած, պատրաստված գինի, իսկ նստվածքից՝ դիրտից, որ կոչվել է բռոր, օղի քաշվել, օղի, որ յուր համ ու հոտով ավելի թանկ է գնահատվել, քան կնճեռից քաշածը: Ահա՛ հենց այդ պարզված մասի քաշելու, դիրտից բաժանելու և մի կարասից մյուսի մեջ լցնելու գործողությունն է, որ կոչվել ու կոչվում է գինու կտռումն:

Աշտարակի գինին, ինչպես հայտնի է, շատ կտրուկ է և խմելու համար, իբրև սեղանի գինի, ոչ էլ այնքան ախորժելի, որի հետևանքով էլ հին աշտարակցին յուր հատուկ գործածության համար հաճախ պատրաստելիս է եղել ավելի մեղմ, նուրբ ու քաղցր գինի որ մզված լինելով խուրաճների խաղողից, կոչվել է խուրաճի քաղցր գինի:

Աշտարակցու անունը դուրս է եկած, հռչակված՝ գինեխում, գինեխում աշտարակցի, բայց մեզ թվում է, որ այդ այնքան էլ ճիշտ չէ. շիրակեցիք ու փամբակեցիք ավելի շատ են գործածել Աշտարակի գինին ու օղին, քան ինքյանք աշտարակցիք. նա, ճիշտ է, խմել ու խմում է, նրա սեղանն առանց գինու և օղու չի եղել, բայց նա խմել է չափավոր, արբեցողությունն աշտարակցուն միշտ անծանոթ մոլություն է եղել: Հին աշտարակցին սիրել է ուրախանալ, զվարճանալ, բայց նրա այդպիսի ուրախություններն ու զվարճությունները երբեք էլ խուժանական բնույթ չեն կրել, այլ համեստ, անմեղ, նահապետական-ընտանեկան. դրա համար նա ունեցել է շատ առիթներ՝ եկեղեցական մեծ տոները, հարսանիքները, ուխտագնացությունները, որոնք ամենքն էլ կատարվել են պապենական սովորություններով և մեծ հանդիսավորությամբ: Աշտարակը, ինչպես ասել ենք, հին գյուղ է և յուր բնակչության բնիկ տարրը վաղեմի ժամանակներից պահպանած, ուստի և, բնականապես, ավելի հարազատությամբ ու մանրամասնությամբ է պահպանած եղել հնագույն, բնիկ հայկական սովորությունները, ծեսերը, հավատալիքները, քան մյուս գյուղերը, մի հանգամանք, որ շատ նպաստել է կենցաղագետ Պռոշյանցին այնքան հարազատությամբ հավաքելու դույն սովորույթներն, ամփոփելու յուր գրքերի մեջ և մեզ ավանդ թողնելու:

Արժանին առանձին ուշադրության, այդ սովորույթների մեջ, այն է, որ դրանց մեջ պահպանվել ու մեզ են հասել շատ շահեկան տարրեր՝ վերաբերյալ մեր հեթանոսական կյանքին ու, հատկապես, մեր հին կյանքին, մեր հեթանոսական պաշտամունքին, տարրեր, որոնցով, գուցե, հնարավոր լինի պարզաբանել մեր այդ հին կուլտի պատմության այս կամ այն, մինչև օրս մութ մնացած կետերը և լրացնել նրա թերիները: Ի՞նչ է, օրինակի համար, համբարձման եկեղեցական տոնի հետ կապված, վիճակի, ծաղկաքաղի և ծաղիկ գովելու արարողության հետ կատարված և, որքան մենք գիտենք,

միայն Աշտարակում պահպանված՝ հավկիր շուռ տալու, սկլա՛-սկլա՛ ասելու, զգեստի մասերը հետզհետե հանելու գործողությունը, եթե ոչ մեր հին, հեթանոսական կյանքի, գուցե և մեր հին կուլտի, արարողություններից մինը:

«Վարդիթերը,— ասում է այդ մասին Պռոշյանցը,— մեջտեղ բերուց ծաղիկը, որ հիքումը գովել էին՝ ծաղկամերն էլ մեջտեղը դրած: Հիմի կարգին նստեցին նորից նոր գովիլ. էն թավը չէր, օրենքը հիմի ա... Հետո <յալլի-բաշի> խանումը սկսեց հավկիրը շուռ տալ: Տեփուրն առավ ձեռը ու շուռ տալով ասեց.

Սկլա՛-սկլա՛ պատին տո՛ւր, հավկիրը շուռ տո՛ւր,
Վախում եմ քնիմ, քունս տանի, շորսավս տանիլ տամ:

Մին էլ շուռ տվուց տեփուրն ու ասեց.

Սկլա՛-սկլա՛ պատին տո՛ւր, հավկիրը շուռ տո՛ւր,
Վախում եմ քնիմ, քունս տանի, շալս տանիլ տամ:

Ամեն մի հետ տեփուրը շուռ տալումը մի հետ սկլա էր ասում, ու գլխաշորիցը բռնած՝ ընչանք մաշկները մի-մին տանիլ տալի. վերջինն էլ ասեց.

Սկլա՛-սկլա՛ պատին տո՛ւր, հավկիրը շուռ տո՛ւր,
Վախում եմ քնիմ, քունս տանի, մաշկներս տանիլ տամ»:

(Տե՛ս «Սոս և Վարդիթեր», գլուխ ԺԲ, էջ 106—107, Բ հրատ., Երևան, 1887):

Արժանի է ուշադրության և հին աշտարակցու բարեկենդանի բերանփակեքի սովորույթը, որի մեջ պարզորեն ու բնորոշ գծերով արտահայտվել է նրա նահապետական կյանքի տոհմական կազմակերպությունը, որ պահպանվել ու հարատևել է և ռուսաց տիրապետության օրերով, դեռ երկար ժամանակ: Բուն բարեկենդանի կիրակի երեկոյան, երկու շաբաթվա կերուխումից, ուրախություններից, զվարճություններից ու գժություններից հետո, որոնք կատարվել են հրապարակով, գյուղամիջում և Ազգենց կալում, գյուղը հանգստացել է, և ամեն մարդ յուր ծանոթ-բարեկամին մնաս բարև է ասել ու մտել յուր տունը, յուր հարկի տակ: Սակայն այդ հանգստությունն եղել է միայն արտաքուստ, իրոք դրանք, այդ ուրախություններն ու զվարճությունները, չեն վերջացած եղել, այլ շարունակվել են, միայն որ նրանք փոխադրվել են տները և փոխել իրենց աղմկալից բնույթը, ու դարձել համեստ, անմեղ, ընտանեկան զվարճություններ: Պապերի ու տատերի՝ տոհմի այդ զառամյալ ազգապետ զույգերի շուրջը, նրանց հարկի տակ, հավաքվել են նրանց ազգուտակը, բերելով իրենց հետ, կապոցներով, իրենց տներում բարեկենդանից մնացած ուտելիքները, որովհետև այդ երեկո տոհմի անդամ ընտանիքներից և ոչ մեկի տանը օջախ չպիտի վառվեր, ծուխ չպիտի դուրս գար, բացի ազգապետի տանից, որտեղ պիտի օջախը վառեր, և այն՝

միայն բերանփակեքի ձվածեղը պատրաստելու համար։ Այդտեղ նրանք համբուրել են ազգապետ զույգերի ձեռքերը, շնորհավորել են նրանց բարեկենդանը, բաց են արել իրենց կապոցները, խառնել իրենց բերածները նրանց տանն եղածի հետ, սեղանակից եղել, տատերի բաժանած տնային աղանդերով՝ կախանով, փշատով, շուջուխով և ալանիով, բերանները քաղցրացրել, ասել, խոսել, կատակներ արել, զվարճացել և մի-մի կտոր ձվածեղով բերանները փակելուց հետո, առել ազգապետների օրհնությունը ու ցրվել, գնացել իրենց տները։ Դրանով նրանք տարենը մին վերանորոգած ու ամրացրած են եղել իրենց կապերը բուն տոհմային տան հետ, որտեղից նրանք հեռացած են եղել տարիներով առաջ, կազմած առանձին տներ, ընտանիքներ, տնտեսություններ և պապենական սրբազան օջախից տարած պեծուկեծով վառել իրենց նոր օջախները։

Հետաքրքրական է եղել և Ուտիս տատին ճամփու դնելու և Պաս պապին ճամեցեֆ անելու արարողությունը, որ կատարվել է նույն բուն բարեկենդանի կիրակի օրն, առավոտյան։ Գյուղի իշխանները հավաքվել են տանուտերի տունը և այդտեղից դափ ու զուռնայով, պարելով ու ծափ տալով գնացել Աղլենց կալը, որտեղ արդեն զարդարված, զինված ու ձևավորված՝ վաղ առավոտից կանգնած է եղել գյուղի կտրիճների խումբը, որ հրացանների համազարկով ողջունել է նրանց գալուստը և խլացրել դափ ու զուռնայի ձայնը։ Տանուտերը պատվիրել է կտրիճներին, որ շուտով Ուտիս տատին տանեն Ուլատխտիկ կռնդի գլուխը, այնտեղ բաց թողնեն, որ երթա, յուր արևի ձենն ածի պասակեր թուրքերի մեջ, ինքյանք էլ այնտեղ մի լավ ուրախություն անեն, որի համար արդեն հարկավոր պատրաստությունը տեսած է, և համեցեք անեն Պաս պապին, որ գա, մյուս օրը առավոտը ոտքերը կախ քցի երդիկներիցը։ Երիտասարդները ճշտությամբ կատարել են տանուտերի պատվերը. Նրանք չափ են ձգել ձիերը, հասել Ուլատխտիկի տակը, որտեղ կանգնել մի շարքի և մրցել, թե ո՞վ շուտ և առաջ կհասնի սարավանդի գլուխը, և ջիրիդ խաղալով տեղ են հասել և նստել, վայելել պատրաստված սեղանը, մինչև երեկո ուրախություն արել և երգելով ու հրացան արձակելով վերադարձել, շնորհավորել իշխանների Մեծ պասը, և ամեն մարդ քաշվել, գնացել է յուր տունը։

Երկուշաբթի առավոտյան, ծեգը ծագելուն պես, գյուղի պառավ տանտիկինները վեր են կացել, շինել ակլատիզը, որ պիտի փոխարինեներ երկակյական Պաս պապին, և իրենց ձեռքով կախել երդիկներից՝ վեր կացնելով տնեցիներին, շնորհավորել նրանց Մեծ պասը, որ արդեն եկել, թեավորված կախ էր արել ոտքերը երդկիցը։

Այս և սրա նման բազմաթիվ սովորույթներ ու արարողություններ՝ ցիրուցան պահպանված մեր եկեղեցական ծեսերի ու ժողովրդական սովորությունների մեջ, ինչպես, օրինակ՝ հին Աշտարակի հարսանիքի ծեսերի մեջ,

կրկնում ենք, անկասկած, մեր հեթանոսական հավատալիքների մնացորդներն ու մեր հին պաշտամունքի տարրերն են, որոնք չպետք է խուսափեն մեր ուսումնասիրողների աչքից. պետք է միայն կարողանալ ջոկել հեթանոսականը քրիստոնեականից, որ մի դեպքում ակներև է, մյուս դեպքում՝ այնպես մերված եկեղեցականի հետ, որ դժվար է նշմարել, թե ո՞րտեղ է սկսվում եկեղեցականը ու ո՞րտեղ վերջանում հեթանոսականը։

Հին աշտարակցին կրոնասեր և եկեղեցասեր է եղել. նա ունեցել է մնագյուղում տասը եկեղեցի և մատուռ, որոնցից ներկայումս կանգուն են մնացել միայն երկուսը՝ ս. Մարիանեն և Կարմրավորը, կիսականգուն են՝ Ծիրանավորը և Սպիտակավորը, բոլորովին ոչնչացել են՝ Ամենափրկիչը, Կյուրակեն, ս. Կարապետը, Թուխ մանուկը և Անապատը, և մեկը վերաշինվել է՝ ս. Սարգիսը։ Սրանցից զատ, նա ունեցել է գյուղում և մի այլ սրբություն՝ մեր հիշած Տուխոնց ավետարանը*, որին նա միշտ ուխտ է գնացել և հավ ու աքաղաղ մատաղ արել։ Աշտարակցին հաճախել է և շրջակա գյուղերի վանքերն ու եկեղեցիները նրանց ուխտի օրերին՝ Էջմիածին, Օշական, Մուղնի. Հանավանք, Սաղմոսավանք, Փարպի, Ծաղկեվանք, Կոշ և այլն. Նա խստիվ պահել է ոչ միայն բոլոր պարտադիր համարված պասերը, այլև կամավորներ՝ ս. Կարապետի և արռո կոչված պասերը. Նա անհրաժեշտորեն, տարին երկու անգամ, հաղորդվել ու ճաշակվել է։ Աշտարակցի փեսացուն յուր հարսանեքի նվիրական համարված օրերին, առանց Մուղնի և Կարմրավոր ուխտ գնալու, պսակ չի գնացել, առանց թագը վերցնել տալու, առագաստ չի մտել։ Աշտարակը երաշտ ամառները մեծ հանդեսով բերել է Մուղնուց ս. Գևորգա մասունքը, գյուղովի ընդառաջ գնացել, մողի, աչառ (արջառ) մատաղ մորթել և առատաձեռն նվերներ բաշխել վանքին և մասունք բերող վանահորը և այլն և այլն։

Սակայն յուր այդպիսի կրոնասիրությունն ու եկեղեցասիրությունը հին աշտարակցին յուրահատուկ եղանակով է հասկացել. Նա հաճախել է եկեղեցի ընդհանրապես և գլխավորապես ավագ տոներին և եկեղեցիների ուխտերին, իսկ տարվա մյուս օրերին եկեղեցի հաճախողները եղել են միայն սակավաթիվ ծերունի տղամարդիկ և պառավ կանայք, մի հանգամանք, որ առիթ է տված եղել գյուղի մասին կազմվելու հետևյալ բնորոշ երկտող ասացվածը.

Աշտարակ—ճամփեն բարակ,
Ո՛չ ժամ ունի, ո՛չ պատարագ։

Ս. Գևորգի մասունքը ծնկաչոք և արտասվալից աչքերով ընդունելով, թափորներ ու խաչլվա անել տալով և խնդրվածքներ անելով անձրև գալու

* Այժմ պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, ձեռագիր № 6436— Պ. Հ.։

մասին, նույն աշտարակցին միաժամանակ նույն նպատակով և Նուրին է շինել և կոներից բռնած, տնետուն ման ածել, գլխին ջուր ածել տալով, Նուրինի բաժինը՝ յուղ ու բրինձ, հավաքել ու երգել.

Նուրին, Նուրին էկել ա,
    Աչքրա հուրին էկել ա,
Շիլա շապի՛կ հաքել ա,
    Կարմիր գոտի՛կ կապել ա:
Եղ բերե՛ք, պորտը քսենք,
    Ջուր բերե՛ք, գլխին ածենք.
Մեր Նուրինի փայը տվե՛ք,
    Ուտենք, խմենք, քեֆ անենք:

(«Սոս և Վարդիթեր», էջ 97—98):

Իսկ ի՞նչ է եղել այդ փայտի վերա հնաշորեր հագցրած, պաճուճապատանքի պես շինած Նուրինը, եթե ոչ, հավանորեն, ջրի հետ կապ ունեցող մի բարձր էակի կամ հոգու ձևակերպություն, որ, հայ ժողովրդի հիշողության մեջ հեռավոր հեթանոսության ժամանակներից պահպանված հավատալիքով, կարող էր հարկավոր ժամանակ անձրև իջեցնել, որի համար և ժողովուրդը, նրան ի ձոն ու ի հաճույս, պետք է ջուր ցողեր նրա վերա և յուր ունեցածից նրան ընծայաբերություն աներ:

Հին աշտարակցին, ինչպես մենք տեսանք մեր պատմության ընթացքում, շատ նեղ օրեր է տեսել յուր կյանքում, բայց նրա ամենանեղ օրերն եղել են հարկահավաքության և կոռ ու բեգյարի ժամանակները: Հնագույն ժամանակների մասին մենք տեղեկություն չունենք, իսկ սարդարության ժամանակների մասին մենք արդեն խոսել ենք: Ռուսաց տիրապետության օրերով այդ նեղությունները, եթե չեն էլ ավելացել սարդարականի համեմատությամբ, այնուամենայնիվ չեն էլ պակասել: Եվ այդ՝ ո՛չ թե այն պատճառով, որ հարկերն ու պարտադիր ծառայությունները այնքան շատ ու ծանր են եղել, որ ժողովրդի վճարունակությունից ու կարողությունից վեր են եղել, ո՛չ, այլ որ դրանք, այդ հարկերը հավաքվել են, կոռն ու բեգյարը դրվել և ի կատար են ածվել ապօրինությամբ, կաշառակերությամբ:

Այդ կողմից, նամանավանդ և հատկապես, դժվար է եղել ժողովրդի վիճակը մովրովների կառավարության շրջանում, մովրովների, որոնց կամայականությունը, ապօրինությունը և կաշառակերությունը չափ ու սահման չեն ունեցել: Դրանք, այդ մովրովները, սովորաբար, արատավոր անցյալ ունեցող ...մարդիկ են եղել, որոնք եկել են Անդրկովկաս հատկապես շահվելու նպատակով, որովհետև այդտեղ այդ ժամանակները Ռուսաստանից եկած աստիճանավորները և՛ ավելի մեծ ռոճիկ են ստացել, և՛ ծառայության ավելի արտոնություններ վայելել, ևս և՝ համոզում ու հավաստիացում են ունեցել,

որ Անդրկովկասը, իբրև աչքից ու խիստ հսկողությունից հեռու մի ծայրագավառ, կարող էր ավելի լայն ասպարեզ բանալ իրենց առաջ գռփողական շահատակությունների համար: Դրանք անսկզբունք, անիդեալ մարդիկ են եղել, դրանք չեն ճանաչել ո՛չ հասարակաց օգուտ, ո՛չ պետական շահ, ամեն բան դրանց համար պտույտ է եկել անձնականի շուրջը, ամփոփված է եղել անձնականի մեջ: Դրանց թվում եղել են, իհարկե, և տեղացիներ՝ հայեր, թուրքեր և վրացիներ, բայց դրանք էլ ոչնչով չեն տարբերվել իրենց ռուս ընկերներից. դրանք էլ նույն հոգին են ունեցել, նույն կառավարչական սիստեմի սարուկն ու ծառան են եղել, ինչպես, օրինակ՝ մեր հիշած Քյարխանովը, որի կաշառակերության համբավը տարածված է եղել յուր կառավարած գավառակից էլ դուրս, շա՜տ հեռուները: Այդ գավառակապետ-մովրովների մեջ էլ, իհարկե, պատահել են և՛ մաքուր, և՛ բարեխիղճ, և՛ ազնիվ ձգտումների տեր անձեր, ինչպես, օրինակ՝ բանաստեղծ Պետրոս Մաղաթյանը (Սեյաղը)[18], բայց դրանք անհատներ են եղել. դրանք՝ այդպիսինները, երկար էլ չեն մնացել իրենց մովր<ով>ության պաշտոնի մեջ, դրանք կամ շուտով հեռացվել են, կամ ինքեանք՝ չտոկալով իշխող կարգերին, թողել, խույս են տվել վատառողջ միջավայրից:

Նահանգի վարչական կենտրոնը Թիֆլիսն է եղել, և, բնականապես, այդտեղ նստած նահանգապետն էլ, եթե ցանկացել էլ է, չի կարողացել հարկավոր լուրջ ու խիստ հսկողությունն ունենալ հեռավոր Երևանի վերա, որից և օգտվել են տեղի գավառապետները և իրենց խնամքին հանձնված երկրամասում շատ բան տնօրինել, կատարել իրենց ուզեցածի պես, հակառակ օրենքին: Դրա համար գավառում ստեղծված է եղել վարչական մի այնպիսի կուռ, սեղմ ցանց, որ ո՛չ մի հանցագործություն, ո՛չ մի զեղծում, ո՛չ մի ապօրինություն՝ կատարված պաշտոնյաների կողմից, չեն դուրս սպրդել այդ ցանցից և երևան եկել, եթե գավառի տերը՝ գավառապետը չի ցանկացել: Վարչական օղակներն ամենքն էլ իրենց շահերով սերտ կապված են եղել իրար հետ. մեկի շահը մյուսինն է եղել, մեկի կատարած ապօրինությունը վարագուրվել է մյուսի կողմից, մեկի զեղծումը ծածկվել է մյուսի վճռով: Կաշառքը մութ տեղը լույս է տվել. գյուղերի գզիրները առել են գյուղացիներից և տվել են տանուտերներին, դրանք էլ իրենց ստացածից բաժին են հանել մովրովների

---

18 Այդ Պետրոս Մաղաթյանը մոլրով է եղել Պերճ Պռոշյանցի՝ Աշտարակում ուսուցիչ եղած ժամանակ: Նա մի ամառ յուր գիվանով ամառանոց եկած լինելով Աշտարակ՝ առիթ է ունեցել կարդալ նրա մի խնդրատուի համար գրած խնդիրքը և շատ հավանել, և պահանջել է, որ այնուհետև ամենքն էլ իրենց խնդրագրերը նրան գրել տան. Նա մինչև իսկ հրավիրել է նրան յուր մոտ, ծանոթացել է նրա հետ և առաջարկել, որ նա յուր մոտ ծառայության մտնի, բայց Պռոշյանցը հրաժարվել է (այս մասին տե՛ս «Հուշիկներ», գլուխ ԽԱ, էջ 193):

մարդկանց կամ, ինչպես ասել են, նրանց ռուռճեռֆին, դրանք էլ՝ մոլրով-ներին, այդ վերջիններն էլ առյուծի բաժինը հատուցել են գավառապետներին, իսկ ամենքը միասին գռփել, զրկել, կողոպտել են գյուղացիներին, որքան կարողացել են, որքան հնարավոր է եղել տվյալ պայմաններում:

Այսպիսի հանգամանքներում ժողովուրդը միանգամայն անզոր ու անօգնական է եղել. նա չի կարողացել ձայն, ծպտուն հանել, հակառակ դեպքում նա յուր մեջքի վերա փորձած կլիներ տանուտերի ճկուն թրլխու և մոլրովի յասավուլի մտրակի հարվածները, զգացած կլիներ մոլրովական դժոխային բանտի համը, բանտի, որ ժողովրդի բերանում ծակ անունն է կրել, վայելած կլիներ Երևանի հռչակավոր բերդի զնդաններից մեկում փակված լինելու փառքն ու պատիվը, որոշ դեպքերում արժանացած և Սիբիրի սառնամանիքին: Զարմանալի չպետք է լինի, որ Սիբիր անունը ահռելի է եղել ժողովրդի համար, սիբիրական կանեմ սպառնալիքը ստիպել է նրան ամեն բանում կատարել իշխանավորի հրամանը: Թե ի՞նչ կարգեր են եղել այդ մոլրովների ժամանակները, ի՞նչ է եղել ժողովրդի կացությունը նրանց ձեռքին, նրանց կաշառակերության և գռփողական սխրագործությունների շնորհիվ, կարելի է լիակատարորեն գաղափար կազմել Պռոշյանցի «Հացի խնդիր» գրվածքից, որի մեջ խոշոր գծերով քաշված է այդ ժամանակաշրջանի Աշտարակի կյանքի պատկերը յուր առօրյա չարն ու բարիքով, իբրև մի նմուշ Արարատյան դաշտի բոլոր գյուղերի կյանքի:

Եթե Պռոշյանցի գրածների, չասենք՝ կեսը, այլ կիսի կեսն էլ ճիշտ ու անսխալ լինի, այդ էլ արդեն բավական է, որ մենք լիովին հասկանանք, թե ի՞նչ է կատարվել Աշտարակում և մյուս գյուղերում հարկաբաժանության և հարկահավաքի ժամանակները, հարկաբաժանություն ու հարկահավաք, որոնք պատեհ առիթ են եղել և լայն ասպարեզ բաց արել գյուղի տանուտերի, իշխանների, ունևորների, վաշխառուների, մոլրովի և դրա մարդկանց առաջ, դրանց անհագ կաշառակերության համար: Հարկաբաժանությունը՝ բոլջին, որին հետևել է հարկահավաքը, կատարվել է տարին երկու անգամ՝ գարնանը և աշնանը: Վերջինն համեմատաբար ավելի հեշտ է անցել, քան առաջինը, որովհետև աշնանն աշտարակցու տունը լիքն է եղել նոր ստացված բերքով, որով նա կարողացել է բավարարել եղած պահանջը. դժվար է եղել գարնան հավաքը, երբ բերքը սպառված և սպառվելու վերա է եղել, և նա ավելորդ ոչինչ չի ունեցել, որ պահանջվածի տեղը տար, ուստի և կամ երես է փախցրել գզրից, կամ թաք կացել տանուտերից և կամ նրանց ոտքն ընկել, աղաչել, որ սպասեն, որով և առիթ է տվել տանուտերին՝ բերել տալու մոլրովի յասավուլներից մեկին, յասավուլ, որի մտրակի ծայրից արյուն է կաթել:

Գյուղի վերա դրված հարկի քանակը և դրանից յուրաքանչյուրին ընկնելիք բաժինը ինչպես մեծ բան չի եղել, բայց որովհետև հարկի բա-

ժանումը կատարվել է անարդարությամբ՝ անհավասար չափերով, և ո՛չ ըստ կարողության՝ վճարունակության չափերով, և տանուտերի ու գյուղի իշխանների ձեռքով գյուղի վրա արված ծախսերն էլ, որոնք նույնպես ավելացվել են հարկին, ցույց են տրվել չափազանցրած թվերով, հօգուտ իրենց, ուստի և՛ հարկի քանակը, և՛ յուրաքանչյուրի վճարելիք բաժինը, համարյա թե, կրկնապատկվել է և բնականաբար ճնշել չքավորներին:

Եկել է յասավուլը և տանուտերի ցուցմունքով ու գզիրի ուղեկցությամբ մտել որոշ տներ՝ չվճարված հարկերը ստիպողաբար առնելու: Սուգն ու շիվանն ընկել է գյուղը. մեկի տանից կերակրի կաթսան է կրակի վերայից առնվել, մյուսից՝ հիվանդի տակից կարպետը կամ թաղիքը քաշվել, մի երրորդից՝ աշառը գոմից հանվել, և այդ բոլորը կատարվել է մտրակի սոսկալի հարվածների տակ. գլուխ է, որ պատռվել է, քիթ ու բերան է, որ արյունլվա է եղել, մեջք է, որի վրա յասավուլի մտրակը զոլեր է քաշել: Այս արտասուքի, աղերսանքի ու մտրակահար անելու դժոխային հանդեսը, վերջապես, վերջացել է. յասավուլը ստացել է յուր «արդար վաստակի» հատուցումը գյուղից և վերադարձել յուր տեղը: Հարկահավաքումը կատարված է համարվել մեծ հաջողությամբ՝ խոշոր ավելիքով, որի մի մասը մտել է գյուղի բարեխնամ կառավարիչների՝ տանուտերի ու իշխանների գրպանը, մյուս, ավելի խոշոր մասը, բաժին ընկել մոլրովին, որի պատվերով յասավուլը գյուղ էր ուղարկվել և կատարել յուր «սխրագործության» հանդեսը:

Այսպիսի սխրագործության հանդեսով կատարվել է և կոռը: Այգեկութի վերջն է, գյուղացիք գլուխ քորելու ժամանակ չունին, բոլոր ձիերը զբաղված են, լեքշերով քաղցու են կրում այգիներից: Յասավուլն եկել, կանգնել է Ուռուցում և առաջին պատահած քաղցուակիր ձիու առաջ բռնել՝ պահանջելով տիրոջից, որ բեռը վայր ձգի և ձին տրամադրի իրեն լեկը (բժիշկ) աղային Իլանչալան տանելու համար: Գյուղացին առարկել է և սանձը ձեռքից չի թողել, որի համար թեև նա անողորմաբար մտրակահարության է ենթարկվել և արյունլվա եղած, ծղրտալով՝ երեսի վերա վայր ընկել, բայց դարձյալ ձիու սանձը ձեռքից բաց չի թողել: Յասավուլը՝ անլուր հայհոյանքներ թափելով բերանից, մի երկու աքացի է հասցրել ընկածին և վազել մի ուրիշ քաղցուակիր ձիու առաջը բռնել, դաշույնը խրել տկերի մեջ, պատռել, քաղցուն թափել ու ձին խլել, տարել (տե՛ս այս մասին Պռոշյանցի մի մանկական հիշողությունը, որ նա գրի է անցրել յուր «Հացի խնդիրի» մեջ, գլուխ ԺԸ, էջ 150—152):

Հին աշտարակցին չափազանց սիրել է յուր գյուղը, նրա գեղեցիկ դիրքը, նրա մաքուր օդն ու ջուրը, նրա այգիները, նրա գետն ու ձորը և այնքան կապված է եղել նրան, կապված նրա հետ, որ, թեև անցյալում, շատ անգամ ստիպված է եղել թողնել յուր տուն ու տեղը և հեռանալ յուր գյուղից, բայց նրա այդ-

պիսի հեռանալը միշտ եղել է ժամանակավոր. հենց որ հնարավոր է եղել, նա վերադարձել <է> յուր տեղը, վերանորոգել է յուր քանդված օջախը և վերամշակել է յուր սիրած այգիները: Մինչև անգամ ուսման համար գյուղից հեռացած և իրենց ուսման գործը վերջացրած, և իրենց համար այստեղ ու այնտեղ գործ գտած և կապված այդ գործի հետ աշտարակցի երիտասարդներն էլ միշտ քաղցր հիշողություններ են պահել իրենց հայրենի գյուղի մասին, անմոռաց հիշել նրան և նրա կարոտը քաշել: Աշտարակցու՝ յուր գյուղի հանդեպ տածած այդպիսի բուռն սիրո արտահայտությունը պետք է համարել այն չափազանցրած գովասանքը, որ Պռոշյանցն յուր գրվածքներում տվել է Աշտարակին: «Աշտարա՜կ, — օրինակ, ասում է նա մի տեղ յուր «Կռվածաղիկում»,— դա աչքն է Արագածոտն գավառի, դա Արագած սարի բազմատեսակ, հոտավետ ծաղիկներից կապած փնջի գլխի վարդն է, դա կատարելատիպն է բոլոր Արագածոտնում գտնվող յուր նմանների» (գլ. Իէ, էջ 157—158): Վերջին անգամ մենք առիթ ենք ունեցել տեսնել Պռոշյանցին Նոր-Նախիջևանում, ուր եկել էր նա նյութական միջոց գտնելու՝ արտասահման գնալու համար. նա հիվանդ էր, ընկճված ու լքված: Յուր հիվանդության մասին նա ասում էր, որ յուր հիվանդությունը դեղորայքով բուժվելու հիվանդություն չէ, այլ՝ «Աշտարակի հիվանդություն». բավական է, որ ինքը չոքի Ականատեսի առվի վերա, մի բուռը ջուր խմի Քասախի ականակիտ ջրերից, ինչպես անում է եղել մանկության օրերում, և կանգնի, կերթա:

Այդպիսի բուռն սիրո արտահայտություն պետք է համարել և Սմբատ Շահազիզյանցի «Աշտարակ» ոտանավորը, որ արվեստական, բռնազբոսիկ ոչինչ չունի յուր մեջ, այլ համակ պարզ, սրտաբուխ զգացմունք ու սեր է: Ավելորդ չենք համարում մեջ բերել այստեղ այդ ոտանավորը, որ բուռն սիրո և զգացմունքի հետ միասին պարունակում է յուր մեջ և գյուղի նկարագրությունը ընդհանուր գծերով:—

Գեղեցկանիստ է Աշտարակ,
Շատ այգիներ նա ունի.
Այնտեղ երկինքն է կապուտակ,
Այնտեղ օդն է քաղցրալի:

Մեծ, ընդարձակ, կանաչ դաշտեր
Լի են ծաղկով քաղցրահոտ.
Մարդահասակ, խնկանըվեր,
Բարձրանում է այստեղ խոտ:

Այդ սիրուն գյուղն ունի մի գետ,
Եվ այն էլ լի է ձկներով.
Այնտեղ իշխան և կարմրախետ
Խա՜ղ են կապում խայտալով:

Եվ հարազատ այգիներից
Տարածվում է քաղցրություն,
Եվ Քասախը ուրախալից
Բերում է ձեզ յուր ողջույն:

Բայց այդ բոլորն սարկության
Կաշկանդած է կապանքով.
Ժողովուրդը թշվառական
Խեղդված է մեծ խավարով:

Եվ տխրությամբ ես կանգնած եմ,
Եվ ողբում է իմ հոգին.
«Ո՜վ Աշտարակ, քեզ սիրում եմ,
Ո՜վ քեզ սիրեց, որպես ես»:

Կես գիշերին, երբ քնով խոր
Հանգստանում է աշխարհ,—
Վեր եմ կենում ես սգավոր,
Աղոթո՜ւմ եմ քո համար:

Բացի յուր այդ 1864 թվին գրած «Աշտարակ» ոտանավորից, Սմբատ Շահազիզյանցը Աշտարակին նվիրել է և մի ուրիշ ոտանավոր՝ «Ողջույն հրաժարական Աշտարակի հետ» խորագրով՝ գրված 1857 թվին և տպագրված «Ազատության ժամերի» մեջ, որ թեև մի անպաճույճ և անարվեստ, աշակերտական քերթված է, բայց դարձյալ տոգորված է նույն խորին զգացմունքով ու սիրով: Աշտարակի այդ մյուս մեծ որդու կյանքն էլ Աշտարակի վերաբերմամբ մի տարօրինակ, ողբերգական բնույթ է կրել. Նա հնարավորություն է ունեցել և ապրել է ամենալավ ամառանոցներում՝ Բալթիկ ծովի Դուբելնում, Ղրիմի Յալթայում, Ալուպկայում, Գուրզուֆում, Կովկասի Կիսլովոդսկում, Մոսկվայի շրջակայքի լավագույն ամառանոցներում, բայց ոչ մի տեղ սիրտը վեր չի եկել. Նա միշտ ցանկացել է լինել յուր հարազատ Աշտարակում, վայելել նրա օդի, ջրի, այգիների, ձորի քաղցրությունը, բայց, յուր հորանական տան մեջ ստեղծված յուրահատուկ պայմանների շնորհիվ, չի կարողացել կատարել յուր սրտի այդ ցանկությունը: Նա յուր 11 տարեկան հասակում հեռացած լինելով յուր հորանական օջախից՝ միայն մի անգամ է կարողացել այցելել Աշտարակ (1873 թ.), այն էլ միայն մի ամիս ժամանակով, յուր ծերացած մորը տեսնելու համար, մորը, որին նվիրել է յուր լավագույն բանաստեղծություններից լավագույնը՝ «Երազը», ես և՝ «Վերջին հրաժեշտը»:

Եվ Աշտարակը՝ գյուղից, ուսման պատճառով հեռացած և այլևս չվերադարձած հայ որդիներից ոչ մեկին այնքան չի՛ պատվել, չի՛ մեծարել, որքան հենց յուր այդ որդուն, մի բան, որ պետք է վերագրել նրա՝ հայ աշխարհում հանած անվան ու հռչակին, իբրև բանաստեղծ: Երբ հիշյալ 1873 թվին լուր է

սռացվել Աշտարակում, թե Սմբատ Շահազիզյանցը հասել է Երևան և գալիս է Աշտարակ, ամենքն ուրախացել են, ոգևորվել և այնպիսի ընդունելություն են կազմել, որ դուրս է եկել սովորական պատվի ու հարգանքի ընդունելության սահմաններից։ Ուրախացել են ո՛չ միայն Տեր Սիմոնենք, որոնց զավակն էր նա, ո՛չ միայն բոլոր Շահազիզյանները, իբրև ազգուտակ ու տոհմակիցներ, այլ ամենքն անխտիր, թե՛ մերձավոր, թե՛ օտար, մի խոսքով՝ ուրախությունն ընդհանուր է եղել, ընդունելությունը գյուղովի, համաաշտարակյան։

Մեր ձեռքին գտնվում է բանաստեղծի մի նամակը՝ գրված Աշտարակից Մոսկվա, յուր բարեկամ Մելքոն Փանյանին, 1873 թվի հուլիսի 17-ին, որից ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել այդ ընդունելության վերաբերյալ տողերը.

«Թե ինչպես եղավ իմ մուտքը մեր մայրենի աշխարհը,— գրում է նա այդ մասին,— այդ մնում է պատմել ինձ երես առ երես, երբ աստված կհաջողե հասանել այդտեղ. միայն այսքանը ունեմ ասել քեզ, որ իմ մուտքը Աշտարակ այնքան տխրական ու արտասվաշարժ էր, որ շունչս սպառած՝ դարձել էի ես մի արտասուքի ծով։

Ո՜հ, մեծ է սերը հայրենյաց, թեև տնանկության և թշվառության մեջ։

Բոլոր ճանապարհը, Երևանից մինչև Աշտարակ, լցված էին ձիավորներով՝ աջ և ահյակ կորելով առաջս և աշխատելով մի աջողակաշարժ ձիախաղությամբ ցուցանել յուրյանց արվեստը։ Բոլոր Աշտարակի քուչաները և կտուրները լի էր կանանցով, երեխաներով և մարդերով, և դոքա բոլորեքյան, մի նազելի գլխաշարժությամբ, ասես, աշխատում էին մեղմացնել սրտիս կսկիծը, որ արդեն արտասվախառն հոսում էր աչքերից։

Բայց, ո՜հ, բարեկամ իմ, մեջքս ու հոգիս բնավին կոտրվեցան, երբ տեսա իմ ալեզարդ, պառաված և հալումաշ եղած մայրս ի մեջ բազմամբոխ գյուղացի կանանց, զրկված երեք վաղամեռ, թագավորի պես որդիներից։ Զիս ուղղեցի մորս կողմը և կալա ձեռից. բոլոր հանդիսակիցքը՝ զարմացած մտառությանս, աղաղակեցին միաբերան. «Օրհնյալ զավակ և որդի»։

Տխրական է պատմությունս, տոչորյալ՝ սիրտս, թառամյալ՝ հոգիս. ողբալով ողբացի և արտասվելով արտասվեցի իմ երեք եղբարց գերեզմանքը, և ահա՛ նամակս գրելիս՝ տակավին գնում են այդ արտասուքը ողորմելի աչքերիցս... Այսպես մեծ է կորուստս և անդառնալի։ Սիրեցին ինձ իմ գյուղացիքս և մասնակից եղան իմ նվիրական արտասվաց»։

Աշտարակի հանդեպ ունեցած այդպիսի բուռն սիրո արտահայտություն է և բնիկ մուղնեցի, Թիֆլիսում ծնված և Աշտարակում վերաբնակված՝ Քյանհան կոչված Բարսեղի որդի աշուղ Պետրոսի մի երգը Աշտարակի մասին, որ ամբողջովին մի դրվատիք է.

Անունդ Մհալ-բաշի, գովելի ես, խան Աշտարա՛կ,
Ունես դրախտի նման պայծառ գյուլլիշան, Աշտարա՛կ,
Արևելից արևմուտ ուզում են, որ գան Աշտարա՛կ,
Հաստատ ըլեն միջումդ, դադումի մնան Աշտարա՛կ,

Ուտել, խմել, քեֆ անել, էլ չունես վատ բան, Աշտարա՛կ,
Անունդ շատ տեղ կըհիշվի, դու ես մի նշան, Աշտարա՛կ։

Մեռելներիդ ողորմի, զարձյալ միջի սաղդ գովեմ,
Բացվել ա սուսան սմբուլ, քո բախչա ու բաղդ գովեմ,
Ունիս լավ սեհրի տեղեր, Ալագյազ յայլաղդ գովեմ,
Ամառ վախտդ կու գնես, առավոտյան շաղդ գովեմ,
Ամեն երկրներում սանմ, սաղով խաղդ գովեմ,
Գովքդ քաղաքն անցկացավ, հասավ Դաղստան, Աշտարա՛կ <...>

Վերևդ Մուղնի կհիշվի, ներքին կողմդ Ուշական ա,
Միջիդ կենող մարդիկը որը սուլթան, որը խան ա,
Գեղեցիկ գյոզալներդ, ասում են՝ հուրի ղլման ա,
Անունդ ջոկ ա հիշվում, ամա հողդ Երևան ա,

Չեմ գիտում՝ ի՞նչպես անեմ, մնացել եմ յանա-յանա,
Բարսեղ օղլի Քյանհանին չի զրկես, ամա՜ն Աշտարա՛կ։*

18

ՂՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԵՎ ՔՐԻՍՏՈՆՅԱ ՏԱՐՐԵՐԻ՝ ՄԻՄՅԱՆՑ ԴԵՄ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ԹՇՆԱՄԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ. ԱՇՏԱՐԱԿԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԵԼԸ. ՌՈՒՍ ԶՈՐՔԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՍՆԵԼԸ ԵՎ ՕՂԻ ԳԻՆԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆԵԼԸ. ԱՇՏԱՐԱԿՑԻՆԵՐԻ ՀԱՐՍՏԱՆԱԼԸ, ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇՏԱՐԱԿԻ ՎԵՐԱ ԵՎ ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎԵՐԱՆԱԼԸ. ԲԱՆԱԿԱՏԵՂԻՆԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԻ ԶՔԱՎՈՐՆԵՐԸ ԱԿՅԻԶԸ ԵՎ

Թե ի՞նչ նպատակով և ինչո՞ւ համար է եղել Ղրիմի պատերազմը, աշտարակցիք և, ընդհանրապես, Ռուսահայաստանի հայ և մահմեդական գյուղացիությունը ճշտիվ չեն իմացել։ Հայերն ավանդաբար կարծել են, որ այդ մի նոր ռուս-տաճկական պատերազմ է Թուրքիայի քրիստոնյաներին տաճկաց լծից ազատագրելու համար, իսկ մահմեդականները դրա պատճառը նույնպես քրիստոնյաներին, այսինքն՝ հայերին, որոնք, ավանդաբար համարել են քրիստոնյաներին, այսինքն՝ հայերին, որոնք, իբրև թե, հրավիրել էին ռուսներին և առիթ եղել պատերազմին, որի հետևանքով և հայերը կողմնակից են եղել ռուսներին, ուրախացել նրանց հաղթություններին, տրամել նրանց անհաջողություններից և իրենց ձեռքից եկած միջոցներով օգնել նրանց, իսկ մահմեդականները, ընդհակառակը,

*«Հայ աշուղներ», Թիֆլիս, 1903, էջ 165—166 (-Պ. Հ.)։

կողմնակից են եղել տաճիկներին, օգնել նրանց և ուրախացել նրանց զենքի հաղթությամբ և ընկճվել նրանց պարտությամբ։

Երկրի գյուղացիությունը չի իմացել նույնպես, որ պատերազմը մղվել է երկու ճակատում՝ Եվրոպայում և Ասիայում, և որ առաջինը գլխավոր ճակատն է եղել, որտեղ տաճիկների հետ միասին կռվել են ռուսների դեմ և անգլիացիք, ֆրանսիացիք և սարդինացիք, և որ ասիական ճակատը, իբրև երկրորդական ճակատ, ուղարկվել են միայն Կովկասում եղած ռուս սակավաթիվ գնդերը։ Ռուսահայաստանի գյուղացիությունը պարզ գաղափար չի ունեցել և յուր երկրում մղվող պատերազմական գործողությունների մասին, իրար դեմ կռվող զորքերի թվի մասին և ո՞րտեղ և ի՞նչ գլխավոր ճակատամարտեր են տեղի ունեցել, բայց, դրա փոխարեն, նա շատ ստույգ և ճիշտ հասկացողություն ու տեղեկություններ է ունեցել, թե ի՞նչ է կատարվել երկրի ներքին կյանքում, երկրի կողք-կողքի և միասին ապրող քրիստոնյա և մահմեդական տարրերի փոխհարաբերության մեջ, մի շատ կարևոր բան, որ պանց է առնված և, համարյա թե, չի հիշված ռուսաց այդ պատմության մեջ։ Ահա՛ այդ տեսակետից շատ շահեկան են մեր քանիցս հիշած Աշտարակի պատմական անցքերի ստորագրող Տեր Սարգիս քահանա Բղնունու պատմածները այդ մասին, Բղնունու, որ այդ դեպքում հանդիսանում է երկրի գյուղացիության հասկացողությունների, հայացքների, կարծիքների և մտածողության ճիշտ արտահայտիչը։

«1853 թվականին,— ասում է Տեր Սարգիս Բղնունին յուր «Ջվարճալի հարսանիք» խորագրով վիպասանության մեջ,— ռուսները և տաճիկները պատերազմ հրատարակեցին... Տաճկաց զորքերը հավաքվեցին սահմանագլուխները. Շիրակա սահմանումը, Բայինդուր, բանակ ավեց վաթսուն հազար զորքով, իսկ ռըսի զորքն՝ 11 հազար, Ալեքսանդրապոլում։ Երևանա կողմը՝ 25 հազար զորք տաճկինն էր Օրգովում բանակ տված, իսկ ռըսի զորքը Ամարաթում բանակ տված, երկու հազար զորքով։ Արարատյան նահանգը շատ երկյուղի մեջ էր. ոչ թե տաճկաց զորքերից էր երկյուղը, այլ տեղական քուրդ և պարսիկներից. ինչպես առանց տաճկաց զորապետների գիտության Կողբ ու Սուրմալվի ամբողջ գավառը քարուքանդ արին, ինչպես էլ Շորակյալու սահմանագլխի հայոց գյուղերը։ Առժամանակ էապես մնալով՝ ռըսի զորաց սակավությունը առիթ էր տալիս հայերին գնալ Բայինդուր, տաճկի զորապետին ներկայանալ և հպատակություն ընդունել. այդպես՝ Շորակյալու հայերը մինչև Արբանա Մելիքքյանդցիքը, տաճկաց դրոշակը և նրանցից չորս զինվոր տարան իրանց գյուղերը, որ ապահով մնան արտաքին թշնամյաց հարձակմունքից։

Բայց Սուրմալվա գավառի հայ բնակիչները բոլորը գաղթեցին», անցան Արագը և «էջմիածնա գավառումը պատսպարվեցին», հազիվ երկու-երեք գյուղեր տեղներիցը չշարժվեցին. «իսկ թուրքերը իրանց գյուղերում հանդիստ

ու անհոգս նստած էին և հայերին ահացնում» էին «ու նրանց կայքերից խաբեությամբ, իբրև ավանդ, տանում էին իրանց տները, որպես թե խաղաղության ժամանակին, բարեկամաբար, ետ կդարձնեն իրենց...»։ Թուրքաբնակ գյուղերը ոչ թե միայն անհոգ և ուրախ մնացին իրանց տեղը, այլև, ընդհակառակը, տարածված ընկան գաղթած հայի անտերունչ գյուղերը և նրանց հորերի ցորենները ու ուրիշ պահված տնական իրեղենները հանեցին, գողացան, տարան, վերջապես՝ դրացի թուրքերը չափազանց վնաս հասցրին ողորմելի հայերին։ «Այլև Սուրմալվի թուրք բեկերը գնում էին տաճկաց բանակը և քաջալերելով խրախուսում էին, որ <op> առաջ գան, իրանց օգնությամբը Երևանին տիրեն, և իրանք էլ լավ վստահություն ավելացնեն՝ հայերին կողոպտելու։ Բայց տաճկաց զորքն ու զորապետը չվստահացան Իգդիրի հանդից առաջ գալ» (թ. 128բ—130ա)։

Շահեկան է և աշտարակցիների կարծիքը, և ոչ միայն աշտարակցիների, ռուսների և ռուսահպատակ տեղական մահմեդականների բռնած ընթացքի մասին, որ մի-երկու տեղ մեջ է բերում նույն Բղնունին յուր վերոհիշյալ գրվածքում, դնելով այդ կարծիքը յուր վեպի հերոսների բերանը։ Մի տեղ նա ասում է. «Ռըսի ի՞նչ վեջն ա, մեկ էլ տեսար, բալաբանը դողացրուց ու գնաց, մեզ թողուց շան բերանումը լալով, ողբալով. ի՞նչ պտի անենք <մենք>, դժվար է ռըսի սակավ զորքերի վերա հույս դնելը, Օսմանլուն մորեխից շատ ա, աստված ինքը ողորմա» (թ.131ա)։ Մի ուրիշ տեղ էլ ասում է. «Տո՛, եղբայր ջան, հրես մենք մեր աչքովը տեսնում ենք, որ ռըսի զորքը քիչ ա, Օսմանլվինը՝ շատ ու, բացի շատ ըլնիլը, ինչքան թուրք ու քուրդ կա, նրանք էլ խառնվել են ու կիտվել են նրանց վերա և ուզում են հայ ազգի քոքը կտրեն. ախր Օսմանլուն էլ թուրքի հավատին ա, ընդուր համար էլ ուրախացել են ու իրանք էլ օգտում են, որ ռըսին հաղթեն, Երևանու երկիրը մնա Օսմանլուին. հետո մեր գլխին պոպոք ջարդեն, ոնց որ մեր պապերին արել են» (թ. 133ա)։

Ահա՛ այսպիսի կացություն է ստեղծված եղել այդ պատերազմի ժամանակ, և ամբողջ Արարատյան երկրի հայ բնակչությունը ահ ու դողի մեջ է եղել, որ այսօր թե էգուց Օսմանլուն վրա կտա, ռուս զորքն, յուր սակավության պատճառով, կթողնի, կքաշվի, և հայերը կվտանգվին, նրանց գյուղերը ավերածության, ստացվածքը կողոպտման և ինքյանք էլ սրածության կենթարկվին իրենց դրացի մահմեդականների կողմից։ Աշտարակի կացությունն առանձնապես դժվար է եղել, որովհետև նա ամբողջ Արագածոտնի աչք գյուղն է եղել և յուր բարեկեցությամբ ու հարստությամբ միշտ էլ նախանձի առարկա՝ յուր շրջակա թրքական և քրդական գյուղերի համար, որոնք վաղուց արդեն ակնդետ սպասելիս են եղել հենց մի այդպիսի պատեհ ժամանակի, որ կարողանային շահվել նրա հարստությունից։ Եվ այդ բոլորն այնքան ակներև է եղել, որ ոչ

որ չի էլ կասկածել, որ վտանգի դեպքում հենց առաջին զոհը ամեն բանով առատ Աշտարակը պիտի լինի, ուստի և, բնականաբար, գյուղի ժամանակի տանուտեր Խուռմ Շահազիզյանը, Ստեփան Տեր-Հովսեփյանը և մյուս իշխանները բավականին ժամանակ են ունեցել մտածելու, թե ի՞նչ պիտի անեն, ի՞նչ ելք պիտի գտնեն, որ կարողանան ազատվել վերահաս վտանգից, նամանավանդ որ նրանց աչքի առաջն են եղել Կուլապ, Իգդիր և Կողբ գյուղերը, որոնցից առաջինը գաղթած չլինելով, ինքնապաշտպանության պատրաստություն էլ չտեսած լինելով՝ ենթարկվել էր ավերածության ու սրածության, երկրորդ և երրորդը նույն վիճակին էին ենթարկվել՝ խաբեության և խարդավանքի զոհ դառնալով. Իգդիրը՝ յուր լավ ծանոթ ու բարեկամ, քուրդ անվանի ցեղապետ Fոռ Մստոկորի, Կողբը՝ յուր բարեկամ, կաղզվանցի Ֆերզուլլահ բեկի։

Որոշվել է կազմակերպել ինքնապաշտպանություն, և դրա կազմակերպության և պատրաստության գործը հանձնվել է մեր քանիցս արդեն հիշած՝ ղարսեցի Հարությունի որդի, քաջ տղամարդ, յուզբաշի Բաղդասարին, որի տրամադրության տակ դրվել է գյուղում գտնված վեց հարյուր հրացանը և Երևանի զինապահեստից ստացված 250 հրացանը և երկու փութ վառոդը, և օգնական են կարգվել նրան գյուղի զենք բանեցնող տղամարդկանցից վեց հոգի՝ Վարդազարենց Բեկլարը, Փիլումենց [՞] Խեչանի որդի Սարգիս Շահազիզյանը, Շուխյանց Մինասը, Հարություն Տեր-Հովսեփյանը, Բղնունի Սարգիսը և Շամիր Ղազարյանը։ Յուզբաշի Բաղդասարը նախ՝ կարգի է բերել բոլոր զենքերը. երկրորդ՝ զենքի տակ է առել բոլոր երիտասարդներին, 16 տարեկանից սկսած, և զենք կրելու ու բանեցնելու ընդունակ բոլոր գյուղացիներին, մինչև վաթսուն տարեկան հասակը. երրորդ՝ բոլոր զինվորներին բաժանել է երեք գնդի, որոնք պարտական են եղել հերթով, ամեն օր դուրս գալ Կավահանքի դուզը, հրացան արձակելու և կռվելու եղանակը սովորելու համար յուր և յուր օգնականների ձեռքի տակ ու ղեկավարությամբ, և չորրորդ՝ պատվիրել է բոլոր գյուղացիներին պահել իրենց ծանր իրեղենները թաքստոցներում և անհրաժեշտ իրեղեններով և ուտելու պաշարով՝ գիշերը լուռ ու մունջ հավաքվել Բերդաթաղը և պատսպարվել հին Ծիրանավորի և հին բերդի կիսականգուն ավերակների մեջ։ Այնուհետև նա հաստ գերաններով փակել է տվել գյուղի մուտքի ու ելքի գլխավոր ճանապարհները և հարկավոր թվով պահապաններ կանգնեցրել՝ պատվիրելով որ հերթով փոխվեն և գիշեր ու ցերեկ աչալուրջ հսկողությամբ հետևեն, որ կասկածելի մարդիկ գյուղին չմոտենան, գյուղ չմտնեն։

Աշտարակի այսպիսի պատրաստության լուրը շուտով տարածվել է և այնպիսի վախ ձգել դրացի մահմեդականների վերա, որ այնուհետև նրանց ոտքը իսպառ կտրվել է Աշտարակից, մինչև որ խաղաղությունը վերահաս-

տատվել է, դրացիական հարաբերությունները երկրի քրիստոնյա և մահմեդական տարրերի մեջ վերականգնվել է, և Աշտարակի ճանապարհով Երևան գնալ-գալը վերսկսվել։ Լուրը հասել է և մահմեդական մուղանլու ցեղի ցեղապետ, արյունարբու Նաջաֆ Ղուլի բեկի ականջը, որ աչք դրած լինելով Աշտարակի վերա և կամենալով ստուգած լինել նրա ինչ չափով ինքնապաշտպանության պատրաստված լինելու հանգամանքը՝ քսան ձիավորով, Ջաֆար խանի որդի Հյուսեին խանի հետ եկել, մոտեցել է գյուղին։ Պահակները իսկույն ևեթ բռնել են նրանց առաջը՝ սպառնալով զենք բանեցնել նրանց դեմ, եթե նրանք փորձեն ավելի մոտենալ գյուղին և իսկույն չհեռանան։ Վրա են հասել իշխանները, հարց ու փորձ են արել, իմացել նրանց գալու պատճառը, նախազգուշացրել և ետ են դարձրել, որով և առնվել է, անշուշտ, լինելիք արյունահեղության առաջը։ Երկիրն այնպիսի լարված վիճակի մեջ շարունակել է մնալ, մինչև որ ռուսները կարողացել են դուրս շպրտել Օսմանցոց զորքը ռուսապատկան հողերից ու պատերազմական գործողությունները փոխադրել Արփաչայի (Գարվլո գետի)* այն կողմը, որի հետևանքով և Արարատյան դաշտի ժողովրդի կացությունն էլ իսկույն փոխվել է։ Մահմեդական տարրն ընկճվել է, հայերը, ընդհակառակը, գլուխ են բարձրացրել և հաղթական դիրք գրավել. Սուրմալուից էջմիածնա գավառը գաղթած հայերը վերադարձել են իրենց գյուղերը, վերանորոգել են իրենց քանդված ու կողոպտված օջախները և հականե անվանե (անուն-անուն) ճանաչելով իրենց կողոպտիչներին՝ հարձակվել են նրանց գյուղերի վերա և վրեժխնդիր եղել, վերադարձնելով իրենցից գողացածները, հափշտակածները, որից հետո խաղաղություն է ընկել երկրի մեջ, և նորմալ կյանքը վերականգնվել։

Աշտարակցիք օգտվելով այդ խաղաղությունից, ձեռնարկել են իրենց գյուղում, անհանգիստ և նեղ օրերում, ամբարված մեծաքանակ գինու և օղու պաշարը դուրս տանել վաճառելու. նրանք իրենց ապրանքը հատկապես տարել են զորքի գլխավոր բանակատեղին՝ Ալեքսանդրապոլ, և շատ հաջողել են. ոգելից ըմպելիքների մեծ պահանջ է եղել, և առավոտյան բանակ ժամանած Աշտարակի բեռները երեկոյան արդեն դատարկված ու սպառված են եղել։ Աշտարակցիք չեն շատացել միայն Ալեքսանդրապոլի շուկայով, այլ հետևել են և զորքին՝ նրա դեպի Թուրքիայի սահմանները կատարած արշավանքի ընթացքում ու մինչև իսկ անցել են նրանց հետ սահմանները, երբ հետագայում ռուս զորքը ետ նահանջող թուրք զորքի ետևից արշավել է դեպի Կարս, և ամեն տեղ գինի և օղի են հայթայթել զորքին։ Այդ ժամանակներից էլ հենց սկսվել ու տարածվել է գյուղացոց մեջ այն տգեղ ու պախարակելի սովորությունը, որ գյուղում պատկերավոր լեզվով կոչվել է մոզի ջրել: Մոզի կամ աչառ Աշտարակում կոչվում է այն երեք տարեկան որձ հորթը, որ դեռ լուծ

* Բնագրում. «Գարվլո գետ» բառերի վերևում, այլ ձեռագրով ավելացրած է՝ Ախուրյան—Պ. Հ.։

չի տեսել։ Աշտարակցին յուր գինու տկերը նմանեցրել է մոլիներին, ուստի և, երբ տկերի մեջ անարատ գինու հետ ջուր է խառնել, զվարճախոսել է, թե մոլին ջրում է։ Նա պատերազմի ժամանակ, բանակում գինի վաճառելիս՝ կիսատված տկերի գլուխը հաճախ մաքուր ջուր է լցրել, որով և կրկնակի շահվել է և թանկ գնով վաճառել է գինին, և նրա քանակն ավելացրել։ Բարեբախտաբար, այն խարդախությունը, որ մեկ էլ, և՛ առավել մեծ չափով՝ կրկնվել է 1877 թվի պատերազմի ժամանակ, վերջացել է այդ պատերազմների դադարելու հետ միասին. սովորական, խաղաղ ժամանակները, գինին վաճառքի հանվելու ժամանակները, միշտ, ինչպես ասում են աշտարակցիք, գրադուսվել է և գնահատվել շուկայում յուր բնական կտրուկության աստիճանի, պարզության ու անարատության որակի ու հատկության համեմատ։

Պատերազմական բանակում, զորքի մեջ գինեվաճառության այդպիսի հաջող վաստակի շնորհիվ գյուղը շատ փող է մտել, որի մի մասը գործադրվել է գյուղացիներից մի քանի անհատների ձեռքին, իբրև առևտրական կապիտալ, գյուղում խանութներ բանալու և իսկական առևտրի ձեռնարկելու, առևտուր, որ առաջին նվագ թեև գայթ ի գայթ է առաջ գնացել, բայց հետո, տարիների ընթացքում, հետզհետե զարգացել և 1877 թվին ծագած նոր ռուս-տաճկական պատերազմի հետևանքով այնպիսի թափ ստացել, որ Աշտարակը վերածել է մի առևտրական փոքր շուկայի շրջակա գյուղերի համար, որի մասին մենք յուր տեղում արդեն առիթ ենք ունեցել ավելի մանրամասնաբար խոսելու. մի մասն էլ տնտեսվել ու գործադրվել է Պարսկաստանի ընտիր չամիչը տարեցտարի գնելու ու գյուղ բերելու՝ օղի քաշելու համար, որ խոշոր խորհուրդ է ունեցել գյուղի տնտեսական կյանքի համար. մի ավելի խոշոր մասն էլ շռայլաբար վատնվել է հումպետս, ինչպես այդպիսի հանգամանքներում, սովորաբար, միշտ տեղի է ունենում. թեթև ու հեշտ աշխատանքով վաստակածը նույն թեթևությամբ ու հեշտությամբ էլ, սովորաբար, ծախսվում ու սպառվում է։

Պատերազմի՝ մեր երկրում առաջ բերած թոհ ու բոհի ազդեցության ներքո, երբ Աշտարակն էլ ստիպված է եղել թողնել յուր ինքնամփոփ, դրսից կտրված կյանքը և հաճախ շփվել դրսի աշխարհի հետ, բնականաբար, նրա հին, նահապետական պարզ կյանքն էլ անձեռնմխելի չի մնացել. նա սկսել է փոխվել, տեղի տալ ամեն կողմից խոնվող ու գյուղ ներս խուժող նոր կենցաղին, նիստուկացին, վարք ու բարքին։ Թեև նա յուր՝ դարերի ընթացքում ամրացրած դիրքերը հեշտությամբ չի զիջել, այլ շարունակ պայքարել ու համառ դիմադրություն է ցույց տվել, բայց տարիների ընթացքում, հետզհետե, ուժասպառ է եղել և սկսել սակավ առ սակավ տեղի տալ նորի զորեղ հոսանքին։ Հիշյալ 1877 թվի ռուս-տաճկական պատերազմը, որի ընթացքում ավելի խոշոր ծավալով կրկնվել է նույն թոհ ու բոհը, վերջին

հարվածն է հասցրել գյուղի նահապետականության, և Աշտարակը լայն բաց է արել յուր դռները նոր կյանքի նիստուկացի ու վարք ու բարքի առաջ, որի հետևանքով և նա, դարավերջի քառորդում, վերածվել է մի բնակավայրի, որ ո՛չ քաղաք է եղել, ո՛չ էլ գյուղ, այլ կիսաքաղաք կամ կիսագյուղ, կամ, լավ է ասել՝ գյուղաքաղաք կամ քաղաքագյուղ, գյուղ՝ յուր նահապետական կյանքի որոշ գծերի անձեռնմխելի պահված լինելու հանգամանքով, յո՛ւր մտայնությամբ, և քաղաք՝ յուր արտաքին կերպարանքով, յուր նիստուկացի արտաքին ձևերով։

Հին, նահապետական Աշտարակը, սակայն, շատ համեստ է եղել յուր կյանքի պահանջների մեջ և լիակատարորեն բավարարված է եղել գյուղի՝ նրան մատուցած միջոցներով, միջոցներ, որոնք միանգամայն անբավարար են եղել նոր Աշտարակի համար, որի նիստուկացն ավելի խոշոր պահանջներ է ունեցել դրանից, այդ նոր նիստուկացից բխող կարիքները հոգալու, բավարարելու համար։ Վերոհիշյալ Պարսկաստանի չամչից օղի քաշելու ձեռնարկությունը հենց կոչված է եղել ծառայելու աշտարակցու միջոցների այդ պակասը լրացնելու գործին. չամիչն օղեքաշության ավելի ընտիր նյութ է եղել, քան կնճեռնը, նրանից քաշված օղին էլ ավելի լավորակ և, բնականաբար, ավելի թանկ <է> գնահատվող շուկայում, ուստի և գյուղացին ավելիքով շահվել է նրանից և ժամանակավորապես ի վիճակի է եղել վերականգնել յուր տարեկան ծախսերի բյուջեի խանգարված հավասարակշռությունը։ Մենք ասում ենք՝ ժամանակավորապես, որովհետև ցարական կառավարությունը դրանից հետո, շուտով, 1872 թվին մուծել է ակցիզի օրենքը, որի զորությամբ՝ ոչ միայն չամչի օղին, այլև կնճեռից քաշածը ենթարկվել են այնպիսի ակցիզական տուրքի, որ այլևս ոչ մի հնարավորություն չի ընձեռվել գյուղացուն շարունակելու նույն գործը, և դրան, իբրև հիշատակ, մնացել են միայն օգտագործված չամչի մնացորդների այն ահագին կույտերը, որոնք թափված, բլրանման բարձրացած են եղել օղի քաշողների դարպասների առաջ, փողոցներում, և միայն հետագայում հավաքվել, կրվել են այգիները և գործադրվել, իբրև պարարտացման նյութ, որթերի համար։

Աշտարակի մեջքը, ինչպես ասում են, կոտրվել է. նա կանգնած է եղել չքավորության և չքավորելու առաջ, և գյուղում բույն դրած վաշխառու ցեցերի և դրանց ազդեցությամբ հաճախ ընտրված ու ընտրվող կաշառակեր տանուտերների ու դատավորների հացին յուղ քսել։ Աշտարակը, ինչպես ասել ենք, հարուստ և բարեկեցիկ գյուղի համբավ է վայելել։ Սարգիս Բըդնունին նկարագրելով բարեկենդանի հինգշաբթի օրը, Վարդանանց զորավարների տոնին Աշտարակում կատարված ուրախությունները, ի միջի այլոց, այդ մասին էլ ասում է. «Հետո (այսինքն՝ գերեզմաններն օրհնելուց, գերեզմանա-

քարերի վերա բաց արած սեղանները վայելելուց և Հայոց ազգի ու Աշտարակա ննջեցելոցը հիշելուց հետո— Եր. Շ.) գնում էին սուրբ Մարիանե եկեղեցվո բակը։ Այդտեղ նորից գյուղի անվանի մարդիկը, այսինքն՝ ամեն ազգիցը (ընտանիքից, տանից— Եր. Շ.), որը հարուստ ու առաջադեմն էր... շատ մարդիկ, մինչև հարյուր հոգի, կարգով նստում էին և ուրախություն անում մինչև երեկոյան ժամի ժամանակը, <երբ> յուրաքանչյուրի տանից ճոխ սեղան պատրաստված՝ ուղարկվում էր նրանց համար։ Այսպես նահապետական կյանքով միշտ ուրախություն էր անում Բարեկենդանի՝ Վարդանանց տոնի հինգշաբթի օրը Աշտարակն ամեն տարի» (թ. 112բ.—113ա)։ Արդ՝ ի նկատի առնելով Աշտարակի պատմագրի այս խոսքերը, ես և այն, որ նույն պատմագիրը յուր պատմության ամբողջ ընթացքում Աշտարակի մասին խոսում է իբրև մի բարեկից, բարեկեցիկ և հարուստ գյուղի մասին, պետք է հավանական համարել, որ տարածված համբավը նրա հարստության մասին համապատասխանել է ճշմարտությանը։

19

ԱՇՏԱՐԱԿԻ ՉՔԱՎՈՐԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ԳՅՈՒՂԻ ՈՒՆԵՎՈՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՑՈՑ ՎԵՐԱ, ՎԱՇԽԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԵԼԸ, ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ՎԱՐՔԻ-ԲԱՐՔԻ ԱՆԿՈՒՄԸ, ԵՐԵՎԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ, ԴՐԱ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՎԵՐԱ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՔԵՇԻՇ ՄԱՋԱՐԻ ՔԱՐԱԿԻՏՈՒԿԸ ԵՎ ԴՐԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ, ԱԽԱՐ-ԲԱԽԱՐԸ

Բայց ի՞նչն է պատճառ եղել Աշտարակի չքավորելուն։ Աշտարակցիք մեր արդեն հիշած 1890 թվին գանգատվելով Գ. Արծրունուն այն մասին, որ իրենց վերա դրված հարկերը ծանր են, և որ սահմանաչափությունից հետո իրենց վաղուց ի վեր լիակատար սեփականություն համարված այգիները մինչև անգամ ենթարկվել են հարկատվության, դրանով, իհարկե, կամեցել են ասել, թե իրենց չքավորելու պատճառը ծանր, անարդարացի հարկերն են եղել, նամանավանդ՝ ակցիզը։ Որ նրանք դժգոհել են կառավարության՝ իրենց այգիների վերա հարկ դնելու հանգամանքից և, ընդհանրապես, գոյություն ունեցած ժամանակի հարկատվության պակասավոր սիստեմից, այդ հասկանալի է, և նրանք, ըստ ամենայնի, իրավունք են ունեցել, բայց որ նրանք իրենց չքավորելու պատճառը վերագրել են ակցիզին և մյուս հարկերին, կարծում ենք, որ սխալվել են. նրանց չքավորելու պատճառը թաքնված է եղել նրանց կյանքի պահանջների և ունեցած եկամտի անհամաչափության մեջ, և ոչ թե նրանց կարծեցյալ պատճառների մեջ։ Քանի որ նրանք ապրել են հին, նահապետական կյանքով և դրան համապատասխան համեստ պահանջներով, ես և՝ փակ տնտեսություն են ունեցել, ոչինչ չեն արտահանել և ներմուծել, նրանք

ապրել են առատության և լիության մեջ, որովհետև նրանց եկամուտներն ավելիքով բավարարել են նրանց համեստ պահանջներին, բայց երբ Ղրիմի պատերազմի շնորհիվ նրանք սկսել են արտահանել և ներմուծել, նրանց նահապետական կյանքն էլ քայքայվել է, նիստուկացը փոփոխվել, և դրան համապատասխան ավելացել են և նրանց ապրուստի պահանջները, իսկ եկամուտները համապատասխան չափով չեն աճել, և գոյացել է անհամաչափություն նրանց ունեցածի ու ծախսի մեջ, նրանք, բնականաբար, սկսել են նեղվել և հետզհետե չքավորել։ Պարսկաստանի ճամփը, որ էժան գնով ներմուծվել է Ռուսաստան, և աշտարակցիք [ու մյուսները] օգտագործել են և լավ շահվել, միայն մի ժամանակավոր առևտրական, շահեկան ձեռնարկություն է եղել և ժամանակավորապես էլ մեղմել է գոյացած հիշյալ անհամաչափությունը. նա, այդ ձեռնարկությունը, նույնն է, առաջ թե հետո, այս կամ այն պատճառով պիտի դադարեր, վերջանար։ Պետք է եղել չարիքի բուն արմատը կտրել, և գյուղացու ստացած եկամտի աճելության ընթացքը և թափը զորեղացնել, և վերականգնել խանգարված համաչափությունը, մի բան, որ, սակայն, դրա արգելառիթ պատճառներից մի քանիսի վերացումը գյուղի և գյուղացիների կարողությունից վեր լինելու և երկար ժամանակի ու հանգամանքների փոփոխման կարոտելու հետևանքով, եթե ոչ անհնարին, գոնե, շատ դժվար է եղել այն ժամանակները գլուխ բերել։

Այստեղ ավելորդ չենք համարում մեջ բերել գյուղի տնտեսություններին, բնակիչների ընդհանուր թվին և եկամտին վերաբերյալ թվական տվյալներ, որից կարելի պիտի լինի գաղափար կազմել, ընդհանուր գծերով, գյուղի դաբավերջի տնտեսական կացության մասին։—

1. Աշտարակի իսկական տնտեսությունների և բնակիչների ընդհանուր թիվը

Իսկական տնտեսություններ —	720
Բնակիչներ արական սեռի —	2125 հոգի
Բնակիչներ իգական սեռի —	1875 »
	4000

2. Հողերի տեսակները և նրանց քանակը

Տնատեղեր —	50 դես.
Պարտեզներ և այգիներ —	506,15 դես.
Ջրարբի վարելահողեր —	37,5 դես. *
Ոստին (դեմի) վարելահողեր —	697 դես.
Ջրարբի խոտահարք —	15,62 դես.
Անջրդի խոտահարք —	156, 2 դես.
Արածելու տեղեր և արոտատեղիներ —	2505,48 դես.
Հողերի ընդհանուր քանակը —	3843 դես. (!3967,95 դես.)

* Ստորև (էջ 243) աշտարակցիների օգտագործած ջրարբի հողերի քանակը ցույց է տրված 42 հեկտար։ 1886 թ. Աշտարակում ապրում էր 3210, իսկ 1897-ին՝ 3515 մարդ։— Պ. Հ.։

Նկամուտների ընդհանուր քանակը —	53802 ռ. 84 կ.
3. Հարկեր և տուրքեր (сборы) —	
Պետական հողային հարկ —	7051 ռ. 12 կ.
Հողային տուրք —	4292 ռ. 54 կ.
Հասարակական (мирский) տուրք —	6863 ռ. 8 կ.
	18206 ռ. 74 կ.

Պետական հողային հարկը գանձվել է պետական հողերից և մտել արքունի գանձարանը, իբրև պետական եկամուտ. հողային տուրքը գանձվել է մասնավոր սեփականատերերի հողերից, մտել արքունի գանձարանը և ծախսվել գյուղի ընդհանուր կարիքների վերա. հասարակական տուրքերը գանձվել են գյուղի հասարակությունից, մտել են գյուղի գանձարկղը և ծախսվել գյուղի տեղական կարիքների վերա: Դրանք բոլորն էլ բովշի են արվել տարին մի անգամ, հասարակական ժողովներում, այսինքն՝ դրանց խորհուրդը ժողովում բացատրվելուց հետո, ամբողջ գումարը բաժանվել է այգիների և ձորերի ամեն մի պարանի և բնակիչների ամեն մի շնչի վերա: Մի պարանը հավասար է, ինչպես ասել ենք, 30 լիդր ցորեն ցանելու տեղի, իսկ լդրեն տեղի տարածությունը հավասար է 50 քառակուսի սաժենի: Աշտարակում ամեն մի շնչին հասել է վարելահող 12 ½ լիդր ցորենատեղի, բայց ո՛չ ջրարբի, այլ ոստին (դեմ) հող, որովհետև ամբողջ գյուղը, ինչպես երևում է հողերի ցանկից, ունեցել է միայն 37,5 դես. ջրարբի վարելահող: Այգիներից ստացվել է տարեկան, միջին թվով, 3400 տակառ կամ 200000 դույլ գինի:

Գյուղն յուր տեղական կարիքների համար գանձած տուրքից վճարել է տարեկան.

Ջրբաժանին —	500 ռ.
Պետական երկդասյան դպրոցին—	2200 ռ. (վառելիքի և լույ.)
Պետ. քաղաքային երեքդասյան դպրոցին—	2000 ռ. (վառ. և լույ.)
Երկսեռ ծխական դպրոցին—	2500 ռ.

Հայոց երկսեռ ծխական դպրոցը, որ 1907 թվին, բանաստեղծ Սմբատ Շահազիզյանցի մահվան առթիվ, գյուղի հասարակության վճռով՝ կարգադրված է եղել վերակոչել ի հիշատակ նրա անունով, յուր հաստատուն եկամուտը չի ունեցել, միայն հասարակապատկան քարվանսարայի և խանութների 860 ռուբլի եկամուտը հատկացված է եղել նրան, և նրանք էլ տարեցտարի վարձու են տրվել դպրոցի հոգաբարձության անունով:

Աշտարակցին, ինչպես ասել ենք, վարուցանք չի արել կամ, լավ է ասել, քիչ է արել, անասնապահությամբ էլ չի պարապել. նա գլխավորապես պարապել է այգեգործությամբ և գինեգործությամբ, և արտադրել է գինի, օղի և ծառապտուղ: Արդ՝ ծառապտուղը տեղում ո՛չ մի գին չի ունեցել, հեռու տեղեր էլ արտահանելու ո՛չ մի հարմարություն չի եղել. գյուղը, մինչև իսկ, յուր մոտավոր կենտրոն Երևանի հետ կապված է եղել միայն նեղ, քարքարոտ և

52. Սմբատ Շահազիզ
53. Տեր Սարգիս Բզնունի (Միկիտան Սաքոյի նախատիպը)
54. Իսում Շահազիզյանը որդու հետ

55. Լևոն Թումանյան, փաստաբան, թարգմանիչ, Առաջին պետական դումայի պատգամավոր
56. Ակադեմիկոս Գ. Ղափանցյան
57. Աշտարակի ծխական դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները (ձախից չորրորդը՝ թարգմանիչ Նիկողայոս Թումանյան, հինգերորդը՝ վաստակավոր ուսուցիչ, Լենինի շքանշանակիր Մնացական Թամազյան)
58. Ակադեմիկոս Նորայր Սիսակյան
59. Աշտարակի հիվանդանոցի բուժաշխատողներ (1911 թ., ձախից երկրորդը՝ բժիշկ Ս. Սաժումյանց)

60. Սուքիասյանների (Դուլոյենց) ընտանիքը
61. Լոտոյի խումբը
62. Մի ընտանիք հին Աշտարակից





63. Ուռուց. աշտարակցիների գործարար կենտրոնն ու սիրված հավաքատեղին
64. Կարմրավորի (հետագայում Գաղթականների) թաղամասը
65. Բերդաթաղ (Քասախի ձորից)





66 Աշտարակը 1930-ական թթ.
67. Մարիանեի թաղը
68. Աշտարակի ժողովրդական տունը

69. Փողոց Աշտարակում, XIX դ. (քանդվել է 1930-ական թթ.)
70. Փողոց Հին Աշտարակում
71. Մուխանց տունը





72. Մուխսոնց տան շքամուտքը
73. Վարդազարյանների տունը (ժամանակակից լուսանկար)



74. Մառան

75. Աշտարակի բաղնիքը



76. Թոնրատուն
77. Աշտարակի այգեմիջյան ճանապարհներից մեկը
78. Քասախի կամուրջի կամարները

Цена № в Москве 50 коп. Российская Коммунистическая Парти[illegible]

ПРАВДА

Орган Центр. Ком. Моск. Ком. и Моск. окр. Ком. Р. К. П. (большевиков).

№ 277. Пятница 20 декабря 1918 г. ЕЖЕДНЕВНАЯ ГАЗЕТ[illegible]

Подписка на газету „Правда" на 1919 год принимается во всех почтово-телеграфных отделениях Р. С. Ф. С. Р. Подписная плата в России 12 рублей в месяц, за границу 15 рублей в месяц.

Международный союз социал-предателей.

Памяти тов. Прошьяна.

Н. Ленин.

79. ՌՍՖՍՀ Ժողկոմխորհի նիստերից մեկը (1918 թ.). կենտրոնում՝ Վ. Ի. Լենինը, ձախ կողմում՝ Պռոշ Պռոշյանը
80. Վ. Ի. Լենինի հոդվածը Պռոշ Պռոշյանի մահվան առթիվ («Պրավդա», 1918, № 277)
81. Հին Աշտարակը Քասախի ձորից







82. Չալաքոնց հացատունը
83. Սբ. Մարիանեի լուսամուտը
84. Վարդանաքակերում հայտնաբերված բրոնզեդարյան կավանոթ
85. Քասախի հնագույն կամուրջի մնացորդները (հելլենիստական դարաշրջանից)



6. Նոր Աշտարակը

դարուփոս, դժվարակոխ կածանով. առաջին, 24 վերստ երկարությամբ խճուղին Աշտարակի և Երևանի մեջ շինվել է 1886 թվին, իսկ երկաթուղին հասել է Երևան և բացվել երթևեկության համար 1901—2 թվերին: Դրա հետևանքով էլ ծառապտղի մի խոշոր մասը գործադրվել է տեղում, կամ, ինչպես ասում են, ֆոռուփուշ է եղել հումպետս, մի փոքր մասն էլ շրջակա գյուղերում փոխանակվել է յուղի և պանրի հետ՝ չնչին շահ բերելով տերերին: Գինին և օղին էլ, որոնք գյուղի գլխավոր արտադրանքն են եղել, մասամբ միայն արտահանվել են յաբուներին բարձած տիկերով՝ Ալեքսանդրապոլ, հետո և՝ Ախալքալակ, իսկ խոշոր մասով դարձյալ, վերոհիշյալ պատճառներով, մնացել են տեղում ու գին չեն հանել: Հետագայում էլ, երբ բացվել են ճանապարհները, և գինի, օղի քիչ է եղել, արտահանվել է Ռուսաստան, նա չի կարողացել մըրցել, յուր հատկությամբ ու որակով՝ Ղրիմի, Կախեթու գինիների հետ, և շուկայում ավելի էժան է գնահատվել, քան թե այդ գինիները: Աշտարակի գինին չի ունեցել այն հատկությունները, որ պահանջվել է Ռուսաստանում, սովորական սեղանի վրա գործածվող գինիներից. նա կտրուկ է եղել, զուրկ՝ հարկավոր նրբությունից, ախորժելի բույրից ու համադամությունից և, որ գլխավորն է, գլխացավ է պատճառել, ուստի և գնվել է ոչ իբրև սեղանի գինի, այլ՝ իբրև նյութ, ուրիշ գինիների հետ խառնելու համար, նրանց կըտրուկության աստիճանն ավելացնելու նպատակով:

Աշտարակում գինին պատրաստվել է նահապետական եղանակով. խաղողը տրորվել է ոտքով, տրորելուց առաջ խաղողը չի տեսակավորվել, հոտածը, փչացածը չի՛ ջոկվել, չի՛ զտվել, գինին չի՛ հնացվել, չի՛ պահվել դրա համար հատկապես շինված ներքնատներում, օդի պահանջված բարեխառնության մեջ, տեղից-տեղ փոխադրվել է ոչ տակառներով, այլ ներսից կպրամած տիկերով, և այլն և այլն: Գյուղի ուսումնասեր ընտանիքները՝ Շահազիզյանց Տեր-Սիմոնենք, Արղնեցի Տեր-Հովսեփենք, Սաղումենք, Սաժումենք, Ղափանցիք, Ղարսեցի Հարությունենք և մյուսներն, ուղարկելով իրենց որդոցը գյուղից դուրս, հեռու տեղեր ուսման, պետական բարձրագույն դպրոցները, աչքի առաջ չեն ունեցել գյուղի կարիքները և իրենց հաց տվող գործի զարգացումը, և ընտրություն չեն արել այդ դպրոցների մեջ, որի հետևանքն էլ այն է եղել, որ հետագայում գյուղն ունեցել է բավականին թվով համալսարանավարտներ՝ բժիշկ, իրավաբան և այլն, որոնք, սակայն, իրենց մասնագիտությամբ ու գործով կապված չլինելով գյուղի հետ, չեն էլ վերադարձել գյուղ, և ոչ մի մասնագետ գյուղատնտես, այգեգործ և գինեգործ, որոնք այգետերերի որդիք լինելով, անկասկած, կվերադառնային գյուղ և, գիտության համաձայն, նորագույն եղանակով և՛ իրենց այգիները կմշակեին, և՛ գինեգործությունը կզարգացնեին, օրինակ հանդիսանալով և մյուս գյուղացիներին: Եվ Աշտարակն երկար ժամանակ խեղճ է մնացել և անօգնական, զուրկ՝ մասնագիտական

նորագույն հասկացողությունից այգիների մշակման և գինեգործության մասին, կառչած հնագույն, նահապետական՝ որդի-հորից տեսածներին ու լսածներին։ Եթե այս բոլորին ավելացնենք և այն, որ նահապետական կյանքի և վարք ու բարքի փոփոխվելու հետևանքով գյուղում, հետզհետե, վերացել է սեզոնային աշխատանքների ժամանակ իրար եղբայրաբար և փոխադարձաբար օգնելու, փոխարա բռնելու ընտիր սովորությունը, և գյուղացին ստիպված է եղել դիմել վարձու բանվորական ուժի, և ինքը դարձել է մի տեսակ վարձող, կառավարիչ կամ փոքրիկ կալվածատեր, և շրջակայքից գյուղը լցված հիշյալ եկամուտ բանվորական ուժը շարունակ ծծել, տարել է Աշտարակի եկամտի մի զգալի մասը, որ առաջ, փոխարա բռնելու շնորհիվ, գյուղումն էր մնում, այգետերերի գրպաններում, ակներև կդառնա գյուղացիների եկամտի ու ծախքի մեջ անհամաչափության գոյանալու և նրանց հետզհետե չքավորվելու հանգամանքը։

Այստեղ ավելորդ չենք համարում նշել և մի այլ, կարևոր երևույթ, որ նույնպես պատերազմների՝ Աշտարակում, և ո՛չ միայն Աշտարակում, առաջ բերած փոփոխությունների հետևանքն է եղել։ Մենք արդեն ասել ենք, որ Աշտարակում սկսած և հետզհետե զարգացած առևտրի շնորհիվ գյուղում առաջ էր եկել ունևոր անհատների մի փոքրիկ խմբակ, որ գյուղի չափով մի խոշոր կարողություն էր ձեռք բերել։ Արդ՝ նահապետական կյանքի քայքայվելու և նոր, ավելի խոշոր պահանջներով նիստուկացի առաջ գալու և գյուղի՝ դրա հետևանքով չքավորվելու պատճառով, գյուղացիք միջոցների սղությունից նեղվելով՝ ստիպված են եղել իրենց խաղողը հենց այգեկութի ժամանակ, տեղում գոյություն ունեցած գներով վաճառել տեղի ունևորներին, զրկվելով գինի քցելու և, միաժամանակ, պահելու և հետո ավելի ձեռնտու գներով վաճառելու շահույթից։ Բացի դրանից, նրանք տարվա ընթացքում, հաճախ, պարտքով ապրանք են առել նրանց խանութներից, առաջիկա բերքի ժամանակ բերքով վճարելու պայմանով, որի համար, իհարկե, ավելի տոկոս են վճարել, չենք խոսում արդեն նրանց՝ գյուղում բույն դրած վաշխառուներից երբեմն փոխ առած գումարների մասին, որի համար կրկնակի խոշոր տոկոսներ են վճարել։ Այսպիսով՝ չունևորները շարունակ զրկված են եղել, իսկ ունևորները՝ ունենալով ազատ դրամական միջոցներ, ավելի ցած գներով մեծաքանակ ապրանք են կարողացել ձեռք բերել, իրենց այգիներից ստացած բերքի հետ խառնել, գինի պատրաստել, խնամքով պահել, հնացրել և, գները բարձրանալու դեպքում, ավելի շահույթով վաճառել, որի հետևանքով գյուղում, հետզհետե, գոյացել է ունևորներից և վաշխառուներից կախյալ կացության մեջ գտնվածների մի խոշոր զանգված, որ կամակատար է եղել նրանց և նպաստել նրանց՝ գյուղի կառավարության գործերում ազդեցիկ տեղ գրավելու, և հնարավորություն է ստեղծվել այն սխրագործությունների գյուղում կատարվելու համար, որ մենք յուր տեղում մասամբ արդեն նշել ենք։

Տեր Սարգիս Բղնունին նկարագրելով 1877 թվի ռուս-տաճկական պատերազմի ասիական ճակատի ընթացքը, ի միջի այլոց, խոսում է և Աշտարակի չքավորվելու և դրա պատճառների ու հետևանքների մասին։ Նա այդ մասին ասում է. «Վերջապես ռուսը հաղթող հանդիսացավ, Եվրոպայի տերությունները միջամտեցին հաշտեցնելու այս երկու կռվող պետություններին. Բեռլինումը դեսպանաժողով կազմեցին՝ պայմաններ որոշելու, դաշինք կռելու, 61 հոդվածումն էլ Հայոց ազգին ազգային իշխանություն տրվի, և զանազան պայմաններով հաշտություն հաստատվեցավ. ռուսները Արզրումը ետ տվին տաճկին։ Այն տարին Երևանա երկիրը հարստացավ փողով, ժողովուրդը շռայլ կերպարանք ստացավ, առավել մեր աշտարակցիքը. գինին, արաղը թանկ ծախեցին և չափազանցեցին իրանց ապրուստի գիրքը։ Երկու տարի չանցած՝ թանկությունը վրա հասավ, ցորենի խալվարը երկու հարյուր մանեթի հասավ, միայն թե այս թանկությունը վեց ամիս տևեց, եթե ոչ սաստիկ սով կպատճառեր. զկնի նոր կալերը դուրս գալուն հետզհետե էժանացան, նույնպես էլ ամեն պաշարները։ Այս պատերազմի հետևանքը այն եղավ, որ հիմա ժողովուրդը մեծ պարտքի տակ տքում է, ավելի արտաղահանության ծանր հարկերը ճնշում է ողորմելի աշտարակեցոնց, համարյա այգիքերանց քանդելու հոգսով են. որովհետև ծախսը մուտքից ավելանում է» (թ. 187 ա—բ)։

Աշտարակցիների հետզհետե չքավորվելու մի ուրիշ, կարևոր պատճառ էլ եղել է նրանց հողերի մի խոշոր մասի քարքարոտ, անջրդի և ոչ պիտանի լինելը։ Նրանք, իսկապես, ունեցել են 573,50 դեսյատին ջրարբի, պիտանի հող՝ բռնված այգիներով և պարտեզներով, և 42 դեսյատին ջրարբի*, պիտանի հող՝ վարուցանքի համար։ Հասկանալի պիտի լինի, որ պիտանի հողի այդ քանակը չպիտի կարողանար բավարարել այնպիսի մի մեծ գյուղի պահանջները, ինչպիսին Աշտարակն է եղել, որ դարավերջերին արդեն ունեցել է 720 տնտեսություն և 4000 հոգի երկսեռ բնակչություն։ Ճիշտ է, Աշտարակը յուր պիտանի հողի վերա տնկած է եղել այգիներ և պարտեզներ, բայց դրանք, իրոք, այնքան ընդարձակ չեն եղել, որ ի վիճակի լինեին բարվոքելու գյուղի տնտեսական կացությունը։ Միջին թվով՝ ամեն մի տնտեսության բաժին ընկել է մի դեսյատինից էլ պակաս ջրարբի, պիտանի հող, և այդ էլ դեռ հավասարապես բաժանված չի եղել ամենքի մեջ, և օրենքով չէր էլ կարող այդպես բաժանված լինել։ Այգիները գտնվել են գյուղացիների տիրապետության ներքո, ժառանգաբար, ենթակա չեն եղել վերաբաժանման և, գոյություն ունեցող ցարական օրենքի զորությամբ՝ վաճառվել են միմյանց, որի հետևանքով էլ գյուղում առաջ է եկած եղել զգալի անհավասարություն։ Այն ժամանակ, երբ տնտեսություններից մի քանիսը ունեցել են 5—10 դեսյատին ջրարբի, պիտանի

* Տե՛ս էջ 239-ի ծանոթությունը— Պ. Հ.։

հող, մյուսներն ունեցել են միայն $^1/_2$ կամ $^3/_4$ դեսյատին, մի քանիսն էլ չեն ունեցել և ոչ մի դեսյատին:

Այսպիսի կացության հետևանքը հայտնի է, թե ի՞նչ պիտի լիներ. քիչ հող ունեցողների և ամենևին չունեցողների թիվը հետզհետե պիտի բազմանար, և գյուղում պիտի առաջ գար անհողինություն՝ յուր բոլոր վնասակար հետևանքներով: Դրա առաջն առնելու համար գյուղի հասարակությունը, սկսած 1893 թվից, քանիցս անգամ միջնորդություն է հարուցել կամ իրեն ճանաչել սակավահող և ավելացնել հողի քանակը այն չափով, որ ամենքին բաժին ընկնի գոյություն ունեցած նորմայի չափով՝ 3 դեսյատին, կամ իրավունք տալ գյուղին՝ ջուր հանել Քասախ գետից, գյուղապատկան ուտին հողը ոռոգելու համար: Բայց բարձր իշխանությունն ամեն անգամ էլ, զանազան պատճառաբանությամբ՝ հետաձգել է և չի բավարարել հասարակության արդարացի պահանջը, մինչև որ 1910 թվին 30 բահեն ջուր առնելու իրավունք <է> տվել նրանց՝ գետից, գարնանային ջրերից, Աստվածընկալ գյուղի տակից, մի արտոնություն, որից, սակայն, չեն կարողացել օգտվել գյուղացիք՝ նյութականի սղության պատճառով: Ջուրը պիտի հանվի եղել Հասան խանի կոչված հին առվի հունով, որ մինչև օրս էլ պարզ երևում է:

Նոր նիստուկացի և վարք ու բարքի ընդունելու ընթացքում Աշտարակի երիտասարդ սերունդն էլ, ինչպես այդ սովորաբար լինում է, լավի ու վատի մեջ խտրություն չի արել. նա հաճախ, նահապետական կյանքի հնացածի, անպետք դարձածի հետ միասին, դեն է շպրտել և լավը, պիտանին, նոր կյանքից էլ ընդունել է, լավի հետ միասին, և խոտելին՝ <...> արբեցողությունը, շռայլությունը, ցոփ կենցաղավարության եղանակը և այլն: Ահա՛ այսպիսի կացության մեջ, երբ հինը խախտվել է, նորն էլ դեռ լիովին չի հաստատվել, և ամեն բան գյուղում գտնվել է երերուն և տատանվող դրության մեջ, անհրաժեշտորեն և շատ կարևոր է եղել, որ գյուղի կառավարության գլուխ կանգնած լինեին խոհեմ և ամեն բան լավ կշռադատող մարդիկ, որ հնարավոր լիներ 1866 թվի օրենքից օգտվելով՝ պղտորածը պարզեցնել, վարարածն յուր բնական հունի մեջ դնել, խրատել, հասկացնել, լավը պաշտպանել, վատը հրով ու սրով վտարել: Բայց, դժբախտաբար, այդպես չի եղել, այլ, ընդհակառակը, գյուղի կառավարության գործի մեջ, վաշխառուների և մի քանի, միայն իրենց շահի հոգսով պատված անհատների ազդեցիկ տեղ գրավելու հետևանքով, հաճախ գնված և նախօրոք պատրաստված քվեներով՝ ընտրվել են և գործի են անցել գող, կաշառակեր, խարդախ, կասկածելի բարոյականության տեր տանուտերներ ու դատավորներ, որոնք և կառավարել են գյուղն իրենց ունակությունների համեմատ, և ծայր է տվել այն, ինչ որ պիտի լիներ:

Իսկ թե ի՞նչ է եղել, ի՞նչ է կատարվել գյուղում այդպիսի տանուտերների ու դատավորների ժամանակ, այդ մասին տեսնենք, թե ի՞նչ է ասում Տեր

Սարգիս Բղնունին. «Ընդուր համար,— ասում է նա,— մարդասպանությունը շատացել ա, գյուղի քուչումը անմեղ արարանցուն օրով ցերեկով, թվանքով սպանեցին, Լալամանու տղին բաղերի քուչումը սպանեցին՝ իրան կնոջ պատճառով, գող Ավոյին հարսանիքի տանը սպանեցին... էս մեր անիծած ջահելները հիգաննոնցումը էլ շինություն չի թողին. ո՜վ ում հետ մի պստիկ ոխ ունի, գիշերը գնում ա, նրա հնձանը կրակում, ծառերը, թփերը կտորում... Հալալ մարդիկը մնացել են գլխըների վրա մոլորած, չեն իմանում ինչ անեն: Առաջի ժամանակները մեր հնձանները հիգաննոնցումը մեր ամառվա բնակարանն էր, բայց հմիկ ոչ մի տեղ մի ծածկ չկա, որ անձրևի էկած վախտը թաքչվելուց ազատվի: Համա մեղավորը մենք ենք, թե որ սկիզբը հնձան կրակողներին բռնիլ տված ըլնեինք ու Սիբիր ղրկած, էն վախտը ծառ ու թուփ կտրող էլ չէր ըլնիլ: Դրուստ որ մեղավորը մեր գեղի առաջի մարդիկն են... խի՞ են երեսպաշտություն անում, կաշառք առնում ու իրանց գիտեցած մարդին տանուտեր դնում, որ նա էլ գողերին ընկեր դառնա, ու գեղը քանդեն. տանուտերի անունը դրել են Ղաղոյի էշ, ասելներն էն ա, թե ինչ գողանում են, տանուտերին քիչ բանով խաբում, իշացնում, իրանք հա՛մ արդարանում են, հա՛մ էլ աներկյուղ, շիրախանեքանցից կարասներով արաղներ գողանում. էլ հավ չի մնացել տներումը, որ անիծած գող ջահելները տարած չի ըլնին. դիվան չկա, դատաստան չկա, ուժովը անուժին ուտում ա, դարձել ա Թուրք Մամմատխանի վախտի պես...

Խեղճ հալալ ու առաջին մարդիկները ի՞նչ անեն տանուտեր ընտրելու վախտը, քանի որ գող մարդիկը տանուտեր ըլնելու համար առաջագույն պատրաստում են իրանց համար քար քցողները, որոնք գող են և ավաղակ. եթե նա տանուտեր ըլնի, գողերը կարող են տանուտերի գիտությամբը, ազատ, իրանց գործը կատարել: Դե՛, հմիկ չե՞ս տեսնում, որ օրենք ա դարձել. գյուղացիքը, թե՛ հարուստ, թե՛ աղքատ, մեկ-մեկ քար, վիճակի նման պտի քցեն. ում քարը շատ ըլնի, նա տանուտեր ու սուդիա կդառնա, ըտուր համար էլ գողերի ընկերները շատացել են, առաջի ու հալալ մարդիկը մնացել են մոլորված ու շվարած: Մի ինձ ասա՛, տեսնեմ հալալ մարդը առանց ռոճիկի ու առանց վարձի գեղի տանուտեր կդառնա՞, թե՞ ոչ, նա միտքը չունի գողություն անելու ու կաշառք առնելու: Չէ՛, չէ՛, եղբայր ջան... մինչև ժողովուրդը լավ ռոճիկ չի նշանակի տանուտերին ու սուդիաններին, ու խելոք մարդիկներ դնեն դատավոր, գողությունը ու կաշառքը չի վերջանալ. ո՞վ ա գիտում, դեռ ավելի, օրեցօր, դեպի վատը կգնա, ու ժողովուրդը աղքատությունի մեջ կընկնի, զրկեղությունը կշատանա, աստված ազատի, թե ընչե՞ր կլինի» (թ. 163ա—164ա):

Մենք ասացինք, որ 1886 թվին միայն բացվել է առաջին խճուղի լայն ճանապարհը Աշտարակի և Երևանի մեջ (Երևան—Ալեքսանդրապոլ), թե չէ, դրանից առաջ և մինչև այդ, գյուղը կապված է եղել Երևանի, Գյումրու, Էջ-

միածնի և մյուս գլխավոր կենտրոնների հետ նեղ կածաններով, ձորամեջերով (Օշականի խրամը), դժվարակոխ ճանապարհներով, և երթևեկող գյուղացիք հաճախ չարաչար տուժել են թե՛ ճանապարհների դժվարություններից և թե՛ ավազակների երեսից կրած տառապանքներից, ավազակների, որոնք իրենց համար շատ հարմար թաքնվելու տեղեր են գտել ճանապարհների վերա. մեծամեծ ժայռերի ետևը, խոր ձորակների ու ձորերի մեջ և անակնկալ դուրս եկել և հարձակվել գնացող-եկողների վերա, և կողոպտել ու սպանել: Աշտարակի խաղաղ գյուղացիությունը ընտել չի եղել զենքի գործածության՝ մինչև իսկ յուր անձի պաշտպանության համար: Մեր խոսքը այստեղ, իհարկե, Աշտարակի գյուղացիության մասին է ընդհանրապես, թե չէ Աշտարակում էլ եղել են մասնավոր անհատներ, որոնք հռչակված են եղել իրենց քաջությամբ, որոնցից մի քանիսի անունները մենք առիթ ենք ունեցել հիշել յուր տեղում: Երևանի կարճ ճանապարհի յուրաքանչյուր քարափ ու ժայռ, յուրաքանչյուր ձոր ու ձորակ հիշեցնում են աշտարակցիներին նրանց պապերի գլխով անցած այս կամ այն ողբերգական դեպքը և աղետը: Մինչև այսօր էլ, օրինակ, աշտարակցիք ցույց են տալիս Միկինի ձորը, որտեղ սպանվել է Խալիլի տղա Միկինը, որ մի քաջ տղամարդ է եղել: Նա ինը զինված ընկերների հետ գնալիս է եղել Երևան, և Քեշիշ-Մազարի կոչված քարակիտուկի մոտ ենթարկվել են ավազակների հարձակման, որոնք դուրս գալով մոտակա ձորից՝ կտրել են նրանց ճանապարհը և պահանջել իջնել ձիերից և ունեցածները հանձնել իրենց: Միկինը հանել է ուսից հրացանը և կռվի բռնվել նրանց հետ, իսկ մյուսները դես ու դեն են փախել, թողնելով նրան մենակ 15 հոգի ավազակների դեմ: Դրա հետևանքով նա, չորս մարդ ավազակներից սպանելուց հետո, զինաթափ է արվել, քաշվել ձորը, 20 տեղից դաշույնահար և մի տեղից գնդակահար եղել ու մահամերձ գետին է տապալվել:

Ավազակները փախել են: Լուրը հասել է Աշտարակ, և գյուղացիք հասել են օգնության, ավազակներից մեկին բռնել Երևանի Դալմի այգիների գլխին, իրեն՝ Միկինին էլ գտել կիսամեռ ընկած ձորում, որ այնուհետև կոչվել է Միկինի ձոր: Նրանք դրել են վիրավորվածին ձիու վերա, որ տանեն քաղաք, բժշկի մոտ, բայց նա արդեն արյունաքամ եղած լինելով՝ դեռ այգիների ճանապարհին ավանդել է հոգին: Մարմինը բերել, դրել են ոստիկանատան առաջ, որտեղ դատավորը (ոստիկանապետը), սպանության հանգամանքներին ծանոթանալուց հետո, պատվիրել է տանել գյուղ և թաղել:

Գյուղում հիշվում է և մի այլ դեպք, որ պատահել է դեռ նահապետական կյանքի ժամանակ, մեր արդեն հիշած Խում Տահաղիզյանցի տանուտերության օրերով, և յուր ողբերգական բնույթով բովանդակ գյուղի գութը շարժել: Բարեկենդանի օրերն է եղել, աշտարակցիների ամենամեծ ուրախության օրերը. քեֆ, ուրախություն, պար, աշել, խոսել, ծիծաղել, կատակներ անել, դափ ու

զուռնա, մի խոսքով՝ խրախճանություն անվերջ, անհատնում: Բոլընենց երկու եղբայր՝ Օվանեսը և Պետոն, երկու աղքատ, աշխատավոր տղերք, Երևանի թե Էջմիածնի ճանապարհով՝ գնացել են Փարաքար, որ երկու բեռը քացախ առնեն և նույն օրն էլ վերադառնան: Սակայն ճանապարհին ընկել են ավազակների ձեռքը, որոնք նրանց քաշելով մի փոս տեղ՝ հավի պես մորթել են, ձիերը առել և թողել, փախել: Եղբայրներից փոքրը, ասում են, դեռ միայն հինգ օրվա պսակված է եղել, և նրա հինա դրած ձեռքերի կարմրությունը տակավին անցած չի եղել, նորապսակ հարսի աչքն էլ ճանապարհին է եղել, որ վերադառնան: Բայց նրանք ոչ միայն նույն օրը, այլև հաջորդ օրն էլ չեն վերադարձել, ուստի և նրանց ազգականները գնացել են Երևան և Էջմիածին և լուր են բերել, որ նրանք այն տեղում չեն եղել, և գյուղը հուզվել, կասկածի մեջ է ընկել, իշխաններն էլ հրամայել են ժողովրդին՝ իջնել կտուրներից, աստված կանչել, որ նրանք կենդանի մնացած լինեն և ողջ-առողջ վերադառնան: Դադարել է ուրախությունը, լռել է զուռնան, և սուգն ու թախիծը պաշարել է գյուղը: Տանուտերը գզրին գցել է փողոցները, կանչել տվել, որ գյուղացիները 15 տարեկանից մինչև 50 տարեկանը դուրս գան առապարը, զույգ-զույգ շրջեն ամեն տեղ, Օշականից բռնած մինչև Երևան, որոնեն և գտնեն անհետ կորածներին: Պայմանավորված է եղել, որ ով որ գտնի, հրացան արձակի, որ ամենքը հավաքվեն: Ինքն՝ Խումն էլ մի ընկերի հետ դուրս է եկել առապարը, որոնել, գտել և հրացան արձակել: Հավաքվել են, կտրած գլուխները ձգել խուրջինի մեջ, մարմիններն էլ կապել ձիերի վերա և բերել գյուղ: Համարյա՛ ամբողջ գյուղը ընդառաջ է դուրս եկել և լալով, ողբալով տարել, հանդիսավոր թաղման կարգ կատարել և թաղել:

Սրանք միայն ցայտուն օրինակներ են եղել, թե չէ՝ սպանության ու վիրավորելու դեպքեր խիստ շատ են պատահել, իսկ կողոպուտներին թիվ ու համար էլ չի եղել... Սարդարության ժամանակները <...> գյուղերի ու դրանց հողերի սահմաններում գտնված ճանապարհների հսկողության պարտականությունը դրված է եղել, ինչպես ասել ենք, գյուղական համայնքների վերա, խստագույն պատասխանատվությամբ, իսկ ռուսաց ցարական կառավարության օրերով այդ կարգը վերացել է, և դրա փոխարեն, ճանապարհների վերա, շինված են եղել պահականոցներ և դրանց հսկողության հանձնված թե՛ ճանապարհների հսկողությունը և թե՛ երթևեկողների անվտանգությունը: Մի այդպիսի պահականոց էլ շինված է եղել Աշտարակի և Երևանի մեջ, կես ճանապարհին, որ կոչվել է թուրքերեն ղարաուլխանա և գտնվել է մի բարձրադիր տեղի վերա, ո՛չ հեռու ներկայումս եղած և փոշտ կոչված, նորագույն ժամանակների նույն նպատակով կառուցված կոկիկ, այժմ կիսավեր շինությունից: Դա, այդ ղարաուլխանան բաղկացած է եղել մի պարսպապատ, գոմաձև, առանց լուսամտի, երդիկավոր օդայից, որի մեջ իրենց միշտ պատրաստ, թամբած ձիերով

պատսպարվել են որոշ թվով զինված պահակներ, որոնցից մեկը հերթով, գիշեր-ցերեկ, տանիքի վրա պահակություն է արել, հսկել և վտանգի դեպքում իմաց տվել յուր ընկերներին։ Սակայն այդ պահականոցները ընդհանրապես և Աշտարակի պահականոցը մասնավորապես քիչ են նպաստել իրենց հանձնված ճանապարհների անվտանգության, որովհետև, նախ՝ իշխանության հսկողությունը նրանց վրա շատ թույլ է եղել, երկրորդ՝ պահակներ սովորաբար կարգվել են, անխտիր և հաճախ, շատ կասկածելի մարդիկ, որոնք հենց ինքյանք ավազակ են եղել և ավազակների ընկերներ։ Աշտարակի ճանապարհի պահակները, օրինակ, հաճախ կարգվել են վայրենաբարո չոբանքյարացիներ, որոնց գլխավոր բան ու գործը հենց ավազակությունն է եղել։

Քեշիշ-Մազարի քարակիտուկը նույնպես մի հուշարձան է Երևանի ճանապարհին կատարված մի սպանության, որ, սակայն, կատարված է ո՛չ ավազակների ձեռքով և ո՛չ կողոպտելու նպատակով, այլ աշտարակցի մի խմբակի ձեռքով, որ դրանով յուր վրեժն է լուծել սպանվածներից, նրանց՝ իրենց և, ընդհանրապես, գյուղին հասցրած բազմաթիվ զրկանքների համար։

Քեշիշ-Մազարի թուրքերեն նշանակում է քահանայի գերեզման, բայց այդտեղ, այդ քարակիտուկի տակ, Պռոշյանցի ասելով՝ թաղված է ոչ թե մի քահանա, այլ Աշտարակի քահանաներից մեկը և գյուղի հայտնի տանուտեր, Շահազիզենց Ղևոնդ աղան։ Այդ մասին Աշտարակի ավանդական պատմությունը պատմում է հետևյալը։ Երևանի Հյուսեին Ալի խանի սարդարության օրերով, ասում են, տանուտեր է եղել Աշտարակում Շահազիզենց Ղևոնդ աղան, որ մի ունևոր, ազդեցիկ մարդ է եղել և տանուտեր է ընտրվել գյուղին մատուցած յուր որոշ ծառայությունների և յուր անձնական արժանիքների համար, բայց տանուտեր ընտրվելուց հետո, սարդարի սնոտի խոստումներից կուրացած, բոլորովին փոխվել է։ Դա գործակից ընտրելով իրեն գյուղի քահանաներից մեկին՝ էլ չարիք չի մնացել, որ բերած չլիներ գյուղի գլխին։ Նա անդադար գնացել, եկել է Երևան, քսություններ ու մատնություններ է արել, կողոպտել է տվել գյուղն ու գյուղացիներին, սրա-նրա աղջիկը քաշել, տարել խանի հարեմը, մի խոսքով՝ խանին հաճելի լինելու համար և նրա միջոցով փառքի ու մեծության տիրանալու նպատակով մի զզվելի դահիճ, մի ատելի դավաճան է հանդիսացել յուրայինների համար։ Այդ բոլորի հետևանքով, երբ համբերության բաժակը լցվել է, նրա ձեռքով զրկված, թշվառացած, անբախտացած անձերից կազմվել է մի խմբակ, որ մի անգամ տեղեկանալով որ տանուտերն յուր գործակցի հետ միասին գնալու է Երևան, յուր հերթական մատնողությունն անելու, առաջ ու առաջ գնացել, թաքնվել է ճանապարհին, այն խոր ձորում, որ հետո կոչվել է Միկինի ձոր, և տեղնուտեղը սպանել, երկուսին էլ ձգել է մի փոսի մեջ, ճանապարհի կողքին, հողով ծածկել ու քարեր հավաքել վրան։

Այնուհետև սովորություն է դարձել, և ամեն մի անցորդ, այդ գերեզմանի մոտից անցնելիս, մի սուրբ պարտականություն է համարել յուր համար՝ անեծք կարդալով մի քար նետել նրա վրա, որից և գոյացել է հիշյալ քարակիտուկը (տե՛ս «Կոլածաղիկ», ԾԱ և ԾԲ գլուխները)։

Երևանի ճանապարհի՝ այդ երկար տարիներ շարունակ, սերնդե-սերունդ անընդհատ կրկնվող տառապանքներից աշտարակցին հասած է եղել այս ամոթալի զրության, որ կարծես թե զրկված է եղել այն սովորական, բնական անձնապաշտպանության բնազդից, որ հատուկ է ամեն մի կենդանու, մինչև իսկ ամենաթույլ էակի. նրա աչքերն այնքան վախեցած են եղել, նա այնքան բարոյալքված, ճնշված ու խեղճացած է եղել, որ, կարծես թե, բնական երևույթ է համարել չոբանքյարայի կողոպտելու և յուր՝ նրա ձեռքով կողոպտվելու հանգամանքը, ուստի և ոչ էլ փորձել, ավազակների հարձակվելու դեպքում, զենք բանեցնել, դիմադրել. Միկինները բացառություն են եղել։ Նա Երևան է գնացել և հաճախ զենք էլ չի առել յուր հետ, և եթե առել էլ է, գործածելու համար չի առել, այլ այնպես, ձևի համար միայն։ Տեր Սարգիս Բղնունու ասելով, երբ աշտարակցին ճանապարհին պատահել է ավազակներին, նա յուր փրկությունը որոնել է կամ փախչելու, խույս տալու մեջ, կամ լուռ ու մունջ իջել է ձիուց, հրացանն ու ձիու սանձը տվել է ավազակների ձեռքը և ասել. «Ա՛լ, աղա՛*, փեշքեշ եմ անում քեզ»։ Ավազակներն էլ տեսնելով հայկին խեղճացած, գլուխը խոնարհած, վիզը ծռած, անասուն կտրած իրենց առաջ կանգնած, առել են նրանից և՛ հրացանը, և՛ ձին, և՛ գրպանի դրամը, իրեն էլ քաշել, տարել են խոր ձորը, ձեռքերն ու ոտքերը կապել, վայր ձգել, հանել վերայից շորերը, մինչև վերջին շապիկը, և հավի պես մորթել, որ չիրթա, չմատնի նրանց իշխանության ձեռքը։

Այսպիսի կացությունը շարունակվել է մինչև յոթանասնական և ութսունական թվականները, երբ 1877 թվի ռուս-տաճկական պատերազմից հետո, Բեռլինի վեհաժողովում մի որոշ ձևավորում է ստացել «Հայկական խնդիրը» և վառ հույսեր ներշնչել հայ ժողովրդին՝ ամեն տեղ ազատագրվելու ամեն տեսակ ճնշումներից, ևս և, երբ այդ ուղղությամբ հայ գրականության կատարած անընդհատ և համառ քարոզությունների ազդեցության ներքո արիության ու ինքնաճանաչության հոգի է հարուցվել նրանց մեջ։ Բացի սրանից, երբ 1886 թվին բացվել է Երևան—Աշտարակ խճուղին, և հեշտացել ճանապարհը, բազմացել է երթևեկողների թիվը և, բնականաբար, դժվարացել է ավազակությունը, իսկ հաջորդ, 1887 թվին մուտք է գործել Անդրկովկասի ընդհանուր զինվորագրությունը և հայերին ևս սիրել տվել զենքը ու զենք բանեցնելու գործը՝ իրենց ինքնապաշտպանության համար։

---

* «Ա՛լ, աղա» նշանակում է՝ վերցրո՛ւ, աղա (թուրքերեն)— Գ. Հ.։

Աշտարակի ճանապարհի հայտնի տեղերից մեկն էլ թուրքերեն Ախար-
Բախար կոչված տեղն է։ Թե ինչո՞ւ է, ի՞նչ մտքով է այդ տեղը այդպես կոչվել
ու կոչվում, մենք ճշտիվ դժվարանում ենք մեկնել, բայց, կարծում ենք, որ
այդտեղից ամբողջ գյուղի տեսարանը գնացողի առաջ մեկ անգամից բաց-
վելու պատճառով պետք է եղած լինի։ Ախար-Բախարը գյուղից ոչ հեռու մի
բարձրավանդակ է, որտեղից խճուղին ծռվում է դեպի ձախ, իսկ կարուկ, հին
ճանապարհը շեշտակի իջնում է դեպի Քասախի ձորը, և այդ ճանապարհով
գնացողը հանկարծ իրեն գտնում է կանգնած վաղեմի, հնագույն գյուղի
առաջ, գյուղի, որ տարածվում է ձորի մյուս ափի երկարությամբ, յուր բազ-
մաթիվ խաչքարերով, հնագույն հուշարձաններով, յուր ապառաժափոր
այրերով, հրաշալի առվով, յուր՝ ուղիղ ձորի վերա կախված տների պատշգամբ-
ներով և յուր անդնդախոր, կանաչազարդ, ծառատունկ ձորով, մթին Գոմշա-
խրամից սկսած մինչև Օշականի սնուսը, որի մեջ Քասախը, անհիշելի ժա-
մանակներից, պայքար է մղել և մղում յուր ապառաժոտ հունի դեմ, մերթ
հաղթական մռնչալով, մերթ խեղճացած հեծկլտալով և միշտ էլ խշշալով ու
մրմռալով։ Ուշագրավ է վաղեմի գյուղի ընդհանուր տեսարանը և ձորի անար-
վեստ գեղեցկությունը. մի ինչ-որ խորհրդավոր զգացմունք, խորին անցյալի
հուշեր համակում են դիտողին։ Այո՛, ճանապարհի այդ տեղը մի բանով տպա-
վորված ու շեշտված պիտի լիներ, ինչպես որ շեշտվել ու տպավորվել է դրա
անվան մեջ՝ Ախար-Բախար։ Հնումը Շիրանավորի տանիքի վերա, վտանգի
ժամանակ կանգնած գյուղապահները՝ առանձիները, գլխավորապես հենց այդ
կետն են իրենց առանձին հսկողության առարկա դարձրած եղել և ահազանգ
հնչեցրել վտանգի մերձենալու մասին, որովհետև թշնամիները, որ եկել են
Երևանի կողմից, ճանապարհի հենց այդ կետից է եղել, որ առաջին նվագ
աչքի են ընկել, նկատվել։ Աշտարակի այդ ընդհանուր տեսարանն այնքան
ուշագրավ է, որ համակել է անցյալի հուշերով և այնպիսի շատ բան տեսած,
շատ տեղեր այցելած և դիտած եվրոպացի ուղևորների ուշն ու միտքը, ինչ-
պիսին եղել են Ջ. Մորիեր անգլիացին (Morier) և բժիշկ և բուսաբան Կ. Կոխ
(K. Koch) գերմանացին, որոնցից առաջինն իջևանել է գյուղում յուր երկրորդ
ուղևորության ժամանակ, 1813 թվի հունիսի 13-ին, իսկ երկրորդն եղել է
այդտեղ և գիշերել 1837 թվի ապրիլի 18-ին։

Այս մասին Ղևոնդ Ալիշանը յուր «Այրարատի» Աշտարակին նվիրած
էջերում (էջ 185), ասում է, որ «թեև ձեռքներս հասած մեր պատմիչների
գրվածներում Աշտարակը հիշվում է ոչ առաջ, քան իններորդ դարում, երբև
հայրենիք Գեորգ Ա կաթողիկոսի, բայց ամեն բանից էլ երևում է, որ նա
Արագածոտնի ոչ միայն մի քանի գյուղերի ու ավանների պես ծաղկած է
եղել դեռ ավելի հին ժամանակները, այլև շատերից էլ, եթե ոչ բոլորից,

ավելի ականավոր ու շինաշատ է եղել, որին ապացույց կարող են լինել այս-
տեղ ու այնտեղ սփռված շինվածների ու պարիսպների մնացորդները, որոնք
և եվրոպացի ուղևորներին ևս, նրանց հարևանցի տեսությամբ, թվել են, թե
այդ տեղը մեծ շեն է եղել և ոչ պակաս շուք է ունեցել, քան մի բարգավաճ
երկրի արժանավոր քաղաք, ինչպես վկայում է Մորիեր անգլիացին...
Մտքով ավելի ևս հեռու է գնացել,— շարունակում է նա,— գերմանացի
Կոխը, ...որ զվարճանալով քարերի վերայից և քարերի միջով հոսող Քա-
սախ գետի խոխոջանքից գիշերվա լռության մեջ, գրում է այսպես. «Երբև-
մըն մի գղյակ է բարձրանալիս եղել Քասախի հերձոտված քարափունքի վե-
րա և, հավանորեն, իշխել բոլոր գավառին։ Թերևս Վաղարշապատի Արշա-
կունիները ամառվա մի մասն այդտեղ են օթագայած եղել, և, գուցե, հենց
ես էլ այժմ գտնվում եմ այն սենյակներից մեկում, որտեղ և նրանք են հանգ-
չելիս եղել գիշերը։ Իմ ոտքերի տակը խոխոջում էր Քասախը և այնպիսի
զորեղ կարկաչանքով, որ և ոչ մի կենդանու ձայն չէր խանգարում գիշերվա
անդորրությունը։ Անհեղեդ քարաժայռերը լուսնի լուսավորության տակ մի
օտարոտի կերպարանք էին առնում, և նրանց ստվերները, կարծես թե, պտըտ-
վում էին։ Դիմացը կար և մի այլ պատկառելի շինություն, բայց այդտեղից
լույսի և ոչ մի նշույլ չէր ցայտում, բազմաթիվ դարերից ի վեր ամեն բան
դադարել, վերջացել էր նրա մեջ, ամայացել։ Հին, գեղեցիկ, դեռ կանգուն
մի կամուրջ կար կապված գետի վերա, որ միացնում էր երկու ափերը։
Արայի լեռան վերջին լեռնաստերը հյուսիսից խոնարհելով՝ իջնում էին Երաս-
խի դաշտը դեպի արևելք, և նրանց վերա բարձրանում էր յուր վեհական
փառքով վեհաշուք Արարատը՝ յուր շողշ, իրար դեմուդեմ կանգնած, մեկզ-
մեկուց բարձր գագաթներով. նրա մոտ բարձրանում էր Փոքրը (Փոքր Մա-
սիսը) և երևում էր ինչպես մի սեպաձև, մրրահեր թռռն, որ հետևում էր յուր
ավագ պապին»*։
Աշտարակ—Երևան խճուղու բացվելուց հետո, հաջորդ, 1887 թվին,
Աշտարակ—Երևան խճուղու բացվելուց հետո, ինչպես ասացինք, մուտք է գործել Անդրկովկաս և սկսվել է ընդհանուր զին-
ինչպես ասացինք, մուտք է գործել քրիստոնյա տարրի մեջ, և առաջին
վորագրության օրենքի գործադրությունը քրիստոնյա տարրի մեջ, և առաջին
անգամ հայտարարվել զինվորակոչ 1866 թվի ծնվածների, մի բան, որ առաջ
է բերել ամեն տեղ մտքերի հուզում և իրարանցում։ Հայ ազգաբնակչության
մեջ հատկապես երևան է եկել կառավարության կատարած այդ քայլի վերա-
բերմամբ երկու հոսանք՝ համակրական և դժգոհ հոսանքներ։ Հայ ժողովրդի
հասկացող դասը համակրությամբ է վերաբերվել և ողջունել է կառավարու-
թյան արած այդ քայլը՝ համարելով այդ կառավարության կողմից տեղական
ժողովուրդների հանդեպ վստահության և իրավահավասարության տեսակետից

* Մեջ է բերված Եր. Շահազիզի աշխարհաբար թարգմանությամբ— Պ. Հ.։

կատարված մի, ըստ ամենայնի, տեղին ու բարյացակամ ակտ, իսկ ժողովրդի խոշոր զանգվածը՝ գյուղացիությունը, ընդհակառակը, դժգոհությամբ է ընդունել, համարելով այդ ցարական կառավարության կողմից իրենց նկատմամբ գործադրելիք մի նոր ճնշում ու հալածանք: Հայ գյուղացու ընտանիքի համար (նրա հասկացողությամբ) յուր որդուն զինվոր ուղարկելը համահավասար է եղել նրան անխուսափելիորեն կորստյան մատնելու հանգամանքին, ուստի և զինվորացու որդի ունեցողների ընտանիքներում սահմծվել է սգավորության կացության պես մի վիճակ, որ յուր արտահայտությունն է գտել այն ժողովրդական երգի մեջ, որ հորինվել է Արարատյան դաշտի գյուղերում և երգվել է Աշտարակում և ամեն տեղ: Այդ երգի մեջ, ի միջի այլոց, մեղադրվել է և ժամանակի Մակար կաթողիկոսը, որ, իբրև թե, այդ բոլորի պատճառն է եղել և «քանդել է ազգի տունը»: Միամիտ հայ գյուղացին կարծել է, թե կառավարությունը նախօրոք համաձայնություն է կայացրել այդ մասին կաթողիկոսի հետ և հետո արդեն ձեռնարկել զինվորագրության օրենքի գործադրելուն հայերի մեջ, իսկ Մակար կաթողիկոսը՝ ոչ ժողովրդի քվեներով, այլ կառավարության ցանկությամբ ու հոգևորականության քվեներով ընտրված լինելով, կամեցել է դրանով կամակատար հանդիսացած լինել ցարական կառավարության:

Կատարվել է վիճակահանության գործողությունը, և Աշտարակում առաջին անգամ զինվոր են ընտրվել երկու հոգի՝ Դատըմենց Գրիգորը և Մելքումենց Երվանդը, որոնք և մյուս գյուղերում ընտրվածների հետ միասին հավաքվել, խմբվել են Երևանում, որտեղից նրանք, քաղաքի հասարակության առատ սեղանը և քաղցր հյուրասիրությունը վայելելուց հետո, մեկնել են իրենց համար սահմանված տեղը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Մենք Պատմության վերջին գլխում խոսեցինք 1877 թվի ռուս-տաճկական պատերազմի՝ մեր ժողովրդի վրա արած խոշոր ազդեցության մասին, որի մեջ գլխավորը, աչքի ընկնելուն և առանձնապես նշելու արժանին այն ինքնաճանաչության, ինքնագիտակցության, դարավոր խոր քնից զարթնելու, սթափվելու, մի խոսքով՝ այն ընդհանուր զարթոնքի երևույթը կամ հոսանքն է եղել, որ մտել, տարածվել է երկրի ամենախուլ անկյունները և թափանցել ժողովրդի հոծ զանգվածների մեջ, զարթոնք, որի ուղին, սակայն, նախօրոք արդեն հարթված, հարդարված է եղել մեր հրապարակախոսության և բանաստեղծության ճիգերով, և պատերազմն յուր հետևանքներով միայն մի զորեղ ազդակ է հանդիսացել դրա ցայտուն կերպով արտահայտվելուն: Այդ հոսանքն ամեն տեղ միաժամանակ չի մտել, այլ մի տեղ՝ ավելի շուտ մի ուրիշ տեղ՝ ավելի ուշ, նայելով տեղերի՝ կենտրոններին մերձ ու հեռու լինելուն, ամեն տեղ միևնույն թափով չի գործել, այլ տեղերի ու պատրաստ գտնված ուժերի հանգամանքների համեմատ, բայց ամեն տեղ էլ, ուր որ էլ մտել է, իսկ դա ամեն տեղ էլ մտել է, առաջ է բերել մի որոշ չափով մտքերի ու հայացքների հեղաշրջում, կյանքի աշխուժացում ու եռուզեռ:

Աշտարակն յուր՝ կենտրոններին մոտ լինելու և, հաճախակի, դրանց հետ շփվելու շնորհիվ, մյուս գյուղերից ավելի կանուխ է ընդգրկել այդ հոսանքը, ավելի շուտ հաղորդակից եղել այդ զարթոնքին և գործադրել այդ յուր մեջ ավելի զորեղ թափով և եռուզեռով, որովհետև, համեմատաբար ավելի պատրաստված ուժեր է ունեցել: Դրանք, այդ տաբար, դրա համար շատ ավելի պատրաստված ուժերը, բարձր ուսումով, համալսարանավարտ մարդիկ չեն եղել, գյուղի հաուժերը, բարձր ուսումով, համալսարանավարտները, ինչպես արդեն ասել ենք, գյուղում չեն ապրել, այլ գյուղում ապրող, այդ գյուղի համար մեծ, միայն, չեղյալ ուժեր են եղել, գյուղի դպրոցներում գրաճանաչ դարձած, գեղգործությամբ պարապող, Երևանի պրոգիմնազիոնը ավարտած, Գևորգյան ճեմարանում սովորած, դուրս եկած մի խումբ ինտելիգենտ և կես-ինտելիգենտ գյուղացիներ, որոնք, սակայն, այնքան գիտության ու իրերի ընթացքը ըմբռնելու, հայոց գրականությունը կարդալու, պետական լեզուն հասկանալու կարողություն են ունեցել, որ ի վիճակի են եղել չարն ու բարին

իրարից ջոկելու, գիտակցելու հասարակաց շահերը, հասկանալու իրենց շուր-
ջը կատարվածների խորհուրդը և նույնն ուրիշներին հասկացնելու։ Այդ խմբի
անդամներն, առանձին-առանձին առած՝ ոչ մի խոշոր արժանիքով օժտված
չեն եղել, և մենք կարող ենք միայն մի քանի անձերի անունները հիշել, որոնք
իրենց շուրջը մյուսներին խմբելու կարողության տեսակետից քիչ թե շատ
աչքի են ընկել՝ Շահազիզյանց Հայկ, Սիսակենց Սմբատ, Բոյախչոնց Թորոս,
Աղաբյանց Կարապետ, բայց, միասին առած, իբրև հավաքական ուժերով
գործող, միատեսակ մտածող, միակամ, մի՛ ուղղությամբ, մի՛ գծով աշխա-
տող, գյուղում բույն դրած, արմատացած չարիքների դեմ մաքառելու գծով,
զորեղների ճնշումներից անզորներին ազատագրելու ուղղությամբ, մի այն-
պիսի ուժ է հանդիսացել, որ ստիպել է ամենքին իրեն հետ հաշիվ տեսնել,
յուր ձայնն ու կարծիքները գյուղի կառավարության գործերում լսեցրել, հա-
ճախ յուր ցանկացածները կատարել տվել, յուր ուզած մարդկանց տանուտեր
ու դատավոր ընտրել տվել, որով և, եթե չի էլ կարողացել բոլոր չարիքներն
արմատախիլ անել, գոնե, հաջողել է զգալի չափով մի քանիսի առաջն առ-
նել, մի քանիսը մեղմել, մի քանիսի վերացնելու համար էլ նպաստավոր հող
պատրաստել։ Այդ տեսակետից՝ այդ մի խումբ, սոսկ հասկացող գյուղացի-
ները մի նոր գործիչ ուժ են հանդիսացել գյուղում և գործել ո՛չ պակաս
օգտավետությամբ, քան նախկին, ավելի բարձր որակով ու արժանիքներով
օժտված անհատ գործիչները։

Դրանց գործունեության ժամանակաշրջանը ընդգրկել է մոտավորապես
«Հին դարի» վերջին տասնամյակը (1890—1900 թվականները) և հետո էլ,
և գործունեության օբյեկտը կամ ենթակա խնդիրը եղել է, ինչպես տացինք.
գյուղում գոյություն ունեցող չարիքների վերացումը, չարիքների, որոնցից
ամենագլխավորը, էականը և, եթե կարելի է այսպես ասել, չարյաց արմատը,
որից տերապես բխել են և մյուսները, իբրև դրա հետևանքը, եղել է վաշ-
խառությունը, գյուղի հին ցավը։ Վաշխի սովորական քանակն եղել է 24 տո-
կոս, որի մասին գյուղում հայտնի Ծանճապանենց Գաբոն (Շահնազարյան),
որ մի հանպատրաստից մուխամբազներ ասելու շնորհք ունեցող մարդ է
եղել, ասել է.

Լավ կըլնես խալխս քամար,
Սուրբին բոյի համար.
Կըպոկես շեմ ու սամար,
Թումանից մի աբասի։

Պարտքատիրոջ հոգին հանես,
Համ էլ դարդավարամ կանես.
Անթուխս ճոտ կըհանես,
Թումանից մի աբասի։

Բախշա ու բաղդ ծախա,
Որ սիրտդ վրին կախ ա.
Պարտքը շլնքիդ հախ ա,
Տերդ մեռնի, աբասի։

Գյուղի ունևոր, մեծ խանությպանները, որոնցից ձեռքերը պակաս գյու-
ղացիք, սովորաբար, պարտք ապրանք են առել՝ առաջիկա այգեկութին
բերքով հատուցանելու պայմանով, «ես են արել», այսինքն՝ իրենց խա-
նութների դաֆթարներում, պարտքի գումարների տակ տարվա ընթացքում,
տարբեր ժամանակներ, ավելորդ գումարներ են նշանակել, գրելով. «ես այս-
քան, ես այնքան» և այլն, և մինչև հաշվեհարդարի ժամանակը պարտքի չըն-
չին գումարը զգալի չափով խոշորացրել։ Այգեկութին էլ նրանք, պարտքի
դիմաց խաղող ընդունելու և, ընդհանրապես, իրենց արտահանելիք գինու
պահեստի համար խաղող գնելու ժամանակ, «մատ են խաղացրել» պապե-
նական հին կշեռքի փոխարեն գյուղում գործածական դարձած նոր, տաս-
նորդական կշեռքի մեջ, որի համար այդ խարդախության գործին հմուտ
հատուկ մարդիկ են պահելիս եղել։ Մեզ հաճախ պատահել է գյուղում այդ
մասին լսել բազմաթիվ զվարճալի պատմություններ, որոնք չափազանցրած,
ամենկզոտաձև զրույցներ լինելով հանդերձ՝ եկել են վկայելու մեզ դույն-
պիսի խարդախությունների ըստ էության գոյություն ունեցած, կատարված
լինելու ճշմարտությունը։

Գործով, արհեստով վաշխառու մարդիկ արձակ-համարձակ, խոշոր վաշ-
խով գումարներ են բաշխել սրան-նրան, և բանը հասած է եղել այն տեղը, որ
Վաղարշապատում, արքունի բարձր պաշտոններ վարող աշտարակցի երկու
եղբայրներ, անգամ չեն քաշվել մեծաքանակ գումարներ բաժանել վաշխով
իրենց համագյուղացիներին՝ դրանով շատերին իրենց գերի դարձրել, կամա-
կատար արել և դրանց միջոցով և՛ տանուտերներ, և՛ դատավորներ ընտրել
տվել, և՛ գյուղի կառավարության ամբողջ գործը իրոք իրենց ձեռքը հավաքել։
Ահա՛ դրանցից, այդ ցեցապետներից մեկի դեմքն է, որ Բալասան աղա անու-
նով դուրս է բերել յուր «Ցեցերի» մեջ Պերճ Պռոշյանը, որի մասին մենք
յուր տեղում, պատմությանս ընթացքում, մանրամասնաբար խոսել ենք։

Այդ գլխավոր չարիքը, այդ «չարյաց արմատի» վերացնելու խնդիրն է
եղել հենց, որ առաջ ու առաջ ծառացել է գյուղացի գործիչների առաջ և
ստիպողաբար պահանջել է յուր դարմանը։ Ձեռնարկվել է գյուղում Փոխատու
խնայողական գանձարկղի հաստատման գործին, որին և 1903 թվին նախա-
ձեռնող է հանդիսացել Կարապետ Աղաբյանը, և գլխավոր ղեկավար՝ Հայկ
Շահազիզյանցը, մի նպատակահարմար գործ, որին մի համեստ գումարով
օժանդակել է Մոսկվայից և բանաստեղծ Ս. Շահազիզյանցը։ Դարմանը

գտնված է եղել, և խելքը գլխին գյուղացիները վարկավորվելով՝ սկսել են հետզհետե բարվոքել իրենց տնտեսական կացությունը և ազատագրվել զանազան վաշխառուների, խանութպանների ծանր պարտքերից և խարդախ շահագործության առարկա լինելուց, որի հետևանքն այն է եղել, որ վաշխառության և շահագործության ասպարեզը շատ սեղմվել, նեղացել է, անկախ և իրենց քվեների տեր գյուղացիների թիվը բազմացել, և հնարավոր է դարձել գյուղի կառավարության գործին ավելի բարվոք, ավելի շիտակ ընթացք հաղորդել, ավելի մաքուր և ազնիվ, ավելի հասկացող և հասարակաց շահերին նախանձախնդիր դատավորներ ու տանուտեր ընտրել, ինչպիսին եղել են Սիսակենց Սմբատը, հետագայում և՝ Ազատենց Կարոն, որոնց ձեռք առած միջոցներով և սկսել է գյուղերում պակասել կաշառակերությունը, խուժանությունը, գողությունը և վարք ու բարքի ծայր տված սանձարձակությունը։

Դժբախտաբար, Գանձարկղի գործունեության թափին հետագայում, հետզհետե, սկսել է թուլանալ, դանդաղել, որովհետև, նախ՝ շրջանառության գումարը մեծ չի եղել և, համենայն դեպս, չի բավարարել մեծ գյուղի չափազանց մեծ պահանջներին, երկրորդ՝ գյուղացիների մեջ գտնվել են և շատ անգիտակից մարդիկ, որոնք չհասկանալով հիմնարկության բուն խորհուրդը՝ պարտաճանաչ չեն գտնվել, սահմանված ժամկետներին չեն վերադարձրել իրենց փոխ առած գումարները, որով և՛ իրենց զրկել են կրկին ու կրկին վարկավորվելու իրավունքից, և իրենց ճշտապահ և պարտաճանաչ համագյուղացիներին, և, բնականաբար, կասեցրել են կենդանի գործի թափն ու ընթացքը։

Բացի դրանից, այդ գլխավորից, ձեռնարկված է եղել և գյուղի բարեկեցության նպաստող այլ կարիքների հոգալու գործին՝ գյուղամիջով հոսող ջրերի, փողոցների, տնաբակերի և շուկայի, առողջապահության տեսակետից, մաքուր պահելու, նոր ճանապարհների բացման և, նամանավանդ, Երկսեռ ծխական դպրոցի նյութականը հոգալու, ապահովելու գործերին, երկսեռ դպրոցի, որ ընդգրկած է եղել յուր մեջ գյուղի աշակերտության ամենամեծ կոնտինգենտը՝ մոտավորապես 600 աշակերտ-աշակերտուհի, հակառակ պետական Երկդասյան գյուղական նորմալ դպրոցին, որ ունեցել է ընդամենը միայն 150-ի մոտ աշակերտ։ Այդ դպրոցը, որ, ինչպես յուր տեղում ասել ենք, բացված է եղել 1879—80 թվերին և, իհարկե, նպատակ է ունեցել պետական լեզվի և գրաճանաչության տարածող հանդիսանալու զուտ հայախոս գյուղի մեջ, ունեցել է, սակայն, այնպիսի պակասություններ, որոնք կասեցրել են նրա անսայթաք ընթացքի լիակատար հաջողությունը։ Նրա մեջ, ի թիվս ուրիշ առարկաների ու գիտությունների, դասավանդվել են հայերեն լեզվով և հայոց լեզուն ու կրոնը, բայց դրանց դասատվությունը նախ՝ հանձնված է եղել գյուղի քահանաներից մեկին, և հետո՝ դրված է եղել այն վիճակի մեջ, որ, կարելի է ասել, որ դրանց գոյությունը դպրոցում հավասար է եղել չգո-

յության, կամ, ինչպես ասում են, «անունն եղել է, ամանում չի եղել», մի բան, որ խրտնեցրել է գյուղացիներին, որոնք իսկապես սիրել են պետական լեզուն և ոչ մի կերպով չեն խուսափել նրանից։ Բացի սրանից, հրահանգված է եղել դրա ուսուցիչներին, որոնք, սովորաբար, պետական ուսուցչական սեմինարներից դուրս եկած հայ երիտասարդներ են եղել, ուսուցանել առանց մայրենի լեզվի օգնության, մի բան, որ կաշկանդել է նրանց, քանի որ աշակերտները ո՛չ դասատվության լեզուն են հասկացել, ո՛չ էլ ընթերցանության նյութը։

Բայց դա, այդ դպրոցն ունեցել է և մի շատ կարևոր առավելություն. դրան կից, զարթոնքի տարիները կազմակերպված է եղել պարտիզպանական-այգեգործական գիտելիքների տեսական և գործնական մի դասընթացք։ Առավոտներն աշակերտները դպրոցի մյուս առարկաների հետ միասին լսել են տեսականը, իսկ ճաշից հետո հավաքվել են դպրոց և մի մասնագետ պարտիզպան-այգեգործ ուսուցչի ձեռքի տակ ու ղեկավարությամբ պարապել գործնականապես և հենց տեղում, հողի վրա վարժվել ու հմտացել են դասարանում իրենց լսած ու սովորած տեսականի գործադրության, որի համար, անմիջապես դպրոցին կից, Մուղնու վանքին պատկանող ընդարձակ հողամասից, էջմիածնի պատվերով կտրված ու դպրոցի վարչության է հանձնված եղել մի բավականին ընդարձակ տարածություն։ Եվ այդ, ո՞վ գիտե, ո՞ր հնագույն ժամանակներից խոպանացած, քարոտ տարածությունը պարսպապատվել է, ոռոգվել Ապարանի ջրով, որթ ու պտղատու ծառերի մատաղ տունկերով զարդարվել ու կանաչել և դարձել Աշտարակի սիրած այգեգործության ու պարտիզպանության գործի գիտականորեն ուսումնասիրելու մի անդաստան, որտեղ աշտարակցի մանուկը սկսել է սովորել հողի մշակման, որթի ու տունկի աճեցման և պատվաստելու արվեստի գիտական մեթոդները։ Եվ այդ լավ գործը, որ, իբրև մի թույլ փորձ, կոչված է եղել, գոնե նվազագույն չափով, լրացնելու գյուղի վաղեմի ցանկությունը՝ ունենալու մի այգեգործության դպրոց, յուր հաջող սկզբնավորությամբ խոստացել մի լավ ապագա, չգիտենք ի՞նչ պատճառներով՝ հետագայում բարձիթողի է արվել, և անդաստանը վերստին մատնվել խոպանացման։

Ահա՛ այդ զարթոնքով և, դրա հետևանք, խոստումնալից սկսվածքներով, մոտ ապագայում դրանց լրացվելու և լիակատարորեն իրագործվելու բարի ցանկություններով և ցարական կառավարության վատթար ռեժիմից ազատագրվելու վառ հույսերով՝ Աշտարակը կնքել է հին դարը և թևակոխել նոր, XX դարը, յուր՝ մեր օրերի պատմության նորագույն շրջանը։

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

1. Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց, հատոր երկրորդ, 1842, էջմիածին։
2. Հուսիկ վարդապետ Մովսիսյան, Կարսի վիճակի հնությունների մասին համառոտ տեղեկություններ։— «Արարատ», 1890, թիվ 3։
3. Աշտարակի Ամենափրկիչ եկեղեցու ծխատեր ավագ քահանա, բնիկ աշտարակցի Տեր Սարգիս Բզնունու «Զվարճալի հարսանիք, Ստորագրություն և փիլիսոփայություն» խորագրերով ձեռագիր հիշատակարանը Աշտարակի մասին, գրված 1884 թվին։— Պետ. թանգարան, նոր ձեռագիր, № 25 (ներկայումս՝ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, I հավաքածո, IV բաժին, № 4)։
4. Պերճ Պռոշյանցի՝ Աշտարակի կյանքից առնված երկասիրությունները.
   ա) «Սոս և Վարդիթեր», երկրորդ տպագրություն, Երևան, 1887։
   բ) «Կռվածաղիկ», ազգային վիպասանություն, Թիֆլիս, 1878։
   գ) «Ցեցեր», վեպ, Թիֆլիս, 1889։
   դ) «Հուշիկներ», Ա. շրջան, Թիֆլիս, 1894։
   ե) «Հացի խնդիր», ազգային վիպասանություն, Թիֆլիս, 1880։
5. Գ. Արծրունի, Երևանյան նահանգում, Հոդված IX։— «Մշակ», 1890, հոկտեմբերի 9, № 115։
6. Հ. Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հատոր I, Ա—Ը, Վենետիկ, 1903—1905։
7. **Н. Я. Марр**, Книжные легенды об основании Куара в Армении и Киева на Руси. -- «Известия российской Академии истории материальной культуры», том III, Ленинград, 1924, с. 257—287.
8. Ձեռագիր կոնդակ Սաղմոսավանքից։— Պետ. թանգարան (ներկայումս՝ Մատենադարան, ձեռագիր № 8061)։
9. Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Բ տիպ, Ս. Պետերբուրգ, 1885 (գիրք Բ, գլուխ Բ)։
10. Ս. Շահազիզյանց, Լևոնի վիշտը և զանազան բանաստեղծություններ, Մոսկվա, 1864։
11. Ս. Շահազիզյանց, Ազատության ժամեր, հատոր երկրորդ, Մոսկվա, 1860։
12. «Հայ աշուղներ», լույս գցած աշխատասիրությամբ Գեորգյա Ախվերդյան, Թիֆլիս, 1903։
13. Գ. արքեպ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, մասն I, Վաղարշապատ, 1928։
14. **С. А. Егиазаров**, Исследования по истории учреждений в Закавказьи, часть I, Сельская община. Казань, 1891.
15. **В. Потто**, Кавказская война, том 3-й, Персидская война 1826—1828 г., выпуск 3, С. Петербург. 1887 («Снятие блокады Эривани» и «Аштаракская битва» գլուխները)։
16. **Степан Камсаракан**, Пути развития сельского хозяйства Армении (рукопись).
17. Դանիել կաթողիկոսի վկայագիրը աշտարակցի Տեր Հարությունի որդի Կարապետ աղա

Շահազիզյանին՝ Շահազիզ-Կամսարականների իշխանական տոհմից սերված լինելու մասին։
— Ձեռագիր կոնդակաձև գրություն պետ. թանգարանի։ Յամի Տեառն 1808, յամսեանն յուլիսի 20, ի բարձրագոյն խորհրդարան սրբոյ էջմիածնի։

18. **И. Шопен**, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи. С. Петербург, 1852.
19. **Барон А. Гакстгаузен**, Закавказский край (в русском переводе), части I и II, С. Петербург, 1857.
20. Ֆաթ Ալի շահի ֆիրմանը աշտարակցի Տեր Հարությունի որդի Կարապետ Շահազիզյանցին՝ նրան թարխանության արտոնություններ տալու մասին։
21. Կենսագրություն Ներսես Աշտարակեցու՝ լսված ու գրի առնված յուր իսկ Աշտարակեցու բերանից։— Ձեռագիր մեծադիր տետրակ, Պետ. թանգարան (ներկայումս՝ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Եր. Շահազիզի թղթեր, VII բաժին, № 33)։
22. Թիֆլիսի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսի ընդարձակ թուղթը՝ մատուցված Ալեքսեյ Պետրովիչ Երմոլովին, Թիֆլիսում, 1823 թվի սեպ. 13-ին, պարսից սարդարների՝ Հյուսեին Ալի խանի որդի Մահմադ խանի օրերից մինչև վերջին սարդար Հյուսեին Ղուլի ղաջարի ժամանակները էջմիածնին հասցրած զրկանքների մասին։— Պետ. թանգարան, գրական բաժին (ներկայումս՝ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, № 45/142 ա և բ)։
23. Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896։
24. Ղևոնդ Ալիշան, Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890։
25. Ջամբռ, համաժողովեցեալ և շարադրեցեալ ի Սիմէոնէ կաթուղիկոսէ Երևանցւոյ, Վաղարշապատ, 1873։
26. «Դիվան Հայոց պատմության», գիրք Գ։— Սիմեոն կաթողիկոսի Հիշատակարանը և կենսագրությունը, հրատարակեց Գ. Աղանյանց, Թիֆլիս, 1894։
27. Մաղաքիայ Օրբեղայի պատմութիւն վասն ազգին նետողաց, Ս. Պետերբուրգ, 1870։
28. Գարեգին վարդապետ Հովսեփյան, Ջաղավանից ժողովը։— «Ճողակաթ», գիրք առաջին, էջմիածին, 1913, էջ 22—46։
29. Պատմութիւն Հայոց Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, Տփղիս, 1909։
30. **С. П. Зелинский**, Объяснительный словарь татарских, грузинских и армянских слов, вошедших в Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, Тифлис, 1889.
31. Вопросы и решения вардапета **Анании Ширакца**, армянского математика VII века. Издал и перевел И. А. Орбели, Петроград, 1918.
32. Կամսարականները «Տեարք Շիրակայ և Արշարունեաց», գրեց դկտ. հ. Սահակ Կոգյան, Մխիթարյան ուխտեն, Վիեննա, 1926։
33. Առաքել կաթողիկոսի Կրետացւոյ Պատմագրութիւն անցից իւրոց և Նատըր-Շահին Պարսից, Վաղարշապատ, 1870։
34. Մեր անձնական դիտողությունները և Շահազիզյանց տան մեծերի՝ Ներսես Աշտարակեցու եղբորորդի Հարություն Շահազիզյանցի, Փոլատենց Սարգսի, Մեսրոպենց Կարապետի, Իսում Շահազիզյանցի, Մուխսունց Օնեսի և մյուսների պատմածները։
35. Վեհապետյան Գեորգ եպիսկոպոսի, Աղումենց Հակոբի, Անթանենց Մացակի, Պերճ Պռոշյանցի և, ընդհանրապես, Աշտարակի ծերունիներից շատերի պատմածները։
36. **А. С. Грибоедов**, Путевые записки, Кавказ-Персия, Предисловие и примечания к тексту И. К. Ениколопова, Тифлис, 1932.
37. Եղիշե ա. ք. Գեղամյանց, Պատմական քաղվածներ, պրակ ութերորդ, Ներսես Ե կաթողիկոս Աշտարակեցի, մասն II, Բաքու, 1915։

38. Սոսանվեր, *Նամակ Աշտարակից:— «Մշակ», 1874, նոյեմբերի 14, № 45:*
39. **Мариэтта Шагинян**, Дневники, 1917—1931, Ленинград, 1932.
40. Մովսիսի Խորենացւոյ *Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913:*
41. Լեո, *Հայոց պատմություն, հատոր առաջին, Հին պատմություն, Թիֆլիս, 1917:*
42. Թադ. Ավդալբեգյան, *Հաս, սակ ու բաժ, Երևան, 1926:*
43. Հակոբ Մանանդյան, *Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում, Երևան, 1926:*
44. *Կովկասի փոխարքայության կողմից հարուցված ակցիզային գործերը, որոնք գտնվում են Պետ. արխիվում, Աշտարակում, Բյուրականում, Իլանչալանում, Ղզլթամուրում և ուրիշ տեղերում տեղի ունեցած դիմադրության դեպքերի մասին, 1886 թվից:*
45. Взгляд Эчмиадзинского армянского духовенства на крепостное право (в 1809 г.).— «Кавказская старина», ежемесячный журнал, под редакцию А. Д. Ерицова, год I, № 1, Тифлис, 1872, с. 25—27.
46. **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, С. Петербург, 1908.
47. Հակոբ Մանանդյան, *Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1934:*
48. *Աշտարակի վերաբերյալ պաշտոնական թղթեր, որոնք գտնվում են երկար տարիներ գյուղի հավատարմատար եղած, աշտարակցի փաստաբան Լևոն Թումանյանի մոտ:*
49. Հուսիկ վարդապետ Մովսիսյան, *Հայաստանյայցս առաքելական ս. եկեղեցվո պատմություն, Վաղարշապատ, 1884:*
50. Памятная книжка Эриванской губернии на 1908 г., под редакцией В. Е. Васильева. Эривань, 1908.
51. Գ. Ղափանցյան, *Հնության մի քանի հիշատակարաններ:— «Արարատ», 1914, № 1, էջ 91—96:*
52. *Կարմրավորում պահվող Տուխմանց ավետարանը՝ գրված 1669 թվականին, Նոր Ջուղայում (այժմ Մատենադարանի № 6436 ձեռագիրը):*
53. *Հիշատակարան ազգային արդյան պատմության համար:— «Կռունկ Հայոց աշխարհին», 1862, № 4, էջ 278—316 (Վաղարշապատցի Հովհաննես քահանա Ոսկերչյանի աշխատությունն է, որը տպագրվել է անանուն: Ավելի վաղ, 1818-ին թարգմանվել է ֆրանսերեն ու լույս ընծայվել Փարիզում, Հարություն Արարատյանի և Հայնրիխ Յուլիուս Կլապրոտի աշխատասիրությամբ)*:*

№ 50—53-ը մեր լրացումներն են— Պ. Հ.:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

«ԱՇՏԱՐԱԿ» ՏԵՂԱՆՎԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՀԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՈՒՄ

Մի կողմից՝ Հայոց հին մատենագրության հուշարձաններում Աշտարակ գյուղաքաղաքի (VII դարում այսպես էին կոչում իրենց ծննդավայրը տեղի բնակիչները) անվան և նրա մասին ուղղակի ու անուղղակի տվյալների իսպառ բացակայությունը, մյուս կողմից՝ դարերի կործանարար ուժին դիմացած և հետնորդների հետ անձայն խոսող, կանգուն ու կիսակործան տաճարներն ու եկեղեցիները, որոնք ո՛չ մի տեղ հորինվածքով ու անուններով այնքան ինքնատիպ ու պերճախոս չեն, ինչպես Աշտարակում, տարակուսանքի մեջ են գցել շատ շատերին և, ամենից առաջ, նշանավոր հայ գրող ու աշխարհաշրջիկ Մեսրոպ Թաղիադյանցին (1803—1857), որը հաստատ համոզված լինելով, որ մի այսպիսի բնակավայր չէ՛ր կարող դուրս մնալ պատմիչների ու ժամանակագիրների ուշադրությունից, չէ՛ր կարող որևէ ձևով հիշատակված չլինել հնօրյա տարեգրությունների էջերում, միամիտ պատրանքն է ունեցել, թե Աշտարակը պետք է որ աղավաղումը լինի Աշնակ տեղանվան, որը հիշվում է Եղիշեի դյուցազներգության մեջ, V դարում:

Թաղիադյանցի այս վարկածն, ըստ ամենայնի, փաստարկված չէ և, իր ամբողջության մեջ, ճանապարհորդի թռուցիկ նկատողություն է, որ տեղ է գտել հեղինակի «Ճանապարհորդութիւն ...ի Հայս» ուղեգրության առաջին հատորում (Կալկաթա, 1847, էջ 199—200):

Այնուամենայնիվ՝ այդ գրքից էլ քաղենք Աշտարակին վերաբերող հատվածը (իսկ Թաղիադյանցն իր ասելով՝ Աշտարակ գյուղը տեսել է 1819 թ. սեպտեմբեր ամսին):

«...Խաղացեալ աստի երկու ժամուք՝ հասաք յԱշտարակ գիւղ, կառուցեալ ի նմին ձորաբաշի Քասաղայ, որ թէ՛ ըստ դրից և թէ՛ ըստ առատութեան այգեաց և արմտեաց՝ ո՛չ ինչ նուազ իմն երևի, քան զնոյն ինքն զԵրևան: Երեքին հնակառոյց, քարաշէն և բարձրաբերձ եկեղեցիք ի սմին գեղջ՝ յայտ առնեն զսա լինիլ մի ի հնագոյն գիւղօրէից Արագածոտան գաւառի, թէև անուն սորա ըստ արդի հնչման ո՛չ ուրեք յիշատակի ի գիրս նախնեաց: Եղիշէ, ի թուել իւրում զկայանս կամ ձմեռոցս զօրաց՝ աւերեալս յարացելոյն Վասակայ, ի

շարս նոցա կարգէ զԿուաշն աւան, զԱրուճն, զԱշնակն և զամենայն ուռն Արագածու։ Բազմավաստակ Ստորագիր Հին և Նոր Հայաստանի (այսինքն՝ Հայր Ղուկաս Ինճիճյանը— Պ. Հ.) ոչ ի Հինն և ո՛չ ի Նորն յիշատակէ զԱշտարակ։ Յաւելուածս հնոյն, ի կարգս անծանօթից կարգէ «զԱշնակն աւան», զոր ես զայս համարիմ Աշտարակ։ Երեքին հնաշէն Եկեղեցիք նորա՝ Սուրբ Մարիամն, Կարմրաւոր և սուրբ Վառվառ անուանեալ, նշանք հզօրք են հնութեան սորա։ Ուր թողցուք, զի և գիրք նորա ի վերայ Քասաղ գետոյ զգոյն ցուցանեն, յարևմտից հիւսիսոյ ունելով զԱրուճ՝ յիշատակեալն յԵղիշայ (ուր այժմ բնակին Տաճիկք. և անուանին Օրուճլուք), յարևելից՝ զձորն Քասաղայ և զԵղուարդ գիւղ։ Ի հարաւոյ՝ զՕշական, իսկ ի հիւսիսոյ՝ զՄուղնի և զԿարբի։ Արդ՝ եթէ Վաղարշակերտ փոխեցի յԱլաշկերտ, զարմանք ի՞նչ են, եթէ և Աշնակն փոխեալ իցէ Աշտարակ։

Ի վերայ գետոյն, ընդ անցս Երևանայ՝ ունի կամուրջ քարաշէն. ձկունք նորա նոյնք են ընդ ձկանցն Օշականայ։ Քարատակք նորա լի են լօշտակօք, և այգիկքն՝ խաղողովք, այլ գինի նորա ո՛չ այնքան յարգի, քան զՕշականայն, զՆորագեղայն, զԵրևանայ և զՎաղարշապատունն»։

Սխալն ակնհայտ է նաև այն պատճառով, որ Աշնակ ավանը նույնպես ընկած լինելով պատմական Արագածոտն գավառում, Արագած լեռան փեշերին՝ Թաղիադյանցի օրերին շեն էր ու մնում էր հին տեղում, իր հին եկեղեցու հետ միասին, միայն թե այլազգ բնակչությամբ։ Թե ինչու՞ բուն Աշնակը վրիպել է Թաղիադյանցի ուշադրությունից և նման զուգորդման առիթ տվել, դժվարանում ենք բացատրել։

Այսօրինակ տարակուսանքներն ու անճիշտ մերձեցումները շարունակվել են բազում տասնամյակներ, մինչև որ ներկա դարու 30-ական թթ. այդ խորհրդավոր հանելուկը կարողացավ լուծել ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը։ Հին Հայաստանի ճանապարհներին նվիրված իր ծանրակշիռ հետազոտության մեջ, քննության առարկա դարձնելով IV դարի երկրորդ կեսին ստեղծված՝ այսպես կոչված Պևտինգերյան քարտեզն ու նրա միջնադարյան մեկնաբանների բացատրությունները, Հ. Մանանդյանը նկատեց, որ Արտաշատից Սեբաստապոլիս ձգվող հին ճանապարհի առաջին հանգրվանը՝ Շուրանգիրան, ո՛չ այլ ինչ է, բայց եթե՝ Աշտարակ բնակավայրն իր բուն անվամբ, միայն թե լատինական տարազ հագած։

Լսե՛նք Մանանդյանի բացատրությունը։

«Արտաշատից 30 հռոմեական մղոն կամ 45 կիլոմետր հեռավորության վրա մատնանշված է Պևտինգերյան քարտեզում Strangira կայարանը։

Նույն կայարանը Ռավեննացու աշխարհագրության մեջ անվանված է Stranguria, իսկ երկիրը՝ civitas Stranguriana. այսինքն՝ «տերություն Stranguriana»։ Եվ որովհետև Պևտինգերյան քարտեզը կազմված է չորրորդ

դարի երրորդ քառորդում, հայ Արշակունիների տիրապետության ժամանակ, դժվար չէ կռահել, որ Strangira կամ Stranguria կայարանը կենտրոն է եղել հատուկ մի նախարարության, որը Ռավեննացին անվանում է civitas, այսինքն՝ «տերություն»։

Արդ՝ ուշագրավ է ու հետաքրքիր, որ հենց այս ճանապարհի վրա և Արտաշատից մոտ 45 կիլոմետր հեռավորության վրա գտնվում է այժմ Աշտարակ գյուղը, որն, ինչպես կարծում են, նշանավոր կենտրոնավայր է եղել հնագույն ժամանակներում։ Եվ ինձ թվում է, որ անհավանական չի լինի ենթադրել, որ Strangira կամ Stranguria տեղանվան մեջ կարող է պահպանված լինել, գուցե և աղճատված ձևով, այժմյան Աշտարակ գյուղի հին անունը, որը, դժբախտաբար, հիշատակված չէ մատենագրական հնագույն երկերում։

Առաջին անգամ Աշտարակ գյուղը, ինչպես հայտնի է, հիշված է ութերորդ դարից հետո, իբրև հայրենիք Գևորգ Ա. կաթողիկոսի (տե՛ս Ասողիկ, III, 2, էջ 106)։

«Թէպէտ և առ մնացեալ պատմիչս մեր,— ասում է Ալիշանը,— ոչ յառաջ քան զիններորդ դար յիշի Աշտարակ, իբրև հայրենիք Գէորգայ Ա. կաթողիկոսի, այլ հարկ է ամենայնիւ՝ եթէ ոչ միայն, իբրև զայլս ոմանս ի գիւղից և աւանաց Արագածոտան, բարգաւաճ եղեալ իցէ, կանխագոյն ևս ժամանակօք, այլ և քան զյոգունս, թէ ոչ քան զընաւ՝ երևելի և շինաշատ» (տե՛ս «Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 185)։

Ն. Մառը կարծում է նույնիսկ, որ նախաքրիստոնեական շրջանում Աշտարակը եղել է վիշապների պաշտամման վայր և որ այստեղ բասիլիկ ձևի հին եկեղեցին կառուցված է վիշապների հեթանոսական սրբավայրի ավերակների տեղում (տե՛ս «Книжные легенды об основании Куара в Армении и Киева на Руси», Известия ГАИМК, т. III, Ленинград, 1924, էջ 278)։

Ընդունելով, ըստ այսմ, որ Աշտարակ գյուղը համարվելու է մեծ ու նշանավոր հին կենտրոնավայր և ի նկատի ունենալով Strangira կամ Stranguria կայարանի վերոհիշյալ հեռավորությունն Արտաշատից՝ հնարավոր ու հավանական կարելի է համարել, ըստ իս, որ Պևտինգերյան քարտեզի և Ռավեննացու աշխարհագրության վկայությունները վերաբերվում են, իրոք, Արշակունյաց շրջանի հին Աշտարակին, որի այժմյան անունը ծագել է, հավանորեն, նրա նախահայկական նման անունից, ըստ երևույթին, ժողովրդական ստուգաբանությամբ։

«Արտաշատից Սեբաստապոլիս գնացող ճանապարհն ունեցել է, ըստ Պևտինգերյան քարտեզի և Ռավեննացու աշխարհագրության՝ հետևյալ կայարանները.

ARTAXATA, *30* Strangira (*Ռավեննացու աշխարհագրությունն ունի* civitas Stranguriana *և* Stranguria, *որից հետո հիշատակված է նրա*

մոտ նաև Janio կայարանը), 14 Condeso (Ռավեննացին այս կայարանից հեռո ունի նաև Gavala), 10 Misium (Ռավեննացին Misium-ից հեռո ունի Savatinum), 14 Gaulita (Ռավաննացու մոտ՝ Gaulitia, որից հեռո նա ունի նաև Tendava), 40 Pagas, 7 Apulum (Ռավեննացու մոտ՝ Apolum), 5 CASPIAE (Ռավեննացու մոտ՝ նաև Caspi), 45 Ad Mercurium (Ռավեննացին ունի Ermu), 35 Ad fontem felicem (Ռավեննացու մոտ՝ Fontfelice), 60 SEBASTOPLIS (Ռավեննացու մոտ՝ Sevantopoli և Sevastolis)»[1]:

Վերոհիշյալ թվերը ցույց են տալիս տարածությունները մի կայարանից մյուս կայարան հռոմեական մղոններով (milia passus= 1,4815 կիլոմետր): Մեծագիր տառերով են տպված այն կայարանների անունները Artaxata, Caspiae և Sebastoplis), որոնց մոտ Պևտինգերյան քարտեզն ունի նշած զույգ աշտարակներ: Աշտարակները ցույց են տալիս, որ այդ տեղերը չեղել են նշանավոր կենտրոնավայրեր կամ զինվորական պահակատեղիներ:

Կոնրադ Միլլերը իր «Itineraria Romana» աշխատության մեջ (էջ 653—654), նաև բացատրական հատուկ իր քարտեզում (տե՛ս նույնը, էջ 649—650 և 651—652), հին այս ճանապարհի ուղղությունը ենթադրում է այժմյան Արդաշարից Արմավիրի, Երվանդաշատի և Ղարսի մոտով դեպի Արդահան և այնուհետև Կոբլիանի մոտով Ջեկաոի լեռնանցքով դեպի Ռիոն՝ և Ռիոնից Սեբաստոպոլիս, այսինքն՝ այժմյան Իսկուրիա:

Կայարանների տեղերը մանրամասն ցույց են տրված նրա մոտ հետևյալ հաջորդականությամբ՝

Artaxata—Արդաշար, Strangira—այժմյան Արմավիրում կամ նրա մոտ, Condeso—Կարակալայի մոտ գտնվող ավերակները, Misium—այժմ Երվանդաշատի և նրա մոտ գտնվող ավերակները <...>

Մենք կտեսնենք ներքև, որ Կոնրադ Միլլերի որոշած ճանապարհի այս ուղղությունը և, բնականաբար, նաև կայարանների տեղերը Artaxata-ից մինչև Ad fontem felicem, ո՛չ միայն վիճելի են, այլ պարզապես անընդունելի:

Ավելի հաջող են, իմ կարծիքով, Ռ. Կիպերտի և Տոմաշեկի ենթադրությունները Condeso, Pagas, Apulum և Caspiae կայարանների տեղադրության մասին (տե՛ս R. Kiepert, Atlas von Kleinasien in 24 Blättern, 1902—1906 և Tomaschek, Pauly—Wissowa Realencykl., «Caspiae» տեղանունը) <...>

Ուշագրավ է առանձնապես, որ Strangira կամ Stranguria կայարանի անվան -ira կամ, ավելի ճիշտ՝ -uria վերջավորությունը, ըստ երևույթին, նախահայկական է և համապատասխանում է այժմյան Արմավիրի հին ան-

[1] Տե՛ս «Itineraria Romana», էջ 653—654:

վան վերջավորության՝ հուն. 'Αρμαουι'α (Ptolem., հրատարակ. 1901 թ., էջ 941). և 'Αρμαουρι'α: Կարելի է, ուրեմն, ենթադրել, որ Strangira-ն կամ Stranguria-ն, ինչպես և Արմավիրը, խալդական շրջանի տեղանուններ են, որոնց -ira կամ -uria վերջածանցը կարող է լեզվագիտական հատուկ մեկնություն: Այդ կարող են, իհարկե, անել, գլխավորապես, խալդագետ լեզվաբանները:

Անտարակուսելի է սակայն, որ Artaxata-Sebastopolis ճանապարհն անցել է, ինչպես կտեսնենք, ո՛չ թե Արմավիրի, այլ այժմյան Աշտարակի մոտով: Strangira կամ Stranguria կայարանից 14 հռոմեական մղոն կամ մոտ 21 կիլոմետր հեռավորության վրա Պևտինգերյան քարտեզում նշանակված է Condeso կայարանը: Սակայն Ռավեննացու աշխարհագրությունն ունի Condeso-յից առաջ նաև Janio կայարանը:

Այս վերջին վկայությունից դժվար չէ հետևցնել, որ հռոմեական քարտեզի ավելի ստույգ և ավելի լրիվ օրինակում, որից օգտվել էր Ռավեննացին, մատնանշված է եղել ո՛չ միայն Janio կայարանը, այլ և տարածությունը Artaxata-յից մինչև Janio: Ուրեմն՝ Condeso-յի հեռավորությունը Strangira-յից պետք է լիներ ոչ թե 14 հռոմեական մղոն, այլ ավելի:

Վերոհիշյալ չերկու կայարանների թե՛ անունները և թե՛ հավանական տեղադրությունը հնարավոր է, իմ կարծիքով, որոշել Աշտարակից Կոնդախսազ տանող ճանապարհի վրա:

Հենց այս Կոնդախսազ գյուղը, ինչպես ճիշտ նկատել է Ռ. Կիպերտը (տե՛ս «Atlas von Kleinasien»), համապատասխանում է Condeso կայարանին: Կոնդախսազ անվան թուրքական նոր ձևը շպետք է մեզ շփոթեցնի: Հայաստանի աշխարհագրության ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ հայկական հին տեղանունները պահպանվել են հաճախ՝ կրելով որոշ փոփոխություններ թուրքերենի ազդեցությամբ <...>

Տարածությունն Աշտարակից մինչև Կոնդախսազ այժմ մոտ 50 կիլոմետր է: Եթե Պևտինգերյան քարտեզում տարածությունը Strangira-յից մինչև Condeso ցույց է տրված 14 հռոմեական մղոն կամ 21 կիլոմետր, այդ բացատրվում է, ինչպես ասացինք, նրանով, որ քարտեզի արտագրողը չէ նշանակել Janio [* Tanco կամ * Tancio] կայարանը: Ուրեմն՝ Անանուն Ռավեննացու վկայության օգնությամբ քարտեզի սկզբնական բնագիրը կարելի է ենթադրել հետևյալ բովանդակությամբ՝ Strangira, [?] Janio (հավանորեն՝ * Tanco կամ * Tancio), XIV Condeso:

Artaxata—Sebastopolis ճանապարհի ուղղությունը պետք է ենթադրել այնուհետև, հավանորեն, այժմյան Ղուլիջանի վրայով դեպի Ղանլիճա-Մարմաշենն»:

Շարունակության մեջ մեկը մյուսի ետևից վերականգնելով հին Արտաշատից ու Աշտարակից մինչև այժմյան Փոթի ձգվող ճանապարհի մնացած հան-



Պևտինգերյան քարտեզի Արտաշատ-Սեբաստոպոլիս ճանապարհը (IV դար), որի վրա նշված էր Strangira— Աշտարակը



գըրվածները և ստացած արդյունքները նշելով հատուկ քարտեզի վրա, գիտնականն իր հետախուզումներն ամփոփում է այս խոսքերով.

«Մեր այս ուսումնասիրության մեջ թեև կան ենթադրական որոշ դիտողություններ, որոնք կարող են վիճելի համարվել, սակայն տարբերությունների այդ կետերի նկատմամբ չեն կարող բնավ խախտել հիմնական մեր ստացած եզրակացությունն Artaxata—Sebastopolis ճանապարհի ուղղության մասին, որը լուսաբանված է նաև հատուկ քարտեզում։

Վերոհիշյալ * Ganlita-յի (=Գանլիճա) և Ad * Metcurium-ի (=Մոկուարի) ճշգրիտ որոշմամբ հին այս ճանապարհի ուղղությունը ստացվում է, անտարակույս, ո՛չ թե Արմավիրի, Կարսի և Արդահանի վրայով, ինչպես ենթադրել է Կոնրադ Միլլերը, այլ հյուսիսային գծով՝ այժմյան Աշտարակի, Կոնդախսազի, Ղանլիճայի ու Խոսպիայի մոտով դեպի Ախալցխայի մոտ գտնվող Կուր գետի անցքը և այնուհետև Ջեկառի լեռնանցքով դեպի Ռիոն գետ և այնտեղից դեպի Սեբաստոպոլիս»*։

Այսպիսով՝ Աշտարակ հնագույն բնակավայրը թեպետև հայ մատենագրության մեջ առաջին անգամ հիշատակված է XI դարում՝ կապված IX դարի վերջերի անցքերի հետ (տե՛ս Ասողիկ պատմիչի գիրքը), սակայն արտաքին աղբյուրներից հայտնի է տակավին IV դարից՝ Տարանգիրա աղավաղված անունով, և Հ. Մանանդյանի զգուշավոր ձևով արված կռահումը՝ «Ինձ թվում է, որ անհավանական չի լինի ենթադրել, որ Տարանգիրա կամ Տարանգուրիա տեղանվան մեջ կարող է պահպանված լինել, գուցե և աղճատված ձևով, այժմյան Աշտարակ գյուղի հին անունը, որ, դժբախտաբար, հիշատակված չէ մատենագրական հնագույն երկերում»,— պետք է հարցի վերջնական լուծում համարել։

Վերջին տարիներս, ընթանալով Հ. Մանանդյանի հետքերով՝ Վիեննայի Մխիթարյան գիտնական, հանգուցյալ հայր Պետրոս Տեր-Պողոսյանն էլ կարծում էր, որ այժմյան Աշտարակ գյուղն այլ բան չէ, քան V դարում, Եղիշեի և Խորենացու պատմագրքերում հիշատակված Դրասխանակերտ զորակայանը, որը հետագայում վերածվել է դաստակերտի, և որտեղից սերում էր X դարի նշանավոր պատմիչ-գրող Հովհաննես Դրասխանակերտցին (տե՛ս «Տեղագրական հետազոտություններ», Վիեննա, 1951, էջ 41—41)։ Մեր անկեղծ համոզմամբ՝ Դրասխանակերտ և Աշտարակ զորակայանն ու ավանը հազիվ թե կարելի լինի նույնացնել, որովհետև, եթե Պետինգերյան քարտեզի տվյալն անգամ չլիներ, հայ վիմագիր հիշատակարաններում Աշտարակ տեղանունը արձանագրված է դեռևս VII դարում (տե՛ս Կարմրավոր եկեղեցու գոտկավոր արձանագրությունը), այնինչ Դրասխանակերտը IX—XI դարերում տակավին

* Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պետինգերյան քարտեզի, Ե., 1936, էջ 117—123 և 133—135։

չէն էր, թո՛ղ որ բանասերները դեռևս չեն կարողացել ճշտել նրա տեղադրությունը երբեմնի Արագածոտն և Շիրակ գավառների տարածքում։ Նշանակում է՝ Աշտարակ և Դրասխանակերտ բնակավայրերի՝ միմյանցից տարբեր, միաժամանակ և՝ միևնույն դարերում միևնույն անուններով՝ կանգուն լինելու փաստն ինքնին բացառում է դրանք նույնացնելու հնարավորությունը։

Աշտարակն իր սկիզբն առնում է Հայաստանի պատմության հնագույն շրջանից, իսկ գրավոր աղբյուրներում հիշվում է IV դարից։

Հավելված II

ԱՇՏԱՐԱԿԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Աշտարակի դպրոցի սկզբնավորման պատմությունը մշուշով է պատած։ Անշուշտ, հին դարերում, երբ գյուղը բազմամարդ էր, և ծաղկուն վիճակի մեջ էին տեղական վանքերն ու եկեղեցիները՝ Կարմրավորը, Ծիրանավորը, Մարիանեն, Ամենափրկիչը, վերջիններիս գավիթներում կամ շրջակա խցերում ուսում էին տալիս նաև մոնթերին՝ համլրելու համար վանական եղբայրությունները կրթված միաբաններով։ Բայց XVII—XVIII դարերում, ինչպես Այրարատյան աշխարհի մյուս բնակավայրերի, այնպես էլ Աշտարակի ուսումնածարավ պատանիներն ուղարկվում էին սկզբներում՝ Հովհաննավանքի դպրոցը, իսկ վերջերում, ընդհուպ մինչև XIX դարու 20—30-ական թվականները, էջմիածին, ուր ժառանգավորաց դպրոցում կամ ուսյալ վանականների խցերում նախնական կրթություն ստանալուց, այբուբենը, Ժամագիրքը, Նարեկը, Շարակնոցը և զանազան աղոթքներ սերտելուց հետո, քահանայացուները քահանա էին ձեռնադրվում, իսկ մնացածները վերադառնում էին իրենց ծնողների մոտ և այգեգործությամբ պարապում. մեկ-երկուսն էլ, եթե վճռում էին անդամագրվել Մայր աթոռի միաբանությանը, իրենց հովանավոր վարդապետների կամ եպիսկոպոսների ջանքերով հմտանում էին տրամաբանության և Սուրբ գրոց ուսման մեջ, ուղարկվում էին կրթությունը շարունակելու Արևմտյան Հայաստանի և Պոլսի նշանավոր վարժարաններում։

Աշտարակից սերած Վրթանես եպիսկոպոսը, Գալուստ եպիսկոպոսը, վերջապես՝ հռչակավոր Ներսես Աշտարակեցին ուսումնառության նույն ճանապարհներն են փի առել։ Օրինակ՝ անցյալ դարասկզբին էջմիածնում է կրթվել և հետո իր ուսուցչական գործունեությունը ծավալել աշտարակցի Գրիգոր վարդապետ Վարդազարյանցը, որը միաժամանակ կառավարում էր վանքի մատենադարանը և ստիճանաբար սեփականացնում հազվագյուտ ձեռագրեր։

Իհարկե, գյուղական որոշ քահանաներ ու տիրացուներ մի քանի երեխա

հավաքելով, ազատ ժամանակները, որոշ պայմանով՝ սովորեցնում էին նրանց գրել,կարդալ, բայց արդյունքն այնքան խղճուկ էր, որ մեղք կլիներ դրանք դպրոց անվանել, որովհետև չկար ո՛չ ուսման կարգ, ո՛չ առարկաների համակարգ, ո՛չ էլ որոշակի ծրագիր։

Աշտարակում կանոնավոր վարժարան բաց անելու մասին ամենավաղ տեղեկությունը 1840-ական թթ. սկզբներին է վերաբերում, երբ ապագա վիպասան (այն օրերին՝ դեռ չորս-հինգ տարեկան մանուկ) Պ. Պռոշյանի վկայությամբ՝ գյուղում, Ամենափրկիչ եկեղեցու մոտ, կառուցում են դպրոցի շենք։ Բայց, ինչպես գրում է նույն Պռոշյանը, «շինվեցա՞վ տունը, թե՞ թերի մնաց, ուսումն ե՞րբ և ինչպե՞ս սկսավ այն տանը, ինձ համար այս կետը մութն է»*։

Նույն 40-ական թթ. սկզբներին Աշտարակում ուսուցչություն էր անում Քաշալենց Վահան խալֆեն՝ սեփական տան վերևի այվանում հավաքելով 60-ի չափ մանուկներ և ընկերակից ունենալով Լազարյան ճեմարանից դուրս եկած ինչ-որ թերուս հարբեցողի։

Վահան խալֆեն կրթությունն ստացել էր աշտարակցի Ցերոյենց Տեր Սահակի մոտ**, իսկ այս վերջինը՝ Կալկաթայի անգլիական մարդասիրական ճեմարանում, դասընկեր ունենալով Մեսրոպ Թաղիադյանցին։ 20—30-ական թթ. հիշյալ Սահակը հայրենի գյուղում քահանա էր և մի քանի աշակերտ ուներ։ Այստեղից էլ՝ Վահան խալֆի մանկավարժական փորձը և ուսումնականությունը։

Վահան խալֆի «շկոլը» բավականաչափ մեծ էր, երեք լուսամուտով մի սենյակ, ապակիների փոխարեն՝ յուղած թուղթ կպցրած, հողե հատակով, ցեխով ծեփած պատերով։ Սենյակում վառարան կար, բայց այնքա՜ն անսարք, որ վառելիս՝ ծխի մեծ մասը սենյակն էր լցվում։ Ամեն երեխա հետը բերում էր մի-մի գառան մորթի, փոշոտ հատակին փռում և վրան նստած կամ չոքած՝ դաս էր սերտում կամ պատասխանում։ Այդ դպրոցի աշակերտներից էր հետագայում գյուղական քահանա Սարգիս Բեկնազարյան-Բզնունին։ Թե որոշակիորեն ի՞նչ էր սովորեցնում Վահան խալֆեն, չենք կարող ասել, բայց որ դաժանորեն էր վարվում աշակերտների հետ՝ ոտքով խփում, ապտակում, ոտները ֆալախա դնել ու անգթորեն ծեծել տալիս, մինչև մաշկը պատռվեր, և արյունը հոսեր, դա շատերը սովորական ու դաստիարակիչ բան էին համարում։ Աշակերտներին դիմելիս՝ Վահան խալֆի սովորական արտահայտություններն

* Պ. Պռոշյան, Գյուղական վարժապետներ։— Երկերի ժողովածու յոթ հատորով, Ե., 1964, հ. VI, էջ 7։

** Ցերոյենց Տեր Սահակի մասին, որի ազգանունը «Վարդանյան» էր և սերում էր Աշտարակի Արզընենց տոհմից, տե՛ս Եր. Շահազիզի նույն գրքում, գլուխ 15-րդ (էջ 198)։ Նա Աշտարակում ուսուցչություն է արել 20-ական թթ. վերջերից։

էին. «Իշի քուռակ, անբան անասուն, անպոչ հայվան, վայրենի արջ, ամբոլի եզ...»*։ Այս դպրոցը գործել է մի երկու տարի էլ և փակվել է Վահան խալֆի մահվան պատճառով։

Աշտարակի հաջորդ ուսուցիչները Մարտիրոս խալֆեն և Տեր Առաքելն էին, որոնք ընդամենը մեկական աշակերտ ունեին և դաս էին տալիս «Քերական, որ է այբբենարան», «Կանոն սաղմոսի» դասագրքերով։ Սեր ունենալով ոգելից խմիչքների՝ Մարտիրոս խալֆեն հազիվ ամիսը մեկ անգամ դաս տար իր աշակերտին, իսկ Տեր Առաքելը շաբաթներով մոռանում էր, որ ուսուցիչ է։ Նա, ընդհանրապես, գրել չգիտեր, իսկ կարդալիս էլ տառերը դժվարությամբ էր ջոկում։

Ըստ հուշագրական տվյալների՝ մոտավորապես 1844-ին Աշտարակում սկսում է վերստին գործել գյուղական դպրոցը, դարձյալ Ամենափրկչի մոտ շինված սենյակում։ Դասատուն էջմիածնում, Թիֆլիսեցի քահանա Սահակ Սահառունու մոտ ուսում առած Շապուհ Պետրոսի Շահնազարյանն էր։ 1843 թ. գարնանը, 17 տարեկան հասակում, ավարտելով էջմիածնի ժառանգավորաց դպրոցը՝ նա հրաժարվում է կուսակրոնությունից, որոշում է ուսուցչությամբ պարապել, և նույն թվականի մայիսին հիմնավորվելով Վաղարշապատում՝ գրավոր խոստում է տալիս Երևանի գավառական դպրոցին՝ առանց պաշտոնական թույլտվության մասնավոր աշակերտներ չպահել։ Բայց հաջորդ տարվանից, դերձակ Ստեփանի հորդորներով՝ Շապուհը տեղափոխվում է Աշտարակ և սկսում իր մանկավարժական գործունեությունը։ Հենց առաջին օրը դպրոց են ընդունվում 30-ի չափ աշակերտներ, իսկ ամսվա վերջին նրանց թիվը հասնում է 70-ի։ Դասերն առաջին ձմեռը պարապում էին Ղափանցոց Ստեփանի գոմի օդայում, անասունների հարևանությամբ, իսկ հաջորդ տարիներին՝ ձմեռները Ամենափրկչի արևելահյուսիսային մասում ընկած խարխուլ սենյակում, ամառները՝ նույն եկեղեցու հյուսիսային պատի երկարությամբ ձգվող սավերում, կամ էլ արևմտյան բակի թեղի ծառի հովանու ներքո, վաղ առավոտից մինչև ուշ երեկո։

Շապուհ Շահնազարյանի դպրոցը երեք բաժանմունք ուներ, որոնք նա անվանում էր՝ Մեծ դասատուն, Միջակ դասատուն և Փոքր դասատուն. բաժանման հիմքը երեխաների տարիքային առանձնահատկություններն էին, իսկ ըստ ունակությունների և գիտելիքների չափի՝ յոթանասուն աշակերտների մեջ շուրջ վաթսուն դասատուն կամ խմբեր կլինեին, և դասատներից շատերը լոկ մեկական աշակերտ ունեին։

Ըստ հառաջադիմության՝ առաջին դասատանը ընդամենը երեք աշակերտ

* Պ. Պռոշյան, Գյուղական վարժապետներ, էջ 11։

կար, և այս դասատան աշակերտներն անցնում էին Զամչյանի Քերականություն, Ալամդարյանի Քրիստոնեական վարդապետություն, ավարտած լինելով Սաղմոսը, Նարեկը և Կտակարանը։

Այս ու մյուս բոլոր խալֆայական դպրոցների ոգին սխոլաստիկությունն էր, առանց իմաստն ըմբռնելու՝ անգիր անել տալը, իրական աշխարհից և մարդկային կարիքներից անհեթեթորեն հեռու լինելը, ինքնանպատակ գրաճանաչությունը, որն այնքան էլ չէր տարբերվում անգրագիտությունից։

Պռոշյանը բավականաչափ սրամիտ ու կենդանի գույներով գծել է Շապուհ Շահնազարյանի դպրոցի առօրյա պատկերը։ «70-ի չափ աշակերտք,— պատմում է նա,— առավոտից մինչև ճաշ, ճաշից մինչև երեկոյան ժամը տալը, շարունակ բարձրաձայն կարդում էինք։ Մեկը ճչում էր՝ բեն, այբ=բա. բեն, է= բե=բաբե, մյուսը «Կանոն Սաղմոսի» առաջին տունն էր գիր կապելով հեգում, երրորդը «Մեծ Սաղմոսի» մյուս կանոններից էր առանց գիր կապելու վանկ-վանկ կարդում, չորրորդը «Ժամագրքից» փոխեր էր անգիր անում՝ ռունչը երկինք բարձրացրած. մի ուրիշը «Գործք առաքելոցի» թղթերն էր անհասկանալի բերան սովորում. էն կողմը չորրորդ դասատունն էր յուր համար Նարեկի «Վերստին յաւելուածը» թութակի պես կրկնում. մինը փթթանոց «Ճաշոցը» առաջը դրած՝ վաղվան եկեղեցում կարդալու մարգարեությունն էր ծոր տալով պատրաստում. յոթներորդ և ութերորդ դասատներն էլ երեսներն իրար դարձրած, լրբև լավ ձայնավորներ՝ առաջիկա կյուրակեի շարականներն էին երգում, որ ժամումը խալֆի անունը փառավորեն»։ «Մեր լուռ ժամանակը վայելչագրության դասին էր,— շարունակում է Պռոշյանը։— Շապուհն այս բանումս յուր նախորդներից զանազանվեցավ. հենց որ երեխան այբ, ժե, ճե, ռան պրծավ, նա իսկույն գրիչ էր տալիս ձեռքը և գրել սովորեցնում»*։

Այս դպրոցում էլ ամեն թերացում կամ չարություն պատժվում էր ծեծով, թեպետև ինչ-որ բան սովորեցնում էր։ Տարեկան ուսման վճարը 3 ռուբլի էր, որ հավաքվում էր անկանոն ձևով և երբեմն էլ բնամթերքով։ Շապուհի ուսուցչությունն Աշտարակում շարունակվեց երեք տարի, մինչև 1847 թվականը։

Աշտարակի խալֆայական դպրոցի տարեգրության ուշագրավ էջերից մեկը 1846 թվականն էր, երբ հյուր եկավ հայ նոր գրականության ու մանկավարժության հիմնադիր, այն օրերին՝ Երևանի գավառական դպրոցի տեսուչ խաչատուր Աբովյանը և ծանոթանալով ուսման դրվածքին՝ կատարեց մի քանի բարեփոխումներ։ Դպրոցում այդ ժամանակ 72 աշակերտ կար՝ 61 դասատան բաժանված։

Աբովյանը պարտադրում է Շապուհին՝ ծեծն իսպառ վերացնել, օրվա ընթացքում աշակերտներին երեք ժամով արձակել՝ խաղալու համար, իսկ ա-

* Պ. Պռոշյան, Գյուղական վարժապետներ, էջ 37, 38։

մառները, իրիկնապահերին լողանալու տանել։ Մինչև Աբովյանի այցելությունը՝ Շապուհի աշակերտները մյուս առարկաներից անցնում էին լոկ թվաբանություն, այն էլ հազիվ կարողանում էին թվանշանները գրել և մեկից հարյուրը հաշվել։ Աբովյանը երեխաներին սովորեցնում է բերանացի հաշիվներ անել, իսկ ուսուցչին պարտավորեցնում՝ անցնել նաև չորս գործողությունները։ Վերջապես՝ Աբովյանը խորհուրդ է տալիս գրաճանաչությունն այնուհետև ուսուցանել հնչական եղանակով, որով առաջնորդվում էին նորագույն մանկավարժները, և Երևան վերադառնալուց հետո, ուսուցչին և առաջին դասատան երեք աշակերտներին (Պ. Պռոշյանին, խաչատուր Տեր-Գրիգորյանին և Տընտեսենց Գալուստին) նվեր է ուղարկում իր «Նախաշավիղ կրթության» դասագրքից մեկական օրինակ։

Աբովյանի բարեփոխումները Շապուհի սրտով չէին։ Լինելով կրթական կան մանուկների ուսման գործը։

Աբովյանի բարեփոխումները Շապուհի սրտով չէին։ Լինելով կրթական հին սխեմի երկրպագու, բայց և վախենալով Աբովյանից, որն, իբրև գավառի պետական դպրոցների տեսուչ, իրավասու էր նրա «շկոլն» փակել, Շապուհը հաջորդ տարի թողնում է Աշտարակը և փոխադրվում Երևան (թեմական դպրոց)։ Նրանից հետո կրկին բարձիթողի է մնում գյուղական մանուկների ուսման գործը։

Աշտարակցիներից ոմանք այնուհետև իրենց երեխաներին կրթության են ուղարկում մերձակա Մուղնու սուրբ Գևորգ վանքում, 1849 թ. կարինեցի Մարտիրոս Մժեժյանի բաց արած դպրոցը, որը սակայն գործում է հազիվ երկու տարի և 1851 թ. աշնանը փակվում, ուսուցչի՝ Հառիճո վանք փոխադրվելու պատճառով։

50-ական թթ. աշտարակցիները բաց են անում ծխական նոր դպրոց՝ ուսուցիչ կարգելով ոմն Հովհաննես վարժապետի, որը մի ժամանակ դաս էր առել Շապուհ Շահնազարյանից։ Իբրև նորամուծություն՝ որոշում են ավանդվելիք առարկաների շարքը դասել նաև ռուսաց լեզուն, թեպետ անկարելի է լինում դասատու ճարել։

Ահա՛ այս դրության մեջ էր գտնվում դպրոցը, երբ 1856 թ. ամառը Ներսիսյան դպրոցն ավարտելուց և Տփղիսի գիմնազիայի նախապատրաստական մի տարի դասեր լսելուց հետո Պ. Պռոշյանը վերադառնում է հայրենի գյուղ և սկզբում ընկերակցելով, իսկ հետո միայնակ՝ ծավալում իր մանկավարժական գործունեությունը։ Օրվա կարգը հետևյալն էր։ Ամեն առավոտ աշակերտները նախ՝ մասնակցում էին գյուղական եկեղեցու ժամերգությանը, հետո նոր անցնելով դասասենյակ՝ սկսում պարապմունքները։ Ժամը 11-ին կարճ ժամանակով ցրվում էին տները՝ ճաշելու, իսկ ապա՝ վերադառնալով դպրոց՝ շարունակում էին դաս առնել, մինչև որ կհնչեին երեկոյան զանգերը։

Պռոշյանի ջանքերով և նրա աշակերտների ծնողների հավանությամբ՝

փորձ է արվում ընտրել հոգաբարձություն, դպրոցի կարիքները հոգալու և ուսուցչի ռոճիկը ժամանակին վճարելու համար, որպեսզի վերջինս հնարավորություն ունենար ողջ ուշադրությունը կենտրոնացնելու դասատվության վրա:

Դպրոցի առաջին հոգաբարձուն Շահազիզյանց Շամիրն էր՝ երկու այլ օգնականներով, որոնք շուտով մի կողմ են քաշվում և ամբողջ հոգսը թողնում Շամիրի վրա: Յուրաքանչյուր աշակերտի համար, հակառակ մինչ այդ ընդունված կարգի, տարեկան ուսման վարձ է սահմանվում չորս ռուբլի, որի կեսը պետք է վճարեին սկզբից: Մանավանդ որ, բացի հայտնի առարկաներից՝ գրաճանաչություն, հայոց լեզու, քերականություն, թվաբանություն և այլն, Պողոսյանն ավանդում էր նաև ռուսաց լեզու: Բայց, վերջիվերջո, ծնողներից քչերն էին հարգում պայմանը: Մեծ մասը տալիս էր մեկ-երկու ռուբլի կամ, առհասարակ, ոչինչ:

Ուսման վճարի պատճառով՝ շուտով դպրոցի 70 աշակերտներից մնում են միայն 30-ը, իսկ գյուղացիք էլ արդարանում էին ասելով. «Ի՞նչ անենք, թե մեր երեխեքը ռուսերեն չեն գիտենալ. մենք որ հայերեն էլ կարդալ չգիտենք, մարդ չե՞նք...»: Դրանից օգտվում է Հովհաննես վարժապետը: Նա վերստին ասպարեզ է գալիս, հավաքում հեռացած աշակերտներին և հին եղանակով ու պայմաններով շարունակում դաս տալ:

Չնայած այդ ու նման խոչընդոտների, հաջողությամբ սկսելով առաջին ուսումնական տարին՝ Պողոսյանի դպրոցը թևակոխում է երկրորդը և կանգնում նոր դժվարության առջև: Ծնողների, նաև հոգաբարձուի ընդհանուր կարծիքով՝ ուսուցիչը կորցնում է իր հեղինակությունը, եթե չի կիրառում մարմնական պատիժներ. ահա՛ այդ առիթով նրանց պատճառաբանությունները. «Տուրը (այսինքն՝ ծեծը) կանի խաղաղություն. իշին պիտի բզես, որ գնա. երեխան որ կա, հիմար է, իշի պես անհասկացող է, բիզ է հարկավոր ու ճիպոտ»: Գոյության կռիվն հարկադրում է Պողոսյանին՝ հնազանդվել ընդհանուրի կամքին և հարկավոր դեպքում գործադրել մարմնական պատիժներ: Դրան հակառակ՝ Պողոսյանին հաջողվում է կատարել դրական բարեփոխություններ: Առնելով նախապես ծնողների ու հոգաբարձվի համաձայնությունը՝ նա օրվա դասերի թիվը սահմանափակում է վեցով, որոնք, ընդհատվում էին դասամիջոցներով, իսկ փոքրահասակներն, առհասարակ, ազատվում էին առավոտյան ժամերգություններին մասնակցելուց:

Պողոսյանը հմուտ ու եռանդուն մանկավարժ էր, և շուտով նրա անձը սիրելի է դառնում աշակերտների ու ծնողների համար, սակայն նա էլ շատ չանցած, 1858 թվականի հուլիսի վերջերին, ընդհատում է իր ուսուցչությունը Աշտարակում և փոխադրվում Տփղիս (Սարգիս Ջալալյանցի հարկադրանքով):

Հետագա տասը տարիներին Աշտարակում մեկի փոխարեն գործում էր

երկու ծխական դպրոց՝ Մարիանեի և Ամենափրկիչ եկեղեցու բակերում: Ով-
քե՞ր էին ուսուցիչները. արդեն հիշված Հովհաննես վարժապետը, թերևս և
Տեր Ստեփան քահանան: Ի դեպ՝ մանկության տարիներին, մի ձմեռ անցկաց-
նելով Աշտարակում, Պատմության հեղինակ Երվանդ Շահազիզը հաճախել է
Ամենափրկչի գավթի դպրոցը՝ դաս առնելով Տեր Ստեփանից, որի անձի և
նախասիրությունների մասին համարյա ոչինչ չգիտենք: Հայտնի է այսքանը,
որ Տեր Ստեփանը խիստ մարդ չէր, իսկ աշակերտները սիրում էին խոսել
ջուտասելուկներով՝ այդ ձևով ծաղրելով նաև ուսուցչին:: Եր. Շահազիզի թո-
ղոններում պահպանվել են դրանցից երեք նմուշ ու մի կարճ բացատրական,
որ մեջ ենք բերում սորբև ամբողջությամբ.

«Աշտարակի մանուկները սովորություն են ունեցել շուտասելուկներ ասել
ու զվարճանալ,— ասում է Եր. Շահազիզը:— Հիշում եմ մանկությունից, որ
մի տարի ապրելով ձմեռը Աշտարակում՝ դպրոց էի գնում: Ամենափրկչի
դպրոցը, Տեր Ստեփանի վարժապետության օրով:

1

Ուլը նիլավ ուռի ծառը,
Ուլ պոչովը ուռ օլորուց,
Ուլ վերերուց:

2

Տեր Ստեփանի տանձի ծառին
Տասը լիտր ծանդր-ծանդր
Տանձ կա ծերին:

3

Ջուկ քցեմ,
Ջուկ կուլ տամ.
Մուկ քցեմ,
Ջուկ կուլ տամ»*:

1868 թ. ամառը հանգամանքների բերումով լինելով Աշտարակում, Պ.
Պողոսյանն աշխատում է օգնել համագյուղացիներին՝ միավորելու ծխական
զույգ դպրոցները և Մարիանեի բակում բաց անելու նոր դպրոց, ինչպես
քաղաքներում գործողները, լավորակ ուսուցչական կազմով: Թվում է, այդ
ճանապարհով պիտի խթանվեր ուսման գործը գյուղում, և բացվեին գյուղա-
ցիության աչքերը՝ համախմբվելու և դիմագրավելու հասարակական չարիքը:
Պողոսյանն, ինչպես ինքն է վկայում, կարողանում է վերջնականապես հոգա-

* Տե՛ս սույն Պատմության ձեռագրին կից թերթիկները:

բարձուական կառավարչություն և հսկողություն սահմանել դպրոցական գործերի նկատմամբ և ընդհանուրի համաձայնությամբ ընտրվելով տեսուչ՝ նվիրվում է դպրոցների միավորման գաղափարին:

Նրան յուրովսանն օգնում ու աջակցում էին էջմիածնի գավառապետ Բարսեղ Եղնակի Կամսարականը (վախճ. 1881 թ.), նրա օգնական Գևորգ Խանաղյանը, շրջանի հաշտարար ատյանի պետ Մարկոս Դոլուխանյանը, տանուտեր Սարգիս Շուխյանցը, գյուղական դպրոցի հոգաբարձու Իսում Տահազիզյան-Կամսարականը:

Սակայն այսքանով էլ ընդհատվում է հայրենիքում Պողոսյանի ուսուցչական գործունեության երկրորդ և վերջին, կարճատև միջադեպը: Կաթողիկոսի թարգման, աշտարակցի Նիկողայոս Տեր-Հովսեփյանի և քահանա Սարգիս Բզնունու պառակտողական գործունեության հետևանքով դպրոցների միավորումը մի որոշ ժամանակով հետաձգվում է, իսկ Պողոսյանն էլ հեռանում է Աշտարակից:

Եվ այնուհանդերձ՝ Պողոսյանի ջանքերը տալիս են իրենց պտուղները. Աշտարակի դպրոցն այնուհետև շարունակում է գործել առանց ընդհատումների և բավականաչափ արդյունավետ, այս անգամ մրցելով 1879/80 ուսումնական տարում գյուղում բացված պետական ռուսական երկդասյա տարրական դպրոցի հետ*:

Աշտարակի դպրոցական կյանքի վերակառուցման թվականը՝ 1868, քաղել ենք Պ. Պողոսյանի «Ինքնակենսագրությունից» ու նամակներից, որոնք առաջին անգամ հրատարակել է Խ. Սարգսյանը «Գրական ժառանգություն» մատենաշարի առաջին և միակ գրքում (Երևան, 1940, էջ 181 և 349): Այն, սակայն, մասամբ սրբագրելի է, որովհետև ժամանակի մամուլում հրապարակված նյութերից պարզվում է, որ Պերճ Պողոսյանը հայրենի գյուղի դպրոցի վերակառուցման հարցերով սկսել է զբաղվել ավելի վաղ, շուրջ 1865-ին, իսկ 1868-ին սբ. Մարիանեի գավթում կառուցվել է դպրոցի համար հատուկ շենք: Այդ էլ առիթ է ծառայել, որ Աշտարակի դպրոցի նոր շրջանի պատմությունն սկսվի 1868-ից:

Աշակերտների թիվն այդ տարի 80 էր, որոնց մեջ կային նաև շրջակա գյուղերից հաճախող երեխաներ: Դպրոցում ավանդվում էին՝ հայոց և ռուսաց լեզուներ, թվաբանություն, հայոց պատմություն, քերականություն,

* Աշտարակցիները երախտագիտությամբ են հիշում իրենց հին ու նոր բոլոր ուսուցիչներին՝ Մ. Թաղիդյանցի դասընկեր Սահակ Վարդանյանից սկսած մինչև նորերը, ու նաև՝ 60-ական թթ. վերջերից Վասպուրական աշխարհից այստեղ հաստատված երկարամյա մանկավարժ Ավետիս Խորխոռունի-Արամյանցին, որոնց ջանքերի շնորհիվ գրաճանաչ են դարձել ու կյանք մտել հարյուրավոր պատանիներ:

հայոց և ռուսաց վայելչագրություն: Եվ որ առավել ուշագրավ է, աշտարակցիների միահամուռ ցանկությամբ, ի նշան խորին երախտագիտության և ազգին ու հայրենիքին մատուցած բացառիկ ծառայությունների գնահատման՝ միևնույն 1868-ից դպրոցը կոչվել է Ներսես Աշտարակեցու անունով: Ցավոք, դարավերջին, ինչ-ինչ հանգամանքների թելադրանքով, դպրոցը անանուն է դառնում: Արժե՛ր, թեկուզ ուշացած, մարմին տալ այդ լավ նախաձեռնությանը:

Այս ամենի մասին վստահելի տվյալներ հաղորդողը «Մեղու Հայաստանի» լրագրի 1869 թ. նոյեմբերի 15-ի համարում լույս տեսած ուսուցիչ Արամյանցի հրապարակային նամակն է, մի կարևոր վավերագիր, որը պատմում է նաև Աշտարակի վերակառուցված դպրոցի առաջ բերած դրական տեղաշարժերի ու համընդհանուր ոգևորության մասին: Լսե՛նք Արամյանցի խոսքերը.

«Չեմ կարող տեսնել ու չուրախանալ, և այն ուրախությունս իմ հազգիներում չհաղորդել, վասնզի կտեսնեմ, որ Արարատու դաշտի մեջ բարոյական կրթությունն մի նոր լուսատու լապտեր ես վառելով՝ կլուսավորե չէ թե միայն իրեն մերձավորներին, այլև բավական միջոցով հեռավորներին անգամ: Այս ջահ Աշտարակու գյուղաքաղաքի մեջ կազմվում է իրեն բարեպաշտ և ջերմեռանդ հասարակությունից, որ այս օրից չորս տարի առաջ, Պողոսյանց պ. Պերճի հորդորական խոսքերով՝ կժողովեն իրենց մանուկներին մի սենյակի մեջ, ու սկսում են ուսմունք շարունակել իրենց վարձով:

Այս բարենախանձ սիրո կրակը տեղիք գտնելով հիշյալ հասարակության սրտի մեջ՝ անցյալ 1868 ամի սեպտեմբեր ամսում, հասարակական խորհուրդով, սուրբ Մարիամ եկեղեցվո պարսպի մեջ ուսումնարան անվամբ առանձին սենյակներ կշինեն և ժողով անելով՝ իրենց հասարակությենից քսան անձն երեսփոխան կդնեն, և նոցանցից չորս արժանավոր անձինք, որք են՝ պարոնայք Իսում Տահազիզյանց, Հովհաննես Հարությունյանց, Հովհաննես Ազատյանց և Ալեքսան Մակարյանց, հոգաբարձու կընտրեն, ընդ սմին և աստիճանավոր պ. Մարկոս Դոլուխանյանց՝ վերատեսուչ, և պ. Սարգիս Շուխյանց՝ օգնական վերատեսուչի. այս որոշմունքներից հետո աներևույթ անկյուններից մշտաբուխ աղբյուրներ բաց կանեն և առանձին հայտարարությամբ Գեորգ Դ. կաթողիկոսին կներկայացնեն, ու կժառանգեն նորին սուրբ օրհնությունն ու համակրությունն. իրենց ընտրությունները կհաստատվին նորին վեհափառության պաշտելի կոնդակով:

Եվ այս ամենայն առաքինական և ազգաշահ բարեգործությանց՝ միաբան և միախորհուրդ կնվիրեն իրենց աշխատությունը և թե միանգամայն ուսումնարանը երջանկահիշատակ հանգուցյալ Ներսես կաթողիկոսի անվան և փառաց, որ թեպետ այս նվիրական գործողությունն այն երանելվո անվան և հիշատակին մեծ և նոր փառք չպետք է տար, որովհետև նրա ոսկերքը իր

մեծագործություններով արդեն փառավորյալ են, այլ այս համարվելու է իր հայրենակիցների կողմից մի անկեղծ սիրո ազնիվ զգացմունք:

Համեմատելով ուրիշ բազմամարդ շատ գյուղերի հետ, գովելի է, արդարև, այս հասարակության եռանդուն ջանքը, որովհետև իրենց որդոց դաստիարակության և ազգի համար պիտանացու անդամներ պատրաստելու հոգացություններ կանեն, և այսօրվան օրս 80-ի չափ հայ մանուկներ, ոմանք Աշտարակից և ոմանք այլևայլ գյուղերից, հաջող քայլափոխությամբ՝ հառաջ կխաղան ուսման ասպարեզի մեջ, սովորելով կարևոր առարկաներ...»:

Եր. Շահազիզը Պերճ Պռոշյանի մասին գրած հուշերում հանգամանորեն անդրադարձել է Աշտարակում պետական դպրոց բանալու օրերի անցքերին, որոնց գլխավոր դերակատարներն էին գավառապետ Խանաղովը, Տեր Սարգիս քահանա Բղնունին և նույն Պռոշյանը:

Ցարական կառավարության կարգադրությունը՝ Անդրկովկասի խոշոր գյուղերում, հասարակության միջոցներով պետական ռուսական դպրոցներ բանալու մասին, որքան էլ գյուղացիների ընդդիմության հանդիպեր, այնուհանդերձ իրականացվում էր բավականաչափ արագ ու փորձված եղանակով՝ մեկին խոստանալով արտոնություններ, իսկ մյուսին սպառնալով աքսորով:

Եր. Շահազիզն այդ անցքերը հիշում է ժամանակագրական ճշգրտությամբ: «1879 թվականն էր, հունիս ամիսը: Ես արդեն ավարտել էի իմ՝ Լազարյան ճեմարանի ուսման գիմնազիոնական ընթացքս և պետք է շարունակեի իմ ուսման բարձրագույն ընթացքը նույն ճեմարանի արևելյան լեզվաց լիկեոնում:

9—10 տարի կլիներ, որ չէի տեսել մորս, և նա անհամբեր սպասում էր մեր տեսության, և ես հուլիսին արդեն Աշտարակումն էի: Ահա՛ հենց այդ ժամանակ, առաջին անգամ, ես տեսա և ծանոթացա Պերճ Պռոշյանի հետ...

Երեք հոգի էինք՝ ես, Պերճը և Հարությունենց Մնացականը (Բաղիշը): Ամեն օր տեսնվում էինք, երկար խոսում, վիճաբանում...

Մեր խոսակցության և վիճաբանության առարկան այդ ժամանակ գյուղում ծագած՝ պետական դպրոց բանալու խնդիրն էր, որի պատճառով գյուղը երկու մասի էր բաժանվել՝ չուզեցողների և ուզեցողների: Առաջինի կողմնակիցները գյուղացիների մեծամասնությունն էր, որոնց մեջ էր նաև Պերճ Պռոշյանը: Նա կատաղի հակառակորդ էր դրան, այսինքն՝ դպրոցի բացվելուն, և՛ սկզբունքով, և՛ անտեսական տեսակետից, և չէր կարելի ասել, որ նրա դատողությունները առողջամիտ չէին: Նա ասում էր, թե գյուղը վաղուց ունի իր հայկական դպրոցը, և այդ էլ գյուղը պահում է մեծ դժվարությամբ: Եթե բացվի մի ուրիշ դպրոց, պետք է, ուրեմն, փակվի հայկական դպրոցը, որովհետև երկու դպրոց միասին չի կարող գոյություն ունենալ: Լավ չէ՞, որ մենք ունենանք մի հայկական դպրոց և լավ պահենք, քան հայկական և պետական,

բայց երկուսն էլ աղքատ, խեղճ և, ուրեմն, անօգուտ: Հայկական դպրոցն ունի
և ռուս լեզվի դասեր՝ հայ լեզվի դասերի չափով. ասել է, թե պետական դպ-
րոցում դասատվությունը պետք է լինի պետության լեզվով, ուրեմն՝ մեր երե-
խաներն անծանոթ լեզվով անծանոթ գիտություններ պետք է սովորե՞ն...
Կարո՞ղ են:
Հակառակ կուսակցությունը թեև շատ փոքրաթիվ էր, բայց գլուխ ուներ
«Միկիտան Սաքո» կոչված տերտերին: Այդ անունը տվել էր նրան Պերճը,
որովհետև նա քահանա ձեռնադրվելուց առաջ գինու խանութ էր ունեցել Ղա-
ղախի շտաբում, Այղրգյոլ լճի մոտ: Դա մի ճարպիկ մարդ է եղել, գրագետ
և աչքաբաց, բայց շատ փողասեր և անբարոյական, ինչպես ասում էր Պերճը:
Այժմ էլ նրան խոստացել էին նոր բացվելիք պետական դպրոցում կրոնի դա-
սերը և մի պատվո մեդալ: Նա այցելում էր ծխականների տները և հաջող
քարոզություններ էր անում հօգուտ դպրոցի բացվելուն:
— Լազարյան ճեմարանը ինքը իր ոտքով մեր դուռն է եկել, և մենք քացի-
քացի ենք անում հիմարաբար,— ասում էր նա...
Պերճը կատաղած էր նրա՝ այդ Տեր Սարգիս Բղնունու դեմ:
Պերճն էր ամեն օր գյուղի նոր լուրերն այդ մասին մեզ հասցնում: Նա
մի օր էլ մեզ հայտնեց, թե ինքը՝ գավառապետ Խանաղովը, «մախսուս», հենց
այդ գործի համար մեր գյուղը պիտի գա... Պետք է պատրաստվել, տղե՛րք...
Ի՞նչ պատրաստվելու բան կար. եթե մեր կարծիքը հարցներ, մենք էլ մեր
իմացածը կասեինք. գյուղը չուներ է, երկու դպրոց չի կարող պահել, լավ
է ասում Պերճը:
Դրա վրա անցավ մի-երկու շաբաթ: Պերճը մի օր էլ ասաց, թե շշուկ
կա, որ էսօր չէ մյուսը օրը Խանաղովը, որտեղից որ է, կերևա այստեղ:
Կիրակի օր էր. առավոտյան ժամ էինք գնացել ս. Գևորգ Ամենափրկիչ
եկեղեցին. մեզ հետ էր և Պերճը. նա շշնջաց, թե եկել է:
...Երեկոյան յասավուլ եկավ և հրավիրեց ինձ ուներ Շահազիզենց քու
Կարոյի տունը թեյի, որտեղ իջևանել էր գավառապետը: Գնացի և այնտեղ
պատահեցի Բաղիշին, բայց Պերճը չկար, նա, երևի, հրավերք չէր ստացել,
այլ միայն մենք՝ անփորձ երիտասարդներս:
Գավառապետը սիրով ընդունեց մեզ. ինձ հարցրեց Լազարյան ճեմարանի
մասին, հորեղբորս՝ Սմբատ Շահազիզի մասին, շատ գովեց նրա «Լևոնի
վիշտը», իսկ Բաղիշին՝ նրա հորեղբոր, Վեհապետյան Գևորգ արքեպիսկոպոսի
մասին, որ հոգում էր նրա ուսման գործը:
Գավառապետը մի միջահասակ մարդ էր՝ մեր հին պաշտոնյաների տի-
պարով, խոսելու և շարժվելու ձևերով: Խորոված կերանք, գաթայով թեյ խմե-
ցինք: Վերջը, կարծես ի միջի այլոց, նա ավելացրեց.
— Պետերբուրգից հրաման է եկել նահանգապետի վրա. նա էլ գրել է

մեզ, որ այս ուսումնական տարվա սկզբից հայ և թուրք մեծ գյուղերում պետական դպրոցներ բացվեն և դրանց պահելու համար միջոցներ հայթայթվեն: Էլ մեզ չեն հարցնում, թե չենք ուզում. հրաման է, պետք է կատարվի և կկատարվի: Բոլորը, ինչ որ արվել ու խոսվել է գյուղում այդ մասին, մեզ հայտնի է:— Եվ ապա՝ դառնալով մեզ,— դուք լավ կարծիքների տեր եք, բայց անփորձ երիտասարդներ եք և ծանոթ չեք մեր տերության քաղաքականությանը, ուստի և կարող եք փորձանքի հանդիպել: Ձեր՝ գյուղից հեռանալու ժամանակն արդեն մոտենում է. դուք կերթաք և ձեր գործով կլինեք, կմոռանաք, ինչ որ եղել է, չի եղել, բայց Պերճի գլուխը կարող է ցավել: Այնպես, մի թեթև, հասկացրեք նրան, որ միառժամանակ թողնի, հեռանա, մինչև որ ամեն բան խաղաղվի, վերջանա:

Եվ մենք թեթև հասկացրինք նրան, և նա գլխի ընկավ: Մենք դեռ Աշտարակում էինք, որ նա Թիֆլիս գնաց: Գավառապետը մեզ վերա խելոք հայ պաշտոնյայի տպավորություն թողեց...

Սրա վրա անցան երեք-չորս տարի: 1882 թվականն էր: Մենք ավարտել էինք մեր բարձրագույն ուսման ընթացքը և վերադարձել հայրենիք՝ մի-երկու ամիս հանգստանալու և, հետո, կյանք մտնելու ու գործելու: Մենք արդեն նախկին անփորձ երիտասարդը չէինք. ուսանողական կյանքն արդեն տրորել էր մեզ, և մենք որոշ չափով հասկացել էինք ցարական կառավարության քաղաքականությունը... Պետական դպրոցը Աշտարակում բացվել էր, և երկու դպրոցն էլ կողք-կողքի, հաշտ, ապրում էին: Բղնունի Տեր Սարգիս քահանան ստացե՞լ էր կրոնի դասերը, բայց մեղալն ստացե՞լ էր, թե ոչ, չենք կարող ասել. նա գնում-գալիս էր ինձ մոտ և ծածուկ ականջիս ասում էր, թե ինքը մի այնպիսի վեպ է գրում, որ պիտի քռացնի Պերճի բոլոր վեպերը»*:

Հետագա ժամանակներում, 1900-ական թվականներին, Աշտարակում բացվում է նաև քաղաքային դպրոց, որոնց բոլորի տնտեսական ծախքերը (ջեռուցման և լույսի) հոգում էր համայնքը՝ պետական և այլ հարկերի համար հավաքած գումարներից: Ըստ այդմ՝ վերջիններից ծխական դպրոցին հատկացվում էր 2500 ռուբլի, պետական երկդասյա դպրոցին՝ 2200, իսկ քաղաքային դպրոցին՝ 2000: Ի վերջո՝ ամենից անմխիթարը ծխական դպրոցի վիճակն էր, որի հոգաբարձությունը սկսում է որոնել միջոցներ:

Պահպանվել է ծխական դպրոցի հոգաբարձուների ստորագրությամբ՝ Եր. Շահազիզին ուղղված մի նամակ, որն անծանոթ տվյալներ է պարունակում այդ առթիվ: Նրանք գրում են.

«Սրանով պարտք ունինք խորապես շնորհակալություն հայտնելու Ձեզանից, որ չեք մոռացել, ուշադրություն դարձնել Ձեր հայրենիքի՝ Աշտարակի

* Եր. Շահազիզ, Հիշողություններ և դիմաստվերներ, էջ 54—59:

ծխական դպրոցի վերա: Հոգաբարձությունս ստացավ Ձեր նամակը, որով ուղարկել եք մի հազար ռուբլի հօգուտ մեր դպրոցի, և ահա շտապում ենք թե՛ մեր գյուղի հասարակության և թե՛ մեր կողմից շնորհակալություն հայտնել:

Պ. Երվանդ Շահազիզ. մենք լսել ենք, որ հանգուցյալ Սմբատ Շահազիզի մյուս ժառանգներից Եսայի Արամյանը և Սիսոն, բացի խոստանալուց, գրավոր դոկումենտ են թողել Ձեզ մոտ, որով ցանկություն են հայտնել իրենք ևս մեր դպրոցի պատմության մեջ անջինջ պահելու Սմբատ Շահազիզի հիշատակը: Սակայն նրանք այսօր իրենց խոստման տերը չեն: Ուստի խնդրում ենք, եթե կա այդպիսի գրավոր փաստ Ձեզ մոտ և եթե Դուք էլ հարմար եք գտնում, ուղարկեք մեզ այդ գրավոր դոկումենտը, որ նրա միջոցով ստանանք այն, ինչ որ խոստացել են վերոհիշյալ մարդիկ:

Հարգանոք,

Ծխական դպրոցի հոգաբարձուք՝

Հայկ Տանազիզյան
Ս. Սուքիասյանց
Կարապետ Ղոնաղչյան
Լևոն Տանազիզյան»*:

Նշանակում է՝ Եր. Շահազիզը, հեռու ապրելով հանդերձ հայրենի գյուղից, երբ նյութապես քիչ թե շատ բարվոք վիճակում էր, չի զլանում բավականաչափ շոշափելի գումար նվիրաբերելու Աշտարակի ծխական դպրոցին, որպեսզի ապահովվի նրա գոյությունը և հաջողությամբ առաջ տարվի պատանեկության հայացի կրթությունն ու դաստիարակությունը:

Հավելված III

ԿԱՐՄՐԱՎՈՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կարմրավորի շինարարական արձանագրությունը շուրջ մեկ ու կես դար է, որ իր վրա է հրավիրում հնագետների ու բանասերների ուշադրությունը: Այն հրատարակվել է մի քանի անգամ: Եվ այնուհանդերձ՝ տակավին չունենք արձանագրության ո՛չ ամբողջական ու ճշգրիտ բնագիրը, ո՛չ էլ գոհացուցիչ մեկնաբանությունը: Առանձին բառեր պարզապես սրբվել են, իսկ կռահման փորձերը վստահություն չեն ներշնչում (գուցե և, առհասարակ, չե՞ն փորագրվել):

* Եր. Շահազիզի թղթեր, III բաժին, № 48:

Վերծանման սկիզբը դրել է հռչակավոր հնախոս-պատմաբան Հովհաննես Շահխաթունյանը (1799—1849), դեռ անցյալ դարի 30-ական թթ., և ընթերցել միայն այսքանը. «Ես Դաւիթ մեղաւոր... գիւղաքաղաքէս յերեցունեաց Գրիգոր քահանայի և Մանասա, և որդիք տուաք շինել զեկ... Աստուածածինս վասն խաղաղութեան ամենայն աշխարհիս, շինութեան Աշտարակի և պտղաբերութեան սահմանիդ... և վասն... հոգոց... ազգի մերոյ...» (Յ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հատոր II, էջմիածին, 1842, էջ 87—88)։ Նույն վիմագրի հաջորդ հրատարակիչները (Ղ. Ալիշան, Կ. Կոստանյան) պարզապես ընդօրինակել են Շահխաթունյանի վերծանածը՝ նոր ոչինչ չուղղելով կամ չավելացնելով։

Արձանագրության բնագիրը վերականգնելու և Շահխաթունյանի թերիները լրացնելու ուղղությամբ նոր փորձեր են արվում միայն 1920-ական թվականներին, որոնց արդյունքները, սակայն, ո՛չ մի տեղ չեն հրատարակվել։

Մեզ ծանոթ են այդ անտիպ վերծանություններից երկուսը՝ հայագետներ Գարեգին Հովսեփյանինը և Գրիգոր Ղափանցյանինը։ Երբ Եր. Շահազիզը գրում էր «Աշտարակի պատմությունը», երկուսի հետ էլ մտքեր է փոխանակել, երկուսի խորհուրդներից էլ օգտվել, երկուսի վերծանություններն էլ ունեցել ձեռքի տակ՝ նախապատվությունը տալով երկրորդի ընթերցմանը և աննշան սրբագրությամբ արտագրելով իր գրքում։

Գ. Ղափանցյանն այդ արձանագրության՝ իր վերծանությունից բացի, Եր. Շահազիզին է տրամադրել նաև Կարմրավորի մասին մի համառոտ պատմական տեղեկանք, որի մեջ կան եկեղեցու կառուցման ժամանակի մասին ուշագրավ դիտողություններ։

Ահա՛ այդ գրությունն ամբողջությամբ.

ԱՇՏԱՐԱԿԻ ԿԱՐՄՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (VII ԴԱՐ)

<Ես Դաւիթ մեղաւոր [ի] գիւղաՙաղաՙէս յերիցուն >եաց, Գրիգորի քահանայի եւ Մանասեի որդիՙ, տուաՙ շինել զեկիս... սրբո [յ] Ածածնիս վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ շինութեան Աշտարակի եւ պտղաբերութեան սահմանիդ եւ վասն փրկութեան հոգւոց մերոց, ազգի մերոյ, կենդանեաց եւ մեռելոց. սմա փափագեցաՙ սուրբ [լ]ուսո, սա կոչեցաւ որդի վշտաց... (կետադրությունը մերն է —Պ. Հ.)։

Սկզբի մասը՝ «Ես Դաւիթ ... յերիցուն» այժմ ծածկված է, բայց Շահխաթունյանի ժամանակ (տե՛ս «Այրարատ») բաց էր. նմանապես ծածկված է արձանագրության վերջին մասը։ Արձանագրությունը բազմիցս ստուգվել է մեր կողմից և լրացվել։ Ծածկված առաջին մասը մենք վերցրել ենք «Այրարատից»։

Կարմրավորի տիպի եկեղեցի, այն է՝ խաչի չորս դրսևորված թևերով +, մենք ունենք նաև Թալինում, որը շինված է Ներսեհ Կամսարականի ձեռքով (VII դարում) և Ալաման գյուղում (Կարսի նահանգ)։

Կարմրավորի VII դարին պատկանելը ապացուցվում է թե՛ յուր կոնստրուկցիայով՝ նման նույն դարի մյուս երկու փոքրիկ եկեղեցիներին (Թալինում և Ալամանում), թե՛ յուր գոտեձև և միատող արձանագրությամբ և թե՛ տանիքի կղմինդրով, որը նույնպես հատուկ է եղել VII դարին, ինչպես մեզ բանավոր կերպով հայտնել է հնագետ Я. И. Смирнов-ը։

Գր. Ղափանցյան

9. II. 1929 թիվ, Երևան»

(Եր. Շահազիզի թղթեր, I բաժին, № 9, հավելված)

Կարմրավորն այժմ ազատված է հավելված կառույցներից և երևում է իր նախնական տեսքով, այնպես որ հնագետներն ի վիճակի են անձամբ տեսնելու և լրացնելու արձանագրության սկզբի ու վերջի՝ Գ. Ղափանցյանին մատչելի չեղած մասերը, առանց դիմելու Հ. Շահխաթունյանի օգնությանը։ Եվ ի՞նչ. արձանագրության սկիզբը, մասնավորապես «Ես Դաւիթ...» և «... գիւղաքաղաքէս» բառերի միջև ընկած մասն ավելի ծավալուն է եղել, քան ենթադրվել է, բայց արևի երես ելնելուց հետո էլ վերստին դժվար է կարդացվում ու, համարյա, չի հասկացվում։ Ինչ վերաբերում է վերջին, ծածկված մասին, ապա պարզվում է, որ արձանագրությունը գրեթե շարունակություն չունի, և Գ. Ղափանցյանի վերծանած բնագրի վրա պետք է ավելացնել ընդամենը մի բառ՝ «...անարժանո» («... սա կոչեցաք որդի վշտաց անարժանո»), մնացածները գրեթե չեն նշմարվում։

Երկու տասնամյակ առաջ «Էջմիածին» ամսագրում լույս տեսավ Հովսեփ Եղիազարյանի «Աշտարակ (բնակավայրը, պատմական հուշարձանները և վերջիններիս վիմագրությունները)» հնախոսական ակնարկը (տե՛ս 1966, № 8 և 9—10)։ Կարմրավորին հատկացված մասում գտնում ենք նաև քննության առարկա արձանագրությունը։ Ուշադիր քննությունը պարզում է, սակայն, որ այս վերջին ընթերցումը սխալներից բացի նոր ոչինչ չի պարունակում, իսկ ակնարկն էլ, ամբողջությամբ վերցրած՝ բանաքաղություն է Ղ. Ալիշանի «Այրարատից» և Եր. Շահազիզի «Աշտարակի պատմության» ձեռագրից, վերջիններիս մեջ սպրդած մեկ-երկու անճշտությունները նույնությամբ կրկնելով։

Կարմրավորի «ծննդյան վկայականի» կամ միատող արձանագրության վերջին մեզ ծանոթ վերծանությունը պատկանում է կովկասագետ Պ. Մուրադյանին, որը ջանք չի խնայել վերականգնելու եղծված բառերը և ճշտելու հների կասկածելի ընթերցումները՝ ստանալով հետևյալ բնագիրը.

«Ես՝ Դաւիթ, մեղաւ որդի Ենանոսայ [...ի.] գեւղաՙաղաՙէս յերիցունեաց Գրեգորի ՙահ(ա)նայի եւ Մանասե որդիՙ տուաՙ շինել զեկ[եղեցիս սուրբ] Աստուածածինս վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ շինութեան Աշտարակի եւ պտղաբերութեան սահմանիդ





Կարմրավորի միատող արձանագրության միջին մասի վերծանությունը՝ ծանոթագրություններով (Կ. Ղաֆադարյանի)։

← Կարմրավորի միատող արձանագրությունը՝ պրոֆ. Կ. Ղաֆադարյանի արտանկարմամբ։

նւ վասն փրկութեան հոգւոց մերոց, ազգի մերոյ՝ կենդանեաց և մեռելոց: Սմա փափագեցաք սուրբ լուսոյ, սմա կոչեցաք որդի վշտաց անարժանս»:

(Պ. Մուրադյան, «Պալեոգրաֆիկ ուսումնասիրության» արդյունքները:— «Երևանի համալսարան», 1976, № 1, էջ 47):

Պ. Մուրադյանի ընթերցումից հետո, որքան մեզ հայտնի է, նոր սրբագրումներ չեն առաջարկվել:

Ամեն ինչ շատ լավ է, միայն թե «...մեղաւ որդի Ենանոսայ [...ի.]» արտահայտությունը փոքր-ինչ անսովոր է. Ենանոս անձնանունը թեպետև հազվագյուտ, բայց հին հայոց մեջ գործածվել է, իսկ «մեղաւ որդի» կապակցությունն սուտելի է: Վերջնական ճշտման կարիք ունի հաջորդ «գեւղաքաղաքէս յերիցունեաց Գրեգորի քահանայի եւ Մանասա եւ որդիք» կապակցությունը նույնպես, մանավանդ որ Ենանոս անձնանվանը հաջորդող բառն էլ բնավ չի կարդացվում (ջանազանվում է միայն մի տառ՝ ի, այն էլ բառամիջում), որով իմաստն ավելի է մթագնվում:

Կարմրավորի արձանագրությունը երկարատև քննության նյութ է ծառայել ականավոր հնագետ, հանգուցյալ Կարո Ղաֆադարյանի համար նույնպես: Նա մեզ պատմել է, որ շատ անգամ լինելով Աշտարակում՝ օրվա տարբեր ժամերին ուշադրությամբ զննել է արձանագրության ամեն մի տառն ու գծիկը և պատրաստել բնագրի վերծանության իր տարբերակը, որը, ինչպես նաև Աշտարակի տարածքում եղած բոլոր վիմագրերի հավաքածուն, նա չհասցրեց հրատարակել:

Հնագետի որդին՝ ճարտարապետ Կորյուն Ղաֆադարյանը, մեր տրամադրության տակ դրեց իր հոր՝ Կարմրավորի արձանագրության վերծանության ձեռագիրը, որից պարզվեց, որ Կարո Ղաֆադարյանը վիմագիրն ուսումնասիրել է դեռ այն տարիներին, երբ Կարմրավորը ազատված չէր կից շինություններից, բնագրից նախ ընթերցել է միայն տեսանելի մասը և մեծագույն ճշտությամբ, բայց հետո արտանկարումը ամբողջացրել է (տե՛ս լուսանկարը):

«... աց Գրեգորի քահանայի եւ Մանասեի որդիք տուաք շինել զեկ [եղեցիս]... Ս. [սուրբ Ա]ծածնինս վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, շէնութեան Աշտարակի և պտղաբերութեան սահմանիդ եւ վասն...»

Գիտնականի ձեռագրում կան արձանագրության վերաբերյալ մի քանի նկատողություն ևս, որ նույնպես ուշագրավ են.

1. Գրեգորի քահ-*ից հետո լուսամուտ է, և գրելու ժամանակ փորագրողը վրայից թռել է:*

2. շինել զեկե-*ից հետո քարը խիստ մաշված է, և գրերի հետքերը կորել են:*

3. ա շէնութեան Աշ *տառախումբը գրված է լուսամուտի պսակի վրա:*

4. վասն-*ից հետո այլևս գրեր չեն երևում:*

Այս բոլորը մեծապես օգնում են բացահայտելու հնօրյա արձանագրության փորագրման հանգամանքները, որ նյութ կարող է դառնալ առանձին քննության՝ հատատական կամ ժխտական հետևություններով:

Ցանկալի է, որ շարունակվեր Կարմրավորի խնդրո առարկա վիմագրի քննությունը՝ պարզելու համար յոթերորդ դարի այդ եզակի վավերագրի մեջ հիշատակված անձանց՝ Դավթի, Գրիգոր քահանայի և մյուսների փոխհարաբերություններն ու խնդիրը, մարդկանց, որոնք իրենց լայնախոհությամբ այսօր էլ շահում են մեր անկեղծ համակրանքը. նրանք նախ և առաջ խաղաղություն են մաղթում ամբողջ աշխարհին, և նոր միայն շենություն՝ հայրենի Աշտարակին:*

Հավելված IV

ԱՆԳԼԻԱՑԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԸ ԱՇՏԱՐԱԿԻ ՄԱՍԻՆ
(XIX դարի 10-ական թվականներ)

Աշտարակ գյուղն այցելած անգլիացի ճանապարհորդները մի քանիսն են, բայց իրենց տպավորություններն ամենից վառ արտահայտել են երկուսը՝ Ջեյմս Մորիերը և Ջոն Ջոնսոնը:

Առաջինը՝ դիվանագետ ու ճանապարհորդ Ջեյմս Մորիերը (1780—1849) դեպի Արևելք՝ Հայաստան և Պարսկաստան կատարած իր երկրորդ ուղևորության ժամանակ, 1814 թվականի հունիսի 16-ին, մի օր մնացել է Աշ-

* *Հնագետ Ս. Սաղումյանը, որի խորհուրդներից քանիցս օգտվել ենք Եր. Շահազիզի աշխատությունը տպագրության պատրաստելիս՝ մեզ տրամադրեց Կարմրավորի արձանագրության իր սրբագրած բնագիրը, որը նախորդ վերծանումների համեմատությամբ խնամված է և ունի ուշագրավ ընթերցումներ (օրինակ, «շինութեան»-ի փոխարեն՝ «շենութեան»), «... Մեղաւ որդի Ենանոսայ» բառակապակցությունը մերժում է, վերականգնելով հին ընթերցումը՝ «... մեորդի Ենանոսայ» և այլն: Ս. Սաղումյանի նկատողությունը բերում ենք ստորև. «Կարմրավոր, որդի Երանոսայ» և այլն: Ս. Սաղումյանի նկատողությունը բերում ենք ստորև. «Կարմ-*

ղաւոր, որդի Երանոսայ» և այլն: Ս. Սաղումյանի նկատողությունը բերում ենք ստորև. «Կարմրավոր եկեղեցու շինարարական միատող արձանագրությունը գտնվում է եկեղեցին արևմտյան թևի խաչաթևի հարավային նիստի ձախ եզրից, պտտվում մինչև հյուսիսային պատի աջ եզրը: Այս վիմագիրը տեղ-տեղ եղծված է, քարը՝ հողմահարված, ընթերցվել է քանիցս, 19-րդ դ. կեսից սկսած: Առավել հավաստի և ամբողջական վերծանությունը կատարել է Պ. Մուրադյանը: Ո՛չ հետանց վերապահության՝ առաջարկում եմ վերծանել (կամ գեթ վերծանածը սրբագրել) հետևյալ կերպ.

+ Ես՝ Դաւիթ մեղաւոր, որդի Երանոսայ... գեւղաքաղաքէս յերիցունեաց Գրեգորի քահանայի եւ Մանասեի որդիք տուաք շինել զեկեղեցիս սրբոյ Աստուածածինս վասն խաղաղութեան ամենայն աշխարհիս, շենութեան Աշտարակի եւ պտղաբերութեան սահմանիդ եւ վասն փրկութեան հոգւոց մերոց, ազգի մերոյ կենդանեաց եւ մեռելոց. սմա փափագեցաք սուրբ լուսոյ, սա կոչեցաք որդի վշտաց անարժանս:

տարակում և այդ առթիվ թողել հույժ շահեկան դիտողություններ։ Ստորև մեջ ենք բերում նրա գրքի այդ հատվածը՝ ըստ Հովհ. Հակոբյանի թարգմանության, ոճական անհրաժեշտ շտկումներով (բնագիրը տե՛ս **Morier James.** A Second Journey through Persia, Armenia and Asia Minor to Constentinople, between the Years 1810 and 1816, London, 1818).

Միջանկյալ նշենք, որ Եր. Շահազիզի սույն գրքում Մորիերի՝ Աշտարակ այցելելու թվականը ճիշտ ցույց չի՛ տված (1814 թ. հունիսի 16-ի փոխարեն նշել է՝ 1813 թ. հունիսի 13, Ալիշանի հետևությամբ)։

«Հաջորդ առավոտ ուղևորվեցինք հայկական մի մեծ գյուղ՝ Աշտարակ անունով, ընկած մի բավական մեծ գետի ափերին, որը հոսելով ժայռերով պատած շատ խոր կիրճով՝ այնուհետև ոլոր-մոլոր անցնում է դաշտով և, ի վերջո, թափվում է Արաքսը։ Աշտարակն ունի կարևոր բնակավայր լինելու բոլոր նշանները, որովհետև այնտեղ կան շենքեր՝ մի քանիսը կանգուն, իսկ մյուսներն՝ ավերված, որոնք կարող են պատիվ բերել ամեն մի քաղաքակիրթ երկրի։ Գետի վրա գցված է քարե մի կամուրջ, որի կերտվածքն ու ճարտարապետությունն արտակարգորեն լավ են։ Մի ավերակ եկեղեցի՝ կառուցված դարձյալ հիանալի շինանյութով և ամենանուրբ վարպետությամբ, ի տես ամենքին, բարձրանում է բլրի վրա. նրանից քիչ այն կողմ գերեզմանոցն է, որի շիրիմներից մի քանիսը ապացույց են նրա, որ դրանց տակ հանգչում են երևելի մարդիկ։ Այս երկրամասում սփռված են տարբեր մեծության ու չափի եկեղեցիներ և վանքեր, բոլորն էլ քարաշեն ու բոլորն էլ, գրեթե, միևնույն ոճով կառուցված։ Դրանք գտնվում են աչքի ընկնող բարձունքների վրա... և մի մասը լքված ու ավերակ է. դատելով նրանց վրա փորագրված արձանագրություններից, որ մենք նկատեցինք մի-քանիսի վրա, ոչ մեկը յոթ կամ ութ հարյուր տարուց ավելի հին չէ։ Այս արձանագրությունները, սովորաբար, պարունակում են եկեղեցիները կառուցողների անունները, որովհետև Հայաստանում, ինչպես նաև որոշ այլ երկրներում, պաշտամունքային որևէ շինություն կառուցելը կամ նրան նվիրաբերումներ անելը թողություն էր տալիս կյանքում մարդկանց գործած բոլոր մեղքերին» («Ուղեգրություններ», հ. Զ, ժԹ դար, թարգմանեց և ծանոթագրեց Հովհ. Հակոբյան, Ե., 1934, էջ 329—330)։

Այժմ տեսնենք, թե ի՞նչ է ասում երկրորդը, որն Աշտարակ է այցելել Ջեյմս Մորիերից երեք տարի հետո, 1817-ի կեսերին, Հնդկաստանից Անգլիա վերադառնալու ճանապարհին։ Գնդապետ Ջոն Ջոնսոնի ուղեգրությունը լույս է տեսել Լոնդոնում, 1818-ին և խորագրված է՝ "A Journey from India to England trough Persia, Georgia, Russia, Poland and Prussia, in the Year 1817. By Lieut. Col. *John Johnson* C. B.".

1817 թ. հուլիսի 4 լույս 5-ի գիշերը թողնելով Երևանը և ընկնելով անձ-

րևի ու տեղատարափի բերանը՝ մթության մեջ երկար դեգերելուց հետո, առավոտ վաղ, Ջոնսոնն ու իր ուղեկիցները կանգ են առնում Քասախի ձորագլխին, Աշտարակի դիմաց։ Ապա իջնելով խոր ու նեղ կիրճը և անցնելով կամրջով՝ վերջապես մտնում են գյուղ և գյուղական տանուտերի հարկի տակ դադար առնում։ Շարունակությունը լսենք իր բերանից.

«Անցնելով հանդիպակաց ափը, իջևանեցինք գյուղի տանուտերի բնակարանում, ուր անասելի լավ հարմարություններ գտանք, բայց որովհետև ձի, կենսամթերք և այլք ստանալու հրամանն այս տեղի վրա չէր տրված, այլ՝ մեկ ուրիշ գյուղի, մենք հարկադրված էինք նախաճաշից հետո շարունակել մեր ճանապարհը, նախապես մեր հագուստներն այդ նպատակի համար պատրաստված կրակի վրա չորացնելուց հետո։ Այստեղ նկատեցինք եկեղեցիների բազմաթիվ ավերակներ, բոլորն էլ պարսպապատված, որոնք, մերձակա գերեզմանաքարերի նման, ուրույն կերտվածք ունեին։ Ասում են, թե այս ավերակներից ոմանք հազար տարվա հնություն ունեն։ Այստեղ, ինչպես բոլոր Պարսկաստանում, նկատվում են քայքայման ակնհայտ նշաններ. տների մեկ քառորդն անգամ բնակեցված չէ։ Ներկա պարագայում այս լքման պատասխանատուն մեծ մասամբ պարսիկներն իրենք են, որոնցից ոմանք Երևանի սարդարի թելադրանքով հարձակվեցին մերձակա գյուղերի վրա, որպես պատիժ այն բանի համար, որ նրանք այդ քաղաքի վերջին պաշարման ժամանակ միացել էին կամ օգնել ռուսներին։ Երբ ռուսական ուժերը նահանջեցին դեպի Թիֆլիս, պարսիկ զինվորները կողոպտեցին և ավերակ դարձրին իրենց սեփական երկրամասը։ Բնակիչներից շատերն, այր ու կին, փախան ռուսների հետ, հաստատվեցին նրանց սահմանում և տակավին մնում են այնտեղ, որպես հպատակներ։ Այս խեղճ մարդկանց գյուղերն այժմ ծառայում են որպես ձմեռանոց վաչկատունների համար, որոնք մերձակայքում արածեցնում են իրենց հոտերը։ Նրանց մեջ, պատահաբար, տեսանք մի քանի թշվառ հայ փախստականների, որոնք համարձակություն էին ունեցել վերադառնալու։*

Այստեղ և մերձակա շրջաններում գտնվող մեծ ու լավ կառուցված եկեղեցիների ավերակներից պարզ երևում է, որ բնակչությունն երբեմն շատ

---

* *Նույնն է հաստատում և 1812 թ. հուլիսի 12-ին Աշտարակով անցած անգլիացի ճանապարհորդ Ուիլյամ Աուզլեյը (1769—1842), Պարսկաստանի անգլիական դեսպանի եղբայրը. «Ասում են, — գրում է նա, — որ <Աշտարակի> բնակչությունը վերջին մի քանի տարում նվազել է. հազար ընտանիքից հազիվ քսանն են մնացել, բոլորն էլ հայ <լուսավորչական> դավանանքին պատկանող։ Այս վիպական ու գեղեցիկ վայրում (այն ոռոգվում է մի սիրուն գետով, որն առատ կարմրախայտ է տալիս), Երևանից մոտ տասներեք մղոն հեռու, մենք նախաճաշեցինք և դիտեցինք հին, քարաշեն եկեղեցիներն ու տները...»*

(Ուղեգրություններ, հ. Զ, էջ 455)։

ստվար է եղել. պակաս նշանակալից փաստ չէ և այն, որ, <դատելով> այս ընդարձակ ավերակների կիսաբոլոր կամարներից, թե նրանց հիմնադիրները նախագծելու ազնիվ արվեստի մեջ վարպետ էին, հետևաբար և, ամենայն հավանականությամբ, քաղաքակիրթ մարդիկ: Այս շենքերը սրբատաշ քարից են, երկու կամ երեք տարբեր գույներով, ինչպես՝ կարմիր, դեղին ու սև, և այնպես դասավորված, որ ներկայացնում են զանազան պատկերներ. հիմքերը, հաճախ, գցված են ավելի ամուր քարերից, բազալտ կամ գրանիտ: Դրանք բոլորն էլ կառուցված են բարձունքների վրա, պարսպապատված և դիրքով բավականաչափ բարձր են մերձակա բնակարաններից, որոնց նկուղները առավել կամ նվազ չափով թաղված են գետնի տակն, այնպես որ, թվում է, թե նրանք պաշտպանված են միջնաբերդի <նմանվող> եկեղեցուց:

Երեկոյան մենք մեկնեցինք...» (Նույն տեղում, էջ 641—642: Թարգմանությունը խմբագրել ենք):

Հավելված V

ԳԵՆԵՐԱԼ Ա. Ի. ԿՐԱՍՈՎՍԿՈՒ ԵՎ ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՇՏԱՐԱԿ

(1827 թ. դեկտեմբերի 29—31 և 1828 թ. հունվարի 21—23)

Այս մասին պատմող հուշագրությունները քաղված են դեկաբրիստական շարժման երբեմնի մասնակից, աստիճանազուրկ ռուս զինվորական, իսկ նույն օրերին՝ նորանվաճ Երևանյան նահանգի ժամանակավոր կառավարչության աշխատակից, ենթասպա Եվդոկիմ Եմելյանովիչ Լաչինովի (1799—1875) «Իմ խոստովանությունը» խորագրով օրագրերից, որոնց հայերեն կրճատ թարգմանությանը կցված է ակադեմիկոս Մ. Ներսիսյանի «Դեկաբրիստները Հայաստանում» աշխատությունը (Երևան, 1958, տե՛ս հատկապես էջ 372—380):

Հեղինակն անկեղծ համակրանք ու խորին ակնածանք է տածել հայ ժողովրդի ու նրա հոգևոր առաջնորդ Ներսես Աշտարակեցու նկատմամբ և հիշյալ օրերի անցուդարձերը թղթին հանձնել խանդավառ գրչով ու կենդանի գույներով:

Ըստ որում՝ ընդամենը կես տարվա ընթացքում Ե. Լաչինովն Աշտարակը տեսել էր երեք անգամ. առաջինը՝ Աշտարակի ճակատամարտի օրերին, 1827 թ. օգոստոսի կեսերին, իսկ երկրորդ և երրորդ անգամները՝ նույն տարվա վերջերին և հաջորդի սկզբներին, երբ ռուս-պարսկական պատերազմի

հաղթական ավարտից հետո այս ամայացած ու հին բնակավայրն աստիճանաբար սկսում էր նոր կյանք առնել. իրար ետևից վերադառնում էին նրա տարագիր զավակները և հնօրյա ավանդներին հավատարիմ՝ շարունակում իրենց առանձին կյանքն ու աշխատանքը, նորոգում իրենց ավերված բույնը:

Լաչինովը մանավորապես ուշադրություն է դարձրել աշտարակցիների տոնախմբություններին, որոնք ժողովրդագիտական առումով թանկ են և անգնահատելի:

Այսօր էլ առանց հուզումի չի կարելի կարդալ հուշերի մանավորապես այն դրվագը, որը հավերժացնում է գեներալ Կրասովսկու ուղեկցությամբ Ներսես Աշտարակեցու այցելությունը գյուղի հին գերեզմանոցի իրենց տոհմային դամբարանը, հոր շիրմին՝ որդիական պարտքը և հանգուցյալ ծնողի պատվերը կատարելու, նրա անհանգիստ հոգուն ռուսական զենքով Հայաստանի ազատագրության բաղձալի լուրը ավետելու համար:

Ստորև մեջբերվող հատվածները համեմատել ենք ռուսերեն բնագրի հետ, որ տպագրվել է Մ. Ներսիսյանի «Из истории русско-армянских отношений» գրքում (հ. I, Երևան, 1956), և կատարել որոշ ճշտումներ:

1

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԶԸ ԴԻՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՐՈՆ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ԿՐԱՍՈՎՍԿՈՒ ՁԵՌՆԱՐԿԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՕՐԱԳԻՐԸ

Դեկտեմբերի 29-ին: Նորին գերազանցությունը Երևանից դուրս եկավ հայերի արքեպիսկոպոս Ներսեսի, գլխավոր շտաբի փոխգնդապետ Ժիխարյովի, իր համհարզ բարոն Վրանգելի, այլ աստիճանավորների և մարդի մի քանի պատվավոր բնակիչների ուղեկցությամբ: Նույն օրն էլ նրանք հասան Ապարան գետի աջ ափին ընկած Աշտարակ գյուղը:

Օգոստոսի 17-ի հիշարժան ճակատամարտի օրը այս գյուղի մոտ մենք տեսանք հակառակորդի հեծելազորի առաջին խմբերը:

Ճանապարհը շատ քարքարոտ է, եղանակը սկզբում մառախուղային էր, հետո շատ ձյուն եկավ: Զառիթափ է ժայռոտ ափից դեպի Ապարան գետը տանող վայրէջքը: Գետի վրա կորացած է հիանալի կառուցված քարե կամուրջը՝ մեկ մեծ ու երեք փոքր կամարների վրա: 600 տարի է անցել այն շինելուց հետո, բայց աննշան նորոգումներով նա կանգնած է ինչպես նոր, և նրա կառուցողի՝ պատվարժան հայ Մուցի հիշատակը պահպանվել է ավանդություններում:*

* Ինչպես հաղորդում է Առաքել Դավրիժեցին, Աշտարակի հին կամուրջը կառուցել է տվել

Աշտարակը Ներսեսի հայրենիքն է և դրանով պետք է հպարտանա։ Այս պատկառելի ծերունին այնքան է հոգացել իր հայրենակիցներին հաստատուն բարօրություն բերելու համար՝ Ռուսաստանի տիրապետության ներքո, այնքան բան է արել նրանց համար, որ նրա անունը, անկասկած, պատմությանն է պատկանում։

30-ին։ *Պտղատու և խաղողի այգիներով շրջապատված գյուղի ամֆիթատրոնային դիրքը հիանալի է։ Այս գյուղը երկրամասում գրավում է առաջին տեղերից մեկը. առաջ ուներ 900-ից ավելի բնտանիք, բայց մինչև այժմ հազիվ կարողացել են վերադառնալ միայն 100 բնտանիք։ Տները և ցանկապատերը քարից են՝ ամուր և կարգին կառուցված. 5 եկեղեցի կա։ Այս գյուղը հայտնի կարող է լինել իր ջրմուղով, որ սկիզբ է առնում Ապարանից և գետի մակերևույթից 120 սաժեն բարձր է։*

Ջրմուղը խրված է գետի ափերի ժայռերի մեջ և կառուցված է 800 տարի առաջ, քարերի մեջ փորված քարանձավների հետ, որոնք հարձակումների ժամանակ ապաստարան են ծառայում բնակիչների համար։ Վերջին պատերազմի ժամանակ Աշտարակը շատ է տուժել նրա շրջակայքում երկար ժամանակ թափառող պարսկական զորքերից. մերոնք այնտեղ չեն եղել։

Այստեղ ապրում են Ներսեսի շատ ազգականները, և նշանավոր արքեպիսկոպոսը չի խուսափում նրանցից, հասարակ շինականների մեջ նա հիշում է իր բարեկամներին, և դա նոր փայլ է տալիս նրա արժանիքներին։

*Նրա ազգական (*двоюродный брат*) Պետրոս Մարգարյանը ամենավտանգավոր ժամանակ, հաճախ, գեներալին էր հասցնում կարևոր թղթեր Էջմիածնից և տեղեկություններ՝ բերդերից ու հակառակորդի ճամբարից։ Հավատարիմ հային ցույց տալու համար, թե նրա արածները չեն մոռացվել, գեներալը մտավ նրա տունը։ Պետք էր տեսնել նրա ոգևորությունը...*

Բանն այն չէ, ասել է մի իմաստուն, որ «փողեր շաղ տաս». այստեղ կարելի է ավելացնել՝ և ամեն տեսակի պարգևներ։ Ես երբեք չեմ տեսել, շարունակում է նա, որ փողերով սեր ձեռք բերվի, և զուր տեղը կբացեք դուք ձեր սնդուկները՝ չբացելով սրտներդ. այս դեպքում՝ ուրիշների սրտերը միշտ փակ կլինեն ձեզ համար։ Ձեր ժամանակը, հոգացողությունը, ձեր քնքշանքը պետք է բաժանեք, որովհետև, այլապես, ինչ էլ որ անեք, միևնույն է, բոլորն էլ զգում են, որ ձեր փողերն ու դուք նույնը չեք։ Սրտացավությունը և

Երևանցի մահտեսի խոջա Գրիգորը՝ Մոծակենց տոհմից (տե՛ս նույն հատորում, էջ 179—180)։ Այդ մասին Ե. Լաչինովին կարող էին պատմել միայն գիտակ անձինք։ Ներկա դեպքում՝ այդ մարդը կարող էր լինել միայն Ներսես Աշտարակեցին։ Թվում է, Լաչինովը լավ չի ըմբռնել նրա բացատրությունը, հիշողության մեջ վերախմբագրել է «Մոծակենց Գրիգոր» անունը և դարձրել Մուցի, որ ակնհայտ աղավաղում է— Պ. Հ.։

բարյացակամությունը ավելի են ազդում և ավելի օգտակար են, քան բոլոր պարգևները։

Հուզիչ է ազատագրված հայերի հրճվանքը։ Սրտից է բխում նրանց արտահայտած ուրախությունը։ Նրանք իրենց երկիրը հարսանքատան են նմանեցնում, որտեղ հիմա ամեն ինչ ցնծում է։ Նրանք պատմում են, որ վաղուց ի վեր մահացող հայերը ավանդ էին թողնում երեխաներին, որ զանգերի ուրախ ղողանջով լուր տան իրենց՝ գերեզմանում, երբ հայերի համար երջանկության արևը ծագի, երբ ռուսները կալատեն նրանց ծանր լծից և կհավաքեն թշվառության մեջ գտնվող Հայաստանի ցրված զավակներին։ Եվ նկավ նրանց համար այդ երանելի ժամանակը, ազատարարները այցելում են կենդանի եղողների բարեբախտությունը ու հաղորդում են մեռածների շիրիմները թյան մասին։

Ներսեսի հոր վերջին ցանկությունը եղել էր այն, որ նա իր գերեզմանին այցի չգա այնքան ժամանակ, մինչև չիրագործվեն հայերի կաթողին սպասելիքները և հարություն չառնի մահմեդականներից հարստահարված Քրիստոսի լույս հավատը։ Արքեպիսկոպոսի անձնական ցանկությունն էր իրագալ խոնարհվել հոր շիրիմին ռուս պետի հետ. և այդ ցանկությունը կանացվեց։ Գյուղի վերևում ընկած է Շահազիզյան-Կամսարական տոհմի առանձնացած գերեզմանատունը։ Ծերունին այդտեղ բերեց ռուս գեներալին և արցունքն աչքերին ծունկի իջնելով՝ ջերմ աղոթք կարդաց ամենազորին։*

** Այս իրողության մասին 1850 թ. մարտի 11-ին, Մ. Ս. Վորոնցովին գրած նամակներից մեկում, առավել հանգամանալից, պատմել է հենց ինքը՝ Ներսես Աշտարակեցին, բացահայտելով նաև հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման դարավոր արմատներն ու համազգային բնույթը։ Ծանոթացնե՛նք մեր ընթերցողներին այդ պատումի հետ՝ հիշեցնելով միաժամանակ, որ նամակի ռուսերեն բնագիրը մեզ մատչելի չի եղել։ Քաղել ենք պատմարան Լեոի հատվածական թարգմանությունից՝ մեջ բերված «Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, 1837—1912» գրքում (Տփղիս, 1914, էջ 96 և 99—100)։*

«Դեռ երկու հարյուր տարի առաջ հայը հովանավորություն սպասում էր միայն ռուսաց կառավարությունից... Մեր նախնիքն ու հայրերը, չարժանանալով այդ հովանավորության, հայտնեն իրանց գերեզկեցին իրանց երեխաներին, թե երբ կգա այդ հովանավորությունը, հայտնեն իրանց գերեզմաններին, և այն ժամանակ կհանգստանա իրանց աճյունը... Գտնվելով 1827-ի պատերազմի մեջ պարսիկների դեմ, ես, երբ մեր զորքերն անցնում էին Աշտարակ գյուղով, որ իմ հայրենիքն է, հրավիրեցի հայտնի գեներալ Կրասովսկուն՝ մի քիչ հետևել ինձ, և տարա նրան իմ հոր գերեզմանի մոտ ու պատմելով այդտեղ գեներալին այն պատվիրանը, որ արել էր ինձ հանգուցյալը, ես ձայնեցի դեպի գերեզմանը. «Հայր, սիրելի իմ հայր. կատարվել է քո մարգարեությունը, քո ակնկալությունն արդարացավ. եկել է մեզ մոտ ռուսաց հովանավորությունը. ակա՛նջ դիր, ահա նրա հաղթական զորքը՝ փայլուն զենքերով, փողերի ու ծնծղաների աղմուկի տակ, անցնում է մեր բնակավայրերով, մտնենում է թշնամուն և խորտակում է նրա տնսանձ հպարտությունը հենց իր դռների առաջ։ Ականջ դի՛ր, հայր, լսի՛ր քո որդիների բարօրությունը, լսի՛ր, և թո՛ղ հանգստանա քո աճյունը»։ Արտասուքները չթողին,— ասում է Ներ-

Ճաշից հետո շարունակեցինք առաջ գնալ։ Ճանապարհն անցնում էր այն բլրի կողքով, մինչև ուր օգոստոսի 10-ին մենք հետապնդեցինք հակառակորդի հեծելազորը, և որտեղից գեներալն առաջին անգամ զննեց Աբբաս-Միրզայի լայնատարած ճամբարի դիրքը։

3 վերստ անցնելով՝ հասանք Մուղնի գյուղը (10 ծուխ), որտեղ գտնվում է ամենահաղթ սուրբ Գևորգի վանքն ու մասունքները։ Դեռ անվնաս են այնտեղ եղած վանականների խուցերը. եկեղեցին շրջապատված է քարե բարձր պարիսպով և նույնպես աղքատ է, ինչպես և գյուղակը, բայց հիանալի ճարտարապետություն ունի։ Գմբեթը և ամբողջ շենքը շինված են սրբատաշ քարից, առանց երկաթի և փայտի օգնության։

Այս վանքը հիմնադրված է էջմիածնի վանքից անմիջապես հետո, իսկ վերանորոգված է 160 տարի սրանից առաջ։ Այնտեղ տարին երկու անգամ ուխտավորների մեծ հավաք է լինում (Քրիստոսի հարության կյուրակեից երեք շաբաթ հետո և սեպտեմբեր ամսին)։ Ոչ միայն հայերը, այլև մահմեդականները մեծ թվով գնում են այնտեղ. այս սրբին մեծ հրաշագործ են համարում և նրան կոչում են Մողնե կամ Մուղնի։

Այստեղից մինչև Հանավանք գյուղը 5 վերստ է (20 ծուխ)։ Գյուղում թաթարներ են ապրում, այստեղ է գտնվում գերությունից վերադարձած Իսմայիլ խանի կալվածքը. իր սրտում կրելով նորին գերազանցության սիրալիրությունների հիշողությունը՝ խանը թախանձագին կերպով խնդրում էր պատիվ անել իրեն այցելությամբ, որը և կատարվեց։

Այստեղ են գտնվում Հայկական սուրբ Հովհաննես Կարապետի ավերված եկեղեցին և մասունքները. կառուցված է էջմիածնի եկեղեցու հետ միաժամանակ, հայոց մեծ Լուսավորչի՝ Գրիգորի ձեռքով <...>

Ընթրիքից հետո ճանապարհ ընկանք դեպի նոր, Աշտարակ։ Բավական պարզկա գիշեր է, ռուսական սառնամանիք։

31-ին: Ճանապարհը քարքարոտ է, բայց կարելի է հեշտությամբ կարգավորել։ Հարթավայրում, մինչև օգոստոսի 17-ը, կանգնած էր պարսկական ճամբարը, իսկ ճանապարհից մի վերստի վրա կա մի բլուր, որտեղ տեղադրված էին նրանց մարտկոցները։ Ո՛չ հեռու, նույնպես Ապարանի ափին է գտնվում Օշական գյուղը, որը ժամանակին եղել է շատ մեծ և համարյա միացել էր Աշտարակի հետ, իսկ հիմա ունի քիչ թվով ծխեր և շատ ավերակներ։ Բավական մեծ Քասախ գետակը դուրս է գալիս Ալագյազից։ Նրա հատակը քարքարոտ է, ափերը՝ թեթև զառիվայր, և գետն անցնելը դժվար չէ,

---

սեր, — որ շարունակեմ խոսքս, և առաքինի ու զգայուն գեներալ Կրասովսկին՝ հուզված մինչև հոգու խորքը, հազիվ կարողացավ ինձ էլ, իրեն էլ հեռացնել իր համար այնքան անակնկալ այդ տեսարանից» (Պ. Հ.)։

բայց Ապարանի մեջ թափվելու տեղում ափերը զառիթափ են ու ժայռոտ։ Այս երկու գետերը թերակղզի են կազմում, որի վրա գտնվում են Աշտարակն ու Օշականը <...>

Ամսի 2-ին [հունվար, 1828 թ.]։ էջմիածնի վրայով վերադարձանք Երևան. էջմիածնին մոտ, $2^1/_2$ վերստի վրա, գեներալը արքեպիսկոպոս Ներսեսի և վանքի մյուս միաբանների հետ դիտեցին այն տեղը, որտեղ պետք է կառուցվի հուշարձան՝ նվիրված էջմիածնի 1827 թվականի օգոստոսի 17-ի ազատագրությանը։ Այս հուշարձանը՝ համաձայն ներկայացված գծագրի, կառուցվում է վանքի կողմից, արքեպիսկոպոս Ներսեսի կարգադրությամբ։

Տնորհապարտ հայերը, տեսնելով որ օգոստոսի 17-ի մարտը բոլորովին սպանել էր պարսկական բանակի ոգին և, սերմանելով նրա մեջ երկչոտություն ու վհատություն՝ հետագայի փայլուն հաջողությունների գլխավոր պատճառն էր եղել, բոլոր միջոցներով ջանում են ցույց տալ երախտագիտություն իրենց ազատարարների նկատմամբ և այս անմոռանալի օրվա հիշատակը թողնել հետնորդներին, սերնդե-սերունդ, դարեդար։ Պատրիարքի որոշմամբ՝ այդ օրը ամեն տարի բոլոր հայկական եկեղեցիներում շնորհակալական մաղթանք պետք է տրվի աստծուն։

10 հունվարի 1828 թվականի

2

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՇՏԱՐԱԿ

Պ. գեներալ-լեյտենանտ Կրասովսկին, որպեսզի կողմնակի զբաղմունքներից մի քանի րոպե ազատ լիներ նոր զրավված մարզերի ղեկավարման նախագիծը կազմելու համար, հունվարի 21-ին արքեպիսկոպոս Ներսեսի, իր համհարզի և օբերաուդիտորի ուղեկցությամբ մեկնեց Աշտարակ գյուղը <...>

Մյուս օրը, կիրակի, պատարագ լսեցինք ծխական եկեղեցում. բավական ժողովուրդ կար։ Պարսկական հպատակները սովոր չէին արժանանալ իրենց կառավարիչների սիրալիրությանը և բարյացակամությանը, այդ պատճառով էլ ավելի զգալիորեն էր նրանց հուզում նոր փոփոխությունը։ «Պատահում էր, որ ո՛չ միայն սարդարը, այլև մի ինչ-որ խան էր գալիս,— ասում էին նրանք,— և նրա այստեղ մնալու ժամանակն անցնում էր տանջալից սպասումով. ոչ ոք վստահ չէր իր կյանքի ապահովության համար։ Տանրությունն ընկնում էր մարդու հոգուց միայն այն ժամանակ, երբ նա գնում էր, բայց այն երկյուղը, որ չլինի թե նա հանկարծ վերադառնա, երկար ժամանակ թույլ չէր տալիս բոլորովին հանգստանալ, իսկ հիմա՞...» <...>

Աշտարակում կա մի հին սովորություն. տարվա մեջ մի օր ամբողջ

գյուղը, մեծից մինչև փոքր, դուրս է գալիս ձուկ որսալու, և այս որսը գյուղական տոնակատարություն է դառնում։ Գյուղացիներն այս տոնակատարության համար չէին կարող ընտրել ավելի հարմար օր։

Ճաշից հետո հայկական նրաժշտության ձայնը իմաց տվեց, որ զվարճության ժամը հասել է։ Երեխաները շտապում էին մեկը մյուսից առաջ անցնել, սահում էին և զանազան դիրքերով ցած էին սղում ձյունով ծածկված զառիթափ սարից։ Ով ուժ ուներ վազելու, վայրկենապես հայտնվեց ներքևում. միայն ալեհեր ու ծերերն էին մտածում զգուշության մասին։

Արքեպիսկոպոսի հրավերով՝ գեներալը մասնակցեց իր համար կազմակերպված տոնակատարությանը։

Ապարանն աղմկով ընթանալով ժայռոտ հատակով՝ իր ջրերի մի մասը թողնում է քարերի մեջ, որոնք ջրով ծածկվում են միայն ջրառատության ժամանակ, և հենց այս թաքստոցներում են ձկները հաստատում իրենց բնակատեղը։

Համարձակ կարելի է ասել, որ աշտարակցիները մեծ սեր ունեն դեպի այս զվարճությունը։ Ինչպիսի՜ հաճույք էր դրոշմված նրանց դեմքերին։ Ափից պոկված ժայռը, որ ձկան համար ծառայում է որպես գլխավոր ապաստարան, այժմ ծածկված էր մարդկանցով։ Մեկն ահա՛ գլուխը սեղմել է քարին, աջ ձեռքը մերկացրել, և նկատելի են նրա ջանքերը՝ որքան կարելի է երկարացնել այն, փնտրելու և բռնելու փախչող ձկանը։ Ահա՛ ձուկը նրա ձեռքումն է, և դեմքն այդ մասին ասում է ավելի շատ բան, քան նա կհաստցներ որևէ շարժում կատարել։ Վերջապես՝ նա հանդիսավորությամբ հանում է ձեռքը ջրից և ցույց տալիս իր որսը։

Նրանք, ովքեր ուշացել են տեղ գրավել մեծ քարի տակ, ցրված են ամեն տեղ և, գիտենալով արդեն, թե որտեղ պետք է փնտրել ցանկալին, շուռ են տալիս ո՛չ մեծ քարերը, փնտրում են ձկներին կոհակների մեջ և ավելի պակաս չեն հրճվում, երբ հաջողությամբ են պսակվում նրանց ջանքերը։

Ցուրտը ոչ ոքի չի վախեցնում. կարելի է մտածել, որ սառնամանիքն ու քամին նրանց վրա չեն ազդում։

— Դու չե՞ս սառել,— հարցնում է գեներալը իր մոտ կանգնած մեկին։

— Ո՛չ, որովհետև քաղցր է,— պատասխանում է նա ռուսերեն։

Հրաշալի բան է այդ քաղցրը. ի՞նչ ասես, որ չի տանի մարդ, եթե քաղցր է իր համար։ Դրա փոխարեն դառնությունն ստիպում է նրան խիստ կընճռոտվել։

Արքեպիսկոպոսն ինքը բռնեց մի քանի ձուկ, և ժողովրդին շատ դուր եկավ, որ նա մասնակցեց իր հայրենակիցների սիրած զվարճությանը։

Մի քիչ ժամանակ մնալով ձկնորսության տեղում, գեներալը գնաց կամուրջը և իր վրա վերցրեց նրա նորոգելու գործը։

Երեկոն իջավ, բայց ձկնորսները դեռ չէին թողել իրենց զբաղմունքը, և
դեռ երկար բոցկլտում էին ափին վառված խարույկները։
Մյուս օրը գնացինք Աշտարակի շրջակայքում գտնվող քարանձավները։
Չի կարելի չզարմանալ, թե անհրաժեշտությունն ո՞ւր կարող է տանել մար-
դուն. իրենց հալածողներից թաքնվելու համար բնակիչները, հաճախ, ստիպ-
ված են եղել փախչել այս քարանձավները։ Նրանք պատրաստված են ժայռերի
մեջ, և մարդիկ մտնելով այնտեղ, մի քանի սաժեն բարձրանում են գետնից։
Այնտեղ բարձրանում են պարաններով, բայց դժվար է հասկանալ, թե ի՞նչ
կերպ է հասնում ժայռերին նա, ով պետք է ամրացնի այնտեղ պարաններ
և կատարի այս անձեռնտու ճամփորդության համար անհրաժեշտ այլ պատ-
րաստությունները։ Ցածի քարանձավներում տեղավորում էին ձիերը և անա-
սունները. ինչպե՞ս էին սովորել այս կենդանիներն անվախ մագլցել ժայ-
ռերը...

Այնտեղից այցելեցինք արքեպիսկոպոսի հոր գերեզմանը և դիտեցինք Ամենասուրբ Աստվածածնի հնադարյան եկեղեցին՝ կառուցված ավելի քան 500 տարի առաջ։ Նա շատ էլ մեծ չէ, բայց կառուցման արվեստը զարմացնում է, չնայած արդեն ժամանակն է վարժվելու այս տեղերի հնադարյան ճարտարապետության հրաշալի ոճին։

24-ին վերադարձանք Երևան։

<Հունվարի 25 — Փետրվարի 6-ի միջև>

Հավելված VI

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԱՀԽԱԹՈՒՆՅԱՆՑԸ ԱՇՏԱՐԱԿԻ ՄԱՍԻՆ

(Քաղվածքներ «Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ» աշխատությունից. հ. II, գլ. 401)

Արևելահայ հայագետներից ու հնախոս-պատմիչներից Հովհաննես Շահ-
խաթունյանցն առաջինն է, որ շուրջ 1840-ին հավաստապատում գրչով նկա-
րագրել է Աշտարակը, միաժամանակ գրի առնելով գյուղի տարածքում փռված
հուշարձանների մասին եղած ավանդական զրույցներից բեկորներ և վերծա-
նելով վիմագիր հիշատակարաններից կարևորները։

Սկզբնաղբյուրի արժեք ստացած այդ էջերը ավելորդ չենք համարում մեջ
բերել ստորև՝ հապավելով մասնավորապես վիմագիր արձանագրությունները,
որոնց առավել հաջող վերծանությունները տրված են Եր. Շահազիզի սույն
աշխատության 14-րդ գլխում։

Բնագիրը թողել ենք անփոփոխ։ Կարգավորել ենք միայն կետադրությու-
նը։ Հապավված հատվածների տեղերում դրել ենք բազմակետեր (սուր փա-
կագծերի մեջ)։

401. Աշտարակ գիւղ յարևելից հիւսիսոյ Օշականայ, հեռի ի նմանէ իբրև ժամ մի, և յարևելից հարաւոյ Փարպւոյ, ի վերայ հիւսիսային եզեր Քասաղ գետոյ, ի սարահարթի, ի կրկնակ տեղի վայելուչ և այգաւէտ, որոյ գինին առաւել օգտակար և առողջարար, քան այլ տեղեաց Արարատայ. առողջարար և ջուր սորա, քանզի առուակ սորին սկզբնաւորի ի վեր անդր քան զՄօղնի գիւղ, յորմէ յստորև ելանեն սեաւ ջուրք աղբերց և խառնին ի գետն. և այն առուակ յորդ մտանէ ի գիւղամէջ անդր և անցեալ՝ բաշխի յայգեստանսն:

Յարևելից գեղջս, ի ձորամիջի անդ ձգեալ է ի վերայ գետոյն կամուրջ եռակամար ի կոփածոյ, խարտեալ քարանց. եղեալ է արձանագիր շինութեանն յարևմտակողմն, ի միջոցի երկուց կամարացն, այլ եղծեալ է բոլորովին. բայց բնակիչքն աւանդութեամբ ասեն՝ շինեալ է այն ծախուք քանաքեռցի խօջայ Փլաւ անուանեալ հայազգի մեծատան ուրումն:

Ի կրկնակի անդ երկայնեալ սարահարթի լեալ է յառաջագոյն ամրոց, որոյ պարիսպն յարևմտից կայ տակաւին կիսաւեր. իսկ միւս կողմունքն են վառընդթափ ձոր խորին ցգետն. ի մէջ ամրոցիս և արտաքոյ են բնակարանք ժողովրդոց, որք ամենեքեան են յազգէ հայոց. յառաջագոյն, ի ժամանակս իշխանութեան օսմանեանց, էին ի սմա գերդաստանք իբրև եօթն հարիւր, այլ այժմ գտանին տունք 153. ի հինգ եկեղեցեաց սորա Բ են յամրոցի անդ. ա. **Ծիրանաւոր** կոչեցեալ յանուն սբ. Աստուածածնի, ի կոփածոյ քարանց. անմիջապէս շուրջ զորմովք նորին բարձրացուցեալ զորմն կրկին, որպէս զեկեղեցիսն Մաստարայի և Փարպւոյ, արարեալ են, արդարև, աշտարակ անմատչելի յամրոցի անդ. նախ քան զամս ինչ աստ կատարէին բնակիչքն զժամերգութիւնս իւրեանց, այլ ի խոնարհիլ կամարայարկի տանեաց նորա, յամի 1815, կատարեն զայն յԱմենափրկիչ եկեղեցին. բ. կոչեցեալ **Սպիտակաւոր** և կայ յանգործածութեան. գ.՝ ի գիւղամիջի, **Ամենափրկիչ** անուամբ, որոյ սեղանն՝ տեղի պատարագելոյ, է բոլորովին ի սրբատաշ քարանց, ի Հին ժամանակաց. իսկ ժողովրդանոց նորա զկնի ի մերձ ժամանակի շինեալ՝ որմունքն ի հասարակ քարանց և ի հողոյ, և ծածկոյթն ի հասարակ փայտից. դ.՝ **Սուրբ Մարիանէ**. տաճար փոքրիկ, վայելչաձև, սրածայր կաթուղիկէիւ, և է յարևմտեան եզեր գեղջս, և ունի շուրջանակի պարիսպ հանդերձ բրգամբք ի մեծամեծ, հասարակ որձաքար վիմաց. զեկեղեցւոյ աստի և զպարսպէ սորին աւանդեն բնակիչքն թէ՝ երիտասարդ քահանայի ուրումն վախճանեցաւ կին. և այնինչ յայտնեցաւ նա յընկալնուլ զերկրորդ ամուսնութիւն, կաթուղիկոսն աթոռոյ Էջմիածնի եդ ի վերայ նորա այսօրինակ ապաշխարութիւն. նախ շինել զեկեղեցի մի ի սրբատաշ քարանց, և այնպես ընկալնուլ զհրաման Բ ամուսնութեան. աշխատեալ նորա ո՛չ սակաւ ամս՝ եհան ի կատար զայս փոքրիկ տաճար. տեսեալ կաթուղիկոսին զերկարատև, զանխոնջ աշ-

խատանս նորին, յաւել և զայս. թէ ածցես շուրջ զդովաւ պարիսպ քարեայ, յայնժամ ունիս հաստանիլ բաղձանաց քոց. յանձն առեալ և զայն՝ կատարեաց թէպէտ և եհաս յամբոկ գործոյն, այլ երկարատև միջոց գործառնութեանցն խոնարհեցոյց ըզհասակ նորա յալիս ծերութեան, և գործն բազմածախս թափեաց ի նմանէ զինչս և զհարստութիւնս. ապա՝ ի հրամայել կաթուղիկոսին մտանել նմա յերկրորդ ամուսնութիւն, ետ հրաժեշտ քահանայն ի հրամանէ անտի և թողեալ զառաջին դիտաւորութիւն իւր՝ եկաց բարեկրօնութեամբ ցմահ իւր:

Արձանագրութիւնք յորմունս այսր տաճարի յանուն նուիրատուացն, որ գտանին ի ներքս և յարտաքս եկեղեցւոյն <...>

Այս եկեղեցի ի վաղուց կայր լքեալ, որոյ և ժողովրդանոցն հասարակ շինուածովք աւերեալ՝ բաց յորմոցն, այլ յամին 1839 զարդարեալ հարկաւոր սպասուք՝ սկսան և ի սմա առնել աղօթս և կատարել զամենայն պաշտամունս, որովհետև Ամենափրկիչ եկեղեցին չէ՛ր բաւական ժողովրդոցն. փայտայարկ առնեն և այժմ ահա՛ զժողովրդանոցն: Ի վերայ տանեաց եկեղեցւոյս, ի թևի անդ արևմտեան հարաւոյ ետ կառուցանել զանգակատուն փոքրիկ, ի յղկեալ քարանց, բնակիչ գեղջս Գէորգ Փարվանեանց իւրով արդեամբ:

Ե. **Կարմրավոր** կոչեցեալ եկեղեցի՝ յեզեր գեղջս յարևելեան հիւսիս, ի բարձրաւանդակի, է փոքրիկ տաճար խաչաձև և ունի փոքրիկ կաթուղիկէ՝ կղմնտերբք ծածկեալ, ունի և շուրջանակի պարիսպ, այլ է այժմ անբնակ. և ասեն՝ երբեմն բնակէին աստ կուսանք և յաշխարհէ հրաժարեալ կանայք, ուստի և կուսանոց: Արձանագիր շինութեան եկեղեցւոյս՝ սկսեալ միակարգ, ի ծայրէ հարաւային որմոյն և անցեալ զթիկամբ սեղանոյն, աւարտի ի ծայրն արևմտեան որմոյն հիւսիսոյ, այլ եղծեալ յինչ ինչ տեղիս՝ յայսօրինակ:

«Ես Դաւիթ մեղաւոր ... գիւղաքաղաքէս յերեցունեաց Գրիգորի քահանայի և մանուս և որդիք տուաք շինել զեկ... աստուածածինս վասն խաղաղութեան ամենայն աշխարհիս, շինութեան Աշտարակի և պտղաբերութեան սահմանիդ... և վասն... հոգոց... ազգի մերոյ......» <...>

Գոյ միւս ևս տեղի աւերեալ եկեղեցւոյ ի հարաւային եզեր գեղջս, ի մէջ այգւոյն, կոչեցելոյ յանուն Շուխեանց, և կոչեն զտեղին Սուրբ Կիրակի, ուր անկեալ դնի և պսակ գմբեթին:

Ի մէջ պարսպի այսր փոքրիկ տաճարի կուսանաց և ի շրջակայս սորին, մանաւանդ ի հիւսիսային և յարևելեան կողմունսն են գերեզմանք բազումք, յորս և երևելի շիրիմք խաչվիմօք՝ հանդերձ պատուանդանօք. ի հիւսիսակողմն, ի բարձրավանդակի, յարևելից ճանապարհին վանաց սբ. Գէորգայ է խաչվէմ բարձր՝ հրաշալի քանդակածովք, և պատուանդան նորին կազմեալ իբրև մատուռն ի մեծամեծ վիմաց, առանց կրոյ, և գոյ տեղի սկհւոյ, զոր և

անուաննէն բնակիչքն Ծագ խաչ. և կառուցեալ է այն վասն արևշատութեան Սադուն իշխանի յազգէ արծրունեաց, ի Թովմաս քահանայէ, և ունի արձանագիր ի կատար պատուանդանին յարևմտից՝ ըստ այսմ.

«Ի թվ. ՉԺԷ (1268) ի թագաւորութեան ..... ըհին Աստուծոյ ես տէր Թումաս կանգնեցի զսուրբ նշանս վասն յերկար կենաց պարոն Սադունին և զաւակաց իւրոց»։

Կառուցեալ է սոյն արձան յաւուրս կենդանութեան նոյն իշխանի, և թերևս կառուցանող քահանայն՝ յազգականաց նորին. ի շրջապատ եղերս մեծի խաչվիմին, յարևմտից, էր միակարգ գրչութիւն, այլ ըստ առաւել մասին եղծեալ գոլոյ՝ չեղև հնար առնուլ ի գիր կամ հասկանալ ինչ։

Այս գիւղ ըստ յատկութեանցն է մի ի հնագոյն գիւղօրէից Արագածոտն գաւառի, զորմէ Ստեփաննոս Ասողիկ յ Բ, բ գլուխ՝

«Եւ ապա տէր Գէորգ (կաթողիկոս Հայոց ի վախճան Թ–րդ դարու) ի յԱրագածոտնէ, ի գեղջէ Աշտարակաց, ամս Գ»։ Զայս գիւղ Աստրագրութիւնն հին Հայաստանի շփոթեալ միացուցանէ ընդ միւս Աշտարակաց գիւղի Բագրեանդ գաւառի, յերես 412։

Հավելված VII

ՆՈՐ ԱՅՑԵԼՈՒՆԵՐ XIX դ. 40-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

(Մորից Վագներ և Անդրեյ Մուրավյով)

Հառաջանում են տասնամյակները, բայց չեն դադարում օտարերկրացի բնախույզ-գիտնականների ու ճանապարհորդների այցելությունները, որոնց արդյունքը Աշտարակին նվիրված հուշագրական ընտիր պատումներն են։ Անգլիացիներին հաջորդում են ռուս դեկաբրիստները, իսկ վերջիններին՝ գերմանացի ուղեգիրները, այնուհետև՝ դարձյալ ռուսները։ Կարլ Կոխից վեց տարի հետո, որի տպավորությունները Դ. Ալիշանից փոխ առնելով՝ մեջ է բերել Եր. Շահազիզը, Աշտարակ է այցելում նաև Մյունխենի համալսարանի պրոֆեսոր, հայտնի բնագետ Մորից Վագները (1813—1887)՝ ուղեկցությամբ Խաչատուր Աբովյանի, որն այստեղ ուներ մտերիմ բարեկամներ։ Իր «Ուղևորություն դեպի Արարատ և Հայկական բարձրավանդակ» գրքում (Շտուտգարդ և Տյուբինգեն, 1848) Մ. Վագները այսպես է վերարտադրում իր տպավորությունները.

«Առաջին մեծ բնակավայրը, ուր մենք հասանք այդ օրը (այսինքն՝ 1843 թ. մայիսի շուրջ 25-ին —Պ. Հ.), կոչվում է Աշտարակ, որը ծննդավայրն է Հայաստանի այժմյան ծերունազարդ կաթողիկոս, վեհապատիվ Ներսեսի...

Աշտարակը բացառապես քրիստոնյաներով բնակեցված մի գեղատեսիլ

գյուղ է՝ շրջապատված անհամար այգիների շքեղ պսակով։ Եվ որովհետև նա ընկած է Արագածի հարավային փեշերից ո՛չ այնքան վերև, ունի շատ մեղմ կլիմա և բարեբեր հող, որը շատ լավ ոռոգվում է։ Մեզ անչափ սիրալիր ընդունեց և կաթով ու ձվով պատրաստված զանազան համեղ կերակուրներով հյուրասիրեց իմ բարեկամ Աբովյանի հին ծանոթը՝ հայազգի Ստեփան աղան։

Այս գյուղի բնակիչները բավականաչափ ունևոր են և իրենց վիճակից գոհ ...»։

Նույն օրը շարունակելով ճանապարհը և հասնելով Հովհանավանք՝ Վագները անդնդախոր ձորի գլխից դիտում է Քասախի կիրճը և Ապարանից սկիզբ առնող գետի ընթացքը, որոնք նրա վրա թողնում են անջնջելի տպավորություն։ Նա իր պատումը շարունակում է այսպես։

«Վերին աստիճանի գեղատեսիլ և սքանչելի պատկեր է բացվում, երբ Արագածի դարավանդից դիտում ես խոր կիրճը, որի միջով կտրում անցնում է Ապարան գետը (Քասախը —Պ. Հ.)։ Այդ ահազդու վայրի տեղանքն ամենից լավ կարելի է դիտել Հովհանավանք մենաստանից...

Ջիս կապել էի վանական այգու ցանկապատից և մեկ ժամից ավելի դիտում էի այդ գեղատեսիլ վայրը, որը, հիրավի, արժեր, որ, որևէ արվեստագետի վրձինով վերարտադրվեր հայրենակիցներիս համար, որոնք անձամբ չեն կարող ճամփորդել Հայաստանում...» (տե՛ս վերոհիշյալ ուղեգրության 209—213 էջերը)։

Վագների խոսքերը XIX դարի 40-ական թվականների Աշտարակ գյուղի բարեկեցիկ վիճակի և շրջակա բնության անթառամ գեղեցկության մասին, իբրև ականատեսի վկայություն՝ արժանի են հատուկ ուշադրության, մանավանդ որ նրա առաջնորդը, խորհրդատուն և թարգմանը Խ. Աբովյանն էր, որի մտքերն էլ, ըստ էության, մասամբ կրկնում էր գերմանացի ճանապարհորդը, որն անձամբ չիմանալով հայերեն՝ չէր կարող հաղորդակցվել աշտարակցիների հետ և խորամուխ լինել նրանց վիճակի մեջ։

Աշտարակն ունի մեկ ուրիշ խանդավառ այցելու էլ, որն այս վայրերում շրջագայել է Մորից Վագներից մի քանի տարի հետո, 1846 թ. հոկտեմբերի վերջերին, և տպավորությունները անմիջապես հանձնել թղթին, որոնք լույս աշխարհ եկան «Грузия и Армения» ընդհանուր խորագրով և 3 գրքով, 1848-ին, Պետերբուրգում։ Մեր խոսքը ռուս գրող և ճանապարհորդ Անդրեյ Նիկոլաևիչ Մուրավյովի (1806—1874) մասին է, որի հայկական անդրադարձումները ուղեգրական արժակի ուշագրավ էջեր են, շնչում են քնարական անմիջականությամբ ու հավաստապատումությամբ՝ դրանով իսկ մեծապես հարստացնելով հայրենական արևելագիտությունը և Հայաստանին վերաբերող ռուսերեն հետազոտությունների շարքն ընդհանրապես։

1846 թ. աշնանը Ներսես Աշտարակեցու հրավերով ժամանելով Հայաստան՝ Մուրավյովն իր ուղևորությունն սկսում է Երևանից, այցելում Գեղարդավանք, ապա ծանոթանում Գառնի ամրոցի ու հեթանոսական տաճարի, պատմական Արտաշատի ու Դվինի, Արարատի փեշերին փռված հին ու մոռացված բնակավայրերի ավերակների հետ, իսկ վերադարձին, օգոստոսի 25-ին, մի անձրևոտ օր, այցի գնում Աշտարակին ու մոտակա վանքերին։

Հարկավ, նման պայմաններում ճամփորդողի առաջին տպավորությունները հարուստ չէին կարող լինել, բայց, անգամ սահմանափակ հնարավորությունների դեպքերում, Ա. Մուրավյովը վառ դիտողականություն է հանդես բերել՝ ընթերցողին ներկայացնելով Աշտարակի տեղանքի ու վիճակի հարազատ պատկերը։

Ահա՛ ինչ է պատմում նա.

Օշական «գյուղից ո՛չ հեռու, Ապարան գետի երկայնքով, տարածված են Աշտարակի այգիները, որոնք հռչակված են շրջակա բոլոր վայրերում։ Առվակները, որոնցով ոռոգվում են դրանք, անդադար տեղացող անձրևների պատճառով վերածվել էին մի աղմկոտ հեղեղի և ընդառաջ էին վազում մեզ՝ այգիների միջև ընկած նեղ փողոցներով։ Անհրաժեշտությունը հարկադրեց ինձ առաջիկա ուղևորությունս հետաձգել վաղվան և գիշերը մնալ Աշտարակում։

Մի ժամանակ այստեղ բերդ կար, և աշտարակի մնացորդներն երևում են ղարիթափ ժայռի հենց պռնկին, գետի վրա կախված, ուր հիմա կաթողիկոսի տունն է։ Գիտնական եպիսկոպոս Հովհաննես Շահխաթունյանը, որը նկարագրել է Այրարատյան աշխարհի բոլոր հնությունները, ինձ սպասում էր հարևան Մուղնու սուրբ Գևորգ վանքում, բայց լսելով որ ես մնացել եմ Աշտարակում, փութով ընդառաջ եկավ ինձ, և ես գիշերն անցկացրի ինձ համար օգտակար զրույցներով։ Առավոտյան եղանակը պարզվեց, և մենք Մուղնու կողքով շտապեցինք ուղիղ դեպի սուրբ Սարգսի հին վանքի ավերակները, որոնք գտնվում են Թուրքական Ուշի գյուղի մոտ, Աշտարակից ութ վերստ հեռու»։

Հաջորդ օրը միայն Ա. Մուրավյովը կարողանում է ըմբոշխնել Աշտարակի բնության ու հնության հուշարձանների ողջ հմայքը, որոնց թողած անջնջելի տպավորությունը և առաջ բերած հիացմունքը իրենց արտացոլումն են գտել ճամփորդական նոթերի հետագա գրվագում, որ կրկին ուզում ենք մեջ բերել (բոլորն էլ մեր թարգմանությամբ).

«Կաթողիկոսական տան դարավանդից, ուր առաջ Աշտարակի բերդն էր, ես զմայլած՝ երկար դիտում էի գեղատեսիլ ձորը, որի միջով և եռակամար, հին կամրջի տակով սրընթաց անցնում էր Ապարան գետի աղմկալից հո-

սանքը։ Արեգակի վառ շողերը արտացոլվում էին խայտացող ալիքների, պըսպղում քարերի և ծառերի դեղնած տերևների միջով։ Ժայռերի վրայով, ինչպես ոսկե սյուներ, բարձրանում էին բարդիները, իսկ լացող ուռիները խոնարհվել էին աղմկող ջրերի վրա։ Ջրի խորքում, հենց կամրջի մոտերքում, ավելի հմայիչ է դառնում նույն տեսարանը՝ ամբողջությամբ ողողված արևով և ժայռերի գլխին թառած հին աշտարակների ստվերների մթությամբ։ Ապառանի ձորից, ժայռոտ արահետով՝ մենք ելանք լերկ բարձրունքների վրա, ուր ցրված էին մանր քարեր և խաշնարածների հոտերը, մինչև որ կհասնեինք Էջմիածնի հարթավայրը։ Մեր առջև բացվեց Ռուսաց փառքի ասպարեզը նույն այն հանդերում, ուր դրանից տասներեք դար առաջ հզոր զորավար Վահան Մամիկոնյանը ջարդեց լեզգիների հրոսակախմբերը։ Այստեղով, 1827 թվականին, քաջարի գեներալ Կրասովսկին չորս հազարանոց զորքով օգնության շտապելով Էջմիածին՝ դիմացավ հենց իր՝ Աբբաս Միրզայի առաջնորդած պարսից տասնվեց հազարանոց բանակի ողջ ճնշմանը և արյունահեղ մարտից դուրս եկավ հաղթանակած։ Նա անզգուշություն ունեցավ գիշերելու Աշտարակի մոտ, փոխանակ գիշերով շարունակելու իր արշավը դեպի վանք, և իր այս սխալի համար թանկ վճարեց»։*

Շարունակության մեջ, Ներսես Աշտարակեցու բերանից առնելով՝ Ա. Մուրավյովը նկարագրում է նաև Կրասովսկու հրամանատարությամբ ռուս քաջարի զորքի մղած անհավասար ու արյունալի ճակատամարտը, որի հաղթական ավարտն արագացրեց Երևանի անկումը և արևելահայության ազատագրումը պարսից դժոխքից։ Որովհետև Շահազիզի աշխատության մեջ այդ կռիվներին լայն տեղ է տրված, հապավում ենք ուղեգրության տվյալ հատվածը, այն վերապահելով Ներսես Աշտարակեցու կենսագրության համար ու մեկ այլ առիթի։

Ավարտելով դեգերումները Աշտարակում և շրջակա վանքերում՝ Մուրավյովը նույն օրը երեկոյան վերադառնում է Էջմիածին։

Եթե Վագներին՝ Աշտարակի բնության հուշարձանների հետ ծանոթանալուն և բնակիչների ներքին կյանքի ծալքերի մեջ թափանցելուն լավագույնս նպաստողը Խաչատուր Աբովյանն էր, ապա Մուրավյովին հայ ժողովրդի պատմության հերոսական էջերի և շինարարական արվեստի կոթողների մասի տվյալներ հաղորդողը Աշտարակի հնությունների առաջին հետազոտողը՝ ականավոր պատմաբան Հովհաննես Շահխաթունյանցն էր։ Երկու դեպքում էլ արդյունքները նախանձելի են, որովհետև և՛ Աբովյանի, և՛ Շահխաթունյանցի ունկնդիրները լայն հոգու տեր ու գիտակ անձինք էին, նաև բնությունից

* [*А. Н. Муравьев*], Грузия и Армения, ч. II, СПб., 1848, с. 165—166 и 177—179.

օժտված՝ խոսքի արվեստով կյանքի կոչելու Հայաստանի այս հնագույն բնակավայրի կյանքի ու պատմության արժանահիշատակ դրվագները:

Վագներն իր ճամփորդության ընթացքում առավելապես ջանացել է ի հայտ բերել Արևելյան Հայաստանը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո ժողովրդի կյանքի ու ապրելակերպի մեջ կատարված փոփոխությունների ստվերոտ կողմերը: Եվ եթե այժմ, Աբովյանի օգնությամբ՝ աշտարակցիների հետ հանդիպելուց հետո, նա արձանագրում էր, որ «գյուղի բնակիչները ունևոր են և իրենց վիճակից գոհ», նշանակում է, պարսից ծանր լուծը թոթափելուց հետո ժողովուրդն իսկապես գտնվում էր բարօրության հասնելու ճանապարհին, որի երաշխիքը Ռուսական հզոր տերության հովանավորությունն էր: Աբովյանն իր ողջ կյանքում այդ էր համոզում ու բացատրում իր հայրենակիցներին, իսկ առիթն եկած ժամանակ՝ նույնը հաստատող անհերքելի օրինակներ էր մատնացույց անում նաև իր օտարերկրացի բարեկամներին:

Հավելված VIII

ԱՇՏԱՐԱԿԸ XIX ԴԱՐԻ 70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

Այս մասին մեզ պատմում է Աշտարակից ուղարկված՝ «Սոսանվեր» ծածկանունով մի հրապարակային նամակ, որ տպագրվել է «Մշակ» լրագրի 1874 թ. նոյեմբերի 14-ի № 45-ում: Եր. Շահազիզին հետաքրքրել է նամակը, և այն մուծել է «Աշտարակի պատմությունը» գրելու համար օգտագործած գրականության ցուցակում, բայց բուն շարադրանքի մեջ նամակի հետքերը կամ քաղվածքներ չեն երևում: Հավանաբար, լրացումն եղել է առանձին թերթիկի վրա, որ հետագայում կորել է: Ընթերցողի մեջ տարակարծության տեղիք չթողնելու համար՝ ստորև մեջ ենք բերում «Սոսանվերի» նամակը, որն, ինչ խոսք, արժեքավոր տվյալներ է պարունակում և՛ Աշտարակի բնակչության կենցաղում ու բնավորության մեջ կատարված փոփոխությունների, և՛ գյուղական դպրոցների մասին, որոնց վերաբերյալ ուղղակի սկզբնաղբյուրները խիստ սակավ են:

«Աշտարակ գյուղը գտանվում է Քասախ գետի արևմտյան ափումը, Երևանա նահանգում և էջմիածնա գավառում: Հյուսիսային և արևմտյան կողմից բարձրանում են Արագած լերան ճյուղերը, իսկ հարավային կողմից գյուղը պատած է ընդարձակ այգիներով, և սկսվում է լայնատարած դաշտ մինչև Մասիսի ստորոտը: Այնպես որ, Աշտարակից երևում է ոչ միայն Մասիսը՝ յուր ալեզարդ գլխով, և նրա մոտ՝ յուր փոքր եղբայրը, այլև ահագին դաշտը մինչև 60 վերստ տարածությամբ, որո վրա սփռված կան շատ գյուղեր և որի միջով անցանում է Արագը: Գյուղի միջով անցանում է մեծ առու, որով ջրում են այգիները և որո ջուրը վեր է առած Քասախից, մի քանի վերստ հեռավորությամբ գյուղից, որովհետև գետը ունի բավական մեծ անկումն, այնպես որ Աշտարակա մոտ նա հոսում է շատ խոր ձորի միջով:

Բնակիչները թվով 3 հազար են թե՛ արական և թե՛ իգական սեռի. ողջերը հայ են և ի հնուց ունեցել են սովորություն՝ չընդունել յուրյանց մեջ և ոչ մի այլազգի: Բայց պետք չէ կարծել, որ նոքա չինացվոց պես բոլորովին չեն կամեցել հարմարություն ունենալ այլազգյաց հետ, ընդհակառակը՝ աշտարակցիք շատ ժիր, աչքաբաց մարդիկ են և ունեն մեծ հարգանք դեպի լուսավորություն, և կան շատ աշտարակցիք՝ ավարտած ուսումը Մոսկվայում և այլ տեղեր, և այժմ էլ ուսանողներ զանազան քաղաքներում: Բոլոր աշտարակցիք ունեն այգիք, և նոցա գլխավոր պարապմունքն է խաղողից գինի և արաղ պատրաստել, որոնք ծախում են Ալեքսանդրապոլու, Ախալքալաքու, Ջալալօղլու և Նոր Բայազետու գավառներում: Առհասարակ, աշտարակցիք շատ աջողակ և հասկացող են առևտուրի մեջ, և գյուղումը կա 26 կրպակ, որոնց մեծ մասը ճոթի առևտուր է անում: Գյուղը ունի հինգ եկեղեցի, որոնցից երկուսը ավերակ են: Սուրբ Մարիամ եկեղեցու քարերի վերա գտնվող արձանագրությունները հասնում են մինչև 550 տարին: Աշտարակ, ինչպես և ցույց է տալի յուր անունը, առաջ եղել է բերդ, և այժմ էլ երևում են նրա հետքերը: Գյուղի մի մասը մինչև այժմ կոչվում է «Բերդի թաղ». եկեղեցիներից մինը առաջ բերդի եկեղեցին է եղել:

Աշտարակը ունի երեք ուսումնարան՝ երկուսը տղայոց և մինը օրիորդաց, որոնց բարեկարգելու համար մինչև 1871 թիվը զանազան աղբյուրներ կային, իսկ այժմ դադարած են, զոհ լինելով ուսումնարանի հոգատար մի քանի պարոնների եսականությանը և անհեռատեսությանը: Վերջապես՝ մինչև այսօր աշտարակցիք չունեն լավ վարժապետներ ուսումնարանների համար, որովհետև հոգատար պարոնայք աշխատում են կարգել ոչ թե այնպիսի վարժապետ, որ մի բան հասկացող լինի, այլ այնպիսին, որը յուրյանց խոսքին հլու լինի և մի քանի մանեթով ածան առնի: Աշտարակում, ինչպես և շատ տեղ, դեռևս տեվում է աղալարների հին բռնակալությունը, և մեծ հանցանք է համարվում աղքատին կամ մի քանի ջահել տղայոց հարուստի ընդդեմ որևիցե բան խոսել և նոցա պակասությունները կամ անարդարությունները ցույց տալ՝ հոգևորական թե աշխարհական լինի այդ հարուստը: Աշտարակցու համար ունի նշանակություն երկու բան՝ հարստություն և չին. նորա կարծիքով՝ եթե ուսում առնողը չին չստացավ, ուրեմն նա հիմար և տգետ է, և բոլորովին պատվի արժանի չէ...

Գիտեմ, որ իմ գրածս անախորժ պիտի թվի մի քանի բախտավոր տղա-

ներին, որոնք ոչինչ չգիտենալով՝ գիտնական են, և որոնց չունեցած լավ հատկությունները չեմ գովաբանում. բայց, թո՛ղ ներեն, միևնույն ժամանակ չէ կարելի ծառայել ճշմարտությանը և ստությանը:

10-ին հոկտ.»:

Աշտարակի ներքին կյանքի, սոցիալ-տնտեսական հարաբերությունների և բարքերի մեջ կատարված այս ու մյուս փոփոխությունները, ավանդական սովորություններից ու առաքինի ընթացքից օրավուր հեռացումներն ու անցանկալի շեղումները և այդ առթիվ՝ ժողովրդական խավերի մեջ առաջացած տրտունջն ու բողոքի տրամադրությունները վառ դրսևորումն են գտել նաև ավելի ուշ գրված ու հրատարակված՝ Պ. Պռոշյանի վեպերում ու պատմվածքներում:

«Սոսանվերի» հոդվածում ու այս վերջիններում առկա համանման երևույթների համեմատությունը հավաստում ու հաստատում է, որ նահապետական կենցաղին ու հին առաքինություններին հակառակ գնացող նորերի հոգեբանությունն ու սովերները, որ այնպես փայլուն ձևով բացահայտված են Պռոշյանի վեպերում, ոչ թե վիպասանական երևակայությամբ հյուսած մտապատրանքներ են, այլ անկոծկելի արատներ, որոնց անխարդախ վերարտադրողներն են և՛ ակնարկագիր «Սուսանվերը», և՛ մեծ գրող Պերճ Պռոշյանը:

Հավելված IX

ԱՇՏԱՐԱԿԸ XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

Ներկա հարյուրամյակի առաջին տասնամյակի Աշտարակ գյուղի տընտեսական վիճակի ու կրթական առօրյայի մասին համառոտ, սակայն վստահելի տվյալներ է հաղորդում Գրականության և արվեստի թանգարանում պահվող մի անստորագիր (նաև՝ անթվակիր ու անխորագիր) վավերագիր, որը Եր. Շահազիզի աշխատության մեջ օգտագործված է մասամբ միայն, այն էլ առանց վկայակոչման:

Նկատի առնելով, որ սույն գրքում այդ ժամանակների Աշտարակի տնտեսական ու կրթական կյանքի մասին քիչ բան է ասված, նպատակահարմար գտանք ստորև, ամբողջությամբ, մեջբերել հիշյալ վավերագիրը (բնագիրը տե՛ս Եր. Շահազիզի թղթոններ, VII բաժին, № 48): Նրա հեղինակն աշտարակցի է, գյուղական գործերին մոտ կանգնած ու լավատեղյակ մի անձնավորություն, թերևս, Եր. Շահազիզի անձնական բարեկամներից: Անհավանական չէ, որ այդ համառոտ ակնարկը գրված է որպես պատասխան Եր. Շահազիզի հարցումի, երբ վերջինս 1908 թվականից սկսած նյութեր էր հավաքում իր ապագա երկա-

սիրության համար և անհրաժեշտ տաղձներ հայթայթելու նպատակով դի-
մում էր իր բարեկամներին ու համագյուղացի գիտակ անձանց:
Ուշադիր քննությունից դժվար չէ եզրակացնել, որ սույն ակնարկը շարա-
գրված է նույն 1908 թվականից ո՛չ առաջ, այդ կամ հաջորդ տարիներին,
որովհետև նրա մեջ հիշատակություն կա Աշտարակի հասարակության մի
կարևոր նախաձեռնության մասին. նրանք հարգելով իրենց մեծ հայրենակցի՝
Սմբատ Շահազիզի հիշատակը (իսկ բանաստեղծը մահացել էր 1907 թ. դեկ-
տեմբերի 24-ին), որոշում են գյուղի ծխական երկսեռ դպրոցը կոչել նրա
անունով՝ չհացնելով, սակայն, պաշտոնապես հաստատել տալ այդ որո-
շումը:
Ակնարկի բնագիրը հրատարակում ենք անփոփոխ. կանոնավորել ենք
միայն կետադրությունը:
«Աշտարակ գյուղը սրանից 17 տարի առաջ ինքնըստինքյան կազմում էր
մի հասարակություն, իսկ ներկայումս իր շրջակա ութ գյուղերի հետ կազ-
մում է մի հասարակություն, որք են՝ Մուղնի, Կարփի, Ուհաննովանք, Պարպի
գյուղը, Ուշի, Իլանչալան, Սաղմոսավանք և Ղոթուր: Եվ այս 9 գյուղի կառա-
վարչական իրավունքները հանձնված է մի տանուտերի (գալավայի), [որն]
ունի յուրաքանչյուր գյուղում մի օգնական, որին անվանում ենք գյուղական
տանտեր, և այս օգնականները լինում են գալավայի ամենամտերիմ ներկա-
յացուցիչները:
Աշտարակ գյուղը այժմ ունի 752 հարկատու տուն բնակիչ. արական՝
2322, իգական՝ 1832: Հարկատու ասելով՝ 752 տուն է հաշվվում, և ունի երեք
դպրոցներ՝ պետական, քաղաքական և ծխական երկսեռ: Պետական դպրոցին
տարեկան վճարում է Աշտարակ գյուղը 2200 ռուբլի՝ վառելիքի և լուսավորու-
թյան համար. քաղաքական դպրոցին վճարում է 2000 ռուբլի. ծխական երկսեռ
դպրոցին վճարում է տարեկան 2500 ռուբլի: Այս բոլորը տարեկան տրվում
է թուլջու մեջ և սացվում է հարկատուներից: Թուլջին նշանակում է տարին
մի անգամ ժողով գումարել և այնտեղ բացատրել արքունի հարկը և հասա-
րակական զանազան տուրքերը և որքանությունը, և այդ գումարը բաժանել
այգիների, ձորերի և նաֆարի վերա. ներկայումս բաժանվում է այգիների
ամեն մի պարանի վերա 17 ր. 70 կոպ., ձորերի ամեն մի պարանի
վերա՝ 12 րուբլի, և ամեն մեկ նաֆարի վերա՝ 1 րուբլի: Մի պարանը հաշվ-
վում է 30 լ<իտրեն> ցորենատեղի, մի լիտրեն տեղի տարածքը՝ 50 կվադ-
րատնի սաժեն:
Աշտարակ գյուղի այժմյան տարեկան հարկն է 18.729 րուբլի, որից
9806ր. 49 կ. արքունի հարկ է և մյուսը՝ հասարակական ծախս: Գյուղը ունի
վարելահող 580 դեսյատին: Այգիներ ունի՝ 843 պարան 27 լիտրեն, և 31 պա-
րան ձոր, նաֆար հարկատու՝ 3353: Ունի արոտատեղ՝ 2120 դեսյատին: Աշ-

տարակին հասնում է 14 լաբատկա ջուր. լաբատկեն հաշվվում է 15 վերշոք երկարությամբ (իմա՛ լայնությամբ — Պ. Հ.) և մի վերշոք բարձրությամբ <առվի> մեջից գնացող ջուր։ Առուն հաղիվ 14 լաբատկա ջուր է տալիս, որ սկսվում է Մուղնի գյուղի տակից՝ Աշտարակից 5 վերստ հեռավորությամբ։

Աշտարակում ամեն մի նաֆարին հասնում է վարելահող $12\frac{1}{2}$ լիտրեն ցորենատեղի։

Աշտարակ գյուղի հասարակությունը տարեկան՝ յուր առվի պահպանության և ջրի <համար> վարձում է մի կառավարիչ, որին մենք ջրբաժան ենք անվանում, և վարձ է տալիս 500 րուբլի։

Այգիներից միջին թվով տարեկան ստացվում է 200.000 վեդրո գինի՝ հաշված 3400 բոչկա։ Այգիները քաղում են սեպտեմբերի 20 կամ 25-ից, իսկ թաղում են հոկտեմբեր ամսից սկսյալ. հանում են հողի տակից փետրվար և մարտ ամսից, և ջրում են մայիսից սկսյալ մինչև սեպտեմբերի 10-ը։ Ամեն մի բաղ կամ այգի ջրվում է 5—6—7 անգամ՝ նայելով բաղատեղին։

Դպրոցն ամբողջըն Սմբատ Շահազիզյանցի անվամբ հատկացնելու համար ժողովրդական վճիռ եղած է, [բայց չի իրագործված]։

Աշտարակու վարելահողերը բոլոր աշնան ցանք են։ Քասախ գետակը, որ է Աշտարակու արևելյան կողմը ընկած, գյուղին կից այդ ձորում գտնվում է երկու աղբյուր. մինը Ծուխենց անունի և մյուսը՝ Ագատենց։ Քասախ գետակը յուր սկիզբն առնում է Բաշապարան գյուղից, Արագածոտից ընթանում է դեպի հարավ։ Ապարանու մյուս ջրերը գալիս են Արագած (լեռից) սարից։

Ծիրանավոր անունով կան երկու եկեղեցիներ, որոնք ավերակ են. մինը՝ Աշտարակ, մյուսը՝ Փարբի գյուղում։

Շաղվերտը սկսվում է Նազրվան և Թաքիա Թուրքաբնակ գյուղերից և խառնվում է Քասախ գետին։

Աշտարակու ծխական դպրոցն առայժմ հաստատ եկամուտ չունի։ Հասարակապատկան քարվանսարի և մասնավոր խանութների եկամուտն է հատկացված, որ է 860 րուբլի, որ տրվում է արենտով՝ ծխական դպրոցի հոգաբարձության անունով։

Աշտարակն ունի նաֆար՝ 4158 հոգի (թե՞ 4154 — Պ. Հ.)։

Արոտատեղի 2120 դեսյատինից երկու մասը քար է, անպետք, իսկ մեկ մասը՝ արոտատեղ»։

Հավելված X

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ՊՈՂՈՍ ՊՌՈՇՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Աշտարակից սերված գրական-գիտական, հասարակական ու պետական նշանավոր գործիչների շարքում ուրույն դիրք ու տեղ է գրավում սոցիալիզմի գաղափարի մոլի նվիրյալ Պողոս Պռոշյանը՝ գրող Պերճ Պռոշյանի որդին։

Պողոս Պռոշյանը ծնվել է 1883-ին, ուսանել է Տփղիսի դպրոցներում և Օդեսայի համալսարանում, ուր և անդամագրվել է էսէռների կուսակցությանը. մի քանի անգամ աքսորվել է Սիբիր, փախել տաժանակրության վայրերից, ապա դարձել քաղաքական վտարանդի։ 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո վերադարձել է Ռուսաստան, իսկ սովետական իշխանության հաղթանակից հետո, իբրև ձախ էսէռների պարագլուխներից մեկը՝ գործակցել է բոլշևիկների հետ և մտել Լենինի գլխավորած ժողկոմխորհի կազմի մեջ, որպես փոստի և հեռագրատան ժողկոմ և բարձրագույն ռազմական խորհրդի կոմիսար։

Պռոշյանը եռանդուն մասնակցություն է ցույց տվել Թուրքահայաստանի մասին Սովետական կառավարության դեկրետի նախագծի մշակմանն ու քննարկմանը՝ այդ ընթացքում բուռն վեճեր ու տարաձայնություններ ունենալով Ի. Ստալինի հետ։

1918 թ. գարնանից նա դուրս է եկել ժողկոմխորհի կազմից, իսկ հուլիսից հեռացել նաև քաղաքական ասպարեզից։ Վախճանվել է նույն թվականի դեկտեմբերի 16-ին։

Պողոս Պռոշյանը ակնառու ունակություններ է հանդես բերել նաև գեղեցիկ արվեստների բնագավառում (բանաստեղծություն, նկարչություն), որոնց ցոլքերը դժվար չէ նկատել առայսօր անտիպ նրա նամակներում։ Այս վերջիններն արժանի են հատուկ ուսումնասիրության։

Պողոս Պռոշյանի հայացքների և բարդ անհատականության փայլուն բնութագիրը տվել է Վ. Ի. Լենինը՝ նրա մահվան առթիվ գրած հոդվածում, որը և մեջ ենք բերում ստորև (արտատպվում է Վ. Ի. Լենինի Երկերի լիակատար ժողովածուի հինգերորդ հրատարակության 37-րդ հատորից, Ե., 1981, էջ 478—480)։

ԸՆԿ. ՊՌՈՇՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ինձ վիճակվեց ընկ. Պռոշյանի հետ ծանոթանալ և նրան գնահատել ժողկոմխորհում կատարած համատեղ աշխատանքի ժամանակ՝ անցյալ տարվա վերջում և ընթացիկ տարվա սկզբում, երբ ձախ էսէռներն ընթանում էին մեզ հետ դաշնակցած։ Պռոշյանն անմիջապես աչքի ընկավ հեղափոխության և սոցիալիզմի նկատմամբ խոր նվիրվածությամբ։ Ոչ բոլոր ձախ էսէռների մասին կարելի էր ասել, թե նրանք սոցիալիստներ են, նույնիսկ, թերևս նրանց մեծամասնության մասին դա չէր կարելի ասել։ Բայց Պռոշյանի մասին դա պետք էր ասել, որովհետև, չնայած նրա հավատարմությանը ռուս նարոդնիկների գաղափարախոսությանը՝ ոչ սոցիալիստական գաղափարախոսու-

թյանը, Պոռշյանի մեջ երևում էր խորապես համոզված սոցիալիստը։ Այդ մարդը յուրովի, ո՛չ թե մարքսիզմի միջոցով, ո՛չ թե պրոլետարիատի դասակարգային պայքարի գաղափարների շնորհիվ, դարձավ սոցիալիստ, և ես Ժողկոմխորհում կատարած համատեղ աշխատանքի ժամանակ հաճախ եմ առիթ ունեցել տեսնելու, թե ինչպես ընկ. Պոռշյանը վճռաբար կանգնում էր բոլշևիկ-կոմունիստների կողմը՝ ընդդեմ ձախ սոցիալիստ-հեղափոխական իր կոլեգաների, երբ նրանք արտահայտում էին մանր տնտեսատերերի տեսակետը և բացասաբար էին վերաբերվում գյուղատնտեսության բնագավառում կոմունիստական միջոցառումներին։

Իմ հիշողության մեջ առանձնապես տպավորվել է Բրեստի հաշտությունից քիչ առաջ ընկ. Պոռշյանի հետ ունեցած զրույցը։ Այն ժամանակ թվում էր, թե մեր միջև քիչ թե շատ էական տարաձայնություններ արդեն չեն մնացել։ Պոռշյանն ինձ ասում էր մեր կուսակցությունները միաձուլելու անհրաժեշտության մասին, այն մասին, թե կոմունիզմից (այն ժամանակ այդ բառը դեռ գործածական չէր) առավել հեռու կանգնած ձախ էսէռները Ժողկոմխորհում կատարած ընդհանուր աշխատանքի ժամանակամիջոցում նկատելիորեն և շատ խիստ մերձեցել են դրան։ Ես զուսպ վերաբերվեցի Պոռշյանի առաջարկին, նրա առաջարկն անվանեցի վաղաժամ, բայց գործնական աշխատանքում մեր մերձեցումը բնավ չէի ժխտում։

Լիակատար տարակարծություն բերեց Բրեստի հաշտությունը, իսկ տարակարծությունից, Պոռշյանի հեղափոխական հետևողականության ու համոզվածության պարագայում, չէր կարող առաջ չգալ ուղղակի, նույնիսկ ռազմական պայքար։ Որ գործը կարող էր հասնել ապստամբության կամ այնպիսի փաստերի, ինչպիսին գլխավոր հրամանատար, ձախ էսէռ Մուրավյովի դավաճանությունն էր, այդ ես, պետք է խոստովանեմ, ոչ մի կերպ չէի սպասում։ Բայց Պոռշյանի օրինակն ինձ ցույց տվեց, թե **հայրենասիրությունը** *որքան խորն է նստել ձախ էսէռներին պատկանող նույնիսկ ամենաանկեղծ և համոզված սոցիալիստների մեջ,— թե ինչպես աշխարհայացքի ընդհանուր հիմունքներում եղած տարաձայնություններն անխուսափելիորեն դրսևորվեցին պատմության դժվարին շրջադարձի ժամանակ։ Նարոդնիկների սուբյեկտիվիզմը ճակատագրական սխալի հասցրեց նույնիսկ նրանցից լավագույններին, որոնք թույլ տվեցին, որ իրենց կուրացնեն հրեշավոր ուժի, այն է՝ գերմանական իմպերիալիզմի ուրվականով։ Այդ իմպերիալիզմի դեմ որևէ այլ պայքար, բացի ապստամբական պայքարից, և այն էլ՝ անպայման տվյալ պահին, առանց մեր և միջազգային դրության օբյեկտիվ պայմանների որևէ հաշվառման, հեղափոխականի պարտքի տեսակետից թվում էր ուղղակի անթույլատրելի։ Այստեղ արտահայտվեց նույն այն սխալը, որը 1907 թվականին սոցիալիստ-հեղափոխականներին դարձրեց ստոլիպինյան Դումայի անվերապահ*

«բոյկոտիստներ»։ Միայն թե հեղափոխական թեժ մարտերի իրադրության մեջ սխալն ավելի դաժանորեն վրեժ լուծեց և Պոռշյանին մղեց սովետական իշխանության դեմ զինված պայքարի ուղին։

Բայց, այնուամենայնիվ, Պոռշյանին վիճակվեց մինչև 1918 թվականի հուլիսը ավելի շատ բան անել սովետական իշխանության ամրապնդման համար, քան 1918 թվականի հուլիսից նրա խարխլման համար։ Եվ գերմանական հեղափոխությունից հետո ստեղծված միջազգային իրադրության մեջ Պոռշյանի նոր՝ առաջվանից ավելի հաստատուն,— մերձեցումը կոմունիզմին անխուսափելի կլիներ, եթե այդ մերձեցմանը չխանգարեր վաղաժամ մահը։

Վ. Ի. ԼԵՆԻՆ

«Պրավդա» № 277.
1918 թ. դեկտեմբերի 20

Տպագրվում է ըստ
«Պրավդա» թերթի տեքստի

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

1 (էջ 39)

Ակադ. Գրիգոր Ղափանցյանն իր «Հին Հայաստանի տեղանունների պատմալեզվաբանական նշանակությունը» աշխատության մեջ Աշտարակ տեղանունը փորձում է կապել ասորա-փյունիկյան Իշտար աստվածուհու պաշտամունքի հետ:

Սովորություն կար աստվածուհու պատվին հուշասյուներ կառուցել, որ և իր հերթին ազդակ է դարձել հետագայում նրա շուրջ գոյացած բնակավայրերը կոչելու նույն աստվածուհու անունով՝ Իշտար-Աշտարակ:

«Հնարավոր է,— ասում է գիտնականը,— որ հայերեն Աշտարակը (բուրգ) իր նշանակությունն առած լինի Աշտար-աթ հիմքից՝ Իշտար աստվածուհու անվան ասորա-փյունիկյան ձևից: Փյունիկիայում ի պատիվ Իշտարի կանգնեցվում էին վիթխարի հուշասյուներ (բավականաչափ կոպիտ ձևով), որոնք և կարող էին կոչվել աստվածուհու անունով» և այլն (տե՛ս նրա «Историко-лингвистическое значение топономики древней Армении», Ер., 1940, с. 82):

Հեթանոս հայերը, սակայն, Իշտարին համապատասխանող իրենց աստվածուհին ունեին՝ Աստղիկ, հետևաբար, այդ դեպքում, տրամաբանական կըլիներ գյուղի անունը ենթադրել այլ ձևով, ասենք, օրինակ՝ Աստղկան, բայց ո՛չ Աշտարակ:

2 (էջ 107)

Ներսես Աշտարակեցին ամիսներ անց նույն խնդրի վրա հրավիրում է նաև պարսից թագաժառանգ Աբբաս Միրզայի ուշադրությունը՝ վերջինիս մատուցած հայտնի բողոքագրում: Այդ վավերագիրը առ այսօր տպագրվել է չորս անգամ, 1824 և 1853 թվականներին, Թիֆլիսում, Ներսիսյան դպրոցի տպարանում, «Համառօտութիւն անցից քրիստոսակերտ Մայր Աթոռոյ Հայոց ս. էջմիածնի» խորագրով գրքույկում (առաջին հրատարակությունից մեկական օրինակ պահվում են ՀՍՍՀ պետական և էջմիածնի ճեմարանի գրադարաններում), 1917-ին՝ «Դիվան հայոց պատմության» մատենաշարի ԺԲ գրքում (Մանվել Կյումուշխանեցու Հիշատակարանի ծանոթություններում) և հիսուն տարի անց՝ «Присоединение Восточной Армении к России» ժողովածվի մեջ (հ. II, Ե., 1978, էջ 136—143): Եր. Տահազիզին մատչելի չեն եղել վավերագրի՝ իր կենդանության օրոք լույս տեսած հրատարակություններից և ո՛չ մեկը, այլապես իր գրքում կվկայակոչեր: Ահա՛ Աբբաս Միրզային մատուցված բողոքագրից Աշտարակին վերաբերող հատվածը, որը Երմոլովին ուղղված նամակում եղածի համեմատությամբ ոճական տարբերություններ ունի.

«...Աթոռն էջմիածնի,— գրում էր Ներսես Աշտարակեցին պարսից տերության գահաժառանգին,— ո՛չ կարաց գտանիլ ազատ ի զրկանաց, ի յափըշտակութեանց և յամենայն նեղութեանց մինչև ցայսօր ժամանակի, և զրկեալ եղև ո՛չ միայն յիւրոցն ազատութեանց և ապահովութեանց կամ ստացուածոց, այլև յամենայն շնորհաց և արքայավայելուչ ողորմութեանց ժառանգի տէրութեան Պարսից: Զի յամի 1227 (իմա՛ 1812 — Պ. Հ.) ինքն՝ Շահզատայն, համաձայն յուսադրութեանց իւրոց վասն մշտնջենաւոր խնամակալութեանց ի վերայ Աթոռոյն էջմիածնի՝ պատուելով զխնդիր Կաթուղիկոսին բարձրահրաման հրովարտակաւ իւրով, հրամայեաց վերադարձուցանել Աթոռոյն զսեպհական կալուած նորա զգիւղն անուանեալ Աշտարակ, զոր յափշտակեալ ունէր հայրն Մահմէտ խանի՝ Հիւսէյին Ալի խան, այլ ինքն սարտարն (իմա՛ Հուսեյն Ղուլի խանը — Պ. Հ.) պահանջելով ի մասին այնորիկ պարգև ինքեան հազար թուման, մինչև ցայսօր ժամանակի ո՛չ Աթոռն կարաց տալ նմա զայն գումար, և ո՛չ ինքն սարտարն կամեցաւ յանձնել Աթոռոյն զայն գիւղ: Եւ այս ահա՛ 13 տարի Աթոռն էջմիածնի վայելէ միայն ըզպատուելագոյն հրովարտակ Շահզատային, և սարտարն՝ զբոլոր գիւղն և զամենայն արդիւնս առ ի նըմանէ» («Դիվան հայոց պատմության», գիրք ԺԲ. Մանուէլ Կիւմիւշխանեցի, մաս I, Թիֆլիս, 1917, էջ 233):

3 (էջ 145)

Ինչպես պարզվում է հնօրյա վավերագրերից, Ներսես Աշտարակեցու հրավերով, 1827 թ. ապրիլյան գաղթից գյուղ վերադարձածներն, այնուհետև, աշնանը, մասնակցում են Երևանի գրավմանը:

1827 թ. սեպտեմբերի 28-ին Ներսեսը համագյուղացիներին և օշականցիներին հղում է հետևյալ հրահանգը.

Հասարակութեան հայոց աշտարակցւոց և օշականցւոց

Գրեմ բազում օրհնութեամբ, զի ընդ ժամանել գրոյս իմոյս, առանց բոպէ անցուցանելոյ, թողեալ զամենայն զհարկաւոր գործս ձեր՝ պատկանեալս վասն տան և ընտանեաց ձերոց, ամենայն թուանք ունեցօղքն ի ձէնջ և ի թուանք չունողացն ևս, ոտնաւոր կտրիճ տղայք շատ հավաքեալ՝ հասուցէք առ մեզ, աստ, մինչև ցմտանել արեգականն, այսօր, որ է չորեքշաբաթ և քսան և ութ

սեպտեմբերի, և եթէ մինն ի ձէնջ ծուլասցի և յամեսցէ, իմասցի այնպիսին, որ եթէ իմ աչաց լոյս ևս լինիցի, ո՛չ խնայեցից հանել և ի բաց ընկենուլ։

Արքեպիսկոպոս Հայոց Ներսէս*

Ներսեսի կոչը գտնում է ջերմ արձագանք, և Երևանը գրավող հայ աշխարհազորայինների շարքում կռվում էին նաև աշտարակցիները։

Հուշագիրները պատմում են, որ Երևանի գրավման օրը աշտարակցի մի երիտասարդ (Պերճ Պռոշյանի հայրը) հանդիպել է ծնունդով քանաքեռցի մի սպայի, որի սխրանքներից ու կյանքի պատմությունից առանձին դրվագներ հետագայում Խ. Աբովյանն օգտագործել է «Վերք Հայաստանի» վեպի գլխավոր հերոսի՝ Աղասու կերպարն ստեղծելիս։ Այդ մասին մանրամասն տվյալներ հետաքրքրասերները կարող են գտնել Պ. Պռոշյանի «Խաչատուր Աբովյան» հուշ-հոդվածում, տպագրված՝ «Աղբյուր», 1902, № 3։

4 (էջ 197)

Հերակլ թագավորի հրամանով 1779-ին հայրենի վայրերից բռնությամբ Վրաց աշխարհ տարագրած աշտարակցիները, որոնց երկու-երրորդը զոհվեց կամ ցրվեց ու կորավ գաղթի ճանապարհներին, երեք տարի հետո միայն կարողացան վերադառնալ իրենց տները՝ երկար ժամանակ չկարողանալով ուշքի գալ տեսած սարսափներից։ Մատենադարանի վավերագրերը պատմում են, որ կորածներից մի մանկահասակ օրիորդի՝ ծնողների գիրկը վերադարձնելու հոգսն իր վրա էր առել ամենայն հայոց կաթողիկոս, ականավոր քաղաքական և հոգևոր գործիչ Ղուկաս Կարնեցին, որի նամակներից մեկի համառոտությունից (գրված է 1782 թ. մայիսին և ուղղված՝ Հերակլ թագավորի հավատարիմ մարդկանցից մեկին) հետևյալ մանրամասնություններն ենք իմանում.

«Թուղթ ևս առ Մուխրամ Իւանի բէկն գրեաց սրբազանն, վասն զի ի գալն Վրաց յերկիրս» և «ի դառնալն նոցա անդրէն յետս, բազում գերիս առեալ աստի՝ տարան ընդ ինքեանս։ Յորս էր Աշտարակու գիւղն ևս, որոյ յարձակիլն յետ միջոցաց ինչ խնամովն Աստուծոյ գալ անտի յայսկոյս, ի նոցանէ զփոքրիկ դուստր մի յափշտակեալ էր թաւատ ումն և մկրտեցուցեալ վերստին ի դաւանութիւնս իւրեանց, իբր թէ ի վրացիական հաւատս իւրեանց դարձուցեալ։ Զոր լուեալ սրբազան Վեհիս՝ բազում անգամ գրեաց առ Կարապետ վարդապետ առաջնորդն տեղւոյն, զի հետևեալ ջանասցէ անդ՝ իցէ թէ կարիցէ ազատել ի նոցունց զաղջիկն այն։ Զոր ո՛չ եղև հնար։ Եւ ընդ այն ժամանակս առաքեցաւ

* Մատենադարան, Ներսես Աշտարակեցու դիվան, № 166/818։

Մուխրամ բէկն առ խանն յաստուածազօր արքայէն, որոյ ի գնալն առ խանն, եկն և ի տես սրբազանին։ Յայնժամ սրբազանն խնդրեաց ի նմանէ, զի ի վերադառնալն ի Թիֆլիզ, զեկուսցէ արքային և նորին հրամանաւն հանցէ զկուսարն ի տանէ Վրաց և յղեսցէ աստ։ Իսկ դառնալն նորա աստի ի քաղաքն առ արքայն, անկարելի էր տեսեալ զբանն։ Ուստի յառաջ քան զայս գրեալ էր առ սրբազանն, թէ դժուարաւ լինի առնուլս, զոր խոստացայ յայդր։ Ապա ուրեմն՝ զթուղթ մի գրեա՛ ի վերայ իմ այսր իրի աղագաւ, զոր ընկալեալ իմ, ցուցից արքային և խօսեցայց նովաւ, թերևս իցէ թէ ազատեսցի որբուկն այն։

Վասն որոյ գրէ առ նա սրբազանն այժմ, թէ յայնժամ յոր աստ, առ մեզ էիր, զխնդիր ինչ արարաք ի քէն ի կողմանէ դստերն փոքր աշտարակցւոյ, որ է ի ձեռն ուրումն վրացւոյ։ Զոր այդ արարեալ արքային քո՝ առցես զնա ի ձեռաց նոցա և յանձնեսցես առաջնորդ Կարապետ վարդապետին։ Որոյ մինչև ցայժմ զի՞նչ լինիլն չիմացաք։ Իսկ ահա՛ այժմ ևս գրեմ սիրելւոյդ իմոյ, զի հոգ տարեալ ջանասցես կատարել զխնդիրս մեր, որոյ վարձս յԱստուծոյ առնուցուս։

Զայս ևս տաճկերէն գրեցաւ»[1]։

Հետո ի՞նչպես տնօրինվեց այդ օրիորդի ճակատագիրը, չենք կարողացել պարզել։

[1] Դիվան հայոց պատմության, նոր շարք, գիրք Ա, Ղուկաս Կարնեցի, հ. I (1780—1785), Ե., 1984, էջ 296։

ԱՇՏԱՐԱԿՆ ԱՅՍՕՐ

(ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ)

Երվանդ Շահազիզի հնախոսական-պատմական ակնարկը Աշտարակի պատմությունը փաստորեն հասցնում է մինչև անցյալ դարի վերջերը, երբ գյուղի տնտեսական ու մշակութային կյանքն ապրում էր լուրջ հեղաբեկումներ։ Հետագա տասնամյակներին, ընդհուպ մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում ու Աշտարակում, կատարվում են նոր փոփոխություններ։ Առավել խորանում է սոցիալական շերտավորումը, իսկ երիտասարդությունն աստիճանաբար խանդավառվում է մարքսիզմ-լենինիզմի գաղափարներով։ Քանի գնում շոշափելի է դառնում ծնունդով աշտարակցիների ներդրումը հայ մշակութային ու հանրային կյանքի անդաստանը։

900-ական թվականների առաջին տարիներից հայ կրթական հաստատությունների նկատմամբ ցարական իշխանությունների հրահրած հալածանքները՝ հայ դպրոցների փակումը և նրանց գործունեությունն ապահովող կալվածքների բռնագրավումը, աշտարակցիների շրջանում նույնպես առաջ բերին համառ դիմադրություն։

Զանցած մեկ տասնամյակ՝ Աշտարակը նույնպես վերապրեց արևմտահայության ցեղասպանության մեծ ողբերգությունը։ Կոտորածներից փրկված առանձին բեկորներ Վասպուրական աշխարհից, Տարոնից, Սասունից և Մոկսից, գաղթի ճամփաներով հասնելով Աշտարակ՝ սիրով և եղբայրաբար ընդունվեցին և իրենց նոր տները հիմնեցին այստեղ, հնօրյա Բերդաթաղի և Կարմրավորի թաղամասերում։ Աշտարակցիները որբ մանուկների համար բացարին որբանոցներ, որոնց սաներից շատերը հետագայում դարձան մեր մեծ հայրենիքի փառաբանված զավակները, ինչպես՝ աշխարհահռչակ կենսաբան, ակադեմիկոս Էզրաս Հասրաթյանը, պանծալի զորավար Նվեր Սաֆարյանը և շատ ուրիշներ։

Արդեն 1918 թ. մայիսին, կռիվների օրերին, ինչպես Սարդարապատում, այնպես էլ Բաշ-Ապարանում ընդդեմ Թուրք զավթիչների ոտքի ելած հայ աշխարհազորայինների շարքերում հերոսաբար մարտնչում էին Աշտարակի հին ու նոր բնակիչներից շատերը, ու նրանց մեջ՝ հեղինակավոր գիտնական Գրիգոր Ղափանցյանը, պատանի Էզրաս Հասրաթյանը, Աշտարակի կուսշրջկոմի ապագա քարտուղար Ատիկ Ազիզյանը և ուրիշներ։

Աշտարակն ու աշտարակցիները ո՛չ միայն արձագանքեցին բանվորական շարժումներին ու մարքսիզմի գաղափարներին, այլև զինվորագրվեցին

*հեղափոխական պայքարին։ Հոկտեմբերի կենարար արևը շողշողաց նաև Հա-
յաստանի այս հինավուրց բնակավայրի երկնակամարում։*

*Աշտարակից սերած և Հոկտեմբերի բարիկադների վրա մարտնչող հայ-
ազգիններից արժե հիշել Պողոս Պողոսյանին՝ ականավոր փիլիսոփա Պերճ Պռոշ-
յանի որդուն, որը Վ. Ի. Լենինի բնորոշմամբ՝ «աչքի ընկավ հեղափոխության
և սոցիալիզմի նկատմամբ խոր նվիրվածությամբ»* (Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ.
37, էջ 478)։

*1919 թ. հոկտեմբերի 5-ին, պատմական բարդ իրադրության պայման-
ներում, ստեղծվեց Աշտարակի շրջանային կուսակցական կազմակերպությու-
նը՝ անվանի հեղափոխական Գրիգոր Գրիգորյանի ղեկավարությամբ։ Այս
նույն օրն էլ որոշում է ընդունվում Աշտարակի բոլոր կոմունիստներին միա-
վորել շրջանային մեկ կազմակերպության՝ կուսբջիջի մեջ։ Աշտարակի կուս-
բջիջը լայն գործունեություն է ծավալել սովետական կարգերի հաստատման
համար, աշխատավոր զանգվածների շրջանում քաղաքական աշխատանք է
տարել դաշնակցական կառավարողների վարած հակաժողովրդական քաղա-
քականության բացահայտման և բոլշևիկների առաջադրած խնդիրների ու
նպատակների պարզաբանման ուղղությամբ։*

*Հայաստանում սովետական իշխանության հաստատումից անմիջապես
հետո, 1920 թ. դեկտեմբերի 3-ին, Աշտարակի կուսբջիջի ղեկավարությամբ
շրջանում հաստատվեց սովետական իշխանություն և նույն օրը կազմակերպ-
վեց Աշտարակի հեղափոխական կոմիտեն, որի նախագահ նշանակվեց Գրի-
գոր Գրիգորյանը։ Դեկտեմբերի 7-ին շրջանային առաջին ընդհանուր կուսակ-
ցական ժողովում ընտրվեց Հայաստանի կոմունիստական կուսակցության
Աշտարակի շրջանային կոմիտեն։ Շրջկոմի առաջին քարտուղար ընտրվեց
Ս. Ազիզյանը (հետագայում «Պրավդա» թերթի խմբագիրներից)։*

*Աշտարակի շրջանային կուսակցական կազմակերպությունը, որի շարքե-
րում 1920 թ. հաշվվում էր ընդամենը 23 կոմունիստ, լայն աշխատանք է ծա-
վալել նորաստեղծ սովետական իշխանության ամրապնդման, այդ ժամանա-
կաշրջանի դժվարին խնդիրների լուծման համար։ Ընդ որում, ամբողջ աշ-
խատանքը կատարվում էր դաշնակների և կուլակների դեմ մղվող համառ
պայքարի պայմաններում։*

*1921 թ. փետրվարի 11-ին գումարվում է շրջանային կուսակցական կազ-
մակերպության առաջին կոնֆերանսը, սակայն մի քանի օր հետո սկսվեց
դաշնակցական խռովությունը։ Ինչպես ամբողջ Հայաստանում, այնպես էլ
Աշտարակում բոլոր կոմունիստներն ու աշխատավորությունը ոտքի ելան հա-
նուն սովետական կարգերի պաշտպանության։ Կարմիր բանակի զորամասերի
և նախկին պարտիզանական ջոկատների օգնությամբ շուտով խռովությունը*

ճնշվեց, և նորից ողջ Հայաստանում ու Աշտարակի շրջանում հաստատվեցին
սովետական կարգեր։ Շրջանային կուսակցական կազմակերպությունը ձեռ-
նամուխ եղավ քայքայված տնտեսության վերականգնման աշխատանքնե-
րին։

1921—1930 թվականներին Աշտարակը էջմիածնի գավառի գավառակ-
ներից մեկի կենտրոնն էր, իսկ 1930 թ.-ից դարձավ նորաստեղծ շրջանի կենտ-
րոն՝ ունենալով նաև իր շրջանային թերթը, որը «Այգեգործ կոլխոզնիկ», «Այ-
գեգործ կոլտնտեսական», «Արագած» անուններով հրատարակվելուց հետո,
1962 թ. առ այսօր լույս է տեսնում շաբաթական երեք անգամ, «Աշտարակ»
անունով, ավելի քան 5000 տպաքանակով։

Սովետական Աշտարակի պատմությունն ընթացել է նույն հունով, գյուղն
ականատես ու մասնակից է դարձել պատմական ու տնտեսական նույն փո-
փոխություններին ու առաջընթացին, ինչ ամբողջ Սովետական Միությունն ու
Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը։ Աշտարակն
ապրեց գյուղի սոցիալիստական վերակառուցման և կուլտուրական հեղա-
փոխության տարիների խանդավառությունը, նրա ավելի քան 1070 զավակ-
ներ (Աշտարակն այն տարիներին ուներ շուրջ 5500 երկսեռ բնակիչ) զենքը
ձեռքին մասնակցեցին գերմանական ֆաշիզմի դեմ սովետական ժողովրդի
մղած Հայրենական մեծ պատերազմին՝ Աշտարակի սան Նվեր Սաֆարյանի
հրամանատարության տակ կռվող Թամանյան քաջարի դիվիզիայի և այլ զո-
րամիավորումների կազմում հասնելով մինչև Բեռլին։ Իսկ թիկունքում հե-
րոսական քիչ գործեր չէր անում մնացած բնակչությունը՝ բանակն անհրաժեշտ
պարենամթերքով ապահովելու համար։ Ռազմաճակատ մեկնած զինվորնե-
րից շուրջ 300-ը տուն չվերադարձան և հերոսի մահով ընկան պատերազմի
դաշտում։ Նրանց հիշատակը հավերժացնելու համար երախտապարտ աշտա-
րակցիները տակավին 1944 թվականին, պատերազմի թեժ օրերին, ճարտա-
րապետ Ռ. Իսրայելյանի նախագծով կանգնեցրին աղբյուր հուշարձան, իսկ
1975 թ., Կոմիտասի անունը կրող քաղաքային այգում, բարձրաբերձ ժայ-
ռերի վրա, հիմնադրեցին նոր հուշահամալիր։

Աշտարակը Սովետական Հայաստանի՝ հանրապետական ենթակայու-
թյան քաղաքներից (1970 թ.) և գիտական, արդյունաբերական ու գյուղատն-
տեսական կենտրոններից է։

Սովետական հանրաճանաչ գրող Մ. Շահինյանը՝ հմայված Աշտարակի
գեղեցկությամբ, անվանել է վերջինս «Հայաստանի պարտեզը, խաղողի այ-
գին», որ բնավ էլ բանաստեղծական խանդավառության արդյունք չէ, որով-
հետև այս բնակավայրը, հիրավի, տասնամյակներ շարունակ Սովետական
Հայաստանի ամենամեծ այգեգործական վայրն էր (Երևանից հետո)։

Առաջին կոլեկտիվ տնտեսությունն Աշտարակում կազմակերպվել է

1929 թ. և կրում էր Ստեփան Շահումյանի անունը, իսկ քիչ անց՝ նաև երկ-
րորդը (Ա. Միկոյանի անվան), որոնց հիմքի վրա հետագայում կազմակերպ-
վեցին նախ՝ Աշտարակի սովետական տնտեսությունը (1964 թ.), իսկ Արզնի-
Շամիրամ ջրանցքի գործարկումից հետո՝ նաև Աշտարակի երկրորդ, Արայի
սովետական տնտեսությունը։ Երկուսն էլ շարունակում են Աշտարակի ավան-
դական գյուղատնտեսական արտադրության հիմնական ուղղությունը՝ այգե-
գործությունն ու պտղաբուծությունը. մշակում են նաև ընդեղեն կուլտուրա-
ներ։ Այժմ գյուղատնտեսության ոլորտներում ընդգրկված են շուրջ 950 աշ-
խատավորներ։ Շոշափելի է Աշտարակի և Արայի սովետական տնտեսություն-
ների ներդրումը շրջանի էկոնոմիկայի մեջ։ 11-րդ հնգամյակի ընթացքում
նրանք տվել են 7,7 միլիոն ռուբլու գյուղատնտեսական արտադրանք։

Եթե նոր Աշտարակի գյուղատնտեսությունը շարունակում ու զարգաց-
նում էր հայրերի դարավոր փորձը, ապա արդյունաբերությունը գրեթե
ավանդներ չուներ. անցյալից ժառանգություն էին մնացել Վարդազարյաննե-
րի ու Փարվանյանների գինու և օղու փոքրիկ ձեռնարկությունները՝ իրենց հա-
մեստ արտադրանքով, որ մասամբ արտահանվում էր նաև համառուսական
շուկա։

Սովետական իշխանության տարիներին ստեղծվել ու գործում են մեկ
տասնյակից ավելի արդյունաբերական ձեռնարկություններ, այդ թվում՝
Աշտարակի գինու գործարանը, տրիկոտաժի ֆաբրիկան, քարհանքների վար-
չությունը, շինարարական իրերի կոմբինատը, կույրերի ուսումնաարտա-
դրական միավորումը և այլն, որոնց տարեկան համախառն արտադրանքը
1985 թ. կազմել է 66,4 միլիոն, իսկ 11-րդ հնգամյակում՝ 149 միլիոն ռուբլի։
Ահա՛ այս բովում է ձևավորվել Աշտարակի բանվորությունն ու գիտատեխ-
նիկական մտավորականությունը, որոնցից ավելի քան 1000 հոգի ներկայումս
աշխատում են հայրենի քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում։

Քաղաքի տնտեսության ու արդյունաբերության հետագա զարգացման վրա
որոշակի ազդեցություն կունենան հետզհետե կառուցվող նոր գործարաններն ու
ձեռնարկությունները. կավելանան բարձր որակավորում ունեցող բանվորներն
ու ինժեներատեխնիկական անձնակազմը, կբազմապատկվեն արտադրանքի
տեսականին ու ծավալը, կբարձրանա որակը։ Այս ամենը լավագույնս կնպաս-
տեն բովանդակալից դարձնելու Աշտարակի բնակչության աշխատանքային
առօրյան և ավելացնելու նրանց բարոյական դիմագիծը։

Սովետական իշխանության տարիներին աննախադեպ թռիչք ապրեց Աշ-
տարակի լուսավորական-կրթական կյանքը։ Եթե Աշտարակ գյուղում, անց-
յալներում կար ընդամենը երեք դպրոց, ուր ուսուցումը գերազանցապես պաշ-
տոնական-պետական լեզվով էր, ներկայումս այստեղ գործում են հանրա-
կրթական յոթ դպրոց՝ 3962 աշակերտներով, երկու պրոֆտեխուսումնարան,

մեկ տեխնիկում, երաժշտական, նկարչական, գեղարվեստի, սպորտի ու շախմատի դպրոցներ, պիոներ պալատ, պատանի տեխնիկների կայան և տասը մանկապարտեզ։ Բոլոր դպրոցներն ու տեխնիկական ուսումնարանները ապահովված են հարմարավետ նոր շենքերով, անհրաժեշտ փորձարաններով, կաբինետներով ու գրադարաններով։

Աշտարակի բազմաշխատ ու երախտաշատ ուսուցիչներ Պերճ Պռոշյանի, Նիկողայոս Թումանյանի, Շուշանիկ Հայրապետյանի, Վաչագան Շահազիզյանի, Լենինի շքանշանակիր Մնացական Թամազյանի և ուրիշ շատերի գործն ու ավանդները այժմ շարունակում են նորերը. միայն հանրակրթական դպրոցներում ներկայումս աշխատում են 327 ուսուցիչ, որոնք կայուն գիտելիքներ են հաղորդում հայրենի պատանեկությանը։

Հանրակրթական դպրոցի ռեֆորմի իրականացումը խթան կծառայի Աշտարակի կրթական հաստատությունների արդյունավետ գործունեության համար՝ պատրաստելով համակողմանի զարգացմամբ ու հարուստ գիտելիքներով նոր կյանքի կառուցողներ։

Աշտարակը ծածկված է կուլտլուս հիմնարկների խիտ ցանցով։ Քաղաքում գործում են կուլտուրայի երկու տուն, լուսաշխի տուն, չորս ակումբ, հինգ գրադարան-ընթերցարան, երկու կինոթատրոն, երկու թանգարան (Պերճ Պռոշյանի տուն-թանգարանը և «Ջվարթնոցի» թանգարանի Մուղնիի մասնաճյուղը)։ Շուտով այցելուներ կընդունեն նաև երկու տուն-թանգարաններ՝ ակադեմիկոսներ Գրիգոր Ղափանցյանի և Նորայր Սիսակյանի թանգարանները, ուր հավաքված են նրանց անձնական իրերը և գիտական գործունեության մասին պատմող ցուցանմուշներ։ Քաղաքի ինքնագործ 12 խմբերում (երգչախումբ, ժողգործիքների և կամերային նվագախմբեր, լարային քառյակ, պարային անսամբլներ) այսօր ընդգրկված են շուրջ 250 շնորհալի պատանիներ ու երիտասարդներ, որոնք վերածնում են Աշտարակի ավանդական երգերը, պարերը, տոնախմբությունները։

Հին ավանդներ ունի նաև Աշտարակի թատրոնը, որը 1930—1950 թթ. գործել է որպես պետական թատրոն՝ իսկական գեղագիտական հաճույք պատճառելով աշխատավորությանը և օգնելով կուսակցության և կառավարության որոշումների կենսագործմանը։ Աշտարակի թատրոնում իրենց ստեղծագործական առաջին քայլերն են սկսել և առնականացել ներկայումս հայության քաջածանոթ դերասաններ ու թատերագիրներ՝ ՀՍՍՀ ժողովրդական արտիստ Վաղինակ Մարգունին, Արամաշոտ Պապյանը, Գրիգոր Ջալիկյանը, Արարատ Բարսեղյանը։

Տարեց աշտարակցիների հիշողության մեջ տակավին թարմ են իրենց սիրելի թատրոնի դերասանների հետ Հովհաննես Աբելյանի, Վահրամ Փափազյանի, Հրաչյա Ներսիսյանի, Արուս Ոսկանյանի, Հասմիկի և հայ բեմի հան-

րաճանաչ մյուս վարպետների համատեղ ներկայացումները, որոնք անմոռա-
նալի, հուզիչ պահեր են պարգևել հանդիսականներին։ Աշտարակի պետական
թատրոնի ավանդները հաջողությամբ շարունակում է քաղաքի կուլտուրայի
տան ժողովրդական թատրոնի կոլեկտիվը, ուր եռանդով աշխատում են ինչ-
պես տարեց դերասաններ, այնպես էլ երիտասարդ շնորհալի ուժեր։
Կուսակցական և սովետական կազմակերպությունների ուշադրության
կենտրոնում են մշտապես նոր մարդու ներդաշնակ ու համակողմանի զար-
գացման գործում կարևոր դեր ունեցող մշակութային այլևայլ բնագավառնե-
րի կողքին նաև ֆիզկուլտուրան և սպորտը։ Քաղաքում այսօր կա 32 ֆիզ-
կուլտուրային կոլեկտիվ, որոնցում ընդգրկված են մի քանի հազար պատա-
նիներ ու աղջիկներ։ Նրանց տրամադրության տակ են արդիական հարմա-
րություններով սպորտդպրոցը, քաղաքային մարզադաշտը, լողավազանը,
սպորտային այլ կառույցներ։ Սիրված մարզաձևերից են՝ ֆուտբոլը, ծանրա-
մարտը, ըմբշամարտը, շախմատը, բռնցքամարտը, վոլեյբոլը։ Շատերը հրա-
պուրվում են վազքով, ռիթմիկ մարմնամարզությամբ, շատերն էլ ընդգրկված
են առողջարարական այլևայլ խմբերում։ Քաղաքի մարզիկներն իրենց մաս-
նակցությունն են բերում հանրապետական ու համամիութենական տարբեր
մարզաձևերի մրցումներին, իսկ «Օլիմպիա» թիմը հանդես է գալիս ֆուտբոլի
համամիութենական «Բ» խմբի առաջնությունում։
Ճիշտ է, Աշտարակը և՛ անցյալում, և՛ նոր շրջանում հայրենական գի-
տությանը տվել է հռչակավոր հետազոտողներ՝ ինչպես Հայկական ակադե-
միայի իսկական անդամ Գրիգոր Ղափանցյանը, որի աշխատությունները նը-
վիրված են հայ ժողովրդի նախնական պատմությանը և հայոց լեզվի հնա-
գույն շրջանի ուսումնասիրությանը, ակադեմիկոս Նորայր Սիսակյանը, որ
ժամանակակից տիեզերական կենսաբանության հիմնադիրներից է, նաև ուրիշ-
ներ, բայց ոչ մի աշտարակցի չէր կարող պատկերացնել, որ իր բնօրրանն
երբևիցե կդառնար Սովետական Հայաստանի գիտության կարևորագույն
կենտրոններից մեկը։ Աշտարակի նոր, Ջախափնյա թաղամասում, ուր առաջ
միայն քարքարուտներ էին, և աշտարակցին ամենաշատը կարող էր երազել
առու անցկացնելու մասին, որպեսզի ջրեր և այգիների վերածեր դարավոր խո-
պանները, այսօր վեր են խոյանում գիտահետազոտական հաստատություն-
ների մասնաշենքերը։ Դրանցից են՝ ՀՍՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրո-
նիկայի, ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտները, Բյուրականի
աստղադիտարանի, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի հատուկ
կոնստրուկտորական բյուրոները և այլն, ուր ավելի քան 400 գիտաշխատող,
այդ թվում՝ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական և թղթակից ան-
դամներ, գիտությունների ինը դոկտոր, 90 թեկնածու և ավագ ու կրտսեր
բազմաթիվ գիտաշխատողներ, հետազոտություններ են կատարում ֆիզիկայի,

էլեկտրոնիկայի, աստղագիտության և ժամանակակից գիտության նորագույն ուղղությունների բնագավառներում:

Աշտարակի գիտնականների աշխատությունները լայն ճանաչման են արժանացել ինչպես մեր հայրենիքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Հին Աշտարակում բուժական հիմնարկներ չկային, բայց կային Ռուսաստանում և արտասահմանում մասնագիտական կրթություն ստացած առանձին նվիրյալներ, ինչպես Սաժումյան և Նահապետյան գերդաստաններից սերված բժիշկները, բժիշկներ Ա. Շահազիզը (սույն գրքի հեղինակի ավագ եղբայրը), Կ. Ղափանցյանը, Մ. Հարությունյանը, Խ. Գասպարյանը, Գ. Պողոշյանը, որոնց հոգացումների շնորհիվ էլ ներկա դարի առաջին տասնամյակին բացվեց գյուղական հիվանդանոցը՝ մի քանի մահճակալով ու բուժարանով, որից օգտվում էին նաև հարևան գյուղերի ու գավառների բնակիչները: Աշտարակի բժիշկների հրաշագործությունների մասին դեռ այն ժամանակ ժողովուրդը լեգենդներ էր պատմում, որոնք մուտք են գործել նաև գեղարվեստական գրականություն (Խ. Դաշտենցի «Խոդեդան» վեպը, Վ. Արամյանի պատմվածքները և այլն):

Այժմ Աշտարակի առողջապահության սիստեմում աշխատում են 885 բուժաշխատող (այդ թվում՝ 115 բժիշկ և 430 միջին բուժաշխատող), գործում են՝ հիվանդանոցը (ավելի քան 300 մահճակալով), բուժարանը, սանէպիդ կայանը, երկու դեղատուն, ատամնաբուժարանը. մինչև հնգամյակի վերջը կընդարձակվի հիվանդանոցին կից ծննդատան բաժանմունքը և կկառուցվի ծննդատան նոր շենքը՝ 130 մահճակալով:

Աշտարակում երբեք չի լռել մուսաների երգը: Հնում գուսանները, ապա՝ Պերճ Պռոշյանը և Սմբատ Շահազիզը, հետո նրանց օրհնությամբ իրենց ստեղծագործական քայլերն սկսած գյուղագիր Արշակ Շահնազարյանը և թարգմանիչներ Նիկողայոս ու Լևոն Թումանյանները: Աշտարակից սերված գրողներն ինչպես երեկ, այսօր էլ վայելում են լայն ժողովրդականություն: Հիշենք Վալտեր և Ռաֆայել Արամյան եղբայրներին, Գևորգ Էմինին, Վարդգես Պետրոսյանին, Հենրիկ Թումանյանին, Արևշատ Ավագյանին, որոնց գրվածքների մեջ քիչ չեն բնօրրանի ներբողները և մանկական պայծառ հուշերը: Հիշենք նաև հանգուցյալ թարգմանիչ Գևորգ Վիրապյանին: Քաղաքում ապրող և ստեղծագործող երիտասարդ գրողները համախմբված են Արարատյան գրական միավորման մեջ և պարբերաբար հանդես են գալիս աշխատավորության առաջ ստեղծագործական հաշվետվություններով:

Աշտարակը հատկապես նոր ժամանակներում շատ է ոգևորել նկարիչներին՝ սովետահայ գեղանկարչության նահապետ Մարտիրոս Սարյանից սկսած մինչև նրա վրձինի ընկերներն ու ավելի երիտասարդներ՝ Մհեր Աբեղյան, Դ. Նալբանդյան, Է. Իսաբեկյան, Ա. Բեքարյան, Ասլամազյան քույրեր,

Վ. Խորենյան և ուրիշներ, որոնց լույսով ու ջերմությամբ ողողված կտավնե-
րը պատմում են Աշտարակի բնության կուսական անկյունների ու նրա մարդ-
կանց մասին: Այդ բոլորի մեջ զգացումային խոր շեշտերով և հայրենիքի
նկատմամբ սիրով առանձնանում են վաղամեռիկ արվեստագետ, բնիկ աշ-
տարակցի Գևորգ Ոսկանյանի կտավները՝ «Աշտարակի կամուրջը», «Սուրբ
Մարինե», «Արտակի ձորը», «Ձմեռն Աշտարակում» և այլն:

Հին Աշտարակն ուներ իր ուրույն դեմքը՝ հնության ու ժողովրդական
ճարտարապետության ինքնատիպ հուշարձանները, որոնք դաշն էին աշտա-
րակցու առօրյա գործունեության ու կենցաղի հետ: Նրանց հարևանությամբ,
նեղ ու կարճ փողոցներով ձգվում էին կամարակապ մուտքերով ու զարդա-
քանդակ պատշգամբներով բնակելի տներն ու տնտեսական օժանդակ շինու-
թյունները: Այժմ շատ կողմերով փոխվել է հին բնակավայրի պատկերը, և
նրա կառուցապատումը տարվում է ժամանակակից քաղաքաշինության հի-
մունքներով: Քաղաքի առաջին հատակագիծը մշակվել է 1949 թ., երկրորդը՝
1960 թ., իսկ 1975 թ. հաստատվել է նոր, գլխավոր հատակագիծը՝ մինչև
2000 թվականը, 35 հազար բնակչի համար:

Նոր Աշտարակը՝ Սովետական Հայաստանի արդյունաբերական ու
գիտական նշանավոր կենտրոններից մեկը, տարածված է Քասախ գետի զույգ
ափերին, ուր վեր են խոյանում նորակառույց բազում շինություններ, բնակելի
տներ, գործարաններ, Հայկական ՍՍՀ ԳԱ ինստիտուտների, պետական հիմ-
նարկների և մշակութային օջախների շենքեր:

Հատուկ ուշադրություն է դարձվում Աշտարակի Հյուսիսային մասի դի-
մագծի պահպանությանը, ուր գտնվում են քաղաքի հնության վկաները (Ծի-
րանավոր, Կարմրավոր, Սպիտակավոր, ս. Մարիանե, ս. Սարգիս եկեղեցիները),
նշանավոր աշտարակցիների հուշ-թանգարանները և ժողովրդական ճարտա-
րապետության ընտիր նմուշները: Այժմ հետազոտական ու վերականգնման աշ-
խատանքներ են տարվում դրանց կյանքը հարատևելու համար:

Աշտարակը զբաղեցնում է 880 հեկտար տարածություն՝ բնակելի ու հա-
սարակական շենքեր, զբոսայգիներ, Քասախի կիրճի հանգստի գոտիներ և
այլն: Ամբողջ քաղաքի բնակելի ֆոնդը ներկայումս կազմում է 313540 քմ.,
որից մասնավոր սեկտորը՝ 251840 քմ. կամ 3335 անհատական բնակարան,
իսկ պետական բնակելի ֆոնդ՝ 61700 քմ. մակերես:

Քաղաքի կառուցապատմանը իրենց եռանդուն մասնակցությունն են բե-
րում շինարարական 9 կազմակերպություն, որոնք անցած հնգամյակի
ընթացքում կատարել են 26 միլիոն ռուբլու շինմոնտաժային աշխատանք-
ներ:

Հին հուշարձանների կողքին՝ Աշտարակ քաղաքը զարդարում են հյուրա-
նոցի (ճարտ. Հ. Աչյան), թատրոնի (ճարտ. Յու. Յարալով), ՀԿԿ Աշտարակի

շրջկոմի (ճարտ. Ռ. Ալավերդյան) և շրջսովետի գործկոմի շենքերը և բազմաթիվ բազմահարկ այլ կառույցներ։ Ամեն տարի քաղաքի պետական բնակֆոնդը ավելանում է ավելի քան 5000 ք. մետրով։

Հատկապես վերջին տասնամյակներին լայն թափ է առել քաղաքային տնտեսության զարգացումն ու բնական միջավայրի և օդային ավազանի մաքրության պահպանման գործը։ Այս հարցերը հույժ այժմեական են դառնում նաև այն պատճառով, որ Աշտարակն ընկած լինելով հանրապետության հյուսիսային շրջանները, Լենինական, Կիրովական քաղաքները, Վրաստանի հայաբնակ շրջանները և Թբիլիսի քաղաքը Երևանին միացնող՝ միութենական նշանակության մայրուղիների խաչմերուկում, ամեն օր այստեղով անցնում են տարբեր տեսակի տասնյակ հազարավոր ավտոմեքենաներ, որոնք բացասաբար են անդրադառնում ինչպես միջավայրի, այնպես էլ օդային ավազանի մաքրության վրա։ Արդեն սկսվել է և մինչև հնգամյակի վերջը կավարտվի Աշտարակը շրջանցող մայրուղու և նոր, հինգերորդ կամրջի շինարարությունը, իսկ 1987 թ. կսկսվի ու կավարտվի քաղաքի 25 հեկակալորյա/ժամ հզորությամբ կենտրոնական կաթսայատան շինարարությունը, որով հնարավոր կդառնա փակել տասնյակ մանր կաթսայատներ, աղտոտումից ազատել օդային ավազանը և քաղաքի Աջափնյա թաղամասն ապահովել տաք ջրով։

1987 թ. կավարտվի նաև քաղաքի մաքրման հզոր կայանի և կոյուղու կոլեկտորի շինարարությունը, որը բարերար ազդեցություն կունենա քաղաքի բոլոր թաղամասերի վրա։

Աշտարակի բուռն աճը թելադրում էր մեծապես ավելացնելու քաղաքի ջրամատակարարումը։ Եթե 1935 թ. անցկացված Սաղմոսավան-Աշտարակ ջրատարը քաղաք էր հասցնում 10 լիտր վայրկյան ջուր, ապա հետագայում կառուցված նոր ջրատարները, որոնք սնվում են Նազրվանի, Բազմաղբյուրի, Կարբիի և Սաղմոսավանի սառնորակ աղբյուրներից, այժմ քաղաք են հասցնում 197 լիտր վայրկյան ջուր՝ Աշտարակը դարձնելով մեր միության՝ խմելու ջրով ամենից ավելի ապահովված քաղաքներից մեկը։ Առաջիկայում այդ աշխատանքները կշարունակվեն։

Խիստ ընդլայնվել է նաև քաղաքի կապի ցանցը, բարելավվել քաղաքային տրանսպորտի աշխատանքը։ Գործում են փոստ-հեռագրատունը, կապի մի շարք բաժանմունքներ, քաղաքային հեռախոսային հանգույցը 8787 կետով, որից քաղաքում՝ 4698, ռադիոհանգույցը՝ 2767 կետերով։ Քաղաքի բոլոր թաղամասերի ու կենտրոնի միջև երթևեկում են հարմարավետ ավտոբուսներ։ Քաղաքը հիմնականում գազիֆիկացված է։ Ամեն տարի բնակչությունը ստանում է 10,6 միլիոն խմ. բնական գազ։ Քաղաքի բարեկարգման նպատակով ամեն տարի ծախսվում են հարյուր-հազարավոր ռուբլիներ, որ աներևակայելի էր հին աշտարակցիներին։ Աշխատավորության հանգստի սի-

բած վայրերն են դարձել Կոմիտասի անվան զբոսայգին, քաղաքային այգին, Քասախի կիրճի 100 հեկտարանոց հատվածը։

Բարձրացել է աշտարակցիների կենսամակարդակը. ամեն տան կարելի է տեսնել հարմարավետ կահույք, ճոխ գրադարան։ Քաղաքի առևտրի և հասարակական սննդի 63 օբյեկտները միայն 1985 թ. կատարել են շուրջ 15 միլիոն ռուբլու առևտուր։ Քաղաքի կենցաղի 57 օբյեկտներ լավագույնս սպասարկում են բնակչությանը՝ դրանով իսկ թեթևացնելով նրանց հոգսերը և նպաստելով ազատ ժամանակն ու հանգիստը առավել արդյունավետությամբ օգտագործելու։

Նոր կյանքն իր հետ բերում է նոր ծեսեր, որոնց մեջ դժվար չէ տեսնել ինչպես ավանդական սովորույթների վերապրուկներ, այնպես էլ միանգամայն նոր բովանդակություն։ Աշտարակցին ամեն տարի հանդիսավորությամբ տոնում է մարտի 8-ի, մայիսի 1-ի, Հաղթանակի, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության, Հայաստանում սովետական կարգերի հաստատման տոները, բայց և չի մոռանում վարդավառի հնամենի տոնախմբությունը՝ իր պարերով ու ջանգյուլումներով։ Առաջացող ժամանակների հետ՝ աշտարակցու հիշողության մեջ արթնանում են հնամենի զրույցներն ու ավանդույթները, որոնք սովետական մարդու հոգեկան աշխարհի ազնվացման գործում քիչ դեր չեն խաղում։

Սովետական Միության կոմունիստական կուսակցության 27-րդ համագումարը սերունդների հոգևոր կապի ամրապնդման և անցյալի մշակութային արժեքների պահպանության հարցերը նորովի արծարծեց։ Դրանք պարտադրում են բոլոր աշտարակցիներին՝ կուսակցական և սովետական կազմակերպությունների ղեկավարությամբ հաղթականորեն ընթանալով դեպի գալիք՝ գուրգուրանքով պահպանել ու հաջորդ սերունդներին հանձնել մշակութային հին ու նոր արժեքները։

Սովետական անծայր հայրենիքում արդեն գործնական քայլեր են արվում պատմական քաղաքների ճարտարապետական նկարագրերը պահպանելու համար, վերականգնվում ու բարեկարգվում են հին կոթողներն ու նրանց շրջապատը։ Այս ամենի մեջ քիչ դեր չունեն կատարելու նաև բնօրրանի հնամենի կյանքն ու պատմությունը վերականգնող աշխատությունները, որոնցից մեկն էլ Երվանդ Շահազիզի՝ հրատարակության հանձնվող սույն գիրքն է, «Աշտարակի պատմությունը»։

Ա. Գ. ՄԵԼՔԻԿՅԱՆ

ՀԿԿ Աշտարակի շրջկոմի առաջին քարտուղար

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

1. ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ*

Աբբաս-Միրզա 63—64, 96, 107, 126, 128, 131, 136, 138, 139, 143, 144, 296, 305, 314—315
Աբելյան Հովհաննես 322
Աբեղյան Մանուկ 6, 260
Աբեղյան Մհեր 324
Աբիխ Հերման 20
Աբովյան Խաչատուր 6, 7, 17, 19—21, 23, 25, 121—123, 201, 213 («Վերք»), 274—275, 302—303, 305—306, 316
Աբովյան Կոստանդին 21
Աբովյանի ժառանգներ 20
Աբովյաններ 65—66
Աբրահամ Գ Կրետացի 94, 259
Աբրահամ Խոստովանող 12
Ագամյան Պետրոս 25
Ագոնց Նիկողայոս 14, 89, 260
Ազատենց Կարապետ 254—256
Ազատենց Շողակաթ 172
Ազատենց Ռստակ 128
Ազատենք 52, 172, 310
Ազատյանց Կարո տե՛ս Ազատենց Կարապետ
Ազատյանց Հովհաննես 279
Ազարիա Դառնեցի Պոռշյանց 196, 197
Ազգենց Կարապետ 128, 130
Ազգենց Սահակ 123
Ազգենք 123, 222
Ազիզյան Ատիկ 318, 319
Աժդահակ (դից.) 38—39
Ալամդարյան Հարություն 7, 15, 25, 274
Ալավերդյան Ռազմիկ 326
Ալեքսան արքեպիսկոպոս 89
Ալեքսանդր II 163
Ալիշան Ղևոնդ 168, 182, 193, 250—251, 259, 265, 284, 285, 290, 302
Ախնի (1701 թ.) 166
Ախվերդյան Գեորգ 258
Ականատես տե՛ս Գրիգոր վարդապետ Ականատես
Ակոբ, որդի Ապլղարիփի 184, 185
Աղա Մահմադ խան 131
Աղամալյան Մելիք-Սահակ 138
Աղամալյաններ 19
Աղայան Ղազարոս 23, 24
Աղանյանց Գյուտ 259
Աղասի («Վերքի» հերոս) 316
Աղբուղա, ծոռ Զաքարե Ամիրսպասալարի 27, 183, 184, 189—122
Աղպուղա տե՛ս Աղբուղա
Աղումենց Հակոբ 217, 259
Աղումենց Մանվել 200
Աղումյան Հակոբ 32
Աճառյան Հրաչյա 6
Ամատունի Սահակ 54
Ամատունիք 37, 95
Ամիր Հասան 193
Ամիր Ռուստամ 105
Ամիր Քուրդ 192, 193
Ամիրկոնա խան 45
Այվազովսկի Գաբրիել 11
Այվազովսկի Հովհաննես 24
Անանիա Շիրակացի 87, 259
Անանուն Ռավեննացի 264—267
Անդրեաս արքեպիսկոպոս 89
Անթանենց Հակոբ 259
Աննա (սուրբ) 126

* Անվանացանկը կազմել ենք Անահիտ Հակոբյանի աշխատակցությամբ։ Առաջին ցանկում չեն ընդգրկված աշխատության հեղինակի (Շահազիզ Եր.) և այն հրատարակության պատրաստողի (Հակոբյան Պ.) անունները։— Պ. Հ.

Անտոնենց Գրիգոր 127
Աշխեն (1323 թ.) 191
Աշոտ Ողորմած 171
Աշյան Հրանտ 325
Ապաղա ղան 193
Ապլղարիփ, հայր Ակոբի 184, 185
Ապովենք 48
Առաքել Դավրիժեցի 179—180, 259, 293—294
Ասլամազյան քույրեր (Երանուհի և Մարիամ) 324
Ասլանիկ. հայր Հակոբի 186
Ասնավոր, ամուսին Ղուտալշաքի 27, 172, 186, 189—191
Ասողիկ տե՛ս Ստեփանոս Ասողիկ
Աստղիկ (դից.) 314
Աստվածատուր (1323 թ.) 190—191
Ավագյան Արեշատ 324
Ավգալբեգյան Թադեոս 112, 260
Ավետիս, որդի Տերսամի 187, 192
Ավո (գող Ավո) 245
Արամյան Եսայի 283
Արամյան Ռաֆայել 324
Արամյան Վալտեր 217, 324
Արամյանց Ավետիս վարժապետ 164, 278—280
Արամյանց Բաբել 132
Արարատյան Հարություն 260
Արգըններ 60, 64, 198, 272
Արծրունի Գրիգոր 59, 60, 67, 158—160, 238, 258
Արծրունիներ (Հաղբատի) 192, 193
Արծրունիներ (Վասպուրականի) 93
Արշակ Բ 97
Արշակունիք 92—94, 112, 113, 251, 265
Արշավիր Կամսարական 87
Արշարունյաց տեր 96, 97
Արջուկ իշխան 27, 184
Արտաշիր թագավոր 112, 113
Աուզլեյ Ուիլիամ 291

Բաբաջանենց Իգնատիոս 129
Բաբելենց Մադո 60
Բագրատունիք 93, 94, 192
Բաղալենց Հովակիմ 132
Բազկեվիչ տե՛ս Պասկևիչ Ի. Ֆ.
Բալասան աղա («Ցեցերի» հերոս) տե՛ս Տեր-Հովսեփյան Ն.
Բախտավոր (1311 թ.) 187
Բահաթրյան Առաքել 9
Բահղլիճք 87
Բաղդասար (Ղարսեցի) տե՛ս Հարությունյան Բաղդասար
Բաղիշ տե՛ս Հարությունենց Մնացական
Բաստամյան Վահան 25
Բարաղամ (կամուրջի շինո՞ղ) 179
Բարդուղիմեոս առաքյալ 192
Բարխուդարյան Գեորգ 23
Բարխուդարյան Մակար 168
Բարխուդարյան Մկրտիչ 19
Բարխուդարյաններ տե՛ս Ղափանցյաններ
Բարսեղ, հայր աշուղ Քյանհանի 230—231
Բարսեղ արքեպիսկոպոս 20
Բարսեղ Կրոնավոր 173
Բարսեղյան Արարատ 322
Բեզակ 151, 158
Բեկնազարյան-Բզնունի Սարգիս տե՛ս Բզնունի Սարգիս
Բեհբուդով Վասիլի 150
Բենկենդորֆ Կ. Խ. 134, 135, 138
Բերբերյան Մինաս 17
Բերբերյան Ռուբեն 17
Բեքարյան Արա 324
Բզնունենց տոհմ 128, 200
Բզնունի Սարգիս (Տեր Սարգիս) 36, 44—45, 77, 106, 124—125, 164, 180, 199—200, 202, 232—234, 237—238, 243—245, 249, 258, 272, 278, 280—282
Բյուզանդացի Նորայր 25
Բոյախչոնց Թորոս 254
Բոշենք, Բոշյանց 52, 66
Բորյան Բագրատ 87
Բոցընենց Պետո 247
Բոցընենց Օվանես 247

Գալուստ եպիսկոպոս 177, 178, 271
Գալֆայան Խորեն 12—13
Գանձակաշա՞հ (1323 թ.) 191
Գասպարյան Խաչատուր 324
Գասպարյան Հրաչյա 180

Գարեգին արքեպիսկոպոս տե՛ս Հովսեփյան Գ.
Գեղամյան Բարսեղ 88
Գեղամյան Գաբրիել 67, 88
Գեղամյան Հովհաննես 67, 88
Գեղամյան տոհմ 88—89
Գեղամյանց Եղիշե 259
Գեորգ (սուրբ) 223
Գեորգ Ա կաթողիկոս 164, 250, 265, 302
Գեորգ Դ կաթողիկոս 279
Գեորգ խալֆա տե՛ս Շահազիզյան Գեորգ
Գերցեն Ա. 13
Գլադստոն 25
Գնթունի («Ցեցերի» հերոս) տե՛ս Արամյան Ա.
Գոլոշենց Այվազ 53
Գոլոշենք 53
Գոմշակերյան («Ցեցերի» հերոս) տե՛ս Շուխյանց Սարգիս
Գորգ (1311 թ.) 187
Գրեգոր քահանա (VII դ.) 188, 284—289, 301
Գրիբոյեդով Ա. Ս. 64, 259
Գրիգոր, Հայր Սարգիս քահանայի 191
Գրիգոր Եղուստ 171
Գրիգոր Ժ կաթողիկոս Ջալալբեկյան 105
Գրիգոր Լուսավորիչ 44—45, 296
Գրիգոր վարդապետ (1281 թ.) 185
Գրիգոր վարդապետ Ականատես 44—47, 51, 98, 168
Գրիգոր քահանա տե՛ս Գրեգոր քահանա
Գրիգորյան Գրիգոր 318, 319
Գրիգորյան Կամսար 14
Գուդովիչ Ի. Վ. 125, 126
Գևորգենց Հովակիմ 127
Գևորգենք 175

Դանել (1311 թ.) 187
Դանիել Դառնեցի 60
Դանիել կաթողիկոս 63, 66, 96, 126, 127, 258
Դաշտենց Խաչիկ 324
Դավիդով Սաշկա 25
Դավիթ (VII դ.) 188, 284—287, 289, 301
Դավիթ արքեպիսկոպոս (առաջնորդ Ջուղայի) 173
Դավիթ կաթողիկոս 126
Դատրմենց Գրիգոր 252
Դարեհ Վշտասպյան 82
Դիբիչ Ի. 135
Դոլուխանյան Մարկոս 278, 279
Դոնդարենց Առաքել տե՛ս Վարդազարյանց Առաքել

Եգյանց Կարապետ 16, 25
Եկանենց Խեչան 128
Եկանենց Հովհաննես 128
Եղիազարյան Հովսեփ 285
Եղիազարյան Սողոմոն 74, 258
Եղիկ (ղաչաղ) 162
Եղիշե 263, 264, 270
Ենանո՞ս (VII դ.) 285, 288, 289
Ենիկոլոպյան Հ. Կ. 20, 64, 259
Եպիսթենես Ամֆիպոլսեցի 85
Եսայի («Ջվարճալի հարսանիքի» հերոս) 199—200, 202
Երանոս (VII դ.) 286, 289
Երիցյանց Աղեքսանդր 63, 67, 260
Երմոլով Ա. Պ. 106—107, 127, 259
Եփրեմ կաթողիկոս 107, 127

Զաղենք 52
Զազյան Սարգիս 130
Զաքարե, որդի Աննավորի 186, 189—190
Զաքարե Ամիրսպասալար 45—46, 191——192
Զաքարյան Անուշավան 27
Զաքարյան Արշակ 217
Զաքարյաններ 37, 191—192
Զելիմանի Կարապետ տե՛ս Մարգարյան Կարապետ
Զելինսկի Ստեփան 54, 259
Զորյան Նորայր 31

Էլխաթուն (1311 թ.) 187
Էմին Գևորգ 324
Էմին Մկրտիչ 7, 8, 10, 15—16
Էրամ (Արամ), որդի Շեկ Վարդանի 178
Էրամենք (Արամյանց) 178
Էրխաթավի Ռափայել 97
Էփրիկյան հայր Սուքիաս 258

Թագուհի (1709 թ.) 173
Թագուհի, դուստր Սահակ երեցի 185
Թագուհի, մայր Սարգիս կազմողի 189
Թահմազ Ղուլի խան տե՛ս Նադիր շահ
Թահմասպ շահ 176
Թաղեաթին իշխան 192
Թաղիդյանց Մեսրոպ 177, 263—264, 272, 278
Թամազյան Մնացական 322
Թամանյան Ալեքսանդր 10
Թամթա խաթուն (1326 թ.) 186—187
Թելլու խանում, մայր Եր. Շահազիզի 8
Թովմա Մեծոփեցի 10
Թովմաս քահանա տե՛ս Տեր Թումաս
Թորամանյան Թորոս 10
Թորոս, պապ Ներսես Աշտարակեցու 63
Թորոս տե՛ս Ներսես Աշտարակեցի
Թորոս Կամսարական՝ մականվանյալ Խանդուլի 62—63, 67
Թորոսենց Մարտիրոս (և կինը) 128
Թորոսենք 109, 175, 196, 197
Թուխան, միաբան Ս. Մարիանեի 182
Թումանենց Անտոն 132
Թումանյան Լևոն 54—55, 260, 324
Թումանյան Հենրիկ 324
Թումանյան Հովհաննես 23
Թումանյան Նիկողայոս 322, 324
Թուրան (1323 թ.) 184

Ժիխարյով 203

Ինճիկյան Արամ 22
Ինճիճյան Հ. Ղուկաս 264
Իշխան վարդապետ 211—212
Իշտար (դից.) 314
Իսաբեկյան Էդուարդ 324
Իսմայիլ խան 296
Իսպիր, հայր Միկինի 246
Իսրայել Օրի 125
Իսրայելյան Ռաֆո 320
Իվանե, թոռ Զաքարե Ամիրսպասալարի 191—192
Իվանի բեկ (XVIII դ.) 316—317

Լազարյաններ 7
Լալամանու տղա 245
Լալայան Երվանդ 10
Լամարտին Ալֆոնս 13
Լաչինով Ե. Ե. 292, 294—299
Լեմկե Մ. 13—14
Լենին Վ. Ի. 311—313, 319
Լեո 260, 295
Լոռու-Մելիք-Քալանթար Աշխարհբեկ 24, 26, 182

Խաթունիկ, մայր Հովհաննեսի 182—183
Խալաթյանց Գրիգոր 25
Խալիպյան Հարություն 11
Խաղբակյանք 192
Խանաղյան Գևորգ 56, 278, 279, 281—282
Խանաղով տե՛ս Խանաղյան Գևորգ
Խանդուլենք 62
Խանդուլի տե՛ս Թորոս Կամսարական
Խանում, մայր Խոսրով խանի 58, 64, 198
Խաչատրյան Գայանե 11
Խաչատրյան Համլետ 180
Խաչատուր Կեչառեցի 193—194
Խաչիբարենց Պապան 128
Խեյրիսոֆոս 84, 85
Խեչան (տանուտեր) տե՛ս Շահազիզյանց Խեչան
Խեչան, որդի Հովակիմի 169
Խեչո (ղաչաղ) 162
Խլղաթենց Տեր Սուքիաս («Ցեցերի» հերոս) տե՛ս Բզնունի Սարգիս
Խլոդվիգ 92
Խոջա Փլավ 179, 300
Խոխոռունի-Արամյանց Ավետիս տե՛ս Արամյանց Ավետիս
Խոսրով (1323 թ.) 184
Խոսրով խան 58, 64
Խորասանյան Սարգիս 16—17
Խորենացի տե՛ս Մովսես Խորենացի
Խորենյան Վահան 325
Խորիշան, կին Գևորգ խալֆի 196, 197
Խութլուբուղա (Աշտարակի) 187, 193—194
Խութլուբուղա (Խուտլուբուղա), որդի Սադոն Արծրունու 27, 187, 191—194

Ծատուրյան Ալեքսանդր 17

Կամսարական Բարսեղ Եղնակի 278

Կամսարական Հարություն տե՛ս Տեր Հարություն քահանա
Կամսարական Ստեփան 24, 40, 97, 258
Կամսարականներ 8, 61, 64, 91
Կամսարականներ (Աշտարակի) 61—64
Կամսարականներ (Սուրմառիի) 64, 91, 96—97
Կայեն 183
Կանչելի (փաստաբան) 54
Կարապետ (սուրբ) 223
Կարապետ աղա տե՛ս Շահազիզյանց Կարապետ
Կարապետ Աղթամարցի (ծաղկող) 170
Կարապետ վարդապետ (Թիֆլիսի առաջնորդ) 316—317
Կարապետ վարդապետ (ուսուցիչ) 8
Կարապետյան Տեր Մարտիրոս 182
Կարդուխներ 83
Կարլոս Մեծ 92
Կիպերտ Ռ. 266, 267
Կիրակոս (1709 թ.) 173
Կիրակոս Գանձակեցի 194, 259
Կլապրոտ Հայնրիխ Յուլիուս 260
Կյուրիկյաններ 93
Կոգյան Հ. Սահակ 259
Կոխ Կարլ 250—251
Կոմիտաս վարդապետ 320
Կոստանյան Կարապետ 19, 182, 284
Կորշ Ֆյոդր 8
Կրասովսկի Ա. 135—144, 147, 175, 292—299, 305

Հագկերտ Բ 112
Հալաղու խան 192
Հակոբ (սուրբ) 45, 186
Հակոբ (տանուտեր), հայր Խեչանի 170
Հակոբ, որդի Ասլանիկի 186
Հակոբ էրեց (1292 թ.), Մեծ առվի նորոգող 51, 53, 189
Հակոբ էրեց (1317 թ.) 183, 191
Հակոբ կաթողիկոս 105, 173
Հակոբյան Խեչան տե՛ս Շահազիզյանց Խեչան
Հակոբյան Հովհաննես 290—292
Հայո՞ց (1326 թ.) 186—187
Հայրապետյան Շուշանիկ 322
Հաջի Նանա 128—129
Հասան խան 126, 128, 129, 131, 133, 144, 200, 203, 209
Հասանբեկ (խան) 188
Հասմիկ 322
Հարաթյան Էզրաս 318
Հարաթյան Մորուս 28
Հարություն Ղարսեցի 234
Հարությունենց Մնացական (Բաղիշ) 280, 281
Հարությունյան Բաղդասար 60, 131, 166, 205, 234
Հարությունյան Եփրեմ 60
Հարությունյան ընտանիք 60
Հարությունյան Հակոբ (թնդանոթաձիգ) 143
Հարությունյան Հովհաննես 279
Հարությունյան Մարգար 60, 131, 205
Հարությունյան Մնացական (բժիշկ) 166, 324
Հարությունյան Սեթ 260
Հաքստհաուզեն Ավգուստ 65—66, 121—122, 152, 259
Հերակլ կայսր 171
Հերակլ Բ (վրաց թագավոր) 96, 97, 196, 197, 210, 316—317
Հերիքնազ տե՛ս Թելլու խանում
Հյուգո Վիկտոր 13
Հյուսեին Ալի խան 105—107, 196, 248, 259, 315
Հյուսեին աղա 132—134
Հյուսեին խան, որդի Ջաֆար խանի 235
Հյուսեին խան տե՛ս Հյուսեին Ղուլի խան Ղաջար
Հյուսեին ղուլի խան Ղաջար 54, 63, 106—107, 123, 126—128, 209, 259, 315
Հյուսեին շահ 176
Հյուսյան Ռոբերտ 31—32
Հովակիմ, հայր Խեչանի 169
Հովակիմ արքեպիսկոպոս 89
Հովակիմենց Գրիգոր 63
Հովակիմենց Մեսրովբ 63, 128
Հովակիմենց Տեր Սիմեոն 63
Հովակիմենք 63
Հովհաննես, հայր Գեորգ խալֆի 197
Հովհաննես, որդի Խաթունկան 182—183
Հովհաննես արքեպիսկոպոս (Գեղարդակի՞ր) 89
Հովհաննես Դրասխանակերտցի 270
Հովհաննես Կարբեցի 178
Հովհաննես Ոսկերչյան Վաղարշապատցի 197, 260
Հովհաննես վարժապետ (XIX դ.) 275—277
Հովհաննիսյան Աշոտ 10
Հովսեփ Արղության 7
Հովսեփյան Գարեգին 24, 26—27, 32, 167—168, 182, 192—194, 258, 259, 284
Հոփսիմե կույս (Բայազետցի) 172
Հրահատ Կամսարական 87, 171
Հուգա 183
Հուստինիանոս Բ կայսր 172

Ղազար (ավետարանական) 184
Ղազար Փարպեցի 10
Ղազարյանց Շամիր 234
Ղազո 245
Ղալաչյան Մնացական 180
Ղայթմազյաններ 64
Ղափանցիք տե՛ս Ղափանցյաններ
Ղափանցյան Գրիգոր 24, 26, 171, 181, 260, 284—285, 314, 318, 322, 323
Ղափանցյան Կարապետ (բժիշկ) 324
Ղափանցյաններ 60, 241, 273
Ղափանցոց Ստեփան 273
Ղաֆադարյան Կարո 32, 286—288
Ղաֆադարյան Կորյուն 288
Ղոնաղչյան Կարապետ 283
Ղուլազյան Կարապետ 130
Ղուկաս արքեպիսկոպոս Արագածունի 20
Ղուկաս Կարնեցի կաթողիկոս 106, 316—317
Ղուտալշաք, կին Ասնավորի 27, 172, 186, 189—191

Ճանճապանենց Գարո 254—255
Ճանճապանենց Գրիգոր 128

Մաղաթյան Պետրոս (Սեյադ) 225
Մաթան, կին Խեչանի (1847 թ.) 16[illegible]
Մալխասյան Ստեփան 6
Մալտիկին, կին Թուխանի 182
Մակար կաթողիկոս 252
Մակարենց Մատթեոս 128
Մակարենք 48
Մակարյանց Ալեքսանդր 279
Մահմադ խան 107, 125—127, 129, 245, 259, 315
Մահմեդ 218
Մահմետ տե՛ս Մահմադ խան
Մաղաքիա Աբեղա 192, 259
Մամախաթուն, կին Վաչե իշխանաց իշխանի 45
Մամմատ (Մամմետ) խան տե՛ս Մահմադ խան
Մանանդյան Հակոբ 84, 112, 260, 264—270
Մանասե (VII դ.) 188, 284—285, 288, 301
Մանաս (խոջա) 174
Մանասեի որդիք 188, 284—286, 288, 289
Մանդինյան Սեդրակ 23
Մանվել երեց (գրիչ) 170
Մանվել Կյումուշխանեցի 7, 25, 314, 315
Մանուշարյան Գրիգոր եպիսկոպոս 126
Մառ Նիկողայոս 25, 38—39, 258, 265
Մարգար Ղարսեցի տե՛ս Հարությունյան Մարգար
Մարգարյան Կարապետ 170
Մարգարյան Պետրոս (սուրհանդակ) 136, 294
Մարգունի Էլեոնորա 31
Մարգունի Վաղինակ 31, 322
Մարեմ (1311 թ.) 187
Մարիամ, կին Գրիգոր Եղուստի 171
Մարկոս վարդապետ 132, 134, 204
Մարտիրոս, եղբայր տանուտեր Խեչանի 170
Մարտիրոս խալֆա 273
Մարտիրոս վարդապետ (վանահայր Մուղնու) 148
Մելիք Բաղալ («Ցեցերի» հերոս) տե՛ս Ստեփանյան Բեգլար
Մելիք-Հովհանջանյան Կ. տե՛ս Մելիք-Օհանջանյան Կ.
Մելիք Ցաղուր, հայր Մելիք Մինասի 96
Մելիք Սահակ տե՛ս Աղամալյան Մելիք-Սահակ
Մելիք-Մինաս Կամսարական-Արշարունյան-Սաաթբեկյան-Հակոբյան 66—67, 96, 97
Մելիք-Օհանջանյան Կարապետ 28

Մելիքխաթուն (1478 թ.) 168
Մելումենց Մարգար 65
Մելքումենց Եղիազար 128, 132
Մելքումենց Երվանդ 252
Մելքումենց Խաչատուր 200
Մելքումենց Կարապետ 128, 132
Մեծա՞նց, քույր Սարգիս քահանայի (1323 թ.) 190—191
Մեսրոպենց Կարապետ 259
Մըկդեմ, որդի Պռոշ իշխանի 193
Մժեժյան Մարտիրոս 275
Միլլեր Կոնրադ 266, 270
Միկին 246
Միկիտան Սաքո («Հացի խնդիր»-ի հերոս) 164, 202, 281
Միկոյան Անաստաս 321
Մինաս (գրիչ) 45
Միր Մահմուդ խան 176
Մխիթար Գոշ 88, 146
Մխիթարյաններ (Վենետիկ) 12
Մխիթարյաններ (Վիեննա) 26, 270
Մկրտիչ վարդապետ Շահազիզյանց 172, 173
Մկրտում (1751 թ.) 178
Մյասնիկյան Ալեքսանդր 11
Մնացական Կամսարական (Մնացականենց տոհմապետ) 62—63
Մնացականենց Ահարոն 62
Մնացականենց Գրիգոր 62, 63
Մնացականենց Հովակիմ 63
Մնացականենց Մարգար՝ մականվանյալ Շահ-Ազիզ 62—63
Մնացականենք 62—63
Մոծակենց Գրիգոր 179—180, 294
Մոծակենք (Երևան) 179—180, 294
Մովսես Գ կաթողիկոս 45, 105
Մովսես Խորենացի 92, 97, 260, 270
Մովսես Սյունեցի տե՛ս Մովսես Գ կաթողիկոս
Մովսիսյան Հուսիկ վարդապետ 171, 258, 260
Մորիեր Ջեյմս 250—251, 289—291
Մորուս տե՛ս Հասրաթյան Մորուս
Մռավյան Ասքանազ 19, 170
Մսերյան Մսեր 8, 19
Մստոկոր (քուրդ) 234
Մուխսոնց Օնես 259
Մուխսոնք 81
Մուխրամ Իվանի բեկ տե՛ս Իվանի բեկ
Մուրադյան Հրայր 22
Մուրադյան Նշան 6
Մուրադյան Պարույր 285, 288, 289
Մուրավյով (ձախ էսեռ) 312
Մուրավյով Անդրեյ 302—305
Մուց (աղավաղված անուն) 293—294

Յաղուբ խան 61, 62, 156
Յարալավ Յուրի 325

Նադիր շահ 94
Նազ, մայր Սարգիս քահանայի 191
Նազարյանց Ստեփանոս 7, 9, 16, 19, 23, 24
Նալբանդյան Դմիտրի 324
Նալբանդյան Ղազարոս 18
Նալբանդյան Միքայել 6, 7, 9—15, 17, 18, 21, 23
Նահապետյան Թորգոմ 31
Նահապետյաններ 324
Նահատակ իշխան տե՛ս Իշխան վարդապետ
Նաղի խան 144
Նաջաֆ Ղուլի բեկ 235
Ներսեհ Ապոհիպատ տե՛ս Ներսեհ Կամսարական
Ներսեհ Կամսարական (VII դ.) 87, 171, 284
Ներսեհ Կամսարական (Շահազիզյանների նախահայր) 61
Ներսես Աշտարակեցի 60, 63, 67, 89, 106—107, 125—138, 144—145, 147—148, 175, 177, 198—200, 203, 204, 259, 271, 279—280, 292—299, 302, 304, 305, 314—316
Ներսես արքեպիսկոպոս տե՛ս Ներսես Աշտարակեցի
Ներսես Ե (V) կաթողիկոս տե՛ս Ներսես Աշտարակեցի
Ներսեսի հայր տե՛ս Տեր Հարություն
Ներսիսյան Հրաչյա 322
Ներսիսյան Մկրտիչ 292, 293
Նիկոլայ Պավլովիչ տե՛ս Նիկողայոս I
Նիկողայոս I 125, 200
Նուրին (դից.) 224
Նուրմահալ, կին խոջա Մանասի 174

Շարոյենք 48
Շագում վարժապետ 8
Շահ-Աբբաս 58, 59, 131
Շահ Սըլեման 173
Շահազիզ Արմենակ 324
Շահազիզ Սմբատ 6—8, 16, 17, 22—23, 24, 29, 63, 228—230, 240, 255, 258, 281, 283, 309, 310, 324
Շահազիզ-Կամսարական Կարապետ տե՛ս Շահազիզյանց Կ.
Շահազիզ (Շահ-Ազիզ) կամսարականների տոհմ 58, 61, 63, 111, 156, 175, 259, 295
Շահազիզենց Կարո (Քոռ Կարո) 281
Շահազիզենց Ղևոնդ 248
Շահազիզենց տոհմ 127, 128, 180, 197, 259
Շահազիզենք տե՛ս Շահազիզյաններ
Շահազիզյան Աշոտ 31
Շահազիզյան Գևորգ 31
Շահազիզյան Լիպարիտ 31
Շահազիզյան Լևոն 283
Շահազիզյան Հովակիմ (Եր. Շահազիզի հայրը) 8
Շահազիզյան Սարգիս 234
Շահազիզյան Վաչագան 322
Շահազիզյան-Կամսարական Իսում տե՛ս Շահազիզյանց Իսում
Շահազիզյաններ 29, 61—62, 65—67, 174—175, 230
Շահազիզյանց Գևորգ 195—197
Շահազիզյանց Իսում 29, 204—205, 234, 246, 247, 259, 278, 279
Շահազիզյանց Խեչան 65, 129—134, 170 203, 204
Շահազիզյանց Կարապետ 60, 63—66, 96, 111, 128—131, 133, 148, 198, 200, 203, 258—259
Շահազիզյանց Հայկ 254, 255, 283
Շահազիզյանց Հարություն 65, 259
Շահազիզյանց Հովակիմ, որդի Կարապետ աղայի 65
Շահազիզյանց Շամիր 276
Շահազիզյանց Սմբատ տե՛ս Շահազիզ Սմբատ
Շահազիզյանց տուն տե՛ս Շահազիզենց տոհմ
Շահապագ (փոքր) 45
Շահինյան Մարիետա 68—69, 217, 260, 320
Շահխաթունյանց Հովհաննես 51, 172, 182, 192, 258, 284, 285, 299—302, 304—306
Շահնազարյան Ալֆրեդ 31
Շահնազարյան Արշակ 324
Շահնազարյան Գարո տե՛ս Ճանճապանենց Գարո
Շահնազարյան Շապուհ 273—275
Շահնշահ, որդի Զաքարե Ամիրսպասալարի 45, 191—192
Շահումյան Ստեփան 321
Շեկ Վարդան 178
Շերբարոք, հայր Ամիր Քուրդ իշխանի 193
Շնհավորենք 48
Շոպեն Իվան 41—42, 120—121, 259
Շտեկ (դից.) 38—39
Շուխյանց Մինաս 234
Շուխյանց Սարգիս 163—164, 204—205, 278 279
Շուխյանք տե՛ս Շուխոնք
Շուխոնց Բեգլար 60
Շուխոնց Սերգեյ տե՛ս Շուխյանց Սարգիս
Շուխոնք 52, 132, 173, 204, 223, 260, 301, 310
Շուշան, կին Ներսեհ Կամսարականի 171

Ոսկանյան Արուս 322
Ոսկանյան Գևորգ 325
Ոսկերչյան-Վաղարշապատցի տե՛ս Հովհաննես Ոսկերչյան Վաղարշապատցի

Չալարյան Կարո 179
Չալարոնք 179
Չալիկյան Գրիգոր 322
Չամչյան Միքայել 274

Պապայան Արամաշոտ 322
Պասկևիչ Ի. Ֆ. 131, 134, 135, 137, 138, 144, 145, 147
Պատկանյան Գաբրիել 15, 19
Պատկանյան եղբայրներ (Գաբրիել և Պետրոս) 19

Պատկանյան Ռափայել 6, 7, 10, 11, 15—17, 21—22, 24, 25
Պատկանյան Քերովբե 16, 25
Պատկանյաններ 7
Պատրոն (բջնեցի) 168
Պետերման Հ. 19—20
Պետին 48
Պետրոս տե՛ս Մարգարյան Պետրոս
Պետրոս տե՛ս Քյանհան (աշուղ)
Պետրոս երեց 185
Պետրոս Մեծ 125
Պետրոսենց Շամո 60
Պետրոսենք 48
Պետրոսյան Վարդգես 324
Պիսարև (հիդրավլիկ) 54
Պիտում 106
Պլինիոս (կրտսեր) 90
Պողոսյան Պողոս 32
Պոտտո Վ. 136, 138—143, 258
Պռոշ (Պռուշ) իշխան 192—194
Պռոշյան Գագիկ (բժիշկ) 324
Պռոշյան Պերճ 17, 23, 24, 29, 46—47, 49—50, 59, 61, 80, 162—164, 175, 197, 200—202, 205, 208, 214—217, 220—221, 225—228, 248—249, 255, 258, 259, 272—282, 308, 311, 316, 319, 322, 324
Պռոշյան Պռոշ 311—313, 319
Պռոշյաններ 60—61
Պտղոմեոս 267
Պուշկին Ա. Ս. 16—17
Պետինգեր (Հռոմեական ճանապարհացույց-քարտեզի ուսումնասիրող) 264—265, 267—270

Ջալալյանց Սարգիս 276
Ջաֆար խան 128, 137, 144, 200, 235
Ջիմ (ոմն) 69
Ջիվիլեգով Ալեքսեյ 11
Ջհան շահ 61, 62, 156
Ջոնսոն Ջոն 289—292

Ռավեննացի տե՛ս Անանուն Ռավեննացի
Ռեթեոս եպիսկոպոս 89
Ռոստակես կաթողիկոս 188
Ռուբեն իշխան 94
Ռուբինյանք 94

Ս. (ոմն) 69
Սաղումենք 241
Սաղուն, որդի Ամիր Քրդի 193
Սաղուն Արծրունի 27, 98, 192—194, 302
Սաղուն իշխան 27, 175, 190—194, 302
Սաժումենց Աղո 53
Սաժումենց Սիմեոն 65
Սաժումենք 241, 324
Սաժումյաններ տե՛ս Սաժումենք
Սալլանթյան Միքայել 7, 25
Սալտիկյան Գրիգոր 11
Սահակ դպիր (ծաղկող) 45
Սահակ երեց (1281 թ.) 185
Սահակ Կամսարական 87
Սահառունի Սահակ քահանա 273
Սաղումյան Սուրեն 178, 289
Սամփսոն («Ցեցերի» հերոս) 162
Սանասարյան Մկրտիչ 25
Սատաթրեկյան-Կամսարական Միրզա Թադեոս 67
Սարգիս (սուրբ) 180
Սարգիս, հայր Վաչե իշխանաց իշխանի 45
Սարգիս քահանա 190—191
Սարգսյան Խորեն 20, 22, 278
Սարյան Մարտիրոս 6, 10, 11, 32, 324
Սարքիս կազմող (1184 թ.) 189
Սաֆար Ալի բեկ 122—123
Սաֆարյան Նվեր 318, 320
Սելիմ խան 129, 136
Սետա, քույր Սարգիս քահանայի 191
Սերնո-Սոլովևիչ Ն. Ա. 13
Սիթի խաթուն, կին Աղբուղայի 27, 183, 184, 189—192
Սիմեոն Երևանցի 105—106, 195—197, 259
Սիմեոն կաթողիկոս տե՛ս Սիմեոն Երևանցի
Սիմոնենց Գևորգ 128
Սիսակենց Սմբատ 254, 256
Սիսակյան Նորայր 322, 323
Սիսո 283
Սմիրնով Յա. Ի. 171
Սողոմոն, թագավոր Իմերեթի 96
Սողոմոնենց Գասպար 106
Սողոմոնենք 177
Սոնա («Ցեցերի» հերոսուհի) 162
Սոսանվեր 260, 306—308
Սոփիա, դուստր Աշոտ Ողորմածի, թագուհի Վրաց 171
Ստալին Ի. Վ. 311
Ստեփան տե՛ս Տեր-Առաքելյան Ստեփան
Ստեփան աղա 303
Ստեփան արքեպիսկոպոս 89
Ստեփանյան Բեգլար 163, 164
Ստեփանոս Ասողիկ 164, 258, 265, 270, 302
Սրապիոնյան-Լուկաշին Սարգիս 11
Սուխտելին 138, 145
Սունդուկյան Գաբրիել 17, 18
Սուսամբար, մայր Ներսես Աշտարակեցու 199
Սուրենյանց Հակոբ քահանա 8
Սուրենյանց Վարդգես 24—25
Սուքիասենց Ներսես 200
Սուքիասյան Ս. 283
Սուքիասյան Սուրեն 31

Վագներ Մորից 302—303, 305—306
Վահան խալֆա 272—273
Վահան Կամսարական, հայր Ներսեհ Կամսարականի 172
Վահան Մամիկոնյան 305
Վաղարշակ թագավոր 92—93
Վաչե իշխանաց իշխան 45
Վաչուտյան տոհմ 26
Վասակ, որդի Պռոշ իշխանի 193
Վասակ Սյունեցի 263
Վասիլև Վ. Ե. 260
Վարդ խաթուն 8
Վարդազարենց Բեկլար 234
Վարդազարենք 81
Վարդազարյան Գաբրիել 217
Վարդազարյաններ 321
Վարդազարյանց Առաքել 217
Վարդազարյանց Գրիգոր վարդապետ 271
Վարդան եպիսկոպոս (1447 թ.) 188
Վարդանանք 237—238
Վարդանյան Սահակ 60, 64, 198, 272, 278
Վարդանյան Փիլիպոս 11, 23, 25
Վարդիթեր («Սոս և Վարդիթեր»-ի հերոսուհի) 29, 221
Վարդիկ (նահատակ) 177
Վեհապետյան Գևորգ արքեպիսկոպոս 60, 259, 281
Վեսելովսկի Ալեքսեյ 8
Վիրապյան Գևորգ 324
Վորոնցով Մ. Ս. 152, 295
Վռամ թագավոր 113
Վրանգել 293
Վրթանես եպիսկոպոս 60, 173, 197, 198, 271
Վրույր Արտաշես (լուսանկարիչ) 32

Տանտալոս (դից.) 44
Տաշյան Հակոբոս 6
Տեր-Ազարյանց Մ. 19
Տեր Առաքել 273
Տեր-Առաքելյան Հովհաննես տե՛ս Պռոշյան Պերճ
Տեր-Առաքելյան Ստեփան, հայր Պ. Պռոշյանի 200, 263
Տեր-Առաքելյաններ 60—61
Տեր-Ավետիքյան Նազար (Նորքեցի) 74
Տեր-Գրիգորյան Խաչատուր 275
Տեր Թումաս (1268 թ.) 175, 190, 192, 302
Տեր-Կարապետյան Ներսես 19
Տեր-Հակոբյան Սենեքերիմ 20, 170
Տեր Հաջենց Աբգար 127
Տեր Հարություն, հայր Ներսես Աշտարակեցու 63, 69, 175, 199, 258, 259, 295, 299
Տեր-Հովսեփենք 241
Տեր-Հովսեփյան Նիկողայոս 60, 164, 255, 278
Տեր-Հովսեփյան Ստեփան 60, 65, 130, 205, 234
Տեր-Հովսեփյանց Հարություն 234
Տեր-Միքայելյանց Ղուկաս 132
Տեր-Մկրտչյան Գալուստ 6
Տեր-Պետրոս Կամսարական 62, 63
Տեր-Պողոսյան հ. Պետրոս 270
Տեր Սարգիս քահանա 62
Տեր-Սիմոնենք (Շահազիզյան տոհմից) 230, 241
Տեր Ստեփան 277
Տերտում (1285 թ.) 187, 192
Տիգրանյան Լևոն 25
Տիկնանց Տիկին (1321 թ.) 27, 184
Տիրիրաղ 83, 85
Տնտեսենց Գասպար 275

Տնտեսենց Հակոբ 131—132
Տոլմաչևսկայա Նատալյա 27
Տոմաշեկ 266
Տփանենց Հարություն 173, 197
Տփանենք 60, 173, 197

Ցիցիանով Պ. Դ. 125, 127

Ուզա տե՛ս Հուզա

Փանյան Մելքոն 230
Փարվանենց Արզուման 200
Փարվանենց Փարվան 128, 168—169
Փարվանենք 81, 321
Փարվանյաններ տե՛ս Փարվանենք
Փարվանյանց Գրիգոր 82, 301
Փարվանյանց Եղիսաբեթ 169
Փափազյան Հակոբ 64
Փափազյան Վահրամ 322
Փիլիպպոս կաթողիկոս 105
Փիլումենց (՞) Խեչան 234

Փոլատենց Սարգիս 259

Քալանթար Աշխարհբեկ տե՛ս Լոռու-Մելիք-Քալանթարյան Ա.
Քյանհան Բարսեղ օղլի 230—231
Քյարամ (ղաչաղ) 162
Քյարխանով (գավառապետ) 149, 225
Քսենոֆոնտ, Քսենոֆոնտես 82—85, 111, 206
Քրիստոս 82, 173, 174, 188—191, 218, 296
Քուրդ իշխան տե՛ս Ամիր Քուրդ

Օգարյով Ն. 13
Օրբելի Հովսեփ 22, 31, 259
Օրոնտաս 83

Ֆաթալի շահ 63, 96, 126, 128, 259
Ֆերզուլլա բեկ 234
Ֆերոյենց Տեր Սահակ տե՛ս Վարդանյան Սահակ
Ֆյոդորով (քահանա) 142
Ֆրեն Քրիստիան 19

2. ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ*

Աբասաբադ 137
Աբարան տե՛ս Ապարան
Աբբասգյոլ 132
Ագիաման գետ 211
Ազատենց աղբյուր 52, 310
Ազգենց կալ 221, 222
Ալագյազ տե՛ս Արագած
Ալաման 171, 284, 285
Ալաշկերտ 132, 133, 200, 204, 264
Ալեքսանդրապոլ 8, 235, 241, 245
Ալեքսանդրապոլի գավառ 149, 232, 307
Ալուպկա 229
Ախալցխա 270
Ախալքալակ(ք) 78, 241
Ախալքալաքի գավառ 307
Ախար-Բախար 238, 250
Ախուրյան գետ 235
Ակոռի 148
Աղթամուր 65
Աղիովիտ գավառ 86
Աղկունծ գյուղ 45
Աղունատուն 105
Աղքատների բաղնիք 217
Ամարաթ 232
Ամբերդի ձոր 219
Ամենափրկիչ սբ. Գեորգ եկեղեցի 167, 172, 173, 198—202, 223, 258, 271—274, 277, 281, 300, 301
Ամենափրկչի թաղ 165, 167, 168, 172
Այծամանց երկիր 184, 191
Այղրգյոլ լիճ 281
Այրարատ բնաշխարհ 7, 86, 95
Այրարատյան աշխարհ տե՛ս Արարատյան աշխարհ
Այրարատյան դաշտ տե՛ս Արարատյան դաշտ
Այրարատյան նահանգ տե՛ս Արարատյան նահանգ
Անապատ եկեղեցի 50, 223

* Ցանկում չեն ընդգրկված «Աշտարակ» և «Հայաստան» անունները։

Անգլիա 290
Անդրկովկաս 163, 224, 225, 249, 251, 280
Անդրկովկասյան երկիր 42
Անի 61
Աշնակ 263—264
Աշտարակ (գյուղ Բագրևանդում) 164, 302
Աշտարակի առու տե՛ս Մեծ առու
Աշտարակի բարձրավանդակ 214
Ապարան 43, 78, 80, 129 135, 138, 200, 232, 294, 303, 310
Ապարան գետ տե՛ս Քասախ գետ
Ապարանի դաշտ 49
Ապարանի ձոր տե՛ս Քասախի ձոր
Ապարանի ջուր 41, 43, 44, 257
Ապովենց լիր 48
Ապուլում (Ապոլում) 266
Աջախառու 182—183
Առաչագյոլ 53
Առբերան գավառ 86
Ասիա 232
Աստվածընկալ գյուղ 244
Ատրպատական 102, 145
Արաբստան 216
Արագած (լեռ, սար) 42—44, 49, 51, 78, 80, 122, 219, 228, 231, 264, 296, 303, 306, 310
Արագածոտն գավառ 7—8, 36, 39, 95, 176, 191, 209, 228, 233, 250, 263—265, 271, 302, 310
Արազ տե՛ս Արաքս
Արածանի 82
Արայի լեռ (սար) 213, 251
Արայի սովետ. տնտեսություն 321
Արարատ 251, 304
Արարատյան աշխարհ 23—24, 271, 304
Արարատյան դաշտ 36, 42, 53, 123, 125, 131, 200, 214, 217—219, 226, 235, 252, 279, 300 (Արարատ), 306
Արարատյան երկիր 27, 35, 58, 127, 145, 175, 178, 198, 233
Արարատյան նահանգ 39, 232
Արարատու դաշտ տե՛ս Արարատյան դաշտ
Արաքս 49, 232, 290, 307
Արդահան 266, 270
Արդաշար 266
Արզաքյան 211, 213
Արզաքյանի անտառ 211
Արզնի 60, 241
Արզնի—Շամիրամ ջրանցք 321
Արզրում 200, 243
Արթիկ 127
Արծրունյաց թագավորություն 93
Արմավիր (հին) 266—267, 270
Արմավիր (նոր) 24
Արմավրա դաշտ 145
Արմենիա 85
Արշակավան 91, 97
Արշարունյաց գավառ 66, 97, 171—172
Արտաշատ 264—267, 270, 304
Արտաքսատա տե՛ս Արտաշատ
Արուճ 264
Արփաչայ (Գարվո գետ) 235
Արևելյան Հայաստան 112, 231, 232, 306
Արևմտյան Եվրոպա 93
Արևմտյան Հայաստան 271, 311
Աւշականոյ հանդ տե՛ս Օշականի հանդ

Բագրատունյաց թագավորություն (հարըստություն) 93, 94
Բագրևանդ 164, 302
Բազմաղբյուր 326
Բաթոինչ 105
Բալթիկ ծով 229
Բայազետ (հին) 133
Բայանդուր 96, 232
Բայինդուր տե՛ս Բայանդուր
Բաշապարան (Բաշ-Ապարան) 310, 318
Բասեն 200
Բեռլին 243, 249, 320
Բեսարաբիա 147, 200
Բերդաթաղ 38, 165, 178, 234, 307, 318
Բերդի թաղ տե՛ս Բերդաթաղ
Բիրական տե՛ս Բյուրական
Բլուր գյուղ 96
Բյուզանդիա 94
Բյուրական 60, 213, 260, 323
Բոհրան-սու 83
Բոշենց աղբյուր 52
Բորչալու 134
Բրեստ 312

Գանձակ 127
Գառնի ամրոց 304
Գառնի ավան 196
Գավալա 266
Գաուլիտա (Գաուլիտիա) 266, 270
Գեղամ տե՛ս Գեղարքունիք
Գեղարդավանք 304
Գեղարքունիք 88, 200
Գըլասոր գյուղ 132
Գյուլագարակ 59
Գյումրի 78, 245
Գոմաձոր 61
Գոմշախրամ 176, 250
Գուրգուֆ 229

Դալլար 213
Դալլու-չայ 43, 55
Դալմայի ջրանցք 116
Դալմաներ (Աշտարակի այգիներ) 48
Դալմի այգիներ (Երևան) 246
Դաղստան 231
Դամասկոս 193
Դառապավոր այրեր 176—178
Դարաչիչակ 200
Դարա 173, 197
Դիգի կոնդ (Օշականում) 136
Դոխկուզներ 132, 133
Դսեղ 59
Դվին 112, 304
Դրասխանակերտ 270—271
Դուբելն(՞) 229
Դուռնուկ (կալվածք) 65

Եղվարդ 39, 61, 105—106, 212, 264
Եղվարդի առու 211
Եղվարդի դաշտ 49
Եվրոպա 91—93, 232, 243
Երասխ 49, 126, 131—134, 145
Երասխի դաշտ 251
Երեք խաչեր (Կարմրավոր) 175
Երվանդաշատ 266
Երուսաղեմ 180, 193
Երևան 8, 10, 39, 49, 52, 54, 56, 61—63, 79—81, 106—107, 110, 116, 123—125, 127, 128, 130, 131, 133—135, 143, 145, 149, 156, 166, 170, 179, 180, 195, 196, 200, 203, 204, 209, 225, 230—235. 238, 240, 241, 245—252, 263, 264, 273—275, 290—292, 297, 298, 304 305, 315, 316, 320, 326
Երևանա (Երևանու) երկիր 233, 243
Երևանի բերդ 137, 144, 226
Երևանի գավառ 149, 155, 157
Երևանի խանություն 126, 134, 137, 145
Երևանի հարթություն 49
Երևանի մարզ տե՛ս Հայկական նահանգ
Երևանի (երևանյան) նահանգ 59, 149, 152, 157, 159, 260, 306
Երևանի սարդարություն 74, 99—105, 111, 113—121, 147

Զաղենց ջրլիցք 52
Զագի դուզ 69
Զանգեզուր 60
Զանգի տե՛ս Հրազդան
Զառ 96
Զեկարի լեռնանցք 266, 270
Զեյվա 149
Զորավոր եկեղեցի (Երևան) 170

Էջմիածին (վանք) 9, 39, 63, 87—89, 106, 107, 125—128, 131, 135—139, 142—144, 164, 197, 198, 200, 223, 257, 259, 260, 271, 273, 296, 297, 300, 305, 314, 315
Էջմիածին (գյուղ) 54, 105, 106, 245—247, 297
Էջմիածնի աթոռ տե՛ս Էջմիածին (վանք)
Էջմիածնի գավառ 56, 150, 232, 235, 278, 306, 320
Էջմիածնի գավառամաս 149
Էջմիածնի հարթություն (տափարակ) 141, 305
Էրմու տե՛ս Մերկուրիում

Թալին 60, 68, 171, 192, 284—285
Թալիշ 60
Թայչարուխ 213
Թավրիզ 62, 134, 145, 200
Թաքիա 310
Թբիլիսի 326
Թելավ 196
Թեհրան 134

Թեոդոսիա 195
Թեջրլու 96
Թիֆլիս 54, 64, 65, 81, 97, 126, 127, 129, 144, 147, 195—200, 202, 225, 230, 275, 276, 282, 292, 311, 314, 317
Թիֆլիսի նահանգ 148—149, 151, 152, 157
Թորոսենց գերեզման 175, 197
Թորոսենց կալ 109, 196
Թուխ Մանուկ (մատուռ՞) 223
Թուրքահայաստան տե՛ս Արևմտյան Հայաստան
Թուրքիա 131, 133, 231, 233, 235
Թուրքմենչայ 145

Իգդիր 234
Իգդիրու հանդ 233
Իլանչալան 160, 227, 260, 309
Իմերեթիա 96
Իսկուրիա 266
Իսպահան տե՛ս Սպահան

Լենինական 326
Լենինգրադ 68
Լիլով 196
Լոմի առու 47, 48, 66, 77
Լոնդոն 290
Լոռի 127

Խեչի գըչի ճամբա 206
Խնթերք 39, 48, 77
Խշմարագողի թաղ 174
Խոյ 200
Խոշխաբար 96
Խոպաններ տե՛ս Խուրաններ
Խոջա-բաղ 43, 44
Խոջա Փլավի կամուրջ 50, 64, 176, 179—180, 251, 264, 290, 293, 298, 300, 304—305
Խոսպիա 270
Խորասան 131
Խորհրդային Հայաստան 39—41
Խուրաններ 39, 77, 220

Ծակ դուռ քուչա 206
Ծակ (Ծաղ) խաչ 175, 192, 193, 302
Ծակ քար տե՛ս Ծակ խաչ
Ծաղկեվանք 213, 223

Ծիրանավոր սուրբ Աստվածածին 36, 38—39, 81, 98, 165—168, 181, 223, 234, 250, 271, 300, 310, 325
Ծիրանավոր եկեղեցի (Փարպի գյուղում) 300, 310

Կալկաթա 60, 173, 197, 198, 272
Կախեթ 241
Կամուրջ տե՛ս Խոջա Փլավի կամուրջ
Կամուրջ (հնագույն) 179
Կայենո բերդ 192—194
Կասպիան (Կասպի) 266
Կավահանքի դուզ 174, 234
Կավահանքի թաղ 165
Կարակալա 266
Կարբի 39, 43, 44, 47, 51, 60, 160, 264, 309, 326
Կարբի (մհալ) 60, 64
Կարբի-բասար 53, 105, 109, 147
Կարդուխների երկիր 83
Կարմիր կամուրջ (Երևանի) 179
Կարմրավոր տե՛ս Կարմրավոր սուրբ Աստվածածին
Կարմրավոր սուրբ Աստվածածին 26, 51, 53, 81, 98, 109, 167, 168, 171—173, 181, 188—191, 196, 198, 223, 260, 264, 270, 271, 283—290, 325
Կարմրավորի թաղ 165, 171, 318
Կարմրավորի թումբ 175
Կարս 60, 127, 200, 235, 266, 270
Կարսի նահանգ 171, 284
Կարուց (Կարսի) թագավորություն 93
Կարփի տե՛ս Կարբի
Կենտրիտես գետ տե՛ս Բոհդան-սու
Կիլիկիա 94
Կիսլովոդսկ 229
Կիրակի տե՛ս Սուրբ Կյուրակե
Կիրովական 326
Կյուրիկյան թագավորություն 93
Կոբլիան 266
Կողբ 96, 133, 134, 145, 204, 213, 232, 234
Կոնդախսազ 267, 270
Կոնդեսո 266—267
Կոշ 223, 264
Կովկաս 52, 135, 136, 140, 229, 232
Կուաշ տե՛ս Կոշ

Կուլապ գյուղ 132, 234
Կուր գետ 270

Հաղախաչ (Կարմրավորի բակում) 173
Հաղբատ (գյուղ) 19, 21, 94
Հաղբատ (վանք) 27, 170, 192, 193
Համամլու 213
Հայկական նահանգ 41—42, 146—151, 293
Հայոց աշխարհ 146, 147
Հանավանք տե՛ս Հովհաննավանք
Հանդի քթուկ 48
Հաշտենից գավառ 86
Հառիճո վանք 275
Հասան խանի առու 244
Հարավային Ռուսիա 7, 9, 10
Հերեր 52, 176, 178, 299 (քարանձավներ)
Հյուսիսային Կովկաս 24
Հնդկաստան 60, 173, 197, 198, 290
Հովհաննավանք 44, 52, 160, 223, 271, 296, 303, 309
Հովհաննավանք (գյուղ) 296, 303
Հռիփսիմեի վանք 136
Հրազդան (գետ) 53
Հուշի (Ուշի) 39, 44, 52, 60, 160, 304, 309

Ձիաքար 50
Ձորաբաշեր 39, 77
Ձորագետ 192
Ձորահորիկ 39

Ղազախի շտաբ (Սև ջրի մոտ) 149, 281
Ղազրին 131, 200
Ղանդահար 176
Ղանլիջա տե՛ս Մարմաշեն
Ղարաբաղ 131, 134
Ղարաբուլախ 136
Ղարայազ 196
Ղարաչորան 211
Ղարաքիլիսա 127
Ղարս տե՛ս Կարս
Ղափան (Կապան) 60
Ղափլանթու 200
Ղըշլախ 127
Ղզլթամիր, Ղըզլ-Թամուր տե՛ս Ղզլթամուր
Ղզլթամուր 54, 65, 260
Ղոթուր 160, 309
Ղոմլուպոճախ գյուղ 132
Ղոմլուջա գյուղ 132
Ղրիմ 80, 229, 241
Ղուլիջան 257
Ղուրդուղուլու 97

Ճանկի (Ճանկիո) 267

Մազանդարան 176
Մակու 200
Մահկանաբերդ 192—194
Մասիս (Մեծ) 209, 306
Մասիս (Փոքր) 251, 306
Մասիսի դաշտ տե՛ս Արարատյան դաշտ
Մասիսի վիհեր 219
Մաստարա 60
Մաստարայի եկեղեցի 300
Մարմաշեն 61, 267, 270
Մարտիրոսաց քաղաք 192
Մաքու տե՛ս Մակու
Մելիքի բախչա 46, 47, 52, 111, 217
Մելիքքյանդ 232
Մեծ առու 41, 46, 48, 51, 53—56, 66, 98, 129, 176, 189, 215 (առու), 228, 294 (ջրմուղ), 300 (առվակ), 307, 310
Մեծ Հայաստան տե՛ս Մեծ Հայք
Մեծ Հայք 86, 93
Մեղրագետ 83
Մեղրու գավառ 149
Մեակուրիում 266, 270
Մերկուրիում տե՛ս Մեակուրիում
Միկինի ձոր 246, 248
Միջնահանդ 39, 75
Միխիում 266
Միխմանայի լեռնաշղթա 49, 51
Միրաղ (Միրաք) գյուղ 132
Մյունխեն 302
Մոկս 318
Մողնի տե՛ս Մուղնի
Մոսկվա 8, 81, 97, 195, 229, 230, 255, 307
Մտկուարի 270
Մրենի եկեղեցի 96
Մուխրամ տե՛ս Մուխրան
Մուխրան 316
Մուղանի դաշտ 94
Մուղնի (գյուղ) 39, 44, 46, 52, 105—106,

148, 160, 223, 257, 264, 296, 300, 304, 309, 310, 322
Մուղնու թառ 39, 109, 171, 175, 205, 207
Մուշ 200
Մուֆարղին 192

Յալթա 229
Յանիո 266—267 (թերևս՝ Ճանկի)

Նազրվան 310, 326
Նախիջևան 134, 135, 149
Նախիջևանի գավառ 149
Նախիջևանի խանություն 126, 134, 137, 145
Նահատակի գերեզման (Քասախի ձորում) 177—178
Ներքին Ագիաման գետ 211
Նոր Բայազետի գավառ 307
Նոր Թալին 192
Նոր Նախիջևան 7—10, 14, 15, 17, 21, 23, 26, 228
Նոր Ջուղա 16, 173, 260
Նորագավիթ 105
Նորագեղ 264
Նփրկերտ 192

Շաղբրուլաղ 212
Շահազիզենց գերեզմանատուն 175, 197, 295
Շահապիվան 90
Շահվերտ տե՛ս Շաղվերտ
Շահրիար 144, 145
Շաղվերտ գետակ 296, 310
Շիրակ 8, 61, 80, 127, 171, 232, 271
Շորագյալ 131, 200, 232
Շորակյալ տե՛ս Շորագյալ
Շտրանգիրա, Շտրանգուիրա (Աշտարակ) 264—267, 270
Շրեշ բլուր 212
Շրեշապատ տե՛ս Շրեշ բլուր
Շուխոնց աղբյուր 52, 310
Շուխոնց այգի 301
Շուխոնց գեմի ճամբա 206
Շուշի 131

Չալաբունց հացատուն 179
Չորրորդ Հայք 86

Պատռելական տե՛ս Պատռելակոնդ
Պատռելակոնդ 39, 77
Պարթևստան 92
Պարսկական Հայաստան տե՛ս Արևելյան Հայաստան
Պարսկաստան 58, 75, 108, 126, 131, 134, 145, 176, 236, 237, 239, 289, 291
Պետերբուրգ 281, 303
Պետնի քթուկ 48
Պետրոպավլովյան ամրոց 17
Պիտումի այգի (հիգի) 106
Պոլիս 271
Պտի գյուղ (գեղ) 160, 309
Պուճուր քուչա 206

Ջալալօղլու 307
Ջավախք 78
Ջենգլե 138—139
Ջենգուլի տե՛ս Ջենգլե
Ջուղա տե՛ս Նոր Ջուղա

Ռիոն գետ 266, 270
Ռոստով 17
Ռսի ճամփա 140
Ռուբինյան թագավորություն 94
Ռուսահայաստան տե՛ս Արևելյան Հայաստան
Ռուսաստան 11, 125, 128, 134, 135, 145, 146, 150, 224, 239, 241, 294, 306, 311

Սալմաստ 200
Սաղմոսավան 326
Սաղմոսավան—Աշտարակ ջրատար 326
Սաղմոսավանք (գյուղ) 43, 160
Սաղմոսավանք (մենաստան) 98, 139, 223, 258, 309
Սաղմոսավանքի ձոր 52
Սասուն 192, 318
Սավատինում 266
Սարդարապատ 318
Սարդարապատ (բերդ) 123, 134, 144, 145, 148, 199, 200
Սարդարապատի առու 145
Սարիչոբան գյուղ 97
Սեբաստոպոլիս (Սեբաստոպլիս) 264—267, 270
Սերկևլեր (հին) 44

Սիբիր 226
Սյավ լեռներ 94
Սյունիք 102
Սովետական Միություն 320, 327
Սպահան 173, 176
Սպիտակավոր սուրբ Աստվածածին 165, 167, 168, 181, 223, 300, 325
Սուրբ Աննա եկեղեցի (Ալաման) 171
Սուրբ Գևորգի վանք (Մուղնի) 134, 148, 204, 223, 257, 275, 296, 301, 304
Սուրբ Խաչի վանք (Նոր Նախիջևան) 15
Սուրբ Կարապետի մատուռ (Աշտարակ) 223
Սուրբ Կարապետի վանք տե՛ս Հովհաննավանք
Սուրբ Կարապետի վանք (Մուշ) 15
Սուրբ Կյուրակե 223, 301
Սուրբ Մարիամ եկեղեցի տե՛ս Սուրբ Մարիանե
Սուրբ Մարիանե 39, 81, 82, 98, 168—170, 172, 174, 181—187, 191—193, 203, 223, 238, 264, 271, 277—279, 299—301, 307, 325
Սուրբ Մարիանեի բլուր 39
Սուրբ Մարիանեի թաղ 165, 168
Սուրբ Սահակ եկեղեցի (Բլուր գյուղ) 96
Սուրբ Սարգիս եկեղեցի (Աշտարակ) 61, 62, 176, 180, 181, 223, 325
Սուրբ Սարգսի սարավանդ 61, 62
Սուրբ Սարգսի վանք (Ուշի) 304
Սուրբ Սիոն եկեղեցի (Սաղմոսավանք) 45—47
Սուրբ Վարվառ(՞) եկեղեցի (Աշտարակ) 264
Սուրմալու տե՛ս Սուրմառի
Սուրմալուի գավառ 232—233
Սուրմալուի մահալ 96, 97, 145
Սուրմառի 96, 145, 235
Սև ծով 176
Սև Ջուր 49, 149
Սևահողեր (Աշտարակի) 39
Սևան 61, 210, 211
Սևաստոպոլ տե՛ս Սեբաստոպոլիս (Սեբաստոպոլիս)
Սովետական Հայաստան 10, 17, 26, 320, 323, 325
Ստաթեի վիճակ 45

Վահանա գավիթ 186
Վաղարշակերտ 264
Վաղարշապատ 56, 58, 87, 137, 145, 148, 205, 251, 255, 264, 273
Վաղարշապատի եկեղեցի տե՛ս Էջմիածին
Վան 210
Վանանց այգի 132, 178
Վասպուրական 86, 318
Վարդաբլուր 59
Վարդանարակ 39, 77, 181
Վենետիկ 12
Վերի առու 187, 192
Վերի (դեմի) հողեր 69
Վերին Աղիաման 211
Վերին թաղ 165, 168, 172
Վերին Նավեր 181
Վիրորդ 54
Վիեննա 26
Վրաստան 126, 196, 326
Վրաց աշխարհ 317

Տաշտաքար 50, 199
Տավրոս 94
Տարոն 318
Տելերոսս գետ տե՛ս Մեղրագետ
Տենդավա 266
Տուրուբերան գավառ 86
Տփղիս տե՛ս Թիֆլիս

Ուլատիտիկ 69, 176, 180, 181, 222
Ուհաննուվանք տե՛ս Հովհաննավանք
Ուշական տե՛ս Օշական
Ուշի տե՛ս Հուշի
Ուշթափալար (ամառանոց) 212
Ուռուց 47, 109, 161, 206, 227
Ուրարտու 10, 37, 98
Ուրմիա 200

Փամբակ 127, 131, 200
Փայտակարան 112
Փանիկ 96
Փառակունիս 170
Փարսանց այգի 184
Փարաքար 58, 145, 199, 247
Փարբի տե՛ս Փարպի
Փարպի 39, 166, 206, 223, 300, 310

Փարպու եկեղեցի 300
Փարպու հող 184, 185, 191
Փարիզ 260
Փյունիկիա 314
Փոգաս 266
Փոթի 267
Փոկարերդ 176, 179
Փոքր Հայք 94
Փոքր Մասիս տե՛ս Մասիս (փոքր)

Քանաքեռ 58, 65—66, 121—122, 130, 152, 178
Քասախ գետ 39, 41, 43, 44, 47, 49—51, 53—56, 61, 64, 136—137, 140, 149, 165, 179, 210, 228, 229, 244, 250, 251, 263, 264, 290, 293, 294, 296—298, 300, 303, 304, 306, 307, 310, 325, 327
Քասախի ձոր (կիրճ) 44, 46, 61, 176, 178, 210, 214—215, 250, 291, 303—305, 325
Քասաղ տե՛ս Քասախ
Քարագործենց հող 186
Քարհանենց այգի 185
Քեշիշ Մաղարի 238, 246, 248
Քիշինև 198
Քիրաշլու 105—106
Քյալակարխ 97, 145
Քյավառ 210
Քյուչուկ-Քյանդ 129, 136

Օդեսա 311
Օլորան 39, 174, 175
Օշական 39, 47, 52, 58, 60, 68—69, 77, 133, 135, 136, 139, 140, 145, 165, 177, 199, 223, 231, 247, 250, 264, 296, 297, 300, 304
Օշականի խրամ 246
Օշականի հանդ 185
Օսմանլու տե՛ս Թուրքիա
Օրգով 232
Օրդուբադի շրջան 134, 145
Օրուճլուք տե՛ս Արուճ

Ֆոնտաֆելիկե 266
Ֆռանկանոց 49

ՀԵՂԻՆԱԿԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծնվել եմ 1856 թ. հունվարի 1-ին, Ալեքսանդրապոլում, որտեղ հայրս՝ Հովակիմը, քարտուղար էր Հոգևոր կառավարության:

Տարուկիսկան մանուկ եմ եղել, երբ հայրս թողնելով քարտուղարության պաշտոնը, տեղափոխվել է Երևան, որտեղ մայրս՝ Թելլու խանումը [(Հերիքնազ)] ուներ տուն և այգի Շահար թաղում:

Գրել-կարդալ հայերեն սովորել եմ տանը, մորիցս և մորատատիցս՝ Վարդխաթունից, որ Սուրմառուի (Արշարունիք) Կամսարական ընտանիքից էր:

Մանկությունս, մինչև 14 տարեկան հասակս, անց եմ կացրել մորս, տատիս և երեց ու միջնակ եղբայրներիս շրջանում, որոնք սովորում էին տեղիս գավառական դպրոցում, որ կոչվում էր «Թագավորական դպրոց»: Նրանք շուտով ուղարկվում են Լազարյան ճեմարան, իսկ ես մնում եմ մորս ու տատիս խնամքի տակ: [Հայրս վախճանվել է Երևանում, տեղափոխվելուց 7 ամիս հետո:]

Սովորել եմ մի աշխարհաբար այբբենարանի վրա՝ տպագրված Պոլսում, և դաստիարակվել մորս ու տատիս մատակարարած բարոյական խրատներով, որոնք մինչև անգամ փողոց չէին թողնում ինձ: [Ամառները հաճախ գնացել եմ Աշտարակ, մեր հորենական Շահազիզյանց—Կամսարականների տունը, որտեղ ապրում էին հորեղբայրներս՝ հորատատիս հետ:]

12 տարեկան հասակումս մտել եմ Թագավորական դպրոցը, որտեղ ընդհանուր առարկաների ուսուցիչ էր փիրախոս, հայերեն հազիվ թոթվող Ճագում վարժապետը, և հայերենի ու կրոնագիտության՝ Այվազյան Կարապետ վարդապետը:

[Իմ ուսանելու երկրորդ տարին գավառական դպրոցը վերածվեց պրոգիմնազիոնի՝ գիշերօթիկ և երթևեկ աշակերտներով:]

1870 թվին ինձ ուղարկեցին Մոսկվա, Լազարյան ճեմարանը, որտեղ հայոց լեզվի ուսուցիչ էր իմ հորեղբայր Սմբատ Շահազիզյանց-Կամսարականը, և կրոնագիտության՝ հայտնի Մսեր Մագիստրոսը: [Մյուս ուսուցիչներից իմ հիշողության մեջ մնացել է մաթեմատիկայի ուսուցիչ Յուլի Ֆրանցիչ

Վիպպերը, որի որդին՝ Ռոբերտը, նույնպես սովորում էր մեզ հետ ճեմարանում: Այդ Ռոբերտը հայտնի պատմագիր Ռոբերտ Վիպպերն է:]

Ճեմարանի դասընթացը ավարտել եմ 1879 թվին և մտել Լազարյան Լիկեոնը արևելյան լեզվաց, որ մի քանի տարի առաջ վերաբացվել էր նոր հիմունքներով, իբրև բարձրագույն դպրոց՝ համալսարանական իրավունքներով: Այդտեղ հայոց լեզուն դասախոսում էր հայտնի գիտնական Մկրտիչ Էմինը, ռուսաց հին գրականությունը՝ գիտնական Անդրեյ Պոպովը, արևելյան պատմությունը՝ Գիրինը, ռուսաց նոր գրականությունը՝ ուսուցչապետ Ալեք. Վեսլովսկին, պարսից լեզուն՝ Կորշը, և այլն:

Լիկեոնի ընթացքն ավարտել եմ 1882 թ. և անմիջապես հրավիրվել եմ Նոր Նախիջևանի թեմական դպրոցը, որտեղ եղել եմ ուսուցիչ, տեսչի օգնական և տեսուչ, պաշտոնավարելով 35 տարի շարունակ: Դասավանդել եմ ռուսերեն, լատիներեն, ընդհանուր և Ռուսաստանի աշխարհագրություն, հայերեն աշխարհաբար և գրաբար և Հայոց պատմություն ու աշխարհագրություն, բայց իմ մասնագիտությունս եղել է հայոց լեզուն ու գրականությունը, հայոց պատմությունը ու աշխարհագրությունը:

1917 թվին հրաժարվել եմ պաշտոնից՝ ստանալով կենսաթոշակ երեք հազար ռուբլի տարեկան, և մի տարի հանգիստ վայելելուց հետո ընտրվել եմ Նոր Նախիջևանի և Ռոստովի հայ համայնական կառավարության վարչության նախագահ և խմբագրել եմ «Հայ համայնք» շաբաթաթերթը:

Դոնի նահանգի խորհրդայնացումից հետո եղել եմ ուսուցիչ աշխատավորական դպրոցի և Նոր Նախիջևանի ու Ռոստովի հայկական շրջանային թանգարանի գիտական հսկիչ և վարիչ, և հետո, 1922 թվին, փոխադրվել եմ պաշտոնով Հայաստան, որտեղ ներկայումս վարում եմ Պետական-կենտրոնական թանգարանիս պատմական-գրական բաժնի վարիչի պաշտոնը:

Սկսել եմ գրել 1884 թվից, և հրատարակել եմ իմ երկերը թե՛ առանձին գրքերով և թե՛ հայկական պարբերականներում. պատմական, կենսագրական, գրական, ազգագրական գրվածներ և այլևայլ նյութերի վերաբերյալ բազմաթիվ մանր ու ընդարձակ հոդվածներ՝ գրված «Հայ համայնքի» էջերում և մյուս պարբերականներում:

Ներկայումս էլ շարունակում եմ գրել՝ մասնակցելով «Նորքին» և ուսումնասիրելով Միքայել Նալբանդյանցին, Ռափայել Պատկանյանցին և Խաչատուր Աբովյանցին, և գիտական համակարգության վերածելով թանգարանումս գտնված պատմական ու գրական նյութերը և հին ձեռագրերը:

Եղել եմ հոգաբարձու Նոր Նախիջևանի Ս. Հռիփսիմյան դպրոցի, յոթ տարի շարունակ, ձրիաբար, դասատվություն եմ արել նույն դպրոցում, վերջին քա-

ռամյակին ընտրված եմ եղել իրավասու Նոր Նախիջևանի քաղաքային դումայի՝ մասնակցելով ուսումնարանական հանձնաժողովի աշխատանքներին, և աշխատակցել եմ Նոր Նախիջևանի և Ռոստովի բազմաթիվ հայկական ընկերություններին, բազմաթիվ դասախոսություններ եմ կարդացել և աշխատակցել Մ. Նալբանդյանցի ու Ռ. Պատկանյանի երկերի հրատարակության գործին:

Եղել եմ Նոր Նախիջևանի և Ռոստովի ուսուցչական միության անդամ, իսկ խորհրդայնացումից հետո՝ Ռոստովի Րաբիսի անդամ:

Թանգարանի պատմական-գրական բաժնի վարիչ

Ն. ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

1925 թ., հունիսի 22
*Երևան**

* *Ինքնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, հեղինակի թղթերում: Հրատարակվում է առաջին անգամ:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշտարակի պատմարանը և նրա հայագիտական վաստակը (*Պ. Հակոբյան*) . . . 5—32

ԱՇՏԱՐԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ

Յառաջաբան . . . 35—37

1. Անունը, տեղը և սահմանները . . . 38—40
2. Օդը և կլիմայական պայմանները . . . 40—41
3. Ոռոգումը. *Ապարանի ջուրը, Մեծ առուն և Քասախ գետը* . . . 41—58
4. Աշտարակի բնակչությունը. *բնիկ և եկամուտ տարրը, Շահազիզ-Կամսարականների տոհմը, աշտարակցու նկարագիրը, Խոսրով խանի մայրը, Աշտարակի բնակիչների թիվը, աշտարակցու տարազը* . . . 58—69
5. Աշտարակցու պարապմունքը. *վարուցանք, հողաբաժանության եղանակը, այգեգործություն, ապրանքափոխանակություն, չարվադարություն, առևտուր և արհեստներ* . . . 69—82
6. Կառավարությունը (*I*). *հնագույն հայ գյուղը, հայ գյուղը հայոց իշխանության օրերով և Աշտարակը* . . . 82—98
7. Կառավարությունը (*II*). *պարսից՝ Երևանի սարդարության հայ գյուղը և Աշտարակը* . . . 99—111
8. Հարկատվությունը. *հայ գյուղի հարկատվությունը նախնական և հնագույն ժամանակները, հայ գյուղի հարկատվությունը Երևանի սարդարության օրերով և Աշտարակի հարկատվությունը* . . . 111—125
9. <Աշտարակը պատերազմների տարիներին.> *Արարատյան դաշտի հայ ժողովրդի՝ Ցիցիանովի և Գուդովիչի արշավանքների ժամանակները և Երևանի առման նախօրյակին քաշած նեղություններն ու կրած տառապանքներն ընդհանրապես և աշտարակցիների քաշածներն ու կրածները մասնավորապես* . . . 125—134
10. Պարսից պատերազմը, Աշտարակի ճակատամարտը, Սարդարապատի առումը և աշտարակցիների վերադարձը . . . 134—145
11. Թուրքմենչայի դաշնագրությունը, նորանվաճ երկրի ռուսական կառավարության եղանակը և Աշտարակը . . . 145—151
12. Սարդարության ժամանակներից պահպանված կառավարության ձևի և կարգերի վերացումը, *ռուսական կառավարության նոր կարգերի մուծումը Երևանյան նահանգի գյուղերին ընդհանրապես և Աշտարակը մասնավորապես* . . . 152—164
13. Աշտարակ գյուղը և դրա հուշարձանները . . . 164—181

14. Աշտարակի հուշարձանների հին արձանագրությունները . . . . 182—194
15. Լուսավորության գործն Աշտարակում. *Հայկական և պետական դպրոցները և գյուղի գործիչները* . . . . 194—205
16. Աշտարակի հին ու նոր գյուղամասերը. *Հին Աշտարակի տները, աշտարակցու նահապետական կյանքը, սնունդը և աշխատելու եղանակը* . . . 205—214
17. Հին աշտարակցու աշխատասիրությունը, *Աշտարակի այգիների հնձանները և հնձանարակները. Աշտարակի սովորույթների մեջ պահպանված հեթանոսական տարրը, աշտարակցու կրոնասիրությունը. մոլոռնների կառավարության շրջանը և աշտարակցու նեղ օրերը, հարկահանությունը և կոռը, աշտարակցու սերն յուր գյուղի հանդեպ* . . . . 214—231
18. Ղրիմի պատերազմը *և երկրի մահմեդական և քրիստոնյա տարրերի՝ միմյանց դեմ ցուցաբերած թշնամական վերաբերմունքը, Աշտարակի ինքնապաշտպանության պատրաստվելը, աշտարակցիների զենի և օդի արտահանելը ռուս զորքի բանակատեղիները և հարստանալը, պատերազմի ազդեցությունը Աշտարակի վերա և նահապետական կյանքի փերանալը, ակցիզը և գյուղի չքավորելը* . . 231—238
19. Աշտարակի չքավորելու պատճառները, *գյուղի ունևորները և դրանց ազդեցությունը գյուղացոց վերա, վաշխառության ծաղկելը, նոր սերնդի վարքի-բարքի անկումը, Երևանի ճանապարհը, դրա պաշտպանությունը և դրա վերա կատարված ոճրագործությունները. Քեշիշ-Մազարի քարակիտուկը և դրա հետ կապված ավանդությունը, Ախար-Բախարը* . . . . 238—252
Վերջաբան . . . . 253—257
Աշխատասիրության աղբյուրները . . . . 258—260

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ (Պ. Հակոբյան)

Հավելվածներ, I—X

I. «Աշտարակ» տեղանվան որոնումներ մատենագրական հին հուշարձաններում . 263—271
II. Աշտարակի դպրոցները . . . . 271—283
III. Կարմրավորի արձանագրության մասին . . . . 283—289
IV. Անգլիացի ճանապարհորդները Աշտարակի մասին . . . . . 289—292
V. Գեներալ Ա. Ի. Կրասովսկու և Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցու այցելությունը Աշտարակ . . . . 292—299
VI. Հովհաննես Շահխաթունյանցը Աշտարակի մասին . . . . . 299—302
VII. Նոր այցելուներ XIX դ. 40-ական թվականներին (Մորից Վագներ և Անդրեյ Մուրավյով) . . . . 302—306
VIII. Աշտարակը XIX դարի 70-ական թվականների սկզբներին . . 306—308
IX. Աշտարակը XX դարի սկզբներին . . . . 308—310
X. Վ. Ի. Լենինը Պողոս Պողոսյանի մասին . . . . 311—313
Լրացումներ, *1—4* . . . . 314—317
Աշտարակն այսօր *(Վերջաբանի փոխարեն)* . . . . 318—327
Անվանացանկ
1. Անձնանուններ . . . . 328—338
2. Տեղանուններ . . . . 338—345
Հեղինակի ինքնակենսագրությունը . . . . 346—348

Երվանդ Շահազիզ
ԱՇՏԱՐԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Բնագրի պատրաստումը,
առաջաբանը, ծանոթագրությունները և լրացումները
պրոֆ. Պ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Ервандъ Шахазиз
ИСТОРИЯ АШТАРАКА
(На армянском языке)
«Айастан» Ереван 1987

Հրատ. խմբագիր՝ Ռ. Հ. Մուրադյան
Նկարիչ՝ Հ. Կ. Մնացականյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Գ. Բ. Նահապետյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Մ. Հայրապետյան